

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԻՄ ՏՈՒՆԸ ՔՈ ՏՈՒՆՆ Է

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 891.981-1 Քալանթարյան

ԳՄԴ 84Հ-5

Ք 141

Ժողովածուն նվիրվում է գրողի

ծննդյան 75-ամյակին

Կազմեց և առաջաբանը գրեց

Ալեքսանդր Քալանթարյանը

Խմբագիր՝ Գագիկ Մ. Մինասյան

Քալանթարյան Արտաշես

Ք 141 Իմ տունը քո տունն է: Ընտիր երկեր/ Արտաշես Քալանթարյան.- Եր.: Զանգակ-97,
2007.- 356+16 էջ կավճ.

Անվանի արձակագիր, լրագրող, թատերագիր և երգիծաբան Արտաշես Քալանթարյանի տասնյակ վեպերն ու վիպակները, պիեսները, պատմվածքներն ու հոդվածները անցած դարի 2-րդ կեսի հայ հրապարակախոսական և երգիծական գրականության լավագույն էջերից են: Դրանք հրատարակվում էին նույնիսկ այն ժամանակների համար մեծ տպաքանակով և սպառվում արագորեն:

Ներկա ժողովածուն գրողի արձակ և երգիծական լավագույն գործերից կազմված ընտրանի է, որ կարող է զարդարել ցանկացած գրադարան՝ ներդաշնակելով ամեն տարիքի ընթերցողի ճաշակին ու հետաքրքրություններին:

4702080202

Ք----- 2007թ. ԳՄԴ 84Հ-5

0182(01)2007

ISBN 978-99941-296-8

ԱՐՏԱՇԵՍ ՓԻՐԱՂԱՅԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Քալանթարյանների տոհմը սերում է Արցախից, ու սկզբնապես կոչվել է Մելիք-Քալանթարյան: Հետո, արդեն ստալինյան բռնապետության ժամանակ, ազգանունից հանել են խոհեմաբար «Մելիք» մասնիկը: Այդ տարիներին «Մելիք» լինելը այնքան էլ չէր խրախուսվում: Այսինքն՝ հարյուրամյակներ առաջ էլ հայ մելիք լինելն անվտանգ չէր: Պատահական չէր, որ Մելիք-Քալանթարյանների գերդաստանն էլ ստիպված էր թողնել հայրենի Արցախն ու սփռվել Հայաստանով ու ոչ միայն Հայաստանով մեկ: Արտաշես Քալանթարյանի նախնիները հաստատվեցին Շամշադինի շրջանի Չորաթան գյուղում: Այսօր էլ գյուղում լեգենդներ են պատմում Աշխարհբեկ ու Ասլան Քալանթարյանների, Ալեքսան Բեկի մասին: Իսկ «դրացի ազգերիները» գյուղն անվանում են ոչ այլ կերպ, քան՝ «Քալանթարլի»:

Ալեքսան Բեկը Արտաշեսի պապն էր... պապը Բեկ էր, իսկ հայրը՝ Փիրաղան արդեն շարքային խառատագործ՝ Ձերթինսկու անունը կրող գործարանում: Տարօրինակ բարի ու միամիտ մարդ էր Փիրաղա ապերը: Ամենաձանր բանը նրա համար մենակ սեղան նստելն էր, ու դրա համար էլ գործից հետո երկար շրջում էր կոլխոզուկայի մատույցներում ու հենց հարազատ բարբառն էր լսում, գյուղացուն համոզում, թևից բռնում ու բերում էր տուն, հանում հոնի օղին, հյուրասիրում ու երկար-երկար զրուցում անցած-գնացած օրերի, դեպքերի ու մարդկանց մասին:

Անհնարին էր նրան համոզել, թե ինչ-որ պաշտոնյա կարող է խաբել իրեն.

- Նա ո՞նց կխաբի է,- զայրանում էր Փիրաղա ապերը,- նա «գալստուկ» ա կապում...

Կարծես այդ փողկապավորները չէին, որ վախի, ատելության ու մատնության ցանցով էին պատել ողջ երկիրը, որ անարգել թալանում ու գողանում էին, կարծես նրանց պատճառով չէր, որ աշխատավոր մարդը չէր կարողանում կերակրել իր ընտանիքը, որ Արտաշեսը ստիպված էր 15 տարեկանից սովորելուն զուգընթաց աշխատել դատախազությունում որպես ցրիչ, հետո՝ արխիվի վարիչ, և անգամ բեռնակիր՝ Երևանի պահածոների գործարանում այն ժամանակ, երբ արդեն ուսանում էր Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

Տարօրինակ մի աստղաբույլ էր հավաքվել հիսնականների սկզբին ժուռնալիստիկայի ֆակուլտետում: Ջահել տղաներ ու աղջիկներ, որ գուցե չունեին վայելուչ հագուստ, գուցե կիսաքաղցած էին, բայց փոխարենը մի մեծ հավատ ունեին, որ ի վերջո երկիրը ոտքի կկանգնի, որ արդարությունը կհաղթի, որ բարին կհաղթանակի... ու վստահ, որ մի քանի ճշմարտություն լինել չի կարող, որ ճշմարտությունը մեկն է, ու որ հենց իրենց է վիճակված լինել այդ բարու ու չարի պայքարի առաջին գծում:

Առաջին ֆելիետոնը գրեց չորրորդ կուրսում, հենց իրենց դասախոսի մասին, կոչվում էր՝ «Ֆելիետոնի դասախոս, թե՛ հերոս»: Մակայն դասախոսի պատասխան մանր-մունր «խարդավանքները» մանկական կատակ կարելի էր համարել այն բանի դեմ, ինչ տեղի ունեցավ հաջորդ ֆելիետոնից հետո... Դրա հերոսը այն օրերի հզորներից մեկն էր, մարդ, որ հանգիստ խոճով թալանում էր քաղաքի առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը, ու քանի որ գողոնից բաժին էր հանում նաև իր պաշտոնյա ընկերներին, ապա, բնականաբար, էլ ավելի հզոր ըն-

կերներ ու թիկունք ուներ: Չկարողանալով հերքել ֆելիետոնի փաստերը՝ հակառակորդները դիմեցին հակահարձակման լավագույն տարբերակին՝ ամեն կերպ վարկաբեկել հեղինակին, այնպես, որ նա ժամանակ ու հնարավորություն չունենա հետամուտ լինելու ֆելիետոնի հետագա ճանապարհին: Եվ գործի դրվեցին հնարավոր ու անհնարին բոլոր գործիքներն ու լծակները՝ անստորագիր նամակներից մինչև ամբաստագրեր ու մատնություն: Արտաշեսին մեղադրում էին հնարավոր բոլոր մեծ ու փոքր մեղքերի ու արատների մեջ՝ դասերից անհարգելի բացակայելուց սկսած մինչև կոմերիտականին ոչ վայել պահվածք, որը մասնավորապես դրսևորվում էր «հայրենիքի թշնամու» աղջկա հետ ընկերություն անելու մեջ: Ինչևէ, արդարությունը հաղթանակում է, հանվում են անհիմն մեղադրանքները, պատժվում է ֆելիետոնի հերոսը: Հաղթանակ: Եթե այո, ապա պյուրոպյան հաղթանակ, երբ հաղթելուց գրեթե ոչինչ չես շահում: «Եթե այս պատմությունից որևէ բան շահեցի, - հետագայում պատմում էր Արտաշես Քալանթարյանը, - ապա հավատարիմ թշնամիներ», որոնք նախանձելի համառությամբ հետագա ողջ կյանքի ընթացքում ուղեկցեցին նրան:

Նաև այն, որ ստիպված էր հրաժարվել «Սովետական Հայաստան» թերթում իր համար ամրագրված ֆելիետոնիստի պաշտոնից ու մեկնել գյուղ:

«Կներես, ոչինչ չեմ կարող անել, - ասել էր թերթի խմբագիրն ու Արտաշեսի սիրելի դասախոսը, - շատ հզոր են թշնամիները: Ոչինչ, գնա գյուղ, աշխատիր, ուղիղ մի տարի հետո քեզ հետ կբերեմ»: Արտաշեսը աշխատեց որպես ռադիոյի թղթակից նախ՝ Իջևանում, հետո՝ Կիրովականում: Ի պատիվ իրեն՝ ուղիղ կես տարի անց զանգահարեց «Հայաստանի» խմբագիրը, և Արտաշեսը նշանակում ստացավ մայր թերթում:

1957 թվականին բացվեց «Երևան» թերթը, և Արտաշես Քալանթարյանը տեղափոխվեց քաղաքային նորաբաց թերթ՝ որպես քաղաքային տնտեսության և կենցաղի բաժնի վարիչ: Թե՛ «Հայաստանում», և թե՛ «Երևանում» աշխատելու տարիներին գրեթե ամեն շաբաթ Քալանթարյանը ընթերցողի դատին էր ներկայացնում հերթական սուր ֆելիետոնը, որտեղ առանց դեմքին ու դիրքին նայելու, ժանրի բոլոր հնարավորություններն օգտագործելով, անխնա ծաղրում էր բյուրոկրատիզմը, քծնանքը, պարծենկոտությունը, գրոհայնությունը և հասարակարգին հատուկ այլ թերություններն ու արատները: Ամեն նոր ֆելիետոնի հետ ավելանում էր Քալանթարյանի երկրպագուների թիվը՝ «ներքևում» ժողովրդի մեջ, և թշնամիների թիվը՝ «վերևում»՝ ղեկավարների շրջանում: Քանի՛ -քանի՛ անգամ հերթական աղմկոտ ֆելիետոնից հետո ստիպված է եղել արդարանալ, շրջկոմների ու քաղկոմների բյուրոներում, որոնք ֆելիետոնի փաստերը քննելու փոխարեն, փորձում էին հեղինակի որևէ բացթողում գտնել ու պատժել չափազանց համարձակության համար: Նույնիսկ մի բյուրոյի ժամանակ քաղկոմի քարտուղարը մի կողմ դնելով դիվանագիտության բոլոր նորմերը՝ «արդարացել է» ֆելիետոնի հերոսի՝ իր ընկերոջ մոտ. «Արա, տեսնում ես, բոլոր փաստերը ճիշտ են, ես էս մարդուն ո՞նց պատժեմ»:

Բայց եթե շատ ես ուզում մեկից ազատվել, ի վերջո առիթ կգտնես: Այսինքն՝ առիթը տվեց հենց ինքը՝ Արտաշեսը: Քաջ գիտակցելով գլխի գալիքը՝ հրաժարվեց ֆելիետոն գրել մի հասարակ բանվորի դեմ: Հրաժարվեց, երբ տեսավ նրա բնակարանախուցը, կենցաղային պայմանները, ավելի ճիշտ՝ դրանց լիակատար բացակայությունը, հիվանդ զավակին և այդ պայմաններում նոր երեխա սպասող մորը: Հասկացավ, որ մեկ հողվածով երեք իբր «ապրող» ու մեկ դեռ չծնված մարդու կյանք է կործանելու...

«Արտաշես Քալանթարյան և խղճահարություն՝ ունի,- գոհունակությունից խեղդվելով գոչում էր հրահանգիչը հերթական բյուրոյի ժամանակ:- Նա, որ մինիստրներին չէր խղճում, ինչպե՞ս կարող էր հենց այնպես բանվորին խղճալ»:

Հենց այս երկաթե տրամաբանությամբ էլ հայտարարեցին կուսակցական առաջին, բայց ոչ վերջին նկատողությունը: Բայց, ինչպես ասում են, երբ աստված մի դուռ փակում է, մեկ այլ դուռ է բացում: Հրաչյա Հովհաննիսյանն առաջարկում է Արտաշեսին տեղափոխվել «Գրական թերթ» որպես պատասխանատու քարտուղար:

«Բայց ես կուսակցական նկատողություն ունեմ», - իր պարտքն էր համարել զգուշացնել Արտաշեսը:

«Ավելի լավ,- ասել էր Հովհաննիսյանը,- ուրեմն աշխատող տղա ես: Չաշխատողին կուսակցական նկատողություն չեն տալիս»:

Հետագա մի քանի տարիները հավանաբար ամենախաղաղն էին Քալանթարյանի կյանքում: Միրելի աշխատանք, հրապարակախոսական սուր հոդվածներ, պատմվածքների ու ճամփորդական նոթերի ժողովածու և, ամենակարևորը՝ մտերմություն ժամանակի խոշորագույն արձակագիր-բանաստեղծների՝ Սերո Խանգաղյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Համո Սահյանի, Պարույր Սևակի և այլոց հետ: Իդիլիան շարունակվում է մինչև 1969 թվականը, երբ լույս է տեսնում «Մարաթոնը»: Հաջողությունն աննախադեպ էր, ողջ տպաքանակը սպառվում է տառացիորեն մի քանի ժամում: Սակայն այդ «օրերի հզորները» վեպի բացասական կերպարներին մեջ անսխալ իրենց են տեսնում, ու սկսվում է հալածանքների մի նոր շրջան: Նախ՝ փորձում են գրախանութներից հավաքել ողջ տպաքանակը, հետո՝ ստիպում «Գրական թերթի» խմբագրին «վերադասի բանավոր կարգադրության համաձայն» Արտաշեսին ազատել աշխատանքից: Ամբողջ մեկ տարի Արտաշեսը փորձում է վերականգնել իր ոտնահարված իրավունքները, ի վերջո՝ Անտոն Քոչինյանը կոմպրոմիսային լուծում է առաջարկում: Հետագայում Քալանթարյանը տխուր հումորով մեկնաբանում է.

«Տեսան, որ չեմ կարողանում իմ շահերը պաշտպանել, նշանակեցին Հեղինակային իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ, որ բոլոր հեղինակների շահերը պաշտպանեմ»:

Մոտ մեկ տարի անց ՀՄՄՀ հեռուստառադիոյեռնակոմի նախագահ Ստեփան Պողոսյանը Արտաշեսին հրավիրեց հեռուստատեսություն՝ սկզբում նրան հանձնելով երիտասարդական, ապա՝ դրամատիկական հաղորդումների խմբագրությունների ղեկավարությունը: Արտաշեսը վաղուց էր համագործակցում հայկական հեռուստատեսության հետ: Նրա երգիծական մանրապատումներն ու հաղորդումները՝ Ֆրունզիկ Մկրտչյանի, Թաթուլ Դիլաքյանի, Ավո Ջրադացյանյանի, Դոնարա Մկրտչյանի, Արծրուն Մանուկյանի և այլ նշանավոր դերասանների մասնակցությամբ, վաղուց արդեն բարի համբավ էին բերել հեղինակին: Հեռուստատեսությունում Քալանթարյանի ամենամեծ ավանդը, սակայն, կարծում են հեռուստաթատրոնի ստեղծումն էր: Իրեն հատուկ համառության ու նպատակասլացության, հեղինակության և անձնական մտերմական կապերի շնորհիվ կարողացավ քաղաքի կենտրոնում թատրոնի համար շենք ձեռք բերել, նորոգել ու կահավորել այն, դերասանական հզոր կազմ հավաքել: Ու գրեթե ամեն երկուշաբթի հեռուստառադիոյեռնակոմի էին ներկայացվում հայ և արտասահմանյան հեղինակների ստեղծագործությունների բարձրարժեք բեմականացումներ: Հետագա տարիները

ամենաբեղուն էին Քալանթարյանի ստեղծագործական կյանքում: Գրեթե իրար հետևից լույս են տեսնում «Կատակերգություններ», «Մի բուռ ծիծաղ», «Խոստովանություն», «Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները», «Քննություն» վեպերն ու ժողովածուները, Սունդուկյանի, Պարոնյանի, Մռավյանի, Ստեփանակերտի, Կամոյի ու Ղափանի թատրոններում, Թբիլիսիում, Քութաիսում, Ռոստովում և Խարկովում բեմադրվում են «Քանի դեռ կամ», «Աշխարհի կենտրոնը», «Շատ ժամանակակից սպանություն», «Թիկունք» և այլ պիեսները, հեռուստաթատրոնում բեմադրվում են «Մովսես ապերն» ու «Բացք էր աչքերը», որտեղ առաջին անգամ լրջորեն արծարծվում է «սպիտակ եղեռնի»՝ արտագաղթի խնդիրը և այլն:

Քալանթարյանին ամենամեծ ճանաչում բերեց Հայկական հեռուստատեսության առաջին հեղինակային՝ «Իմ տունը քո տունն է» հաղորդաշարը, որտեղ հուզական և երգիծական մանրապատումների, հեռուստադիտողների նամակների ու պատմությունների վերլուծության միջոցով Քալանթարյանը քննարկում էր մեր ընտանիքներում, մարդկային ու ընկերական հարաբերություններում տեղ գտած և դրական և բացասական երևույթները, խորհուրդներով, տիպական օրինակներով ստիպում մարդկանց ասես կողքից նայել իրենց ապրելակերպին, փոխհարաբերություններին, տեսնել, գիտակցել ու շտկել սեփական սխալներն ու վրիպումները:

Արտաշես Քալանթարյանի վերջին հրատարակված ստեղծագործությունը «Իսկ դո՞ւք որտեղ էիք» վեպն է: Այն ինչ-որ չափով ինքնակենսագրական է, հերոսը ժուռնալիստիկայի ֆակուլտետ ավարտած և հանրապետության փոքրիկ քաղաքներից մեկի թերթում աշխատանքի նշանակված Զավեն Շարաֆյանն է: «Իսկ դո՞ւք որտեղ էիք» հարցը որպես լեյտամոտիվ հնչում է ամբողջ վեպի ժամանակ: Ի՞նչ անել, աչքերը փակել անօրինությունների, «խոշոր չափերի հասնող հասկանալի ու անհասկանալի հանցագործությունների դեմ», գլուխը թաքցնել ավազի մեջ, ալիբի՝ այլուրեքույթո՞ւն ապահովել... որ երբ մի օր կանգնես ահեղ դատաստանի առջև, երբ մի օր պատասխան պահանջեն ու հարցնեն՝ «Իսկ դո՞ւք որտեղ էիք», հանգիստ խոճով ներկայացնես ալիբիդ ու ասես. «Ես նրանց հետ չեմ եղել, հանցանք չեմ գործել, ահա՛ ալիբի ունեմ...»:

Թե՛ ստեղծագործական, և թե՛ ամբողջ կյանքով՝ Արտաշես Քալանթարյանն ապացուցել է, որ իրեն «ալիբի» պետք չէ: Ու եթե ահեղ դատաստանի օրը իսկապես հարցնեն, թե՛ «Իսկ դո՞ւք որտեղ էիք», ամենայն վստահությամբ կարող է ասել. «Այնտեղ ենք եղել... տեղում ենք եղել, դեպքի վայրում: Եվ մեր ձեռքից եկածի չափով, մեր ուժերի ու հնարավորությունների չափով ամեն ինչ արել ենք, որպեսզի պակասի հանցագործությունների թիվը, պակասի չափը... Որպեսզի չարիք գործողները հանգիստ ու ապահով չզգան իրենց ու նրանց չօրորի անպատժելիության գաղափարը»:

Այս սկզբունքին համաձայն է ապրել ու ստեղծագործել Արտաշես Քալանթարյանը, այս սկզբունքներն է պատգամել իր ստեղծագործությունների միջոցով շարունակում է պատգամել իր ընթերցողին:

Ալեքսանդր Քալանթարյան

Միակ Չափաձոն

(սվիրված է կնոջը՝ Ջուլիետա Քալանթարյանին)

Ղեկտեմբեր

Ասում են սերը գարնանն է ծաղկում,
 Երբ որ կանաչ են հագնում դաշտ ու սար.
 Երբ սիրուց շիկնած վարդերն են բացվում,
 Երբ որ արևը ժպտում է պայծառ:

Մեր պոետներն էլ երգում են գարուն
 Միրո մեջ՝ գարուն, գարնան մեջ՝ սերը,
 Բայց այդ խոսքերին ես չեմ հավատում,
 Միրո ամիսն է լոկ ղեկտեմբերը:

Գուցե ինձ համար այդպես է, քանզի
 Այդ ամսին տեսա այս լավ աղջկան,
 Այդ ամսին նրան կրծքիս սեղմեցի,
 Ասացի, որ ես սիրում եմ նրան:

Ու հիմա ով էլ ուզում է ասի.
 Թե գարունքին է փթթում սերը
 Իմ սերը ինքը հենց նրան կասի
 Միրո ամիսն է լոկ ղեկտեմբերը:

1957թ.

Վիպակներ

Հանրապետության Օրինակելի Քաղաքացին

Ես եղել եմ աշխարհի շատ երկրներում: Եվ յուրաքանչյուր երկրից որևէ թանկագին բան մնացել է ինձ կամ իբրև հուշանվեր՝ իմ հպարտությունը հանդիսացող պահարանում, կամ էլ՝ հիշողությանս մեջ:

Երբ տխուր եմ լինում կամ դատարկված, նստում եմ իմ հուշանվերների պահարանի առջև ու բացում դռնակը: Էբենուսե փոքրիկ փղիկն ինձ Աֆրիկա է տանում, փայլփլուն խեցին՝ Ֆիջիի կղզիները, եղունգաչափ կուլան Մեքսիկայի հովն է բերում ինձ, արմավի կեղևից պատրաստված դիմակը՝ Սինգապուրի շուկայի հազարալեզու աղմուկը: Ու երկրագնդի զանազան վայրերում ձեռք բերված հազար ու մի տիկնիկների, արջուկների ու պղնձե մարտակառքերի կողքին բավականին տարօրինակ է թվում մովաթե սև կազմով սովորական հաստ տետրը: Ասես պատահաբար է հայտնվել: Ումանց էլ թվում է, թե հուշանվերների ցուցակն է այնտեղ: Այնինչ մովաթե սև կազմով սովորական այդ տետրը ամենաթանկ ու ամենակարևոր բանն է հուշանվերների իմ պահարանում:

Անգլիա գնալու ճանապարհին մենք մի քանի օր մնացինք եվրոպական փոքրիկ մի երկրի փոքրիկ մի քաղաքում: Երեկոները սովորաբար լրագրողների ակումբում էինք անցկացնում՝ ծանոթ ու հարազատ աղմուկի մեջ, անման գարեջրի քրտնաթոր բաժակի առջև: Տեղացի լրագրողներն ամեն ինչ անում էին, որպեսզի մենք կարողանանք փոքրիշատե գաղափար կազմել իրենց քաղաքի ու բարքերի մասին. ծանոթացնում էին պատմական հուշարձաններին, հրավիրում իրենց տները: Կարծեմ հենց վերջին օրն էր. այո՛, այո, հաջորդ առավոտյան մենք հեռանալու էինք այդ բարեհամբույր ու խաղաղ քաղաքից, երբ մեզ իր տուն տարավ մարզական լրագրող Արթուրը: Փոքրիկ, երկհարկանի մի տուն էր դա՝ ծաղկաշատ պարտեզով, գողտրիկ ջրավազանով ու պատատուկներով, որոնք ցանցի նման գրկել էին ամբողջ շենքը: Երբ հյուրասենյակ մտա, ակամայից կանգ առա դիմացի պատին փակցված մեծադիր մի լուսանկարի առջև:

- Ա՛յ քեզ հաճելի հանդիպում,- բացականչեցի ես,- ձեզ մոտ է՞լ է այդքան սիրված:
- Ո՞վ,- հարցրեց Արթուրը, սառնարան-բարից հենց նոր հանած վիսկիի շիշը ձեռքին:
- Ժան Գաբենը,- ասացի ես:

Արթուրը ժպտաց:

- Շատերն են շփոթում,- ասաց նա:- Իմ հայրն է:
- Ձեր հայրը՞:
- Այո,- հաստատեց Արթուրը:- Արտակարգ նման է, չէ՞:

Արտակարգ նման էր: Նույն խոհուն, խելացի, հասկացող ու ներող աչքերը, բարի կնճիռները, զգայուն շրթունքները, փափուկ, արդար ծնոտը:

- Հազվագյուտ ճակատագիր է ունեցել,- ասաց Արթուրը: Չգիտես ինչու երկար-երկար նայեց ինձ, մի ումպով խմեց իր բաժակի վիսկին, վեր կացավ, գնաց կողքի սենյակը, իսկ երբ վերադարձավ, ձեռքին մոմլաթե կազմով մի հաստ տետր կար:

- Այս տետրի մեջ նրա կյանքն է,- ասաց նա:-Ինքն է գրել: Ջարմանալի պատմություն է: Մի ժամանակ փորձեցի տպագրել: Ցույց տվեցի իմ ծանոթ հրատարակիչներին... Բայց ոչինչ դուրս չեկավ: Մտիպված եղա ինքս բազմացնել գրամեքենայի վրա և կազմել մի քանի օրինակ՝ գոնե մեր տան բարեկամներին բաժանելու համար: Ես ուզում եմ այդ օրինակներից մեկը ձեռք նվիրել: Չգիտես ինչու համոզված եմ, որ ձեռք կհետաքրքրի: Իսկ եթե չհաջողվի տպագրել, ոչի՛նչ, թող մնա ձեռք ինձնից հիշատակ:

Ես հուզված շնորհակալություն հայտնեցի Արթուրին՝ արտասովոր նվերի համար, թեև, անկեղծորեն ասած, համոզված էի, որ նրա հոր հուշերը ծերունական սովորական գրամոլության արդյունք են լինելու՝ երբ մարդիկ արագ մոռացվելու ահից վճռում են սերունդներին պատմել իրենց ապրած ու չապրած կյանքը: Մանավանդ՝ այդ էր հաստատում բավական ծանծաղ ու սնապարծ վերնագիրը՝ «Հանրապետության օրինակելի քաղաքացին»:

Ես այդ տետրը կարդացի գնացքում, բելգիական նավահանգստային քաղաք Օստենդեի ճանապարհին ու սարսափով համոզվեցի, որ փաստորեն ոչինչ չեմ տեսել ու ոչինչ չեմ հասկացել եվրոպական այդ փոքրիկ երկրի փոքրիկ քաղաքում: Եվ ինձ համար բոլորովին ա՛յլ կերպարանք ու իմաստ ստացան այդ բարեհամբույր ու խաղաղ քաղաքը և մարդիկ, որ ապրում էին այդ քաղաքում, իմ լրագրող բարեկամ Արթուրը և Ժան Գաբենի դեմքով նրա Ալեքսանդր հայրը, որի մեծադիր ու մտախոհ լուսանկարը կախված էր այն գողտրիկ տան հյուրասենյակի պատից:

Ուրեմն եկեք միասին բացենք այդ տետրը:



Այդ չարաբաստիկ օրը, որը տակնուվրա արեց իմ ամբողջ կյանքը, ես արթնացա ինձ համար սովորական խորն ու անվրդով քնից, անաղմուկ հագնվեցի, իջա բակ ու սկսեցի ռետինե խողովակով ջրել ծաղիկները: Շոգ առավոտ էր ու ես թփից-թուփ տեղափոխելու ժամանակ, երբեմն-երբեմն, իբր ականա, ջրի շիթն իմ վրայով էի անցկացնում, որից փշաքաղվում, հովանում էր մարմինս: Հետո շիթը պահեցի ուղիղ դեմքիս ու հաճույքից փնչալով լվացվեցի հենց տեղում, ծաղիկների մեջ, ոտքերս լայն բացած, որպեսզի չթրջվեն կոշիկներս:

Երբ վերև բարձրացա, Ալիսան պատշգամբում արդեն սեղան էր պատրաստել:

- Բարի լույս, Ալեքսա՛նդր,- ասաց նա,- նախաճաշը բերե՛մ:

- Բեր,- ասացի ես:

Ես ու Ալիսան առավոտի այդ պահը համարում էինք մերը: Դա մեր երջանիկ պահն էր: Արթուրը, Լուիզան, փոքրիկները քնած էին լինում դեռ: Նրանց տաք շնչով լի մի աստվածային խաղաղություն էր իջած լինում տանը: Ես ու Ալիսան նստում էինք պատշգամբում ու քնաթաթախ արտույտների ճովողյունի տակ, լուռ նախաճաշում միասին: Լուռն, իհարկե, պայմանական եմ ասում, որովհետև սովորել էինք առանց բառերի խոսել իրար հետ: Նայում էինք իրար, հասկանում ու ժպտում, մտքում, հարցեր էինք տալիս իրար ու պատասխանում այդ հարցերին: Ուրիշներին դա, իհարկե, անհասկանալի կարող է թվալ, բայց այդպես էր: Չէ՞ որ երեսուն տարի շարունակ, չնչին ընդմիջումներով, մենք հենց այդպես, միասին էինք նախաճաշում: Երբ ես, օրինակ, կաթ լցրեցի իմ բաժակը ու մի կում արեցի, ակամա հարցական հայացքով նայեցի Ալիսային: Ալիսան էլ ինձ նայեց, գլխով արեց ու ժպտաց: Իսկ դա մի ամբողջ երկխոսություն էր:

Ես հարցրեցի.

- Ալիսա՛, մեզ կաթ մատակարարող Մարիի երեխայի վիճակն արդեն լա՞վ է: Բուժվե՞ց ոտքը:

Եվ Ալիսան պատասխանեց.

- Հա՛, հիմա արդեն լավ է: - Ու ավելացրեց: - Ջարմանալ կարելի է. ամեն անգամ ինչպե՞ս ես կարողանում տարբերել, թե ով է այսօր կաթ բերել մեզ:

Քաղաքապետարանի ժամացույցը խփեց ութ անգամ և անմիջապես էլ դողանջել սկսեցին Սուրբ Պետրոս եկեղեցու զանգերը: Անհանգստացած աղավնիները երկար ժամանակ պտտվում էին հեռվում, բարձր բարդիների արանքում փայլող ոսկեգոծ խաչի շուրջը: Հետո ամեն ինչ խաղաղվեց:

- Թեյն այստե՞ղ բերեմ, թե քո սեղանիկի մոտ կլիմես:

- Տար այնտեղ, սիրելի՛ս:

Ես նստեցի բազկաթոռին՝ սեղանիկի մոտ, որի վրա Ալիսան խնամքով արդեն դասավորել էր օրվա փոստը: Ամենավերևում իմ սիրած «Քաղաքացի» լրագիրն էր: Ամեն անգամ ես հաճույքով էի ձեռքս վերցնում այն, որովհետև նրա տերն ու խմբագիրն իմ ամենամտերիմ բարեկամն էր՝ դոկտոր Ադամը:

Ես բացեցի լրագիրն ու անմիջապես էլ զգացի, որ ինչ-որ ծրար ընկավ ոտքերիս մոտ: Տարօրինակ էր, ոչ մի նամակի չէի սպասում: Գուցե սովորական շնորհավորական բացի՞կ է: Ես կռացա ու վերցրեցի ծրարը: Առաջին անգամ էի նման ծրար տեսնում: Ջարմանալի վառ կանաչ գույն ուներ... Վերևի անկյունում ինչ-որ կարմիր դրոշմ էր՝ «Կենտրոնական հանձնաժողով», իսկ ներքևում... Ես վերցրեցի ակնոցս, որպեսզի ավելի լավ տեսնեմ: Ո՛չ, ոչ մի սխալ չկար: Ներքևում մեքենագրված էր իմ հասցեն և իմ անուն-ազգանունը:

Միրտս, չգիտես ինչու, սկսեց խփել հուզված, տագնապով:

Ի՞նչ գործ ունի ինձ հետ այդ հանձնաժողովը: Ի՞նչ կապ ունեմ ես նրանց հետ: Երբևէ որևէ հարցով ես որևէ հանձնաժողովի չեմ դիմել: Ես որևէ հիմնարկության կարիքը չեմ ունեցել

երբեք: Ես աշխատել եմ ազնիվ, ապրել ազնիվ ու անկախ, բարեխղճությամբ վճարել եմ պետական հարկերը, ու թեև դառն ու դժվարին ճանապարհ եմ անցել, ու թեև տեսել եմ և սևը, և սպիտակը, և մնացած բոլոր գույները, որ գտնվում են նրանց արանքում, բայց իմ կարծիքով, միշտ էլ կարողացել եմ ճիշտ կողմնորոշվել ու եթե հասել եմ որոշ բարօրության, ապա միայն և միայն իմ համբերատարության և աշխատասիրության շնորհիվ: Փառք աստծո, աշխարհում չի կարող գտնվել մեկը, որն ինձ նախատի, թե իմ երջանկությունը իր դժբախտության հիմքի վրա է կառուցված: Փառք աստծո:

Ես կյանքում միայն իմ հացն եմ կերել: Եվ ապրել եմ այնպես, ինչպես թելադրել են իմ խիղճն ու բանականությունը: Եվ արդեն հասել եմ իմ կյանքի գենիթին: Որքա՞ն է ինձ մնացել ապրելու:

Եթե մինչև հիմա ինձ հաջողվել է յուրա գնալ առանց որևէ հանձնաժողովի միջամտության, սրանից հետո՝ առավել ևս...

Ուրեմն՝ ի՞նչ է նշանակում այս ծրարը:

Նախքան բացելը ես այն դիտեցի բոլոր կողմերից՝ ներքին անհանգստությամբ ասեմ, թե անբավականությամբ: Բայց վերջապես երկյուղելու ի՞նչ ունեմ, մտածեցի ես սրտնեղությամբ՝ պատռելով ծրարի կողքը: Իմ ձեռքին հայտնվեց խավաքարտի փոքրիկ մի կտոր, որի վրա ոսկեգոծ տառերով տպագրված էր.

«Մեծարգո պարոն Ալեքսանդր: Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնական հանձնաժողովը խնդրում է Ձեզ սույն թվականի սեպտեմբերի 14 -ին, առավոտյան ժամը 11 -ին, ներկայանալ պառլամենտ՝ Ձեզ հետ իբրև անցաթուղթ ունենալով սույն հրավիրատմսը:

Հանձնաժողովի նախագահ՝ դոկտոր Մարտին»:

- Ալիսա՛, - բղավեցի ես, - Ալիսա՛...

- Բերում եմ, բերում եմ թեյը, - լսեցի ես Ալիսայի ձայնը: - Կամաց, ի սեր աստծո, երեխաներին կարթնացնես: Ի՞նչ է պատահել:

- Դու որևէ բան հասկանո՞ւմ ես սրանից, - հարցրեցի ես՝ նրան մեկնելով այդ տարօրինակ անցաթուղթը:

Ալիսան ձեռքն առավ քարտը ու ծիծաղեց:

- Իհարկե, չեմ հասկանում, որովհետև ոչինչ չեմ տեսնում: Իսկ սա ի՞նչ է:

- Ինձ հրավիրում են պառլամենտ, - ասացի ես:

- Որտե՞ղ:

- Պառլամենտ, - կրկնեցի ես:

- Ինչի՞ համար,- հարցրեց Ալիսան՝ նստելով իմ դիմաց, բազկաթոռին,- դու պառլամենտում ի՞նչ գործ ունես:

Ես թոթվեցի ուսերս:

- Իսկ ի՞նչ են գրում,- հարցրեց Ալիսան,- կամ կարդա՛, կամ ի՛նձ տուր ակնոց:

Ու ես կարդացի նորից.

«Մեծարգո պարոն Ալեքսանդր: Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնական հանձնաժողովը խնդրում է Ձեզ սույն թվականի սեպտեմբերի 14-ին, առավոտյան ժամը 11-ին, ներկայանալ պառլամենտ՝ Ձեզ հետ իբրև անցաթուղթ ունենալով սույն հրավիրատմար: Հանձնաժողովի նախագահ՝ դոկտոր Մարտին»:

Ես սպասումով նայեցի Ալիսային: Նա թեյ էր խմում, բայց ես հանկարծ նկատեցի, որ նրա ձեռքի բաժակը դողում է և մանրիկ կնճիռներով պատած բարի աչքերի մեջ տարակուսանք կա:

- Դոկտոր Մարտի՞ն,- մրմնջաց նա:

- Այո՛, այդ ազգանունը քեզ ինչ որ բա՞ն է ասում:

- Ո՛չ, ո՛չ,- անմիջապես հրաժարվեց Ալիսան:

Ինձ թվաց, թե նա ուզում է էլի ինչ-որ բան ասել և շարունակում էի նայել նրան: Եվ Ալիսան իսկույն խոսեց:

- Միրելի՛ս,- ասաց նա,- իսկ դու անհանգստանալու ի՞նչ ունես:

Դե, իհարկե, գրողը տանի: Ես անհանգստանալու ի՞նչ ունեմ: Ահա հարցերի հարցը: Ես անհանգստանալու ի՞նչ ունեմ: Դա ճշմարիտ է: Հենց այդպես է, որ կա: Բայց ի՞նչ կարող եմ անել, եթե անորոշ, անբացատրելի մի տագնապ, մի ահ ներսիցս սկսվում է, բարձրանում, բարձրանում ու պաշարում է ինձ:

- Ես համոզված եմ, որ հետո շատ ես ծիծաղելու քո հուզվելու համար,- ասաց Ալիսան:- Տարրական տրամաբանություն է, եթե տհաճ լուր լիներ, ինչո՞ւ պետք է գրեին «Մեծարգո պարոն Ալեքսանդր»:

Ես նորից ձեռքս առա ծանուցագիրը: Այո՛, այո՛, այդպես էլ գրված էր:

- Դա ձև է,- ասացի ես:- Դա ձև է և երևի ոչ մի նշանակություն չունի նրանց համար:

- Չզիտեմ,- ասաց Ալիսան՝ իրե՞ն, թե ինձ հանգստացնելու համար... - Բայց, իմ կարծիքով, դու չափազանցում ես, Ալեքսա՛նդր: Թեյդ խմի՛ր, սատել է արդեն:

- Աստված տա,- համաձայնեցի ես,- աստված տա:

Թեյը անհամ թվաց ինձ: Մի կում անելուց հետո ցած դրեցի:

- Այսօր ամսի քանի՞ սն է, Ալիսա՛:

- Մեպտեմբերի տասներեքն է:

- Տասներե՞քը,- տնքացի ես:- Այսինքն՝ ինչո՞ւ եմ զարմանում: Նման ծանուցագրեր միայն տասներեքին կարելի է ստանալ:

- Այս դու իմ փնթփնթան,- ծիծաղեց Ալիսան ու անմիջապես էլ իրար խառնվեց: - Բայց տասնչորսը վաղն է: Ես պետք է ճամպրուկ պատրաստեմ քեզ համար: Գիշերային գնացքով կմեկնես, այնպես չէ՞:

Հետո միանգամից գրկեց ինձ:

- Վե՛րջ տուր: Տնքստնքալը քեզ այնպես չի սագում, Ալե՛քս, երբ դու խեղճանում ես, ես ամբողջովին կորցնում եմ ինձ:

Ես ձեռքս դրեցի Ալիսայի ուսին ու ժպտացի: Ու հանկարծ զգացի, որ խաղաղվում եմ: Լավ է, որ աշխարհում ինչ-որ մեկը քո կարիքն է զգում, ապավինում է քեզ: Լավ է, որ դու քեզ պարտավոր ու պատասխանատու ես զգում քո հարազատների, քեզ շրջապատող մարդկանց համար: Երևի հենց դրանով է արժեքավորվում կյանքը, երևի ապրելը հենց դրանով է իմաստ ստանում:

- Դե, ես գնամ, աշխատեմ մի քիչ,- ասացի ես:

- Իհարկե, իհարկե,- ասաց Ալիսան:- Ես էլ գնամ հավաքեմ քո իրերը:

Ես արդեն բացել էի իմ արհեստանոցի դուռը, երբ Ալիսան ձայն տվեց:

- Ալեքսա՛նդր...

- Այո՞ ...

- Ինչ էլ որ պատահի քեզ հետ, ինչ էլ որ ասեն քեզ այնտեղ,- նա ընդգծեց այնտեղ բառը,- ինչ արդյունքով էլ որ ավարտվի ձեր հանդիպումը, դու համոզված եղիր, որ ես միշտ, ամբողջ կյանքում սիրել եմ քեզ: Եվ որ ինձ համար միշտ, միշտ մեծ երջանկություն է եղել քո կողքին լինելը:

Նրա աչքերը միանգամից արցունքով էին լցվել:

- Հիմար աղջիկ,- ծիծաղեցի ես:- Դո՞ւ ինչ կապ ունես այդ պատմության հետ: Ես կատակում էի, Ալիսա՛, ես բոլորովին էլ անհանգստացած չեմ: Ես ի՞նչ գործ ունեմ կառավարության հետ: Ես համոզված եմ, որ դա թյուրիմացություն է: Հանգի՛ստ եղիր, սիրելի՛ս...

Ալիսան ուզեց ինչ-որ բան ասել, բայց չգիտես ինչու, փղձկաց, թափ տվեց ձեռքը ու մանրիկ, երերուն քայլերով ցած իջավ սանդուղքով: Ավա դ, շատ է ծերացել իմ Ալիսան:

«Լալկան ծերուկ,- հայիոյեցի ես ինքս ինձ,- այնքան ախ ու վախ արեցիր, մինչև որ հունից հանեցիր խեղճին: Լրիվ կորցրել է իրեն: Ի՞նքն ինչ կապ ունի: Ինչէ՞ր էր ասում: Ինչո՞ւ էր լալիս: Խելառ ծերուկ»:

Ու մտա իմ արհեստանոցը, մտա թե չէ, մոռացա ամեն ինչ, խաղաղվեց հոգիս: Մա իմ թագավորությունն է: Այստեղ տերն ու տիրակալը ես եմ: Այստեղ ամեն ինչ իմ ձեռքով է ստեղծված ու ենթարկվում է ինձ:

- Բարև ձեզ,- ամեն անգամվա նման բարձրաձայն ասացի ես:- Ո՞նց եք:

Ու հաստատ իմ արհեստանոցի բոլոր անկյուններից պատասխան ստացա:

Առանց կեղծ համեստության կարող եմ ասել, որ ոչ միայն մեր քաղաքում, այլև ամբողջ հանրապետության մեջ ինձ նման խամաճիկների վարպետ չկա: Իմ առօրյա աշխատանքին զուգընթաց արդեն երեսուն տարի է, ինչ ես խամաճիկներ, խրտվիլակներ, տիկնիկներ եմ պատրաստում: Իսկ հանգստի անցնելուց հետո, արհեստանոցից փաստորեն դուրս չեմ գալիս: Բոլոր գործիքները, մեքենաներն ու անհրաժեշտ նյութերն ունեմ: Տաշում եմ, հղկում եմ, կտրում ու կարում եմ, մանրաշարժիչներ եմ տեղադրում ու ներկում եմ: Մա իմ Դիսնեյ-լենդն է: Այսինքն՝ իմ բարեկամները ուղղակի Ալեքսանդր-լենդ են անվանում:

Երբ միացնում եմ հոսանքը, ձգում համապատասխան թելը կամ սեղմում ինձ հարկավոր կոճակը, լուսավորվում, կենդանանում, աշխուժանում է իմ հեքիաթ-քաղաքը: Աքաղաղն անհանգիստ պտտվում է տեղում, գույնզգույն թևերը թափահարելով ու վեր գցելով կտուցը՝ ծուղրուղու է կանչում. իր փոքրիկ բնից դուրս թռչելով հաչում է շունը. բաղիկները կարմիր տոտիկները արագ-արագ շարժելով դեպի գետափ են իջնում. որսորդը բարձրացնում է հրացանը ու կրակում որոտաձայն. գորտն ուռցնում է կանաչ մեջքը ու կոկոռում տազնապով. ավտոմեքենաները կատաղի վազք են սկսում փոքրիկ հրապարակում. գնացքը, փնչալով ու խաղացնելով լույսերը, անհետանում է մամռապատ թունելի մեջ, և վառ խայտանկար զգեստներով աղջիկները նազանքով պարում են գմբուխտ մարգագետնի վրա...

Եվ էլի ինչէ՞ր ասես... ինչէ՞ր ասես...

Իսկ ես կանգնում եմ դեկավարման վահանի մոտ, որը սարքելու համար մեր հին «Ռեմինգտոն» գրամեքենան եմ օգտագործել, սեղմում եմ համապատասխան կոճակները, ձգում անհրաժեշտ լարերը ու իմ հրամանով, իմ թելադրանքով մեկը մյուսի ետևից, հերթով խաղում, շարժվում, ցատկոտում ու խոսում են իմ հնազանդ, իմ խելացի խամաճիկները:

Մի՞թե դրանից ավելի մեծ վայելք կարող է լինել:

Ալիսան ծիծաղում է միշտ.

- Ես ողջ կյանքում միայն քո տիկնիկների նկատմամբ եմ խանդ ունեցել:

Եվ նա իրավունք ունի: Երբ ես իմ տիկնիկների հետ եմ, ինձ ոչ մի ուժ արհեստանոցից դուրս բերել չի կարող: Որովհետև ես ինձ երջանիկ եմ զգում հեքիաթի իմ թագավորության մեջ: Ես սովորական մարդ եմ ի վերջո, իմ հազար ու մի տարօրինակություններով ու

թուլություններով, ինչպես հոգեբաններն են վերջերս հորինել՝ հազար ու մի կոմպլեքսներով: Բայց երբ իմ խամաճիկների հետ եմ, ես անթերի եմ: Ես հզոր եմ:

Արդեն մի ամիս է, ինչ աշխատում եմ մի շատ հետաքրքիր խաղալիք պատրաստել: Կապիկ-թմբկահար: Նա պետք է կարողանա ոտքերով աշխատեցնել թմբուկները, թաթերով խփել ծնծղաներին և բերանն էլ բաց ու խուփ անել՝ ցուցադրելով կարմիր լեզուն: Խաղալիքի հետ միաժամանակ միանում է նաև մագնիտոֆոնը և ճիշտ նույն ռիթմով, բայց հասկանալիորեն լիովին պրոֆեսիոնալ նվագախմբի կատարմամբ հնչում է Բիզեի «Կարմենի» նախերգանքը: Շատ ծիծաղելի կլինի:

Ամեն ինչ ստացվում է, բացի թմբկահար կապիկի ձախ ոտքի աշխատանքից: Ռիթմիկ չի շարժվում, ծանրանում, կախվում, անջատվում է շարունակ:

Ես թմբուկների վրայից վերցնում եմ կապիկի խրտվիլակը, քանդում եմ մաս-մաս, առանձին-առանձին ստուգում լարերը, պտուտակները, դիմադրություններն ու կիսահաղորդիչները: Յուրում եմ շարժվող-աշխատող լծակները: Ու հավաքում եմ նորից համբերությամբ, զգուշությամբ, բծախնդրությամբ: Այդ ամենը ինձնից չորս ժամ է խլում, բայց ես ոչ թե սրտնեղում, այլ ուրախանում եմ անցնող ժամերի համար: Որովհետև չեմ ուզում կանգ առնել, չեմ ուզում մտածել: Չեմ ուզում հիշել այդ անիծյալ ծանուցագիրը, որը շատ ջերմ ու բարեկամական սկիզբ ունի. «Մեծարգո պարոն Ալեքսանդր»:

Իմ թիկունքում կամացուկ բացվում է դուռը: Ես շրջվում եմ անբավականությամբ և հանդիպում Արթուրի մտախոհ այքերին:

- Հայրի՛կ, դու մայրաքաղա՞ք պիտի մեկնես: Ուզո՞ւմ ես ես տանեմ քեզ իմ ավտոմեքենայով:

- Կարիք չկա, տղա՛ս,- ասում եմ ես,- գնացքով ավելի հարմար է:

- Դե, դու գիտես, հայրի՛կ,- ասում է Արթուրը:

Նա չի հեռանում: Ես իմ թիկունքին զգում եմ նրա հայացքը:

- Իսկ ուզո՞ւմ ես գամ քո ետևից, միասին վերադառնանք:

Ամբողջ օրվա սրտնեղությունս ու անբավականությունս պոռթկում են միանգամից:

- Իսկ ես ի՞նչ գիտեմ, թե ինչի համար են կանչել և որքան են պահելու,- շրջվելով բղավում եմ ես:- Դու տեսե՞լ ես, որ ես երբևէ ծանուցագիր ստանամ:

Արթուրը զարմացած ու վախեցած ինձ է նայում, և ես ամաչում եմ իմ թուլության համար:

- Ների՛ր, տղա՛ս,- ասում եմ ես: - Ջղերս կարծես թե կարգին չեն:

Նա շատ զուսպ տղա է, բայց այսօր չգիտես ինչ է պատահել, միանգամից մոտենում, գրկում է ինձ ու ասում է հևալով, արագ-արագ, շուտասելուկի պես.

- Չնեղանաս, հայրի՛կ, բայց ես համոզված եմ, որ քեզ մայրաքաղաք կանչելը մեծ ուրախության հետ է կապված: Ա՛յ կտեսնես, ուզո՞ւմ ես գրագ գանք: Մեկը հինգի դեմ: Կամ ուզում են քեզ որևէ պատվավոր հանձնարարություն տալ կամ էլ այդ ծանուցագիրը քո արվեստանոցի հետ է կապված: Գրագ գանք:

Արթուրը համառորեն իմ արհեստանոցին արվեստանոց է անվանում:

- Իմ արհեստանոցի՞,- հարցնում եմ ես, ու թեև անմիջապես մտածում եմ, որ դրա մեջ տրամաբանություն կա, բայց շարունակում եմ թերահավատորեն:- Ա՛յ թե բան ասացիր: Խաղալիքները նրանց ինչու՞ պետք է հետաքրքրեն, տղա՛ս, ուրիշ բան է, եթե ես նոր զենքեր հորինեի:

- Իսկ ես համոզված եմ, որ դրա համար կլինի,- ծիծաղում է Արթուրը:- Հը՞, գրագ գա՞նք, մեկը յոթի դեմ: Քեզ անպայման կխնդրեն ձևավորել քաղաքային այգին կամ որևէ նոր այգի ու խոշորացնելով տեղադրել քո հրաշալի խաղերը: Իհարկե, նրանք հո կույր չե՞ն: Գիտե՞ս, թե որքան օգուտ կարող է բերել նման հեքիաթ-քաղաքը: Մեկ տարում ողջ ծախսը կծածկի: Երեխաները ծնողներին քարշ տալով այգի կբերեն: Էլ չեմ խոսում զբոսաշրջիկների մասին: Այդ հեքիաթ-քաղաքը մեր ամբողջ երկրի հարստությունն ու զարդը կդառնա: Չե՞ս հավատում:

Ի՞նչ ասեմ, երբ ինձ մոտ խոսում են իմ խաղալիքների մասին, ես մեղմանում, փափկում եմ: Դրանից հետո ինչ ուզեն, կարող են անել ինձ հետ և ինչ ասես կարող են ուզել ինձնից: Մերժել չեմ կարողանա: Արթուրն անգիր գիտի իմ այդ թուլությունը և չեմ կարող ասել, թե չի օգտվում դրանից, երբ ուզում է որոշ գումար պոկել ինձնից՝ լուսանկարչական նոր սարք կամ մի նոր մագնիսոֆոն գնելու համար:

Ես ծիծաղում եմ բարեսրտորեն ու մատս թափահարում եմ նրա վրա:

- Դե լավ, լավ, ամեն ինչ կարգին է, տղաս:

Արթուրն էլ իր հերթին է ծիծաղում:

- Դե, եթե ամեն ինչ կարգին է, ուրեմն համարձակվում եմ զեկուցել, որ քեզ դուկտոր Ադամն էր զանգահարում:

- Ադա՞մը: Ի՞նչ էր ուզում:

- Չգիտեմ, հայրի՛կ:

Ադամը: Ինչպե՞ս էի մոռացել նրան: Անհնարին է, որ նա տեղեկություն չունենա այդ ծանուցագրի մասին: Անհնարին է, որ նա որևէ բանի մասին տեղեկություն չունենա: Ինձ թվում է, թե նա իմանում է որևէ իրադարձության մասին, երբ այդ իրադարձությունը դեռ տեղի էլ չի ունեցել: Նա ինֆորմացիայի իսկական խտացուցիչ է: Նույնիսկ անեկդոտ է դարձել: Երբ հավաքվում ենք ընկերներով, բարեկամներով, մեկն ու մեկը անպայման պետք է հարցնի Ադամին:

- Բարեկամս, առավոտվանից տանը չեմ եղել, կարո՞ղ ես ասել, թե ինչպես են կինս, երեխաներս...

Էլ չեմ խոսում ֆիրմաների, գործարանների, քաղաքային վարչությունների գործունեության մասին: Երևի այդ հարցում զգալի դեր ունի նաև «Քաղաքացի» լրագրի խմբագիր լինելը, թերևս, բայց դոկտոր Ադամն ամեն ինչ գիտե. ում վիճակն է լավ, ումը վատ, ով է սնանկանալու, ով է տիրանալու ժառանգության, ով է ամուսնանալու, ում հետ և ով է շուտով կանգնելու դատարանի առաջ: Ինֆորմացիայի ֆենոմեն է այդ մարդը: Այսինքն՝ անկեղծորեն որ ասեմ, անձամբ ես ամեն ինչին տեղյակ լինելու նրա տաղանդին եմ պարտական իմ այսօրվա կյանքով: Եթե նա ինձ ճիշտ ժամանակին չփրկեր մի ահավոր վտանգից, չգիտեմ թե որտեղ և ինչպես կավարտվեր իմ կենսագրությունը: Դոկտոր Ադամը: Իհարկե:

Իմ կապիկը, այնուամենայնիվ, հրաժարվում է թմրկահարել ձախ ոտքով: Ոչինչ, վաղն ավելի համառ և ուշադիր կլինեմ: Ես անջատում եմ արհեստանոցի հոսանքը, հավաքում եմ գործիքները, յուրաքանչյուր լար ու մասնիկ խնամքով իր հատուկ տուփի մեջ եմ տեղավորում, ծորակի տակ լվանում եմ ձեռքերս և ամեն օրվա աղոթքի պես դիմում եմ իմ սիրելի խամաճիկներին՝ իմ գեղջուկներին ու գեղջկուհիներին, գազանիկներին ու տնային կենդանիներին, իմ թագավորության բոլոր հպատակներին.

- Շնորհակալություն, մնաք բարով մինչև վաղը...

Ու հաստատ լսում եմ նրանց պատասխանը:

Պատշգամբում, հեռախոսի սարքը բերելով սեղանիկի մոտ, նստում եմ բազկաթոռին և հավաքում «Քաղաքացի» լրագրի խմբագրի հեռախոսի համարը: Լսափողը հենց Ադամն է վերցնում:

- «Քաղաքացին» լսում է,- հնչում է նրա թավ, հաճելի բարիտոնը:

- Ձեզ հետ քաղաքացի Ալեքսանդրն է խոսում,- ասում եմ ես:

- Օ՛, Ալեքս, ինչո՞վ ես զբաղված, ծերուկ,- բղավում է նա:- Ես քեզ զանգահարեցի և Արթուրն ասաց, որ արհեստանոցում ես: Նոր բա՞ն կա: Ե՞րբ ենք տեսնվելու: Վաղը երեկոյան ի՞նչ ես անելու, Ալեքս...

- Իսկ մի՞թե դու չգիտես, թե ես ինչ եմ անելու,- ասում եմ ես:

Ադամը ծիծաղում է:

- Գիտեմ, իհարկե, գիտեմ, վաղը երեկոյան տիկին Ալիսայի հետ դուք մեր տանն եք լինելու և փորձելու եք տիկին Էլիզաբեթի պատրաստած նոր, ֆանտաստիկ տորթը, որը թեև չգիտես ինչու «Այլա մարշալ» է կոչվում, բայց անմիջապես թեթևորեն կուլ է գնում շարքային զինվորի պես:

- Վաղը ես մայրաքաղաքում եմ լինելու,- ասում եմ ես:

- Մայրաքաղաքն՝ ւմ: Ինչո՞ւ:
- Չգիտեմ,- ասում եմ ես: Իսկ քեզ չե՞ն կանչել:
- Ի՞նչ: Ո՞վ:- Նրա ձայնի մեջ արդեն որոշ անհանգստություն կա:
- Ինձ թվում էր, որ եթե հարկ են համարել ինձ ծանուցագիր ուղարկել, ապա պետք է ծանուցագիր ուղարկած լինեին հանրապետության բոլոր քաղաքացիներին անխտիր:
- Իսկ ո՞ւր են հրավիրել,- հարցնում է Ադամը:
- Պառլամենտ:
- Քե՞զ, պառլամենտ,- արդեն լրիվ զարմացած, հարցնում է նա:
- Այո,- ասում եմ ես:

Լսափողի մեջ հանկարծ սրտագին ծիծաղ եմ լսում:

- Ինչ-որ մեկը փորձում է խաղալ հոգուդ հետ, ծերու՛կ:- Ծիծաղի միջից ասում է Ադամը:- Չե՞ս կարծում, որ դա ընդամենը թակարդ է: Բոլորն էլ գիտեն, որ դու քո հայացքներով, եթե կարելի է ասել, անկախ, իշխանությունների հետ որևէ առնչություն չունեցող մարդ ես, դրա համար էլ ինչ-որ մեկը վճռել է հիմար կատակ անել քեզ հետ: Իհարկե: Իսկ ո՞վ է հրավիրողը: Ստորագրություն չկա՞:
- Կա, ստորագրել է ինչ-որ դոկտոր Մարտին:
- Դոկտոր Մարտին՞,- անմիջապես հարցնում է Ադամը:- Չե՞ս սխալվում:
- Ո՛չ,- ասում եմ ես:- Հրավիրատուսը իմ ձեռքին է: Կարող եմ կարդալ:
- Կարդա,- կարծես թե ընկճված ձայնով առաջարկում է նա:

Ես բառ առ բառ ընթերցում եմ ծանուցագիրը:

Հեռախոսի այն ծայրում լռություն է տիրում:

- Դու ինձ լսո՞ւմ էիր,- հարցնում եմ ես:
- Այո՛, այո՛,- հապճեպ պատասխանում է Ադամը:- Լսում եմ, լսում: Ուղղակի մտածում եմ:
- Իսկ դու ճանաչո՞ւմ ես այդ դոկտոր Մարտինին,- հարցնում եմ ես:
- Այնպես, ընդհանուր առմամբ,- ձգում է Ադամը:- Գիտեմ, որ այդպիսի մեկը կա...
- Բայց ինչո՞ւ եմ ես նրան պետք եկել,- նորից սրտնեղում եմ ես:- Ոչինչ չե՞ս ենթադրում, պարոն ամենագետ:

Աղամը կրկին ծիծաղում է, բայց ինձ թվում է, թե նրա ծիծաղի մեջ ինչ-որ նյարդայնություն կա:

- Ի պատասխան որոշ հարցերի, նույնիսկ Դելֆիի պատգամախոսը լռում էր, բարեկամս,-
ասում է նա:- Վերադառնա թե չէ, զանգահարիր: Եթե պետք լինեմ, զանգահարիր հենց
մայրաքաղաքից: Դու գիտես, որ ինչ գործ էլ ունենամ, կթողնեմ ու կգամ քեզ մոտ:

- Գիտեմ,- ասում եմ ես,- շնորհակալություն, Աղա՛մ:

Նա, ի պատասխան, ինչ-որ բան է փնթփնթում լսափողի մեջ: Երևի բարի ճանապարհ է
մաղթում:

Երեկոյան Արթուրն իր ավտոմեքենայով ինձ երկաթուղային կայարան տարավ: Մենք
սլացանք Ազատության փողոցով և համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմներում
գոհվածների հիշատակին նվիրված փառահեղ հուշարձանի մոտով թեքվելով, մտանք
գունավոր գովազդներով ողողված Հյուսիսային մայրուղին: Ասես վախենալով լռությունից,
Արթուրն ամբողջ ճանապարհին խոսում էր: Նա չափից ավելի էր գրգռված, և ես մեկ
հասկանում էի նրան ու մեկ էլ չէի հասկանում:

Կառամատույցում շատ քիչ մարդ կար, ես ոչ մի ծանոթի չհանդիպեցի, և դա ուրախացրեց
ինձ: Ահավոր տհաճ կլիներ հիմա մի որևէ հետաքրքրասերի հարցերին պատասխանելը:

Արթուրը սպասասրահ մտավ ու վերադարձավ գրեթե անմիջապես՝ բերելով իմ տոմսը:

- Կմեկնես երկտեղանոց կուպեում,- ասաց նա,- բայց մենակ կլինես: Տոմսավաճառը սիրալիր
համաձայնեց չվաճառել երկրորդ տոմսը:

- Եվ ի՞նչ արժեր այդ սիրալիրությունը:

Արթուրը ժպտաց, ու ես խառնեցի նրա մազերը:

- Դե, դու գնա,- ասացի ես:

- Նախ դո՛ւ բարձրացիր,- ասաց Արթուրը:

Ես վազոն բարձրացա, մտա իմ կուպեն և չվաճառված տոմսի ուղևորի նստատեղին դրեցի
Ալիսայի պատրաստած փոքրիկ ճամպրուկը: Արթուրը դեռ կանգնած էր կառամատույցում,
իմ պատուհանի տակ: Ես ցած իջեցրի ապակին:

- Մնաս բարով, տղա՛ս,- ասացի ես:- Տանը ուշադրությո՛ւն դարձրու:

- Հայրի՛կ,- հանկարծ ձայնեց Արթուրը:- Հայրիկ, ուզո՞ւմ ես ես ավտոմեքենայով գամ գնացքի
կողքով: Որտեղ որ ուզենաս՝ կիջնես...

Գնացքը շարժվեց անաղմուկ, ու ես ստիպված էի գլուխս դուրս հանել պատուհանից.

- Ուղիղ տուն,- ասացի ես:- Լսո՞ւմ ես, ուղիղ տուն...

Արթուրը գլխով արեց, և քիչ անց նրա բարեկազմ, սլացիկ կերպարանքը՝ հետզհետե աղոտանալով, անհետացավ երկաթուղային կայարանի լուսավոր մշուշի մեջ:

Ես նստեցի իմ թիկնաթոռին՝ նախապես վրայից վերցնելով ու մի կողմ դնելով փափուկ ծածկոցը: Առանց այդ էլ շոգ էր: Է՛հ, միևնույն է, քնել չի հաջողվի: Քնել չի հաջողվի, եթե նույնիսկ թիկնաթոռների փոխարեն մահճակալներ լինեին մեր գնացքներում: Իսկ մահճակալներ չկան, որովհետև փոքրիկ է մեր երկիրը, ուզենաս՝ ոտքով էլ կանցնես մի ծայրից մյուսը:

Ես ետ ընկա թիկնաթոռին, փակեցի աչքերս ու մնացի ինքս ինձ հետ:



Գնացքը հանդարտ օրորվում էր մթության մեջ: Կոպերիս վրայով համաչափ ընդհատումներով գալիս ու սրընթաց հեռանում էին էլեկտրասյունների աղոտ լապտերները: Ճիշտ այդ լապտերների նման հիշողությանս մեջ առկայծելով հայտնվում ու ակնթարթորեն անհետանում էին նաև իմ երկար կյանքի պատառիկները: Իհարկե, ոչ բոլորը: Որոշ պատառիկներ գալիս, խոշորանում ու ստոպ-կադրի նման անշարժանում էին աչքերիս առաջ: Ես հեռացնում էի դրանք, բայց հաջորդ լապտերի հետ նույն պատկերները գալիս, խոշորանում ու կրկին անշարժանում էին աչքերիս առաջ:

Ինչպես հին պահարանն ես քրքրում՝ վաղուց մոռացված ինչ-որ իր փնտրելու համար, ուղեղս այդպես իմ կենսագրությունն էր քրքրում:

Մի՞ թե ես երբևէ արել եմ այնպիսի մի բան, որ հանկարծ այդ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնական հանձնաժողովի ուշադրությունն է գրավել: Անհետթություն է: Ես երբեք իրադարձությունների կենտրոնում չեմ գտնվել: Ես միշտ շարքային եմ եղել: Շարքային: Եվ երբեք շարքի առջևում չեմ հայտնվել, թեև դրա համար հնարավորություններ եղել են: Երբեք իմ ենթակայության տակ չեմ ունեցել որևէ մեկի: Ես ոչ ոքի չեմ կարգադրել, չեմ շահագործել ոչ մեկի աշխատանքը, ոչ ոքի պատերազմ չեմ ուղարկել:

«Բացառությամբ, իհարկե, իմ տիկնիկների,- մտքերի այդ անհանգիստ հորձանքում հասցրեցի ժպտալ ես:- Ես նրանց հետ ինչպես ուզել վարվել եմ»:

Այո, այո, որքան էլ որ բորբոքեմ հիշողությունս, երբեք որևէ իրադարձության կենտրոնում չեմ եղել ես: Բացի... բացի այն ողբերգական օրից, երբ սոսկալի որոտը փշրեց դպրոցի լուսամուտների ապակիները ու մեր բնագիտության ուսուցիչ պարոն Նաթանիելը «պատերա՛զմ» բղավելով դուրս վազեց դասարանից:

Ոչինչ չհասկանալով, ուրախ ճիչ-աղաղակներով նրա ետևից դուրս թափվեցինք նաև մենք՝ կարծելով, թե դա տազնապ-խաղի ազդանշան է և սկսվելու է «կռիվ-կռիվ»-ը, որ հաճախ էինք խաղում: Ցատկոտելով ու հրմշտելով իրար, բակ իջանք, ու տեսանք, որ փոշու վիթխարի ամպ է կանգնած այն տեղում, որտեղ մեր քաղաքի միակ փոքրիկ գործարանն էր: Այդ գործարանում պաշտոնական հրավառությունների և զանազան տոնական խաղերի համար

պայթուցիկ, լուսավորող, ճարճատող, հուրհրալով երկինք խոյացող ու հեքիաթային գույներով անձրևի նման երկնքից ցած թափվող խաղալիքներ էին պատրաստում: Իսկ պատերի տակ տեղավորված էին մեր ժամանակավոր փայտե տնակները: Ժամանակավոր, մինչև որ շենք կառուցեին բանվորների համար:

Հետո մենք մայրերին կորցրած քաղցած գառնուկների նման մայելով ու լալով դեպի փոշու վիթխարի ամպն էինք վազում, որի միջից, ինչպես ուրախ տոնախմբությունների ժամանակ, կրակի գույնզգույն ցուլքեր էին ճարճատելով բարձրանում երկինք:

Մեր դիմաց ծուխ ու մրից սևացած դեմքերով ինչ-որ մարդիկ հայտնվեցին: Նրանք փակում էին մեր ճանապարհը, բռնում էին մեզ, բղավում էին խոպոտած ձայներով.

- Ո՞ւր, ո՞ւր...

- Տո՛ւն,- լալիս էինք մենք,- տո՛ւն...

Այդ ժամանակ ես ութ տարեկան էի: Այդ օրվանից ես ամեն անգամ ցնցվում եմ, երբ որևէ տեղից պայթյունի ձայն եմ լսում և սարսափում եմ հրավառություններից, որովհետև ինձ թվում է, թե դրանցից հետո, ահա՛, ահա, ուր-որ է աղեկտուր ճչալու են որբացած երեխաները:

Գիշերը ես անցկացրեցի օտար տան մեջ, օտար մարդկանց շրջապատում: Մեծերը շրջում էին անաղմուկ, խոսում էին շշուկով, ստիպելով կերակրում էին, նայում էին ինձ, հառաչում ու լալիս էին, իսկ երեխաները իմ ձեռքն էին խոթում իրենց ամենալավ, ամենաթանկագին խաղալիքները:

Այո, այդ օրը ես իրոք որ ուշադրության կենտրոնում էի:

Հետո... հետո ինձ մանկատուն տարան: Ես այնտեղ վատ չէի զգում, որովհետև բոլորն էլ ինձ նման որբեր էին և որովհետև լավ էին կերակրում, շատ ավելի լավ, քան մեր տանը: Ամեն առավոտ քաղցր կաթով սպիտակ, փափուկ կարկանդակներ էին տալիս մեզ: Օրերն անցնում էին լարված ու հետաքրքիր, դասերից հետո մենք սովորում էինք նկարել, նվագել զանազան գործիքների վրա և երգում էինք ուրախ, հաղթական, հայրենասիրական երգեր:

Մեզ համար ամենածանր ու ամենահանգիստ օրը կիրակին էր:

Այդ օրը, նախաճաշից հետո մեզ շարք էին կանգնեցնում մարզասրահում և ինչ-որ տեղերից եկած պարոններ ու տիկիներ չափազանց շքեղ հագնված, ձեռնափայտերով ու հովիարներով անցնում էին մեր առջևով, ուշադրությամբ և լայն ժպտալով առանձին-առանձին դիտում էին մեզ, նվերներ էին մատուցում և սիրալիր խոսքեր մրմնջալով շոյում էին մեր այտերն ու մազերը: Եվ ամեն անգամ, նրանց գնալուց հետո, մեր շարքերը նոսրանում էին:

Մենք վաղուց գիտեինք, թե ովքեր են նրանք և ինչու են այցելում մեզ: Եվ մեզանից յուրաքանչյուրը հոգու խորքում համոզված էր, թե հաջորդ կիրակի իրեն կժպտա բախտը: Թե աչքերի գրեթե աննկատ շարժումով հենց իրեն ցույց կտա օձանելիքի անուշ բույր տարածող որևէ լեղի: Թե ինքը՝ իբրև նույն բախտին արժանանալու նշան, ձեռքը ընկերների գլուխներին դնելով, ուրախ հրաժեշտ կտա նրանց և նորից կունենա իր տունը:

Ծանր ու հոգեմաշ կիրակիները անցնում էին իրար ետևից: Ամեն կիրակի հուզված ու սպասումով շարք էինք կանգնում մենք, բայց ոչ ոք, ոչ ոք չէր նկատում ինձ, թեև ամեն անգամ խոզանակում և արդուկում էի շորերս, խնամքով լվացվում ու սանրում էի մազերս: Զո՛ւր, գուր ջանքեր: Ոչ ոք չէր նկատում ինձ:

Մեր դաստիարակչուհի օրիորդ Նանան, յուրաքանչյուր ստուգատեսից հետո, ասում էր ինձ կարեկցանքով.

- Ալե՛քս, սիրելի՛ս, որպեսզի ընտրեն քեզ, դու պետք է նրանց նայես նվիրված աչքերով ու ժպտաս: Տես, ա՛յ, այսպես, հասկանո՞ւմ ես: Ա՛յ, այսպես...

Ես հասկանում ու փորձում էի: Բայց ինձ մոտ երևի ինչպես հարկն է չէին ստացվում ոչ նվիրված հայացքը և ոչ էլ ժպիտը: Եվ այդպես էլ չստացվեցին ամբողջ կյանքում:

Այդ ողջ ժամանակամիջոցում միայն մի անգամ ինձ թվաց, թե հիմա ուր որ է վճռվելու է նաև իմ բախտը: Ծննդյան տոներին նախորդող կիրակի օրն էր: Ամբողջովին սևեր հագած, տխուր աչքերով մի կին երկար-երկար նայում էր ինձ: Նա սառնաշաքարե կարմիր աքաղաղներ բաժանելով անցավ մեր շարքի առջևով, հետո նորից անցավ ու երկար-երկար նայում էր ինձ: Միրտս խփում էր հուզմունքից, ծալվում էին ծնկներս, ես նայում էի նրան նվիրված հայացքով ու ժպտում էի:

Կինը մոտեցավ օրիորդ Նանային ու ինչ-որ բան խոսեց նրա հետ՝ հայացքը չկտրելով ինձանից: Օրիորդը ևս իմ կողմը նայեց ու ժպտաց ուրախ: Հետո նրանք երկուսով մոտեցան մեր մանկատան տնօրեն պարոն Ռոբերտին: Եվ կինը նորից խոսում էր ու իմ կողմն էր նայում: Իմ կողմը շրջվեց նաև պարոն Ռոբերտը, նայեց ուշադիր, սևեռուն, ասես առաջին անգամ էր տեսնում, ու ինձ թվաց, թե տարուբերեց գլուխը: Միրտս ասես կանգ առավ: Քիչ հետո տխուր աչքերով կինը արագորեն մոտեցավ ինձ:

- Ես էլի կգամ, տղա՛ս,- ասաց նա՝ քնքշորեն շոյելով մազերս:- Սպասիր ինձ:

Գլուխս պտտվեց, նրա ձեռքերից վաղուց անցած-մոռացված, բայց շատ ծանոթ ու հարազատ հոտ զգացի ես, որ մորս ձեռքերից էր գալիս: Եվ հետո, շատ հետո համոզվեցի, որ դա ընդամենը լվացքի փոշու սովորական հոտ է եղել:

Երեկոյան օրիորդ Նանան ինձ մի կողմ տարավ և դավադիրի նման չորս կողմը նայելով, շշուկով ասաց, որ սևազգեստ կինը ցանկություն է հայտնել որդեգրել ինձ, սակայն, պարոն Ռոբերտը մերժել է, պատճառաբանելով, թե մանկատան վարչությունը այլ ծրագրեր ունի իմ նկատմամբ: Եվ կինը հեռացել է վշտացած, հայտարարելով, որ ինքը ստիպված կլինի դիմել քաղաքապետին:

Թե ինչ ծրագրեր էին դրանք, ես իմացա հենց հաջորդ առավոտ, երբ ինձ կանչեցին պարոն Ռոբերտի առանձնասենյակը:

- Նստի՛ր, Ալեքսա՛նդր,- առաջարկեց բարձրահասակ ու նիհար պարոն Ռոբերտը, իսկ ինքը վեր կացավ ու սկսեց գնալ-գալ առանձնասենյակում, առանց ինձ նայելու, ձեռքերը թիկունքին դրած, լայն-լայն քայլերով, զսպանակելով մեկ մի, մեկ մյուս ոտքի թաթի վրա:- Դու արդեն

փոքր չես, տասնչորս տարեկան ես: Քո տարիքի տղաներն աշխատում են վաղուց: Բայց հաշվի առնելով քո բարձր առաջադիմությունը և օրինակելի վարքը, մենք միջնորդում ենք, որպեսզի քաղաքապետարանի թոշակով քեզ ընդունեն գյուղատնտեսական դպրոց: Շնորհակալության հարկ չկա: Դու արժանի ես դրան:

Նա կանգ առավ իմ առջև, շարունակելով ճոճվել թաթերի վրա և վերնից ներքև ինձ նայելով, ավելացրեց.

- Պատրաստվի՛ր, կես ժամ հետո ճանապարհ ես ընկնելու:

Իմ աչքերի առջև հայտնվեց տխուր աչքերով սևազգեստ կինը: Նա ինձ ասաց. «Ես էլի կգամ, տղա՛ս: Տղա՛ս,- ասաց նա,- սպասիր ինձ»: Ես ուզեցի առարկել, ասել, որ դա անագնավություն է այն բարի կնոջ նկատմամբ, որ ես ոչ մի դպրոց չեմ ուզում: Որ ինձ ընտրել են: Երեկ: Եվ որ դուք լավ գիտեք դա:

Ես ուզեցի ասել... Բայց փոխարենը գլխով արեցի ու լուռ դուրս եկա դիրեկտորի առանձնասենյակից:



Գյուղատնտեսական դպրոցում սովորելու երկար ու ձիգ տարիներից միայն երկու բան է մնացել հիշողությանս մեջ: Մեկն այն, որ ինձ ուզում էին գյուղատնտեսության ղեկավարման-տնտեսագիտական բաժին ընդունել, բայց ես համառորեն հրաժարվելով, բուլդոզերավար դարձա: Իսկ մյուսը դպրոցի տեսուչ պարոն Հանսոնի անհասկանալի և անսահման ատելությունը իմ նկատմամբ: Նա ինձ հալածում էր ամենուրեք, դիտողություններ էր անում ամեն ինչի համար և բոլորի ներկայությամբ: Նրան դուր չէին գալիս ո՛չ իմ ողջունելը («Մի՞ թե այդպես են բարևում: Ետ դառ ու նորից անցիր իմ մոտով»): Ոչ իմ հագնվելը («Դու ուսանո՞ղ ես, թե խրտվիլակ: Այդ ինչպե՞ս ես հագնվել: Հանվիր հենց այստեղ, արագ-արագ, նորից հագնվիր»): Ոչ էլ նույնիսկ իմ ուտելը («Այ տղա, ի՞նչ ես բերանդ չփչփացնում: Տանը քեզ հաց չե՞ն տալիս»): Երբ հիանալի գիտեր, որ ես տուն չունեմ, որովհետև կիրակի օրերին բոլոր ուսանողներն իրենց տներն էին գնում և միայն ես էի մնում դպրոցում:

Նրա չարությունն ու ատելությունն իմ նկատմամբ այնքան բացահայտ ու անարդար էր, որ իմ ընկերներից ոմանք ինձ խորհուրդ տվեցին բողոքել դիրեկտորին: Հատկապես Առնոլդը՝ իմ ամենամտերիմ ընկերը:

- Դու էլ նրա՛ դեմ կռվիր,- համոզում էր նա:- Մեր շենքի ներքնահարկում մի գիշերային գաղտնի խաղատուն կա: Քանի անգամ նկատել եմ, թե ինչպես է պարոն Հանսոնը պատերին քսվելով թաքուն դուրս գալիս այդ խաղատնից: Իսկ հենց երեկ գիշեր պատուհանից տեսա, թե ինչպես են քաշքշում նրան ու մեղադրում անագնավության մեջ:

Մտիր պարոն դիրեկտորի մոտ, պատմիր այդ բոլորը: Թող ինձ էլ կանչի, կհաստատեն:

- Չէ՛,- ասում էի,- եղբա՛յր, ժամանա՛կ տուր, ես նրանից իմ ուժերով վրեժ կլուծեմ:

Եվ, այնուամենայնիվ, լուրը տարածվեց դպրոցում: Առնուլը երդվում էր, թե ինքը ինձնից բացի ոչ ոքի չի ասել այդ մասին, բայց ամբողջ դպրոցը պարոն Հանսոնի գիշերային արկածներն էր պատմում: Սկանդավի մասին իմացավ նաև դիրեկտորը, որովհետև իր առանձնասենյակ կանչեց պարոն Հանսոնին և ուղղակի բանալիով փակեց դուռը: Իսկ երբ տեսուչը դուրս եկավ դիրեկտորի առանձնասենյակից, կատարվեց ամենասարսափելին: Նա հևալով, շտապ-շտապ անցավ միջանցքում խմբաված ուսանողների մոտով և հանկարծ մատը անսպասելիորեն դեպի ինձ մեկնելով, բղավեց.

- Մատնի՛չ, խղճո՛ւկ մատնիչ:

Ես նախ քարացա տեղում, հետո, ուշքի գալով, անլուր վիրավորանքից խելագարված, նետվեցի նրա ետևից: Ես կսպանեի նրան, եթե իմ ճամփան չփակեին: Ես նույնիսկ ճեղքեցի մեր տղաների շղթան՝ կատաղությունից կուրացած աջ ու ձախ հարվածներ հասցնելով նրանց, բայց չկարողացա անիծյալ տեսուչին հասնել, որովհետև հանկարծ իմ դիմաց ճակատագրի պես հայտնվեց Հելենը: Հելենը՝ մեր դիրեկտորի քարտուղարուհին, մեր բոլոր ուսանողների թաքուն հառաչանքների և անիրականանալի տենչերի առարկան, անմատչելի գեղեցկուհի Հելենը:

- Ալե՛քս, Ալե՛քս, սպասիր, ե՛ս եմ,- ասաց նա բռնելով ձեռքերս:- Ինձ նայիր, ես եմ:

- Թողե՛ք, թողե՛ք, խնդրում եմ,- հևացի ես:

- Եվ դու կարող ես ձեռք բարձրացնել քո դաստիարակի, տարեց մարդու վրա՞,- մեղմությամբ, նախատինքով հարցրեց նա:

- Նա դաստիարակ չէ,- ասացի ես,- նա դև է, սադիստ է: Ի՞նչ է ուզում ինձանից: Ես նրան ի՞նչ եմ արել: Բավական չէ, որ անմեղ տեղը տարիներ շարունակ հալածում է ինձ, հիմա էլ ուզում է իմ ընկերների աչքո՞ւմ վարկաբեկել:

- Հանգստացի՛ր, Ալե՛քս, հանգստացի՛ր,- հորդորում էր Հելենը:

- Նա ինձ մատնիչ անվանեց բոլորի մոտ: Բայց այն ես անմեղ եմ: Ես նրա մասին ոչ ոքի ոչինչ չեմ ասել: Երդվում եմ իմ ծնողների գերեզմանով:

- Ես գիտեմ,- ասաց Հելենը: Նա չասաց՝ «Ես հավատում եմ», ասաց՝ «Ես գիտեմ»:

- Ի՞նչ գիտե՞ք,- հարցրի ես:

- Որ դու մատնիչ չես,- ասաց Հելենը:- Որ դու, ընդհակառակը՝ մի ազնիվ ու գեղեցիկ պատանի ես, մի քիչ ավելի շուտ մեծացած, քան քո հասակակիցները, մի քիչ ավելի շատ հպարտ և չափից ավելի անզուսպ ու խենթ:

Ես համոզված էի, որ նա այդ ամենը ինձ հանգստացնելու համար է ասում միայն: Որովհետև թվում էր այնպիսի բարեմասնություններ, որ, ես գիտեի, պակասում էին ինձ և ունենալ էի տենչում: Բայց երևի այդպես է կառուցված մարդը: Այդ խոսքերը շոյում էին իմ ինքնասպիրությունը, խաղաղեցնում հոգիս և ոչ միայն այն պատճառով, որ հաճելի էին, այլ

որովհետև դրանք արտասանում էր Հելենը: Այն Հելենը, որ մեր դպրոցում աշխատելու մեկ տարվա ընթացքում ոչ մի անգամ ինձ կամ որևէ մեկին չէր ժպտացել և ուղիղ չէր նայել, ուր մնաց թե բռներ որևէ մեկի ձեռքը:

Եվ, այնուամենայնիվ, ես գիտեի, որ այլևս դպրոցում չեմ մնա և այդ մասին ասացի Հելենին:

- Ես նրան տեսնել չեմ կարող,- ասացի ես:- Դա բացառված է: Եթե մնամ, շատ ավելի վատ բան կստացվի, այլևս անուղղելի մի բան, որովհետև ես նրան ատում եմ:

- Երեխա մի լինիր, Ալեքս,- ասաց Հելենը:- Ամեն ինչ կանցնի, կմոռացվի: Շատ հավանական է, որ պարոն Հանսոնը կիմանա ճշմարտությունը և ներողություն կխնդրի քեզանից:

- Ես դպրոցում չեմ մնա,- արդեն հանգիստ և նույնիսկ ինձ համար զարմանալի վճռականությամբ արտասանեցի ես:

Հելենը ինձ էր նայում հետաքրքրասիրությամբ, ասես ուսումնասիրում էր:

- Թող այդպես լինի,- ասաց նա:

- Տեսնո՞ւմ եք, ուրեմն դուք էլ համոզվեցիք, որ ինձ չի կարելի այլևս դպրոցում մնալ:

- Ոչ,- ասաց Հելենը,- դու կմնաս դպրոցում, բայց պարոն Հանսոնին հավանաբար այլևս չես տեսնի:

- Այդ ինչպե՞ս,- անկեղծորեն զարմացա ես:

- Չգիտեմ ինչու համոզված եմ, որ այսօրվա պատմությունից հետո դիրեկտորը նրան դպրոցում չի թողնի: Ապրենք մինչև վաղը, տեսնենք,- ժպտաց Հելենը ու հանկարծ կամացուկ, քիչ խաղացկուն ձայնով ասաց.

- Թեև ես, երևի առանց որևէ հիմքի, ենթադրում էի, թե քեզ համար այնքան էլ հեշտ չպետք է լինի հեռանալն այնտեղից, որտեղ քեզ...

Նա ձեռքն արագորեն վերցրեց իմ դաստակի վրայից, շրջվեց ու հեռացավ:

Այն ժամանակ... այսինքն՝ գուցե այդ տարիքում բոլորն էլ սենտիմենտալ են լինում, չգիտեմ, բայց նրա հեռանալուց հետո ես թաքուն համբուրեցի իմ դաստակը, որն այրվում էր նրա մատների հպումից: Իսկ հաջորդ օրը հայտնի դարձավ, որ պարոն Հանսոնը ազատվել է աշխատանքից և տեղափոխվել մի այլ քաղաք, մեկ ուրիշ դպրոց:

Թվում էր, թե դրանով լուծվում են իմ բոլոր պրոբլեմները: Բայց հակառակը եղավ: Ինձ համար սկսվեցին իսկական մղձավանջային օրեր և եթե չլինեիր Հելենը... Ինչ-որ մեկը համառորեն տարածում էր դպրոցում, թե պարոն Հանսոնի հեռանալով ավելի է հաստատվում իմ մատնիչ լինելը: Ոչ ոք չէր համարձակվում իմ երեսին նման բան ասել, բայց երբ դասասենյակ էի մտնում, գրատախտակին գրված էր լինում «մատնիչ»: Երբ գործնական պարապմունքի ժամանակ նստում էի բուլդոզերի դեկին, ինչ-որ մեկը հասցրած էր լինում ցուցիչների վահանի

վրա կավիճով գրել «մատնիչ»: «Մատնիչ» մակագրությամբ թղթեր էի գտնում ամենուրեք՝ դասագրքերի մեջ, բարձի վրա, հագուստներիս գրպաններում:

Ես ելք չունեի: Ես չէի կարող կովել ամբողջ դպրոցի դեմ: Եվ վճռեցի փախչել: Անմիջապես: Հենց հաջորդ կիրակի, երբ դպրոցում պահակից բացի մնում էի միայն ես: Ես երկու նամակ գրեցի, մեկը իմ համադասարանցիներին, իսկ մյուսը՝ Հելենին: Ես իմ ընկերներին վերջին անգամ հավատացնում էի, որ անմեղ եմ: Նույնը հավատացնում էի նաև Հելենին, իսկ այնուհետև առաջին սիրո զգացումն ապրող պատանու անկեղծությամբ և կրքոտությամբ Հելենին խոստովանում էի իմ սերը, աղաչում էի սպասել ինձ և իմ առաջին իսկ հեռագրից հետո գալ այնտեղ, ուր կնշեմ ես: Որովհետև իմ նպատակները շատ լուրջ են: Որովհետև ես ուզում եմ ամուսնանալ նրա հետ: Որովհետև ես այլևս չեմ կարող ապրել առանց նրա:

Կիրակի օրը, երբ ինչպես համոզված էի, դպրոցում ոչ ոք չկար, ես առաջին նամակը թողեցի Առնոլդի մահճակալի վրա, արագորեն հավաքեցի իրերս, կրկին ու կրկին հաշվելով իմ խղճուկ խնայողությունները, դրեցի կրծքիս վրա, բաճկոնիս ձախ գրպանում: Մնում էր Հելենին հասցեագրված նամակը: Որտե՞ղ դնեմ, որ, աստված մի արագե՛տ, ուրիշի ձեռքը չընկնի: Կգցեմ հենց դպրոցի փոստարկղը, մտածեցի ես, այդպես ապահով կլինի: Ես ձախ ձեռքս առա հնամաշ ճամպուրակը ու ծրարը բռնած աջով բացեցի դուռը:

Դռան առաջ կանգնած էր Հելենը:

- Հելե՛ն,- աչքերիս չհավատալով կակազեցի ես՝ ակամա ետ-ետ գնալով ու ապարդյուն փորձելով որևէ կերպ թաքցնել նամակը:

- Ես եմ,- ծիծաղեց Հելենը:

Նրա հագին հասարակ չթից կարված սպիտակ զգեստ կար, որի վրա անփութորեն բուռ-բուռ թափված էին երիցուկները: Հարդագույն մազերը ալիքաձև իջնում էին հոլանի ուսերի վրա: Աչքերը բաց կապույտ էին և թաց՝ ամպերից հենց նոր մաքրված երկնքի նման և այդ աչքերը հիմա ինձ էին նայում քնքշությամբ ու հնազանդ:

- Ես եմ,- ասաց Հելենը:

... Հետո... հետո ես իմ ամբողջ կյանքում այլևս երբեք այդքան երջանիկ չեմ եղել: Ես արբած էի Հելենի սիրով, ասես նոր էի տեսնում աշխարհը և ինձ՝ աշխարհի մեջ: Ամեն ինչ իմ շուրջը գեղեցիկ էր ու հրաշալի և գթասիրտ ու բարի էին անխտիր բոլորը: Եթե պարոն Հանսոնը պատահաբար ետ վերադառնար, ես կներեի նրան: Իմ սրտում չարության որևէ հետք չէր մնացել, մանավանդ որ վիրավորական, անստորագիր նամակներ այլևս չէի ստանում: Ես ապրում էի ասես ջքնաղ երազի մեջ, սովորում էի հափշտակված, աշխատում խանդավառությամբ, հայելու պես փայլեցնում էի իմ բուլդոզերը: Որովհետև գիտեի՝ Հելենը երեկոյան սպասելու է ինձ հարևան լքված ազարակում, և ես գրկելու եմ նրա տաք, թրթռացող մարմինը՝ մեր թաքստոցում, որ բացել էինք խոտի դեզի մեջ և որից չորացած ծաղիկների արբեցնող բույր էր գալիս:

- Հելե՛ն...

- Ես երջանիկ եմ, որտեղի՞ց հայտնվեցիր դու, Ալե՛քս...

Շուտով մենք նշանակումներ ստացանք: Ես մեկնելու էի մեր դպրոցից մոտ հարյուր կիլոմետր հեռու ընկած անտառապատ մի շրջան, որտեղ ճահիճներ էինք չորացնելու և յուրացնելու աղուտ հողերը:

Մեր բաժանման օրը ամբողջ գիշեր խոտի դեզի մեջ մնացինք: Մենք գուրգուրում էինք իրար ու ապագայի հրաշալի ծրագրեր կազմում: Ես համաձայն էի նրա հետ, որ հիմա չենք կարող միասին մեկնել, թեև չէի պատկերացնում, թե ինչպես եմ ապրելու առանց նրա: Ինձ միախառնում էր միայն այն, որ գիտեի, շուտով միասին ենք լինելու, շատ շուտով, հենց որ ես առանձին տնակ ունենամ:

Ջոկատում ինձ գրկաբաց ընդունեցին: Պարզվեց, որ նրանց միակ բուլդոզերավարը երկու շաբաթ է, ինչ հիվանդանոցում պառկած է ճահճատենդով: Ես անմիջապես գործի անցա, իսկ նրանք կանգնել, հիացած դիտում էին, թե ինչպես եմ ճարպկորեն մանևրում իմ վիթխարի «Ֆորձոն»-ով, ինչպես եմ հսկա ժայռաբեկորները թեթևությամբ հեռացնում ճանապարհից և հարթում քարքարոտ բլուրները: Ուրախ, սրտաբաց տղաներ էին: Երեկոյան օջախի մոտ նրանք իմ կենացը խմեցին, և ես սրտապնդվելով նրանց հայտնեցի իմ վիճակը: Եվ պարզվեց, որ մեզ խանգարող ոչ մի հանգամանք չկա: Ընդհակառակը, ջոկատում հաշվետարի թափուր հաստիք կար, որ կարող էր զբաղեցնել Հելենը և ֆիննական երկսենյականոց մի տնակ էլ լիովին դատարկ էր, քանի որ նախատեսված էր ջոկատի պետի համար: Բայց պետը երբեք ճամբարում չէր քնում, որովհետև անասելի խանդում էր ջահել կնոջը, և ամեն երեկո տասնհինգ կիլոմետր ճամփա էր կտրում՝ մոտակա քաղաքը հասնելու համար:

Ես ուրախությունից խենթացած երեք օրում կարգի բերեցի մեր նոր տունը: Տղաներից յուրաքանչյուրը իր սենյակից ինչ-որ իր բերեց: Մեկը՝ աթոռ, մյուսը՝ պահարան, երրորդը՝ չգիտես որտեղից այս ճահիճներում հայտնված փոքրիկ մի արմավենի, տակառիկի մեջ: Մեկն էլ իր ձեռքով անտառում խփված եղջերուի մորթի բերեց, որ փռեցի հատակին, մեծ թախտի առջև: Ես սրտաշարժված ու երախտագիտությունից խեղդվելով շնորհակալություն էի հայտնում իմ նոր ընկերներին, իսկ նրանք ծիծաղում էին.

- Փոխարենը քո չքնաղ կնոջ ձեռքով պատրաստած մի-մի գավաթ սուրճ կմատուցես մեզ:

Եվ կեղծ տրտնջում էին, թե ստիպված են լինելու վերականգնել ամեն օր սափրվելու հին, մոռացված սովորությունը:

Ուղիղ մի շաբաթ հետո, երեկոյան, ես ջոկատի պետի փոքրիկ բեռնատարով մերձակա քաղաքը գնացի ու հեռագիր ուղարկեցի գյուղատնտեսական դպրոց:

«Ամեն ինչ պատրաստ է, տիրուհի: Անհամբեր սպասում եմ: Քո Ալեքսանդր»:

Ու գնացի նաև հաջորդ օրը՝ պատասխանը ստանալու: Բայց քանի որ պատասխան չկար, ես մի նոր հեռագիր ուղարկեցի ու գնացի նաև հաջորդ օրը: Բայց նորից պատասխան չկար:

Անհանգստությունից խելագար, ամոթից մեռնելով, ես թույլտվություն ստացա ու մեկնեցի մեր դպրոցը: Եվ պարզվեց, որ դպրոցում ոչ ոք չկար: Ինչպե՞ս էի մոռացել, որ ամառային արձակուրդներ են սկսվել:

Բայց որտե՞ղ է Հելենը: Չէ՞ որ նա սպասելու էր ինձ:

Արժե՞ արդյոք նկարագրել իմ վիճակը, երբ դպրոցի պահակն ինձ ասաց, որ իմ մեկնելու հենց հաջորդ առավոտյան Հելենը ազատվել է աշխատանքից և մեկնել անհայտ ուղղությամբ՝ որևէ երկտող կամ հասցե չթողնելով:

Սա երևի ամենաառեղծվածային պատմությունն է իմ կյանքի մեջ: Ես իմ ոչ մի հարցի պատասխանը չէի գտնում և այդպես էլ չգտա:

Զարմանալի երևույթ է մարդը, ինչ վիճակում էլ լինի, հույսի մի անկյուն պահում է իր համար: Եթե չլինեք հույսի այդ փրփուրը, թե, ո՞վ գիտե, գուցե Հելենը անակնկալ գործով ինչ-որ տեղ է մեկնել և այնտեղից ուղիղ գնացել է իմ աշխատանքի վայրը, ես ջոկատ չէի վերադառնա:

Իսկապես, շատ բարձր մարդիկ էին իմ աշխատանքային ընկերները: Հավանաբար անմիջապես հասկացան իմ վիճակը, որովհետև ոչ մի հարց չտվեցին, չարեցին ոչ մի ակնարկ, ու ինձ հետ վարվում էին սովորականի պես, այնպես, ասես ոչինչ չէր պատահել, ասես ես չէի նորոգել, կահավորել իմ տունը ու չէի բացակայել ճամբարից: Երևի դա էր պատճառը, որ երբեմն ինձ էլ թվում էր, թե դա երազ է եղել. սիրուն, ցանկալի մի հեքիաթ, հիվանդագին վառ երևակայության արդյունք, թե ցնորք է եղել և՛ նազիրան այն աղջիկը՝ ճերմակ զգեստով, որի վրա անփութորեն բուռ-բուռ թափված էին երիցուկները, և՛ տաք, հեշտագին գիշերները այն թաքստոցում, խոտի դեզի մեջ, որից չորացած ծաղիկների արբեցնող բույր էր գալիս:

Ես կարծում էի, թե այլևս չեմ կարողանա ապրել: Բայց ապրեցի: Ես իմ վիշտն ու տառապանքը բառացիորեն խեղդեցի ճահիճներում, աշխատում էի խելահեղորեն, գիշեր ու ցերեկ, ինքնամոռաց, տանջելով մարմինս, ինքս ինձ մտածելու ժամանակ չթողնելով: Իսկ մնացածը ամենահաղթ ժամանակը կարգավորեց: Դանդաղորեն բուժվել սկսեցին իմ վերքերը, թողնելով միայն սպիներ, որոնք սակայն երկար ժամանակ երբեմն-երբեմն անասելի կսկծում էին գիշերները: Իսկ հետո դա էլ անցավ:

Ես ութ տարի մնացի ջոկատում: Մենք հսկայական աշխատանք կատարեցինք՝ իսպառ վերացնելով ճահիճները և հարյուրավոր մշակված հեկտարներ դնելով ցանքի տակ: Այդ տարիների ընթացքում մեր տնօրենը, որի դեմքը ես այդպես էլ չտեսա, բազմիցս ապարդյուն փորձում էր առաջ քաշել ինձ՝ նախ իբրև բրիգադիր, հետո՝ մեքենայացված շարասյան պետ, իսկ իմ աշխատանքի ութերորդ տարում ռադիոգիր ուղարկեց, որով կարգադրում էր հանձն առնել ջոկատի ղեկավարությունը: Այնինչ ջոկատի պետը նոր մարդ էր և հիանալի էր աշխատում:

- Սա ի՞նչ բան է,- հարցրեցի ես, երբ ջոկատի պետը ինքն իմ առջև դրեց ռադիոգիրը:

- Հասկանում ես, Ալեքս,- ասաց Ադամը,- նրանք դժգոհ են իմ աշխատանքից: Իսկ եթե այդպես է, ազնիվ խոսք, ես ուրախ եմ, որ գոնե դու ես փոխարինելու ինձ: Դու արժանի ես դրան:

- Նախ՝ դու հիանալի աշխատող ես,- առարկեցի ես:- Նրանք այնտեղից ի՞նչ են տեսնում: Իսկ հետո՝ ես ոչ մի ցանկություն չունեմ գրավելու քո այօռը: Ես իմ տեղում էլ գոհ եմ և «Ֆորձոնի» վրա շատ ավելի ապահով եմ զգում, Ադամ:

- Ղեկավարության կարգադրությունները քննարկման ենթակա չեն,- զարմացած ինձ նայելով և անկեղծորեն հուզված, ասաց Ադամը: - Սյնպես որ, ես ինձ դնում եմ քո տրամադրության տակ:

- Դե, եթե հիմա դու իմ ենթական ես,- ծիծաղեցի ես,- ուրեմն ես քեզ կարգադրում եմ առայժմ շարունակել կատարել քո պարտականությունները, մինչև որ հարցի մեջ պարզություն մտցվի:- Եվ ջոկատի պետի առարկությունն ընդհատելով, ավելացրի,- ղեկավարության կարգադրությունները քննարկման ենթակա չեն, Ադամ:

Ու անմիջապես պատասխան ռադիոգիր ուղարկեցի, որի մեջ դիվանագիտության բոլոր կանոններով շնորհակալություն էի հայտնում մեծ պատվի համար և հրաժարվում էի այդ պատվից՝ առողջական վիճակս պատճառ բռնելով:

Նոր ռադիոգիրը բավականին սառն ու կտրուկ տոնով ինձ մայրաքաղաք կանչեց:

Ես հավաքեցի իմ իրերը, լցրեցի նոր գնած հիանալի կաշվե ճամպրուկի մեջ, ինձ այլևս ոչ անհրաժեշտ կահկարասին ու գործիքները բաժանեցի տղաներին և ջոկատի պետի սենյակը մտա՝ հրաժեշտ տալու:

Ադամը հարբած էր: Ես նրան երբեք այդ վիճակում չէի տեսել:

- Ես քեզ սպասում եմ,- ասաց նա՝ գրեթե հազիվ շարժելով շրթունքները:- Անպայման կվերադառնաս, խնդրում եմ: Կգաս, չէ՞, կգաս, չէ՞ ...

- Չէ՛, Ադամ,- ասացի ես:- Ռադիոգրի տոնից հասկացա, որ ճիշտ ժամանակն է ճահճից դուրս գալու: Մնաս բարով, բարեկամ:

Ադամը բռնեց իմ ձեռքը, օրորվեց ու հանկարծ ինձ նայեց ճիշտ այն հայացքով, որ մանկատան իմ դաստիարակչուհին՝ օրիորդ Նանան, այնքան ուզում էր տեսնել իմ դեմքին՝ որբերի ստուգատեսի ժամանակ մեր շարքերի առջևով անցնող լեդիների և ջենտլմենների գուրջը շարժելու համար: Նա ինձ նայեց խղճուկ, նվիրված հայացքով ու ժպտաց.

- Դու, դու... հազվագյուտ մարդ ես, Ալե՛քս... Ջարմանալի մարդ ես... Ես նախանձում եմ քեզ...

Ես համոզված էի, որ ութ տարվա դժոխային աշխատանքից հետո առավել քան երբեք իրավունք ունեմ ասելու այն, ինչ մտածում եմ և վարվելու այնպես, ինչպես իմ խիղճն ու ինքնասիրությունն են թելադրում: Մանավանդ որ ճամպրուկիս փոքրիկ գաղտնի թաքստոցում, անագաթերթի մեջ, խնամքով փաթաթած, պահած ունեի ութ տարիների իմ վաստակը, մի կլորիկ գումար, որը բավական էր ինձ՝ նոր կյանք սկսելու համար:

Հաջորդ օրն առավոտյան գնացքն ինձ հասցրեց այն մերձակա ավանը, որտեղից շատ տարիներ առաջ հուսալի առ հեռագրեր էի ուղարկում Հելենին և որը բավականին կարգին

քաղաք էր դարձել արդեն, սենյակ վարձեցի, գրեթե բոլորովին նոր մի ավտոմեքենա գնեցի և իմ սեփական ավտոմեքենայով սկսեցի աշխատել իբրև տաքսու վարորդ:

Ես այդ ժամանակ քսանվեց տարեկան էի:



Գնացքը երկար ժամանակ կանգնած էր ինչ-որ տեղ, բացարձակ խավարի մեջ: Երևի ուշացել էր կամ շտապել էր ու հիմա ստիպված հանդիպակաց գնացքին էր սպասում: Զարմանալի խաղաղ մի լռություն էր տիրում շրջապատում, այնպիսի մի լռություն, որ փակ պատուհաններից անգամ պարզ լսվում էր անքուն ծղրիղների ճռռոցը: Ու հանկարծ այդ անդորրը խախտվեց հեռավոր ինչ-որ բվվոցով, որը հետզհետե մոտենում և ուժգնանում էր: Իհարկե, հանդիպակաց գնացքն էր: Ահա, ավելի լսելի դարձավ անիվների համաչափ թխկթխկոցը երկաթե գծերի վրա: Միանգամից լուսավորվեց շրջապատը և շոգեքարշը, հուր-մուր ժայթքելով ու փայլեցնելով նիկելապատ վահաններն ու բռնակները, եկավ, հնալով ու սուլելով կատաղորեն անցավ մեր գնացքի մոտով՝ պատառոտելով լռությունը:

Հենց այդպես էլ գերմանացիները հայտնվեցին մեր քաղաքում:

Նրանք եկան տանկերի, զրահապատ մեքենաների, ավտոմեքենաների ու մոտոցիկլետների հոնդյունով, եկան հպարտ ու ձիգ շարքերով՝ պայտած կոշիկները ամուր դոփելով մեր սալահատակի վրա: Եկան նվագախմբերի աղմուկով, պսպղացնելով պողպատե սաղավարտներն ու անցան՝ առանց որևէ կրակոց արձակելու: Նրանք հեռավոր նպատակներ ունեին և մեր փոքրիկ երկիրը նրանց հետաքրքրում էր սոսկ իբրև անցուղի: Մեր երկիրը ոչ սահման ուներ մի կանոնավոր և ոչ էլ կանոնավոր բանակ: Եվ փա՛ռք աստծո, որ չունեի: Որովհետև, ինչպես պարզվեց հետո, նրանք քանդում և ոչնչացնում էին այն ամենը, ինչ կանոնավոր էր:

Նրանցից հետո նորից լռություն տիրեց, ավելի խոր լռություն, ինչպես սովորաբար լինում է աղմուկից հետո:

Խաղաղ ու լուռ էին պահում իրենց նաև գերմանացիները, որ մնացին մեր քաղաքում իբրև պարետատան աշխատողներ: Նրանք չէին հարբում, գոռգոռալով չէին շրջում փողոցներով, չէին կրակում ռեստորաններում ու կինոթատրոններում, չէին հետապնդում տեղացի կանանց ու աղջիկներին՝ ինչպես նրանց տիրության առաջին օրերին շենքերի պատերին չգիտես ինչպես հայտնված թռուցիկներն էին զգուշացնում:

Անձամբ ես ոչինչ չունեի նրանց դեմ: Ու թեև, ճիշտն ասած, ընդհանրապես խուսափում էի հանդիպել նրանց, բայց հո չէի կարող անհետանալ քաղաքից:

Նրանցից մեկը նույնիսկ դուր էր գալիս ինձ: Երիտասարդ մի մայր էր, գրեթե իմ հասակակիցը: Երևի շատ քիչ մեծ լինեի: Նա մյուսներից ավելի հաճախ էր հանդիպում ինձ և մյուսների նման սառն ու անտարբեր չէր: Կենսուրախ մարդ էր, սիրում էր զրուցել, անընդհատ սիգարետ էր հյուրասիրում, պատմում էր ինչ-որ տեղ՝ Ֆրանկֆուրտի

մոտակայքում ապրող իր ծնողների, անդամալույծ եղբոր, մանկահասակ որդու և գեղեցիկ կնոջ մասին, որի անունը հիշատակելիս ամեն անգամ թունդ էր լինում հոգիս և կսկծում հին վերքը: Նրա կնոջ անունը Հելեն էր: Թեև մայրը բոլորովին ուրիշ տեսակ էր արտասանում այդ անունը:

Ինձ հաճելի էր նաև այն, որ այդ գերմանացին սիրում էր մեր քաղաքը. ժամերով ուսումնասիրում էր գոթական հին հուշարձանները, նույնիսկ նկարում էր ծոցատետրում: Իսկ երբ եկեղեցի էր մտնում, ծնկում ու խաչակնքում էր բոլորի հետ և հիացած, վերացած երգեհոն էր լսում:

Բայց մի անգամ, երբ կանգնեցրեց ինձ ու տեղավորվեց ավտոմեքենայում, ես նկատեցի, որ նա գրգռված է:

- Գնացե՛ք «Երեք խաչի» մոտ, - նետեց նա:

Ու ամբողջ ճանապարհին լուռ էր: Հասկանալիորեն ես էլ ոչինչ չէի խոսում, որովհետև ընդհանրապես սովորություն չունեմ ուղևորների հետ զրուցելու, առավել ևս՝ գերմանացու հետ, որքան էլ նա տարբերվի իր ազգակիցներից:

«Երեք խաչը» պանդոկ էր քաղաքի արվարձանում և իր անվան համար պարտական էր թիթեղյա փոքրիկ տուփերով վաճառվող արտակարգ թանկ և հիանալի գարեջրին, որի վաճառքն այդ պանդոկի մենաշնորհն էր:

Տասնհինգ բոպե անց ես ավտոմեքենան կանգնեցրի ծառերի ու ծաղկած պատատուկների մեջ կորած գողտրիկ պանդոկի մոտ:

- Գնա՛նք, - կարճ նետեց մայրը՝ ավտոմեքենայից ցած իջնելով:

- Ես ձեզ կապասեմ մեքենայում, - ասացի ես: - Կամ գուցե ցանկանում եք, որ հետո՞ գամ ձեր ետևից:

- Ես ցանկանում եմ, որ միասին նախաճաշենք, - այդ օրն առաջին անգամ ժպտաց գերմանացին:

Շնորհակալությամբ հրաժարվեցի անմիջապես:

- Ես արդեն նախաճաշել եմ, - ասացի: - Եվ հետո՝ ինքներդ էլ գիտեք, որ մեզ խմել չի կարելի:

- Երբ ինձ հետ եք, ձեզ ամեն ինչ կարելի է, - ծիծաղեց մայրը: - Թե՞ վախենում եք գերմանացու հետ սեղան նստել:

Երբ ինձ ասում են՝ «վախենում եք», ես ամեն ինչի կարող եմ գնալ:

Քիչ անց մենք նստած էինք պանդոկից բավականին հեռու, ծառերի մեջ թաքնված մի փոքրիկ սեղանի շուրջ: Մատուցողը բրգի նման սեղանին էր շարել գարեջրի մի դյուծին տուփեր, որոնց պիտակների վրա երեք փոքրիկ սպիտակ խաչեր կային, բոված հացի աղի ձողիկներ և

մի խոշոր ափսեով հնդընկույզի հատիկներ, որոնք պատված էին աղի բարակ, սպիտակ շերտով:

Մայրը երկար ժամանակ լուռ խմում էր՝ ստեպ-ստեպ, ասես հարևանցի հայացքներ նետելով ինձ վրա, հետո թուլացրեց փողկապը, արձակեց օձիքը ու հառաչեց:

- Անիծված աշխատանք: Ամբողջ օրը ստիպված ես պատռել կոկորդո ու ծռել մարմինդ, երբ կողքիդ այսպիսի վայելք ու կյանք կա:

Ես, իհարկե, չարձագանքեցի:

- Եվ պարսավանքի ես արժանանում հանուն ո՞ւմ, ինչի՞՞ համար, մի քանի հիմար, ինչպե՞ս արդևանց պատճառով, որոնք կարծում են, թե լվի խայթոցներով կարող են տապալել փղին:

Ես բացեցի տուփերից մեկը ու սկսեցի գարեջուր խմել:

- Ըստ որում՝ չգիտեն, թե ինչ ահավոր վտանգի են ենթարկում իրենց կանանց, երեխաներին, ծնողներին, հարևաններին ու ծանոթներին: Չէ՞ որ բոլորը կասկածի տակ են առնվում: Կարծում են, որ եթե հանձնվել են, ուրեմն պատերազմական ժամանակի օրենքներն այստեղ չեն տարածվում: Միամիտնե՞ր են, թե հենց իրենց ազգի թշնամիներն են դրանք, չեմ հասկանում: Ռումբ դնել երկաթուղային կայարանի սպասասրահում, որը ուղևորներով լի է, թե ինչ է՝ տասնյակ անմեղ քաղաքացիների հետ միասին կարող է պատահաբար սպանվել գերմանացի մի գեներալ:

Ես առաջին անգամ էի լսում այդ մասին և ակամա զարմացած նայեցի մայրին:

- Ի՞նչ է, դուք չգիտե՞ք այդ մասին, - հարցրեց նա ուղղակիորեն:

Պատասխանից այլևս խուսափելն անհնար էր:

- Ո՛չ, - ասացի ես:

- Ինչպե՞ս կարող է պատահել, ամբողջ քաղաքն է խոսում:

- Ինչպե՞ս տեսնում եք, - ժպտացի ես, - չի կարելի ասել, թե ամբողջ քաղաքը:

- Շա՛տ տարօրինակ է, - տարակուսանքով ուները թոթվեց մայրը: - Եվ չե՞ք էլ ենթադրում, թե ովքեր կարող էին լինել այդ... այդ ցնորամիտները:

- Գաղափար անգամ չունեն, - անկեղծորեն պատասխանեցի ես:

Մայրը մռայլվեց և գրեթե մի շնչով դատարկեց գարեջրի գավաթը:

- Իսկ դուք գիտե՞ք, որ կասկածելիների ցուցակում ձեր անունը ևս կա:

Ես ծիծաղեցի:

- Նույն հաջողությամբ կարող էին սուրբ Պետրոսի և սուրբ Հովհաննեսի անուններն էլ լինել,-
ասացի ես:- Ես երբևէ քաղաքականությամբ չեմ զբաղվել և քանի որ հիշեցի սրբերին, սուրբ
գրքի վրա կարող եմ երդվել, որ դա կամ թյուրիմացություն է, կամ զրպարտություն: Կամ
դաժան կատակ,- ավելացրի ես ծիծաղելով,- որ չգիտեմ ինչու դուք թույլ եք տալիս իմ
նկատմամբ:

- Իզուր եք ծիծաղում,- լրջորեն ասաց մայրը:- Եվ եթե ես չճանաչեի ձեզ և չթաքցնեմ՝
համակրանք չունենայի ձեր նկատմամբ, ձեզ հետ մենք հիմա «Երեք խաչում» չէինք գտնվի, այլ
բոլորովին ուրիշ տեղ և բոլորովին ուրիշ մարդիկ կխոսեին ձեզ հետ:

Նա, բաճկոնի ծոցագրպանի կոճակն արձակելով, քառածալ մի թուղթ հանեց և մեկնեց ինձ:

- Կարդացե՛ք:

Ես նայեցի և միայն ինչ-որ թվեր տեսա:

- Ի՞նչ է սա,- հարցրեցի արդեն որոշ տազնապով:

- Կարդացեք, կարդացեք,- ասաց մայրը:- Որևէ ծանոթ թիվ չե՞ք տեսնում այդտեղ:

Ես կարդացի ու զգացի, թե ինչպես դող անցավ մարմնովս:

Այդ թվերի մեջ կար նաև իմ ավտոմեքենայի համարը:

- Դրանք համարներն են այն կասկածելի ավտոմեքենաների, որոնք այդ օրը նկատվել են
երկաթուղային կայարանի շրջակայքում,- ասաց մայրը՝ թուղթը նորից գրպանը դնելով:

- Ես չգիտեմ, թե դա որ օրն է, բայց գրեթե ամեն օր ուղևորներ եմ տանում երկաթուղային
կայարան:- Բարկանալով ինձ վրա, որ բացարձակապես անմեղ եմ, սակայն հուզվում եմ,
այնուամենայնիվ, ասացի ես:- Այնպես որ ամեն օր իմ ավտոմեքենայի համարը կարելի է
գրանցել երկաթուղային կայարանում, օդանավակայանում, ամենուրեք: Չէ՞ որ իմ
ավտոմեքենան տաքսի է:

- Դեպքը տեղի է ունեցել երեկ,- ճշտեց մայրը:- Եվ, խնդրում եմ, անկեղծ լինել ինձ հետ: Ձեր
մասնագիտության մարդիկ չափազանց ուշադիր են ուղևորների նկատմամբ: Ինչպես
ընդունված է ասել՝ պրոֆեսիոնալ աչք ունեն և հիշողություն: Խնդրում եմ հիշեք, թե երեկ ո՞ւմ
և ե՞րբ եք տարել երկաթուղային կայարան: Գուցե ուղևորների մեջ ձեզ ծանոթներ են եղել:
Գուցե նրանցից ինչ-որ մեկը կասկածելի է թվացել ձեզ:

- Ոչ,- ասացի ես:- Որքան հիշում եմ...

- Մտածեք, մտածեք, մի շտապեք,- ընդհատեց մայրը:- Մենք դեռ շատ ժամանակ ունենք: Ես
ձեզ վճարելու եմ ամբողջ օրվա աշխատանքի համար և գուցե շատ ավելի:- Բայց նկատելով իմ
արհամարհական ժպիտը, ձեռքը դաստակիս դրեց:- Մի հուզվեք, ես էլ պակաս հպարտը չեմ,
բայց դրամ սիրում եմ:

- Ի՞նչ եք ուզում ինձանից,- հարցրեցի ես:

- Արդեն ասացի: Դժվար մասն արդեն անցել ենք: Ես ձեզ խնդրում եմ հիշել և նկարագրել այն ուղևորներին, որոնց դուք երեկ երկաթուղային կայարան եք տարել: Ի՞նչ տեսակ մարդիկ էին, որտեղ ավտոմեքենա նստեցին, ինչի՞ մասին էին խոսում ճանապարհին: Աշխատեք մտաբերել նույնիսկ արտաքինապես ամենամեղ ռեպլիկները: Ո՞ւմ ձեռքին ճամպրուկ կար...

- Ո՞վ է առանց ճամպրուկի երկաթուղային կայարան գնում:

- ... Եվ հիշեցնում եմ իմ առաջին հարցը,- ինձ պատասխանի չարժանացնելով, շարունակեց նա,- երեկվա ձեր ուղևորների մեջ ձեզ ծանոթ մարդիկ չկայի՞ն:

Ես ուշացրի պատասխանը, որպեսզի նա կարծի, թե փորփրում եմ հիշողությունս:

- Ո՛չ,- ասացի ես՝ գլուխս տարուբերելով:

- Այս ձևով մեզ մոտ ոչինչ չի ստացվի,- նորից մոայլվեց մայորը:

-Դուք իմ նկատմամբ անկեղծ չեք: Ափսո՛ս, շատ եմ ցավում:

- Ինչի՞ց եք ենթադրում,- բողոքեցի ես:

- Ձեր դրկից հարևանը՝ փոստատար Ֆերդինանդը, որին մենք մի հարցով հրավիրել էինք զրույցի, գրավոր բացատրություն է տվել, որ երեկ ձեր ավտոմեքենայով է մեկնել երկաթուղային կայարան: Գուցե նրան չէ՞ք ճանաչում:

Հանկարծ զգացի, որ կարմրում եմ:

- Ինձ դուր չի գալիս այն, որ դուք ինձ հարցաքննում եք,- ասացի ես հանդգնորեն՝ շփոթմունքս թաքցնելու համար:

- Հարցաքննո՞ւմ եմ: Մի՞թե այս կանաչ տաղավարը և ազնիվ գարեջրի տուփերով լի սեղանը ձեզ գեստապոյի խուցն են հիշեցնում:

- Ի՞նչ տարբերություն,- նետեցի ես:

- Ի՞նչ տարբերություն...- ձգեց մայորը,- ի՞նչ տարբերություն... Անկախ մեր այսօրվա զրույցի արդյունքից, անկեղծորեն չէի ցանկանա, որ ձեր սեփական մաշկի վրա փորձեիք այդ տարբերությունը, բարեկամս:

Նա նորից հենց տուփից գարեջուր խմեց, մի քանի հատիկ ընկույզ նետեց բերանը, ծամեց, մի կում էլ խմեց վրայից ու ասաց.

- Ուրեմն՝ պայմանավորվենք այսպես: Դուք երեկոյան հանգիստ պայմաններում կաշխատեք վերհիշել ամեն ինչ, գրի կառնեք մանրամասնորեն և վաղը ուղիղ ժամը տասին կլինեք հեծանվահրապարակի մուտքի մոտ:

Ես հպարտությամբ ժպտացի իմ մտքում, որովհետև գիտեի, որ երբեք այդ քայլը չեմ կատարի:

- Դա անհնարին է,- ասացի ես հանգիստ ու ինքս էլ ուրախ իմ հանգստությունից:- Ես մի սովորական շարքային մարդ եմ և դառը քրտինքով եմ վաստակում իմ հացը: Հավատացեք, ինդդում եմ, որ ես իմ կյանքում երբեք քաղաքականությամբ չեմ զբաղվել և միշտ մտածել եմ, թե եթե մարդ աշխատասեր է ու ազնիվ, ամենաբարդ իրադրության մեջ էլ կարող է մաքուր մնալ:

- Դուք իրո՞ք այդպես եք կարծում,- չհասկացա՝ հեզնանքո՞վ թե զարմացած հարցրեց մայրը:

- Համոզված եմ,- ասացի ես:

Մայրը վեր կացավ տեղից:

- Դե, ուրեմն մեր գրույցը համարենք ավարտված,- ասաց նա:- Շատ եմ ցավում, որ ընդհանուր համաձայնության չեկանք, որովհետև մեզ հենց ձեզ նման ազնիվ մարդիկ են պետք: Մի զարմացեք: Գուցե և պարադոքս է, բայց այդպես է:

- Մի՛ բարկացեք ինձ վրա,- ասացի ես,- գուցե դա վերամբարձ է հնչում, բայց ես այլ կերպ ապրել չեմ կարող:

Չեմ կարող ասել, թե ողջ գիշերն անքուն մնացի, բայց որ անհանգիստ էի և կցկտուր երազներս էլ խառնիխուռն էին ու մղձավանջային, պետք է խոստովանեմ: Վեր էի թռչում ամեն թխկոցից, փողոցով անցնող յուրաքանչյուր ավտոմեքենայի ադմուկից ճմլվում էր սիրտս: Ինձ թվում էր, թե այդ ավտոմեքենան ուր որ է ճռինչով կարգելակվի մեր տան առաջ ու սանդուղքների վրա կհնչի պայտած կոշիկների դոփյունը:

Երազներիցս մեկի մեջ մորս տեսա, որի լուսանկարն անգամ չունեի և որի դեմքը բոլորովին չէի հիշում: Նա դանդաղ, ասես օրորվելով մշուշի մեջ, քայլում էր փողոցով իմ առջևով: Ես նրա թիկունքն էի տեսնում միայն, բայց գիտեի, որ իմ մայրն է: Ես արագացնում էի քայլերս, ուզում էի հասնել նրան, բայց չէի կարողանում: Չայն էի տալիս, բայց նա չէր լսում ինձ ու շարունակում էր դանդաղ, սիգաճեմ քայլել իմ առջևից: Արցունքը խեղդում էր ինձ, անասելի խղճահարություն էի զգում ինքս իմ նկատմամբ, հատկապես, երբ նայում էի բոբիկ, ծվատված ոտքերիս: «Մայրի՛կ» բղավեցի ես, ու արթնացա միանգամից, ափսոսալով, որ արթնացա, որովհետև ինձ թվում էր, որ եթե մի քիչ էլ շարունակվեր երագս, մայրս կշրջվեր, ու ես կտեսնեի նրա դեմքը:

Առավոտյան աշխատանքի չգնացի, բայց ոչ ոք չեկավ իմ ետևից:

Հետագա օրերին գործի դուրս եկա սովորականի պես, որևէ արկածի չհանդիպելով, համոզվելով, որ անհանգստության համար ոչ մի հիմք չունեմ և ծիծաղելով իմ կասկածամտության վրա:

Դեպքը կատարվեց անսպասելի և անհեթեթ պայմաններում, երբ ես որևէ անակնկալի չէի սպասում:

Ազգային բանկի շենքի մոտի կանգառում ես ուղևորի էի սպասում, երբ ինձ մոտեցավ հողագործի պես հագնված տարեց մի մարդ՝ իր ջահել ուղեկցի, թերևս որդու հետ, խնդրելով որ իրենց «Վուլվորդ» հանրախանութը տանեմ: Նրա ձեռքին մի ոչ մեծ ճամպրուկ կար:

- Գուցե պահատեղում դնենք,- առաջարկեցի ես, վերցնելով իր ծավալի համեմատ զարմանալի ծանր ճամպրուկը:- Որպեսզի ձեզ չխանգարի:

- Ոչինչ, ոտքերիս տակ կպահեմ,- ասաց տարեցը՝ իմ կողքին նստելով և ոտքերի տակ հարմարացնելով ճամպրուկը:

Ես ժպտացի, հիշելով մայրի խոսքը վարորդների պրոֆեսիոնալ տեսողության մասին:- Իսկապես, ինչպե՞ս միանգամից հասկացա, որ այդ մարդը հողագործ է: Միայն գյուղացին կարող է նեղություն տալ իրեն, ինչ է, թե աչքի առաջ լինի իր ապրանքը:

Պատանին տեղավորվեց ետևում:

Երբ կանգ առա «Վուլվորդ» հանրախանութի մուտքի մոտ, տարեցը շրջվեց դեպի իր ջահել ուղեկիցը.

- Իմ ոտքերը ցավում են, Ռենո,- ասաց նա:- Գնա, վերցրու և բեր: Նա հո քեզ լավ է ճանաչում:

- Է՛,- թնկթնկաց պատանին,- բա որ տեղում չլինի՞: Մի բոպեի բան է, էլի, արի միասին գնանք:

Տարեց մարդը փնթփնթալով դուրս եկավ ավտոմեքենայից:

- Ամեն ինչ է՛ս, ամեն ինչ է՛ս... Բա մի օր որ չլինեմ, ի՞նչ եք անելու, կոտորվելո՞ւ եք... Ազնիվ մարդ,- դիմեց նա ինձ,- կարո՞ղ ես հինգ բոպե սպասել, մինչև որ գանք:

- Իհարկե,- ասացի ես:- Միայն թե ավտոմեքենան այստեղ կանգնեցնել չի թույլատրվում, ես ձեզ կսպասեմ այ այն հրապարակում:

- Եղավ, հարգելիս, շատ շնորհակալ եմ,- ասաց նա, ապա դառնալով ջահելին, ավելացրեց... - Արի, հո ես չեմ քարշ տալու:

- Ճամպրուկը,- հիշեցրի ես:

Հողագործի նման մարդը թափ տվեց ձեռքը:

- Հիմա գալիս ենք,- ասաց նա,- թող մնա:

Ես հանրախանութի շուրջը գրեթե մի ամբողջ շրջան կատարելով, ավտոմեքենան կանգնեցրի մուտքից ոչ հեռու, փոքրիկ հրապարակում: Եվ այն է, ուզում էի դուրս գալ՝ մարմինս մի քիչ ձգելու, երբ ինձ մոտեցան գերմանական համազգեստով երկու զինվոր:

- Հերթապահ պարեկություն,- ներկայացավ նրանցից մեկը՝ անփութորեն պատվի բռնելով և լուսամուտի բացվածքից ուշադիր դիտելով ավտոմեքենայի ներսը:- Ձեր փաստաթղթերը:

Ես նրան մեկնեցի իմ վարորդական իրավունքն ու անձնագիրը: Նա երկար կարդում էր դրանք, երբեմն-երբեմն ինձ նայելով ու իմ դեմքը համեմատելով լուսանկարների հետ: Հետո կարգադրեց:

- Բացեք պահատեղը:

Ես մեքենայի թափքի ետևն անցա ու բացեցի պահատեղը: Զինվորները, ծուլորեն շարժվելով, մոտեցան ու նայեցին ներսը:

- Ավտոմեքենայի՞ մեջ ինչ կա,- հարցրեց նույն զինվորը:

- Ոչինչ,- ասացի ես, որովհետև իսպառ մոռացել էի ճամպրուկի գոյության մասին:

- Իսկ սա ի՞նչ է,- դռնակը բացելով ու ճամպրուկը մատնացույց անելով, հարցրեց նա:

- Այս, հա,- շփոթվեցի ես:- Դա ուղևորներինն է: Նրանք հանրախանութ մտան: Հիմա ուր որ է կգան,- ավելացրի ես սրտումս միանգամից ծագած տագնապով:

Մեր շուրջը ինչ որ պարապ-սարապ մարդիկ էին հավաքվել, որ սկզբում կանգնել էին հեռվում, իսկ հետո, երևի հետաքրքրությունից դրդված, հետզհետե զգուշորեն մոտեցան: Վայրկյանները ցավագնորեն խփում էին քունքիս մեջ: Ես շարունակում էի հետևել հանրախանութի մուտքին, բայց իմ ուղևորները չէին հայտնվում:

- Դո՛ւրս բեր ճամպրուկը,- կարգադրեց զինվորը:

- Դա իմը չէ,- ասացի ես՝ ետ քաշվելով:

- Լավ, մենք հիմա կպարզենք, թե ումն է,- ասաց զինվորը՝ ճամպրուկի զսպանակավոր կողպեքը աջ ձեռքի մատով վայրկենապես բացելով և բարձրացնելով կափարիչը:

Մեր շուրջը կանգնած մարդիկ վախեցած բացականչություններով ետ քաշվեցին: Իսկ ես նայում էի թափանցիկ յուղաթղթի մեջ փաթաթած գերմանական բոլորովին նոր ավտոմատ հրացանի քանդված մասերին և չէի հասկանում, թե այն ի՞նչ կապ ունի ինձ հետ: Իսկ երբ հանկարծ ըմբռնեցի իմ վիճակը, ճակատս սառը քրտինքով պատվեց:

- Սա իմը չէ, իմը չէ,- շնջացի ես:

- Իսկ ո՞ւմն է,- հեզնեց զինվորը՝ մարդկանց աչքով անելով, ասես հրավիրելով ուրախ ծիծաղել ինձ վրա:

- Մեկը մի տարեց հողագործ էր... - հոգնած, ասես ինքս էլ չհավատալով իմ խոսքերին, սկսեցի ես:

Բայց զինվորը չթողեց որ շարունակեմ:

- Մնացածը կբացատրես գեստապոյում,- ասաց նա:



Ինձ չէին ծեծում: Չէին խոշտանգում: Ընդամենը՝ չէին թողնում քնել: Երեք օր: Երեք օր, այսինքն՝ յոթանասուներկու ժամ ինձ հարցաքննում էին: Քննիչները փոխարինում էին իրար, նստում էին իմ առջև, հարցեր էին տալիս ու գրում էին: Հետո ուղղակի նույն ծրագրով, ոտքի էին կանգնում, բղավում ու սպառնում էին, նոր հարցեր էին տալիս ու շարունակում գրել: Գնում էին ճաշելու և քնելու: Գալիս էին սափրված, թարմացած, առույգ, նորից տալիս էին նույն հարցերը ու գնում քնելու:

Իսկ ինձ չէին թողնում:

Երբ անգիտակցաբար ննջում էի աթոռին, հարցերի արանքում, ստիպում էին կանգնած պատասխանել: Երբ կանգնած վիճակում էլ էի քնում, ստիպում էին ծնկի գալ և դուլյով ջուր էին լցնում գլխիս: Ես ընկնում էի գետնին ու ձևացնում, թե ուշաթափվել եմ, որպեսզի քնեմ մի քիչ: Եվ երևի իսկապես ուշաթափվում էի, որովհետև ականջիս տակ գոռալով ու նորից գլխիս ջուր լցնելով, ձեռքերիցս քաշելով էին ոտքի կանգնեցնում:

Ես իմ դահիճների հարցերից ու այդ հարցերի մեջ եղած հակասություններից վաղուց էի կռահել, որ իմ ավտոմեքենայում զենքի հայտնաբերման այդ ամբողջ պատմությունը էժանագին ու միամիտ պրովոկացիա է եղել՝ նախատեսված ինձ նման անփորձ ու ինքնավստահ հիմարների համար: Եվ երբ հարցաքննության երրորդ գիշերը քննիչի խուցը մտավ մայորը, ես չզարմացա, որովհետև սպասում էի նրան:

- Դե, ինչպե՞ս ես, ի՛մ բարեկամ Ալեքս,- հարցրեց մայորը:- Որևէ զանգատ չունե՞ս իմ աշխատողների դեմ: Հո չե՞ն չարաշահում իրենց իշխանությունը: Գուցե ծեծո՞ւմ են, կամ գուցե կտտանքների՞ են ենթարկում: Ասենք, չե՛, հետքեր չեն երևում:

Նա մոտեցավ ու կանգնեց ուղիղ իմ դիմաց:

- Կանգնե՛լ,- գոռաց քննիչը:

Ես փորձեցի ոտքի կանգնել, բայց չկարողացա:

- Ոչինչ, ոչինչ,- ձեռքը թափահարեց մայորը և հանկարծ օրորեց գլուխը:- Ա՛յ, ա՛յ, ա՛յ, այնինչ հավատացնում էիր, թե քաղաքականությամբ չես զբաղվում: Ես ազնի՞ վ եմ, անկա՞ իս եմ... Ճիշտն ասած, սկզբում ես էլի էի մտածում, թե գուցե իրո՞ք ուրիշ մարդիկ են թողել զենքը ավտոմեքենայի մեջ: Բայց երբ ճամպրուկի բռնակին հայտնաբերվեցին քո մատնահետքերը, չե՛, ասացի, իմ բարեկամ Ալեքսը ուղղակի գտնում է, որ հակապետական գործունեությունը, այսինքն՝ այս դեպքում լրտեսությունն ու դիվերսիան որևէ կապ չունեն քաղաքականության հետ: Այդպե՛ս է:

Ես չպատասխանեցի: Ինձ արդեն ասել էին ճամպրուկի բռնակին հայտնաբերված իմ մատնահետքերի մասին: Թեև մեծ դժվարությամբ, բայց հիշել էի, որ դրանք թողել եմ, երբ

տարեց հողագործի (թեև համոզված եմ, որ նա նույնքան հողագործ է, որքան ես՝ դիվերսանտ) ձեռքից վերցրի ճամպրուկը՝ պահատեղում տեղավորելու համար: Բայց ես հարկ էլ չհամարեցի մայրիսն ասել այդ մասին: Նա ինձնից լավ կիմանար այդ:

Մայրը կռացավ և զարմանալի գեղեցիկ ու վճիտ աչքերը իմ այրվող, փակվող կոպերին հառած, կամացուկ ասաց.

- Հիմա համոզվեցի՞ր, որ որոշ տարբերություն կա «Երեք խաչ» գարեջրատան կանաչ տաղավարի և գեստապոյի բանտի միջև... Թեև դու դեռ ինչ ես տեսել, սիրելի Ալեքս, ինչ ես տեսել ու դեռ ինչե՛ր ես տեսնելու, եթե...,- ավելացրեց նա՝ հատ-հատ շեշտելով հաջորդ բառերը,- եթե, իհարկե, մեզ հնարավորություն չտաս ներելու քո հանցանքը: Դու ինձ հասկանում ես, այնպես չէ՞: Կարո՞ղ եմ այս դեպքում իր նախաստեղծ իմաստով կրկնել այն ասացվածքը՝ թե լռությունը համաձայնության նշան է:

Ես ինքնաբերաբար առաջ թեքվեցի: Նույնն արեց նաև մայրը՝ իմ պատասխանը լսելու համար: Եվ ես թքեցի նրա դեմքին:

Մայրը ետ-ետ գնաց՝ գրպանից հանելով ատրճանակը: Քննիչը սպառնագին վեր թռավ տեղից: Ես չգիտեմ... այսինքն ավելի շուտ հիանալի գիտեմ, թե ինչ կկատարվեր այդ վայրկյանին, եթե ամենակարող աստված, որին ես վաղուց մոռացել էի, չգթար ինձ:

Հանկարծ շրխկոցով բացվեց խցի դուռը, և ներս մտան էսեսական համազգեստով մի քանի հոգի, քաղաքացիական հագուստով ինչ-որ մարդու հետ: Քննիչն ու մայրը ձգվեցին անմիջապես ու պատվի բռնեցին:

- Խնդրեմ, պարո՞ն բուրգումիստր,- ասաց օբերշտուրմբանֆյուրերի ուսադիրներով էսեսականը: -:- Ահա ձեր քաղաքացիներից մեկը ևս... բռնվել է զենքը ձեռքին, ու թեև առայժմ չի խոստովանում, սակայն, համոզված ենք, որ կապված է տեռորիստների հետ:

Քաղաքացիական հագուստով մարդը, որին ուղղված էին օբերշտուրմբանֆյուրերի խոսքերը, շրջվեց և սևեռուն նայեց ինձ: Ես էլ նրան նայեցի ու հասկացա, որ խելագարվում եմ, որովհետև ինձ թվաց, թե իմ դիմաց կանգնած է ճահիճները չորացնող հիդրոմելիորատիվ մեր ջոկատի պետ Ադամը:

Միայն հույսը, որ կարող է հրաշք լինել, ինձ պահեց ոտքի վրա:

- Ալե՛քս,- ասես շատ հեռվից լսեցի Ադամի ձայնը:- Դո՞ւ ես, Ալե՛քս: Ճանաչեցի՞ր ինձ, ես Ադամն եմ: Ադամը: Ճի՞շտ է, որ դու զենք ես թաքցրել: Անկեղծորեն ասա ինձ:

Չգիտեմ, թե ինչ կատարվեց ինձ հետ:

- Ճիշտ չէ,- ասացի ես հնալով:- Ես ոչինչ չեմ թաքցրել, Ա... Ադամ: Ես տաքսու վարորդ եմ... Ինչ-որ ուղևորներ ավտոյի մեջ թողեցին ճամպրուկն ու... ու հանրախանութ մտան: Ես ոչինչ չգիտեմ... երդվում եմ... Իմ... իմ մտքով էլ չէր անցնի, թե ճամպրուկի մեջ զենք կա:

- Դուք ճանաչո՞ւմ եք նրան, պարոն բուրգումիստր,- զարմացած հարցրեց էսեսականը:

- Պարոն օբերշտուրմբանֆյուրեր, ոչ միայն ճանաչում եմ, այլև ինձ թույլ եմ տալիս վստահեցնել ձեզ, որ այս հարցում ակնհայտ թյուրիմացություն կա: Ես աշխատել եմ այս մարդու հետ: Եվ միայն հպարտությամբ կարող եմ նշել, որ նա իմ ընկերն է, որովհետև նրանից ավելի ազնիվ ու անկաշառ մարդու դեռ չեմ հանդիպել:

Ես հասկացա, որ փրկված եմ:

- Ես, իհարկե, գիտեմ, որ ոչ մի իրավունք չունեմ խառնվելու ձեր ներքին գործերին, պարոն օբերշտուրմբանֆյուրեր, - խոնարհվելով ավելացրեց Ադամը: - Բայց եթե դուք հարկ համարեք հարցնել իմ կարծիքը, ես կարող եմ գլխովս երաշխավորել նրա համար:

Ազնի՛վ, հավատարի՛մ բարեկամ: Ես լայն բացեցի աչքերս, որպեսզի արցունքներս չերևան:

- Պարոն բուրգոմիստր, որպեսզի համոզվեք, որ մենք շատ բարձր ենք գնահատում ձեր գլուխը, նրա կյանքը պարգևում ենք ձեզ, - ծիծաղելով ասաց էսեսականը և դառնալով մայրին, հրամայեց: - Ազատ արձակեք նրան:

Ու, կտրուկ շրջվելով, դուրս գնաց: Մյուսներն անմիջապես հետևեցին նրան:

Ես սպասում էի, որ մայրը գոնե սիրտը հանգստացնելու համար հայիոյանքների տարափ կթափի ինձ վրա, բայց կատարվեց զարմանալին:

Նա հանգիստ գրպանը դրեց ատրճանակը և հանկարծ անսպասելիորեն ժպտալով, ասաց.

- Համարեցեք, որ այս անգամ բարձրյալը փրկեց ձեզ և այսուհետև աշխատեք չչարաշահել նրա համբերությունը:

Նա մարգարե էր: Ես այդ վայրկյանին իրոք որ նույնն էի մտածում:



... Հնարավոր է, որ այդ անցած-գնացած դեպքերի առթիվ են մայրաքաղաքում հիշել ինձ, մտածում էի ես՝ գնացքի մեջ օրորվելով: Չէ՞ որ պատերազմից հետո տասնյակ տարիներ շարունակ, նույնիսկ մինչև հիմա քրքրում են արխիվները, հայտնաբերում նորանոր պետական հանցագործների և ազգային հերոսների, դատապարտում առաջիններին, մեծարում, արժեքավորում երկրորդներին: Քանի՛ - քանի՛ հոգու ետմահու ազգային հերոսի փառքի են արժանացրել, նրանց անուններով կոչել փողոցներ, դպրոցներ ու նավեր: Քանի՛ - քանի՛ թյուրիմացություններ են հարթվել, վերանայվել անարդար դատավճիռներ, վերականգնվել անմեղ մարդկանց բարի անունները: Այսինքն՝ մի թե նույնը չկատարվեց նաև ինձ հետ: Ոմանց շատ տարօրինակ էր թվացել, որ ինձ այն ժամանակ բաց էին թողել գեստապոյից, և գերմանացիների հեռանալուց հետո անմիջապես կալանավորեցին ինձ: Եվ ես հիմա էլ օրեր շարունակ մեր հանրապետության դատախազության քննիչներին էի բացատրություններ տալիս ու համոզում, որ անմեղ եմ եղել:

Չէին հավատում: «Իր ամբողջ պատմության ընթացքում գեստապոյից ոչ ոք տուն չի վերադարձել,- ասում էին,- քո այդ ի՞նչ սիրուն աչքերի համար են ազատ արձակել քեզ: Եվ ինչո՞ւ արձանագրությունների մեջ քո ազատմանը վերաբերող որևէ հիմնավոր փաստաթուղթ չկա, այլ միայն պարետատան պետի մակագրությունն է»: Ինձ մեղադրում էին գեստապոյի հետ համագործակցելու մեջ, անվանում էին լրտես և հայրենիքի դավաճան: Ու ես կրկին անհույս վիճակի մեջ էի: Որովհետև միակ մարդը, որ կարող էր փրկել ինձ՝ հաստատելով իմ անմեղությունը, Ադամն էր, հիդրոմելիորատիվ ջոկատի նախկին պետ, իսկ հետագայում մեր քաղաքի բուրգոմիստր Ադամը:

Բայց ես ինչպե՞ս դիմեի ու վկայակոչեի նրան, երբ նրա վիճակն իմից շատ ավելի ծանր էր: Եվ նրան վկայակոչելը համագոր էր ինքնասպանության: Նա մեղադրվում էր իբրև պատերազմի հանցագործ:

Այո՛, այդ ժամանակ Ադամը հավանաբար նախկին գեստապոյի շենքի նույն խցում էր և հավանաբար նստած էր իմ աթոռին: Պատերազմի ավարտից անմիջապես հետո ձերբակալել էին նրան՝ իբրև ազգի դավաճանի ու գերմանացիների կամակատարի, և մազ էր մնում գնդակահարեին, երբ հայտնի դարձավ, որ գերմանացիների տիրապետության օրոք նա բուրգոմիստր է դարձել մեր դիմադրության ազգային կենտրոնի ցուցումով ու այդ ողջ ժամանակամիջոցում կատարել է տարագրության մեջ գտնվող նոր կառավարության հանձնարարությունները:

Ադամին մահվան դատապարտվածների խցում երկու ամիս պահելուց հետո նորից ուղիղ քաղաքապետարան բերեցին, հայտարարեցին ազգային հերոս, պարգևատրեցին մեր պետության բարձրագույն շքանշանով և խնդրեցին շարունակել աշխատանքը՝ այս անգամ իբրև քաղաքագլուխ: Նրա լուսանկարներն այդ օրերին բոլոր լրագրերի առաջին էջերում էին, և բոլոր լուսանկարներից Ադամը ժպտում էր երջանիկ ու հպարտ:

Իսկ թե՛ ս ու որքան էի երջանիկ, վկա են միայն աստված ու Ալիսան:

Ալիսան անմիջապես քաղաքապետարան էր գնացել ու Ադամին պատմել, թե ինչ ողբերգական դրության մեջ եմ գտնվում ես:

Եվ Ադամը փրկեց ինձ: Երկրորդ անգամ:

Նախ՝ գերմանացիներից: Հետո՝ յուրայիներից:

Ի՞նչ երջանկություն է, որ աշխարհում այդպիսի մարդիկ կան, տեր աստված...

Եվ Ալիսայի հետ բանտ էր եկել՝ ինձ իր ավտոմեքենայով տուն տանելու...

Ալիսայի հետ: Ալի՛սա... Իմ բարի, իմ անձնվեր, իմ հավատարիմ կինը: Բհարկե, հիմա նա էլ չի քնել ու անհանգստանում է ինձ համար: Որպեսզի երեխաներին չխանգարի, հին շալի մեջ կծկվել է երևի որևէ անկյունում ու իմ մասին է մտածում: Անկախ այն բանից, թե ինչպես կավարտվի այս պատմությունը, ազատվեմ թե՛ չե՛՝ մի նոր, ամենալավ շալը կտանեն նրան: Մեծացել է, հաճախ է մրսում հիմա իմ Ալիսան...



... Պատերազմն, իհարկե, մեծ դժբախտություններ բերեց աշխարհին, բոլորին ու բոլորի հետ՝ նաև ինձ: Բայց հոգուս խորքում գոնե չեմ կարող չխոստովանել, որ այսպես թե այնպես պատերազմին եմ պարտական նրանով, որ հանդիպեցի Ալիսային:

Մի անձրևոտ օր, երեկոյան, երբ ինչ-որ ուղևորների քաղաքամերձ կաթնապրանքային ֆերմա հասցնելուց հետո վերադառնում էի տուն, արվարձանի նեղլիկ ու աղոտ լուսավորված փողոցներից մեկում նկատեցի պատի տակ կանգնած մի կնոջ: Իմ ավտոմեքենան տեսնելուն պես, նա անմիջապես դուրս եկավ պատշգամբի տակից ու պարզեց ձեռքը: Ինձ թվաց, թե օրորվում է, և ես արագացրի ընթացքը, որովհետև տանել չեմ կարողանում հարբած կանանց: Իսկ որ նա հարբած էր, կասկած չունեի, որովհետև ուրիշ ո՞վ կարող էր ուշ երեկոյան այդ ժամին տաքսի կանգնեցնել ամայի փողոցում:

Հիմա ես չեմ հիշում, թե ինչ արեց նա, այսինքն, թե ինչ տեսա ես դիմապակու վերևի հայելու մեջ, որ անմիջապես ետադարձ ընթացքով մոտեցա նրան: Հուսահատ պարզեց ձեռքերը, թե ձայնը լսեցի, չեմ հիշում: Բայց երբ բացեցի ետևի դուռը, նա նախքան նստելը բացականչեց.

- Պարո՛ն, ինձ դեղատուն հասցրեք, խնդրում եմ:

- Նստեցե՛ք, նստեցե՛ք,- ասացի,- թրջվում եք:

Կինը շփոթվեց.

- Ախ, հա՛, ներեցեք, կցեխոտվի ավտոմեքենան:

- Դրա համար չեմ ասում, նստեցե՛ք, տիկի՛ն:

Նա հարբած չէր: Երևի պարզապես սայթաքել էր թաց սալերի վրա: Զգուշորեն փակեց դուռը և նստեց հենց անկյունում՝ դռան մոտ կծկված, միայն փոքր-ինչ ետ տանելով անձրևանոցի կնգուղը:

Ես հայելու մեջ նայեցի նրան: Եթե նկարիչ լինեի և մտադրվեի պատկերել հուսահատություն, ավելի հարմար բնորդ անհնար կլինեի գտնել: Նրա դեմքը տխրության մարմնացում էր: Աչքերից անընդհատ արցունքներ էին գլորվում, որ նա չէր զգում հավանաբար կամ որովհետև համոզված էր, թե ես չեմ տեսնում իրեն:

Երբ դեղատան մոտ կանգ առա, նա արագորեն սրբեց արցունքները և թեքվեց դեպի ինձ:

- Դուք ինձ կսպասեք, այնպես չե՞՞:

- Իհարկե՛,- ասացի ես:

Նա ներս մտավ: Դեղատան լայն պատուհանի ապակու վրայից հոսող անձրևի բարակ շիթերի արանքից ես այնուամենայնիվ տեսա, թե ինչպես մոտեցավ ու խոսեց դեղագործի հետ: Նա տարածում էր ձեռքերը, օրորում էր գլուխը, երկար ինչ-որ բան էր համոզում: Հետո դուրս եկավ ու կրկին լուռ նստեց իր տեղում:

- Ո՞ւր, տիկի՛ն,- հարցրեցի ես:

- Չգիտեմ,- ասաց նա հոգոց հանելով և, սխալ չհասկացվելու համար, անմիջապես հարցրեց,- դուք ուրիշ բաց դեղատան տեղ չգիտե՞ք, պարո՛ն:

- Մեր քաղաքում այս ժամին ուրիշ բաց դեղատուն չկա,- վստահ ասացի ես:

- Բայց չէ՞ որ նրանք տանն են: Դեղատունը փակ է, բայց նրանք տանն են, չէ՞:

- Մարդիկ այս ժամին քնած են լինում,- ասացի ես ավտոմեքենայի ժամացույցին նայելով: Ֆոսֆորապատ սլաքները ցույց էին տալիս ժամը տասնմեկը:- Արդեն կեսգիշեր է, և երևի անխիղճ բան կլինի նրանց անկողնուց հանելը:

- Իսկ խղճ՞ով բան է, որ որդիս մեռնում է,- մրմնջաց նա:

Եթե նա չարանար, բղավեր, հեկեկար բարձրաձայն, երևի այդքան չագոզվեի, որքան նրա հուսահատ շշունջից:

- Ձե՞ր երեխան,- հարցրեցի ես բարձրաձայն, որովհետև արդեն հասցրել էի նկատել, որ սև անձրևանոցի մեջ գրեթե դեռատի մի աղջիկ է իմ ուղևորը:

- Այո՛,- ասաց նա,- այրվում է տաքության մեջ: Արդեն երկու ժամ է, ինչ զառանցում է: Ի՞նչ անեմ ես, ի՞նչ անեմ:

- Իսկ ի՞նչ դեղ է հարկավոր,- մտքումս փորփրելով իմ փոքրիկ դեղարկղը, հարցրեցի ես:

- Պենիցիլին:

- Պենիցիլին՞:

- Այո՛:

- Ցավում եմ, բայց ոչ մի տեղ չեք գտնի,- ասացի ես:- Երկու օր առաջ մի ուղևորի հետ շրջել ենք բոլոր դեղատները, նույնիսկ՝ հիվանդանոց գնացինք: Պենիցիլին միայն հոսպիտալներին են բաց թողնում: Իսկ մեր քաղաքում հոսպիտալ չկա:

- Դե, ուրեմն ինձ տուն տարեք,- համակերպված հառաչեց նա:- Գոնե երեխայի մոտ կլինեմ:

Ու նորից կծկվեց անկյունում, դռան մոտ, համակ վիշտ ու հուսահատություն դարձած:

Անձրևն ուժեղացավ և արդեն շփշփում էր ավտոմեքենայի թափքի վրա, առվակի նման հոսում դիմապակու վրայով, խանգարում տեսանելիությանը: Նույնիսկ ռետինե

խոզանակները չէին հասցնում հեռացնել ջրաշիթերը: Իսկ լապտերներն ավելի էին կուրացնում ինձ: Այդ պատճառով էլ անջատեցի հեռահար լույսերը և ավտոմեքենան վարում էի դանդաղորեն, գրեթե սողալով փնտրելով հարկավոր ճանապարհը՝ արվարձանի ծուռումուռ նրբանցքներում:

Ես ավտոմեքենան կիպ պատշգամբին մոտեցրի, որպեսզի աղջիկը չթրջվի: Նա ինձ մեկնեց դրամը, սպասեց մինչև որ վերադարձնեմ մանրը, և առանց հաշվելու գրպանը նետելով, շտապ բացեց դուռը:

- Շնորհակալություն, պարո՛ն,- ասաց նա մեքենայորեն, անկենդան ձայնով:- Կներեք, որ անհանգստացրի:

- Առողջություն ձեր փոքրիկին,- սրտանց մաղթեցի ես:- Հուսանք, որ ամեն ինչ կանցնի:

- Աստվա՛ծ լսի ձեզ,- վայրկենապես սթափվելով, աշխուժացավ նա ու անհետացավ պատշգամբի տակ բացված նեղլիկ անցուղու մթության մեջ:

Ո՞վ չգիտե, թե ինչ է նշանակում տաքսու վարորդ: Դա մի մարդ է, որ կամա թե ակամա ամեն օր հանդիպում է ամենատարբեր բնավորության և ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, կամա թե ակամա մասնակցում նրանց հետաքրքրություններին, ուրախություններին ու վշտերին կամ գոնե դառնում այդ ամենի վկան: Եվ, իբրև կանոն, հետզհետե սկսում է համակերպվել շատ բաների հետ, որ նախկինում կարող էին հուզել ու վրդովել նրան, սովորում է անտարբերությամբ լսել ամենաբազմազան ինֆորմացիաները, անխռով դիտել ուրիշների հետ կատարվող դեպքերը, անմասն մնալ նրանց տանջող խնդիրներին ու ցավերին և մնացած այն ամենին, որ իրեն չեն վերաբերում:

Եվ նրանց մեղադրել անհնար է: Որովհետև եթե նրանք հրաշքով պահպանած լինեին իրենց մանկական զգայուն ու անաղարտ հոգին, առաջին իսկ փորձության ժամանակ կլիելագարվեին անմիջապես: Դրա համար էլ բնության մեջ գոյություն ունեն աղապատացիա, համակերպում, հաշտվողականություն, մոռացում հասկացությունները:

Ես վաղուց էի մտածում տաքսին թողնելու մասին: Հոգնել էի արդեն: Իսկ գերմանացիների սարքած այն պրովոկացիայից հետո, ուրիշ գործ գտնելը սևեռուն գաղափար էր դարձել ինձ համար: Բայց հարցը միայն դա չէր: Ես անկեղծորեն վախենում էի, որ ինքս էլ իմ մասնագիտությանը հատուկ պրոֆեսիոնալ անտարբերություն ձեռք կբերեմ: Եվ երևի այդ վախն էր, որ պահում էր ինձ: Թերևս: Բայց փաստը մնում է փաստ, որ երբ առավոտյան ավտոտնակից հանեցի տաքսին, իմ առաջին միտքը մեքենայի ետնամասում կծկված այն մանկամարդ կնոջ մասին էր, որի երեխան այրվում էր տաքության մեջ:

Ես գիտեի, թե ում միջոցով կարելի է պենիցիլին գտնել ու թեև անձամբ ինձ համար ոչ մի գնով նրան նման հարցով չէի անհանգստացնի, բայց որոշ երկմտությունից հետո ուղիղ քաղաքապետարան գնացի և պարոն բուրգոմիստրի մոայլ քարտուղարուհուն խնդրեցի զեկուցել իմ մասին:

- Ձեր այցեքարտը,- կասկածամտորեն ոտքից գլուխ ինձ զննելով, պահանջեց նա:

- Այցեքարտ չունենալ,- անհարկի հպարտ պատասխանեցի ես:

Զգիտեմ ինչու հանկարծ երեխայությունս բռնել էր: Եվ երբ քարտուղարուհին առավել ևս զարմացած հարցրեց.

- Պարոն բուրգումիստրը սպասո՞ւմ է ձեզ:

- Այո՛,- պատասխանեցի անմիջապես:- Դուք միայն նրա ականջին շնչացեք՝ «Ալեքս»:
Այդպես ենք պայմանավորվել:

Նա մեղսակցի հայացք ընդունեց, նույնիսկ աչքով արեց ինձ, իբր ամեն ինչ հասկանալի է, և անհետացավ կաշեպատ դռան ետևում: Հազիվ էր ներս մտել, երբ կրկին բացվեց դուռը, և շեմին հայտնվեց Ադամը:

- Ալե՛քս,- բացականչեց նա և առանց քաշվելու ընդունարանում սպասողներից, գրկեց ինձ:-
Որտե՞ղ ես կորել: Ներս արի, ներս արի...

Իսկ հենց որ ներս մտա, հարցրեց անհանգստությամբ.

- Ի՞նչ է պատահել: Այդ կինն ինչ-որ բան շնչաց ականջիս: Ինչո՞վ կարող եմ քեզ օգտակար լինել: Հո նորից հերթապահ պարեկի չե՞ս հանդիպել,- իմ ժպիտը որսալով, արդեն հանգստացած ծիծաղեց նա...

Ես երկու խոսքով պատմեցի եղելությունը:

- Օ՛հ, իմ առաքինի բարեկամը սիրավե՞պ է սկսում,- կրկին ուրախ ծիծաղեց Ադամը, և որովհետև ես դիվանագիտորեն որևէ փորձ չկատարեցի հրաժարվելու նրա ենթադրությունից, անմիջապես վեր կացավ տեղից, մոտեցավ անկեզ պահարանին, փոքրիկ մի տուփ հանեց ու մեկնեց ինձ:- Խնդրեմ, պահում եմ հենց այսպիսի սև օրերի համար:

- Պենիցիլին՝,- չկարողանալով ուրախությունս ու զարմանքս թաքցնել՝ կարդացի ես տուփի վրա:

- Եթե դարձյալ պետք լինի, մի քաշվի, երևա, և ընդհանրապես երևա,- դեպի դուռն ինձ ուղեկցելով ասաց Ադամը և արդեն կիսաբաց դռան մեջ կանգնած, այս անգամ քարտուղարուհուն դիմելով, ավելացրեց:- Երբ այս պարոնը կրկին ժամանակ գտնի այցելելու ինձ, ներս հրավիրեք անհապաղ:

- Լսում եմ,- անմիջապես պատասխանեց ոտքի ելած քարտուղարուհին և ուղղակի սիրահարվածի աչքերով ժպտաց ինձ:

Իմ ծերացած «Վոլվոն» երբեք նման արագությամբ չէր սլացել մեր քաղաքի փողոցներով: Միայն թե չուշանամ, մտածում էի ես, միայն թե հասցնեմ: Ես ավտոմեքենան արգելակեցի պատշգամբի մոտ ու անցուղի մտա: Դա մի հնաճ, իր դարն ապրած երկհարկանի շենք էր՝ բակի կողմից աջ ու ձախ բարձրացող փայտե սանդուղքներով: Ես անվճռականորեն կանգ առա: Ո՞ր գնամ, երբ ոչ համար գիտեմ, ոչ անուն:

- Պարոնն ո՞ւմ է ուզում,- հանկարծ լսեցի ես ու նույնիսկ ցնցվեցի՝ զարմանալով, թե ինչպես չեմ նկատել հենց իմ կողքին, պատի տակ, փոքրիկ եռոտանու վրա նստած կարմիր ներկված մազերով պառավին:- Եթե վարձով սենյակ եք ուզում, ինձ դիմեք, բայց առաջին պայմանն այն է, որ երեխաներ չպետք է լինեն:

- Ո՛չ,- ասացի ես,- ինձ սենյակ պետք չէ: Ես փնտրում եմ ջահել մի կնոջ, որ հիվանդ երեխա ունի:

- Հենց դրա համար է, որ երեխաներ չեմ ընդունում,- փնթփնթաց պառավը,- ցավ ու կրակ են: Ասում եմ հիվանդանոց տար երեխային: Լաց է լինում: Իսկ մենք ի՞նչ անենք, կախվե՞նք: Ով լսում է, որ տանդ հիվանդ երեխա կա, հրաժարվում է սենյակ վարձել: Իսկ մենք ինչո՞ւ պիտի ապրենք, գերմանացիների հետ քա՞րշ գանք ուրիշների պես...

Ես հազիվ զսպեցի ծիծաղս, պատկերացնելով, թե կարմիր մազերով այդ վիուկը ինչպես է քայլում որևէ ջահել սպայի հետ թևանցուկ:

- Երկրորդ հարկ, երրորդ սենյակ,- ասաց պառավը՝ երևի իմ անհամբեր շարժումները ի վերջո նկատելով:- Աջով բարձրացեք:

Ու մինչ ես բարձրանում էի սանդուղքով, ներքևից դեռ լսվում էր նրա փնթփնթոցը՝ ապրանքների թանկության, անիծված պատերազմի, և այն կենվորների մասին, որ երեխաներով են ուզում տուն վարձել: Իսկ հետո կրակն են գցում մարդկանց, որովհետև վայրենի են ու չեն հասկանում, որ հիվանդների տեղը հիվանդանոցն է:

Երրորդ բնակարանի դռան ետևում լռություն էր: Ես դա համարեցի բարի նշան և սեղմեցի զանգի կոճակը: Ոչ ոք չպատասխանեց: Սեղմեցի դարձյալ ու դարձյալ և պարզ լսում էի, թե ինչպես է ներսում ինչ-որ տեղ աղմկում զանգակը: Սակայն դուռը շարունակում էին չբացել: Գուցե համարն են շփոթել, մտածեցի ես՝ շուրջս նայելով, երբ ներքևից կրկին հնչեց պառավի ձայնը.

- Կարծում է, թե ես եմ... Դրա համար չի բացում... ձայն տվեք, ձայն...

Ես մատով թխկթխկացրեցի դռանը և հետո էլ կանչեցի ամաչելով.

- Տիկի՛ն, տիկի՛ն, բացեք, ես եմ... երեկվա տաքսու վարորդը:

Դուռն անմիջապես բացվեց ու շեմին հայտնվեց նա: Ինձ նայեց զարմացած, կնճռոտելով ճակատը ու սաստիկ շիկնելով:

- Ներեցեք, ի սեր աստծո,- շնջաց նա,- կարծում էի, թե տանտիրուհին է: Ստիպում է, որ Լեոնին հիվանդանոց տանեմ... Իսկ հիվանդանոցում չեն թողնում, որ մոտը մնամ: Իսկ ես երեխային ինչպե՞ս կարող եմ մենակ թողնել ու... ես ինչպես մենակ մնամ:

- Գիտեմ,- ասացի՝ ակամա ինքս էլ շնջալով ու գրպանիցս հանեցի պենիցիլինի տուփը:- Վերցրեք, խնդրեմ:

- Օ՛,- գրեթե ճշաց նա, հափշտակելով դեղատուփը, հետո ուշքի գալով ավելի կարմրեց, ձեռքերը կոկորդի մոտ խաչեց կրծքին ու ինձ նայեց այնպիսի մի հայացքով, որ ես հազարապատիկ վարձատրված զգացի ինձ:

- Տե՛ր աստված,- ասաց նա՝ առանց թաքցնելու արցունքները:- Մի՞ թե աշխարհում դեռ բարեգութ մարդիկ կան:

Նա ինձ ներս հրավիրեց, ավելի ճիշտ՝ ետ-ետ նայելով ինքը սենյակ մտավ, այնպես որ՝ ես ակամա հետևեցի նրան:

Փոքրիկ սենյակը գրեթե ամբողջովին գրաված միակ լայն մահճակալի վրա պառկած էր շիկահեր, չքնաղ մի մանուկ, ջերմությունից այրվող դեմքով, ճակատին թաց մի թաշկինակ, որից բառիս բուն իմաստով գոլորշի էր բարձրանում: Տղան շնչում էր ընդհատ-ընդհատ, ստեպ-ստեպ ուռցնելով կարմիր շրթունքները, օրորում էր գլուխը ու ծանր տնքում էր:

- Հիմա, իմ սիրելի՛ տղա, ի՛մ գառնուկ,- ինքն էլ ասես տենդի մեջ, մրմնջում էր կինը՝ երեխայի բարձն ուղղելով և փոքրիկ թասի մեջ թրջելով մի նոր թաշկինակ:- Քեռին քեզ համար դեղ է բերել, փոքրի՛կս... Հիմա ես քեզ կսրսկեմ... ու դու նորից կթռչկոտես, կյանքս...

Նա անկյունում արագ-արագ վառեց նավթավառը, ջրով լի մի թաս էլ դրեց վրան և մեջը լցրեց սրսկելու գործիքները: Հետո նոր միայն նկատեց, որ ես դեռ կանգնած եմ ու ասաց շտապով.

- Օ՛հ, նստեցեք, խնդրում եմ: Կամ գուցե շտապում եք: Ասենք, դե իհարկե, դուք աշխատանքի մեջ եք, որքա՞ն պետք է վճարեմ, ասացեք, խնդրում եմ,- նա գրպանի փոքրիկ պայուսակից ինչ-որ թղթադրամներ հանեց:- Վերցրեք, խնդրում եմ, բոլորը... Թեև այն, ինչ արեցիք դուք, որևէ գնից բարձր է և ինձ ձեր հավիտենական պարտապանն է դարձնում:

- Ի՛նչ եք ասում,- եռանդով հրաժարվեցի ես,- այդ դեղերի համար ինձանից ոչ մի կոպեկ չեն վերցրել: Ես ինչպե՞ս կարող եմ վերցնել ձեզանից:

Կինը ինձ նայեց չափազանց զարմացած, ուզեց ինչ-որ բան ասել, բայց նկատելով, որ մանուկը շարժվեց անհանգիստ ու ծանր մի թառանջ արձակեց, անմիջապես մոռացավ ինձ ու նետվեց երեխայի մոտ:

- Ի՞նչ է, տղա՛ս, շա՛տ է ցավում: Հիմա ես թրջոցը կփոխեմ, փոքրիկս:

Նա թասի միջից նոր թաշկինակ հանեց, ծալեց լայնությամբ և հինը մի կողմ նետելով, թաց թաշկինակը հպեց որդու ճակատին: Փոքրիկը հառաչեց թեթևացած, հետո ցնցվեց մի պահ, բացեց բորբոքված կոպերն ու հանկարծ ինձ նայեց խոշոր, երկնագույն, խամրած աչքերով: Փակեց աչքերը ու նորից բացեց ճիգով, փորձեց գլուխը բարձրացնել բարձից, ու ինչ-որ բառեր մրմնջալով, շարժեց այրվող շրթունքները:

- Ի՞նչ է, սիրելի՛ս, ի՞նչ է, զավա՛կս,- նրա վրա թեքվեց մայրը:

Ու հանկարծ կատարվեց այնպիսի մի հրաշք, որի նման բաներ ես շատ եմ կարդացել գրքերում ու երբեք չեմ հավատացել դրանց և ոչ մի տողին: Տղան ընդհատ-ընդհատ, բայց պարզ լսելի շնջաց.

- Հայրի՛կ... Ես սպասում էի քեզ... Ես գիտեի... որ դու կգաս...

Նայեց ինձ, հառաչեց ու նորից փակեց աչքերը:

Կինը փղձկաց, ապա շտապ-շտապ խեղդեց լացը ու ինձ նայեց մեղավոր ու խեղճ.

- Տենդի մեջ է, ներեցեք, խնդրում եմ...

Ես արագորեն դուրս եկա ու գրեթե վազելով իջա փայտե աստիճաններով, որովհետև հանկարծ զգացի, որ գույնզգույն հրթիռներով մանկական հիշողությանս մեջ մնացած այն ահավոր օրից հետո, առաջին անգամ կյանքում սեղմվում է կոկորդս, և ես ուզում եմ բարձրաձայն լաց լինել խղճահարությունից ու կարեկցանքից:

Ներքևում գրպանիցս հանեցի ու եռոտանու վրա նստած կարմիր մազերով պառավին մեկնեցի մի խոշոր թղթադրամ, որը նա պարզապես խլեց իմ ձեռքից, իսկ հետո հարցրեց ապշած.

- Ինչի՞ համար, ողորմած պարոն:

- Նրանց ձեռք չտաս,- ասացի ես խստությամբ ու նետվեցի դեպի իմ ավտոմեքենան:



Պատուհանի ետևում խավարն սկսում էր նոսրանալ: Վաղորդյան մշուշի միջից հետզհետե ուրվագծվում էին սլաքավարների տնակները՝ իրենց առկայծող լապտերներով, ամայի կիսակայարանները, արևածաղկի ու եգիպտացորենի բարձր, մարդահասակ արտերը և տրորված սևահողով նեղլիկ ճանապարհները, որ այդ արտերը կտրելով գնում- կորչում էին հեռուներում, ինչ-որ տեղ:

Ինչ-որ տեղ:

Որտե՞ղ են տանում այդ ճանապարհները, ովքե՞ր են բնակվում հեռուներում, ինչ-որ տեղ, ի՞նչ մարդիկ են, ինչպե՞ս են ապրում, ի՞նչ հոգս ու ցավ ունեն, ինչի՞ մասին են երագում...

Ամեն անգամ գնացքով որևէ հեռավոր տեղ գնալիս ես ինձ տվել եմ այդ հարցերը: Եվ ինձ թվացել է, թե բոլորն էլ իրենց տալիս են այդ հարցերը:

Եվ ամեն անգամ մտածել եմ, թե հետաքրքիր է՝ ի՞նչ կլինի, եթե այսպես, դանդաղ ընթացքի պահին ցատկեմ գնացքից ու գնամ բարձր արտերի մեջ կորած այդ սևահող ճանապարհներից մեկով: Ո՞ւր կհասցնի ինձ այդ ճանապարհը, ո՞ւմ կհանդիպեմ, ինչպե՞ս կդասավորվի իմ կյանքը այդ նոր, անծանոթ, խորհրդավոր վայրերում:

Ես ժպտացի: Չգիտես ինչու, գնացքում բռնորն էլ փիլիսոփա են դառնում:

Լավ: Ուրեմն ի՞նչ եղավ հետո:

Ջարմանալի բան է, հաջորդ օրը տարօրինակ ձևով իմ ուղերթներն անցնում էին արվարձանի այն փողոցով, որտեղ հիվանդ մանուկն էր ապրում իր մոր հետ: Այսինքն, ինչո՞ւ կեղծեմ, ինձ ուղղակի շատ էր հետաքրքրում, թե ինչպես է փոքրիկը: Դրա համար էլ «Մայեր» խանութից շոկոլադի մի գեղեցիկ տուփ գնեցի ու գնացի իմ նոր բարեկամին այցելելու:

Նա քնած էր անխռով, խորն ու կազդուրող քնով: Շեկլիկ խոպոպիկներն առատորեն փոված էին ճերմակ բարձի տակ: Մայրը կանգնել էր մահճակալի մոտ ու երեխային էր նայում խանդաղատանքով, երջանիկ ժպիտով:

Մի օրվա մեջ ինչպե՞ս կարող է փոխվել ամեն ինչ:

- Դուք այդ ինչո՞վ եք կախարդել իմ տանտիրուհուն, պարոն,- հանկարծ հարցրեց նա՝ հիմա էլ ժպիտով դառնալով ինձ:- Ձեր գնալուց անմիջապես հետո այցելեց մեզ և նույնիսկ մի ափսե ելակ բերեց Լեոնիս համար:

- Իսկ ինչպե՞ս կարողացավ ներս մտնել,- կամացուկ ծիծաղեցի ես՝ հիշելով իմ ապարդյուն զանգերը:

- Սկզբում ելակը ցույց տվեց,- ծիծաղեց նաև նա,- Հետո հայտարարեց, որ ինքը չի թողնի Լեոնին հիվանդանոց տանեն և ամեն կերպ իր ծառայություններն էր առաջարկում: Ապշելու բան էր: Բայց ամենից շատ հետաքրքրվում էր, թե ո՞վ էր դուք, և այդպես էլ չհավատաց, որ մենք անձանոթներ ենք:

- Իսկապես,- ասացի ես,- հիմա արդեն կարելի է ներկայանալ: Իմ անունը Ալեքսանդր է:

- Ալիսա,- ձեռքն ինձ մեկնեց մանկամարդ կինը:

Նրա ձեռքը փոքրիկ ու խոնավ էր:

- Բայց, իսկապես, ինչպե՞ս եք կարողացել գրավել նրա սիրտը:

- Ընդամենը մի քանի խոսքով: Ես նրան ասացի, որ նա անչափ նման է իմ պաշտելի կինոարտիստուհի Էլիս Դուգլասին և հարցրեցի, թե արդյոք բախտ չունե՞մ սեղմելու նախկին արտիստուհու ձեռքը:

Ալիսան ծիծաղեց և չհավատաց: Բայց այլևս որևէ հարց չտվեց:

Քանի որ հեռախոս չունեին, ես խնդրեցի թույլ տալ երբեմն-երբեմն այցելել նրանց՝ Լեոնի առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու համար: Դա կարծես թե այնքան էլ Ալիսայի սրտով չէր, նա շփոթվեց, բայց, այնուամենայնիվ, ամաչեց բացեփրաց մերժել ինձ: Ես քաղաքավարությամբ հրաժեշտ տվեցի, մտքումս վճռելով, որ այլևս այստեղ չեմ գա ու երբ դուրս էի գալիս, նորից մի հայացք նետեցի հիվանդ տղային: Նա բացել էր աչքերը և ինձ էր նայում հետաքրքրությամբ, ասես փորձում էր հիշել, թե որտեղ կարող է տեսած լինել:

- Առողջություն, Լեոն, - ասացի ես:

Մի քանի օր անց նույն փողոցով պատահաբար անցնելու ժամանակ, նկատեցի, որ Լեոնը կանգնած է պատշգամբի տակ, ճիշտ այնտեղ, որտեղ մայրն էր կանգնած այն անձրևոտ երեկո: Ես նրա մոտ արգելակեցի ավտոմեքենան

- Ինչպե՞ս ես, փոքրիկ, - հարցրեցի ես: - Հիմա լա՞վ ես:

Նա ինձ նայեց զարմացած, կկոցեց աչքերը ու հանկարծ լայն ժպտաց:

- Ես ձեզ հիշեցի, - ասաց նա: - Ես ձեզ տեսել եմ:

- Ճիշտ է, - ասացի ես: - Իսկ ի՞նչ ես անում հիմա փողոցում:

- Ավտոմեքենաներին եմ նայում, - ասաց տղան: - Ես բոլոր տեսակի ավտոմեքենաներն էլ ճանաչում եմ: Ձեր ավտոն «Վոլվո» է, չէ՞:

- «Վոլվո» է: Ուրեմն դու սիրո՞ւմ ես ավտոմեքենա:

- Շա՛տ, - ասաց տղան:

- Կուզե՞ս զբոսնել իմ ավտոմեքենայով:

- Իսկ դա կարելի՞ է, - հարցրեց նա՝ ուրախությունից ճառագող երկնագույն աչքերով:

- Իհարկե, - ասացի ես, - եթե միայն մայրիկդ թույլ տա:

- Հիմա հարցնեմ, - իրար խառնվեց Լեոնը, վազեց անցուղու միջով ու հանկարծ շրջվելով, ձայն տվեց: - Իսկ դուք չե՞ք գնա, կսպասե՞ք ինձ:

- Անպայման, - ասացի ես:

Երկու բռպե էլ չէր անցել, երբ տղան հայտնվեց՝ ձեռքից բռնած ձգելով մորը:

Ես ավտոմեքենայից դուրս եկա, ողջունեցի՝ հանելով վարորդական գլխարկս ու չզիտես ինչու սկսեցի արդարանալ.

- Պատահաբար անցնում էի... տեսնեմ՝ Լեոնը կանգնած է...

- Ես ուղղակի չզիտեմ, թե որքանով է դա հարմար, - ասաց Ալիսան: - Երեխան դեռ թույլ է...

- Մայրի՛կ, - ձայնեց տղան, ու նրա աչքերը միանգամից արցունքով լցվեցին:

- Մի ժամից ետ կբերեմ, - ասացի ես: - Հանգիստ եղեք: Մի քիչ կզբոսնենք ու կվերադառնանք: Տղայի սիրտը մի կոտրեք: Կամ գուցե... չեք ուզում մենակ թողնել նրան... դուք էլ եկեք, խնդրեմ...

- Ո՛չ, ո՛չ, - հրաժարվեց նա, - ի՛նչ եք ասում, ինչպե՞ս կարելի է չվստահել ձեզ...

Տղան ինքը բացեց դուռը ու ներս նետվեց: Մենք ձեռքով արեցինք Ալիսային, ու ես ավտոմեքենան շարժեցի տեղից: Հայելու մեջ դեռ երկար երևում էր Ալիսան՝ պատշգամբի տակ կանգնած:

Մենք ավելի քան կես ժամ շրջում էինք մեր փոքրիկ քաղաքի, այսպես կոչված, տեսարժան վայրերով, հետո մի լրիվ պտույտ կատարեցինք զբոսայգու շուրջը: Եվ ես հանկարծ նկատեցի, որ Լեոնին բոլորովին չեն հետաքրքրում հուշարձաններն ու շենքերը: Նա ավտոմեքենայի սարքերով ու ցուցիչներով էր տարված և հիացմունքով հետևում էր ցուցատախտակի վրա հաջորդաբար վառվող գույնզգույն լապտերների խաղին:

Երեխան մնում է երեխա:

- Գուցե գնանք մեր տուն,- առաջարկեցի ես:

- Իսկ ձեր տանն ի՞նչ կա,- մանկական անկեղծությամբ հետաքրքրվեց Լեոնը:

- Մեր տանը,- ասացի ես, ոչ առանց հպարտության,- մեր տանը, փոքրիկ, աշխարհի ամենախելացի խաղալիքներն են:

Ես արդեն երկար ժամանակ էր, ինչ զբաղվում էի խամաճիկներ ու խաղատիկնիկներ պատրաստելով: Իմ երկրորդ սենյակը արհեստանոցի էի վերածել և աշխատանքից ազատ ժամանակ խարտում ու հղկում էի, կարում, սոսնձում ու ներկում էի և պատրաստում էի թելով դեկավարվող խաղալիքներ: Ամեն ինչից՝ սովարաթոթից, տաշեղներից, տերևներից, պահածոյի տուփերից, թելի դատարկ կոճերից, եղևնու կոներից, սովորական կոճակներից... Ամեն ինչից:

Հարկավոր էր տեսնել միայն, թե ինչ ուրախություն ու զարմանք ապրեց տղան: Նա ձգում էր թելերը, և կանաչ գորտը բացում էր բերանը ու կափկափում, մկնիկը սլանում էր լարի վրայով, անձռոնի օրորվելով պարում էր արջը, ավանակը շարժում էր լայն ականջները...

Այսինքն, դժվար է ասել, Լեոնն ավելի ուրախացավ, թե ես, որ տեսնում էի նրա ուրախությունը: Նա ձգում էր լարերը և հետո էլ խոսում տիկնիկների հետ, ժպտում, ծիծաղում, խորհուրդներ տալիս նրանց, հանդիմանում ու խրախուսում:

Տղան երջանիկ էր: Չէր պոկվում խաղալիքներից: Երբ գրեթե բռնի նրան դուրս բերեցի տնից ու ժամացույցին նայեցի, ա իս քաշեցի: Անցել էր երեք ժամ:

Նույնիսկ մտքովս անցավ Լեոնին իջեցնել տան մոտ ու փախչել: Բայց եթե ուզենայի էլ, չէի կարող իրականացնել իմ այդ անվայել գաղափարը, որից ես, իհարկե, անմիջապես հրաժարվեցի, որովհետև պատշգամբի տակ, անհանգստությունից մատները կոտրատելով, ետ ու առաջ էր քայլում Ալիսան:

Երբ ես արգելակեցի, նա գրեթե նետվեց դեպի ավտոմեքենան: Տղան դուրս թռավ ու փարվեց մորը՝ երջանկությունից աղաղակելով.

- Մայրի՛կ, որ իմանաս որտեղ էի... որ իմանաս քեռի Ալեքսը ինչ խաղալիքներ ունի, իսկական, մա՛մ, վագում են, շարժվում են, թռչում են: Գորտն իսկականից կոկոսացում էր, մա՛մ, արի միասին գնանք, հա՞, քեռի Ալեքս, մայրիկին էլ ցույց տվեք ձեր խաղալիքները, ի՞նչ կլինի...

- Բավական է, ծղրիդ...- որդու գրկից ազատվելով, նրան տեսնելուց հետո միանգամից հանգստացած, ծիծաղեց Ալիսան և իր ապրած ողջ անհանգստությունն ու տառապանքը ձևակերպեց մի խոսքի մեջ:- Քիչ էր մնում խելագարվեի, տղաս...

Հիմա չեմ հիշում, թե ինչպես արդարացա, հավանաբար Լեոնը երկուսիս էլ չթողեց խոսել, որովհետև, երբ ուշքի եկա ու արտասանեցի առաջին բառը, արդեն նստած էի նրանց փոքրիկ սենյակի միակ աթոռին ու սուրճ էի խմում:

- Իսկ երբ աշխատանքի եք գնում, ո՞վ է հետևում Լեոնին,- հարցրեցի ես:

- Հիմա առայժմ չեմ աշխատում,- ասաց Ալիսան ու ասես կռահելով այն հարցը, որ ես քաշվում էի տալ, ավելացրեց,- մենք թոշակ ենք ստանում:

- Իբրև զինվորի կի՞ն,- հարցրեցի ես:

- Իբրև զինվորի այրի:- Նրա աչքերը միանգամից արցունքով լցվեցին:- Անցյալ տարի ստացանք ծանուցումը:

- Բայց չե՞ որ գերմանացիները մեր տղաներին բանակ չեն տանում:

- Նա գերմանացի էր և մեկնեց կամավոր:

Երկար ժամանակ լուռ էինք:

- Եվ այդ թոշակը հնարավորություն տալի՞ս է չաշխատելու:

- Ո՛չ,- ասաց Ալիսան:- Բայց ես մի փոքրիկ աշխատավարձ էլ բարեգործական մի ընկերությունից եմ ստանում՝ երբեմն-երբեմն կատարելով նրանց որոշ հանձնարարությունները:

- Ներեցեք, խնդրում եմ, ավելորդ հետաքրքրասիրության համար, բայց դա ի՞նչ ընկերություն է, մեր երկրում բարեգործներ չկան: Այսինքն, ովքեր էլ լինեն նրանք, կեցցեն,- ասացի ես, բարձրանալով տեղից:- Շնորհակալություն սուրճի և ընդհանրապես այսօրվա համար: Լեոնի հետ մենք հիանալի ժամանակ անցկացրինք՝ ցավոք ձեր անհանգստության հաշվին:

- Արդեն մոռացել էի,- պարզ ժպտաց Ալիսան:

- Քեռի՛ Ալեքս,- դռան մոտ ինձ հասավ Լեոնը,- թույլ կտա՞ք էլի գալ ձեր տուն ու խաղալ ձեր տիկնիկների հետ:

- Ամեն օր, միշտ, երեկոյան... Կիրակի օրերին մուտքն ազատ է ժամը տասից,- հանդիսավոր զեկուցեցի ես:- Եվ որպեսզի թյուրիմացություններ չլինեն, ահա իմ հասցեն, փոքրիկ պարոն:-

Ես տղային մեկնեցի իմ այցեքարտը:- Ես միայնակ եմ ապրում և ինձ խանգարել հնարավոր չէ:

- Լեոն, - հանդիմանեց Ալիսան, - արդյոք շատ չե՞ս չարաշահում պարոն Ալեքսանդրի բարությունը:

- Ա՛խ, մայրիկ, եթե միայն դու տեսնեիր այդ խաղալիքները, - հառաչեց տղան:



Երկու օր ինձ հաջողվեց չանցնել այն փողոցով, որտեղ Ալիսան ու Լեոնն էին ապրում: Բարեբախտաբար, նույնիսկ հանգստի ժամանակ չունեի: Անգամ հինգ բոլակ չէին թողնում պարապ մնամ: Հենց ազատվում էի, անմիջապես որևէ մեկը ձեռք էր բարձրացնում: Ուղևորները պարզապես փոխարինում էին իրար, և ես ուրախանում էի, որ մտածելու ժամանակ չեմ ունենում: Դժվար էր միայն գիշերները: Ո՛ր կարող էի փախչել ինքս ինձանից ու իմ մտքերից: Անծանոթ ու օտար զգացումները պաշարել էին ինձ: Ամեն ինչ անում էի դրանք հեռացնելու համար, բայց ոչինչ չէր ստացվում: Վախենում էի նույնիսկ ինքս ինձ խոստովանել, որ խենթորեն սիրահարված եմ Ալիսային, և ուզում եք հավատացեք, ուզում եք ոչ, բայց գիտեի, որ այլևս չեմ կարող ապրել առանց Լեոնի: Նրանք այնպես տիրաբար էին մտել իմ սիրտը, որ տեղ չէին թողել որևէ զգացման կամ զբաղմունքի համար: Ես նույնիսկ իմ տիկնիկներին չէի մոտենում: Ու առաջին անգամ կյանքում՝ Հելենից հետո, կարոտում էի որևէ մեկի:

Միթե՞ իրոք հնարավոր է նման բան, մտածում էի ես, ինչպե՞ս կարող ես երկու- երեք անգամ հանդիպելուց հետո, ուրիշ, անծանոթ մարդկանց տեսնելու անգուսպ, անհաղթահարելի ցանկություն ունենալ: Դա երևի նորմալ երևույթ չէ: Որպես կանոն, ես կիրակի օրերին չէի աշխատում, բայց նրանցից բաժանվելու երրորդ օրը, թեև կիրակի էր, որոշեցի գործի դուրս գալ, որպեսզի քաղաքի փողոցների ժխորի մեջ, տարբեր մարդկանց հետ առօրեական հանդիպումների աղմկոտ մթնոլորտում կարողանամ իլացնել ներքին ապրումներս, ժամանակ շահել ստեղծված արտասովոր իրավիճակը ծանրութեթև անելու, որևէ վճիռ կայացնելու համար:

Ու միաժամանակ չէի ուզում դուրս գալ, չէի ուզում աշխատել, չէի ուզում իլացնել զգացումներս, չէի ուզում չմտածել: Շատ ցավոտ ու հաճելի էր Ալիսային ու Լեոնին հիշելը:

Եվ, այնուամենայնիվ, երբ իմ փոքրիկ կկուն, բնից դուրս թռչելով, տազնապահար կանչեց տասնմեկ անգամ, ես հագնվեցի, վերցրեցի ավտոմեքենայի տնակի բանալին, և արդեն մեկնում էի ձեռքս դուռը բացելու համար, երբ միջանցքում հնչեց զանգը: Ազնիվ խոսք, նախքան դուռը բացելը, հենց միայն սրտիս արագացած զարկերից հասկացա, թե ովքեր էին դռան ետևում:

Լեոնը ուղղակի նետվեց իմ գիրկը, իսկ Ալիսան մնաց դռների մեջ ու շիկնելով, շփոթահար ասաց.

- Ներեցեք, ի սեր աստծո, բայց ես այլևս նրան պահել չկարողացա:

- Շատ ուրախ եմ,- ասացի ես, թեև միանգամայն ավելորդ էին իմ խոսքերը, որովհետև եթե ուզենայի անգամ չէի կարող թաքցնել դեմքիս արտահայտությունը:

- Երեկ ոչինչ չկերավ, հացադուլ էր հայտարարել,- ծիծաղեց Ալիսան: Եվ առավոտյան... մինչև չխոստացա ձեր տուն բերել, նախաճաշը չկերավ: Նա ձեզ չի խանգարի, դուք հագնվել եք... Երևի ուզում եք դուրս գալ:

- Ես ձեզ էի սպասում,- ասացի ես ու որպեսզի հանկարծ նրա մտքով չանցնի հեռանալ, ավելացրի շտապով:- Նստեք, խնդրում եմ, հիմա ես ձեզ համար սուրճ կբերեմ...

- Ո՛չ, ո՛չ, կարիք չկա,- ուզում էր հրաժարվել Ալիսան,- ես...

Բայց ես արդեն խոհանոցում էի: Իսկ երբ վերադարձա սուրճի բաժակները սկուտեղի վրա անվարժ դասավորած, արհեստանոցի բաց դռնից տեսա, որ Ալիսան ևս միացել է որդուն, ու նրանք զարմանքախառն բացականչություններով ու քրքիջով խաղացնում են իմ տիկնիկները:

Իմ տանը երբեք նման հաճելի աղմուկ չէր եղել:

Ես երկար ժամանակ կանգնել ու այո՛, այո՛, ինձ անծանոթ խանդաղատանքով հետևում էի, թե ինչպես են իրար ապշեցուցիչ նման մայրն ու որդին զարմանալիորեն միատեսակ շարժումներով իրար ձեռքից խլում խամաճիկների գործողությունները կարգավորող թելերը և ինչպես են քրքջում ինքնամոռաց ու երջանիկ, նույն ձայնով, իրար նման:

- Սուրճը սառչում է, տիկի՛ն,- այնուամենայնիվ, զգուշացրի ես...

- Հետո, հետո,- հանկարծ ձեռքը անհամբեր թափահարեց Ալիսան՝ խաղով շարունակ տարված, բայց անմիջապես էլ զգաց իր վրիպումը, շրջվեց, ձեռքից բաց թողեց լարը, կասկարմիր կտրեց ու շփոթությունը ծածկելու համար, ինչպես միշտ՝ ծիծաղեց անմիջապես:- Բայց ես ի՞նչ անեմ: Մեղավորը ձեր հրաշալի տիկնիկներն են:

Լեռնին չհաջողվեց խաղալիքներից պոկել, այսինքն, պարզվեց նաև, որ երեխաներին սուրճ տալ չի կարելի, և ես ու Ալիսան նստեցինք իրար դիմաց, փոքրիկ սեղանիկի մոտ: Ալիսան հանկարծ նորից ծիծաղեց, բայց ոչինչ չասաց:

- Ինչո՞ւ ծիծաղեցիք,- հարցրեցի ես:

- Ոչինչ, հենց այնպես,- ժպտաց նա:

- Եվ, այնուամենայնիվ,- պնդեցի ես:

- Մտքովս չէր անցնի, թե տղամարդու պատրաստած սուրճը հնարավոր կլինի խմել,- խոստովանեց նա:- Նաև դրա համար էի հրաժարվում:

- Չէ,- ասացի ես,- գոնե սուրճի հարցում ես հաստատ վարպետ եմ:

- Իսկ խաղալիքների՞ ...

- Դե, խաղալիքներն իմ կյանքն են:

Ալիսան փոքրիկ կումերով դանդաղ խմում էր սուրճը, բայց ես տեսնում էի, որ ասես թռուցիկ հայացքով, սակայն, ամեն մանրամասն նկատող կնոջ բծախնդրությամբ դիտում է իր շուրջը: Եվ երևի բավարարված մնաց, որովհետև ասաց.

- Հիմա ես հասկանում եմ Լեոնին: Ձեր տանը շատ հետաքրքիր է ու հանգիստ:

Եվ ես հանկարծ, ինձ համար էլ անսպասելիորեն, ասացի մի բան, որ մեկ վայրկյան առաջ մտքովս էլ չէր կարող անցնել, թե ինձ կարող եմ թույլ տալ: Դա ինքնաբերաբար ստացվեց ու բնական՝ ծագող արևի կամ քարերի միջոց բխող անապական աղբյուրի նման, ուշ աշնանը ծառից ընկնող տերևի նման: Ես նրան ասացի.

- Ուրեմն՝ մնացե՞ք իմ տանը, խնդրում եմ:

Ալիսան ինձ նայեց ցնցված, գունատվեց վայրկենապես և չափազանց լրջությամբ ասաց.

- Դա անհնարին է, պարո՞ն Ալեքսանդր:

- Ինչո՞ւ,- հարցրեցի ես,- ինչո՞ւ...

- Որովհետև ես սպասում եմ իմ ամուսնուն:

- Բայց չէ՞ որ ինքներդ ասացիք, թե նա գոհվել է:

- Ես նրանց ասածը կրկնեցի: Ինչ որ գրված էր թղթում: Բայց ես համոզված եմ, որ նա կա և սպասում եմ նրան:

- Եվ ինչքա՞ն պետք է սպասեք,- հարցրեցի ես՝ ինքս էլ նողկալով իմ հարցից և ընդհանրապես այն վիճակից, որի մեջ հայտնվել եմ:

- Որքան որ կարողանամ,- ասաց Ալիսան:

Չէի հասկանում, թե ինչ է կատարվում ինձ հետ: Ես անփորձ ու խենթ մի պատանի չէի: Ինձ համար աշխարհում եղել էր Հելեն և էլի շատ կանայք էին հանդիպել հետագայում իմ կյանքի ճանապարհին, մեծ ու փոքր խաչմերուկներում: Բայց սա բոլորովին ուրիշ բան էր: Ես ամեն վայրկյան պատրաստ էի նրա ոտքերն ընկնել: Ես, որ ողջ կյանքում ծիծաղել եմ ուրիշների սվսվան ու լալկան սիրային խոստովանությունների վրա և Հելենից հետո երբեք հարգանքով ու լրջությամբ չեմ նայել որևէ կնոջ, պատրաստ էի ծունկ չոքել վեցամյա որդի ունեցող այդ այրի կնոջ առջև, միայն թե նա մնար ինձ հետ, միայն թե չհեռանար և չտաներ իր հետ Լեոնին:

Եվ երբ, կարծես իբրև իմ մտքերի շարունակություն, արհեստանոցից հնչեց Լեոնի երջանիկ ծիծաղը, ես կատարեցի երկրորդ հիմարությունը՝ հույսի շողի նման այդ ծիծաղը բռնելով.

- Դուք կարող էիք մնալ հենց թեկուզ հանուն Լեոնի:

Նա ինձ նայեց մի ժպիտով, որը թերևս միայն «Ջոկոնդայի» ժպիտի հետ կարելի էր համեմատել, ու ես կրկին ու կրկին համոզվեցի որ արարիչ աստված, աշխարհը ստեղծելով, ամենաքնքուշ ու փխրուն էակներին անգամ ինքնապաշտպանության գեներ կամ գոնե գույներ է տվել:

Ալիսան սպանիչ սառնությամբ ասաց.

- Հանուն երեխայի կարելի է սիրուհի դառնալ: Ո՛չ ավելի:



Ուղիղ տասն օր ես նրանց չտեսա: Ուղիղ տասն օր աշխատանքի չգնացի և իմ արհեստանոցում փակված, իրեն ինքնակամ տաժանակրության դատապարտած մարդու համառությամբ աշխատում էի առավոտից մինչև ուշ գիշեր: Քանի որ վճռականապես որոշել էի թողնել տաքսին, ստուգում էի ինձ, թե կկարողանա մ արդյոք ամբողջությամբ նվիրվել այն գործին, որով մտադիր էի ապահովել իմ և իմ ապագա ընտանիքի հանապազօրյա հացը:

Ես կանացի զարդեր էի պատրաստում, փայլվիլուն ու գեղեցիկ վզնոցներ, ապարանջաններ, մատանիներ ու ականջօղեր, վառվռուն ճարմանդներ ու գոտիներ: Եվ երբ տասնմեկերորդ օրը առավոտյան հանրագումարի բերեցի իմ աշխատանքը, ինքս էլ զարմացա արդյունքից:

Շքեղ և ճաշակով գործեր էին ստացվել: Իրոք մանրաքանդակի վարպետի անուրանալի ձիրքով էր օժտել ինձ աստված: Ես հավաքեցի իմ ստեղծագործությունների նմուշները ու քաղաքապետարան գնացի՝ Ադամին ցույց տալու և խորհուրդ հարցնելու համար:

- Այս բոլորը դո՞ւ ես սարքել,- ապշած հարցրեց Ադամը:

- Հա՛, - ասացի ես:

- Չքնաղ գործեր են,- աչքը զարդերից չկարողանալով հեռացնել, ասաց Ադամը:- Եվ ի՞նչ ես ուզում անել սրանք:

- Ուզում եմ հրաժարվել տաքսիից, մի տուն գնել, տան առաջին հարկում մի փոքրիկ խանութ բացել և սարքել ու վաճառքի հանել ահա այսպիսի վզնոցներ ու ճարմանդներ:

Ադամը ծիծաղեց:

-Իսկ ովքե՞ր են գնելու քո այս վզնոցներն ու ճարմանդները, մարդիկ իրենց ունեցած-չունեցածն են վաճառում մի կտոր օճառի կամ մի տուփ կարագի համար: Հիմա պատերազմ է, եղբայր... Հիմա մարդկանց հաց է պետք... ո՞ւմ են հետաքրքրում այսօր պերճանքի առարկաները:

- Վաղը կհետաքրքրեն,- ասացի ես:- Պատերազմը հավերժ չի տևելու, և ինքդ էլ հիանալի գիտես, որ այսօր-վաղն ավարտվելու է: Ու այն ժամանակ իմ զարդերը կխլիլեն իրար ձեռքից,

որովհետև մարդիկ զգվել են պատերազմից, զգվել են սև շորերից, զգվել են խեղճությունից: Որովհետև մարդիկ կարոտ են ուրախության և պատերազմից հետո, հակառակ ռեակցիայի օրենքով, շատ ավելի բուռն ու շքեղ են ցանկանալու ապրել, ցուցադրել իրենց, վայելել, հաճույք ստանալ:

- Իսկ քո այդ զարդերը արդյո՞ք չափազանց թանկ հաճույք չեն լինի նրանց համար,- հեզնանքով ծիծաղեց Ադամը:

- Իմ զարդերը ամենաեժանր կլինեն աշխարհում երբևէ եղած զարդերի համեմատությամբ,- խորամանկ ժպիտով ասացի ես:- Միայն թե չփչանան Ամերիկայի կամ Ամերիկայի հետ որևէ միջնորդ երկրի հետ մեր հարաբերությունները, որոնցից որևէ մեկը միշտ էլ կլինի:

- Ամերիկան ի՞նչ կապ ունի այստեղ,- արդեն ոչինչ չհասկանալով, զարմացած հարցրեց Ադամը:

- Իսկ ուրիշ որտեղի՞ց ենք ստանում մենք կաթի և ձվի փոշու այն պահածոները, որոնց տուփերից ես այս զարդերն եմ պատրաստում:

- Սրա՞նք,- ասջեց Ադամը:- Սրանք թիթեղի՞ց են:

- Ամենախսկական թիթեղից,- ասացի ես,- գումարած զանազան այլ ոչ արժեքավոր նյութեր, ինչպիսիք են խեցիները, թռչնի մագիլները, գունավոր քարերը, մանր եղջերավորների սմբակներն ու պոզերը և այլ, և այլ նման բաներ:

- Դու ֆենոմեն ես,- հայտարարեց Ադամը,- եթե դու դրանք ցանկանայիր վաճառել որպես ամերիկյան ոսկի, առաջին խաբվողը ես կլինեի: Զարմանալի մարդ ես դու: Հաստատ երջանիկ կլինի այն կինը, որ քո տունը կմտնի, և որի մասին ուզում եմ խոսել քեզ հետ:

Նա խփեց իմ ցավոտ վերքին:

- Չէ՛, Ադամ,- ասացի ես,- մի կին կա, որ այդպես չի մտածում: Իսկ թե ինչ են մտածում մնացած կանայք, բոլորովին չի հետաքրքրում ինձ:

- Էլի՞ պենիցիլին է պետք,- հանկարծ ժպտաց Ադամը:- Խոստովանիր, որ հարցը նրան է վերաբերում:

Ես բացեցի իմ հոգին՝ ինչպես խոստովանահոր առաջ, սկզբից մինչև վերջ պատմելով ամեն ինչ:

Զգիտեմ ինչու, ինձ թվում էր, թե Ադամը իր սովորությամբ կատակի կվերածի ամեն ինչ: Բայց նա ինձ լսեց ամենայն լրջությամբ ու ասես մտահոգ, իսկ հետո, առանց որևէ կերպ արձագանքելու, կենտրոնացած քայլում էր իր երկար առանձնասենյակի մի ծայրից մյուսը, ձեռքերը կրծքին խաչած, ինչ-որ մտորումների մեջ:

- Ափսո՛ս,- վերջապես արտասանեց նա՝ իմ առջև կանգ առնելով:- Իսկ դու գիտե՞ս, որ ես քեզ համար մի փայլուն թեկնածու եմ գտել՝ գեղեցիկ, ինչպես Աֆրոդիտեն, խելացի, ինչպես Մարի

Կյուրիին և մեծահարուստ Ֆորդի դստեր նման: Մի շտապիր, Ալեքս, բարեկամս: Ես հենց նրա մասին էի պատրաստվում խոսել քեզ հետ: Դու շատ ես աշխատել ու տառապել կյանքում: Դա հո հայտնի է ինձ: Եվ ջանիլ ես: Այդ ամուսնությունը այսուհետև անխռով ու ապահովված ապրելու բոլոր հնարավորությունները կտա քեզ, որոնց արժանի ես դու, և քեզ համար ճանապարհ կբացի դեպի բարձր կոչված հասարակությունը, որին բոլորն էլ ի վերջո ձգտում են: Մի՛ շտապիր, եղբայր: Ինչպես իմ դերձակն է ասում իր մասնագիտության մասին, այդ գործը ևս շտապողականություն չի սիրում: Եկ քեզ ծանոթացնեմ այդ աղջկա հետ, որն արդեն մասամբ գիտե քո մասին, և հավատացնում եմ, որ մի քանի ամիս հետո քեզ չափազանց զավեշտական կլվա թիթեղյա զարդեր սարքել- վաճառելով ապրելու քո երբեմնի միամիտ ու խեղճ գաղափարը: Ուզո՞ւմ ես հենց այսօր հանդիպել նրան:

- Ես ոչ ոքի տեսնել չեմ ուզում, Ադա՛մ, - ասացի ես:

Երևի իմ ձայնի մեջ կամ դեմքիս վրա այնպիսի մի բան կար, որն Ադամին ստիպեց անմիջապես կանգ առնել:

- Ափսո՛ս, ափսո՛ս, - միայն կարողացավ արտասանել նա և հանկարծ ինձ նայեց այնպիսի մի հայացքով, զարմանքախառն հարգանքի այնպիսի մի արտահայտությամբ, ինչպես նայում էր տարիներ առաջ, մելիորատիվ ջոկատի անտառային տնակում, երբ հարբած խնդրում էր վերադառնալ, իսկ ես հանուն նրա ժպտալով հրաժարվում էի ջոկատի պետ լինելու առաջարկից:

Սակայն այս անգամ շարունակությունը բոլորովին ուրիշ տեսակ ստացվեց:

- Դե լավ, զարմանալի՛ մարդ, - ասաց Ադամը: - Արա այնպես, ինչպես ուզում ես: Մանավանդ որ քո որոշումները ի վերջո ավելի խելացի են լինում: Թող այդպես լինի: Միայն թե՛ իմ կարծիքով, գործելու քո եղանակն է սխալ: Իսկ ի՞նչ էիր ուզում դու: Սպասում էիր, որ քո առաջին իսկ, ըստ որում, տղայավարի անկեղծ, բայց աննրբանկատ, եթե չասենք՝ անկիրթ առաջարկից հետո անմիջապես քո գի՛րկն ընկնի: Հետո ի՞նչ պետք է մտածեիր նրա մասին: Եթե ես լինեի քո փոխարեն...

- Ասա՛, Ադամ...

- Հենց այս երեկո, վայելուչ հագնված, ծաղիկները ձեռքիս կգնայի նրա մոտ և ամենայն լրջությամբ, ինչպես պատվավոր մարդուն է հասուն, կխնդրեի նրա ձեռքը... Հին, բարի ժամանակներում հենց այդպես էլ անում էին...

- Միայն թե առանց ծաղիկների, ես ծաղիկներ բռնելու ձևը չգիտեմ, - աղաչեցի ես:

- Սովորի՛ր, - կեղծ խստությամբ ասաց Ադամը: Գրկեց ինձ ու ավելացրեց, ասես թե մի տեսակ նախանձով: - Թեև խառնեցիր իմ բոլոր ծրագրերը, բայց համոզված եմ, որ երջանիկ կլինես, ծերուկ: Քո ճակատին խաչ կա: Դու պետք է երջանիկ լինես:

Ես համբուրեցի նրան:

- Ասենք, ինչո՞ւ եմ գուր տեղը էներգիա վատնում,- ծիծաղեց Ադամը:- Չե՞ որ երևի շուտով նույն խոսքերը կրկնելու եմ ի պաշտոնե, որպես պարոն քաղաքագլուխ, հարսանյաց սրահում, ձեր պսակադրության ժամանակ:



Նա այդ նույն խոսքերը կրկնեց իբրև պարոն բուրգումիստր, հարսանյաց սրահում, մեր պսակադրության ժամանակ:

Բայց ոչ շուտով:

Ավելի քան երկու ամիս տևեց, մինչև որ աջ ձեռքով Ալիսայի արմունկն ամուր բռնած, անցա տոնական լույսերով ողողված սրահով, Մենդելսոնի հարսանյաց քայլերգի հանդիսավոր հնչյունների տակ:

Ալիսան այն օրը բոլորովին ուրիշ տրամադրության մեջ էր: Երբ ես շշուկով, որովհետև Լեոնը քնած էր, բայց ամենայն հանդիսավորությամբ խնդրեցի նրա ձեռքը, նրա խոշոր աչքերն անմիջապես արցունքով լցվեցին: Նա իմ գիրկն ընկավ ու հեկեկալով խոստովանեց, որ ինքն էլ ինձ է սիրում և որ Վալտերին կորցնելուց հետո, միայն աստված կարող էր ինձ հետ ամուսնանալու երջանկությունը պարզնել իրեն: Բայց այդ ամենից հետո պատասխանի համար մի շաբաթ ժամանակ խնդրեց ինձանից: Թե ինչու, ոչինչ չհասկացա, բայց չուզեցի մանրանալ և զանազան հարցերով սրտնեղություն պատճառել նրան: Եթե խնդրում է, ուրեմն ինչ-որ հիմնավոր պատճառներ ունի: Ո՞վ գիտե, գուցե մի վերջին անգամ ևս ուզում է ճշտել ամուսնու զոհվելու փաստի հավաստիությունը: Կամ ուզում է տեղյակ պահել իր, իսկ գուցե և Վալտերի հարազատներին և նրանց համաձայնությունն ու օրհնությունը ստանալ: Կամ իր զգացմունքներն է ուզում կրկին ստուգել: Ո՞վ գիտե: Չե՞ որ ինձ գրեթե ոչինչ հայտնի չէ նրա անցյալի և նույնիսկ ներկայի մասին: Ուրեմն՝ կարելի է մի շաբաթ էլ համբերել:

Բայց երբ պայմանավորված մի շաբաթն անցավ ու անցավ նաև երրորդ շաբաթը, ես գտա, որ արդեն իրավունք ունեմ բացատրություն պահանջելու: Մակայն կրկնվեց նույն պատմությունը: Ալիսան թախանձանքով խնդրեց մեկ շաբաթ ևս սպասել:

- Ինչո՞ւ,- առանց դառնությունս թաքցնելու, հարցրեցի ես:

- Մի՛ բարկացիր, Ալե՛քս, բայց ինձ նախ անհրաժեշտ է մայրաքաղաքում լինել:

- Ուրեմն՝ գոյություն ունի մեկը, որ կարող է քեզ թույլ տալ կամ արգելե՞լ ամուսնանալ,- զայրացա ես:- Ինչո՞ւ դու ինձ հետ մինչև վերջ անկեղծ չես, Ալիսա:

Ալիսան հանկարծ քնքշորեն համբուրեց իմ ձեռքը:

- Դու մոռանում ես, որ ես ծառայում եմ բարեգործական ընկերությունում և աշխատանքի բերումով պարտավոր եմ լինել ոչ միայն տարբեր հիմնարկներում, ապահովագրական ընկերություններում և ֆիրմաներում, այլև՝ տարբեր քաղաքներում: Իսկ ես չեմ ուզում, որ քեզ

հետ ամուսնանալուց հետո, թեկուզ մեկ օր հեռու ապրեմ քեզանից: Հիմա հասկացա՞ր, անհամբեր մարդ:

- Եթե հարցն այդ է, անմիջապես ազատվիր աշխատանքից, սիրելի՛ս,- ասացի ես:- Փառք աստծո, ես միշտ աշխատել եմ երկուսիս փոխարեն և հիմա մենք կարող ենք ապրել ապահով ու հանգիստ, առանց որևէ մեկից կախում ունենալու:

- Դա անհնարին է, Ալե՛քս, ես պարտավորություններ ունեմ: Այն էլ բավական է, որ ինձ հաջողվի հրաժարվել հեռավոր գործուղումներից:

- Ես քեզ այդ հարցում ոչնչով օգնել չե՞մ կարող, Ալիսա՛:

- Ոչ, սիրելի՛ս:

Ես գնացի երկաթուղային կայարան՝ նրան ճանապարհելու: Երբ գնացքը շարժվեց ու նա ձեռքով հրաժեշտ էր տալիս ինձ, հանկարծ այնպես ճմլվեց սիրտս: Ինձ թվաց, թե նրան այլևս չեմ տեսնելու: Թե նա ևս կանւանա, կցնդի, կանհետանա... իմ առեղծվածային Հելենի նման...

Բայց անմիջապես էլ հանգստացա, երբ անհամբերությամբ թևս ձգելով, Լեոնն ասաց.

- Դե գնանք, քեռի՛ Ալեքս:

Նա խաղալիքների մոտ էր շտապում և նրա համար աշխարհում ուրիշ ոչ մի տանջող խնդիր գոյություն չուներ:

- Գնանք, տղա՛ս,- ասացի ես,- գնանք:



Կուպեի դուռը բխեցին:

- Այո՛,- ասացի ես:

- Պարոնը կցանկանա՞ նախաճաշել,- հարցրեց ուղեկցողը:

Ուրեմն՝ արդեն առավոտ է: Շուտով տեղ կհասնենք:

- Միայն սուրճ,- ասացի ես:- Այն էլ՝ լվացվելուց հետո:

- Կաթո՞վ:

- Ո՛չ,- ասացի ես:- Թունդ, կրկնակի բաժին:

Զարմանալի բան էր: Ամբողջ գիշեր չէի քնել, բայց սառը ջրով լվացվելուց հետո բավականին առույգ զգացի ինձ: Հիմա սուրճն էլ կլրացնի պակասը: Ինչ լավ է, որ Ալիսան կողքիս չէ: Նա

սարսափած իրար կխփեր ձեռքերը. «Ի սեր աստծո, Ալե՛քս, քեզ սուրճ խմել չի կարելի՝ մոռանո՞ւմ ես, որ ճնշում ունես»: Իսկ ես հիմա կխմեմ և այն էլ կրկնակի բաժին, արգելված պտուղը ճաշակողի հաճույքով մտքումս խնդմնդացի ես: Իսկապես փառահեղ սուրճ էր: Այս ուղեկցողները գիտեն իրենց գործը:

Հա... Իսկ հետո...

Ես ու Ալիսան երեք ամսվա ընթացքում ավելին արեցինք, քան դա ուրիշներին կհաջողվեր նույնիսկ մեկ տարում: Նախ վաճառեցինք իմ տաքսի ավտոմեքենան և գնեցինք մի նոր, փայլուն, հիասքանչ «Օպել», որի ներսից ռետինի, ներկի և չգիտեմ էլ ինչի այնպիսի անկրկնելի խենթացնող հոտ էր գալիս, որը հատուկ է միայն գործարանից հենց նոր դուրս եկած ավտոմեքենաներին և որը ես ու Լեոնն ուղղակի հոտոտում էինք ազահաբար, Ալիսայի քրքիջի ներքո, թափքի մեջ չորեքթաթ անելով:

Հետո բավականին մատչելի գումարով գնեցինք ու մեր ուզածի նման թեթև ու պայծառ կահավորեցինք այն տունը, որտեղ ապրում ենք հիմա, և որտեղ, եթե աստված տա, կապրենք մինչև մեր կյանքի վերջը: Մենյակները բաժանելիս կոռիվ չեղավ մեր միջև, որովհետև դրանք կարող էին բավարարել շատ ավելի մեծ մի ընտանիքի: Բայց միայն Լեոնի մարտական օգնությամբ ինձ հաջողվեց արհեստանոցի համար նվաճել ամենամեծ ու ամենալուսավոր սենյակը՝ երկրորդ հարկում, որը Ալիսան ցանկանում էր հյուրասենյակի վերածել: Մնացած հարցերը լուծվեցին խաղաղ:

Իսկական մարտերը առաջին հարկում բացած խանութի համար ծավալվեցին: Ես պնդում էի, որ ինքս եմ կանգնելու վաճառասեղանի ետևում: Օրական վեց ժամ կաշխատեմ, իսկ երկու ժամ էլ կզբաղվեմ զարդերը վաճառելով: Իսկ Ալիսան համոզում էր, որ ավելի նպատակահարմար կլինի, եթե ինքը վաճառքով զբաղվի՝ թեկուզ իրավիճակից ելնելով: Նախ՝ ինքը իր ականջներին, պարանոցին ու ձեռքերին կարող է որպես օրինակ ցուցադրել զարդերի նմուշները, մի հնարավորություն, որից ես ի ծնե զրկված եմ: Իսկ որ ամենակարևորն է, առանց ավելորդ համեստության, սեթևեթանքով ավելացնում էր նա, մարդիկ ավելի հաճույքով են կանանցից գնումներ կատարում, հատկապես, երբ այդ կինը գեղեցիկ է:

- Դրա համար էլ դու խանութի երեսը չե՛ս տեսնի,- բղավում էի ես:

Ի վերջո հաղթանակի դաշտը մնաց Ալիսային: Այսինքն, եթե անկեղծ լինենք՝ ո՞ր տղամարդն է ազնիվ մենամարտում հաղթել կնոջը, հատկապես՝ եթե այդ կինը քոնն է ու իրոք որ գեղեցիկ է:

Սկզբում հաճախորդներ չկային, բայց մենք չէինք հուսահատվում: Եվ իսկապես, երկու-երեք ամիս անց...

Ես համոզված էի, որ մեր խանութը ի վերջո ուշադրության կարժանանա, բայց այն, ինչ կատարվեց, վեր էր ամեն տեսակ սպասելիքներից: Բավական եղավ խորամանկորեն ձևակերպված փոքրիկ մի հայտարարություն քաղաքային թերթում և երկու ցուցատախտակ՝ հարևան փողոցներում, որոնց վրա նկարված մատը մեր տան տեղն էր նշում, որպեսզի մեր փոքրիկ խանութը բառացիորեն հեղեղվի գնորդներով:

Աղամին ներկայացրած իմ փոքրիկ փաստարկները ճիշտ դուրս եկան: Ես իրավացի էի: Որովհետև ավարտվել էր անիծյալ պատերազմը: Եվ մարդիկ կարոտ էին ուրախության ու պերճանքի:

Ու իրար հաջորդեցին մեր խաղաղ, ապահով, համերաշխ ու երջանիկ կյանքի տարիները:

Իհարկե, սկզբում մի հանգամանք շատ էր տանջում ինձ: Մենք երեխա չէինք ունենում: Ես տեսնում էի, թե ինչպես է տառապում նաև Ալիսան և ինքս էլ մխիթարության կարոտ, մխիթարում էի նրան:

- Ոչինչ, սիրելի՛ս: Երևի աստված կամենում է, որ ուրիշի հետ չկիսենք Լեոնի նկատմամբ ունեցած մեր սերը:

Ալիսան երախտագիտությամբ ու չզիտես ինչու մեղավոր հայացքով ինձ էր նայում, միանգամից արցունքով լցրած խոշոր, սիրելի աչքերը:

Հետո կարողացանք ընդհանրապես չխոսել այդ թեմայով, և ամեն ինչ հետզհետե ընկավ սովորական, խաղաղ հունի մեջ:

Հա, միայն մի անգամ ինչ-որ մեկը փորձեց հանել մեզ այդ հունից և եկավ ու անցավ փոթորկի նման, մի փոքր միայն ցնցելով մեր տունը:

Մի հաստիկ, սակայն, արագաշարժ, անհանգիստ շարժուձևերով մարդ էր, որ լայնեզր գլխարկը գլխին ու հովանոց-ձեռնափայտը թևի տակ սեղմած, մտել էր խանութ, երկար, ուշադրությամբ դիտել էր մեր ապրանքները, զրուցել Ալիսայի հետ և ցանկություն հայտնել հանդիպելու այն վարպետին, որը պատրաստում է այս, ինչպես ինքն էր ասել, ֆանտաստիկ զարդերը:

Ես արհեստանոցում էի, երբ Ալիսան վեր բարձրացավ ու հայտնեց այդ մասին:

Չուզեցի գործից կտրվել ու խնդրեցի վերև հրավիրել նրան:

Նա եկավ, բարևեց աղմուկով, այս ու այն կողմ ընկավ՝ դիտելով ու հոտոտելով ամեն ինչ և նոր միայն հարկ համարեց ներկայանալ:

- Գաբրիել: «Ռիխտեր և ընկ.» ֆիրմայի լիազոր ներկայացուցիչը:

- Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ, պարո՛ն Գաբրիել,- հարցրեցի ես:

Նա նստեց իմ դիմաց, ծայրը կտրելով բերանը դրեց հաստ սիգարը, մի սիգար էլ մեկնեց ինձ, որից ես հրաժարվեցի և անմիջապես գործի անցնելով, ասաց.

- Մենք անձանոթներ չենք: Անձամբ ես լավ եմ ճանաչում ձեզ, որովհետև նախքան այստեղ գալը, մանրամասնորեն հետաքրքրվել եմ ձեր անձով ու գործունեությամբ: Եվ ահա այն ֆիրմայի վարչության անունից, որի ներկայացուցիչն եմ ես, լիազորված եմ անելու հետևյալ առաջարկությունը: Անմիջապես փակեք ձեր խանութն ու արհեստանոցը:

Ես զգացի, թե ինչպես միանգամից պրկվեցին մկաններս:

- Մի թե իմ փոքրիկ խանութը խանգարում է ձեր հզոր ֆիրմային,- հեզնեցի ես:
- Ո՛չ, ո՛չ,- տեղից վեր ցատկեց հաստիկ մարդը,- դուք ինձ ճիշտ չհասկացաք: Ավելի ստույգ՝ ես երևի սխալ սկսեցի: Մենք ուզում ենք ձեզ ավելի մեծ գործ հանձնարարել:
- Ուրեմն, այնուամենայնիվ, խանգարում է,- ծիծաղեցի ես:- Եվ ի՞նչ գործ եք ուզում հանձնարարել:
- Կանացի արդուզարդի մի խոշոր գործարանի դիրեկտորի պաշտոնը՝ Ռաբաթում:
- Որտե՞ղ:
- Մարոկկոյում,- ասաց մարդը:- Բաժնետիրոջ իրավունքներով: Մենք պատրաստ ենք ձեզ վճարել հասույթի հինգ տոկոսը, եթե դուք ձեր աշխատանքի մեթոդները ներդնեք արտադրության մեջ:
- Շատ ժլատ եք,- ասացի ես հենց այնպես, որովհետև որևէ գաղափար չունեի հասույթների ու տոկոսների մասին:
- Վեց տոկոսը,- անմիջապես զիջեց նա,- ավելին իմ իրավունքներից վեր է:
- Եվ մոտավորապես որքա՞ն է կազմում այդ վեց տոկոսը,- շարունակելով խաղալ, հարցրեցի ես:
- Մարկո՞վ թե դոլարով:
- Դոլարով:
- Հիսուն հազար դոլար: Գուցե և մի փոքր ավելի:
- Տարի՞ն:
- Ոչ, ամիսը: Դա ձեզ չի՞ բավարարում:

Միանգամից քրտնեցին ձեռքերիս ափերը: Ես այդքան գումար հազիվ թե կարողանայի վաստակել, եթե ապրեի ևս երեսուն կամ քառասուն տարի՝ գրեթե ամեն ինչից զրկելով ինձ: Իմ կենսագրությունն ու գործունեությունը մանրամասն ուսումնասիրած պարոն Գաբրիելը հիանալի զիտեր այդ: Դրա համար էլ ինձ էր նայում ներողամիտ հաղթական արտահայտությամբ, թեթևակի ժպտալով, ասես սպասելով, թե հիմա ուր որ է իր ոտքերը կընկնեմ: Եվ հենց այդ ժպիտն էլ վճռեց ամեն ինչ: Նյարդերս խաղաղվեցին միանգամից, սիրտս սկսեց կանոնավոր տրոփել:

- Ես մտադիր չեմ փոխել իմ ապրելակերպը,- հանգիստ ասացի ես:

- Դուք այդ լո՞ւրջ եք ասում,- նորից տեղից վեր ցատկեց պարոն Գաբրիելը:- Դուք... դուք ուզում եք հրաժարվել նման գերշահավետ գործարքի՞ց: Ոչինչ չեմ հասկանում:

- Իսկ ես հասկանում եմ:

- Գուցե պայմաններից եք դժգոհ,- կրկին իրար անցավ նա:- Այդ դեպքում խնդրում եմ ուղղակի պարոն Ռիխտերի հետ խոսել: Դուք փոխադարձ համաձայնության կգաք: Նա շատ է շահագրգռված այս հարցով և անպայման նոր զիջումների կզնա:

- Ո՛չ,- ասացի ես:

- Ո՞չ:

- Ո՛չ,- կրկնեցի ես:

- Կյանքովս եմ երդվում, որ ոչինչ չեմ հասկանում,- ձեռքերը տարածեց պարոն Գաբրիելը:- Լավ: Եկեք այսպես պայմանավորվենք: Դուք այսօր մտածեք և ինձ պատասխանեք վաղը: Առավոտյան ես կրկին կայցելեմ ձեզ:

- Մի անհանգստացեք,- ժպտացի ես:- Վաղը ևս պատասխանը ճիշտ նույնը կլինի:

- Համենայն դեպս, համենայն դեպս, ով գիտե... - դեպի դուռը ետ-ետ գնալով, մի վերջին փորձ արեց նա,- համենայն դեպս ես իմ հեռախոսի համարը կթողնեմ ձեր տիկնոջ մոտ: Եթե համաձայնվեք, որի համար համոզված եմ, երբեք-երբեք չեք զղջա, զանգահարեք ինձ վաղը, մինչև ժամը տասնմեկը: Շնորհակալություն: Ցտեսություն:

- Գնաք բարով,- ասացի ես ու ծիծաղելով ավելացրի իմ մտքում,- փոթորիկ էր, եկավ ու անցավ:

Բայց, ինչպես ասացի, այդ փոթորիկն, այնուամենայնիվ, որոշ չափով ցնցեց մեր տունը:

Պառկել էինք քնելու և արդեն մարել էինք լույսերը, երբ Ալիսան հանկարծ մթության մեջ բռնեց ձեռքս ու ասաց.

- Ալեքս, իսկ գուցե սխալվում ես՝ մերժելով «Ռիխտեր» ֆիրմայի առաջարկը: Ի վերջո փայլուն հեռանկարներ են: Ես Ռաբաթի մասին կինոնկար եմ նայել: Դրախոս է: Եվ հետո՝ այդ հարստությունը, անկախությունը: Մենք փաստորեն արքայավարի կապրենք:

- Իսկ դու ինչի՞ կարիք ես զգում, Ալիսա,- հարցրեցի ես:

- Մի՛ հասարակացրու,- խնդրեց նա:

- Չէ, չէ, ես ամենայն լրջությամբ եմ ասում: Գուցե այնպիսի մի բան կա, որ դու ցանկանում ես սրտանց: Ասա, սիրելիս, և ես անմիջապես կզնեմ քեզ համար: Մի՞ թե դու մազաչափ իսկ կասկած ունես: Եթե քո ցանկացածի արժեքը շատ ավելի մեծ է, քան մեր հնարավորություններն են, դարձյա՛լ ասա ինձ: Կառնեմ, ինչ էլ որ լինի, թեկուզ տունն ու

ավտոմեքենան վաճառելու գնով, թեկուզ իմ տիկնիկները աճուրդի հանելով, պարտք հավաքելով:

- Դու գիտես, որ ինձ ոչինչ էլ հարկավոր չէ,- ասաց Ալիսան:- Բայց ինչո՞ւ տունն ու ավտոմեքենան վաճառել, երբ մենք հեշտությամբ մեծ հարստության տեր կարող ենք դառնալ և դու ստիպված չես լինի մեջք ծռել քո դագգահի վրա, իսկ ես էլ՝ վաճառասեղանի ետևում:

Ես վեր կացա, միացրի լույսը, մի ծխախոտ վառեցի ու նստեցի Ալիսայի կողքին, մահճակալի վրա:

- Թող մի կարգին նայեմ քեզ: Մի՞թե դու իմ Ալիսան ես,- ասացի ես:- Երբ ի վերջո համաձայնվեցիր, չգիտեի՞ր ում հետ ես ամուսնանալու: Մի՞թե ես քեզ հարստություն եմ խոստացել:

- Բայց եթե դրա հնարավորությունը կա...

- Ամեն ինչի հնարավորություն էլ աշխարհում կա,- ասացի ես:- Եվ կան նաև այդ հնարավորությունները օգտագործելու եղանակները: Մեկը գողանում է, մեկը մարդ է սպանում, մեկը շահագործում է իր նմաններին, մեկը թուղթ է խաղում, մեկը խաբում ու խարդախում է, մեկը վաճառում է իր մարմինը, մեկը՝ իր խիղճը, մեկը՝ պատիվը, եթե հարմար գնորդ կա, մեկը սողում է ուրիշների առաջ և այդպես շարունակ: Այդ եղանակներից ո՞րն ես առաջարկում ինձ, Ալիսա:

- Ինչե՛ր ես խոսում, Ալե՛քս: Նրանց առաջարկի մեջ ոչ մի վիրավորական կամ նվաստացուցիչ բան չկա:

- Ինձ համար կա,- ասացի ես,- ես չեմ ուզում հարկադրաբար ծառայել ուրիշներին, և չեմ ուզում, որ ուրիշները հարկադրաբար ինձ ծառայեն: Երկուսն էլ ինձ համար վիրավորական են ու նվաստացուցիչ:

- Ի՞նչ է, դու կարծում ես, թե կարող ես ապրել հասարակությունից դռ՞նք,- հարցրեց նա:

- Ո՛չ, բայց համոզված եմ, որ եթե խելք ունես և աշխատասեր ես, ապա կարող ես ապրել հասարակության մեջ՝ ազնիվ ու արժանապատվությամբ: Ու ես կարծեմ հենց այդպես էլ ապրում եմ: Կամ գոնե փորձում եմ այդպես ապրել: Իսկ եթե դա քեզ չի բավարարում, Ալիսա...

Ալիսան աչքերը սարսափից լայն բացած բարձրացավ տեղից ու վայրկենապես կերպարանափոխվելով, տխուր ժպիտով հարցրեց.

- Դու կարող ես բաժանվե՞լ ինձանից:

- Ես կարող եմ ինքնասպան լինել,- ասացի ես,- ավելին անել չեմ կարող:

Զգացմունքների կծիկ է իմ Ալիսան: Նա իմ գիրկն ընկավ ու լալիս, հեկեկում էր աղեկտուր, ասես ջղաձգության մեջ և կրկնում ու կրկնում էր անընդհատ.

- Ներիր ինձ, ներիր ինձ, ներիր ինձ...

- Հանգստացիր, սիրելիս, հանգստացիր...

- Ես մեղավոր չեմ, ես մեղավոր չեմ... ներիր ինձ, ներիր ինձ, ներիր ինձ...

Երկար ժամանակ և շատ քնքուշ խոսքեր պահանջվեցին, մինչև որ երեխայի նման իմ գրկի մեջ կծկված Ալիսան հանգստացավ: Ես օրոր էի ասում նրան, բայց իմ խոսքերը փափուկ բարձի, լուսնի և տերևների սոսափի մասին չէին:

- Դու ամեն ինչ կունենաս,- ասում էի ես նրան՝ հին արհեստավորների պարզ և իմաստուն փիլիսոփայությամբ:- Բայց այդ ամեն ինչը մեր աշխատանքով կլինի: Ի վերջո ի՞նչ է մարդուն պետք կյանքում: Որ անվիշտ ապրի, քաղցած չլինի, գեղեցիկ ու ճաշակով հագնվի, ես չմնա ընկերական շրջապատից, հաճախի կինո ու թատրոն և ճամփորդի: Այդպես չէ՞: Ես այդ բոլորը քեզ խոստանում եմ: Մենք դրա հնարավորությունը միշտ կունենանք: Եվ քանի որ ուրիշ ոչնչի կարիք չենք զգա, կհամարենք, որ աշխարհի բոլոր բանկերում կուտակված ոսկիներն ու դրամները մերն են: Մերն են, բայց մենք դրանք օգտագործելու կարիքը չունենք: Հա, թող առայժմ մնան: Հանենք, ի՞նչ անենք, չէ՞:

Եվ Ալիսան հանկարծ ծիծաղեց:

- Ալեքս... մի՞թե դու կարող ես մտածել, թե ինձ որևէ բան հարկավոր է աշխարհում, քեզանից ու Լեոնից բացի: Մոռացիր, մոռացիր, մոռացիր ու ներիր ինձ:

Ես մոռացա: Հենց այդպես էլ գրկած մահճակալին դրեցի Ալիսային, ծածկեցի բարակ վերմակով, հետո հանգրեցի լույսը ու նույն վերմակի ծայրը նորից բարձրացնելով, անկողին մտա:



- Այո՛ ...

Ուղեկցողը ներս մտավ, ներողություն խնդրեց ու վերցրեց սուրճի դատարկ բաժակը:

- Ուրիշ ի՞նչ կցանկանայիք, պարոն:

- Ոչինչ,- ասացի ես:- Ե՞րբ կհասնենք մայրաքաղաք:

- Ուղիղ մեկ ժամ հետո:

Զգացվում էր, որ գնացքը մայրաքաղաքին է մոտենում: Ավելի հաճախ էին հանդիպում բնակավայրեր, ավտոմեքենաների երկար հերթեր՝ ուղեփակոցների ետևում և տարբեր գույների արտահագուստներ հագած երեխաներ, որ պայուսակները մեջքներին դասի էին շտապում:

Մյուս տարի իմ Աննան էլ այսպես հագնված դպրոց կգնա: Այսինքն, ինչպե՞ս թե կգնա: Ե՛ս կտանեմ: Ոչ մեկին չեմ թողնի: Պապիկը պետք է թոռնիկին դպրոց տանի առաջին օրը: Ե՞րբ

մեծացավ Աննան: Ինչո՞ւ են այսպես արագ գլորվում տարիները, երբ հազիվ մարդավարի ես ապրում: Ասես թե երեկ էր, որ Արթուրին դպրոց տարա: Իսկ հիմա նրա դատրիկին եմ տանելու:

Երբեմն, երբ շատ բարձր է լինում տրամադրությունս և ուզում եմ խաղալ Ալիսայի հոգու հետ, լրջորեն հարցնում եմ նրան.

- Ալիսա, անցած բան է, խոստովանիր, որ այն հաստիկ պարոն Գաբրիելը ինչ-որ առնչություն ունի Արթուրի ծննդյան հետ:

- Է՛հ,- նեղանում է Ալիսան,- քեզ չեն սագում նման խոսքերը, եթե դրանք ասում ես նույնիսկ կատակով:

- Առանց կատակի,- ասում եմ ես:- Դե, ուրեմն, բացատրիր, թե այդ ինչպե՞ս պատահեց, որ երեք տարի երեխա չէինք ունենում, իսկ այդ «Ռիխտեր»-ի գործակալի հայտնվելուց հետո մեկ էլ հանկարծ...

- Գաղտնիքը քո մեջ փնտրիր,- խայթում էր Ալիսան ու շտապ հեռանում, որպեսզի ես չշարունակեմ:

Կատակում եմ, իհարկե, հաստիկի հերն էլ անիծած, բայց նրա առաջացրած փոթորկից երկու ամիս էլ չէր անցել, երբ մի երեկո...

- Ալե՛քս... - ձայնեց Ալիսան:

- Այո՛, սիրելիս,- արձագանքեցի ես:

- Ալեքս,- ասաց նա,- դու մտադրությունդ չե՞ս փոխել: Իսկապե՞ս ուզում ես, որ մենք փոքրիկ ունենանք:

- Ի՞նչ,- չհասկացա ես, իսկ հետո հասկացա միանգամից՝ նայելով նրա երջանկությունից փայլող դեմքին, ցած գլորեցի աթոռը, վեր- վեր ցատկեցի, պտտվեցի տեղում, գլուխկոնձի տվեցի գորգի վրա, հետո կանգնեցի գլխիվայր՝ ձեռքերիս վրա և ներքևից վերև նայելով գոռացի.

- Ուզո՞ւմ եմ, ուզո՞ւմ եմ, ուզո՞ւմ եմ...

- Խելագար, ինչազար,- ծիծաղեց Ալիսան, ինքն էլ ուրախությունից խենթացած,- քեզ կարգին պահիր, հո չե՞ս ուզում, որ մեր Արթուրը անդամալուծ հայր ունենա:

Առաջին անգամ այդ օրը մեր տանը հնչեց Արթուր անունը, իսկ հետո տունը լցվեց Արթուրի ճիչերով, տակաշորերով, պստիկ գլխարկներով ու պստիկ տաբատներով, փափուջներով ու շիլայի տուփերով, ծծակներով ու չիկչիկան խաղալիքներով: Անհանգստությամբ և ուրախ հոգսերով:

Տունը լցվեց:

Իսկ երբ տարիներ անց Լեոնին գորակոչեցին բանակ, Ալիսան ու ես հաճախ էինք խոսում այն մասին, թե ինչ կլինեք մեր վիճակը, եթե Արթուրը չլիներ: Հաստատ կխելագարվեինք մենակությունից ու Լեոնի կարոտից: Արթուրն ինչ-որ կերպ փոխարինում էր նրան:

Մուտ է: Մուտ է: Մուտ է: Աշխարհում ոչ ոք ոչ ոքի չի փոխարինում: Ո՛չ ոք: Եվ ամենամեծ վշտից անգամ մարդիկ չեն խելագարվում: Մտածում են ինքնասպանության մասին, բայց ինքնասպան չեն լինում: Անիծում են աշխարհն ու կյանքը, բայց դարձյալ ապրում են, քաղց են զգում, ուտում են, անքուն են մնում, քնում են, ցավում է ատամը՝ դիմում են բժշկի ու նույնիսկ որևէ մեկի բարևին պատասխանելով, մոռանում են իրենց վիշտն ու ժպտում են: Հետո հիշում են ու տխրում և նորից մոռանում ու ժպտում են:

Ի՛նչ առեղծվածային արարած է մարդը:

Լեոնը գոհվեց: Բայց մենք չխելագարվեցինք: Ապրում ենք:

Մենք բանակ ճանապարհեցինք պոլիտեխնիկական քոլեջի շրջանավարտ, նոճու նման բարձրահասակ ու առնական, մոր երկնագույն աչքերով ու շրթունքներին նոր-նոր աղվամազ հայտնված մի չքնաղ պատանու: Իսկ հինգ ամիս անց ստացանք նրա անշունչ մարմինը՝ կառավարության հաշվին պատրաստված ցինկապատ դագաղի մեջ:

Ինչո՞ւ, ինչի՞ համար: Ոչ ոք մեր հայրենիքի վրա չէր հարձակվել: Նույնիսկ մեր երկիրը՝ ինքնապաշտպանություն հորինված պատճառաբանությամբ, չէր հարձակվել մեկ ուրիշի վրա:

Ուրեմն հանուն ինչի՞, հանուն ո՞ր հայրենիքի գոհվեց մեր Լեոնը:

Մեր երկրից հագարավոր կիրումետրեր հեռու, Ասիայի խորքերում ինչ-որ տեղ, թե խաղաղօվկիանոսյան ջունգլիապատ կղզիներից մեկում, երկու հարևան ցեղեր կռվում էին իրար դեմ: Ավելի ճիշտ՝ նույնիսկ հարևան չէին, նույն ցեղն էր՝ երկու մասի բաժանված: Եվ Լեոնին ուղարկել էին, որպեսզի իր նման պատանիների հետ միջամտի այդ կռվին՝ որպես Հյուսիս-Ատլանտյան ինչ-որ բանակի զինվոր: Դա՛ ինչ տրամաբանություն է:

Ի՞նչ գործ ունեին մեր տղաներն այնտեղ, ի՞նչ գործ ունեւր այնտեղ Լեոնը:

Լավա՞ծ բան է, որ մեր օրերում մարդ կյանքից գրկվի, չիմանալով թե ում և ինչի համար: Եվ գոհվի ինչի՞ց. թունավոր նետից: Նախամարդու ստեղծած գործիքով մարդ են սպանում: Եվ նոր պատանիներ են գնում գոհվելու, որպեսզի ոչ թե գոնե մի նախամարդուն պաշտպանեն ուրիշ նախամարդուց, այլ որպեսզի նախամարդուց պաշտպանեն նրա հարագատ եղբորը:

Եթե մարդ խելագարվի այս հարցերից, հաստատ, բնական ու հասկանալի կլինի:

Բայց ոչ ոք չի խելագարվում: Ապրում են:

Ու մենք էլ բոլորի հետ: Այդպես ավելի հեշտ է չխելագարվելը:



Ուղեկցողը անցավ միջանցքով, հերթով թխկթխկացնելով դռներին ու բղավելով.

- Տե՛ղ հասանք, մայրաքաղա՛քն է:

Ես վերջին անգամ դուրս նայեցի պատուհանից: Գնացքը կայարանին էր մոտենում: Թաղամասերը, ասես դանդաղեցված կինոկադրերում, հանդարտորեն լողում էին իմ աչքերի առջևով, երբեմն-երբեմն վառ կանաչ պուրակներով իրարից գատված: Այդ գմբուխտ բացվածքներից մեկի միջից հանկարծ տոնական սեղանի տորթի պես հայտնվեց պառլամենտի ճերմակ-դեղնավուն շենքը, որի գմբեթի ծայրին մեր հանրապետության դրոշմ էր փողփողում:

Փոքրիկ ճամպուկը ձեռքիս ես իջա գնացքից ու անշտապ քայլեցի կայարանի աղմկոտ կառամատույցով:

Ո՛չ: Իմ կյանքում երբեք չի եղել և չկա մի այնպիսի բան, որի համար ես ստիպված լինեմ ամաչել աշխարհում որևէ մեկից: Ո՛չ:

Իսկ եթե այդպես է, ճիշտ էր ասում Ալիսան, ես անհանգստանալու համար հիմք չունեմ:

Ու ես հանգիստ բարձրացրի ձեռքս՝ կանգնեցնելով առաջին իսկ պատահած տաքսի ավտոմեքենան:



Դեպի պառլամենտի շենքը տանող մարմարյա անվերջանալի աստիճաններով վեր բարձրանալով ու մի քանի տեղ կանգ առնելով, որպեսզի շունչ քաշեմ, և հետո քայլելով երկար-երկար միջանցքներով ու թեքվելով այլ միջանցքներ, ես մտածեցի, որ այս բոլոր աստիճաններն ու երկար միջանցքները միտումնավոր են կառուցված՝ այցելուի ոգին ընկճելու համար: Որովհետև ինչքան էլ վրդովված լինես ու տրամադրված վճռականորեն, մինչև որ հատիկ-հատիկ բարձրանաս այդ աստիճաններով ու կտրես կիլոմետրաչափ միջանցքները, քո վճռականությունից ու արիությունից հետք էլ չի մնա: Տեղ ես հասնելու շնչասպառ, քեզ տրված հարցերին չես կարողանալու անմիջապես պատասխանել, որովհետև սիրտդ խփելու է արագ ու անկանոն, քրտնելու է ճակատդ ու դու այլևս չես իմանալու ինչ անես անիծյալ թաց թաշկինակդ: Մեփական թերարժեքության համակարգը կաթվածահար է անելու կամքդ, և դու միայն պետական այդ շենքից բավականին հեռու ես գլխի ընկնելու, որ խնդրում ու աղերսում էիր այնտեղ, թեև ներս էիր մտել պահանջելու:

Ես դրանում ավելի համոզվեցի՝ երկար ուղեգորգի վրայով քայլելով դեպի քարտուղարի գրասենյանը:

- Թեև համոզված եմ, որ թյուրիմացություն է,- սկսեցի ես,- սակայն...

- Պարոն Ալեքսանդր,- իմ խոսքը կտրեց քարտուղարը:- Դուք եկել եք ճիշտ ժամանակին: Դեկտոր Մարտինը ձեզ է սպասում:

Նա բացեց կաշեպատ դուռը, ներս մտավ ու, անմիջապես էլ դուրս ելնելով, խոնարհեց մեջքը:

- Խնդրե՛մ: Պայուսակը կարող եք թողնել այստեղ:

Ես անկյունում դրեցի իմ փոքրիկ ճամպուկը ու ներս մտա: Դա մի ընդարձակ առանձնասենյակ էր՝ հատակից մինչև առաստաղը հասնող գրապահարաններով, կաշեպատ փափուկ բազմոցներով ու բազկաթոռներով և մարմարյա ու էբենոսե փոքրիկ կիսանդրիներով՝ անկյուններում, ցածրիկ պատվանդանների վրա: Բարոկկո ոճի հինավուրց ու հսկա մի գրասեղանի ետևում նստած էր դեկտոր Մարտինը, որը, ըստ իմ երևակայության, զառամյալ մի ծերունի պետք է լիներ: Այնինչ քառասուն-հիսուն տարեկան դեռ ամրակազմ մի մարդ էր, ասլետիկ մարմնին անհարիր նուրբ ու գունատ դեմքով: Նրա աջ ու ձախ կողմերում, բազկաթոռների մեջ ընկղմված էին ծերունիներ, որ ասես ուղիղ ակադեմիայի նստաշրջանից էին եկել այդ առանձնասենյակը: Դեկտոր Մարտինի գրասեղանին ուղղահայաց կանաչ մահուղով ծածկված երկար մի սեղան կար, որի վրա կաշեկազմ ինչ-որ հատորներ էին կիտված: Սեղանի մոտ նստած էր միջին տարիքի, սակայն, պատանու անեղծ դիմագծերով մի մարդ և խորասուզված գրում էր:

- Բարև ձեզ,- ողջունեցի ես նրանց:

Մենյակում գտնվողները բարձրացան տեղերից և պատասխանեցին իմ ողջույնին: Դեկտոր Մարտինը գլխի թեթևակի շարժումով, մեղմ ու փափուկ ձայնով ներկայացրեց բոլորին.

- Պարոն Ալեքսանդր: Պրոֆեսոր Բլո՛կ: Պրոֆեսոր Կա՛րլ: Մագիստրոս Սիմեոն: Դեկտոր Մարտի՛ն: Նստեցե՛ք, պարոնայք,- առաջարկեց նա:

Եվ երբ իրենց տեղերում նստեցին բոլորը, իսկ ես՝ երկար սեղանի ծայրի մոտ դրված աթոռին, դեկտոր Մարտինը կրկին բարձրացավ տեղից:

- Պարոնայք, սա հանդիսավոր օր է մեր կյանքում: Մեպտեմբերի տասնչորսը ոսկե տառերով կգրվի մեր գործունեության մատյանում: Թույլ տվեք, ձեր անունից, սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնական հանձնաժողովի անունից և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորել մեր հանրապետության քաղաքացի պարոն Ալեքսանդրին՝ բարձր պարգևի, սոցիոլոգիական հետազոտությունների հանձնաժողովի հիմնադրած «Հանրապետության օրինակելի քաղաքացի» շքանշանով պարգևատրելու առթիվ:

Ես սկամա ոտքի կանգնեցի: Դեկտոր Մարտինը ծափահարեց: Ծափահարեցին նաև մյուսները:

- Ուրախ եմ հայտնելու ձեզ, պարոն Ալեքսանդր, որ դուք առաջինն եք հանրապետության քաղաքացիներից, որն արժանանում է այդ բարձր պատվին: Վաղն նեթ բոլոր լրագրերը կիրապարակեն այդ լուրը և ձեր կենսագրությունը՝ մանրամասնորեն: Եվ ժողովուրդը

կհասկանա, թե ինչպես պետք է ապրել՝ «Հանրապետության օրինակելի քաղաքացի» շքանշանի ասպետ դառնալու համար: Եվ կսովորի անձնական երջանկության ու բարօրության հասնել ազնիվ, տքնաջան աշխատանքով, օրինակելի վարքով: Կսովորի ազատ ու անկախ ապրել: Դուք նրանց համար անբասիր կյանքի օրինակ կծառայեք, պարոն Ալեքսանդր: Մեր և ձեր համատեղ աշխատանքի արդյունքը կհանդիսանա հենց այն առողջ ու օգտավետ հունդը, որը հայրենի հողում ծիլեր կտա, և այդ ծիլերը հետզհետե աճելով ու բազմանալով, դրախտ կդարձնեն մեր երկիրը: Տարեց-տարի ավելի ու ավելի կմեծանա ձեր նման մարդկանց թիվը՝ ի փառս և ի բարօրություն մեր մեծ հայրենիքի:

Ուրեմն, թո՛ւյլ տվեք կրկին ու կրկին շնորհավորել ձեզ «Հանրապետության օրինակելի քաղաքացի» շքանշանի արժանանալու առթիվ և սրտագին մաղթանքներով ձեզ հանձնել կառավարության բարձր պարգևը:

Ես նոր միայն նկատեցի, որ նա խոսելիս աջ ձեռքը դրել էր թավշապատ ինչ-որ տուփի վրա: Խոսքն ավարտելուց հետո, նա բարձրացրեց տուփը, բացեց՝ ասես հավաստիանալու համար, թե շքանշանն իրո՞ք այնտեղ է և ոտքի կանգնած ներկաների անհամերաշխ ծափերի ներքո մոտեցավ ինձ:

- Շնորհավորում եմ,- ասաց նա՝ ձախ ձեռքով ինձ մեկնելով տուփը, իսկ աջով ամուր սեղմելով ձեռքս:

- Շնորհակալություն,- մրմնջացի ես՝ ակամա բացելով տուփը ու նայելով փայլփլուն շքանշանին:

Ներկաները հերթով մոտեցան, շնորհավորական ինչ-որ խոսքեր ասացին և իրենց հերթին ամուր սեղմեցին իմ ձեռքը:

- Ըստ որում, պատիվ ունեմ միաժամանակ հայտնելու ձեզ,- ասաց դոկտոր Մարտինը,- որ իբրև «Հանրապետության օրինակելի քաղաքացի» շքանշանի առաջին ասպետ, դուք ինքնաբերաբար ընտրվել եք սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնական հանձնաժողովի անդամ:

Ես չէի կարողանում կենտրոնանալ, չէի հասցնում ըմբռնել այն մտքերը, որ հնչում էին իմ ականջին, որովհետև բոլորովին պատրաստ չէի ընդունելու դրանք: Ես դրանց համար չէի այստեղ եկել, ես եկել էի թյուրիմացությունը պարզելու, ասելու, որ հանգիստ թողնեն ինձ, ասելու, որ երբեք ոչ մի գործ չեմ ունեցել որևէ հանձնաժողովի հետ և այսուհետև ևս չեմ ուզում ունենալ: Այդքանը: Որ ես կյանքում ամեն բանից առավել անկախությունն եմ գնահատում:

Այնինչ պարզվում է, որ մեր երկրում էլ են գնահատում անկախ ու ազնիվ մարդկանց, հարգում աշխատանքը, խաղաղ վարքը, ընտանեկան համերաշխությունն ու փոխըմբռումը: Նույնիսկ շքանշան է ստեղծվել. «Հանրապետության օրինակելի քաղաքացի»:

Իսկ ես իրար էի խառնվել ու իրար խառնել մեր ամբողջ ընտանիքը: Ասես բռնվել էի հանցանքում ու ինձ կառափնարան էին տանում: Ամոթ ու խայտառակություն:

Խեղճ Ալիսան լաց էր լինում: Արթուրը չէր ուզում մենակ թողնել ինձ: Իմ բարեկամ Ադամը պատրաստվում էր մայրաքաղաք հասնել իմ ետևից: Իսկ ես ցավեցնելով փորփրում էի իմ ողջ կյանքը: Երկյուղից չկարողացա քնել ամբողջ գիշեր: Այո՛, այո՛, հիմա ր ծերուկ, խոստովանիր, որ դու երկյուղից չէիր քնում:

Ա՛յ թե ծիծաղելու են մերոնք ինձ վրա: Դե ինչ, իրավունք ունեն:

Լրիվ իրավունք ունեն:

Ես հեռուստատեսությամբ շատ էի տեսել նման արարողություններ և տեսել էի, որ նա, ում պարզևատրում են, վերջում հանդես է գալիս պատասխան խոսքով: Ուրեմն հավանաբար ես ևս պարտավոր էի խոսել, մանավանդ, որ ներկաները սպասումով ինձ էին նայում: Բայց ես չգիտեի ինչ ասել: Այդ ամենն ինձ թվում էր անիրական, հորինված կամ երագում կատարվող մի դեպք, որի հետ ես ոչ մի առնչություն չունեի:

- Ներեցեք ինձ, խնդրում եմ,- ասացի ես,- բայց, այնուամենայնիվ, կարծում եմ, որ այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա: Ես մի հասարակ մարդ եմ և երբեք չեմ արել այնպիսի մի բան, որ ուշագրավ լինի: Երբեք չեմ կատարել որևէ հերոսական արարք և նույնիսկ ջրում որևէ խեղդվողի չեմ փրկել: Այսինքն՝ առիթ չի եղել: Ես որք մանկություն եմ ունեցել, իսկ հետո ճահիճներ եմ չորացրել, որպես շարքային բուլդոզերավար, իսկ հետագայում...

Դոկտոր Մարտինը ժպտալով ընդհատեց ինձ.

- Դուք ուզում եք մեզ ձեր կենսագրությունը պատմել,- ասաց նա:- Այստեղ ներկա գտնվողները ծանոթ են ձեր կենսագրությանը ամենայն մանրամասնությամբ և կարող են ձեր կյանքից այնպիսի փաստեր բերել, որ նույնիսկ դուք վաղուց մոռացել եք: Տեսնո՞ւմ եք այն հատորները,- ձերմակ մատը դեպի սեղանին կիտված կաշեպատ հաստ գրքերը մեկնելով, ավելացրեց նա:- Այդ գրքերի մեջ ձեր կյանքն է: Տասներկու հատոր:

- Ինչպե՞ս թե իմ կյանքը... - ապշած շնչացի ես:

- Ձեր կյանքը,- ասաց դոկտոր Մարտինը,- ձեր ծնունդից սկսած մինչև երեկ, երբ գիշերային գնացք նստեցիք՝ մեր հրավերով մայրաքաղաք գալու համար:

Զգացի, որ կոկորդս չորանում է: Ծաղրո՞ւմ են ինձ, ինչ է: Մա՞ ինչ հիմար խաղ է:

- Բայց դուք ինձ չեք ճանաչում,- ասացի ես,- ես երբեք ծանոթ չեմ եղել ձեզ հետ և կարող եմ երդվել, որ երբեք չեմ տեսել ձեզ: Դուք ինչպե՞ս կարող էիք իմանալ իմ կենսագրությունը:

Ես իմ դիմացը դրված սափորից ջուր լցրեցի ու խմեցի ազահաբար:

Դոկտոր Մարտինը ներկաներին նայեց:

- Պարոնա՛յք,- ասաց նա,- իմ կարծիքով մենք պարտավոր ենք պարոն Ալեքսանդրի առջև բացել մեր խաղաթղթերը: Վիճակն այդ է թելադրում:

- Այո՛, - բազմոցի մեջ շարժվեց պրոֆեսոր Բլուկը: - Այլ բան է, եթե նա լուռումունջ վերցնեք շքանշանը:

- Ես ևս համաձայն եմ ձեզ հետ, դոկտոր, - միջամտեց պրոֆեսոր Կարլը: - Մանավանդ որ պարոն Ալեքսանդրը վաղ թե ուշ ծանոթանալու է մեր այսպես ասած խոհանոցին՝ հանձնաժողովի անդամի իրավունքով:

Դոկտոր Մարտինը շրջվեց դեպի երկար սեղանի մոտ նստած մարդը:

- Մագիստրոս Սիմեոն, խնդրեմ:

Ներքինու դեմքով մարդը ոտքի կանգնեց:

- Մեր երկրի օրինակելի քաղաքացուն որոշելու գաղափարը պատկանում է մեր հարգարժան դոկտորի հորը՝ մեծապատիվ և անմոռաց դոկտոր Մարտինին: Այդ նա է սրանից գրեթե վաթսուն տարի առաջ ողջ ունեցվածքն ու կյանքը ի սպաս դրել իր փայլուն գաղափարի իրագործմանը, այդ հարցում շահագրգռել գործարար շատ մարդկանց, որոնք կամ որոնց ժառանգները այսօր մեր վարչության կորիզն են կազմում և հասել այն բանին, որ կառավարությունը իր վրա է վերցրել ընդհանուր ծախսերի որոշ մասը: Այդ նա է միջազգային խոշորագույն սիմպոզիումներում հանդես եկել մի շարք ծրագրային դասախոսություններով և հասել այն բանին, որ ստեղծվի սոցիոլոգիական հետազոտությունների միջազգային հանձնաժողով և աշխարհի յուրաքանչյուր երկրում կազմակերպվեն համապատասխան կենտրոնական հանձնաժողովներ: Ահա թե որն է համայն մարդկության առջև դոկտոր Մարտինի խոշորագույն երախտիքը:

Ներկաները ակնածանքով խոնարհեցին գլուխները:

- Կուտակելով հսկայական միջոցներ և ստեղծելով համապատասխան, բացառիկ կարգապահության ենթարկված կուռ ապարատ, հավաքագրելով անհրաժեշտ թվով գործակալներ ու տեսուչներ՝ դոկտոր Մարտինը անցել է իր վեհ գաղափարի իրականացմանը, որը կայանում է հետևյալում:

Ամեն տարի վարչությունը մանրամասն հետազոտություններից և ուսումնասիրություններից հետո, երկրի պատանիների թվից ընտրում է տասը հոգու և նրանց հետագա կյանքն ու գործունեությունը առնում աչալուրջ, ակտիվ հսկողության տակ: Ըստ որում, իբրև կանոն, ընտրվում են որբ երեխաներ, որպեսզի ծնողները հնարավորություն չունենան ըստ իրենց նախասիրությունների ու քմահաճույքների, տնօրինել նրանց ապագան:

Ես հանկարծ գլխապտույտ ունեցա, թուլացան ոտքերս և հազիվ կարողացա իջնել աթոռին՝ ձեռքիս մեջ շարունակ սեղմած շքանշանի տուփը:

- Եվ այդ տասը պատանիներից մեկը ե՞ս եմ եղել, - մրմնջացի ես:

- Այո՛, - ասաց դոկտոր Մարտինը: - Այդ տասը պատանիներից մեկը դուք եք եղել, պարոն Ալեքսանդր, և կարող եք հպարտանալ, նրանցից միակն եք, որ լիովին արդարացրել եք կենտրոնական հանձնաժողովի հույսերը:

Շարունակե՛ք, Մագիստրոս...

- Հսկողությունը համարվում է ակտիվ, որովհետև մեր գործակալները, վարչության հրահանգները իրականացնելով, տարիներ շարունակ ոչ միայն հետևել են ընտրյալ կլիենտների առօրյա գործողություններին, այլև՝ անհրաժեշտ դեպքում, իրենք խստորեն մնալով ստվերում, միջամտել ու օգնել են նրանց, ուղղություն են ցույց տվել, մշակված ծրագրերին համապատասխան տարբեր բարդության խնդիրներ են առաջադրել ու հետևել, թե ինչպես են կատարվում այդ խնդիրները, մանրամասնորեն քննության են առել կամա թե ակամա ստեղծված իրավիճակներում կլիենտների ընդունած վճիռները և ամեն շաբաթ արդյունքներն ամփոփելով, զեկուցագիր են հղել կենտրոնական հանձնաժողովին:

Այդ զեկուցագրերը մանրամասնորեն քննության են առնվել և ենթարկվել վերլուծության և դրանց հիման վրա մշակվել են գործակալների հետագա անելիքները:

- Ուրեմն ես և՛ ս ամենօրյա հսկողության տակ եմ եղել,- ուղղակի ականջներիս չհավատալով, հարցրեցի ես:

- Այո՛, պարո՛ն Ալեքսանդր,- ասաց դոկտոր Մարտինը:

- Եվ ձեր այդ գործակալները տեսել են, թե ես ի՞նչ եմ անում ամեն օր, ինչպես եմ լվացվում, ինչպես եմ ուտում, ինչպես եմ խմում, ինչպես եմ սովորում, ինչպես եմ ծիծաղում ու լաց լինում... Ամեն ի՞նչը: Եվ այդպես շարունակ իմ ամբողջ կյանքո՞ւմ:

- Այո՛,- ասաց դոկտոր Մարտինը:

- Իսկ ես նրանց չե՞մ տեսել:

- Ոմանց տեսել եք, ոմանց չեք տեսել:

Հանկարծ ինձ թվաց, թե ես լրիվ մերկ եմ, և այդ մարդիկ տեսնում են իմ մերկությունը: Ես սեղանին դրեցի տուփը և երկու ձեռքերս էլ ոտքերիս արանքը խրեցի, ինչպես սովորաբար անում են մերկ մարդիկ, երբ կանգնած են լինում բժշկական հանձնաժողովի առաջ:

Պրոֆեսոր Կարլը ծիծաղեց:

Եվ նորից ինձ թվաց, թե այս ամենը կատակ է, ինչ-որ մեկի հորինած չար ու հիմար կատակը: Որ հիմա ուր որ է բոլորը կծիծաղեն ու կասեն թե... Բայց ի՞նչ կարող են ասել... ի՞նչ... Այդպիսի կատակ չի կարող լինել... Իսկ եթե այդպես է, ուրեմն, մի թե հնարավոր է, որ ճիշտ լինեն նրանց ասածները:

- Եվ ուրեմն երբվանի՞ց եք հետևել ինձ,- հարցրեցի ես խորապես համոզված, որ իմ հարցերով կմերկացնեմ նրանց:

- Մանկատնում ձեր հայտնվելու տասներորդ օրվանից,- ասաց դոկտոր Մարտինը:- Այդպե՛ս է, մագիստրոս:

- Այո՛,- հաստատեց ներքինու դեմքով տարեց մարդը՝ հատորներից մեկը բացելով:

- Բայց երբ ինձ մանկատուն են տարել, ձեզանից և ոչ մեկը ծնված չի եղել հավանաբար:

- Իրավացի չէք, պարո՛ւն Ալեքսանդր,- ասաց պրոֆեսոր Բլոկը:- Ես այն ժամանակ արդեն աշխատում էի վարչությունում՝ արժանահիշատակ դոկտոր Մարտինի ղեկավարությամբ: Ես գործակալ էի: Ինչպես նաև պրոֆեսոր Կարլը:

- Մանկատա՞նը,- հարցրեցի ես՝ աշխատելով նրա դեմքի կնճիռների տակ գտնել ու մտաբերել պատանի Բլոկին:

- Ո՛չ, ոչ,- ասաց պրոֆեսորը ծիծաղելով, որից նրա կնճիռները ավելի խտացան:- Մենք մանկատանը գործակալ չունեինք: Պարոն Ռոբերտին չէ՞ք հիշում:

- Դիրեկտորի՞ն,- ապշեցի ես:

- Այո: Նա մեր հանձնարարություններն էր կատարում:

Ես նորից հիշեցի, թե ինչպես էր պարոն Ռոբերտն ինձ համոզում գյուղատնտեսական դպրոց ընդունվել: Ուրեմն՝ սրանց ցանկությամբ է եղել: Ինչո՞ւ:

- Այո՛, պարոն,- իմ հարցին պատասխանեց դոկտոր Մարտինը:- Իմ հայրն է դիրեկտորին առաջարկել, որպեսզի ձեզ շտապ հեռացնեն մանկատանից: Նա ձեզ համար ուրիշ ծրագրեր էր մտածել և չէր կարող թույլ տալ, որ իր որդուն կորցրած մի աղքատ լվացարարուհի որդեգրեր ձեզ:

Դե, իհարկե, այն տխուր այքերով կնոջ ձեռքերից լվացքի փոշու հոտ էր գալիս: Ես զգացի, թե ինչպես է դառնությունը բարձրանում դեպի կոկորդս:

- Իսկ եթե դուք էիք թույլ տալիս կամ արգելում ինչ ուզում էիք, ինչպե՞ս էիք թույլ տալիս, որ գյուղատնտեսական դպրոցի տեսուչ պարոն Հանսոնը հետապնդի ու հալածի ինձ տարիներ շարունակ, թունավորելով իմ կյանքը: Այդ բոլորը նա ձե՞ր առաջարկությամբ էր անում:

Դոկտոր Մարտինը մեղմորեն ժպտաց.

- Ո՛չ,- ասաց նա:- Նա մեր աշխատողը չէր: Բայց քանի որ վճռել ենք անկեղծ լինել մինչև վերջ, պետք է ասեմ, որ սկզբում չէինք խանգարում նրան, որովհետև ըստ մեր ծրագրի ուսումնասիրում էինք, թե ինչպես կպահեք ձեզ այդ հալածանքի պայմաններում: Մեզ պետք էր, որ դուք ճաշակեք այդ դառնությունը, կոփվեք, սովորեք դիմանալ ճակատագրի հարվածներին, հակադարձ միջոցներ որոնեք: Բայց հենց որ նկատեցինք, որ նա անցնում է չափը, միջամտեցինք: Այդ հարցում դուք մեզ մեղադրել չէք կարող: Չէ՞ որ հանուն ձեզ պահանջեցինք նրան անհապաղ տեղափոխել մեկ այլ քաղաք: Հիշեցի՞ ք:

Ինչպե՞ս կարող էի չհիշել: Ես ամբողջ գիշեր նրանց հետ էի: Եվ հանկարծ զգացի, թե ինչպես է սեղմվում կոկորդս: Եթե այդպես է... Եթե իրոք այդպես է եղել, ուրեմն չեղևնը...

- Փոքրիկ, չքնաղ չեղևնը՞,- պատասխանեց պրոֆեսոր Բլոկը:- Նա մեր ամենաշնորհալի գործակալներից մեկն էր: Եվ հիանալի կազմակերպիչ: Նա կարողացել էր իր հերթին

գործակալների մի այնպիսի ցանց ստեղծել դպրոցում, որ ձեր յուրաքանչյուր քայլը անմիջապես հայտնի էր դառնում նրան և մեզ: Ըստ որում նրա առաջին օգնականը ձեր ամենամտերիմ ընկեր Առնոլդն էր: Նա հետագայում հերոսաբար զոհվեց Վիետնամում:

- Եվ այդ բոլորը ի՞նչ էին հետևում:

- Խոստովանեք, որ դա պատանու համար ամենավտանգավոր տարիքն էր: Երբ երեխաները դառնում են տասնչորս-տասնյոթ տարեկան, նրանց նկատմամբ շատ ուշադիր պետք է լինել: Դուք հայր եք և հավանաբար ինքներդ էլ համոզվել եք դրանում,- գլուխը վեր բարձրացնելով, հարկ համարեց միջամտել պրոֆեսոր Կարլը:

- Բայց չեղե՞նք... չեղե՞նք... Ուրեմն նա ձե՞ր ցուցումով էր սիրահարվել ինձ, ձե՞ր կարգադրությամբ էր գիշերներն անցկացնում ինձ հետ, լքված ագարակում, խոտի դեզի մեջ:

- Մենք ուրիշ էլք չունեինք: Չէինք կարող թույլ տալ, որ առանց ուսումն ավարտելու հեռանաք դպրոցից Դրա համար էլ չեղե՞նք ձեր դպրոց ուղարկեցինք՝ իբրև քարտուղարուհի:

Ես ամեն ինչ անում էի, որպեսզի չպայթի գլուխս:

- Բայց նա սիրում էր ինձ: Միրո՛ւմ էր: Յուրաքանչյուր տղամարդ զգում է դա: Ուրեմն դու՞ք եք եղել պատճառը, որ նա չեկավ ինձ մոտ, չամուսնացավ ինձ հետ:

- Նա ձեզ հետ չէր կարող ամուսնանալ,- ասաց Մագիստրոս Միմենը:

- Ինչո՞ւ:

- Որովհետև արդեն ամուսնացած էր:

- Ամուսնացա՞ծ էր: Ամուսնացա՞ծ էր: Ամուսնացա՞ծ էր: Եվ դուք նրան ստիպում էիք...

- Մենք մեր գործակալներին բացարձակ ինքնուրույնություն ենք տալիս միջոցների ընտրության հարցում: Մեզ հետաքրքրում է միայն այն, որ անվերապահորեն կատարվի առաջադրանքը: Այդքանը,- ասաց դոկտոր Մարտինը:

- Ձեզ մոտ գլխացավի դեղ կգտնվի՞,- հարցրեցի ես, որովհետև այլևս չէի դիմանում:

Ներքինու դեմքով մարդը ինձ ինչ-որ հաբ բերեց հարևան սենյակից, որը ես կույ տվեցի անմիջապես, իսկ հետո դանդաղորեն ջուր էի խմում: Դանդաղորեն, որովհետև դողում էին ձեռքերս:

- Կներեք մեզ,- ասաց դոկտոր Մարտինը,- ես չէի կարծում, թե գրեթե հիսուն տարի առաջ կատարված դեպքերը կարող են այդպես հուզել ձեզ:

Եթե իմ ձեռքին ասորճանակ լիներ, ես առանց մի վայրկյան իսկ տատանվելու, կկրակեի նրա վրա: Եվ մյուսների վրա: Եվ բոլորի վրա, ովքեր դրանից հետո կհանդիպեին ինձ: Բայց իմ ձեռքին ասորճանակ չկար: Եվ լավ էր, որ չկար: Ես աշխատեցի հավաքել ինձ: «Հանգստացի՛ր,-

ասում էի ինքս ինձ,- հանգստացի՛ր: Նրանք կարող են զգուշանալ և չբացվել: Այնինչ, եթե այստեղ ես հասել, պետք է իմանաս ամեն ինչ: Հանգստացիր»:

- Գիտե՞ք,- ասացի ես գրեթե խաղաղ ձայնով:- Ուղղակի այս ամենը չափազանց անսպասելի էր ինձ համար:

- Դե իհարկե, իհարկե,- համաձայնեց պրոֆեսոր Բլոկը:

- Ես ձեզ հասկանում եմ,- իբրև ինձ համար մեծ պատիվ, ավելացրեց պրոֆեսոր Կարլը:

Մյուսները բարյացակամորեն գլխով արեցին:

- Ըստ որում՝ մենք միշտ հնարավորություն ենք ունեցել հիանալու ձեր զսպվածությամբ և հաստատակամությամբ,- ասես հոգուս խորքը թափանցելով, ասաց դոկտոր Մարտինը:- Սակայն, իհարկե, ամենից առավել մեզ ուրախացնում և զարմացնում էր փառասիրության ասեմ, թե փառաստենչության իսպառ բացակայությունը ձեր բնավորության մեջ:

- Այո՛,- հաստատեց պրոֆեսոր Բլոկը:

Այդ հարցում նրանք, իհարկե, ճիշտ են: Ես երբեք փառասեր չեմ եղել:

- Դեռ այն ժամանակ, հիդրոմելիորացիայի ջոկատում, մենք մեր գործակալների միջոցով ձեզ առաջարկեցինք բրիգադիր դառնալ: Դուք հրաժարվեցիք: Առաջարկեցինք ղեկավարել մեքենայական պարկը, հրաժարվեցինք: Առաջարկեցինք ջոկատի պետ դառնալ: Իսկ դուք ուրախանալու փոխարեն, ինչպես կվարվեր յուրաքանչյուրը, ընդհանրապես լքեցիք աշխատանքը:

- Ուրեմն այդ բոլորը դո՞ւք էիք կարգադրում:

- Իմ հայրը: Կամ ես: Կամ վարչությունը: Դրանք միևնույնն են:

- Իսկ ի՞նչ կպատահեր, եթե ես համաձայնեի:

- Յուրաքանչյուր դեպքի համար առանձին ծրագիր էր մշակված :

- Իսկ դուք ի՞նչ նպատակ էիք հետապնդում: Ո՞րն էր ձեզ համար ցանկալի, իմ հրաժարվե՞լը, թե համաձայնելը:

- Հրաժարվելը, -ասաց դոկտոր Մարտինը:- Մեզ պետք են այնպիսի մարդիկ, որոնք առաքինի են ու աշխատասեր և ոչնչից դժգոհ չեն, փառքի կամ կարիերայի չեն ձգտում, չեն նախանձում իրենցից ավելի բարեկեցիկ ապրողներին, չեն սիրում խռովարարությամբ զբաղվել և նպատակ չունեն փոփոխելու, քանդելու այն ամենը՝ ինչ կա, ինչ ստեղծվել է: Մեր ընդհանուր նպատակն է հայրենիքի համար հենց այդպիսի խաղաղ քաղաքացիներ, ձեզ նման քաղաքացիներ դաստիարակելը: Միայն այդպիսի քաղաքացիներ ունենալով կարող է ծաղկել ու բարգավաճել յուրաքանչյուր պետություն: Երկրին հանգիստ ու լավատես մարդիկ են պետք, պարոն Ալեքսանդր: Դուք մեզ հետ համաձայն չե՞ք:

- Այո, իհարկե,- գլխով արեցի ես,- մեր երկրին իրոք այդպիսի մարդիկ են պետք:

- Ո՛չ միայն մեր երկրին: Բոլո՛ր երկրներին,- ուղղեց դոկտոր Մարտինը:

- Կարելի՞ է հարց տալ,- ասացի ես՝ սարսափելով ներսս սողոսկած մի կասկածից և աշխատելով վայրկյան առաջ փարատել այդ կասկածը:

- Խնդրե՛մ:

- Փորձելով քննության ենթարկել իմ փառասիրություն ունենալը կամ չունենալը, դուք դրանով չե՞ որ վտանգի տակ եք դրել կյանքի ճանապարհին ինձ հանդիպած մարդկանց կարիերան: Ես կոնկրետ նկատի ունեմ մեր հիդրոմելիորացիայի ջոկատի վերջին պետին: Նա ազնիվ ու բարեխիղճ աշխատող էր և իմ բարեկամը, իսկ դուք ուրեմն ուզում էիք հենց այնպես հեռացնել նրան, որպեսզի ի՞նձ նշանակեք ջոկատի պետ: Մի՞թե դա, մեղմ ասած, անգթություն չէր:

- Ձեր խոսքը վերաբերում է դոկտոր Ադամի՞ն:

- Այո՛:

Մագիստրոս Սիմեոնը մի հայացք նետեց դոկտոր Մարտինին ու երևի համաձայնություն ստանալով, ինձ դարձրեց ներքինու անկնճիռ իր դեմքը:

- Դոկտոր Ադամը մեր գործակալն էր, պարո՛ն Ալեքսանդր:

- Նա է՞լ,- բացականչեցի ես անսքող ցավով ու հիասթափությամբ:

- Այո՛,- ասաց դոկտոր Մարտինը:- Եվ պետք է նշեմ, որ տաղանդավոր գործակալ էր: Հաշվի առնելով նրա անուրանալի ծառայությունները, մի քանի տարի անց մենք Ադամին նշանակեցինք տեսուչ: Իսկ հիմա նա էլ ձեզ նման մեր հանձնաժողովի հարգարժան անդամներից մեկն է:

Ադամը: Իմ ընկերը: Բարեկամը: Իմ փրկարարը: Խելագարվե՛լ կարելի է:

- Ուրեմն նա ձե՞ր ցուցումով հանեց ինձ գեստապոյի բանտից:

- Իհարկե,- ժպտաց պրոֆեսոր Կարլը,- ըստ որում՝ խոստովանեք, որ դա հիանալի կազմակերպված օպերացիա էր: Գուցե ձեզ հետաքրքիր լինի կարդալ արձանագրությունների պատճեններն ու հաշվետվությունները: Դրանք պատիվ են բերում ձեզ և ձեր արիության ու տոկունության սքանչելի վկայություններն են:

Մագիստրոս Սիմեոնը մոտ բերեց հատորներից մեկը, որի վրա սև գույնով խոշոր «5» թիվն էր նկարված:

Ես տարուբերեցի գլուխս: Ես չէի ուզում տեսնել իմ արիության ու տոկունության սքանչելի վկայությունները: Ես ուժ չունեի նայելու այն հարցերին, որ տալիս էին իրար հերթափոխող, առույգ, հենց նոր սափրված, ֆրանսիական օդեկոլոնի հոտ արձակող դեմքերով

գեստապոյական քննիչները: Ականջներիս մեջ նրանց սուր բղավոցներն էին հնչում և ամեն վայրկյան թվում էր, թե դույլերով սառը ջուր են լցնում իմ այրվող, բթացած, ցավատանջ գլխին:

Բայց այդ արձանագրություններն ի՞նչ գործ ունեն այստեղ: Եվ ի՞նչ կապ ունեն նրանց հետ գործակալ Ադամի հաշվետվությունները: Չէ՞ որ նա ինձ վերջին օրը տեսավ: Դրանից առաջ ինձ երեք օր անքուն հարցաքննում էին: Ես ընկնում էի ցած, իսկ նրանք ջուր էին լցնում գլխիս, քարշ տալով բարձրացնում էին գետնից ու հարցաքննում էին: Երեք օր ու գիշեր: Երեք հավերժական, անվերջանալի օր ու գիշեր: Ուրեմն՝ Ադամից բացի ուրիշ մարդ էլ է եղել: Մեկը, որ տեղ է հասցրել այն արձանագրությունների պատճենները:

- Մայրը նույնպե՞ս ձեր գործակալն էր,- հարցրեցի ես, զարմանալով, որ ընդհանրապես կարող եմ խոսել:

- Ո՛չ, ոչ,- ժպտաց դոկտոր Մարտինը,- Ձենքի այդ պատմության հետ մենք կապ չունենք:

Ես թերահավատորեն նայեցի նրան:

- Ձեզ շփոթեցնում է արձանագրությունների առկայությունը,- ասաց դոկտոր Մարտինը,- Հիմա կբացատրեմ: Մենք գեստապոյում ունեինք մեր գործակալը, բայց դա մայրը չէր:

- Եվ ձեր այդ գործակալը հանգիստ դիտում էր, թե ինչպե՞ս են տանջում, ստորացնում ինձ:

- Նա փոքր մարդ էր և ինֆորմացիա հավաքելուց բացի, ուրիշ ոչինչ անել չէր կարող:

- Իսկ դո՞ւք: Միայն հաշվետվություններն էիք կարդում և հիանո՞ւմ իմ արիությամբ: Եթե ձեր գործակալներն օր ու գիշեր հետևում էին ինձ, գոնե նրանք հո գիտեին, որ ես անմեղ եմ: Եվ դուք էլ գիտեիք:

- Գիտեինք, այդ պատճառով էլ Ադամին ուղարկեցինք գեստապո:

- Բայց իմ փրկվելը սոսկ պատահականություն էր,- թրջված թաշկինակով հագարերորդ անգամ սրբելով ճակատիս քրտինքը, ասացի ես:- Եթե Ադամը թեկուզ մեկ վայրկյան էլ ուշանար, ինձ կգնդակահարեին: Մայրն արդեն բարձրացրել էր ասորճանակը: Թե՞ դուք այդ տարբերակն էլ էիք մշակել:

- Ո՛չ,- ասաց դոկտոր Մարտինը,- մենք այդ տարբերակը մշակելու հարկ չունեինք, որովհետև մեր մտքով էլ չէր անցնի, թե դուք կթքեք մայրի դեմքին: Ի դեպ, մենք ձեր այդ վարքագիծը մեր մատյանում այն ժամանակ գնահատեցինք «երեք»: Դա ձեր հազվագյուտ սխալներից մեկն էր, և չէր սագում ձեզ նման խոհեմ ու ողջամիտ անձնավորությանը:

- Փա՛ռք արարչին,- ասացի ես,- ուրեմն ինձ իրոք աստված է փրկել:

Դատարկ ու ճնշող լռություն տիրեց: Ու ես ինձ միանգամից թուլացած, ծեր ու անօգնական զգացի: Կոպերս ծանրացան, կախվեցին, ինչպես այն ժամանակ ու նորից ինձ թվաց, թե հիմա ուր որ է ցած կգլորվեմ: Ես ճիգով բարձրացրեցի գլուխս ու նայեցի նրանց: Դոկտոր Մարտինը

շարունակ ոտքի վրա, սկեռուն հայացքով ինձ էր նայում: Մագիստրոս Միմեոնը թերթում էր իմ կենսագրության հինգերորդ հատորը: Պրոֆեսոր Կարլը ծանր շնչում էր: Պրոֆեսոր Բլոկը ասես ինձ չտեսնելու համար փակել էր աչքերը...

Նրանք վիրավորված էին ինձնից, որովհետև Ադամի միջոցով ինձ փրկելու առթիվ ուրախանալու և երախտագիտության խոսքեր ասելու փոխարեն, ես համարձակվում էի կասկածել նրանց ու իմ անվրդով բնավորությանն անվայել հարցեր տալ:

- Իսկ մի թե միայն ձեր վիճակն էր ծանր, պարոն Ալեքսանդր,- առանց աչքերը բանալու, խոսեց պրոֆեսոր Բլոկը:- Ի՞նչ էք կարծում, դոկտոր Ադամի համար հե՞ շտ էր երկու ամիս շարունակ մահապարտների խցում մնալը:

- Բայց չէ՞ որ իմ այդ «բարեկամը» ձեր պատճառով էր հայտնվել մահապարտների խցում,- հոգնած ասացի ես:- Քանի որ ձեր կամքն էր կատարում՝ աշխատելով իբրև բուրգումիստր:

- Այո՛,- գլուխը արժանապատվությամբ բարձրացրեց պրոֆեսոր Բլոկը:- Մենք չենք ասում, թե մեր աշխատողների ճանապարհը միայն վարդերով է եղել ծածկված: Մեզ համար էլ շատ փորձություններ են եղել և երանի մեզ, որ կարողացել ենք պատվով անցնել այդ փորձությունների միջոցով:

- Դուք ինձ վշտացրիք,- մեղմաձայն ասաց դոկտոր Մարտինը:- Դուք ինձ շա՛տ - շատ վշտացրիք: Եվ եթե հիմա լսեք որոշ դառը ճշմարտություններ, դրանք վերագրեք ոչ թե մեր անհամեատությանը, այլ ձեր կասկածամտությանն ու հետաքրքրասիրությանը: Եթե մեր հանձնաժողովը չլիներ, պարոն Ալեքսանդր, դուք գեստապոյից դուրս չէիք գա: Իսկ հետո, պատերազմից հետո... Եթե մեր հանձնաժողովը չլիներ, դուք հավանաբար դեռ հիմա էլ կգտնվեիք մեր հանրապետության պետական բանտում, որովհետև գերմանացիների հետ համագործակցողի և հայրենիքի դավաճանի պատիժը ցմահ բանտարկությունն է: Իսկ ձեզ, եթե չեմ սխալվում, հենց դրա մեջ էին մեղադրում: Այդպե՛ս է, մագիստրոս...

- Այդպես է, դոկտոր՝ Մարտին:

- Մի՞ թե կալանքից հենց նոր ազատված քաղաքապետ Ադամին մենք նորից չուղարկեցինք բանտ՝ երկրորդ անգամ ձեզ փրկելու համար:

- Ո՛չ,- ասացի ես:- Այդ մեկի համար ես կարող եմ երդվել խաչի վրա: Ադամին իմ կինն է խնդրել օգնել ինձ: Ես դա հաստատ գիտեմ:

- Իսկ ո՞վ է ձեր կինը:

- Ալիսան,- ասացի ես:

- Իսկ ո՞վ էր Ալիսան:

- Ինչպե՞ս թե ով էր... Ալիսան... Ալի՛սան... Ալի՛սան... Ես կսպանեմ ձեզ,- գոռացի ես:- Միայն թե չհամարձակվեք ասել, թե նա էլ ձեր գործակալն է:

- Նա մեր գործակալն էր, պարոն Ալեքսանդր,- ասաց դոկտոր Մարտինը:

Ես ուզեցի բարձրանալ տեղից ու չկարողացա: Ինձ համար ամեն ինչ կորցրեց իր իմաստը: Ես չէի էլ փորձում այլևս լսել կամ հասկանալ որևէ բան: Ինչ-որ բաներ էին ամուր շրխկշրխկալով դիպչում իմ ուղեղին ու ցած թափվում ավազահատիկների նման: Բայց ինձ ցավ չէին պատճառում: Ցավեցնելու ոչինչ չէր մնացել:

- Դո՛ւք մեզ ստիպեցիք ամեն ինչ ասել: Մեղքը մերը չէ: Այո՛, նա մեր գործակալն էր: Ամուսնու գոհվելուց հետո նա հնարավորություն չունեի պահելու իր որդուն: Եվ համաձայնեց աշխատակցել մեզ: Մտաբերեք, խնդրում եմ, մտաբերեք, ձեզ տարօրինակ չէ՞ր թվում, որ նա հրաժարվում էր ամուսնանալ ձեզ հետ, որ անընդհատ ձգձգում էր պատասխանը: Այո՛, պարոն Ալեքսանդր, մեր աշխատակիցները իրավունք չունեն ամուսնանալու կամ ամուսնալուծվելու առանց մեր թույլտվության: Իսկ հետո... տարօրինակ չէ՞ր թվում, որ երեխա չէիք ունենում: Այդ մենք թույլ չէինք տալիս: Ձե՛զ համար: Այո՛, այո, հանուն ձեզ: Որովհետև որոշելով պարզևատրել ձեր համեստությունն ու առաքինի կյանքը և իհարկե նաև մեր հանձնաժողովի ֆինանսական շահերից ելնելով, մենք մտադիր էինք ձեզ իրոք ուղարկել Մարոկկո, Ռաբաթի կանացի արդուզարդի կոմբինատի դիրեկտոր և բաժնետեր: Այնինչ նորածին երեխան կխանգարեր ձեզ: Իսկ երբ դուք վճռականապես հրաժարվեցիք, մի թե մենք չէինք, որ ընդառաջելով Ալիսայի համառ թախանձանքին, նրան թույլ տվեցինք երեխա ունենալ և ավելին՝ լիովին հեռանալ մեր հանձնաժողովից, որովհետև նա իրոք սիրում էր ձեզ և ուզում էր անմնացորդ նվիրվել իր ընտանիքին: Այո, և նման շատ բաներ, պարոն Ալեքսանդր: Նման շատ բաներ: Իսկ երբևէ հարցրե՞լ եք ձեզ, թե ինչպես պատահեց, որ Լեոնին պատերազմ ուղարկեցին, իսկ ձեր որդին մինչև հիմա էլ զինվորական պարտադիր ծառայության չի կանչվել: Ինչո՞ւ: Որովհետև մենք չուզեցինք, որ վրդովվի ձեր հոգին: Որովհետև իբրև հանրապետության օրինակելի քաղաքացի, մեզ պետք էր անչար ու բարի պարոն Ալեքսանդրը: Ձեզ իրավունք տալի՞ս եք այսքանից հետո ևս նախատել մեզ:

- Իսկ ինչո՞ւ Լեոնին էլ չպահեցիք: Ինչո՞ւ անմեղ տեղը գոհվեց մեր տղան և նրա նման հարյուրավոր ու հազարավոր երեխաներ ինչո՞ւ են գոհվում մինչև հիմա իրենց հայրենիքից հեռու, օտար ու անծանոթ մարդկանց շահերի համար:

- Միամիտ հարց է: Մենք չենք կարող պահպանել բոլորին,- աչքերը բացեց պրոֆեսոր Բլոկը:

Ես նայեցի նրան, ու հանկարծ ինձ թվաց, թե նա կենդանի մարդ չէ, այլ ընդամենը՝ անչափ վարպետորեն սարքած մի տիկնիկ, մի խամաճիկ, մի խրտվիլակ: Ես նույնիսկ նկատեցի այն թելը, որ նրանից դեպի դոկտոր Մարտինն էր ձգվում ու փաթաթված էր նրա մատին: Դե իհարկե, դոկտոր Մարտինը շարժեց մատը և դրանից բացվեցին տիկնիկ պրոֆեսորի աչքերը, շարժվեցին շրթունքները ու տարուբերվեց խոշոր գլուխը: Իսկ մյուսն է՝ թե իրական, կենդանի մարդիկ են պրոֆեսոր Կարլը, մագիստրոս Սիմեոնը: Դե, իհարկե, ոչ: Ես նոր միայն նկատեցի, որ դոկտոր Մարտինի մատից թելեր են ձգվում նաև դեպի նրանք և մի թել էլ... իմ կողմն է գալիս: Իմ կողմը: Ե՛ս ինչ կապ ունեմ: Այսինքն՝ ինչպե՞ս թե չունեմ: Չե՞ որ ինքս էլ չհասկանալով, ես էլ եմ ամբողջ կյանքում խաղալիք եղել նրա ձեռքին: Իհարկե: Միայն թե թելը չեմ տեսել: Եվ բոլորը, ամբողջ աշխարհը խաղալիքներ ու խամաճիկներ են դարձել դոկտոր Մարտինի և նրա միջազգային գործընկերների ձեռքին: Միայն թե թելերը չեն տեսնում: Թելերը:

Ուրեմն, ինչպես ես իմ արհեստանոցում, այնպես էլ դոկտոր Մարտինը մեր երկրում, ձգում է թելերը, սեղմում է կոճակները և մարդիկ ցատկոտում են տիկնիկների պես, բացում են բերանները, ասում են ինչ որ նա է հրահանգավորում, ուտում են, ինչ որ նա է թույլ տալիս, ապրում են՝ ինչպես նա է ուզում, խստորեն ըստ նրա մշակած ծրագրի: Հանուն հենց իրենց գոյության և բարօրության: Հանուն հայրենիքի ծաղկման:

Եվ ինչպես արհեստանոցում էր լինում, տիկնիկների ու խաղալիքների մեջ, հանկարծ մի մեծ հանգստություն իջավ վրաս և պարզվեց, մաքրվեց ուղեղս: Աստված մի շող ուղարկեց, որը վառ լուսավորեց իմ բանականության բոլոր ծալքերն ու անկյունները: Ես հասկացա իմ ապրած կյանքը:

Ու ոտքի կանգնեցի:

- Ձեզ ո՞վ է իրավունք տվել տնօրինելու մարդկանց ճակատագիրը,- ասացի ես:- Ձեզ ո՞վ է իրավունք տվել խաղալ մարդկանց հետ, ինչպես տիկնիկների հետ են խաղում: Ո՞վ էք դուք: Ո՞վ էք դուք, որ աստված էք կարծում ձեզ: Ինչո՞ւ էիք համոզված, որ ես ավելի երջանիկ չեի լինի տխուր այքերով այն կնոջ տանը, որի ձեռքերից լվացքի փոշու հոտ էր գալիս: Մորս ձեռքերի հոտը: Ո՞վ է ձեզ թույլ տվել վճիռներ կայացնել ուրիշ մարդկանց փոխարեն, ստիպել նրանց ապրել ինչպես ձեզ է ձեռնտու և մեռնել՝ ե՞րբ կամ որտե՞ղ դուք էք ցանկանում: Ձեզ համեստ, առաքինի, աշխատասեր մարդիկ են պետք: Բայց ոչ թե նրա համար, որ երջանիկ լինեն նրանք, այլ որպեսզի դուք և ձեր տերերը ապահով ապրեք: Որպեսզի ոչ ոք չմտածի փոխել այն կարգերը, որտեղ դուք հրամայողներ եք: Ես հիմա եմ հասկանում, թե ինչու են ձեր լրագրերը, հեռուստատեսությունն ու ռադիոն բարձր բարոյականության դիրքերից փառաբանում ազնիվ մարդկանց և երջանիկ ընտանիքները, փառաբանում քրտնաջան աշխատանքը, զիտակցված սերն ու խաղաղությունը: Եվ ամոթխածորեն լռում, երբ խոսքը վերաբերում է դժբախտ, ընչազուրկ մարդկանց, երբ խոսքը վերաբերում է նույնիսկ հարևան երկրներում կատարվող խռովություններին և հեղաշրջումներին, բռնություններին ու սպանություններին: Որովհետև վախենում եք, որ դրանք անցանկալի ազդեցություն կգործեն ձեր երկրի ժողովուրդների վրա: Չե՞ որ մի օր էլ նրանք կտվորեն ելնել ձեր դեմ, դրոշներ պարզած անցնել փողոցներով, հեղաշրջել ձեր կարգերը, բռնություն գործել ձեր նկատմամբ...

- Եվ որքա՞ն պետք լսենք ձեզ,- շրթունքները սեղմած, հարցրեց դոկտոր Մարտինը:

- Որքան որ ես կխոսեմ,- ասացի ես:- Որովհետև ես շատ եմ լսել ձեզ: Եվ ոչ միայն ես: Մի օր շատերը կհասկանան ինձ պես, ու դուք ստիպված կլինեք շատերին լսել: Դուք լրտեսների ու գործակալների ցանցով պատել եք ամբողջ երկիրը: Բայց ինչի՞ կարող եք հասնել վարձկաններով: Ձեր վիթխարի ապարատն ու հսկայական միջոցները այսքան տարիների ընթացքում կարողացել են ձեր ուզած ստանդարտի ընդամենը մեկ մարդու գտնել: Ինձ: Եվ այն էլ, ինչպես տեսնում եք, ապարդյուն:

Ես սև թավիշի տուփը նետեցի իմ ոտքերի տակ, դեղին շքանշանը դուրս թռավ պատյանից և աղմուկով գլորվեց հատակի ուղեգորգի վրայով: Բոլորը վեր թռան իրենց տեղերից նախ ահաբեկված ու ապշած և ապա՝ նույն սպառնալից դեմքերով: Ու ես նորից ամենայն պարզությամբ տեսա նրանցից դեպի դոկտոր Մարտինը ձգվող թելերը:

Եվ էլի մի թել, որ դոկտոր Մարտինից դեպի դուրս էր ձգվում:

- Ես հրաժարվում եմ ձեր շքանշանից, - շարունակեցի ես: - Ինձ համար վիրավորական է լինել այն հանրապետության օրինակելի քաղաքացին, որի տերերը դուք եք: Որոնք կամ ստեղծեք անուղեղ մարդիկ: Ձեր գաղափարներին միայն նրանք համապատասխան կլինեն:

Ես դուրս եկա դոկտոր Մարտինի առանձնասենյակից, ամուր փակելով դուռը ու փոքրիկ ճամպուկս վերցնելով, քայլեցի պառլամենտի երկար-երկար միջանցքներով, շտապելով դուրս, դեպի մաքուր օդ:

Եվ միայն դրսում նկատեցի, որ քայլում եմ ծանր բեռն ուսերից նետած մարդու թեթևությամբ:



Առավոտյան հասա տուն: Երբ ներս հրեցի պարտեզի դռնակը, ինձ թվաց, թե մեր տան ապակեպատ պատշգամբի վարագույրը դողդողաց ու բացվեց մի փոքր և նեղիկ բացվածքի միջից մի վայրկյան երևաց ու անհետացավ Ալիսայի վախվորած դեմքը: Մի րոտ ճնշվեց նորից: Ինչպե՞ս ապրեմ այսուհետև: Ի՞նչ անեմ: Ի՞նչ ասեմ, երբ հանդիպեմ Ադամին: Ի՞նչ աչքերով նայեմ Ալիսային: Ինչպե՞ս պահեմ ինձ ծանոթ ու անծանոթ մարդկանց հետ: Ինչպե՞ս պարզեմ, թե նրանցից որն է գործակալ և որը օրինավոր մարդ: Բոլորին հո կասկածել չի՞ կարելի: Այդպես կլիելագարվի մարդ:

Ես փայտե սանդուղքով դանդաղորեն վեր բարձրացա, կամացուկ դնելով քայլերս, որպեսզի Արթուրը, Լուիզան, երեխաները հանկարծ չարթնանան: Ու մտա պատշգամբ: Ալիսան այնտեղ չէր: Արհեստանոցի դուռը բաց էր կրնկի վրա: Նայեցի ներսը, Ալիսան այնտեղ էլ չէր: Շրջվեցի որ դուրս գամ, բայց նորից ետ դարձա ու նայեցի իմ տիկնիկներին ու խամաճիկներին: Նրանք ինձ էին սպասում: Նրանք սպասում էին, որ ես ձգեմ թելերը, սեղմեմ կոճակները, որպեսզի իրենք շարժվեն, կաղկանձեն, կոկոսան, գրկախառնվեն, գինի խմեն, համբուրվեն, լաց լինեն՝ խոշոր-խոշոր արցունքներով և ծիծաղեն բերանները լայն բացած, ցնցվելով հրճվանքից:

Ես դազգահի տակից, իր ճիշտ տեղից հանեցի նիկելապատ երկաթե փոքրիկ նիզը, որով սովորաբար պահեստամասերի արկղերն էի բացում և թափով ետ տանելով՝ խփեցի երախը բացած շանը, հետո գորտին, հետո որսորդին, գնացքին, ավտոմեքենաներին, հետո մյուսներին, ինչ որ կար, իսկ ամենավերջում թմբկահար կապիկին, որն այդպես էլ մինչև վերջ չկարողացավ հարվածել սովորել իր երկար ձախ ոտքով: Իսկ երբ հնալով ու տնքալով վերջին հարվածներն էի հասցնում իմ հեքիաթների աշխարհին, ինձ թվաց, թե մի խեղդված ճիչ լսեցի իմ թիկունքում և շրջվեցի անմիջապես:

Դռների մեջ կանգնած էր Ալիսան, ձեռքի ափերով բերանը սեղմած ու ինձ էր նայում սարսափով ու արցունքով լի իր երբեմնի խոշոր, երկնագույն աչքերով:

Ձեռքս թուլացավ և նիզը զրնգոցով ընկավ հատակին:

- Հիմա ես ի՞նչ անեմ, Ալե՛քս,- կամացուկ շնջաց Ալիսան:- Ասա, ի՞նչ անեմ: Ես պատրաստ եմ անելու այն ամենը, ինչ կասես դու: Ամեն ինչ, ասա, ի՞նչ անեմ... ես...

Ես կարեկցանքով ու հոգնած նայեցի նրան:

- Թե՛յ բեր, Ալիսա՛,- ասացի:- Ես շատ ծարավ եմ: Թե՛յ բեր ինձ, Ալիսա՛:

Ալիսան ինձ նայեց ապշած, դողացող շուրթերով ուզեց ինչ-որ բան ասել, բայց չկարողացավ և ինչպես շատ-շատ առաջներում, հանկարծ գիրկս նետվեց, կրծքիս սեղմելով արցունքով ողողված դեմքը:

- Պետք չէ,- պառա՛վս,- ասացի ես՝ չթի տակից շոյելով հեկեկոցից ցնցվող նրա նիհար ու մաշված ուսերը:- Պետք չէ, հարազա՛ տս... Այս աշխարհում մենք բոլորս էլ ի վերջո զոհեր ենք: Միայն զոհեր ենք, Ալիսա:

1982 թ.

Միրի՛ր Մերձավորիդ

Արդեն քառասունն անց, տարիքով մարդ էր Վիրաբը, շատ ցավ ու կրակ էր տեսել կյանքում և հաճախ մտածում էր, թե այլևս որևէ բան զարմացնել, հավասարակշռությունից հանել չի կարող իրեն: Որովհետև ամեն ինչ տեսել է: Իսկ հիմա նստել-մնացել էր փողոցում՝ ավտոբուսի կանգառի մոտ դրված փայտե նստարանին ու սպասում էր, որ ուշքի գա: Ու մտածում էր, թե ինչ է ասելու հետո, երբ ուշքի գա: Այսինքն՝ ասելը դեռ ոչինչ, ամեն ինչ էլ կարելի է ասել, բայց ի՞նչ է անելու: Ի՞նչ է անելու հետո, երբ ուշքի գա:

Նա նման հարվածի չէր սպասում: Սկզբում նույնիսկ ականջներին չհավատաց: Կանգ առավ քարացած: Հետո նորից լսեց նույն բառերը: Մուսանը լաց էր լինում ու կրկնում՝ արցունքից խեղդվելով.

- Որ իմանա, չի ուզի: Չի ուզի, էլի, մա՛մ: Որ իմանա, չի ուզի...

Բավականին ուշ էր, որ Վիրաբը տուն եկավ: Բայց իրեն մեղավոր չէր զգում, որովհետև մեղք չունեիր: Մարգոյին զգուշացրել էր, որ ակադեմիկոս Պարսամյանի տանն է լինելու: Մենակ է ծերունին և ձանձրանում է, նարդի խաղացող չկա հետը: Դրա համար էլ մեկ-մեկ երեկոները հրավիրում է Վիրաբին: Թեյ են խմում իրար հետ, զրուցում են: Իսկ այսօր հիվանդ էր: Ավելի ճիշտ՝ ընկճված էր մի տեսակ, լցված էր սիրտը, խոսել էր ուզում: Իսկ երբ մարդը, և այն էլ ի՞նչ մարդ՝ խոսելու կարիք ունի, հո չես կարող ձեռքդ բարձրացնել ու նայել ժամացույցին:

Այդ պատճառով էլ ուշացավ: Բայց քանի որ, այնուամենայնիվ, շատ ուշ էր, զանգ չտվեց: Իր բանալիով անաղմուկ բացեց կողպեքը, անձայն ներս մտավ, զգուշորեն փակեց դուռը, ոտքերի թաթերին հենվելով անցավ խոհանոցի մոտով ու մեկ էլ զգաց, որ տնեցիները քնած չեն: Հենց խոհանոցից էլ լսվում էր դստեր սրտաճմլիկ ձայնը.

- Որ իմանա, չի ուզի: Չի ուզի, էլի, մա՛մ: Որ իմանա, չի ուզի:

Վիրաբը կանգ առավ զարմացած:

- Ի՞նչ գիտես, այ աղջի,- հարցրեց Մարգոն:

- Գիտեմ, էլի,- լաց էր լինում Մուսանը:- Որ իմանա հայրս՝ աղբ հավաքող է, չի ուզի: Աղբ հավաքողից ո՞վ աղջիկ կուզի, ա՛յ մամ:

- Իսկ դո՞ւ ինչու ես ասում, թե աղբ թափող է, ասա վարորդ է,- ասաց Մարգոն:

- Չի՞ հարցնի, թե ինչ վարորդ է: Ասում ես, էլի... Ավտոբուս է քշո՞ւմ, թե տաքսի: Ի՞նչ ասեմ: Էս ի՞նչ դժբախտություն է, մամ ջան, ի՞նչ դժբախտություն:

Խոհանոցում մի պահ լռություն տիրեց և այդ լռության մեջ Վիրաբը լսեց, թե ինչպես է ցավով, տազնապահար, անկանոն զարկում սիրտը:

Հիմա Մարգո՞ն ինչ կասի: Տեսնես ի՞նչ կպատասխանի Մարգոն:

- Բա ե՞ս ինչ ասեմ,- հանկարծ աղջկա լացակումած ձայնով ասաց Մարգոն,- ե՞ս ինչ ասեմ, որ ամբողջ կյանքում եմ ամաչել: Այնքան սուտ եմ ասել, որ մի տոկոսն էլ հերիք է դժոխքի կրակի մեջ խորովվելու համար: Բայց ի՞նչ կարող ենք անել, աղջիկ ջան, մեր ճակատին էլ դա է գրված: Ի՞նչ կարող ենք անել:

Մարգո՛ն: Դա արդեն այնքան աներևակայելի էր, որ Վիրաբը հանկարծ զգաց, թե ինչպես միանգամից թուլացան ծնկները: Մարգո՛ն: Դա արդեն հարված էր թիկունքից: Սրտին: Ուզեց խոհանոց մտնել, չկարողացավ: Ոտքերը հազիվ քարշ տալով ետ դարձավ, կամացուկ բացեց դուռը ու նորից հայտնվեց աստիճանավանդակում: Խոր շունչ քաշեց, հենվեց բազրիքին ու ցած նայեց: Մութ էր: Միայն առաջին հարկում, ասես մշուշի միջից, ինքն իրեն հազիվ լուսավորում էր մի աղոտ լապտեր:

Նա գողունի քայլերով, անշշուկ իջավ սանդուղքով ու կրկին փողոց դուրս եկավ: Տոթ, խեղդուկ գիշեր էր: Օդում կարծես թե ամպրոպի հոտ կար: Նա վեր, դեպի երկինք նայեց ու տեսավ, որ ամպերը կուտակվել, ծխի ու փոշու հետ խառնվել, կախվել են ցած: Գոնե անձրև գար, մտածեց նա ու անմիջապես էլ մտածեց, թե ի՞նչ է փոխվելու դրանով, եթե անձրև գա: Ոչինչ էլ չի փոխվելու, ոչինչ:

Ոտքերը ցավում էին և ասես մշուշի մեջ լողում էր գլուխը: Վիրաբը դանդաղ, շատ դանդաղ մոտեցավ ավտոբուսի կանգառի մոտ դրված փայտե նստարանին ու նստեց: Մի դատարկ ավտոբուս եկավ: Խղճով վարորդ էր. կանգ առավ, բացեց դռները, սպասեց, բայց որովհետև Վիրաբը չէր շարժվում, մտածեց, թե քնով է ընկել ու թեթև ազդանշան տվեց:

Ու Վիրաբն իրեն չգիտես ինչու մեղավոր զգալով, տարածեց ձեռքերը, կարծես անձայն ասելով. «Նստեմ ո՞ւր գնամ, եղբայր, պտտելու ես քաղաքով մեկ ու էլի մեր տուն ես բերելու: Նստեմ ո՞ւր գնամ, եղբայր»:

Ավտոբուսը շրիկոցով փակեց դռներն ու հեռացավ: Եվ մենակ մնաց Վիրաբը: Բայց նա մենակ չէր. գիշերային խոր լռության մեջ ավելի պարզորոշ աղմուկով նրա ականջին շարունակ-շարունակ հնչում էին նույն ձայները: Մուսանը հեծկլտում էր անընդհատ, ինչ-որ բաներ էր ասում, իսկ Մարգոն դատեր ձայնով մխիթարում էր նրան:

Վիրաբն ամուր փակեց ականջները, որ չլսի:

Ուրեմն՝ անպտուղ ու սո՞ւտ է եղել ապրած ամբողջ կյանքը:

*

* *

Երբ Վիրաբն առաջին անգամ տեսավ Մարգոյին, կյանքում առաջին անգամ էլ հասկացավ, թե ինչ բան է կարեկցանքը: Որովհետև առաջին անգամ էր հանդիպում մեկին, որն ավելի թշվառ լիներ ու օգնության կարոտ, քան ինքը: Ներսում ինչ-որ բան ճմլվեց, բարձրացավ կոկորդով ու շատ ցավաց: Նա առաջ էլ նման զգացում ունեցել էր, բայց միայն կենդանիների նկատմամբ:

Մի անգամ, երբ շատ փոքր էր, անտեր, անօգնական, անձրևի տակ թրջված կատվի ձագ տեսավ, որը դողդողում էր ամբողջ մարմնով ու մլավում խղճալի: Գրկեց, կրծքին սեղմեց ու շոյեց, շոյեց, շոյեց ձագի թաց, անհարթ, մոխրագույն մորթին, որի տակ փափուկ ջլերի նման այս ու այն կողմ էին սահում փոքրիկ ոսկորները: Այնքան շոյեց, մինչև դողն անցավ: Ձագը փակեց աչքերն ու հանկարծ սկսեց հանդարտ, խաղաղ մռմռալ ու հենց այդ ժամանակ Վիրաբն զգաց, որ ինչ-որ բան ճմլվեց, բարձրացավ կոկորդով ու սկսեց խեղդել նրան: Ջգաց, բայց չհասկացավ, թե դա ինչ է ու հանկարծ լաց եղավ: Լաց էր լինում լուռ, առատ արցունքներով, ինքն էլ զարմանալով, թե ինչու է լաց լինում: Բայց ինչ-որ տեղ հոգու խորքում, թե ավելի հեռու և ավելի խորը՝ բնագոյների մեջ հիշում էր, որ ինքն էլ ճիշտ այս ձագի նման դողում էր խղճալի ու ինչ-որ մեկը կարծես թե շնչով տաքացնում ու շոյում էր նրան: Ինչ-որ մեկը: Դե երևի մայրն է եղել: Ասում են, թե մայրերն են այդպես անում: Ասում են... Միայն ասելով գիտեր Վիրաբը: Որովհետև մայր չէր տեսել:

Աղջիկը կծկվել էր երկրորդ հարկ տանող բետոնե սանդուղքի տակ ու լաց էր լինում: Նիհար, ոսկրոտ ուները ցնցվում էին պատռված չթե շորի միջից:

- Աղջի՛, - կամացուկ ձայն տվեց Վիրաբը:

Աղջիկը չլսեց:

- Աղջի՛, - ձայնը բարձրացրեց տղան,- ինչի՞ ես լաց լինում:

Աղջիկը շրջվեց միանգամից, Վիրաբին նայեց վախեցած, ավելի կծկվեց ու հանկարծ արցունքի միջից անասելի ատելությամբ լի մի հայացք նետելով, ասաց.

- Չմոտենաս, կկծեմ: Կկծեմ, մորս արև...

- Վա՛յ, դու հո վայրենի՞ չես,- ծիծաղեց Վիրաբը,- ինչի՞ ես ուզում կծել:

- Բա դո՞ւ ինչ ես ուզում ինձանից, դո՞ւք ինչ եք ուզում ինձանից, խուժաննե՛ր,- պոռթկաց աղջիկն ու նորից լաց եղավ բարձրաձայն, կեղտոտ մատներով տրորելով աչքերը:- Ես ձեզ ի՞նչ եմ արել: Մեղք եմ, էլի: Ասում եք արի սիրեմ ու ցավացնում եք: Տես, դե տես, տես,- նա մանկական անմեղ անամոթությամբ բարձրացրեց փեշն ու ցույց տվեց սրունքների կապտուկները, հետո կուրծքը բացեց, ու երբ նոր կապտուկներն էր ցույց տալիս, կրկին նկատեց, որ պատռվել է շորը ու լաց եղավ բարձրաձայն, անմխիթար:- Վա՛յ, իմ շորը վա՛յ, իմ շորը,- հեծկլտում էր նա:- Մերս որ իմանա, կսպանի... Շորս ինչի՞ եք ճղում, ախր շո՞րս ինչի՞ եք ճղում... Դուք եք առե՞լ, որ ճղում եք:

- Անունդ ի՞նչ է,- հարցրեց Վիրաբը:

- Մարգո,- լաց լինելով, ասաց աղջիկը:

- Էդ ո՞վ է... ցավեցրել քեզ:

- Դու, ո՞վ:

- Ե՞ս,- ապշեց Վիրաբը:

- Դու ու քեզ նմանները:

- Այ աղջիկ, դու հո գիժ չե՞ս,- վիրավորվեց Վիրաբը:- Ես քեզ առաջին անգամ եմ տեսնում: Ի՛նձ նայիր, մի լա՛վ ինձ նայիր, ես քեզ ձե՞ռք եմ տվել: Նայի՛ր, նայի՛ր...

- Ի՞նչ նայեմ,- մղկտաց աղջիկը,- բոլորդ էլ իրար նման, քաչալ խուժաններ եք:

Վիրաբը պատկերացրեց տեխնիկումի իր նոր ընկերներին ու ծիծաղեց: Ճիշտ որ... բոլորն էլ իրար նման քաչալ խուժաններ...

- Իսկ դո՞ւ ինչ ես անում էդ քաչալ խուժանների մեջ,- ծիծաղելով հարցրեց նա:

- Ես էստեղ եմ ապրում,- ասաց Մարգոն:

- Տեխնիկումի հանրակացարանի մե՞ջ:

- Հա: Մամաս հավաքարար է: Մեզ տուն են տվել ներքնահարկում: Բա դո՞ւ ով ես, որ մեզ չես ճանաչում:

- Նոր եմ ընդունվել: Սպեցոբեռից: Հատուկ արհեստագործական ուսումնարանից: Լսած կա՞ս:

- Չէ:

- Մարգո՛,- ասաց Վիրաբը,- ուզո՞ւմ ես տղաներին ասեմ, որ քեզ ձեռք չտան:

Աղջիկը դուրս եկավ սանդուղքի տակից ու նրան նայեց զարմացած ու անվստահությամբ:

- Քեզ ո՞վ կլսի,- մրմնջաց նա:

- Կլսեն,- ասաց Վիրաբը:- Իսկ հիմա արի գնանք մեր սենյակը, ես թել ու ասեղ ունեմ, տեղն ու տեղը կկարեմ շորդ:

Աղջիկը նորից սանդուղքի տակ մտավ:

- Բա չէ, որ հիմի էլ դու կամթե՞ս, հա՞ ... Ձեզ լավ գիտեմ:

Վիրաբը թոթվեց ուսերը:

- Իսկ որ թել ու ասեղ բերեմ, դու կկարողանա՞ս կարել:

- Բեր,- ասաց աղջիկը:

Եվ այդտեղ էր: Ճիշտ հենց այդտեղ էր, որ Վիրաբն զգաց, թե ինչպես է ներսից, ինչ-որ տեղից բարձրանում ու կոկորդում կուտակվում անտանելի, խեղդող ցավը: Մարգոն առանց քաշվելու, վայրկենապես հանեց չթե շորը, գրեթե մերկ նստեց շրջած աղբի դույլին, ձեռքն առավ թելն ու ասեղը ու սկսեց կարել շորի պատռված տեղը, հետն էլ մղկտալով.

- Վախ, մերս որ իմանա, կսպանի... Վախ, ինչ լավ է, որ չի տեսնում մերս...

- Ո՞նց թե չի տեսնում,- փշաքաղվեց տղան:

- Հիվանդ է, սպիտակել էն աչքերը:

- Բա... բա ո՞նց է աշխատում:

- Տասը տարի է, ավլում ու ավլում է նույն տեղերը... իմ խեղճ մերը: Ամեն ինչ գիտի անգիր: Հետո, արդեն մի տարի է, չեմ թողնում չարչարվի, ես եմ նրա գործն անում: Համ սովորում եմ, համ աշխատում,- հանկարծ հպարտ ժպտաց Մարգոն ու անմիջապես էլ մռայլվեց,- մենակ թե չխանգարեն խուժան լակոտները: Չեն թողնում աշխատեմ:

Վիրաբի սիրտը կծկվեց:

- Հեր չունե՞ս, Մարգո:

- Չէ:

- Ես էլ չունեմ,- ասաց Վիրաբը:- Ոչ հեր եմ տեսել, ոչ մեր:

Մարգոն ձեռքը քսեց Վիրաբի մազերին:

- Խեղճ տղա,- ասաց նա:

- Չէ, հա՛,- գլուխը թափ տվեց կարեկցանքի անսովոր տղան,- հեչ պետքս էլ չի:

- Անունդ ի՞նչ է,- հարցրեց Մարգոն՝ ասամներով կծելով-կտրելով թելը:

- Վիրաբ: Լավ է գոնե, որ Հաղթանակ չեն դրել,- ծիծաղեց Վիրաբը:- Գիտե՞ս ինչի, ախր ըստ մանկատան հաշվումների, ծնվել եմ Հաղթանակի օրը, 1945 թվականի Մայիսի 9-ին: Ծիծաղելի է, չէ՞, հաղթանակն ու ես:

- Ես քեզ մման տղա չեի տեսել,- ժպտաց Մարգոն:- Ինչ լավ է, որ դու կաս, Վիրա՛բ:- Նա բարձրացավ դույլից ու մնաց կանգնած՝ կրծքի վրա պահած չթե շրջագգեստը:

Տղայի սիրտը ալեկոծվեց:

- Ինչի՞, ես ի՞նչ արեցի որ...

- Դու ուրիշ տեսակ տղա ես,- ասաց Մարգոն:- Դու խիղճ ունես:

Վիրաբը մտածեց, որ եթե չունենար էլ, անհնարին է, որ այդ խոսքերից հետո սրտում չծնվեր խիղճը:

- Հագնվի՛ր, ա՛յ աղջի, կմրսես,- ասաց նա կամացուկ:

Մարգոն նրան նայեց խոնարհած աչքերի տակից, ամաչելով.

- Դե շրջվի՛ր...

- Ի՞նչ,- ապշեց Վիրաբը:

- Շրջվիր, որ հագնվեմ:

Վիրաբը ծիծաղեց բարձրաձայն, սրտանց:

- Ա՛յ աղջի, մի ժամ տկլոր նստած ես դիմացս, ամաչելի նո՞ր հիշեցիր, ի՞նչ պատահեց:

- Չգիտեմ,- ասաց Մարգոն:- Շատ եմ խնդրում, շո՛ւտ տուր գլուխդ: Հա՞...՝

Վիրաբը շրջեց գլուխն ու ժպտաց: Նրան մի պահ թվաց, թե թիկունքում այն փոքրիկ, թրջված կատվի ձագն է, որը հենց նոր կտրեց դողը ու հիմա մոմռում է խաղաղ, երանությունից փակած աչքերը: Եվ նորից ինչ-որ բան ներսից ցավեցնելով բարձրացավ ու խեղդեց նրան:

Իսկ երեկոյան հանրակացարանի մի սենյակում, իր նման տասնմեկ տղաների (Մարգոն ինչպե՞ս ասաց, հա՛, քաչալ խուժանների) հետ ծանոթանալուց հետո, Վիրաբը պառկել էր անկյունում՝ իր երկաթե մահճակալին ու միայն մի բան էր երագում, միայն մի բան էր խնդրում ասածուց, որ տղաները հանկարծ Մարգոյի անունը չտան:

Բայց երևի անհնարին էր դա, երևի դա պարզապես թեմա էր քնելուց առաջ, որովհետև, երբ հանգցրին լույսը, ինչ-որ մեկը հանկարծ երգեց.

- Մարգո, Մարգո, սիրո ծաղիկ Մարգարիտա, Մարգո...

Բոլորը քրքջացին և արդեն մեկ ուրիշը հարցրեց.

- Հա, էսօր ո՞վ է հոտ քաշել մեր սիրո ծաղկից... Ձեն հանող չկա՞:

- Սենոն էր հոտոտում, բայց ոնց որ թե փուշը ծակեց,- հռհռաց ինչ-որ մեկը:

- Նրան փո՞ւշ որտեղից, ա՛յ տղա,- ձայնեց երևի Սենոն,- գոնե ոսկոր ասեիր, հասկանայինք: Շան աղջիկը մի կտոր միս չունի վրան:

- Էլ մի՞ս ենք թողել, կերել-պրծել ենք,- քրքջաց մեկ ուրիշը:

Վիրաբն զգաց, որ եթե վեր չկենա, կմեռնի: Նա բարձրացավ տեղից, բոբիկ ոտներով դռան մոտ հասավ ու վառեց լույսը: Ավտոտեխնիկումի տասնմեկ սովորողներ աղմուկով շարժվեցին մահճակալների վրա ու լույսից կկոցած, զարմացած աչքերով նայեցին Վիրաբին: Վիրաբը գրեթե վազելով մոտեցավ իր փոքրիկ պահարանին, բացեց դռնակը ու ինչ-որ փալասի միջից հանեց պողպատե սայրով, սուր, փայլվիլուն մի դանակ, որ ինքն էր թաքուն տաշել դեռ այնտեղ՝ արհեստագործական ուսումնարանում, բռնեց գույնզգույն բռնակից, բարձրացրեց գլխից վեր, որ բոլորը տեսնեն ու ասաց հուզմունքից խոպոտած, դողացող ձայնով.

- Ես ձեզ մի բան եմ ասում ու առաջին և վերջին անգամ եմ ասում, տղե՛րք: Ով որ սրանից հետո Մարգոյի անունը կտա ու էլ չեմ ասում՝ կփորձի նեղացնել էդ աղջկան, էս դանակը մինչև կոթը փորը կխրեմ: Ես անտեր տղա եմ ու թքել եմ կյանքի վրա:

Զարմանալի մի լռություն տիրեց: Հետո ինչ-որ մեկը, երևի հենց Սենոն էր, բղավեց.

- Յա, դո՞ւ ով ես, տո:

- Իմ անունը Վիրաբ է,- ասաց տղան:- Պլանի գլխին՝ պոլիտեխնիկ ինստիտուտի մոտ, ում էլ հարցնեք, կասի, թե ես ով եմ:

- Հա, բայց քե՞զ ինչ, Մարգոն քո ի՞նչն է, որ տեր ես կանգնում,- տեղից բարձրացավ Սենոն:

- Իմ քույրն է,- ասաց Վիրաբը:

- Դե ուրեմն մենք էլ քո փեսաներն ենք, էլ ինչի՞ ես կռվում,- վերմակի ետևում թաքնված փորձեց սրամտել ինչ-որ մեկը, բայց ոչ ոք չծիծաղեց:

Բոլորն էլ ասես հմայված՝ դանակի փայլուն շեղբին էին նայում:

- Ես իմ խոսքն ասացի,- ասաց Վիրաբը, հանգցրեց լույսն ու վերմակի տակ մտավ:- Ով ուզում է, թող փորձի իր բախտը:

Ոչ ոք ձայն չհանեց: Այնպիսի լռություն տիրեց, որ քիչ անց ինչ-որ մեկի շշուկը պարզ լսելի դարձավ բոլորին: Իսկ այդ ինչ-որ մեկն ասում էր.

- Գործ չունես դրա հետ, արա՛, հատուկ արհեստագործականից է, դրանք բոլորը լրիվ որբեր են, ու էնքան են ծեծ կերել, որ ծեծը նրանց համար հեչ: Հարցրեք, տեսե՛ք, էլի, բոքսի չեմպիոնները բոլորն էլ որբեր չե՞ն, «Աշխատանքային ռեզերվներից» չե՞ն: Դրանք ահ ասած բանը չունեն:

Վիրաբը բավարարված ժպտաց մթության մեջ, շրջվեց կողքի ու քնեց միանգամից, այնուամենայնիվ, ձեռքի ափում ամուր սեղմած դաշույնի ողորկ բռնակը:

*

* *

Արհեստագործական ուսումնարանն ավարտելը նույնն էր, թե միջնակարգ դպրոց ես ավարտում, այդ պատճառով էլ Վիրաբին միանգամից ընդունեցին տեխնիկումի երկրորդ կուրս: Եվ Վիրաբը, ինչպես ասում են, ոտքով ու գլխով թաղվեց դասերի մեջ: Պարապում էր գիշեր ու ցերեկ, կարդում էր ազահաբար: Ոչ մի դասից չէր փախչում և չեղավ մի օր, որ անպատրաստ ներկայանար սեմինար պարապմունքներին: Նման աշակերտներին, որպես կանոն, ոչ ոք չի սիրում: Նման աշակերտներին ծաղրում են, աշխատում նվաստացուցիչ դրությունների մեջ

զցել: Փորձում են վարկաբեկել ընկերների և ուսուցիչների աչքին, դիտմամբ քաշքշուկ են սարքում ու ծեծում համերաշխորեն: Բայց դե ի՞նչ կարող էին անել Վիրաբի նկատմամբ, որը տեխնիկումի բոնցքամարտիկների խմբակն էր դեկավարում:

Վիրաբն այնքան էր տարվել դասերով, որ նույնիսկ Մարգոյին չէր հիշում: Առաջին օրերին հետևեց աննկատ, համոզվեց, որ նրան ոչ ոք չի նեղացնում և հանգստացավ. մոռացավ աղջկան:

Բայց, ինչպես երևում է, աղջիկը չէր մոռացել նրան, և մի երեկո, երբ տղան հանրակացարանին էր մոտենում, հանկարծ հայտնվեց նրա առաջ:

- Բարև, Վիրա՛բ:

Մարգոյի հագին բրդե սրճագույն մի շրջագգեստ կար, որ, անկասկած, նախկինում մորն էր եղել, որովհետև փոքրացնելուց հետո խախտվել էին բոլոր համաչափությունները և շորն ասես թե մեխից էր կախված: Եվ գլխին էլ նույն կտորից կարված մի բերետ կար, որի տակից ուսերն ի վար փռված էին սև մագերը:

- Բարև,- աղջկա պարզած ձեռքը բռնելով՝ փոթկաց Վիրաբը:

Մարգոն ցնցվեց օձից խայթվածի պես:

- Ինչի՞ ես ծիծաղում:

- Այ աղջի, բերանիդ ներկ ես քսե՞լ,- հարցրեց Վիրաբը:

- Ո՞վ:

- Դու, ո՞վ:

- Ե՞ս, ի՞նչ ներկ:

- Հրե՛ղ կարմիր ներկ ես քսել, էլի,- զարմանալով, որ դա իրեն ջղայնացնում է, մատն աղջկա դեմքին պարզեց Վիրաբը:- Էս ի՞նչ է, ներկ չի՞:

Եվ հանկարծ կատարվեց մի անսպասելի բան: Մարգոն կտրուկ շարժումով բռնեց նրա պարզած մատը, դեմքին մոտեցրեց ու սկսեց արագ-արագ, գրեթե կատաղությամբ, շրթունքներին քսել:

- Ներկ է՞, ներկ է՞, ներկ է՞,- հևում էր նա:

Վիրաբը քաշեց ձեռքը, ականա մատին նայեց, աղջկա վառ կարմիր շրթունքներին, վիրավորանքից արցունքակալած աչքերին ու ծիծաղեց.

- Բա ինչի՞ է եղբան կարմիր: Ոնց որ պոմիդոր լինի:

- Երևի հասել է,- խայթեց Մարգոն:

Տղան մտածեց, որ հարկավոր է փոխել խոսակցության նյութը ու հարցրեց.

- Հը՞, էն քաչալ խուժաններն էլ քեզ չե՞ն մոտենում:

- Չէ,- դեռ խռոված ասաց աղջիկը,- բայց ի՞նչ օգուտ:

- Օգո՞ւտ: Իսկ ի՞նչ օգուտ էիր ուզում,- գարմացավ Վիրաբը:

- Ի՞նչ օգուտ, որ դու էլ չես մոտենում: Ոնց որ՝ ես չկամ: Գոյություն չունեմ: Կողքովս անցնում ես, ոնց որ պատի մոտով անցնես:

- Սպասի՛ր, սպասի՛ր, ես քեզ չե՞մ բարևում, Մարգո՛:

- Ավելի լավ էր՝ չբարևեիր: Որ չբարևեիր, կմտածեի, թե չես տեսել: Քո արևով դա էլ բարև է, հա՞:

Վիրաբն սկսեց բարկանալ.

- Լսի՛ր, դու ինձանից ի՞նչ ես ուզում,- ձայնը բարձրացրեց նա:- Ես քեզ պա՞րտք եմ:

- Պարտք ես, բա ի՞նչ ես: Բա մի անգամ պաշտպանում են ու մի կողմ են գցո՞ւմ: Տիրություն ես անում, մինչև վերջ տիրություն՝ ւն արա: Ոչ թե խայտառակի աշխարհով մեկ...

- Ե՞ս եմ քեզ խայտառակում,- աղջկա ապերախտությունից պարզապես ապշած՝ գոռաց Վիրաբը:

- Դու, բա ո՞վ,- չընկրկեց Մարգոն:- Էն խուժան լակոտներից ով տեսնում է, ընկերոջը բարձր--բարձր ասում է՝ դրա հետ գործ չունես, դա Վիրաբինն է: Վիրաբինն է: Իսկ Վիրաբի համար ես եղած կամ չեղած, մի հաշիվ է: Ասա՝ չէ՛, ասա՝ սուտ է... Դե ասա՛, է՛...

Նրա խոսելու ընթացքում, գլխի ցնցումներից բրոյա փոքրիկ բերետը թեքվել էր աջ ու կամաց--կամաց ներքև էր սահում՝ հազիվ կառչած փոքրիկ մի մազափնջից և Վիրաբին ամեն վայրկյան թվում էր, թե հիմա ուր որ է ցած է ընկնելու:

- Չայն չես հանում, չե՞,- չէր հանգստանում Մարգոն:- Հիմա ուզո՞ւմ ես՝ ես ասեմ: Ասե՞մ: Դու ինձ չես մոտենում, որովհետև վախենում ես:

- Ե՞ս,- նորից ծիծաղեց Վիրաբը:

- Հա՛, դու, դու վախենում ես: Դու վախկոտ ես: Դու ավելի վատն ես, քան թե էդ քաչալ խուժանները, հա՛, հա՛, որովհետև նրանք ձևեր չեն թափում քեզ նման: Նրանք ինչ-որ ուզում են, ասում են... առանց ամաչելու... տղամարդու նման...

Բերետն արդեն լրիվ կախվել ու ընկնում էր, և Վիրաբն ակամա պարզեց ձեռքը՝ գլխարկը բռնելու համար: Մարգոն այդ շարժումը սխալ հասկացավ, ետ քաշվեց ու ճչաց.

- Մի՛ խփի: Մի՛ խփի, ցա՛վդ տանեմ: Ինչի՞ ես ուզում խփել: Առանց այդ էլ ինձ շատ են խփել: Մի՛ խփի, Վիրա՛ ք ջան, ցավում է:

Վիրաբը կռացավ, վերցրեց գետնին ընկած գլխարկը ու մնաց շփոթահար կանգնած:

- Քեզ ո՞վ է խփում, ա՛յ աղջի, դու հո փորձա՞նք չես:

Մարգոն լաց եղավ:

- Ուրեմն, չէիր խփո՞ւմ, - հարցրեց կամացուկ, բերետն ու տղայի մատները տենդորեն սեղմելով ավի մեջ: - Ուրեմն ինձ վրա չե՞ս ջղայնանում, Վիրա՛ ք ջան: Ախր ինչի՞ ես ինձանից փախչում: Ախր ինչ-որ ուզես, ես կանեմ քեզ համար: Ինչ ուզես: Ուզո՞ւմ ես, համբուրի՛ ինձ, հա՞, ուզում ես, համբուրի՛ :

Վիրաբը մանկատանն էր մեծացել: Տղաների մանկատանը: Որովհետև այն ժամանակներում թե՛ դպրոցներում, թե՛ մանկատաններում տղաներն ու աղջիկներն առանձին-առանձին էին: Հատուկ արհեստագործական ուսումնարանում ևս միայն տղաներ էին: Վիրաբը երբեք որևէ ընկերուհի չէր ունեցել, երբեք որևէ գործ չէր ունեցել աղջիկների հետ: Միայն ավարտական հանդեսների ժամանակ էր, որ մոտակա դպրոցից օրինակի համար մի քանի աղջիկներ էին բերում արհեստագործական ուսումնարան: Տղաները վառված, քաղցած աչքերով նայում էին թիթեռնիկների նման հագնված աղջիկներին, իսկ նրանք անմատչելի ու լուրջ խոնարհում էին գլուխները վայրենի հայացքների տակ: Շտապում էին վայրկյան առաջ արտասանել, երգել ու պարել ու անմիջապես մաքուր օդ դուրս գալ, հեռու այդ գորշ ու կեղտոտ շենքից, նավթի ու ախտահանող ինչ-որ նողկալի դեղի հոտով ներծծված տախտակապատ դահլիճից, մուգ մկնագույն, կոշտ ու կոպիտ շորեր հագած, խուզած մազերով, սև դեմքերով ու ճահճատենդից դեղնած բիբերով տղաներից, որոնցից նույն այդ ախտահանող դեղի նողկալի հոտն էր գալիս շարունակ:

Վիրաբն աղջիկներին միայն գրքերից գիտեր, քնքուշ սիրավեպերից ու նովելներից, որոնց մեջ աղջիկները բարի էին, նուրբ ու հեզանազ: Խոսում էին ցածր, կրծքային ձայնով, շատ խելոք ու գեղեցիկ բառերով, և երբ հառաչում էին թախծալի, հառաչում էր նաև Վիրաբը:

Նա գիտեր նաև պատմավեպերի օրիորդներին և «տիկնանց փափկասուն Հայոց աշխարհի», որոնք, երբ հարկ էր լինում, ցած էին դնում ձեռագործները ու զենք վերցնում՝ ընդդեմ հայրենիքի թշնամիների: Եվ ռազմի դաշտ մեկնելուց առաջ, մեծ նախնիների անունները տալով՝ չափազանց սիրուն ու սրտաշարժ խոսքերով հորդորում էին իրենց ամուսիններին ու որդիներին՝ մարտնչել անահ ու անձևվեր, հանուն հայրենի երկրի փառքի ու հարատևման:

Եվ նրանց զրնգուն խոսքերը կարդալիս, պրկվում էին Վիրաբի բռունցքները:

Իսկ Մարգո՞ն... Մարգոն բոլորովին նման չէր այն տիկնանց ու աղջիկներին: Վիրաբը ոչ մի գրքում այդ տեսակ աղջկա չէր հանդիպել: Դրա համար էլ առանց խղճի խայթ զգալու, ամենայն անկեղծությամբ ասաց.

- Չի լինի, Մարգո՛: Դու իմ ուզած աղջիկը չես:

- Ինչի՞, - հարցրեց Մարգոն: - Ինչի՞, Վիրա՞ք ջան:

- Որովհետև, - սկսեց Վիրաբը, սկսեց ու նոր մտածեց՝ ասի, թե չասի, ասի, թե չասի ու ասաց, - որովհետև ես կուզենայի, որ իմ սիրած աղջիկը էդ հարցը չտար: Որ իմ սիրած աղջիկը աշխարհի ամենահպարտ ու ամենահամեստ աղջիկը լիներ: Որ նրա մարմնի վրա կապույտ տեղեր չլինեին:

- Ուրեմն՝ ես եմ մեղավոր, հա՞, - լաց եղավ Մարգոն:

- Հա՞, - ասաց Վիրաբը: - Դու քեզ էնպես պիտի պահես, որ ոչ ոք չմոտենա, ոչ ոք չհամարձակվի մոտիկ գալ քեզ:

- Որ շան երես ունեն, ես ի՞նչ անեմ:

- Դու էլ գայլի երես պիտի ունենաս:

- Հենա դու ունես, էլի, հերիք չի՞, - չղիմացավ, խայթեց Մարգոն:

- Ինձ հերիք է, - ծիծաղեց Վիրաբը: - Ու դու մի նեղանա, Մարգո՞ ջան: Եթե պետք լինի, իմա՛ց տուր: Ես քեզ միշտ, ամեն տեղ կպաշտպանեմ: Բայց դու ինձանից ուրիշ բան մի՛ սպասիր, հա՞: Ես եղպես էլ ասել եմ մեր տղերքին: Ասել եմ, որ դու իմ քույրն ես: Կուզե՞ս սրանից հետո ես քո եղբայրը լինեմ: Մինչև կյանքիս վերջը:

Աղջիկը նրան էր նայում միանգամից ցամաքած, այրվող աչքերով՝ ասես նոր միայն հասկանալով իր ողորմելի վիճակը, ափսոսալով իր անկեղծության համար, իր խոցված արժանապատվության համար: Եվ երբ խոսեց, շրթունքներն առաջվա նման այլևս կարմիր չէին և դողում էին վիրավորանքից:

- Պահ՛հ, շատ պետքս է քեզ նման ախպերը, ֆեզեղի որբ-անտեր:

Ու քայլեց դանդաղ, ուսերից կախ ընկած մուգ սրճագույն շորի մեջ ասես դիտմամբ, մեծավարի օրորվելով՝ ձեռքին ամուր սեղմած նույն կտորից կարված փոքրիկ բերետը: Մարգոյի աչքերից առատ արցունքներ էին թափվում, և նա ակամա անընդհատ աչքերին էր ուզում տանել բերետը, բայց պրկված ջղերով, կամքի ողջ լարումով պահում էր իրեն, որ Վիրաբը թիկունքից չնկատի ոչինչ, և ինքը կարողանա հենց այնպես, անհոգ քայլերով հասնել հանրակացարանի պատին: Բսկ այնտեղից արդեն հեշտ է: Մնում է իջնել պատի կողքով, երկաթաճաղ ժանգոտ սանդուղքով ու հայտնվել փոքրիկ ներքնահարկում, որտեղ ինչքան սիրտդ ուզի՝ կարող ես լաց լինել, որովհետև ոչ ոք չի կարող տեսնել արցունքներդ:

Ո՛չ անսիրտ Վիրաբը, ո՛չ խեղճ մայրդ, և ո՛չ էլ նույնիսկ արևի լույսը:

*

* *

Մոտենում էր քննությունների շրջանը: Գարուն էր: Ծառերի ճյուղերից վաղուց թափվել էին ծաղկաթերթերը, և նորաբաց գմբուխտ տերևների արանքում ուռչում, ջրակալում էին սալորն ու ծիրանը: Այսինքն՝ դրանք դեռ սալոր կամ ծիրան չէին, խակ ու թթու էին դեռ և կոչվում էին ցոգոլ: Ցոգոլ: Տղաների և նորահարսերի երազանքը: Ո՞ր երևանցի պատանին մի քանի ցոգոլի համար բոբիկ ոտքերով Չանգվի ձոր չի հասնի կամ էլ Այգեստան: Հարցը հո միայն ուտելու մեջ չէ: Հետաքրքիրը և հրապուրիչը «թոցնելն» է: Երբ կարող ես ընկերների հիացած հայացքի տակ զարմանալի ճարպկությամբ թափանցել ռազմական ամրոցի նման խիստ պաշտպանված այգին, բարձրանալ ծառը, սրտատրոփ թաքնվել սաղարթների մեջ, ծոցոլ ու գրպաններդ լիքը լցնել կանաչ ցոգոլով ու հետախույզի զգուշությամբ աննկատ դուրս պրծնել այգուց, քանի դեռ չի որոտացել այգու տիրոջ՝ վառողի փոխարեն աղ լցրած որսորդական հրացանը:

Վիրաբը ընկերների հետ նոր էր վերադարձել Չանգվի ձորի այգիները կատարած հաջող արշավանքից, նոր էր մահճակալին թափել երկար թներով մայկայի մեջ պոնկեպոունկ լցված կանաչ ավարը, երբ բացվեց հանրակացարանի սենյակի դուռը և դռան մեջ հայտնվեց Մարգոյի մայրը: Նա, իրոք, այլևս ոչինչ չէր տեսնում, որովհետև, չնայելով կոնկրետ ոչ մեկի, լայն բացած, սպիտակ աչքերը հառած ինչ-որ տեղ դիմացը, ձայնեց.

- Վիրա՛բ:

- Հա,- ձգվեց, հողոտ ձեռքերը ակամա թիկունքին տարավ Վիրաբը:

- Քեզ ընկեր Թոռյանն է կանչում,- գլուխը ձայնի կողմը թեքելով, ասաց Մարգոյի մայրը:

- Ո՞վ,- ասջեց Վիրաբը:

- Դիրեկտորը:

Ուրեմն՝ լուսամուտից տեսել է, մտածեց Վիրաբը, երևի տեսել է, թե ինչպես եմ ցոգոլով լիքը մայկաս ուսիս զգած տուն գալիս: Ու հիմա դասս կտա:

Երևի ճիշտ նույն կարծիքի էին նաև նրա ընկերները, որովհետև վախեցած ու կարեկցանքով նայեցին Վիրաբին ու լռեցին: Ի՞նչ ասեին: Մա այն դեպքը չէր, որ կարողանային որևէ կերպ օգնել նրան կամ նրա մեղքը իրենց վրա վերցնել: Եթե դիրեկտորը տեսել է Վիրաբին, ուրեմն՝ իրենց էլ է տեսել: Որովհետև երբեք և ոչ մի բան չի վրիպում դիրեկտորի ամենատես աչքից: Ոչ մի բան:

Արգամ Թոռյանը շարունակում էր լուսամուտից դուրս նայել, երբ Վիրաբը նրա առանձնասենյակը մտավ:

«Ըհր,- մտածեց Վիրաբը,- հենց էստեղից էլ տեսել է»:

- Մոտիկ արի,- առանց ետ նայելու, կամացուկ ասաց դիրեկտորը:

Վիրաբը մոտեցավ նրա գրասեղանին ու կանգ առավ:

- Հասե՞լ է,- հարցրեց Թոռյանը:

- Ի՞նչը:

- Ծիրանը:

- Ի՞նչ ծիրան, ընկեր Թոռյան:

- Ընդհանրապես,- ասաց դիրեկտորը,- ընդհանրապես ծիրանը:

- Ի՞նչ իմանամ,- ուսերը շատ անկեղծորեն թոթվեց Վիրաբը:

Դիրեկտորը դեպի նա դարձավ:

- Ի՞նչ իմանամ,- հեզմեց նա:- Ի՞նչ պիտի իմանաս: Թողն՞ում եք հասնի, որ իմանաք: Ցոգուլ-ցոգուլ ուտում եք:

Դիրեկտորը ժպտում էր, և Վիրաբը համարձակություն առավ:

- Որ հասնի, էլ մեզ կհասնի՞,- կամացուկ հարցրեց նա:

Թոռյանը քրքջաց.

- Ի՞նչ, ի՞նչ, որ հասնի՞ էլ ձեզ կհասնի՞: Հիանալի բառախաղ էր: Չի հասնի, ճիշտ էս, տղաս, հաստատ չի հասնի: Լավ եք անում, որ թոցնում եք: Համն ու հոտը դրա մեջ է: Շուկայից առածը չի ուտվում, ազնիվ խոսք: Ես էլ որ ձեր տարիքին լինեի, այգիներից դուրս չէի գա: Որ փոքր էի ու ամռանը գյուղ էի գնում, մեր գյուղացիները այգուց այգի ձայն էին տալիս.

«Էհե՛յ, զգո՛ւյշ մնացեք, Թոռչիենց Արզամն եկել է»:

Վիրաբը ժպտաց:

- Դու ինձ սխալ չհասկանաս, Վիրա՛բ,- հանկարծ հարկ համարեց ուղղել Թոռյանը:- Ես գո-դոլոյանն ընդհանրապես դեմ եմ: Ես ասում եմ գողությունը: Բայց երբ փոքրիկ տղան այգուց մի գրպան միրգ է թոցնում, էս դա գողություն չեմ համարում:

Վիրաբը տեխնիկումի դիրեկտորին երբեք այդքան բաց, հուզված, մանկացած չէր տեսել: Նրա աչքերի մեջ բոցկլտում էին հին, անցած օրերի կրակները:

- Դե ասա՛ տեսնեմ,- ծիծաղում էր նա:- Այնպիսի այգի կա՞, որ հնարավոր չլինի մտնել: Ասա՛ ...

- Ես ի՞նչ իմանամ,- այնուամենայնիվ զգաստացավ Վիրաբը:

- Չէ՛, ասա՛, կա՞, թե՛ չէ:

- Չէ՛,- ասաց Վիրաբը:

- Իսկ եթե պարիսպը բարձր է, փշալարով պատած ու դրանից բացի էլ պարսպի վրա կոտր-տած ապակիներ են շարել, ո՞նց կմտնես:

Վիրաբը մտածեց.

- Էդպիսի պարսպի հետ ի՞նչ գործ ունեմ: Կանցնեմ այգի մտնող առվի հունով կամ էլ՝ հենց միջով:

- Ճիշտ է,- ուրախ գոռոռաց Արզամ Թոռչյանը:- Ճիշտ է, միակ մուտքն է, որ լրիվ փակել հնարավոր չէ: Ապրե՛ս, - Վիրաբի ուսին խփեց տեխնիկումի դիրեկտորը:- Ու հերն էլ անիծած, չէ՞, որ շորերդ կթրջվեն ու կպատառոտվեն, որ կոշիկներդ կցեխտտվեն ու կծոմովեն, որ տանը հերդ կամ մերդ մի լավ ջարդդ կտան, կծեծեն...

- Ինձ ոչ մի հարազատ կյանքումս չի ծեծել,- հանկարծ խռպոտած ձայնով ասաց Վիրաբը:

- Ճի՞շտ,- զարմացավ Արզամ Թոռչյանը, հանկարծ հասկացավ, ամաչեց չգիտես ինչու ու տիրեց միանգամից:

Ու այդպես էլ տխուր-տխուր բացեց գրասեղանի գորոցը, ցածի դարակից հանեց Վիրաբին լավ ծանոթ նիկելապատ սուր շեղբով և գույնզգույն օղակներով զարդարված բռնակով ֆիննական դանակը, դրեց իր առջև, սեղանին ու ասաց.

- Իսկ սրա համար հաստատ արժեր ծեծել քեզ, Վիրա՛բ: Ափսո՛ս, շա՛տ ափսոս, որ ծեծող չես ունեցել, տղաս:

Վիրաբը մանկատանից գիտեր, որ ոչ մի արարք խոստովանել չի կարելի: Օրենքի պես գիտեր, որ խոստովանելը վախկոտություն ու դավաճանություն է:

- Իմը չի,- զարմանքը հազիվ թաքցնելով, շտապով ասաց նա:

- Քոնն է:

- Իմը չի,- պնդեց Վիրաբը:

- Քոնն է,- ավելի հանգիստ կրկնեց դիրեկտորը:- Եվ ես միայն մի բանի համար եմ ուրախ, որ չի գործածվել: Նստիր:

Նա քայլեց Վիրաբի շուրջը, ասես ուսումնասիրելով, հայացքը չկտրելով նրանից, հետո նստեց իր աթոռին, արմունկները տարածեց սեղանին, կզակը բռունցք դարձրած ձեռքերին իջեցրեց և, մի տեսակ ներքևից վերև տղային նայելով, հարցրեց.

- Ամռան արձակուրդներին ի՞նչ ես անելու:

- Ի՞նչ իմանամ,- ասաց Վիրաբը:

- Տեղ ունե՞ս գնալու:

- Ե՞ս,- հարցրեց Վիրաբը,- ո՞ր պիտի գնամ:

- Ուրեմն՝ ոչ մի տեղ չունես գնալու:

- Չէ՛:

- Գուցե՛ ճամբա՞ ր ուղարկեմ:

- Չէ՛, - շտապով ասաց Վիրաբը: - Ամբողջ կյանքում շարք եմ կանգնել: Հերի՛ք է: Զգվել եմ:

Դիրեկտորը բարձրացավ տեղից:

- Ամբո՛ղջ կյանքում, - հեզնեց նա՝ ձգելով բառերը: - Էդ ի՞նչ կյանք ես անցել: Քո ամբողջ կյանքը դեռ դիմացո՞ւ է:

Վիրաբը դիրեկտորի աչքերին նայեց ու որպես լիակատար համաձայնության նշան՝ տմբտմբացրեց գլուխը:

- Ես քո գլխին քարոզ չեմ կարդում, - ականա ժպտաց Թոռչյանը: - Ես գիտեմ, որ երբ մենք ճան ենք ասում, դուք ձեր լսողությունն անջատում եք: Նայում եք մեր աչքերին, տմբտմբացնում եք գլուխներդ՝ իբրև լիակատար համաձայնության նշան ու անջատվում եք: Գիտեմ: Դրա համար էլ քարոզ չեմ կարդա: Արհեստագործական ուսումնարանի ո՞ր խումբն ես ավարտել:

- Խառատների:

- Ի՞նչ կարգ ունես:

- Չորրորդ:

- Եվ այդ մակարդակին ես հասել՝ դանակներ տաշելո՞ւ համար:

Վիրաբը չպատասխանեց:

- Ես քեզ տղամարդու արժանի գործ եմ առաջարկում, - ասաց Թոռչյանը: - Ավելի ճիշտ՝ երկու գործ միանգամից: Մենք խառատային մի փոքրիկ հաստոց ունենք ներքնահարկում: Որպեսզի ամռանը պարապ-սարապ քարշ չգաս, աշխատեցրու հաստոցը: Ինչ մասեր ուզես՝ կտանք: Եվ երկրորդը՝ ցանկապատի մոտի ավտոները տեսե՛լ էս:

- Էն իսլա՞մը:

- Հա՛: Տե՛ս՝ կարո՞ղ ես այդ երեք ավտոմեքենայից մի կարգին ավտո հավաքել: Դուրս գրված են, բայց ափսոս գալիս է դեն գցել:

Վիրաբը ժպտաց:

- Ինչո՞ւ ես ժպտում: Ուզում ես ասել, թե մեռելներին ինչքան էլ գումարես իրար, մի ողջ մարդ դուրս չի՞ գա:

- Հա՛, - ծիծաղեց Վիրաբը:

- Ո՞վ իմանա,- ասաց Արգամ Թոռյանը:- Դու փորձի՛ր: Կորցնելու ի՞նչ ունենք: Ես դա կհամարեմ քո ավարտական քննությունը: Իսկ դրանից բացի,- դիրեկտորը նշանակալից բարձրացրեց մատը,- դրանից բացի, երեք ամիս քեզ կվճարեմ լրիվ աշխատավարձ, իբրև չորրորդ կարգի խառատի:

Դիրեկտորը բացահայտ ուրախություն էր փնտրում Վիրաբի դեմքին, բայց չգտավ ու շատ զարմացավ:

- Հասկացա՞ր,- ասաց նա,- քո թոշակից բացի, ամիսը կստանաս ևս հարյուր ռուբլի:

- Ինչի՞ս է պետք,- ուսերը թոթվեց Վիրաբը:

- Ի՞նչը,- ականջներին չհավատաց դիրեկտորը:

- Փողը,- ասաց Վիրաբը:

- Փո՞ղը,- Արգամ Թոռյանը կյանքում առաջին անգամ էր մեկին տեսնում, որին փող պետք չէր:

- Փողն իմ ինչի՞ն է պետք, ընկե՛ր Թոռյան,- շատ պարզ ու շատ հանգիստ բացատրեց Վիրաբը:- Մեր չունեմ, որ եղ փողով պահեմ, քույր չունեմ, որ շոր առնեմ նրա համար, ախպեր չունեմ, որ կոնֆետներ լցնեմ գրպանները: Ես իսկի տեղ էլ չունեմ, որ եղ փողը պահեմ: Փողն իմ ինչի՞ն է պետք:

Երկար տարիներ մանկավարժ էր Արգամ Թոռյանը, շատ-շատ երեխաներ էր տեսել և տարբեր, զարմանալի տարբեր երեխաներ, բայց, իրո՞ք, առաջին անգամ էր տեսնում մեկին, որն այդպես սառնասրտորեն խոսի իր ցավի մասին և կարծես թե նույնիսկ ինչ-որ խորը, ներքին բավականություն ստանա դրանից: Արգամ Թոռյանը զարմացած ու լուռ նայում էր տարօրինակ պատանուն և մտածում, որ նա այդպես էլ աշխարհին չի կարողանում ներել իր դժբախտ մանկության, իր մենակության, իր որբության համար: Եվ վախեցավ:

- Եվ, ուրեմն, այս արար աշխարհում չկա՞ մեկը, որին դու ուզենաս օգնել, լավություն անել,- հարցրեց նա:

- Չէ՛,- ասաց Վիրաբը:

- Ու ոչ մեկը չկա՞, որը քո կարիքն ունենա:

«Երևի միայն Մարգոն», - մտքում ծիծաղեց Վիրաբը և բարձրաձայն ասաց.

- Չէ՛:

- Ուրեմն՝ ես քեզ փող չեմ տա,- վճռեց դիրեկտորը,- որովհետև այն փողը, որ մարդուն պետք չէ, նրան դժբախտություն է բերում: Ես քո աշխատավարձը կհավաքեմ, քո անունով կզցեմ խնայողամարկդ ու կպահեմ այնքան, մինչև որ մի օր դու գաս ինձ մոտ ու ասես՝ ինձ փող է պետք, ընկեր Թոռյան, շատ եմ խնդրում, տուր ինձ իմ փողը:

Նա այդ խոսքերն այնպես բարակ, մուրացողի ձայնով ասաց, որ Վիրաբը ծիծաղեց:

- Չե՛մ գա:

- Կգա՛ս,- վստահ ասաց դիրեկտորը:- Կգա՛ս... Եվ երևի շատ շուտ գաս: Իսկ երբ կին ու երեխաներ կունենաս, և այդ կինն ու երեխաները կսեղմեն կոկորդո...- Նա երևի զգաց, որ այն չի ասում, ինչ կուզեր, այս ու այն կողմ քաշքշեց սեղանի թղթերը ու բարձրացավ տեղից:- Դե ինչ, շատ խոսեցինք, գործը հա՞նձն ես առնում, Վիրա՛բ:

- Կանեմ,- ասաց Վիրաբը:

*

* *

Նա տեխնիկումի և հանրակացարանի միջև ընկած բակն անցավ շախմատի ձիու նման՝ մեկ առաջ ու աջ, մեկ առաջ ու ձախ ցատկոտելով, խուսափելով ջրափոսերից: Այն մի քանի տասնյակ բոպենների ընթացքում, որ անց էր կացրել դիրեկտորի առանձնասենյակում, վարար անձրև էր տեղացել, լճակներով ծածկել ամբողջ բակը և նույնիսկ շեղակի թրջել, մզացրել շենքի տուֆե պատերը:

Հիմա լվացքս կարգին թրջված կլինի, մտքում ծիծաղեց Վիրաբը՝ հանկարծ հիշելով, որ միակ անթև մայկան լվանալուց հետո փռել էր բաց պատշգամբում: Նա վերև նայեց, բայց մայկան չտեսավ: Ուրեմն՝ տղաները ժամանակին հավաքել են, հանգստացավ նա, աջ ձեռքը մեկնելով բացեց հանրակացարանի մուտքի դուռը և դռան առջևի ջրափոսը թռչելով՝ միանգամից թափով բախվեց ինչ-որ մեկի:

«Վա՛յ, արևդ թաղեմ, վայրենի՛», - ճչաց այդ ինչ-որ մեկը արդեն հատակից՝ խալաթի փեշով բնագոպար ծածկելով ծնկները:

- Մարգո՞:

- Դո՞ւ ես, Վիրա՛բ ջան,- տնքաց Մարգոն:- Էդ ի՞նչ արիր, անխի՛ղճ...

Վիրաբը շփոթվեց, թեքվեց ցած՝ ձեռքը ականա պարզելով աղջկան:

- Հո որևէ տեղդ չի՞ կոտրվել,- հարցրեց կարեկցաբար:

- Հեռո՛ւ տար ձեռքդ,- ետ քաշվեց Մարգոն:

- Ի՞նչ:

- Ձեռքերդ քե՛զ պահիր:

Վիրաբը ծիծաղեց.

- Պահ՛հ, պահ՛հ, պահ՛հ, հենց ուշքս էլ գնում էր քեզ ձեռք տալու համար: Դե վե՛ր կաց: Վե՛ր կաց, լա՛վ...

Մարգոն շարժվեց տեղում և խուլ ճչաց.

- Չէ, չէ՛, ցավում է: Վա՛խ, մամ՛ա ջան...

- Որտե՞ղ է ցավում, - հարցրեց Վիրաբը:

- Քո գործը չի:

Վիրաբը նորից ծիծաղեց:

- Հասկացանք: Բա հիմա ի՞նչ պիտի անենք:

- Գնա, ի՞նչ պիտի անես, արածդ արեցիր, - տնքալով ասաց Մարգոն: - Ես մի կերպ տուն կհասնեմ:

- Չէ, էդպես չի լինի: Էն էլ՝ քարոզ լսելուց հետո, - ժպտաց Վիրաբը, թեքվեց ու փետուրի նման բարձրացրեց աղջկան: - Ձեռքերովդ բռնիր վիզս:

Մարգոն լուռ ու մունջ հնազանդվեց ու երևի չափից ավելի ամուր ցրկեց տղայի պարանոցը:

- Ծոխ քաշ ունես, - ասես կշռելով աղջկան վեր ու վար արեց Վիրաբը և միայն հիմա հասկանալով իր ծիծաղելի վիճակը և սարսափելով այն մտքից, թե տղաներից մեկն ու մեկը կնկատի իրեն, ոտքի մի հարվածով լայն բացեց մուտքի դուռը, դուրս թռավ և վազելով պատի կողքով, սկսեց արագ-արագ, գրեթե ցատկելով իջնել ներքնահարկ տանող երկաթե բաց սանդուղքով:

- Կամա՛ց, կընկնես, աննորմա՛լ, - նրա գրկում ծղրտում էր Մարգոն՝ ավելի սեղմելով տղայի վիզը:

- Մերդ տա՛նն է, - դռան մոտ կանգ առնելով, հևաց Վիրաբը: - Ցա՛ծ իջիր:

- Չէ, ներս տար, - նորից տնքաց Մարգոն:

- Աղջի, չես կարո՞ղ քայլել, - ջղայնացավ Վիրաբը:

- Որ կարողանայի, կքայլեի, էլի, շա՛տ պետքս էիր:

Վիրաբն զգուշությամբ բացեց դուռը, ներս մտավ ու կանգ առավ սենյակի կեսը գրաված միակ լայն թախտի առաջ:

- Իջի՛ր, - ասաց նա

Մարգոն ձայն չհանեց:

- Իջի՛ր, ա՛յ աղջի,- կրկնեց Վիրաբը:

- Չեմ իջնում,- ասաց Մարգոն:

Վիրաբը թեքվեց թախտի վրա:

- Ձեռքերս բաց եմ թողնում: Իջի՛ր, ասում եմ...

Նա բաց թողեց ձեռքերը, բայց աղջիկը շարունակում էր կախված մնալ նրանից, բարակ թևերով ամուր գրկած տղայի վիզը:

- Հիմա որ ցավոտ տեղիդ մի հատ հասցնեմ...- սպառնաց Վիրաբը: Բայց Մարգոն չսպասեց, որ նա սպառնալիքն իրականացնի, ցատկեց թախտին ու սկսեց վեր-վեր թռչել:

- Խաբեցի, խաբեցի, ոչ մի տեղս էլ չի ցավում, դե գնա՛, համբա՛լ:

- Չէ՛, քո մի տեղը հաստատ ինչ-որ բան պակաս է,- մատը քունքին տանելով, ավելի շատ վշտացած, քան զայրացած՝ ասաց Վիրաբը:

- Ինչի՞, Վիրա՛բ ջան, ինչի՞, ազի՛զ ջան,- միանգամից լրջացավ Մարգոն,- ասա՛, ուրիշ ի՞նչ անեի, որ դու գրկեիր ինձ, ասա՛ ...

- Իսկ ինչո՞ւ պետք է գրկեի քեզ,- ճշմարիտ բարկացավ Վիրաբը:

- Քե՛զ ասա,- ծիծաղեց Մարգոն: -Ե՞ս քեզ խնդրեցի: Չէի՞ ասում՝ ձեռք չտաս ինձ:

- Ա՛խ, Մարգո՛ աղջիկ,- հոգնած ասաց Վիրաբը,- ես քեզ մի օր երևի ձեռք կտամ ու էնպես ձեռք կտամ, որ...

- Ո՞ր օրը,- հարցրեց Մարգոն:- Երանի այդ օրվան:

Վիրաբը ձեռքը թափ տվեց, շարժվեց, որ դուրս գա և հայացքն ակամա ընկավ սենյակի մի կողմից կապված պարանին, որից տղամարդու մի մայկա էր կախված

- Սա՞ ումն է,- զարմացած հարցրեց նա:

- Հեչ,- ասաց Մարգոն:

- Սա ո՞ւմ մայկան է, Մարգո՛:

- Ասում եմ՝ հեչ, էլի, այ տղա: Էստեղ մեկը կա՝ նրանն է:

- Ո՞ւմը,- ինքն էլ զարմանալով, թե ինչու է կորցնում իրեն, խուլ ձայնով կրկնեց Վիրաբը:

- Քոնը,- ասաց Մարգոն:

- Ի՞մը... Հա, էլի, իմ մայկան ի՞նչ գործ ունի էստեղ, ա՛յ աղջի:

- Ի՞նչ անեի, թողնեի անձրևի տա՞կ:
- Հա՛, բայց ո՞նց իմացար, որ դա իմ մայկան է:
- Պա՛հ, կարծես թե հարյուր հատ ունես: Էդ մեկն է, էլի...
- Լա՛վ, բայց էնտեղ ուրիշ մայկաներ էլ կային փռած, չէ՞: Ինչի՞ց իմացար, թե որն է իմը:
- Հոտից,- ասաց Մարգոն:- Քո հոտից: Ե՞րբ ես կարգին լվանում, որ...

Վիրաբը հուսահատ թոթվեց ուսերը: Նա չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Ջգում էր, որ տանել չի կարողանում այդ աղջկան, նրա անհեթեթ խոսքերն ու ավելի քան անհեթեթ արարքները, ծամոնի նման կպչուն բնավորությունն ու հետն էլ կծու, հունից հանող լեզուն, միշտ գզգզված, իրար խառնված մազերն ու բարակ, երկար ոտքերը՝ տղայավարի քերծված ծնկներով: Ոչինչ, աղջկա մեջ գրեթե ոչինչ դուր չէր գալիս Վիրաբին, բայց զարմանալիորեն լավ էր զգում իրեն, երբ Մարգոն կողքին էր: Նա հազվադեպ էր ծիծաղում, բայց երբ Մարգոն կողքին էր լինում... Տարօրինակ բան է, ուզում էր զայրանալ, բայց փոխարենը ծիծաղում էր: Այդպես էր ստացվում ակամա: Ուզում էր թողնել հեռանալ, բայց մնում էր կանգնած:

Հիմա էլ՝ քայլ արեց, որ դուրս գա մութ ու խոնավ ներքնահարկից, բայց անմիջապես էլ շրջվեց ու ասաց բարկությամբ:

- Քեզ ո՞վ է խնդրել, որ վերցնես ու լվանաս,- նա մեկնեց ձեռքը, պարանից պոկեց մայկան ու ծալեց բռունցքի մեջ:- Ի՞նչ գործ ունես դու ինձ հետ: Ասա՛, ասա՛ տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում ինձանից:

Մարգոն արդեն նստել էր թախտին, ծալապատիկ ոտքերի վրա ու գզգզված մազերի տակից տխուր աչքերով Վիրաբին էր նայում: Իսկական դերասան էր այդ աղջիկը: Նա դեմքի արտահայտությունը վայրկյանը մեկ կարող էր փոխել:

- Վիրա՛բ ջան, ես քեզանից ոչինչ-ոչինչ չեմ ուզում: Միայն խնդրում եմ՝ թույլ տաս, որ լվացքդ մեկ-մեկ ես անեմ, ի՞նչ կլինի:

- Լվա՛ցքդ,- հեզնեց Վիրաբը,- իմ ունեցած-չունեցածը երկու մայկա է ու մի...

- Թո՛ղ՝ ես լվանամ, էլի...

- Ինչի՞ համար: Որ մի շաբաթում մաշես-վերջացնե՞ս...

- Ասեմ, ասեմ, մի բարկանա: Էն տղաներն էլի սկսել են պտտվել չորս կողմս, Վիրա՛բ: Հենց դու ձեռք ես քաշում ինձնից, նրանք իսկույն մեկնում են իրենց կեղտոտ ձեռքերը: Քեզնից ի՞նչ է գնում, ցա՛վդ տանեմ, թող մեկ-մեկ լվանամ շորերդ, որ նրանք մտածեն, թե մենք իրար հետ ենք: Ախր ես իսկականից ուզում եմ լավ աղջիկ դառնալ...

Վիրաբը չգիտեր՝ հավատա, թե չհավատա:

- Ո՞վ, կոնկրետ ո՞վ,- զայրացավ նա:- Ասա՛, էլի, կոնկրետ ո՞վ:

- Որ ասեմ, դրանից հետո էլ ո՞վ կմնա,- ծիծաղեց Մարգոն ու հանկարծ, ձեռքը պարզելով, կատվի քնքշությամբ շոյեց-շոշափեց տղայի բազուկը,- ո՛հ, մուսկուլ եմ ասել, հա ...

Վիրաբը ծիծաղեց ակամա... ետ քաշեց ձեռքը և շոյանքից ստացած դողն ու շփոթությունը թաքցնելու համար, սրտնեղած նետեց.

- Մազե՛րդ սանրի, մազե՛րդ, ոնց որ հոպոպ լինես...

Մարգոն ժպտաց իր ամենապայծառ, իր ամենաթովիչ ժպիտով.

- Վիրա՛բ ջան, բա դու իսկի չորս կողմդ չե՞ս նայում: Հիմա մոդան է էսպես, ա՛յ որբ-անտեր,- ասաց նա կոտրատվելով:

*

* *

Ամառը շատ արագ անցավ:

Կամ գուցե Վիրաբին էր այդպես թվում, որովհետև ողջ ամառ նա, ինչպես ասում են, գլուխ բարձրացնելու ժամանակ չունեցավ: Զանգվի ձորի այգետերերը կարող էին խորին շնորհակալություն հայտնել Արգամ Թոռչյանին: Արգամ Թոռչյանը լավ գիտեր, թե ում է հանձնարարություն տալիս: Վիրաբը կարգի բերեց խառատային հաստոցը, հարկավոր հին մասերը տաշել-տաշտշելով, հազար ու մի տեղից ու հազար ու ձևով նորերը ճարելով, նա հավաքեց բակում ընկած հին գազիկներից մեկը, թափքը ներկեց տեխնիկումի ունեցած միակ մուգ կանաչ ներկով և նոր համար հանեց, որը նրա հպարտությունն էր, որովհետև ցույց էր տալիս Վիրաբի ծննդյան թիվը՝ 1945, եթե հաշվի չառնվեր գույգ թվերի արանքում ընկած փոքրիկ գիծը:

Նա անհամբեր սպասում էր, թե երբ առողջարանից կվերադառնա տեխնիկումի դիրեկտորը, որ հենց իր գազիկով էլ գնա երկաթուղային կայարան՝ նրան դիմավորելու: Իսկ մինչ այդ երեկոները տրաքտրաքոցով միացնում էր շարժիչը, իր հավատարիմ, իր անդավաճան օգնականներին՝ կից բակերի՝ ճամբար գնալու հնարավորություն չունեցող մանրիկ երեխաներին բարձրացնում թափքի մեջ ու պտտվում, հա պտտվում տեխնիկումի ընդարձակ բակում՝ պստիկների ճիչ-աղաղակներով լցնելով շրջապատը:

Մի անգամ էլ Մարգոն աղաչանք-պաղատանքով ավտոմեքենա բարձրացավ, նստեց Վիրաբի կողքին, գլուխը ետ գցեց, փակեց աչքերը և երանությամբ ասաց.

- Ես երջանիկ եմ, Վիրա՛բ:

Հետո ինքն էլ վախեցավ իր խոսքից, ներքևից վերև Վիրաբի կենտրոնացած դեմքին նայեց, շոյեց դեկը բռնած նրա ձեռքն ու ասաց.

- Գիտե՞ս, ես իմ մասին կյանքումս առաջին անգամ ասացի երջանիկ բառը: Անցյալ տարի մեր դասատուն ազատ շարադրություն էր տվել՝ «Ի՞նչ բան է երջանկությունը» թեմայով: Ես ոչ մի

բան չկարողացա գրել ու «երկու» ստացա: Երջանկությունից: Ծիծաղելի է, չէ՞, Վիրա՛բ: Շատ ծիծաղելի է, չէ՞ ...

Եվ Վիրաբի ներսում ինչ-որ տեղ մի ցավ սկսվեց, բարձրացավ կոկորդով ու խեղդեց նրան: Ինչպես այն ժամանակ, սանդուղքի տակ:

Մի քանի օր էր մնացել մինչև ուսումնական նոր տարվա սկիզբը: Ներկարարները արագ-արագ սպիտակեցրել էին ինչ պատահի ու թողել գնացել՝ ապականելով ամբողջ շրջապատն ու լուսամուտների ապակիները: Եվ ավտոմեքենայով բակում շրջելիս Վիրաբը երբեմն-երբեմն մեկ այս, մեկ այն լուսամուտի ետևում Մարգոյի և նրա մոր՝ Վարդանուշի ստվերներն էր տեսնում, որոնք ջանասիրությամբ մաքրում-փայլեցնում էին ապակիները: Եվ Վիրաբն ամեն անգամ մտածում էր, թե, այնուամենայնիվ, շատ վտանգավոր է, երբ ապակիներն է սրբում գրեթե կույր կինը: Ինչպե՞ս է, որ մարդիկ չեն զգուշացնում: Ինչո՞ւ կտրականապես չի արգելում Մարգոն: Կամ գուցե ամեն մեկը կարծում է, թե մյուսը արդեն զգուշացրած կլինի: Կամ գուցե մտածում են, թե կարելի է վաղն էլ միջամտել ու կանխել: Դա կյանքում ամենամեծ ու ամենադառը դասը եղավ Վիրաբի համար: Եվ տեղի ունեցած ցնցող ողբերգության մեջ Վիրաբն ամբողջ կյանքում իրեն էլ էր հանցավոր համարում: Որովհետև կարող էր զգուշացնել ու չարեց: Որովհետև կարող էր մոտենալ ու ասել.

- Զգո՛ւյշ մնա, Վարդանո՛ւշ մայրիկ, կընկնես:

Եվ, ով գիտե, գուցե թե տեղի չունենար այն, ինչ ունեցավ:

Վիրաբը երեխաներով լեփ-լեցուն ավտոմեքենայով պտտվում էր բակում, երբ հանկարծ ինչ-որ ուժգին թմկոց լսվեց և սարսափաձայն աղաղակներ: Երեխաները բռունցքներով սկսեցին թմբկահարել ավտոյի խցիկի թիթեղյա տանիքին, և Վիրաբը կանգ առավ.

- Երրորդ հարկի պատուհանից մեկը ցած ընկավ,- իրար խանգարելով ու լրացնելով՝ լալիս ու ճչում էին վախեցած մանուկները:

Վիրաբը արգելակեց մեքենան, դուրս ընկավ խցիկից ու վազեց դեպի այն կողմ, որտեղ մատնացույց էին անում երեխաները: Պատից բավականին հեռու՝ փշրված ապակիների կտորտանքների մեջ, կծկված-ընկած էր Վարդանուշ մայրիկի մարմինը:

Հետո մի սրտակեղեք ճիչ լսվեց ու, «Վա՛ խ, մամա ջան» կանչելով, հրապարակում հայտնվեց Մարգոն: Վիրաբը կտրեց նրա ճանապարհը, բայց աղջիկը խելացնորի ուժով դուրս պրծավ նրա ձեռքից, ճեղքեց երեխաների օղակը և ընկավ մոր արնաշաղախ մարմնի վրա: Գոռում ու համբուրում էր այդ արնաշաղախ մարմինը, մեկիկ-մեկիկ բարձրացնում էր անգոր թևերն ու համբուրում, բաց մնացած սպիտակ աչքերն էր համբուրում մեկիկ-մեկիկ, գլուխը դնում մոր դեռ տաք կրծքին ու ճչում խելագար:

Ու խոսում էր շտապով, շտապով, ինչ-որ խոսքեր էր մրմնջում, որոնցից գրեթե ոչինչ հնարավոր չէր հասկանալ. ինչ-որ մտերիմ, շատ անձնական բաներ, որ երևի միայն աջիկը կարող էր ասել մորը: Միայն մի խոսք էր, որ կրկնվում ու կրկնվում էր անընդհատ: Մարգոն ասում էր. «Ինձ ո՞նց թողեցիր, մա՛մ, ինձ ո՞նց թողեցիր, անխի՛ղճ, բա հիմա ես մենակ ինչպե՞ս պիտի ապրեմ աշխարհում»:

Չգիտես՝ ում կանչով, ինչպես դեպքի վայրը հասավ շտապօգնության ավտոմեքենան: Բժիշկը թղթի մի կտոր գտավ, փռեց գետնին, մի պահ ծնկեց զգուշորեն, թեքվեց Վարդանուշ մայրիկի մարմնի վրա, հետո բարձրացավ տեղից, ուղղեց ակնոցն ու հարցրեց.

- Տեր ունի՞ :

- Ի՞նչ տեր,- հարցրեց Վիրաբը:

- Տեր, էլի՝ հայր, մայր, քույր, եղբայր, որդի...

«Ուրեմն, եթե իմ մասին հարցնեն, պիտի ասեն՝ անտեր է», - մտածեց Վիրաբը:

Նա մատնացույց արեց պատի տակ կծկված, ողբացող Մարգոյին:

- Աղջիկն է:

- Հիմա ո՞վ է մեզ հետ գալիս, մենք անատոմիկում ենք գնում,- անհամբեր ասաց բժիշկը:

- Ես,- ասաց Վիրաբը...

Վարդանուշ մայրիկին թաղեցին Կիրգայի գերեզմանատանը:

Վիրաբը կյանքում առաջին անգամ հասկացավ, թե ինչ բարդ բան է մեռնելը: Ավելի ճիշտ՝ հուղարկավորություն կազմակերպելը: Նախ պարզվեց, որ Վարդանուշ մայրիկի տանը կար ընդամենը տասներկու ռուբլի: Անատոմիկումի աշխատողը հասկացրեց, որ եթե հնարավորություն չունեն թաղելու, կարող են դիակը թողնել անատոմիկումում: Վիրաբը սկզբում ոչինչ չհասկացավ ու գլխով արեց, բայց երբ մի պահ նայեց Մարգոյի աչքերին, հասկացավ անմիջապես և շտապով ասաց.

- Չէ՛ պետք չէ, մենք կթաղենք:- Իսկ հետո ավելացրեց գրեթե չարությամբ:- Նա անտեր չի:

Ասաց, բայց ինքն էլ չէր հասկանում, թե ինչ պիտի անի: Եվ երբ Մարգոն, որը ուժգին հիստերիկայից հետո խոր անտարբերության մեջ էր, հարցրեց.

- Բա փո՞ղ որտեղից պիտի ճարեմ, Վիրա՛բ...

- Հարևաններից,- ասաց Վիրաբը:- Պարտք կանենք:

Ու միանգամից էլ հիշեց, որ ինքը փող ունի ստանալու: Մի ամբողջ երեք հարյուր ռուբլի: Եվ թող ընկեր Թոռյանը նեղություն չքաշի՝ ինայդրամարկդի գրքույկի մեջ գցելու համար: Նա հիշեց, թե ինչպես ընկեր Թոռյանն ասաց. «Կգաս և երևի շատ շուտ կգաս»: Ո՞նց գիտեր այդ մարդը: Մարգարե՛ էր, ինչ է:

Վիրաբն այնքան ուրախացավ, որ նույնիսկ ժպտաց ու հանգիստ ասաց.

- Պարտք կանենք, Մարգո՛: Ես ահագին փող ունեմ ստանալու: Իմ ինչի՞ն է պետք:

Գերեզմանատանը Մարգոյից ու Վիրաբից բացի միայն տեխնիկումի մոտ ապրող երեք հարևաններ կային, հենց նրանք, որ պարտք էին տվել: Նրանք էլ լաց եղան մի քիչ՝ ո՞վ գիտի՝ իրենց որ հանգուցյալին հիշելով ու երբ ցածրիկ հողաթումբը պատրաստ էր արդեն, շրջվեցին ու իջան բլուրն ի վար:

- Սպասե՛ք, ես ձեզ ավտոյով կտանեմ,- ձայն տվեց նրանց ետևից Վիրաբը:

- Չէ՛, տղա՛ ջան,- ասաց նրանցից մեկը,- մենք ուրիշ գերեզմաններ էլ ունենք տեսնելու:

Վիրաբը նստեց մի գերեզմանաքարի ու սպասեց, որ Մարգոն վերջացնի գործը: Իսկ Մարգոն վայրի ծաղիկներ էր քաղում ճամփեզրից, սալաքարերի արանքից, չորացած առվի հունից: Քաղում էր կարճ ցողուններով ինչ-որ դեղին ու սպիտակ ծաղիկներ, բերում ու կամացուկ դնում ցածրիկ հողաթմբի վրա ու գնում նորից էր բերում: Երևի ամաչում էր, որ կողքի հողաթմբին պսակներ ու ծաղիկներ շատ կան, իսկ իր մոր գերեզմանին չկան:

- Մարգո՛,- հարցրեց Վիրաբը,- դու տեսա՞ր, թե ոնց եղավ...

- Չէ՛,- ասաց Մարգոն:- Բայց ես գիտեի...

- Ո՞նց թե,- ապշեց Վիրաբը,- ի՞նչ գիտեիր...

- Ինքն էր ասել:

- Ասել էր, որ իրեն պետք է ցած գցի:

- Հա՛:

- Ինչի՞ համար... Կուրանալո՞ւ...

- Հա՛,- ասաց Մարգոն:- Չէր ուզում ապրել:

Վիրաբը նրան էր նայում չթաքցրած զարմանքով: Նույնիսկ բարձրացավ քարից: Ես ի՞նչ է ասում: Ես ի՞նչ տեսակ արարած է:

- Սպասի՛ր, դու գիտեիր ու... Մայրդ քեզ ասել էր ու ... Ու դու հանգիստ սպասում էիր, թե երբ է ինքնասպան լինելու: Էդ ի՞նչ ապուշ բան էս ասում, էդ ի՞նչ ստոր բան էս ասում, Մարգո՛:

Մարգոն փլվեց, լաց եղավ միանգամից, երեխայավարի ու դրանից կնճռոտվեց, տգեղացավ դեմքը, արտասուքները հոսում էին փոշոտ այտերի վրայով՝ ասես ակոսներ բացելով, իսկ նա հողոտ մատներով իբր սրբում էր այտերը՝ փոշին ու արցունքը ավելի խառնելով իրար, և նա-յելով նրան՝ Վիրաբը մտածեց, որ հիմա, հենց հիմա ինքը բոլորովին չի խղճում նրան և ընդ-հակառակը՝ ատում է:

- Էդ ի՞նչ էս ասում... Ուրեմն նա քեզ ասել էր, ու դու չէի՞ր փորձում համոզել, չէի՞ր փորձում խանգարել...

- Ախր ո՞վ կհավատար,- հեծկլտում էր Մարգոն:

- Դու նրա կողքից մի քայլ չպետք է հեռանայիր... Դու չպիտի թողնեիր, որ նա աշխատի ու էն էլ՝ ապակիներ լվանա... Դու պիտի... Էհ, թե ե՛ս ինչու եմ ավելորդ տեղը ուշացած խոսում...

- Վիրա՛բ ջան, դու ինձ սխալ հասկացար,- հեկեկոցի միջից ընդհատ-ընդհատ պոռթկում էր Մարգոն:- Էդպես չի եղել, Վիրա՛բ ջան: Հինգ տարի շարունակ, այն օրվանից, երբ սկսեցին ցավալ աչքերը, նույնն էր ասում... Ասում էր, եթե կուրանամ, ինձ ցած կզցեմ երրորդ հարկից... մի օր էլ չեմ ապրի: Ես ի՞նչ իմանայի... Մտածում էի՝ ցավ է, էլի, մտածում էի՝ խոսք է, էլի... Իսկ դու էնպիսի բաներ ես ասում: Բա ես... բա ես կուզենայի՞ մենակ մնալ արար աշխարհում... Ախր ես իմ մորից բացի ոչ ոք չունեմ, ոչ ոք... Ես ո՞նց եմ ապրելու սրանից հետո...

«Էլի՛ ես, դարձյալ՛ ես,- սրտնեղելով մտածում էր Վիրաբը:- Ես, ես, ես... Անուղղելի եսասե՞ր է, թե՞ չի հասկանում: Չի հասկանում, իհարկե, չի հասկանում: Ուղղակի չի հասկանում,- մտածեց Վիրաբը:- Չի հասկանում ու դրա համար էլ մեղք չունի: Եթե հասկանար, չե՞ որ այդպես չէր խոսի, ուրիշ բան կասեր, բոլորովին ուրիշ բան: Կամ գոնե կկեղծեր, կխաբեր, իրեն կվերագրեր արարքներ, որ չի կատարել և խոսքեր, որ չի ասել: Կաշխատեր խելոք երևալ, ցույց տալ, որ շատ կարեկից ու սիրող աղջիկ է եղել: Իսկ հիմա ինչ ասում է՝ իր դեմ է ասում: Եվ ասում է ոչ թե զոջալով, ոչ թե մեղադրելով ու դատապարտելով իրեն, այլ որովհետև չի հասկանում, թե ուրիշ ինչ պիտի ասի կամ ինչպես պիտի ասի: Ու դրանից էլ անկեղծ է այս աղջիկը ու մեղք է: Շատ մեղք է»:

- ... Ո՞նց եմ ապրելու... Ի՞նչ եմ անելու: Որ ինձ նեղացնեն՝ ո՞ւմ մոտ եմ լաց լինելու: Ավելի լավ չէ՞ր ինձ էլ հետո տանեիր, մամա՛ ջան,- մրմնջում էր Մարգոն:- Բռնեիր թևս ու նոր ընկնեիր, մամա՛ ջան: Բա մերն էլ երեխային աշխարհ կբերի ու կթողնի անտե՛ր...

Վիրաբին թվաց, թե հարվածեցին իրեն: Նա նույնիսկ մի պահ ետ նայեց, որ տեսնի, թե ով էր հարվածողը: Այդ ի՞նչ հարցրեց Մարգոն: Ի՛նչ ասաց: Բա մայրն էլ երեխային աշխարհ կբերի ու կթողնի անտե՛ր: Այդ նույն հարցը միլիոն անգամ մտքում աղաղակել էր Վիրաբը: Նա զարմանալիորեն հորը չէր հիշում կամ ավելի շուտ՝ երբեք չէր մեղադրում, չգիտես ինչու համոզված լինելով, որ եթե ինքը պատերազմի վերջին օրն է ծնվել, ուրեմն հայրը գոհվել է պատերազմում: Համոզված էր, որ ջահել է եղել հայրը, ամուսնացել է, անմիջապես պատերազմ են տարել և պատերազմում էլ գոհվել է: Իսկ մայրը, մայրը... Այսինքն՝ նա մորն էլ վաղուց չէր մեղադրում: Արդեն մեծ տղա էր և գիտեր, որ աշխարհում հնարավոր է ամեն ինչ: Ամեն լավ բան և ամեն վատ բան: Բայց համոզված էր, որ մայրը կա: Ապրում է ինչ-որ տեղ, մոտերքում: Ուրիշ ամուսին ունի և ուրիշ երեխաներ: Սկզբում հնարավորություն չի ունեցել պահելու որդուն, հետո հնարավորություն չի ունեցել տեսնելու որդուն, հետո հնարավորություն չի ունեցել հիշելու որդուն: Բայց մի թե՛ հնարավոր է դա: Վիրաբը յուրաքանչյուր կնոջ մեջ մորն էր փնտրում: Ուսուցչուհիների մեջ մորն էր փնտրում: Որտեղ ապրում էր՝ հարևանների մեջ մորն էր փնտրում: Եվ ամենազարմանալին այն էր, որ նրան թվում էր, թե հենց որ հանդիպի, անմիջապես կզգա, կճանաչի: Թե առաջինը համենայն դեպս ինքը կճանաչի: Երկար կնայի աչքերի մեջ ու կճանաչի: Կճանաչի ու կասի. «Մա՛մ ջան, բա մերն էլ իր երեխային աշխարհ կբերի ու կթողնի անտե՛ր»: Չէ, ավելի շուտ՝ կասի. «Մա՛մ ջան, բա ես իսկի պետք չե՛մ քեզ: Մեծ տղա եմ, գուցե թե մի բանով պետք եմ գալիս քեզ: Բա դու իմ կարիքը չե՛ս զգում, մա՛մ»:

Վիրաբը գրպանից հանեց թաշկինակն ու Մարգոյին մեկնեց.

- Սրբի՛ երեսդ, ամբողջը ցեխ է, ա՛յ աղջի:

Մարգոն մեքենայաբար վերցրեց թաշկինակը, դեմքին տարավ, բայց անմիջապես էլ ետ մեկնեց շտապով.

- Կլեղտոտվի,- ասաց նա:

- Հիմա՛ ր,- նրա ձեռքը նորից ետ ծալելով, սրտանց ասաց Վիրաբը,- անխելք աղջիկ ես, էլի:

Եվ Մարգոն խղճալի ժպտաց:

Մարգոն ժպտաց խղճալի: Եվ այդ ժպիտն էլ վճռեց ամեն ինչ:

«Ինչքան նման ենք իրար,- հանկարծ շատ պարզ գիտակցեց, ասես հայտնագործեց Վիրաբը,- էս ինչքա՛ն նման ենք իրար: Մենակ թե ես ցույց չեմ տալիս , ինչ մտածում եմ, իսկ նա ցույց է տալիս: Չի թաքցնում: Ձևեր չի թափում: Ես իմ մտքում եմ ասում. «Բա մերն էլ իր երեխային աշխարհ կբերի ու կթողնի անտե՛ր»։ Իսկ նա բարձր ձայնով է ասում: Ու երկուսս էլ որք ենք ու անտեր: Մենք էլ ո՞ւմ ենք պետք աշխարհում, եթե ոչ իրար: Կամ գոնե ես հո գիտեմ, որ նրան պետք եմ: Ոչ մեկին պետք չեմ ու մենակ նրան եմ պետք: Ախր ես որ ուզենամ, Մարգոն երջանիկ կլինի: Իսկ քի՞չ բան է, որ կյանքում գոնե մեկին տեր կանգնես, որ երջանիկ լինի»:

Այդպես կամ մոտավորապես այդպես էր մտածում Վիրաբը: Իսկ բարձրաձայն ասաց.

- Մարգո՛, լսի՛ր, թե ինչ եմ ասում: Տե՛ս. էս իրիկունն է, դու ես, ես եմ ու մորդ գերեզմանն է: Ու ես մորդ գերեզմանի առաջ երդվում եմ, որ էլ երբեք, քանի կամ, քեզ մենակ չեմ թողնի: Լսո՞ւմ ես. աշխարհի ինատու ես ամեն ինչ կանեմ, որ դու բախտավոր լինես: Շան պես կչարչարվեմ, կտանջվեմ, որ իսկի հնար չունենամ, կգնամ համբալ կաշխատեմ, կգնամ աղբ կթափեմ ու կպահեմ քեզ: Կպահեմ թագուհու նման, հավատա՛, դու ոչ մի բանի պակասություն չես ունենա: Ոչ մի բանի: Աշխարհի ամենասիրուն շորերը կառնեմ քեզ համար ու ամենափայլուն կոշիկները, ամեն մատիդ մի մատանի կհագցնեմ ու կթողնեմ ամեն օր վարսավիրանոց գնաս, որ ուրիշները սանրեն էդ զգզված մազերդ, Մարգո՛ ջան:

Նա ուզում էր շատ բաներ ասել, շատ լավ ու բարձր բաներ, բայց երևակայությունը դրանից այն կողմ չէր անցնում: Մտածեց, մտածեց ու հիշեց և շատ ուրախացավ հիշելով, որ Մարգոն տուն էլ չունի, և ինքը կարող է տուն էլ նվիրել նրան:

- Հա՛, հետո քեզ կհանեմ էդ պաղվալից ու կտանեմ իմ ձեռքով սարքած տունը՝ բարձր սյուներով ու մեծ պատշգամբով: Մենք իրիկունը կնստենք մեր պատշգամբում, թեյ կխմենք ու կնայենք իմ տնկած ծառերին: Իսկ երբ մութն ընկնի, իրար հետ կգնանք ու ցոգով կթոցնենք հենց մեր ծառերից, հը՞... Ու դու էլ ինձ էն օրվա նման, հիշո՞ւմ ես, էն օրվա նման, երբ նստած էիր կողքիս, ավտոյի մեջ, կասես. «Ես երջանիկ եմ, Վիրա՛բ»: Հը՞... Կասե՛ս...

Բայց երևի չափազանց շատ էր այդ ամենը Մարգոյի համար, որովհետև նա սկզբում իջավ ծնկների վրա, ասես միանգամից թուլացան ոտքերը, հետո երեսնիվար ընկավ փխրուն հո-

ղաթմբին ու դեմքը թաքցրեց սպիտակ ու դեղին մանրացողուն վայրի ծաղիկների մեջ, որ իր ձեռքով էր քաղել գերեզմանատան փոշոտ ճամփեզրից, սալաքարերի արանքից ու չորացած առվի ճաքճքած հունի միջից:

Իսկ Վիրաբը թափով բարձրացավ ավտոմեքենան, միացրեց շարժիչը, հենվեց ոսոնակին, գազն ավելացրեց, որքան կարող էր, դորոյունով ցրեց գերեզմանատան լռությունը և սեղմեց ձայնի կոճակը: Մեղմեց երկար-երկար ու ընդհատ-ընդհատ, Մարգոյին կանչելով իր մոտ, շտապեցնելով, որ գա, որ գնան, որ հեռանան գերեզմանատնից՝ իրենց նոր կյանքին ու ճակատագրին ընդառաջ:

*

* *

Երբ Վիրաբը գերեզմանատանը իր անկեղծ սրտառույ խոսքն էր ասում, կամ, ինչպես հետագայում էր ծիծաղում՝ հանդես էր գալիս թեզիսներով ու ծրագրային ճառով, մտքով ամեննին էլ չէր անցնում, թե որքան մոտ է իրականությանը և ճակատագիրը որքան բառացիորեն կհասկանա իր խոսքերը, հատկապես՝ աշխատանքի հարցում:

Նշանակումները նոր էին սկսվել, երբ նրան իր առանձնասենյակը հրավիրեց տեխնիկումի դիրեկտոր Արգամ Թոռյանը:

- Ես քեզից շատ գոհ եմ, Վիրա՛բ,- ասաց նա:- Եվ որպեսզի դու իմանաս, թե որքան գոհ եմ, առաջարկում եմ մնալ տեխնիկումում: Ե՛վ արհեստանոցը կղեկավարես, և՛ գործնական պարապմունքներ կանցկացնես աշակերտների հետ, կսովորեցնես ավտո վարել:

Եվ որովհետև Վիրաբը լռում էր, դա վերագրեց իր մատուցած անակընկալին, ժպտաց և նույնիսկ հարկ համարեց կատակել:

- Հը՞, ուրախությունից կծեցի՞ր լեզուդ: Մի՛ զարմանա, հին խոսք է, ասում է՝ մեծ է որբի աստվածը:

- Որբի դիրեկտորն է մեծ, ընկե՛ր Թոռյան,- ինքն էլ չսպասելով, թե ընդունակ է նման խոսք ասելու՝ իր նկատմամբ դիրեկտորի ողջ բարյացակամության և հոգատարության համար շնորհակալ եղավ Վիրաբը:- Շատ եմ խնդրում՝ աներես տղա չհամարեք ինձ, բայց ինձ բնակարան է պետք: Բնակարան կարո՞ղ եք տալ:

- Բնակարան՞,- հանկարծակիի եկավ Թոռյանը,- ո՞ր տեղից, տղա՛ս, քսան տարվա դիմումներ ունենք:

- Ինձ տուն է պետք,- ասաց Վիրաբը,- ի՞նչ անեմ:

Արգամ Թոռյանը սրտանց բարկացավ և երբ խոսեց, նրա խոսքերը միայն Վիրաբին չէին ուղղված:

- Ի՛նչ զարմանալի սերունդ եք, ա՛յ մարդ,- ասաց նա:- Ամեն ինչ ուզում եք միանգամից ունենալ, պատրաստի: Այդպես ո՞նց կլինի: Ես... - Նա մատը ուժգին կրծքին խփեց:- Ես ինստիտուտ եմ ավարտել, տասը տարի է դիրեկտոր եմ այս տեխնիկումում, տասը տարի էլ գյուղական դպրոցներում եմ աշխատել ու միայն անցյալ տարի են ինձ բնակարան տվել: Այն էլ՝ ի՞նչ բնակարան, դեռ վերանորոգումը չեմ վերջացրել: Իսկ դու... Իսկ դուք... քեզ հիանալի աշխատանք եմ առաջարկում, հնարավորություն կունենաս աշխատելու և հեռակայելու ինստիտուտում... Ես քեզ ապագա եմ առաջարկում: Իսկ դու...

- Ինձ տուն է պետք,- ասաց Վիրաբը:- Ես մենակ չեմ, ընկեր Թոռյան...

- Դե, ուրեմն էլ ի՞նչ ես ուզում ինձանից: Գնա՛, իրենք են խնդրում,- նա մատով հիմա էլ թխկթխկացրեց սեղանին ընկած ինչ-որ թղթի:- Գնա՛ շրջտվեսի գործկումի սանսեկտոր, այսինքն՝ մաքրման գրասենյակ ու աշխատի... գնա՛ ...

- Տուն կտա՞ն,- հարցրեց Վիրաբը:

- Անմիջապես: Եվ աշխատավարձն էլ շատ բարձր է: Բայց գիտե՞ս ինչ ես անելու, ընկե՛ր Վիրաբ, ադբ ես հավաքելու, հասկացա՞ր, ա՛ դբ:

- Հա՛, - ասաց Վիրաբը,- եթե տուն են տալիս, կգնամ:

- Լո՞ւրջ ես ասում,- սրտանց զարմացավ Արգամ Թոռյանը:- Լա՛վ մտածիր, տղա՛, ես քեզ անկեղծ եմ ասում՝ դու տաղանդավոր մարդ ես: Դու ամեն ինչ էլ կարող ես դառնալ, որովհետև քո մեջ ամեն լավ բանի սկիզբը կա: Հասկացա՞ր: Քեզ մնում է միայն քո սրտի ուզած գործը գտնել, որ հետո չափսոսաս:

Լավ, եթե դասատու չես ուզում դառնալ ու ինժեներ, որ իմ առաջարկի նպատակն է, գոնե մաքուր, ջահելին վայել գործ ընտրի: Կուզե՞ս խոսեմ՝ գնա տաքսակայանում աշխատի կամ գոնե՝ ավտոբուսի վրա: Չե՞, չե՞, ուրեմն ուզում ես ա՞դբ հավաքել: Ախր դու չգիտես, թե դա ինչ գործ է, տղա՛ս: Իսկ ես գիտեմ: Գնալու ես խրվես ու մնաս այդ աղբի մեջ, հավատա ինձ, որովհետև տուն ես ստանալու, բարձր աշխատավարձ ես ստանալու և կարծելու ես, թե դրանից այն կողմ աշխարհ չկա: Հասկացա՞ր:

- Հա՛, - ասաց Վիրաբը:- Կգնամ:

Դիրեկտորը երկար, լուռ նայում էր նրան: Եվ երբ նորից խոսեց, արդեն բարկացած չէր կարծես թե:

- Գիտե՞ս ինչ, Վիրա՛բ: Բհարկե, լավ ու վատ աշխատանք չկա: Գլխով չանե՛ս,- հանկարծ բղավեց նա,- ես քեզ քարոզ չեմ կարդում: Բայց դու սպորտսմեն ես ու պետք է անմիջապես հասկանաս: Ծանրամարտի մրցում տեսել ես, չե՞: Խելացի մարզիկը սկզբում թեթև քաշ է դնում ծանրաձողին և հետո է կամաց-կամաց ավելացնում քաշը: Ճի՞շտ է: Ըհը: Իսկ դու միանգամից մեծ բեռի տակ ես մտնում: Եվ ոչ միայն ֆիզիկական, այլև, ավելի շատ, բարոյական, հոգեբա-

նական բեռի տակ: Չես դիմանա ու կկոտրվես, տղա՛ս: Երբեք տեսած կա՞ս, որ աղբահավաք մեքենայի վարորդը ջահել լինի: Չես էլ տեսնի: Որովհետև ծանր գործ է դա ու ոչ մի հեռանկար չունի... Ուրեմն արժի՞ մի բնակարանի համար...

Վիրաբը հիշեց Մարգոյի խղճալի ժպիտն այնտեղ՝ գերեզմանատանը: Իրիկուն էր, Մարգոն էր, ինքն էր ու Վարդանուշ մայրիկի գերեզմանը՝ վայրի աղքատիկ ծաղիկներով ծածկված: Հիշեց ու ասաց.

- Մեզ տուն է պետք, ընկեր Թոռչյան:

*

* *

Մարգոն ներքնահարկի մթության մեջ ամուր գրկել էր Վիրաբի ուսը, գլուխն ականջին էր մոտեցրել, համբուրում էր նրա քրտնած պարանոցը ու հետն էլ շշնջում.

- Հետո՞, հետո՞, Վիրա՛բ...

- Ա՛յ աղջի, ամբողջ շենքում ես ու դու մեն-մենակ ենք, ինչի՞ ես փսփսոցով խոսում,- ժպտաց Վիրաբը:

- Վախենում եմ՝ սատանաները լսեն,- շշնջաց Մարգոն՝ նորից համբուրելով տղայի վիզը, հետո թեքեց գլուխն ու թեքեց երեք անգամ,- թյու, թյու, թյու...

- Տո գժի՛ մեկը,- սուտ բարկացավ Վիրաբը,- ինձ պաշում ես, հետո թքո՞ւմ...

- Էդ սատանաներին էր ուղղված,- կամացուկ ծիծաղեց Մարգոն:- Որ մեզ մոտիկ չգան: Որ չլսեն մեր պլանները ու չխանգարեն: Ախր ես երջանիկ եմ, Վիրա՛բ: Հետո՞, հետո՞, դու ի՞նչ ասացիր...

- Ասացի մտածեմ ու կասեմ վաղը:

- Ես քո ցավը տանեմ, Վիրա՛բ: Որ ասել ես մտածեմ, նշանակում է՝ մտածենք, չէ՞:

- Բա ի՞նչ:

- Մտածենք:- Նա նորից համբուրեց տղայի մկանուտ վիզը,- մտածենք: Ի՛նչ աղի է:

- Ի՞նչն աղի է:

- Քրտինքը:

- Աղի է՝ մի պաշի:

- Յա՛,- շշնջաց Մարգոն,- աղի էլ լինի կպաչեմ, կծու էլ լինի՝ կպաչեմ: Քե՞զ ինչ, իմը չի՞, իմը չի՞,- նա մանրիկ տաք համբույրներով ողողեց տղայի վիզը, այտերը, աչքերը:- Վա յ, էս ինչ հոտ է գալիս քեզանից, շնչում եմ ու չեմ կշտանում, Վիրա ք:

- Աղբի հոտ է,- ծիծաղեց Վիրաքը:

- Թեկուզ աղբի հոտ լինի, ինչի հոտ ուզում է լինի, բայց որ քեզնից է գալիս, ուրեմն՝ քո հոտն է ու էս պաշտում եմ էդ հոտը, Վիրա՛ ք:

- Հանաք եմ անում, ա՛յ աղջի,- ծիծաղեց Վիրաքը:- Օրը երկու անգամ ցնցուղի տակ եմ մտնում: Կյանքումս՝ իրար գումարած, էդքան լողացած չկայի, ինչքան էս երեք ամսում:

- Օ՛Ֆ, շատ մի՛ խոսի, թող մի լավ շունչ քաշեմ:

Վիրաքը ծիծաղեց հաճույքից, ազատ աջ ձեռքը մեկնեց, կամացուկ շոյեց Մարգոյին:

- Չէ՛, չէ՛, չէ՛,- ետ քաշվեց Մարգոն:- Մտածենք:

- Մտածենք,- ձեռքը ետ քաշելով, խոնարհ համաձայնեց Վիրաքը:

Մարգոն բարձրացավ տեղից, մատը շուրթերին տարավ, որ ուռել ու քաղցր ցավում էին, ժպտաց մթույթյան մեջ ու ասաց.

- Թող քո ուզածը լինի, վերցնենք պետական շենքի բնակարանը :

- Ինչի՞,- կողքի թեքվեց Վիրաքը:

- Ասեմ,- ասաց Մարգոն,- նախ՝ հենց վաղն էլ կարող ենք տեղափոխվել: Ամեն ինչ պատրաստ է: Ջուրը մեջը, գազը մեջը. լողասենյակը մեջը... Հա, դու ասացի՛ր, որ մենք աճող ընտանիք ենք:

- Ինչ էս ասում, այ աղջի, ամոթ չի՞:

- Ոնց թե ամոթ է,- բարկացավ Մարգոն,- չենք աճելո՞ւ:

- Թյու, է՞դ ինչ բառ է,- իր հերթին բարկացավ Վիրաքը:- Դա ասելու խո՞սք է: Առանց ասելու չե՞ն հասկանա:

- Եսիմ,- ասաց Մարգոն,- ո՞վ գիտի՝ ինչ մտածեն:

- Մարգո՛,- ընդհատեց Վիրաքը,- ավելի լավ չի՞ լինի, որ հողամաս վերցնենք, սարքենք մեր ձեռքով, մեր ուզածի պես, ծառեր տնկենք, փոքրիկ բանջարանոց գցենք, կանաչի ցանենք, պոմիդոր ու բադրիջան, իրիկունը նստենք մեր պատշգամբում...

- Որ պետական պատշգամբում նստես, ի՞նչ կլինի,- կտրեց Մարգոն:

- Բան չի լինի: Բայց ասում են սեփականն ուրիշ է...

- Մեփականի հոգսն էլ է ուրիշ,- կամացուկ, համոզիչ ձայնով ասաց Մարգոն,- հարցրել եմ, գիտեմ: Ախր ի՞նչ գործ ունենք, ա՛յ մարդ: Կարծում ես քի՞չ հոգսեր ենք ունենալու: Հետո, խոսք ես տվել, չէ՞, Վիրա ք ջան, որ դու աշխատելու ես, իսկ ես՝ սովորեմ: Բա քեզ կսազի՞, որ քո կի՛նն անգրագետ մնա: Իսկ հետո, որ ես ավարտեմ, ես կաշխատեմ, դու կսովորես, հա՞ ...

- Մտածենք,- նկատելի կոտրված ասաց Վիրաբը:

- Հա՛, հա՛, մտածենք,- անմիջապես համաձայնեց Մարգոն, պառկեց նորից ու ձեռքը քնքշորեն տղայի կրծքին դրեց:- Մենակ թե՛ պետական շենքի մասին մտածենք, հա՛ :

Վիրաբը մթության մեջ ակամա գլխով արեց, հետո միանգամից ինչ-որ բան հիշեց ու սարսափեց, սարսափեց ու շատ ուրախացավ, որ Մարգոն չնկատեց գլխի շարժումը: Ճիշտ այդպես՝ ամեն ինչին գլխով էր անում մանկատան դիրեկտորներից մեկը՝ ընկեր Կոթիկյանը: Այսինքն՝ նրա բացակայությամբ ոչ ոք ընկեր Կոթիկյան չէր ասում: Բոլորն էլ ասում էին՝ Ձին: Ձին եկավ, Ձին գնաց: Ձին ասաց: Այդ անունը նրան կպցրել էին ոչ միայն գլխի համար, որն իրոք ձիու գլխի նման բարակ ու երկար էր, այլ ավելի շատ՝ գլուխ տալու համար: Ինչ հարցով դիմե՛իր՝ նախ գլխով էր անում ու հետո միայն մտածում պատասխանի մասին: Մի անգամ մանկատան երեխաներին կոլեկտիվ կարգով կրկես տարան: Ու հենց որ համարներից մեկի ժամանակ մանե՛ծի կենտրոնում հայտնվեց մի ձի և հեծյալի կարգադրությամբ սկսեց աջ ու ձախ գլուխ տալ հանդիսականներին, մանկատան երեխաները միահամուռ բղավեցին.

- Ընկեր Կոթիկյանը...

- Բարև ձեզ, ընկե՛ր Կոթիկյան...

Սովորաբար մանկատան դիրեկտորները հատուկ ընտրված խիստ ու դաժան մարդիկ են լինում: Հիմնականում՝ նախորդ աշխատանքի վայրերում տապալված միլիցիայի ղեկավար աշխատողներ, որոնք, չգիտես ինչու, հարկ են համարում իրենց արդարացի կամ անարդարացի հալածողների նկատմամբ ունեցած ողջ ոխն ու զայրույթը փոխադրել անմեղ մանուկների վրա: Իսկ ընկեր Կոթիկյանը բոլորովին ուրիշ էր: Ընկեր Կոթիկյանը մանկատան դիրեկտորի պաշտոնում իսկական դիրեկտորների համեմատությամբ ոչ թե բացառություն, այլ պարզապես թյուրիմացություն էր: Եվ երբ նրան հեռացնում էին աշխատանքից, երբ համերաշխորեն քննադատում էին նրան հեղինակություն չվայելելու, անգործության, թուլության և հազար ու մի ունեցած ու չունեցած մեղքերի համար, ընկեր Կոթիկյանը շարունակ գլխով էր անում և այդպես գլխով անելով էլ հեռացավ մանկատանից:

Մանկատունն այդ թեմայով ապրում էր մի քանի օր:

- Լավ, ինչո՞ւ Ձիուն հեռացրին: Նա ոչինչ չէր անում, չէ՞, խեղճն ի՞նչ էր արել, որ հեռացրին: Ոչ աշխատում էր, ոչ սխալներ էր թույլ տալիս, բա դրա համար մարդ են հեռացնո՞ւմ: Հեռացնում էին, թող կնոջը հեռացնեին,- ասում էին մարդիկ: Եվ նրանց ասածի մեջ ճշմարտություն կար: Մանկատունը փաստորեն տիկին Կոթիկյանն էր ղեկավարում՝ լինելով ընդամենը գրադարանավարուհի: Նա էր ցուցումներ տալիս, թե դիրեկտորն ինչ պետք է անի այդ օրը և երբ ընկեր Կոթիկյանը կնոջ թույլտվությամբ որևէ տեղ խորհրդակցության էր գնում, կինն էր նստում նրա դիրեկտորական աթոռին: Եվ ինչ որ ասում էր՝ խոնարհ գլխով էր անում ընկեր Կոթիկյանը:

Ահա թե ինչից սարսափեց Վիրաբը, երբ զգաց, որ գլխով է անում մթության մեջ ճիշտ և ճիշտ ընկեր Կոթիկյանի նման: Սարսափեց ու վճռեց մեկընդմիջտ լուծել այդ հարցը:

- Մարգո՛ւ, - ասաց նա խիստ, կրծքից հեռացնելով կնոջ տաք ձեռքը, կծկելով մկանները և ձեռքերը դնելով ծոծրակի տակ, - տունը մի գլուխ պիտի ունենա: Եվ այդ գլուխը տղամարդը պետք է լինի: Ե՛ս:

- Վա՛յ, ի՞նչ է պատահել, ա՛յ տղա, - անհանգստացավ Մարգոն:

- Էլ ի՞նչ պետք է պատահի: Քեզ ու քեզ հարցեր ես լուծում: Ասում ես՝ մտածենք ու հետն էլ ստիպում ես, որ քո ուզածի մասին մտածեմ:

- Բա չմտածե՞նք, Վիրա՛բ ջան, - անմիջապես խեղճացավ Մարգոն: - Ախր էդ տանը ավելի շատ ես եմ լինելու, ցավդ տանեմ: Դու առավոտ շուտ գնալու ես, գիշերը՝ գաւ: Ո՞վ է ավիլելու, թափելու, լվացքդ անելու, ճաշ պատրաստելու, ո՞վ է երեխայի համար հագուստ կարելու, բարուրներն ու տակաշորերը լվանալու, փռելու, չորացնելու:

- Ի՞նչ երեխա, - դեռ բարկացած հարցրեց Վիրաբը, - Կիկոսի պատմությունն ես սարքո՞ւմ:

- Թե անունն ինչ կդնես, դա քո գործն է, - կամացուկ ասաց Մարգոն, - տան գլխավորը դու ես, դու էլ կորոշես: Բայց ես մեր երեխայի մասին եմ խոսում:

- Ի՞նչ, - հարցրեց ու շունչը պահեց Վիրաբը, պահեց շունչը ու զգաց, գրեթե լսեց, թե ինչպես է բարձրաձայն զարկում սիրտը:

- Մեր երեխայի:

- Մարգո՛ւ... Մարգո՛ւ, հո հանաք չե՞ս անում: Մարգո՛ւ, էդ ի՞նչ ես ասում: Մարգո ջան, ճի՛շտ, ճի՛շտ: Մարգո՛ւ ջան, ախր էդպես ո՞նց կլինի, ախր ինքներս դեռ երեխաներ ենք, մեզանից ի՞նչ երեխա:

- Իմ խելա՛ն, - երջանիկ ծիծաղեց Մարգոն ու անմիջապես էլ ավելացրեց առաջին կնոջ հետևողականությամբ, - հիմա ի՞նչ ես ասում, դու որոշի, ուզում ես պետական շենքում ապրենք, ուզում ես հողամաս վերցրու. - Լռեց մի քիչ ու հարցրեց, - պետակա՞ն...

Եվ Վիրաբը ուրախությունից խելագար արագ-արագ գլխով արեց, ճիշտ և ճիշտ ընկեր Կոթիկյանի նման՝ մխիթարելով իրեն, թե Մարգոն չի տեսնի գլխի շարժումը:

*

* *

Նա մի անգամ ևս պտտվեց երկու կողմից երկարացված կլոր սեղանի շուրջը, ուշադիր գննեց կանոնավոր դասավորված պոմիդորի, վարունգի ու բիրարի սալաթները, պանրի, երշիկի,

բաստուրմայի ու սուջուխի ավսենները, ստուգեց, թե յուրաքանչյուր սպասքի տակ անձեռոցիկ կա, Մարգոն հո չի՞ մոռացել բացիչները, իր ձեռքով տեղավորեց կոնյակի, օդու, գարեջրի ու լիմոնադի շշերը, նորից նայեց ու գոհ մնաց:

- Հը՞, հանձնաժողովն ընդունե՞ց սեղանը,- պասուց տղմայով լի սկուտեղը ձեռքին ներս մտավ Մարգոն:

- Գերագանց,- զեկուցեց Վիրաբը:

- Հյուրերը չե՞ն ուշանում:

- Էլ ի՞նչ հայ, որ չուշանան,- ծիծաղեց Վիրաբը,- չգիտե՞ս, որ եթե ուզում ես մարդիկ ժամը յոթին հավաքվեն, պիտի խնդրես, որ հինգին գան:

- Երբ ուզում են՝ գան՝ ես արդեն պատրաստ եմ,- ասաց Մարգոն:- Միրգն էլ լվացի պրծա:

- Դե ես էլ ասում եմ գան, նոր կրակը վառեմ,- մտահոգ ասաց Վիրաբը:- Խորովածը որ սառի՝ ո՞ւմ է պետք:

Մարգոն գլխով արեց, իբրև համաձայնության նշան ու արագ-արագ գնաց խոհանոց: Իսկ Վիրաբը պատշգամբ դուրս եկավ, մի անգամ էլ բացեց բաստուրմա դրած մտով լի թասի բերանը, հոտ քաշեց հաճույքով, տեղը դրեց ու պատշգամբից կախված նայեց քաղաքին: Քաղաքը վառվում էր աշնան գույների մեջ: Մինչև պատշգամբ հասած բարդիների կատարները դողում էին՝ մանրիկ ու դեղին տերևներ թափում մայթերի վրա: Իսկ դիմացը՝ այնքան մոտիկ, որ թվում էր՝ պարզես ձեռքդ՝ կհասնի, Արարատի գագաթներն էին: Վիրաբը նայեց, նայեց աշխարհի գեղեցկությանը, սրտաշարժվեց ու հանկարծ բարձրաձայն ասաց.

- Փառքդ շատ, տե՛ր Աստված:

- Օհո՛, իմ ուսանողը աստվածապաշտ է եղել ու չե՞մ իմացել,- հնչեց Վիրաբի թիկունքում, և Արգամ Թոռյանը ձեռքը դրեց Վիրաբի ուսին:

- Ընկե՛ր Թոռյան, ինչ լավ արեցիք, որ եկաք,- սրտանց ուրախացավ Վիրաբը:

- Եվ հյուրերից առաջինը ե՞ս եմ:

- Իմ հյուրը դուք եք, ընկեր Թոռյան, մնացածը Մարգոյի գծով է, ես գործ չունեմ,- չթաքցրած սրտնեղությամբ ասաց Վիրաբը:- Այնպես որ՝ մենք կարող ենք նստել:

- Ընդհակառակը, օգտվենք առիթից ու մի քիչ խոսենք, Վիրա՛բ, սեղանի շուրջը, միևնույն է, խոսել չի լինի: Այնպես որ՝ նստիր ու զեկուցիր, տղա՛ս՝ ինչ կա, ինչ չկա, ոնց ես, ոնց չես...

Վիրաբը ժպտաց.

- Ամեն ինչ էլ կա, ընկե՛ր Թոռյան: Հերթով կպատմեմ:

Արգամ Թոռյանը, իր բոլոր առաքինությունների հետ, մի մեծ առաքինություն էլ ուներ: Նա կարողանում էր լսել: Դա իրոք, մեծ առաքինություն է, որովհետև հիմա մարդկանց մեծ մասը միայն խոսում է, լսող չկա: Իսկ Արգամ Թոռյանը լսում էր և այնպես էր լսում, որ ուզում էիր ակամա պարզել սիրտդ նրա առջև, վստահել նվիրական բոլոր գաղտնիքներդ՝ համոզված, որ նա կհասկանա քեզ:

Վիրաբը պատմեց, թե սկզբում ինչ թերահավատությամբ ընդունեցին իրեն մաքրման գրասենյակում: Բացեիքաց երեսին ասացին՝ «Գիտենք, քեզ նմաններն էլի են եկել: Մի երկու ամիս աշխատում են, բնակարան ստանում ու փախչում»: Առաջարկեցին պայմանագիր կնքել գոնե երեք տարվա համար: Վիրաբը համաձայնեց: Էլի չհավատացին: Բոլորովին նոր աղբատար մեքենաներ էին ստացել: Վիրաբին տվեցին ամենահինը: Տասը գիշեր-ցերեկ արհեստանոցից դուրս չեկավ: Հավաքեց, կարգի բերեց, ներկեց-փայլեցրեց ավտոմեքենան և երբ գործի դուրս եկավ, մաքրման գրասենյակի պետն ասաց.

- Ա՛յ տղա, դու հրա՞ջ ես:

Տեղն ու տեղը նորն առաջարկեց, բայց Վիրաբը չհրաժարվեց իր ավտոմեքենայից, որի վրա այդքան չարչարվել էր: Սկզբում շատ էր նեղվում բանվորից: Ծույլ, անբան մարդ էր: Հենց կանգնում էին մի տեղ, աղբի միջից որևէ լրագիր կամ ամսագիր էր վերցնում ու սկսում հեզելով կարդալ և կարդացած լուրերը Վիրաբին պատմում էր որպես օրվա նորություններ: Հումորից բացարձակապես գուրկ էր: «Ոգնին» կարդում էր ու խանդավառված բացականչում.

- Տե՛ս, դե, տե՛ս, է՛, մերոնք մի ժամացույց են հնարել, որն ավելի արագ է աշխատում, քան թե ճապոնական ժամացույցները:

- Ի՞նչ կլինե՞ր՝ մի քիչ էլ դու արագ աշխատեիր, Սիմո՛ն,- հոգոց էր հանում Վիրաբը՝ նրա փոխարեն աղբը բահով լցնելով ավտոմեքենայի թափքի մեջ:

- Չե՛, չե՛, տե՛ս, է՛,- չէր հանգստանում Սիմոնը,- ուրեմն մեր հայ գիտնականները հիմա աշխարհում առաջին տեղն են գրավում, հա՛ ...

- Ո՞ր տեղից հնարեցիր,- ծիծաղում էր Վիրաբը:

- Ո՞նց թե, հրես պարզ գրված է. նշանավոր անասնագետ Վարդան Վարդանյանը կովերի գլխաքանակն ավելացնելու նպատակով ստեղծել է յոթգլխանի կովեր:

- Է՛հ,- փնչում էր Վիրաբը:

- Էլ ի՞նչ «էհ», հրես գրված է, աչքերի՞ս հավատամ, թե քեզ: Մեր թերթերը սուտ բան կգրե՞ն:

Վիրաբի համբերությունը սպառվեց և նա Մարգոյի հետ խորհրդակցելուց հետո, մտավ մաքրման գրասենյակի պետի առանձնասենյակը:

- Ընկե՛ր Նշանյան,- ասաց,- կներեք, բայց քանի որ բանվորի տեղն էլ եմ ես աշխատում, ի՞նչ կլինի՞ նրա աշխատավարձի կեսը տաք ինձ ու էլ բանվոր չտաք:

Նշանյանը շատ գոհ էր Վիրաբի աշխատանքից և մտածեց ավելի մեծ լավություն անել:

- Ձերոնցից մեկն ու մեկին բեր, ձևակերպեմ ու բանվորի աշխատավարձը լրիվ դու ստացի, Վիրա բ':

- Ո՞ւմ,- զարմացավ Վիրաբը:

- Ում ուզում ես՝ հորդ, մորդ, կնոջդ, երեխայիդ...

- Ինձ կեսն էլ հերիք է,- խոպոտած ձայնով ասաց Վիրաբը:- Եթե օրենքով հասնում է, տվե՛ք, չի հասնում՝ մի տվեք: Մեկ է՝ ես եմ աշխատելու:

Նշանյանը նրան նայեց զարմացած, թոթվեց ուսերն ու հրաման գրեց:

Մաքրման գրասենյակում աշխատելու վեցերորդ ամսում Վիրաբին առաջարկեցին սափրվել, հարդարել մազերը, կոստյում հագնել, կապել փողկապ ու ներկայանալ դիրեկտորին:

Թե ինչի համար, հայտնի չէր:

Ելք չկար, ստիպված կոստյում պիտի գնեին: Մարգոն ու Վիրաբը հինգ-վեց ժամ չափչփեցին բոլոր խանութները, բայց այնպիսի կոստյում չկար, որ թե լավը լիներ, թե էժան: Ի վերջո կանգ առան ութսունչորս ռուբլիանոց շերտավոր մի կոստյումի վրա: Բայց այնքան չափչփեցին, այնքան շոշափեցին պիտակը, այնքան նայեցին գնին, որ վաճառողը չդիմացավ ու ծաղրեց:

- Ախպե՛ր ջան,- ասաց,- եթե ուզում ես ավելի էժան լինի, երկու համար փո՛քր առ:

Վիրաբը նայեց նրա վտիտ կերպարանքին, կարճ բոյին ու ծիծաղեց.

- Քեզ ի՞նչ կա, դու քո կոստյումը խաղալիքների խանութից ես առնում: Ասե՛մ, թե որ տիկնիկի վրայից ես հանել:

Վաճառողն իրոք իր կոստյումները մանկական խանութից էր գնում, դրա համար էլ լռեց ու կուլ տվեց վիրավորանքը:

Կոստյումը գնեցին: Գնեցին նաև սրճագույն մի փողկապ և մի սպիտակ վերնաշապիկ: Եվ Վիրաբը հագած-կապած, վիզն անընդհատ աջ ու ձախ թեքելով անտեր նեղ օձիքի մեջ՝ մտավ դիրեկտորի առանձնասենյակը: Եվ պարզվեց, որ այդ ամբողջ պատմությունը լուսանկարվելու համար է եղել: Իմանային՝ ուղղակի լուսանկարչատուն կգնային, էլի, այնտեղ Վիրաբի նման մարդկանց համար մեխից կախված կոստյում էլ կա, փողկապ էլ...

Ինչևէ, երկու օր անց Վիրաբի լուսանկարը փակցված էր գրասենյակի միջանցքում՝ «Մեր առաջավորները» վերնագրով ցուցափեղկի մեջ: Եվ ամեն անգամ ներս ու դուրս անելիս Վիրաբն իր լուսանկարին էր նայում ակամա: Նայում էր ու ծիծաղում:

- Օրհնվի՛ էդ լուսանկարիչը, կոստյումի տեր դարձանք:

... Արգամ Թոռյանը ծիծաղեց:

- Իսկ հիմա որքա՞ն էս ստանում: Գո՞հ էս, Վիրա՞բ:

- Ես միշտ էլ գոհ եմ եղել, ընկե՛ր Թոռյան, իսկ հիմա, գոհ ու գոհ եմ, ամեն ինչը իրար հետ՝ ամսական մոտ հինգ հարյուր ռուբլի աշխատավարձ եմ ստանում:

- Պա՛հ,- անկեղծորեն զարմացավ տեխնիկումի դիրեկտորը,- ակադեմիկոսի աշխատավարձ է, էլի:

- Ակադեմիկոս Պարսամյանն էլ նույնն է ասում,- ծիծաղեց Վիրաբը:

- Ակադեմիկոս Պարսամյանի՞ն որտեղից գիտես:

- Նրա աղբը ես եմ թափում, ընկե՛ր Թոռյան:

Մի պահ լուռ էին:

- Է՛հ, խրվեցիր, մնացիր,- գլուխը թափահարեց Արզամ Թոռյանը:

Վիրաբը հիշեց նույն խոսքերը դեռ այն ժամանակ, դիրեկտորի առանձնասենյակում:

- Ա՛յ, էսքան էլ չեմ փռշմանել, ընկե՛ր Թոռյան,- ասաց,- ոչ միայն նրա համար, որ շատ եմ ստանում: Դա էլ քիչ բան չի: Ապրում ենք մարդավարի: Գոհ եմ ավելի շատ գիտե՞ք ինչի. այն-պիսի մարդկանց հետ եմ հանդիպում, որ ուրիշները հազարներ կծախսեն հետները ծանոթանալու համար: Իսկ ես հանդիպում եմ ամեն օր, ձեռքով բարևում են ինձ, տուն են հրավիրում, թեյ են հյուրասիրում, նստում զրույց են անում ինձ հետ: Բա դա քի՞չ է... Ես հիմա չեմ էլ պատկերացնում, թե ուրիշ ինչ գործ այսպես սրտանց կանեի:

- Մխր դու փայլուն հեռանկարներ ունեիր, տղա՛ս,- դեռևս հին ավստուսանքով ասաց Արզամ Թոռյանը:- Իսկ հիմա ահա աղբ ես հավաքում, գոհ ես ու այլևս ոչնչի չես ձգտում: Ես հենց սրանից էլ վախենում էի...

Վիրաբը ժպտաց հանգիստ, բայց ներքուստ վիրավորված էր.

- Մեկն ու մեկը պիտի հավաքի՞ աղբը, թե՞ չէ, ընկե՛ր Թոռյան: Կներեք, իհարկե, բայց եթե բռնորը ձեզ նման մտածեին, աշխարհը հո կթաղվեր աղբի մեջ:

Արզամ Թոռյանը ամաչեց: Ուզեց ինչ-որ բան ասել, բայց հենց նույն վայրկյանին լսվեց Մարգոյի ուրախ կանչը.

- Ընկե՛ր Թոռյան, Վիրա՛բ, նե՛րս եկեք, ծանոթացեք Ալլա Կարպովնայի և մեր մյուս թանկագին հյուրերի հետ:

- Օ՛Ֆ, օՖ,- հառաչեց Վիրաբը՝ ընդառաջ գնալով նոր հյուրերին:

Ալլա Կարպովնան այլևս չթողեց, որ որևէ մեկը վերցնի նախաձեռնությունը:

- Ես այստեղ միայն ձեզ ծանոթ չեմ,- ասաց նա, պայծառ աչքերով նայելով տեխնիկումի դիրեկտորին:- Ես Ալլա Կարպովնան եմ, երկրորդ բաժակից հետո արդեն Ալլան, արհմիութենական գործիչ, Մարգարիտա Պետրովնայի աշխատանքային ընկերուհին: Ահա և իմ ամուսինը՝ երաժշտական դպրոցի կոնցերտմեյստեր Վահագն Միրզոյանը: Եվ մեր սիրելի բարեկամը, թույլ տվեք ներկայացնել՝ երաժշտական դպրոցի դիրեկտոր, երաժշտագիտության թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Կարեն Բզնունի:

Անմիջապես պարզ, անբռնազբոս մթնոլորտ ստեղծվեց: Բոլորը տեղավորվեցին աղմուկով, տնավարի, արագորեն բացեցին շշերն ու սկսեցին հյուրասիրել իրար:

- Դուք ի՞նչ եք խմում, ընկե՛ր Բզնունի,- Մարգոյի սևեռուն հայացքի տակ հարցրեց Վիրաբը:

Կարեն Բզնունին ծիծաղեց.

- Ես խմում եմ օղի, առանց փողի և սրտի դողի,- մի շնչով ասաց նա:

Սրամտությունն աշխարհի նման հին էր, բայց բոլորը ծիծաղեցին:

Մարգոն ոչ մի բույր չէր նստում, պտտվում էր հյուրերի չորս կողմը, խորտիկներ հրամցնում:

- Ալլա՛ Կարպովնա, խնդրում եմ, փորձե՛ք այս սալաթը: Եթե դուր գա, բաղադրատոմսը կասեմ:

- Օ՛, հաճույքով,- մոլտում էր Ալլա Կարպովնան:- Իսկապես ֆենոմենալ է:

- Վահագն Անդրանիկովիչ, ես կխոռովեմ, ինչո՞ւ ոչնչի ձեռք չեք տալիս:

- Սիրելի Մարգո, թող աչքերս կշտանան, հետո: Եվ թողեք վայելեմ... Որ ուտեմ, էլ խմիչքի համը չեմ զգա:

- Ընկե՛ր Բզնունի, բաստուրմա՛ն փորձեք, իմ ձեռքով եմ սարքել:

- Սիրով: Բայց ինչպես մեր չքնաղ Ալլոչկան է ասում՝ երկրորդ բաժակից հետո ես Կարեն եմ:

- Վա՛յ, ինչ եք ասում... ընկե՛ր Թոռչյան, ձեզ...

- Ես ընկեր Թոռչյանին նայում եմ,- ասաց Վիրաբը:

Արգամ Թոռչյանը զգուշորեն թեքվեց Վիրաբի ականջին.

- Որն է առիթ կա՞, - հարցրեց նա:

- Բա ո՞նց,- շշուկով ասաց Վիրաբը,- Մարգոն ուզում է մեր Սուսանին երաժշտական դպրոց ընդունել:

Արգամը նոր միայն նկատեց պատի տակ դրված սև դաշնամուրը, ժպտաց ու ձեռքն առավ բաժակը:

- Բարեկամներ՝,- ասաց,- ձեր մեջ գտնվող տարեց մարդու իրավունքով, խախտելով որոշ օրենքներ՝ ես առաջարկում եմ խմել այս օջախն ստեղծողների՝ Վիրաբի ու Մարգոյի կենացը:

- Ընկե՛ր Թոռչյան...- փորձեց բողոքել Վիրաբը:

Արգամ Թոռչյանը ձեռքով ընդհատեց նրան:

- Նրանք իմ որդիներն են, մեծացել են իմ աչքի առաջ, մեր տեխնիկումում... Մարգոն...

- Այդ դեպքում Մարգոյին կանչենք,- ճշաց Ալլան և բոլորը համերաշխորեն ծափ տվեցին ու կանչեցին.- Մար-գո՛, Մար-գո՛, Մար-գո՛ ...

Մարգոն գոգնոցով շտապ սրբեց ձեռքերը, հյուրասենյակ նետվեց.

- Ի՞նչ է պատահել...

- Քո կենացը, Մարգո՛, Վիրաբի կենացը: Դուք մեր ժողովրդի նման որք ու անտեր եք եղել,- ասաց Թոռչյանը:- Բայց մեր ժողովրդի նման էլ ձեր կենսունակությամբ, ձեր աշխատասիրությամբ, ձեր տաղանդով ու փոխադարձ սիրով կարողացել եք ոտքի կանգնել ու մի նոր, իսկական հայկական օջախ ստեղծել: Հալալ լինի ձեզ, դուք արժանի եք ամենալավ կյանքի, ի՛մ գավակներ...

- Մարգո՛, ուրեմն դու է՞լ ես ավտոտեխնիկում ավարտել,- զարմացավ Ալլա Կարպովնան:

Վիրաբն ուզեց ինչ-որ բան ասել, բայց Մարգոն, այնուամենայնիվ հասցրեց կանխել նրան:

- Մայրս էր աշխատում այնտեղ:

Բոլորը ոտքի կանգնեցին և ջերմ, անկեղծ խոսքերով խմեցին Վիրաբի ու Մարգոյի կենացը:

- Սուսանին չկանչե՞մ՝ նվագի, Ալլա՛ Կարպովնա,- հարցրեց Մարգոն:- Դո-ռե-մի-ֆա-սուլը անգիր գիտի:

Ալլան հարցականորեն Կարեն Բզնունուն նայեց:

- Ի՞նչ միտք ունի,- ժպտաց երաժշտական դպրոցի դիրեկտորը,- համարե՛ք ընդունված:

- Կարեն, տի պրոստո բոժեստվո,- հիացմունքով նրան նայեց Ալլա Կարպովնան:

Արգամ Թոռչյանը հին մարդ էր, չդիմացավ:

- Իսկ եթե լսողություն չունի՞,- նկատելի հեզմանքով հարցրեց նա: Կարեն Բզնունին ժպտաց ներողամտորեն:

- Մեր նպատակը, կուլեգա՛, տաղանդներ աճեցնելը չէ: Տաղանդն իրեն-իրեն էլ սիզախտի նման, ասֆալտը ճեղքելով, դուրս կգա: Մեր նպատակն է, որ մեր երեխաները, հա՛յ երեխանե-

րը,- շեշտեց նա,- կուլտուրական մարդիկ դառնան, կարողանան որոշ չափով նվազել և երաժշտություն հասկանան:

- Ես էլ այդ եմ ասում, էլի, ընկե՛ր Բզնունի, ցավդ տանեմ,- բաժակը դիրեկտորի բաժակին խփելով՝ հուզված բացականչեց Մարգոն:- Բայց դուք չկարծե՛ք, թե Սուսանս բոլորովին պուխ չունի: Կուզե՛ք կանչեմ նվագի: Ես փորձել եմ, քանի անգամ թխկթխկացնում եմ, ինքն էլ ճիշտ այդքան թխկթխկացնում է:

- Դե, եթե դուք փորձել եք, տիկի՛ն Մարգո, ինձ էլ ի՞նչ է մնում,- հաճոյախոսեց Կարեն Բզնունին՝ ձախ ձեռքով բռնելով Մարգոյի բաժակը պահած աջը ու համբուրելով:

- Մարգո՛, տղման ի՞նչ եղավ,- խելագարվեց Վիրաբը՝ զգալով, թե ինչպես է արյունը ցավեցնելով տրոփում քունքի մեջ:

Մարգոն կաս-կարմիր կտրեց:

- Բերում եմ, Վիրա՛բ ջան, բերում եմ: Քեզ ի՞նչ պատահեց, սրտաճաք արեցիր,- իրար խառնվեց նա: Իսկ երբ մտով լցոնված պոմիդորով, բադրիջանով, բիրբարով ու կաղամբի տերևով ամառային շքեղ տղման սեղանին դրեց, այնուամենայնիվ, մոտեցավ Վիրաբին, թիկունքից գրկեց նրան ու ականջի տակ շշնջաց.

- Մի քիչ դիմացի՛ր, էլի, վայրենի հո չե՞ս:

Վիրաբը թեքեց գլուխն ու ատելությամբ ասաց.

- Մեկ էլ որ թիթիգություն ես արել, կաստկացնեմ:

- Ե՞ս նրան խնդրեցի, որ ձեռքս պաչեր,- լացակումեց Մարգոն:- Ես քեզ ասում էի՝ տանը մի մնա, չե՛ ...

- Տանը մի՛ մնա,- փնչաց Վիրաբը:- Ես քեզ «տանը մի մնա» ցույց կտամ: Թող հլա գնան...

Մարգոն սսկվեց ու անհետացավ խոհանոցում:

Իսկ հյուրերն այնքան տաքացած էին, որ այլևս ոչինչ չէին նկատում, ուտում ու խմում էին աղմուկով, ծիծաղում էին բարձրաձայն, անամոթ անեկդոտներ պատմում, որոնցից ամեն մեկը դանակի նման Վիրաբի սիրտն էր խրվում, գրկում էին իրար, ձեռքերն օղակելով «բրու-դերշաֆտ» խմում ու իրար համբուրում չմփոցով:

Եվ Վիրաբը հանկարծ այնպես ավելորդ զգաց իրեն իր տանը, այնպես մենակ ու անօգնական, որ երբ ակնհայտորեն խեղճացած Արգամ Թոռչյանը նրան կամացուկ ասաց, թե հոգնել է, տուն է ուզում գնալ, Վիրաբն ուրախացավ, որ ինքն էլ կարող է մաքուր օդ դուրս գալ:

Նրանց հեռանալը ոչ ոք չնկատեց, ասես չկային, չէին եղել սեղանի շուրջը:

Նրանք քայլում էին դեղին տերևներով ծածկված մայթով լուռ ու մռայլ, մտքերի մեջ խորասուզված և երբ Արգամ Թոռչյանն ասաց.

- Տուն գնա, Վիրա՛բ...

Վիրաբը ցնցվեց:

- Կներեք, ընկե՛ր Թոռյան,- ասաց նա խուլ ձայնով,- մի տեսակ ուրախ չստացվեց:

- Ոչինչ, տղա՛ս,- ասաց Թոռյանը,- միշտ այդպես է լինում, երբ սեղանի շուրջը տարբեր մարդիկ են հավաքվում: Մի՛ վշտանա ու սրտիդ մոտ մի՛ ընդունիր, Վիրա՛բ:

Նրանք քայլում էին լուռ ու մտազբաղ՝ շրջացող տերևների վրայով: Արգամ Թոռյանը հագաց մի երկու անգամ, ասես ուզում էր ինչ-որ բան էլ ասել, բայց շարունակեց լռել:

Եվ, այնուամենայնիվ, երբ բաժանվում էին, չդիմացավ, գրկեց իր նախկին ուսանողին ու ասաց.

- Բայց, իհարկե, ուրախ եմ, որ այդ ամենը քեզ էլ դուր չի գալիս, տղա՛ս: Այդ նշանակում է, որ ես սխալվում եմ, և դու դեռ չես խրվել աղբի մեջ: Իսկ հիմա՝ գնա՛: Մարգոյին մենակ մի՛ թող: Գնա՛:

Ասաց ու հեռացավ՝ գիշերվա գովից թե իր մտքերից կծկելով ուսերը:

Երբ Վիրաբը հյուրասենյակ մտավ, ծիծաղն ու աղմուկը դեռ շարունակվում էին, բայց ինչ-որ փոփոխություն էր տեղի ունեցել: Վիրաբն ավելի ուշադիր նայեց ու տեսավ, որ երաժշտական դպրոցի դիրեկտոր Կարեն Բզնունին ոչ թե առաջվա նման ամուսինների կողքին էր նստած, այլ արանքում: Նստել էր, անընդհատ սղալում էր ձյուրի պես սև և առատ մազերն ու բացականչում.

- Վահա՛գն, ախպե՛րս, էքստրա՛...

Վահագն Միրզոյանը ծիծաղում էր հարբած, ետ էր գցում գլուխն ու բաժակի պարունակությունն ուղիղ լցնում բերանը:

- Բրավո՛, մաեստրո,- գոռում էր Կարեն Բզնունին:

Մարգոն ննջարանից դուրս եկավ կկոցած աչքերով ու Վիրաբին ասաց.

- Խորոված չես անո՞ւմ, Վիրա՛բ:

- Էլ սրանք խորոված ուտո՞ղ են: Դե՞ռ ինչ էիր անում, ա՛յ աղջի:

- Մուսանին քնեցրի: Խեղճ երեխան սպասեց-սպասեց, որ նվագի, այդպես էլ լսող չեղավ: Լաց էր լինում: Հոգիս դուրս եկավ, մինչև հանգստացրեցի:

- Լավ էլ լսողներ ես գտել,- մռայլ ասաց Վիրաբը, աչքերով հյուրերին ցույց տալով:

- Ի՞նչ անեմ,- չարացած ասաց Մարգոն,- երաժշտական դպրոց ընդունելու համար հիմա գիտե՞ս ինչքան են ուզում: Կրակը վառի, ամոթ է, Վիրաբ ջան, ասել եմ, որ խորոված ենք տալու:

Վիրաբը քթի տակ փնթփնթալով պատշգամբ դուրս եկավ ու վառեց մանդալը: Չոր փայտերը ճտճտացին, ու բոցը միանգամից դեպի առաստաղ բարձրացավ: Նա արագ-արագ շամփուրների մեջ խրեց պոմիդորները, բադրիջաններն ու բիբարները և շամփուրները վերնից դրեց հենց բոցի վրա:

- Վահա՛գն, ախպե՛րս, էքստրա՛,- լսեց նա սենյակից, շրջվեց ու տեսավ, թե ինչպես է կոնցերտ-մեյստեր Վահագն Միրզոյանը գլուխը ետ գցած կուլ տալիս բաժակի օղին:

Եվ միաժամանակ տեսավ, թե ինչպես Կարեն Բզնունին, «բրավո՛, մաեստրո» բղավելով, իր բաժակի կոնյակը տարավ դեպի բերանը, բայց անմիջապես էլ ետ բերեց ու թափեց լիմոնադի մեծ բաժակի մեջ, որն արդեն բերնեբերան լիքն էր: Եվ միանգամից էլ հիշեց, որ շատ անգամ է տեսել այդ շարժումը, բայց մտքովը չի անցել, թե ընկերն ընկերոջ նկատմամբ կարող է այդպես ստորություն թույլ տալ: Ինքը շատ անգամ էր նկատել այդ շարժումը, հա, բայց կարծել էր, թե դպրոցի դիրեկտորը բաժակի մնացած կաթիլներն է թափում միայն:

«Մա՛ ինչ բան է: Ինչո՞ւ է ուզում հարբեցնել», - ապշեց Վիրաբը, նորից նայեց ու հանկարծ այնպիսի մի բան տեսավ, որ զգաց, թե ինչպես են գլխի մազերը ամբողջ մաշկի հետ դեպի վեր բարձրանում: Վիրաբը տեսավ, որ Կարեն Բզնունին մի ձեռքով «բրուդերշաֆտ» է իբր թե խմում հարբած ընկերոջ հետ, իսկ մյուս ձեռքով սեղանի տակ սեղմում է նրա կնոջ՝ Ալլա Կարպովնայի բաց ազդրը:

Վիրաբը ձեռքի ափով ծածկեց աչքերը և նստեց մանդալի մոտ դրված փայտե դատարկ արկղի վրա: «Գուցե աչքի՛ս երևաց,- մտածեց նա,- էդպես ո՞նց կլինի»: Նա բացեց աչքերը, այս անգամ ավելի ուշադիր նայեց ու տեսավ, պարզ տեսավ, իր աչքով տեսավ, որ Կարեն Բզնունին սեղանի տակ շոյում է իր ընկերոջ կնոջ բաց ազդրը, շոյում է ներքևից վերև, ներքևից վերև... ավելի ու ավելի բարձրացնելով նրա շրջագգեստի փեշը: Հետո տեսավ, որ Ալլա Կարպովնան նստառջ թեքվելով, ցած սահեցրեց ձեռքը, բռնեց Կարեն Բզնունու մատներն ու սեղմեց...

Վիրաբն զգաց, որ հենց հիմա կմեռնի, եթե որևէ բան չանի ու կանչեց խոպոտած ձայնով.

- Ընկե՛ր Բզնունի, ընկե՛ր Բզնունի...

- Լսում եմ, բարեկա՛մս,- սենյակից հնչեց դպրոցի դիրեկտորի բարիտոնը:

- Խնդրում եմ եկե՛ք տեսե՛ք խորովածը եղե՛լ է, թե՞ չէ...

- Բայց ես ի՞նչ եմ հասկանում, ես ընդամենը ուտող եմ,- ծիծաղեց Կարեն Բզնունին՝ պատշգամբ դուրս գալով:

Դուրս եկավ, նայեց մանդալին, ածխացած պոմիդորներին ու բիբարներին և զարմացավ.

- Բայց այստեղ խորոված չկա, սիրելի՛ս, վառել էք...

Հետո նայեց Վիրաբի սփրթնած դեմքին, ցատումից ուռած այտամկաններին ու սրված ծնոտին ու կարծես թե ինչ-որ բան հասկացավ, որովհետև փորձեց ետ դառնալ, բայց Վիրաբը մի ձեռքով բռնեց նրա օձիքն ու մի կողմ քաշեց.

- Քե՛զ պիտի վառել, քե՛զ պիտի խորովել, շո՛ւն,- ասաց, թեթևակի հրեց Կարեն Բզնունուն և երբ նա սարսափած ետ-ետ էր գնում, առանց որևէ ջանքի, սովոր շարժումով աջ ձեռքի բռունցքով խփեց նրա ստոծանուն:

Երաժշտական դպրոցի դիրեկտորը անձայն տապալվեց հատակին:

Վիրաբը մի պահ թեքվեց, նայեց նրան՝ ասես սպասելով, որ դատավորը, ինչպես կարգն է, հաշվի մինչև ինը, հետո բարձրացավ տեղից հանգստացած ու գոհ և, սենյակ մտնելով, դերասանի նման կերպարանափոխված, զարմացած բացականչեց.

Ընկեր Բզնունին ընկավ ու էլ վեր չի կենում:

Ալլա Կարպովնան ճչաց.

- Ինչպե՞ս թե ընկավ, ինչպե՞ս թե ընկավ...

Նրա ճիչը լսելով՝ խոհանոցից վախեցած ներս նետվեց Մարգոն:

- Որտե՞ղ ընկավ, ա՛յ տղա:

- Բալկոնում է,- ասաց Վիրաբը,- երևի շատ խմեց, հա՞...

- Նա ոչ մի գրամ էլ չի խմել,- պատշգամբ վազեց Ալլա Կարպովնան,- ոչ մի գրամ...

«Դե դա դու լավ կիմանաս, փչացած», - բավարարված վրիժառույթյամբ մտքում ասաց Վիրաբը, և ինքն էլ համենայն դեպս շտապեց պատշգամբ:

Այսինքն միայն Վահագն Միրզոյանը չշարժվեց տեղից: Ճիչ-աղաղակները լսելով՝ նա ընդամենը մի պահ սեղանից բարձրացրեց գլուխը, պոտորված աչքերով նայեց այս ու այն կողմ նետվող մարդկանց ու գլուխը նորից սեղանին խոնարհեց:

Իսկ պատշգամբում Կարեն Բզնունին ինչպես ընկել, այնպես էլ մնում էր նույն տեղում:

- Շտապօգնություն կանչե՞մ,- վախեցած հարցրեց Մարգոն:

- Երևի կարիք չկա,- ասաց Վիրաբը,- ջո՛ւր լցրեք գլխին:

Մարգոն խեթ-խեթ նայեց Վիրաբին ու վազեց խոհանոց՝ ջուր բերելու, իսկ Ալլա Կարպովնան խոնարհվել էր ընկած մարմնի վրա, ինչ-որ խոսքեր էր շշնջում կարծես ռուսերեն ու լաց էր լինում՝ քիթը անընդհատ վեր քաշելով:

Երկրորդ բաժակ ջրից հետո Կարեն Բզնունին բացեց արնակալից աչքերն ու զարմացած ու վախեցած շուրջը նայեց, հետո տեսավ Վիրաբին, նորից սարսափած փակեց աչքերն ու խորը տնքաց:

- Մի բաժակ էլ ջուր լցրու, Մարգո՛ւ: Ա՛յ աղջի, միանգամից մի՛ լցրու, բռո՛վ ցանի, էլի, ոնց որ խառը կանաչու վրա ես ցանում,- բարկացավ Վիրաբն ու հետն էլ ասաց,- բա՞, ընկեր Բզնունի, ես, ասում եմ ընկավ, բայց ինձ չեն հավատում:

Բզնունին տնքաց նորից ու խորը հառաչեց:

- Ընկա , ընկա,- մրմնջաց նա՝ առանց բացելու աչքերը,- ոտքս սայթաքեց ու... օ՛Ֆ...

Կես ժամ տևեց, մինչև որ Վիրաբն ու Մարգոն, մեկ սրա թևը բռնելով, մեկ նրան գրկելով, սանդուղքով ցած իջեցրին ու տաքսի նստեցրին հյուրերին: Իսկ երբ ավտոմեքենան հեռացել էր արդեն, Մարգոն շրջվեց դեպի Վիրաբն ու հարցրեց կասկածով.

- Դո՞ւ խփեցիր, ա՛յ տղա:

- Ե՞ս,- զարմանք ձևացրեց Վիրաբն՝ ինքն էլ զարմանալով, թե ոնց է սովորել խաղալ:

- Դու, դու, քո ձեռքերը չգիտե՞մ:

- Երևի չգիտես, Մարգո՛ւ,- լրջորեն ասաց Վիրաբն,- հաստատ լավ չգիտես, բայց Մուսանի արևով եմ երդվում, եթե դու մեկ էլ դրանց մեր տուն ես բերել, տանը լինեմ, թե չլինեմ, նշանակություն չունի, եթե դրանք մեր տուն են մտել, կիմանաս:

- Էսքան էլ ծախս արեցի ու հե՛չ,- հառաչեց Մարգոն:

*

* *

Գարնան մի առավոտ, երբ Վիրաբն պատրաստվում էր աշխատանքի գնալ ու աղբահավաք ավտոմեքենան նոր էր դուրս բերել գրասենյակի դարպասից, նկատեց, որ դիմացից իր «Մոսկվիչով» գալիս է գրասենյակի պետ Նշանյանը: Նշանյանը բարձրացրեց ձեռքը, և Վիրաբն, կարծելով, թե ողջունում է իրեն, ինքն էլ ձեռքը բարձրացրեց ու դանդաղ անցավ «Մոսկվիչի» կողքով: Հետո ազդանշաններ լսեց, արգելակեց մեքենան ու, գլուխը խցիկից դուրս հանելով, հարցական նայեց պետին:

- Մի էստե՛ղ արի, Վիրա՛բն,- ձայն սվեց Նշանյանը:

Վիրաբն մոտեցավ:

- Վիրա՛բն,- հարցրեց Նշանյանը,- դու նամակ գրե՞լ ես քաղսովետի նախագահին:

Վիրաբն ծիծաղեց.

- Ընկե՛ր Նշանյան,- ասաց,- եթե հարցնեիք, թե կյանքումս ընդհանրապես որևէ նամակ գրել եմ, էլի հանգիստ կասեի՝ չէ:
 - Ա՛յ քեզ բան,- չգիտես՝ զարմացած, թե մտահոգ ասաց Նշանյանը:- Իսկ երեկ սեսիայում նախագահը ճիշտ ու ճիշտ քո խոսքերն էր կրկնում:
 - Առավոտ գիշերով ձեռք եք առնո՞ւմ, ընկե՛ր Նշանյան:
 - Չէ՛, չէ՛, Վիրա՛բ: Հաստատ բան եմ ասում: Նրա զեկուցման հիման վրա էլ որոշում ընդունվեց: Ամսի մեկից նոր ձևով ենք աշխատելու, ոնց որ դու էիր ասում
 - Բան չհասկացա, ընկե՛ր Նշանյան:
 - Ա՛յ տղա, դու չէի՞ր ասում, թե լավ կլինի շենքերի բակերից վերացնել մանր-մունր աղբարկղերը, որտեղ ամբողջ օրը աղբ է հավաքվում ու աղբի վրա էլ կատուններ, շներ ու ճանճեր, թե մեղք է ժողովուրդը՝ ամռան շոգին էլ մարդիկ փակում են լուսամուտները, որ աղբի հոտը տուն չլցվի: Թե մանր-մունր երեխաները խաղում են էդ աղբարկղերի մոտ, որոնք ոտքով-գլխով հիվանդության բուն են: Դու չէի՞ր ասում:
 - Ես էի ասում:
 - Դե նույնն էլ նախագահն ասաց: Ամսի մեկից ավտոմեքենան մտցնում ես շենքի բակը կամ էլ կանգնեցնում մայթի մոտ ու զանգ ես տալիս: Բնակիչները դուրս են բերում աղբը, լցնում մեքենայի մեջ ու վերջ: Ո՛չ աղբարկղ, ո՛չ հիվանդություն:
 - Բա էն մարդիկ, որ երկրորդ հերթ են աշխատում, որ անքուն են, ակադեմիկոս Պարսամյանի պես գիշերներն աշխատում, առավոտներն են քնում, նրա՞նք ինչ անեն:
 - Նրանց համար էլ երեկոյան ես մի պտույտ տալիս:
 - Իսկ մենք տուն չունե՞նք, ընկե՛ր Նշանյան:
 - Աշխատավարձներդ համարյա կիսով չափ բարձրացնում են, Վիրա՛բ:
 - Լավ որոշում է,- ուրախացավ Վիրաբը:
- Բաժանվելուց առաջ Նշանյանը մի անգամ էլ հարցրեց.
- Ա՛յ տղա, ուրեմն ասում ես նամակ չե՞ս գրել կամ պատահաբար բան չե՞ս ասել իրեն:
 - Վա՛յ, - նեղացավ Վիրաբը:
 - Ախր ճիշտ քո խոսքերն էր կրկնում,- դեռևս թերահավատ փնթփնթաց Նշանյանը՝ գլուխը տարուբերելով:

- Ա՛յ ընկեր Նշանյան,- ասաց Վիրաբը,- եթե ես մտածել եմ, ուրեմն ուրիշն ու ուրիշներն էլ են մտածել և նախագահն էլ է մտածել, էլի... Կամ խոսել-խոսելով խոսքը գնացել վերններն է հասել, դրա մեջ ի՞նչ կա, որ տանջվում եք:

- Ո՞վ գիտե... Երևի,- գլխով արեց Նշանյանը և ազդանշան տվեց, որ դարպասի դուռը բացեն:

- Ընկե՛ր Նշանյան,- վերջին պահին ծիծաղելով ասաց Վիրաբը,- որ աշխատավարձ բարձրացնելու հարց կա, մեր ավտոպարկի նոր վարիչին համենայն դեպս զգուշացրու: Մեղք է...

Նշանյանը թափ տվեց գլուխն ու ավտոմեքենան արագորեն պոկեց տեղից:

Իսկ Վիրաբը պարկի հին վարիչ Լեոնիկին հիշեց ու նույնպես թափ տվեց գլուխը:

Մի քանի տարի տաքսապարկում մեխանիկ-դիսպետչեր էր աշխատել Լեոնիկը, սովորել էր ռուբլի-ռուբլի հարկ հավաքել վարորդներից, որպեսզի այժ փակի նրանց ավտոմեքենաների մանր-մունր թերությունների վրա և թույլ տա ուղերթի դուրս գան: Հավաքել, հավաքել էր ու մի օր էլ բռնվել: Հեռացրել էին աշխատանքից, վեց-յոթ ամիս պարապ ման էր եկել, մինչև որ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոս քեռու միջոցով մի հարմար տեղ գտնի, և, իսկապես, գտել էր մաքրման գրասենյակի ավտոպարկի վարիչի պաշտոնը:

Ահա այդ Լեոնիկն էր, որ երբ մի օր Վիրաբն աշխատավարձի ցուցակն էր ստորագրում, նրա գլխի վրայից նայեց նշված թվին, ծտտացրեց լեզուն և աշխատանքից հետո Վիրաբին հրավիրեց անձնական գրույցի՝ մի գավաթ գարեջրի շուրջ:

- Մեր տղա՛,- ասաց Լեոնիկը, սեփական ավտոմեքենայի բանալու օղակից կախված արտասահմանյան փոքրիկ խարտոցով խարտելով եղունգները և ցուցադրելով ձախ ձեռքի մատնեմատի վառ կապույտ ակով ոսկե մեծ մատանին,- բա որ քեզ էդքան փող են դուրս գրում, մենք մեջտեղը հե՛ջ, մենք մեջտեղը ֆռռի՞կ:

Վիրաբը ցած դրեց գարեջրի գավաթը:

- Ես ինչքան աշխատում եմ, էնքան էլ ստանում եմ:

- Իսկ, ի՞նչ ա, ուրիշները չլիկ-դաստա են խաղո՞ւմ:

- Էդ լեզուն թող,- ասաց Վիրաբը,- էդ լեզուն ես վաղուց մոռացել եմ: Ասա տեսնեմ ի՞նչ ես ուզում, ընկեր Լեոնիկ:

- Ուզում եմ, որ համ դու ապրես, համ մենք ապրենք:

- «Մենք»-ն ովքե՞ր են: Քանի՞ հոգի եք:

- Ես եմ, դիրեկտորն է, գլխավոր ինժեներն է:

- Ու էդ բոլորդ ուզում եք իմ հաշվի՞ն ապրել:

- Ինչի՞ քո հաշվին, մեր տղա, բոլոր շոֆերներն էլ մաս են հանում: Առաջին անգամ ե՞ս լսում:

- Հա՛, - ասաց Վիրաբը,- իսկապես առաջին անգամ եմ լսում: Կմտածեմ:

- Մտածի,- քմծիծաղ տվեց Լեոնիկը,- մանավանդ որ՝ նոր ավտո ստանալու հարց կա:

Առավոտ շուտ Վիրաբը գրասենյակի պետի առանձնասենյակը մտավ ու հարցրեց հանգիստ:

- Ընկե՛ր Նշանյան, որ ձեզ փող է պետք, ինչի՞ տեք ուրիշի միջոցով ասում:

- Ո՞ւմ, ի՞նչ փող,- տեղից վեր թռավ ու վայրկենապես գունատվեց Նշանյանը:

- Լեոնիկի,- ասաց Վիրաբը:- Ասաց, որ բոլոր վարորդներն էլ փող են հավաքում ձեզ, գլխավոր ինժեների ու իր համար, և որ ես էլ պետք է վճարեմ:

- Լեոնիկի՞ ...- Նշանյանը ամուր սեղմեց սեղանի մահուղի տակ թաքնված զանգի կոճակը:

Հաջորդ օրը Լեոնիկը ազատվեց աշխատանքից՝ համաձայն իր դիմումի և նորից հայտնվեց իրավաբան քեռու տնօրինության տակ: Բայց հեռանալուց առաջ, երբ սեփական մեքենան վերջին անգամ դուրս էր բերում ավտոպարկից, գլուխը դուրս հանեց լուսամուտից ու Վիրաբին ասաց.

- Դու դեռ ձեռքս կընկնես, մե՛ր տղա:

Վիրաբը ժպտաց, իսկ պահակ Մենեքերիմ քեռին պատասխանեց նրա փոխարեն.

- Գնա՛ եկեղեցում մոմ վառի, որ հանկարծ ձեռքդ չընկնի, ընկե՛ր Լեոնիկ: Մուռտառ մարդ ես, բայց ինչքան գիտեմ՝ երեխու տեր ես:

Այդ ժամանակ ո՞ւմ մտքով կանցներ, որ երկրագունդը պտտվելու-պտտվելու է, և Վիրաբն ու Լեոնիկը հանդիպելու են իրար:

Արդեն տասը տարի էր ինչ աշխատում էր Վիրաբը տղամարդու նման համառորեն, կետ առ կետ իրականացնելով բոլոր խոստումները, որ տվել էր Մարգոյին դեռ այն ժամանակ, այնտեղ, գերեզմանատանը, ինչպես ինքն էր ասում՝ աշխարհի ինատու: Ստիպեց, որ Մարգոն հեռակա կարգով ավարտի ֆինանսական տեխնիկումն ու Արգամ Թոռչյանի օգնությամբ նրան աշխատանքի տեղավորեց ավտոտրանսպորտի աշխատողների արհմիությունում, որպես հաշվետար: Մարգոն հագնվում էր ըստ ցանկության և արդեն ուներ իր վարսավիրը: Վիրաբը ոչինչ չէր խնայում նրա համար, ոչինչ: Մարգոն ինչ հավաներ, առանց այք թարթելու ասում էր.

- Վերցրո՛ւ, Մարգո՛ ջան:

- Երկո՛ւսը վերցրու, կնի՛կ ջան:

Ու երբ Մարգոյի համար որևէ թանկ բան էր առնում, առաջինն ինքն էր ուրախանում, աշխարհով մեկ էր լինում, չէր սպասում, որ Մարգոն խնդրի, հասկանում էր որևէ ակնարկից ու կանխում նրան: Հենց այդպես գնեց կարակուլե մուշտակը: Երկու-երեք ամիս առաջ, ձմռանը, փողոցով անցնող մի կնոջ հագի կարակուլե մուշտակը ցույց տալով, Մարգոն հառաչելով ասաց.

- Ինձ էլ կսագեր, չէ՞ ...

Ասաց ու անցավ, էլ ոչ մի խոսակցություն չեղավ այդ մասին, բայց Վիրաբը մտքում պահեց Մարգոյի հառաչանքը: Ու մի օր, երբ ունիվերսիտետի աղբյուրն էր հավաքում, լսեց, որ կարակուլե մուշտակներ են ստացել, լսեց ու առաջինը հայտնվեց վաճառասեղանի առաջ:

- Ի՞նչ էս ուզում, Վիրա՛բ,- հարցրեց ծանոթ վաճառողը:

- Էդ բանից,- ասաց Վիրաբը, ամաչելով ասել «շուրք» ու չիմանալով դրա հայերենը:

- Մուշտակ՞ն,- հարցրեց վաճառողը, որ ինքն էլ գնացուցակից էր սովորել այդ անունը,- շատ թանկ է, Վիրաբ ջան:

- Ի՞նչ արժե:

- Երկու հազար հինգ հարյուր:

- Նոր փողո՞վ, թե...

Վաճառողը ծիծաղեց.

- Դեռ հիշում ե՞ս հինը,- հարցրեց նա:- Նորով, նորով, իսկական, բնական կարակուլ է: Էսքան տարի աշխատում եմ, առաջին անգամ ենք ստանում:

- Մեկը փաթաթի,- ասաց Վիրաբը,- փողն իրիկունը կբերեմ՝ կտամ:

- Ո՞ր համարը:

- Որ համա՞րը,- մտածեց Վիրաբը,- հիսունը կլինի:

Հենց միայն նրա համար, որ երեկոյան ուրախացնելու է Մարգոյին, Վիրաբն ամբողջ օրը բարձր տրամադրության մեջ էր, բոլորն մեկ ժամացույցին էր նայում ու զարմանում, թե որքան դանդաղ են շարժվում սլաքները: Ու հենց այդպես էլ ուրախ, ժպիտը դեմքին, երեկոյան տուն մտավ ու մեծ կապոցը թափով նետեց Մարգոյի ոտքերի տակ, գորգին:

- Էս ի՞նչ բան է,- վախեցած տեղից վեր թռավ Մարգոն,- հարբա՞ծ էս, այ տղա:

- Հա՛,- ասաց Վիրաբը:- Բաց արա:

Մարգոն ծնկի իջավ գորգին, մի թեթև պատռեց փաթեթաթուղթը, նայեց, ճշաց զարմացած ու լաց եղավ:

- Ինչի՞ ես լաց լինում, ա՛յ աղջի,- երջանիկ ժպտաց Վիրաբը:

- Վիրա՛բ ջան, արևիդ մեռնեմ, ձեռքդ ոնց է գնացել էս թանկ ու կրակ բանն առնելու, ախր սա մի հազար ռուբլի կարժենա:

- Երկու ու կես հազար,- հպարտ հայտարարեց Վիրաբը:

- Ինչքա՞ն:- Մարգոն շտապով, ասես տենդի մեջ փորձեց մատներով քանդել կապը, չկարողացավ, քաշեց, քաշքշեց թելից, որ կտրի, չպատեց ուժը ու ցաված ձեռքը թափ տալով, ներքևից վեր աղաչանքով Վիրաբին նայեց:- Մի մկրատ, ա՛յ տղա, ես մեռա...

Հետո հագավ շքեղ սև մուշտակը, որն ասես վրայով կարած լինեին, ետ ու առաջ քայլեց մեծ հայելու առաջ, երկու ձեռքով բարձրացրեց տաք ու փափուկ օձիքը, սեղմեց պարանոցին, վազեց հագավ երկարաճիտ սև կոշիկները ու մնաց կանգնած Վիրաբի առջև՝ երջանկությունից փայլող դեմքով: Հետո նորից քանդեց կոճակները, ազատ արձակեց փեշերը, մոտեցավ ու փարվեց Վիրաբի կրծքին:

- Ես քեզ ո՞րտեղից գտա, տե՛ր աստված,- շնչաց նա արցունքոտ աչքերով:

- Սանդուղքի տակից,- ծիծաղեց Վիրաբը:

- Էդ դու, էդ դու ինձ սանդուղքի տակից գտար ու հանեցիր, արն՛ջան,- ասաց Մարգոն... Ու հաջորդ վայրկյանին նորից լաց եղավ:

- Լավ, հիմա՞ ինչի ես լաց լինում:

- Բա ի՞նչ անեմ,- արցունքի միջից ծիծաղեց Մարգոն,- ախր ուզում եմ հագնեմ... Բա մինչև ձմեռ ո՞նց եմ համբերելու, ա՛յ անխիղճ: Մինչև ձմեռ հեհե՛յ, տես ինչքան կա:

Ի՛նչ տաք, երջանիկ օր էր:

Հազար ու մի տարօրինակություններ ուներ Մարգոն, բայց նրա բնավորության հատկապես այդ մի գիծը շատ էր դուր գալիս Վիրաբին: Ուրիշ տներում էլ էր լինում, տեսնում էր, էլի: Ամուսինը նվեր էր բերում կնոջը, ուրախ-ուրախ մեկնում նրան, իսկ կինը առանց փաթեթը բացելու մի կողմ էր դնում:

- Կնի՛կ ջան, ախր բա՛ց արա, տե՛ս ինչ եմ առել:

- Ամա՛ն, հիմա հավես չունեմ, հետո կբացեմ, էլի:

Իսկ բացելուց հետո էլ ժպտում էր հեզնորեն:

- Իբր թե էս ի՞նչ ես առել... Հիմա ո՞վ է էսպիսի բան առնում: Այ թե ճաշակ ունես, հա՛... Սրանից հիմա ամեն տեղ թափված է:

Եվ խեղճ ամուսինը մնում էր շվար ու մոլոր:

Իսկ Մարգոն՝ չէ: Ինչ էլ տուն բերեր Վիրաբը, Մարգոն ուրախանում էր սրտանց, հագնում էր անմիջապես կամ դնում երևացող որևէ տեղ, գովում էր Վիրաբի ճաշակն ու զարմացած հարցնում, թե որտեղից է ճարել այդ նվերը: Ախր ինքը վաղուց էր փնտրում ու չէր գտնում ոչ մի խանութում:

Եվ Վիրաբը ասում էր անկեղծորեն.

- Որ եղպես ուրախանում ես, քեզ ամեն ինչ հալալ է, Մարգո՛ ջան:

Ամեն ինչ անում էր Վիրաբը Մարգոյի համար, Մարգոյին ուրախացնելու համար, գրեթե երբեք չմտածելով իր մասին: Եթե նույն Մարգոն ստիպելով նրան խանութ չտաներ կամ հուսահատված ինքը չգտներ Վիրաբին անհրաժեշտ որևէ բան, Վիրաբի մտքով էլ չէր անցնի, թե իրեն գուլպա է պետք կամ գլխարկ:

- Ինչի՞ս է պետք, Մարգո՛ ջան,- ասում էր նման դեպքում,- առավոտը գնում եմ, իրիկունը գալիս, ամբողջ օրն էլ պետական արտահագուստը հագիս է, առնում եմ ի՞նչ անեմ: Հազար հոգս ունենք:

Ոչինչ չէր ուզում Վիրաբը իր համար: Ոչինչ: Այդ տարիների ընթացքում փաստորեն միայն մի անգամ նա իր ցանկությունը, հոգու խորքում պահած իր փափագը հայտնեց, բայց արձագանք չստացավ: Երբ Մարգոն ավարտեց տեխնիկումն ու աշխատանքի անցավ, Վիրաբը մի օր խոսքի մեջ ասաց.

- Հը՞, Մարգո՛ ջան, հասա՞ր մուրազիդ: Դե հիմա էլ դու տունը պահի, ես գնամ կամ թեկուզ հեռակայելու պոլիտեխնիկ ինստիտուտին: Ինչքա՞ն պիտի էս նույն գործն անեմ, ի՞նչ ես կարծում:

Ու Մարգոն ծիծաղելով ասաց.

- Ա՛յ մարդ, ա՛յ ցավդ տանեմ, որ ավարտես՝ էսքան ստանալու ե՞ս: Մեր հարևան Համբիկը աչքիդ առաջ չի՞. տասնհինգ տարի սովորել է, ինժեներ է աշխատում ու ստացածն ընդամենը հարյուր քսան ռուբլի է: Քեզնից է սիգարետի փող ուզում:

Վիրաբը նեղացավ սրտի խորքում ու լռեց: Մարգոն նկատեց, որ վիրավորվել է ամուսինը և փորձեց կատակի տալ:

- Ես քեզ համար եմ ասում, Վիրա՛բ ջան, զահլա ունե՞ս նորից սովորելու, քննություն տալու: Ի՞նչդ է պակաս, թագավորի պես ապրում ես:

- Աղբի մեջ,- տեխնիկումի դիրեկտորին հիշելով, գոռաց Վիրաբը: Մարգոն վախեցավ:

- Ինչի՞ ես նեղանում, ցա՛վդ տանեմ, ուզում ես՝ սովորի: Ես ձեռքդ բռնե՞լ եմ:

Այնինչ Վիրաբն ուզում էր, որ նա՛ ուզի: Որ նա՛ համոզի, ստիպի իրեն սովորելու: Որ ասի. «Հերիք է, Վիրաբ ջան, հիմա հո ամեն ինչ ունենք, հո առաջվա նման որբ ու անտուն չենք, գնա սովորի, ախպեր ջան»: Որ ասի՝ բա քեզ համար հե՞շտ էր. գիշեր-ցերեկ աշխատում էիր ու հետն էլ պահում Սուսիկին, որ ես սովորեմ: Հիմա էլ դու սովորի: Ես ամեն-ամեն ինչ կանեմ, որ պահեմ տունը, ինչի՞ մասին ես մտածում, Վիրաբ ջան, սովորի, ինչո՞ւ դու էլ բարձրագույն կրթություն չունես: Ումի՞ց ես պակաս: Մի՞նչն է րբ պիտի աղբ հավաքես, իմ տանջված ախպեր:

Բայց Մարգոն ոչ մի այդպիսի բան չասաց: Ոչ մի բան: Ու անմիջապես շուտ տվեց խոսքը: Եվ Վիրաբը հանկարծ հոգով մենակ, անօգնական ու ավելորդ զգաց իրեն: Վիրավորանքը երկար ժամանակ չէր կարողանում հանել սրտից: Եվ նույնիսկ վրեժ լուծեց մի անգամ, փոքրիկ մի վրեժ, տղայավարի:

Նա վաղուց նկատել էր, որ Մարգոն ցերեկները, աշխատանքային ընդմիջման ժամանակ իր գործընկերուհիներին մեկ-մեկ տուն է բերում՝ նախաճաշի: Նկատել էր և ուրախանում էր դրա համար: Մտածում էր, որ կյանքում ընկերուհի չի ունեցել Մարգոն և տուն էլ չի ունեցել, որ հրավիրի, ու հիմա տեղը հանում է: Հրավիրում է, հյուրասիրում է, ցույց է տալիս իր ունեցած-չունեցածն ու հպարտանում է: Թող հպարտանա, թող ուրախանա, դրա իրավունքն ունի Մարգոն, Վիրաբը հենց դրա համար է ապրում: Եվ նույնիսկ չէր նեղանում, երբ ցերեկները տուն գալով, հյուրասենյակից ծիծաղ ու աղմուկ էր լսում, բայց Մարգոն չէր ասում դու էլ ներս արի, այլ ընդհակառակը՝ խնդրում էր, որ խոհանոցում նախաճաշի:

- Կանանցով հավաքվել ենք, Վիրա՛բ ջան, քեզ ի՞նչ հետաքրքիր է:

Եվ Վիրաբը համաձայնում էր: Ճիշտ որ, ներս գնա ի՞նչ անի: Բոլորը կանայք են, սուրճ են խմում, շուտ տալիս բաժակներն ու շատախոսում անվերջ: Միայն մի անգամ կասկած սողուկեց մեջը, թե գուցե Մարգոն ամաչում է իր համար, ուղղակի չի՞ ուզում, որ հյուրերը տեսնեն իրեն: Բայց անմիջապես էլ սրտից հանեց կասկածը. ամոթ է, ամոթ, ասաց ինքն իրեն, բան հնարեցիր: Ու հանգիստ, անվրդով նախաճաշեց խոհանոցում:

Իսկ այդ օրը՝ հյուրասենյակից ձայներ լսելով, Վիրաբն այլևս չսպասեց միջանցքում, կամ ինչպես Մարգոն էր ասում՝ խոլում, մինչև որ կինը դուրս գա, այլ ինքը անմիջապես հյուրասենյակ մտավ: Մտավ ու բարևեց ընդհանուր: Հավաքվածները միջին տարիքի քաված-մաված կանայք էին: Մի գույզ կոշիկ էին դրել սեղանի կենտրոնում ու քննարկում էին տաքացած: Վիրաբին տեսնելով՝ նրանք շփոթվեցին, լռեցին ու զարմացան, սպասումով նայեցին Մարգոյին: Եվ Մարգոն ժպտալով ասաց.

- Ծանոթացեք, խնդրեմ, ամուսինս է, Վիրաբը:

Եվ կանայք կրկին աշխուժացան:

- Շատ հաճելի է,- ասաց մեկը:

- Ի՞նչ հետաքրքիր է, ոնց որ քույր-եղբայր լինեք,- ասաց մյուսը:

- Ա՛յ աղջի,- սիգարետը ցած դնելով, ասաց երրորդը,- բա որ այսպիսի ամուսին ունեիր, ինչո՞ւ էիր թաքցնում: Վախենում էիր՝ փախցնե՞նք:

Վիրաբը միայն մի ակնթարթ Մարգոյի կողմը նայեց, տեսավ, որ նրա առջև սիգարետ չկա, հանգստացավ ու նստեց ազատ աթոռին:

- Դե, եթե դուք ծխում եք,- ասաց՝ շրթունքները սեղմելով,- երևի ինձ էլ թույլ կտաք ծխել:

- Ամա՛ն, էս տղամարդիկ էլ որ չեն ծխում, սիրտս պայթում է,- քրքջաց սիգարետով կինը՝ ներկած աչքերն արագ-արագ թարթելով:

- Վիրա՛բ, գիտեմ որ քաղցած կլինես հիմա, արի գնանք խոհանոց, էս քեզ կերակրեմ:

- Ինչո՞ւ, էս հո կատո՞ւ չեմ,- լրջորեն ասաց Վիրաբը:

Բոլորը ծիծաղեցին, Մարգոն սաստիկ շփոթվեց, և Վիրաբն ավելացրեց շտպով.

- Քաղցած չեմ, Մարգո՛: Հիմնարկում նախաճաշել եմ:

- Իսկ որտե՞ղ եք աշխատում, եթե գաղտնիք չէ,- հետաքրքրվեց Վիրաբի կողքին նստած կինը, որ ասեղնագործ շալ ուներ ուսերին:

- Շրջսովերի գործկոմում,- անմիջապես միջամտեց Մարգոն:

- Օ՛, հիմա ամեն ինչ հասկանալի է,- ծիծաղեց սիգարետով կինը:- Ձեր բուֆետում, իհարկե, ամեն ինչ կլինի: Եվ, հավանաբար, դեկավար աշխատող եք:

- Այո՛,- ասաց Վիրաբը,- ամբողջ օրը դեկը ձեռքիս է:

- Շատ սրամիտ էր,- արդեն քրքջաց կինը:

- Սրամտության բան չկա,- ասաց Վիրաբը՝ աչքի պոչով նկատելով, որ Մարգոն հուսահատությունից կոտրատում է մատները:- Մարգոն համեստությունից իմ աշխատանքի վայրի անունը կրճատեց: Ես ոչ թե շրջսովետի գործկոմում եմ աշխատում այլ գործկոմի մաքրման գրասենյակում:

- Իսկ այդ ի՞նչ գրասենյակ է: Ի՞նչ եք մաքրում,- դեռևս սպասելով, թե Վիրաբն ուր որ է կծիծաղի, ժպտաց կինը:

- Փողոցները,- ասաց Վիրաբը:- Փողոցներն ենք մաքրում և մայթերը, շենքերի աղբն ենք հավաքում: Ես էլ հենց իսկական դեկավար եմ, որ կամ: Վարորդ եմ: Աղբահավաք մեքենայի վրա եմ աշխատում:

- Մարգո՞,- չհավատալով՝ հարցական ընկերուհուն նայեց սիգարետով կինը:

Մարգոն թոթվեց ուսերը, իբր՝ ասում է, էլի: Եվ անմիջապես փորձեց փոխել վտանգավոր խոսակցության նյութը:

- Աղջիկներ, ասում են Շառլ Ազնավուրն է գալիս:

Բայց ոչ ոք չարձագանքեց:

- Իմիջիայլոց,- անվրդով շարունակեց Վիրաբը,- էս ձեզ կարող է նույնիսկ պետք գամ: Մեր ժողովուրդն ախր տարօրինակ ժողովուրդ է: Հենց որ նոր կահույք է առնում, հինն իսկույն ուզում է դեն շարտել:

- Իսկ ի՞նչ անի, շուկա կա՞, որ այնտեղ վաճառի,- ասաց շալով կինը:- Իսկ կոմիսիոն խանութն էլ այնքան ցածր գին է նշանակում, որ նույնիսկ տեղափոխող բեռնատարի վարձը չի փակում: Նրանք գիտեն ինչ են անում:

Նա, անկասկած, որոշ տխուր փորձ ուներ այդ հարցում, դրա համար էլ Վիրաբը գլխով արեց ու շարունակեց:

- Այդ էլ կա: Օր չի լինում, որ բնակիչներից մեկն ու մեկը չխնդրի ինձ, որպեսզի լավություն անեմ, տանեմ մի տեղ կորցնեմ իրենց համար հին, բայց գրեթե նոր պահարանները, թախտերն ու մահճակալները, որոնք, խոսքը մեր մեջ, միշտ ավելի որակով ու ամուր են, քան նորերը: Ըհը, խնդրեմ, այս պահարանը տեսնո՞ւմ եք, որի վրա հեռուստացույցն է. դեն գցած պահարան է: Այս սեղանը տեսնո՞ւմ եք: Միայն փայլեցրել ենք: Որտե՞ղ հնարավոր կլինի հիմա էսպիսի մեծ սեղան գտնել: Ու դեռ ինչքան ապրանքներ եմ այդպես բերել ու նվիրել ուրիշներին: Այնպես որ, եթե ամառանոց եք կառուցել կամ մտադիր եք կառուցել, Մարգոյի միջոցով իմաց տվեք ինձ: Ես կահույքը երկու-երեք ամսում կապահովեմ:

Ոչ ոք ցանկություն չհայտնեց հին կահույք ունենալ: Բոլորը ժպտացին միայն: Եվ Վիրաբը հարկ համարեց շարունակել խոսքը:

- Բա որ տեսնեք ինչքա՛ն գիրք են աղբարկողը լցնում և ի՛նչ գրքեր... Մեր գրապահարանները տեսնո՞ւմ եք, մեծ մասը ուրիշների դեն գցած գրքերն են: Խնդրեմ, Լեոյի «Հայոց պատմության» հատորները, Ռափայել Պատկանյան, Միքայել Նալբանդյան, Վիլյամ Սարոյան...

- Նույն պատմությունն է,- երևի գրույցը որևէ կերպ պահելու համար, ասաց շալով կինը,- մակուլատուրա հանձնելը գլխացավանք է, իսկ բուկինիստական խանութներն էլ կոպեկներ են տալիս, չթափեն՝ ի՞նչ անեն:

- Հա, բայց «Հայոց պատմությունը»,- ակամա բարկացավ Վիրաբը:- Մի բնակիչ էլ ունեմ, մսագործ է, ամբողջ տունը գրքերով լիքն է, բայց ձևի համար է առնում, չի կարդում: Գիտի որ «կարգին» մարդիկ գրքեր պիտի ունենան ու առնում է: Միայն թե կազմը փայլուն լինի: Էլ տեղ չունի պահելու: Հենց որ նոր գրքեր է առնում, հները նույն քանակով թափում է: Երեկ մի կապոց բերեց, որ գցի մեքենան, վերցրի ձեռքից: Բացեմ ու տեսնեմ ի՞նչ, բոլորն էլ հին հայերենով գրված գրքեր են, առաջին էջի վրա կնիքներ ու հին ռուսերենով գրված ազգանուններ: Ուղիղ տարա ակադեմիկոս Պարսամյանի տուն: Որ չտեսավ, ա՛խ քաշեց: «Մրանք շատ հազվագյուտ ու թանկ գրքեր են, Վիրաբ, ի՞նչու ես ինձ բերել, տար բուկինիստական խանութ... Թեև այնտեղ, անկասկած, կփորձեն խաբել քեզ»: Ամեն ինչ արել-վերջացրել եմ, մնում է գիրք վաճառե՞լը, ծիծաղեցի ես: Այնքան էր հուզվել, գրքերը ձեռքին պահած անընդհատ գլխով շնորհակալություն էր հայտնում, մինչև որ դուրս եկա:

- Ինչո՞ւ շնորհակալ չի լինի, գիտե՞ք հիմա շուկայում գիրքն ինչ արժի՛,- ասաց սիգարետ ծխող կինը:

- Հասկացողի համար,- վերջացրեց Վիրաբը:

Լռություն տիրեց և հանկարծ բոլորը միանգամից հիշեցին, որ ընդմիջման ժամը վաղուց է ավարտվել: Նայեցին ժամացույցներին, բացականչեցին զարմացած և շտապեցին հրաժեշտ

տալ Վիրաբին: Պարզ է, որ Մարգոն ևս աշխատանքի պետք է գնար նրանց հետ, բայց չդիմացավ երևի ու հյուրերին ուղեկցելուց հետո մի վայրկյանով իրեն ներս նետեց: Նայեց Վիրաբին չարությամբ, հիստերիկայից դողացող, կապտած շրթունքներով ու պարզապես Ֆշաց սեղմած ատամների արանքից.

- Հետո՞... Իբր թե ի՞նչ... Իբր թե ի՞նչ էիր ուզում դրանով ասել:

- Իսկ ի՞նչ է պատահել,- հանգիստ հարցրեց Վիրաբը:

- Էն է պատահել, որ չգիտեմ ինչու խայտառակեցիր ինձ իմ ընկերուհիների մոտ, տրորեցիր, գետնին հավասարեցրիր: Քեզ ո՞վ էր խնդրում կյանքդ պատմել նրանց, քեզ ո՞վ էր խնդրում նրանց դեն նետած սեղան ու աթոռ առաջարկել: Սա աղբի՛ միջից եմ գտել, սա աղբի՛ միջից եմ բերել: Քիչ էր մնում ասեիր, թե ինձ էլ ես աղբի միջից գտել: Ես ասում եմ շրջավետի գործկոմում է աշխատում, իսկ դու, իսկ դու... դիտմամբ...

- Ի՞նչը դիտմամբ:

- Ասում ես, թե աղբ հավաքող ավտոյի վրա եմ աշխատում:

- Է՛, հա՛, սո՞ւտ է:

- Սուտ չէ, բայց ի՞նչ կարիք կա աշխարհով մեկ հայտարարելու:

- Սպասի՛ր, Մարգո՛, քո խորհրդով չե՞մ ես էդ ավտոմեքենայի վրա աշխատում: Ամաչո՞ւմ ես դրա համար, ինչ է: Էդ ինչի՞ վաճառող աշխատելը ամոթ չի, հաշվապահ աշխատելն ամոթ չի, տաքսիի վարորդ աշխատելն ամոթ չի, իսկ իմ գործը ամոթ է: Էդ ինչո՞ւ առաջ չէիր ամաչում, հիմա ես հանկարծ ամաչում: Եվ վերջապես, քանի՞ անգամ եմ ասել, որ հոգնել եմ, ուզում եմ ուրիշ աշխատանքի անցնել: Ուզում եմ սովորել, բարձրագույն կրթություն ստանալ, ինչո՞ւ ոչ մի ձայն չէիր հանում, սիրելի կնիկ:

- Չե՞մ ասել: Ինչ որ ասել եմ, հիմա էլ եմ ասում. ինչ ուզում ես, արա...

- Հիմա էլ ոչինչ չեմ ուզում, ուշ է,- ասաց Վիրաբը,- հիմա ուզում եմ հանգիստ կատարել իմ գործը ու, երբ պետք լինի, առանց ամաչելու աշխարհով մեկ հայտարարել, թե ինչ գործ եմ անում: Էդքան բան: Իսկ եթե դա քեզ դուր չի գալիս, մտածիր, որոշիր, թե ինչ ես անում:

- Շատ լավ,- ժամացույցին նայելով, նետեց Մարգոն ու դուռը շրխկացնելով դուրս եկավ տնից:

Իսկ երեկոյան, երբ Վիրաբը տուն եկավ, պատերազմական մթնոլորտի ոչ մի հոտ չկար տանը: Ընդհակառակը, խոհանոցից Վիրաբի սիրած բոգրաշի հոտն էր գալիս, երկու շիշ գարեջուր էր սատչում ջրի ծորակի տակ, իսկ հյուրասենյակից լսվում էր Մարգոյի մեղմ ձայնը.

- Դե լավ, Սուսի՛կ ջան, ինչ անում ես՝ առանց աղմուկի, հա՞... Հայրիկը եկել է ու հոգնած է: Կարծում ես հեն շտ է ամբողջ օրը ավտոմեքենայի աղմուկի մեջ:

Վիրաբը ժպտաց: Ինչ ուզում ես արա՝ Մարգոն մնում է Մարգո:

... Հիշելով այդ ամենը՝ Վիրաբը հիմա էլ ժպտաց ճիշտ նույն ժպիտով, ինչպես այն օրը, ավտոմեքենան դուրս բերեց մայրուղուց, դեկը շրջեց դեպի Առափնյա փողոց, մոտեցավ առաջին տանը, արգելակեց ավտոմեքենան ու սկսեց իր ամենօրյա գործը:

Հենց առաջին աղբարկղը դատարկելու ժամանակ Վիրաբը մի խաղալիք տիկնիկ տեսավ, որ հավանաբար փոքրիկ երեխաներից մեկն էր գցել՝ ծնողների օրինակով: Գցել էր ու այլևս չէր կարողացել հանել կամ մոռացել էր: Երեխան հիմա երևի փնտրում է ամեն տեղ ու լաց լինում: Վիրաբը վերցրեց տիկնիկը, մաքուր լվաց ցայտաղբյուրի ջրի տակ ու դրեց նստարանին: Երեխան կտեսնի՝ կուրախանա: Տիկնիկը սկսեց օրորվել նստարանի վրա: Միբուն աղջիկ էր՝ սև մազերով, սև աչքերով, ձեռքերը կողքին կանթած և ինչ-որ մեկին էր հիշեցնում: Ներքևի մասում ծանրություն էր դրված և դրանից տիկնիկը չէր ընկնում: Օրորվում էր, բայց չէր ընկնում: Վիրաբը մեկ մի կողմ թեքեց, մեկ մյուս կողմ, բայց տիկնիկը համառորեն բարձրանում էր ու Վիրաբին էր նայում ծիծաղկոտ, սև աչքերով: Վիրաբը մի անգամ էլ նայեց տիկնիկի դեմքին, հիշեց թե ում է նման, մտածեց, որ բնավորությամբ էլ շատ ու շատ նման է, երբեք կողի չի ընկնում, ծիծաղեց ու ասաց.

- Բարև, Մարգո՛, ո՞նց ես...

*

* *

Իսկ Լեռնիկին հանդիպեց այնտեղ, որտեղ բոլորովին չէր սպասում, բայց զգում էր, որ մոտակայքում անպայման որևէ Լեռնիկ պիտի լինի:

Վիրաբի թաղամասը հաղթող ճանաչվեց «Մաքուր պահենք մեր քաղաքը» նշանաբանով անցկացվող քաղաքային ստուգատեսում: Քաղսովետի գործկոմի նախագահը, որ Երևանին սիրահարված, խանդավառ մի մարդ էր՝ ճարտարապետի կրթությամբ և բանաստեղծի հոգով և իր քաղաքի մասին պատմելիս սիրում էր բացարձակ գրական լեզվով ու ճոխ համեմատություններով խոսել, անձամբ շրջեց բոլոր թաղամասերը, Վիրաբի թաղամասը ոտքով ծայրեծայր անցավ, ու հանկարծ հին երևանցի տղայի նման ասաց.

- Արա՛, դե որ ուզենան՝ մաքուր կպահեն, էլի:

Եվ հարցրեց.

- Ո՞ւմ թաղամասն է սա:

Վիրաբին առաջ հրեցին:

- Ապրե՛ս,- ասաց նախագահը:- Հիմա ի՛նձ լսիր, ես ոսկե ձկնիկն եմ, ասա՛, ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ համար:

Վիրաբը ծիծաղեց ու համարձակություն առավ.

- Վախենում եմ վերջում էլի կոտրած տաշտակի առաջ կանգնեմ:

Նախագահը սրտանց ծիծաղեց և դառնալով տեղակալին՝ ասաց.

- Հերթից դուրս մի «ֆիատ» տվեք այս պայծառ մարդուն:

Ու նորից շրջվեց դեպի Վիրաբը:

- Կուզե՞ս:

Վիրաբը սկզբում ուզեց ասել, որ այդքան փող չունի, բայց ամաչեց ու հետն էլ պատկերացրեց, թե ինչպես է «ֆիատի» դեկին նստած Ծաղկաձոր գնում, իսկ կողքին էլ Մարգոն է, ետ է ընկել փափուկ աթոռին, փակել է աչքերն ու ասում է. «Ես երջանիկ եմ, Վիրա՛բ»: Մի վայրկյանում պատկերացրեց այդ ամենը Վիրաբն ու ասաց.

- Կուզեմ, ընկե՛ր նախագահ: Շատ, շատ շնորհակալ եմ:

Նա մտածում էր, թե գոնե մի տարի կտևի, մինչև ավտոմեքենան տան ու այդ ընթացքում փող ետ կգցի և շատ զարմացավ, երբ մի շաբաթ հետո կանչեցին քաղսովետի գործկոմ ու մի թուղթ տվեցին, որով հենց նույն օրն էլ Վիրաբը կարող էր ստանալ իր ավտոմեքենան:

Դե գնա ու ստացի: Նա ընդամենը երեք հազար ուներ: Պետք էր ևս երկու հազար հինգ հարյուր ռուբլի: Եվ Վիրաբը կրկին մենակ ու անօգնական զգաց իրեն: Նրան միամտաբար թվում էր, թե եթե եղբայրներ ու քույրեր ունենար, հորեղբայրներ կամ քեռիներ, մի վայրկյանում կհավաքեր այդ գումարը: Նա չգիտեր, որ հարազատները հիմնականում ստանալ են սիրում և ոչ թե տալ: Չգիտեր և դժբախտ էր զգում իրեն: Հիմնարկում ամաչելով ու գույն տալով-առնելով, նա պարտք խնդրեց մի երկու հոգուց, որոնք իր կարծիքով պետք է ունենային: Բայց մեկը հուսահատ տարածեց ձեռքերը, թե ինձ փող որտեղի՞ց, ինչ տուն եմ տանում՝ կանաչ-կանաչ ուտում են, իսկ մյուսը անկեղծորեն ասաց, որ ունի, բայց տալ չի կարող:

- Ինչո՞ւ,- զարմացավ Վիրաբը,- չորս ամսից կվերադարձնեմ:

- Չեմ կարող,- ասաց ընկերը,- իմ ունեցածը բոլորը երեք տոկոսանոց փոխառություններ են, որ տամ՝ ինձ համար շատ ծանր կլինի, անընդհատ մտածելու եմ, թե գուցե հենց էդ համարները մեծ գումար կշահեին: Այնպես որ՝ կներես, ախպեր:

Իսկ երրորդը բոլորովին ուրիշ բան ասաց.

- Որ փող չունես, ինչի՞ ես առնում, Վիրա՛բ: Մեքենադ ինձ տուր, ես էլ քեզ երկու հազար ռուբլի տամ: Միանգամից փողի տեր կդառնաս, էլ ի՞նչ ես ուզում:

Տուն դառնալուց առաջ Վիրաբը հենց այնպես, սիրտը թեթևացնելու համար այդ ամենի մասին պատմեց Սենեքերիմ քեռուն: Սենեքերիմ քեռին տեղից վեր կացավ ու ասաց.

- Իմ պոստում կանգնի, հիմա գալիս եմ:

Նրա տունը մոտերքում էր, վերադարձավ մի տասը բուսերից և լրագրի մեջ փաթաթած ինչ-որ բան մեկնեց Վիրաբին:

- Էս ի՞նչ է,- զարմացավ Վիրաբը:

- Երկու հազար ռուբլի է, ավել չունեմ, Վիրա՛բ ջան, հավաքել եմ, որ թոռանս համար կոռպե-րատիվ գրվեմ: Էն էլ ձգձգում եմ:

- Ես քո ցա՛վը տանեմ, Սենեքերի՛մ քեռի,- հուզվեց Վիրաբը:

- Ինչի՞ ես էդպես ասում,- անկեղծորեն վիրավորվեց ծեր պահակը,- դու ջահել ես, ե՛ս քո ցավը տանեմ: Մի անգամ ավտոդ կնստեցնես, տեղը դուրս կգա:

- Երբ ուզես,- գոռաց Վիրաբը,- երբ ուզես:

Տանը նա հրաժարվեց ճաշից, ուրախությունից փակվել էր ախորժակը և Մարգոյին ասաց.

- Հինգ հարյուր ռուբլի՛ ճարի, Մարգո՛:

- Ինչի՞ համար:

- Ավտո եմ առնում: Ահա թուղթը: Քաղսովետի նախագահը տվեց: Իր գնով, հասկանո՞ւմ ես:

Նա սպասում էր, թե հիմա ուր որ է Մարգոն վեր-վեր կթռչի, բայց կինն ընդամենը բարձրացավ նստած տեղից, նայեց վեր՝ կարծես առաստաղին ու սկսեց ինչ-որ բան մրմնջալ: «Աղոթո՞ւմ է, ինչ է», - զարմացավ Վիրաբը:

- Էն ծաղկամանը իջեցրո՛ւ,- պահարանի վրա, պատին սեղմած ծաղկամանը ցույց տալով, ասաց Մարգոն:

Վիրաբը հնազանդորեն կատարեց նրա կարգադրությունը:

- Ինչ որ մեջը կա՝ հանիր,- ասաց Մարգոն:

- Իսկ ի՞նչ կա մեջը,- հարցրեց Վիրաբը, հետն էլ փոքրիկ մի փաթեթ դուրս բերելով ծաղկամա-նի միջից:

- Էլ ո՞ր օրվա համար եմ հավաքել, պահել դողդողալով: Մրանից էլ լավ օ՞ր, հազար ռուբլի է,- ասաց ու նոր միայն հարձակվեց Վիրաբի վրա, գրկեց, պտտեցրեց սենյակով մեկ, հետն էլ ու-րախությունից աղաղակելով,- ուռա՛ , մենք ավտո ենք ունենալու, մենք ավտո ենք ունենալու...

- Հինգ հարյուրը հերիք է,- կնոջից մի կերպ ազատվելով, ասաց Վիրաբը:

- Չի իմացվի,- ասաց Մարգոն:

Հաստատ նա կյանքն ավելի լավ գիտեր, քան Վիրաբը:

Ավտոմեքենան տվեցին մի շաբաթում, բայց երեք ամիս տևեց, մինչև որ ստացան: Ոչ մի կերպ չէր հաջողվում: Մեկ՝ այսօր արի, մեկ՝ վաղն արի, մեկ՝ ստացել ենք, բայց շարժիչն ուրիշ մոդելի է, մեկ՝ բերել են, բայց ճանապարհին գնացքի վրա կողոպտել են մեքենաները: Վիրաբը քիչ էր մնում լաց լինի: Երբ ավտոմեքենայի հարկ չկար, պետքն էլ չէր, մտքով էլ չէր անցնում: Իսկ հիմա օր ու գիշեր ավտոյի մասին էր մտածում. երազում ավտո էր տեսնում, փողոցում կանգ էր առնում «ֆիատ»-ների մոտ և ուշադիր գնում թափաքերը, լծակները, ցուցիչները: Ավտոմեքենայից բացի ինչի մասին էլ խոսեին մոտը՝ ջղայնանում էր: Մի խոսքով՝ ավտոցավով հիվանդացել էր Վիրաբը:

- Ա՛յ տղա,- նրա տառապանքը տեսնելով, մի երեկո ասաց Մարգոն,- գուցե փո՞ղ են ուզում:

- Ասում ես, էլի,- ձեռքերը թափ տվեց Վիրաբը:

- Ճիշտ եմ ասում, ա՛յ լուսնից ընկած, գնա ու կարգին հետաքրքրվի:

- Ասենք թե ուզում են,- զայրացավ Վիրաբը:- Տանեմ ո՞ւմ տամ կամ ո՞նց տամ: Հետո ի՞նչ ասեմ: Հանկարծ բռնեցին՝ խայտառակ արեցին, գրեցին հիմնարկ կամ էլ դատի տվեցին՝ համարելով կաշառք:

- Հա՛, հա՛, հա՛, բանտերը դրանցով լիքն են,- հեզնեց Մարգոն:- Ոչ մի բան էլ մի ասա, իմացիր ով է, սուս ու փուս տար ու տուր:

Հաջորդ օրն ընդամենը կես ժամ տևեց ճշտելը, թե փողն ում պիտի տա: Բանվորներից մեկն ասաց.

- Էլ ո՞ւմ պիտի տաս, խանութի վարիչին: Գնա մտիր մոտը, հարյուր մանեթ փաստաթղթերի մեջ դիր ու տուր իրեն: Լեռնիկ է անունը:

- Լեռնի՞կ,- հարցրեց Վիրաբը, բայց մտքով էլ չանցավ, թե դա իրենց «ընկեր Լեռնիկը» կլինի:

Նա մի կես ժամ ևս աննպատակ շրջեց միջանցքներում, մտավ բուֆետ՝ կոմպոտ խմեց, գրպանից հարյուր անգամ հանեց ու տեղը դրեց փողերը, վերջը չորս հատ քսանհինգանոց դրեց փաստաթղթի մեջ ու մտավ այն առանձնասենյակը, որի վրա գրված էր «Ավտոխանութի վարիչ»: Մտավ ու կանգ առավ ապշած:

Գրասենյակի ետևում նստած էր Լեռնիկը:

- Բե՛ր, բե՛ր,- ծիծաղեց Լեռնիկը,- բա որ ասում էի ձեռքս կընկնե՞ս, մեր տղա...

- Ընկեր Լեռնի՞կ...

- Բե՛ր, բե՛ր ստորագրեմ,- նրա ձեռքից թղթերը գրեթե խլելով և թուուցիկ հայացք նետելով դրամներին, ժպտաց Լեռնիկը:- Հենց հիմա քո ուզած մեքենան կտամ: Ի՞նչ գույն ես սիրում: Երևի սպիտակ, չէ՞: Սպիտակն ամենալավն է, փոշին չի երևում:

- Սպիտակ,- ակամա ասաց Վիրաբը:

- Գնա՛ ներքև ու վերցրո՛ւ: Ասա՛ Լեռնիկն է ուղարկել:

- Բա երեք ամիս...- սկսեց Վիրաբը և հանկարծ զգաց, որ արդեն դրսում է խոսում, իջնում է սանդուղքով ու խոսում է ինքն իրեն, հայեղում ու իջնում, հա իջնում է ասես անվերջանալի, ոլոր-մոլոր սանդուղքով:

Ուրեմն՝ երեք ամիս առաջ կարող էր նույնն անել և ոչ տառապել, ոչ էլ երագում ավտո տեսնել: Իսկ եթե հիմա չաներ, ուրեմն՝ դեռ առնվազն երեք ամիս էլ պետք է գար ու գնար՝ հավատալով, թե դեռ ավտո չեն ստացել, թե ստացածը կողոպտել են ճանապարհին, իսկ այն ավտոները, որ բակում շարված են, ոչ մեկն էլ բանի պետք չէ, հետ են ուղարկելու գործարան՝ վերանորոգման: Վա՛յ, Լեռնիկ, Լեռնիկ, վա՛յ, սրիկա, ոնց է պտտվել-պտտվել ու էլի բուն դրել մի անկյունում, որտեղ կարող է փող պոկել մարդկանցից: Վիրաբը խոցված էր մինչև հոգու խորքը: Մի պահ նույնիսկ մտածեց ետ դառնալ ու նույն պատմությունը սարքել, ինչպես մաքրման գրասենյակում: Բայց անմիջապես էլ թողեց այդ միտքը: Նախ շատ երկար էր ու ոլոր-մոլոր վերև տանող սանդուղքը: Հետո ամաչում էր: Ինչքան էլ տարօրինակ թվա՝ Վիրաբն ինքն էր ամաչում:

Նա բացեց տան դուռը և հրճվանքը զսպելով, որքան կարող էր անտարբեր, կնոջն ու աղջկան ասաց.

- Գնացե՛ք բալկոն ու ներքև՝ նայեք:

- Հը՞, եղա՞վ,- ծիծաղեց Մարգոն ու պատշգամբ նետվեց:

Իսկ երբ քիչ անց պատշգամբ ելավ նաև Վիրաբը, տեսավ, որ Մարգոն հպարտությունից շողացող աչքերով բակում հավաքված հարևաններին է նայում, իսկ Սուսանը պատշգամբի երկաթե ճաղերից բռնած վեր-վեր է ցատկում ու երջանիկ ճչում.

- Մեր հայրիկի ավ-տո՛ն, մեր հայրիկի ավ-տո՛ն...

- Լա՛վ, ամոթ է, նե՛րս եկեք,- զգալով, որ կուրծքը ուռչում է հուզմունքից, սաստեց Վիրաբը:

- Հենց հիմա մեզ տանում ես ման գալու,- վճռեց Մարգոն:

- Չէ՛, Մարգո՛,- ասաց Վիրաբը,- մի՛ նեղանա, բայց այդ օրը ես էնքան եմ երագումս տեսել, որ ուրիշ տեսակ չեմ ուզում: Վաղն իմ հանգստյան օրն է: Չու ես խաշում՝ թարխունով, կարտոֆիլ ես խաշում՝ սամիթով, միս ես խաշում ու կարմիր լոբի, իսկ մնացածն արդեն ինչ-որ ուզում ես, վաղը լցվում ենք ավտոն, գնում ենք շուկայի մոտով, լավաշ ու միրգ ենք առնում ու թը՛ռ, դեպի Ծաղկաձոր: Ո՞նց է:

Բայց Սուսանի երջանիկ ճիչ-աղաղակը չթողեց, որ նա լսեր Մարգոյի պատասխանը:

Հետո, երբ Վիրաբը երբեմն-երբեմն մտաբերում էր իր անցկացրած ուրախ օրերը, առաջին հերթին այդ օրն էր հայտնվում աչքի առաջ:

Բրդե հաստ ծածկոցները փռել էին բացատում, անտառի փեշին, ծաղիկների մեջ: Սուսանը կուշտ կերել ու հիմա գառան նման խաղում էր խոտերի մեջ, ծաղիկներ քաղում ու մատների մեջ ամուր բռնած վագում ծնողների մոտ:

- Հայրի՛կ, էս քեզ համար եմ քաղել:

- Էս էլ քեզ համար, մա՛մ:

Վիրաբն ու Մարգոն այնքան բան ունեին իրար ասելու, որ խոսել չէին ուզում: Նայում էին Սուսանին, նայում էին իրար ու ժպտում: Հետո Մարգոն ասաց.

- Էս բարձր գլխիդ տակ դիր ու քնիր մի քիչ, կյա՛նք ջան:

Վիրաբն սուտ տրտնջաց.

- Ճանճերը հանգիստ չեն տա:

- Չե՛մ թողնի քեզ մոտիկ գան, կքշեմ,- ժպտաց Մարգոն ու ձեռքն առավ ուռնու ճյուղը, որով քիչ առաջ ճանճերին սփռոցից էր հալածում:

Վիրաբն պտուկեց մեջքի վրա, գլուխը թաղեց փափուկ բարձի մեջ, դեպի երկինք նայեց ու մրմնջաց.

- Փա՛ռքդ շատ, որբերի՛ աստված:

- Ի՞նչ,- նրա վրա թեքվեց Մարգոն:

- Արգամ Թոռյանին հիշեցի,- ասաց Վիրաբն՝ համարյա քնի մեջ:

Ու անմիջապես էլ երազ տեսավ: Տեսավ՝ իբր կանգնած է բարձր մի քարածայռի վրա ու ոտքերի տակ ալեկոծվող ծովին է նայում: Այսինքն՝ ծո՛վ էր, թե Սևանա լիճն էր, Վիրաբն չէր կարողանում որոշել: Միայն թե կանգնած էր քարածայռի վրա, ոտքերի տակ ալեկոծվող ջրերին էր նայում ու այրվող, կարմիր մայրամուտին ու մրմնջում. «Փառքդ շատ, տե՛ր աստված»:

Ու մեկ էլ հանկարծ խորին զարմանքով նկատեց, որ մայր մտնող արեգակի բոսորագույն օղակների միջից հայտնվելով, ու ջրերի վրա արեգակի նետած շողշողուն ճառագայթի վրայով հանդարտ քայլերով, իրեն է մոտենում երկար մորուքով մի ծերունի: Նրա հագուստն ասես փրփուրներից ու ամպի քուլաներից լինէր: Որտե՞ղ էմ հանդիպել այս մարդուն, մտածեց Վիրաբն ու միանգամից դող անցավ մարմնով: Հիշեց, որ Էջմիածնի Մայր տաճարում, սրբապատկերի վրա է տեսել: Ուրեց ինչ-որ բան ասել, կարկամեց լեզուն: Իսկ ծերունին հանդարտ ու վեհաքայլ մոտեցավ քարածայռին, կանգ առավ ալիքների բարձրացող մշուշի մեջ, բարձրացրեց ալեհեր գլուխն ու ասաց.

- Վերջերս շատ ես իմ անունը տալիս, Վիրա՛բ:

Վիրաբն ծնկի իջավ ակամա, ջերմեռանդորեն առաջ պարզեց ձեռքերն ու ինքն էլ զարմացած, թե ինչքան պարզ ու զրնգուն է հնչում ձայնը, բացականչեց.

- Շնորհակալ եմ քեզ, որբերի՛ աստված:

Բայց ծերունին դանդաղորեն բարձրացրեց աջը և ընդհատեց Վիրաբին.

- Քո դժբախտությունը առաքինություն և առավելություն մի՛ դարձրու, որոյա՛կ իմ: Բոլոր մարդ-արարածներն էլ իմ ստեղծածն են և հավասար են: Ես ամբողջ մարդկության արարիչն եմ:

- Շնորհակալ եմ քեզ, տե՛ր աստված,- բացականչեց Վիրաբը՝ կրկին զարմանալով, որ այդքան զրնգուն է ձայնը ու ամաչելով, որ մի տեսակ կերկերուն են ստացվում խոսքերը և աստված կարող է մտածել, թե ինքը կեղծում ու շողոքորթում է:- Ես տո՛ւն չունեի, ու դու ինձ տուն տվեցիր, ես կահույք չունեի, և դու ինձ կահույք տվեցիր, ես ավտո՛ չունեի, և դու ինձ ավտո տվեցիր...

- Այդ բոլորը քեզ քաղսովետն է տվել,- հանկարծ զայրացավ աստված:

- Ի՞նչ,- ականջներին չհավատալով, հարցրեց Վիրաբը, բայց աստված հարկ չհամարեց անդրադառնալ այդ հարցին:

- Տուն, տեղ, ունեցվածք, դրանք անմիտ բաներ են, Վիրա՛բ, ունայնություն,- խստորեն ասաց ծերունին,- դու ամենակարևորն ես մոռացել, և ես ուզում եմ հիշեցնել քեզ ամենակարևորը: Ես քեզ հոգի եմ տվել և ավելին՝ ես քեզ անմահություն եմ տվել հանձինս քո զավակի, որ քեզանից հետո երկիրը չամայանա: Ահա թե ինչ եմ ես պարզնել քեզ: Եվ դու պիտի հասկանաս, թե ինչու եմ ես քեզ հոգի տվել ու տվել զավակ, տղա՛ս: Հոգի և զավակ... Հոգի և զավակ...

Վիրաբը, որ երկյուղածությունից խոնարհել էր գլուխը՝ ծերունու խոսքի ժամանակ, հանկարծ զգաց, որ աստծո ձայնը էլի է լսել: Հատկապես, երբ ասաց. «տղա՛ս»: Շատ ծանոթ ձայն էր: Ու միանգամից հիշեց, որ այդ ձայնով ավտոտեխնիկումի դիրեկտոր Արզամ Թոռչյանն է խոսում, և միայն նա է, որ իրեն ասում է «տղա՛ս»:

«Մա՞ ինչ բան է», - զարմացած մտածեց նա ու ընդոստ բարձրացրեց գլուխը... սառը քրտինքի մեջ կորած: Մի պահ տրորեց աչքերը, չհասկանալով, թե որտեղ է գտնվում, սարսափեց միանգամից ու գոռաց.

- Մուսանս որտե՞ղ է, Մուսանս:

- Քեզ ի՞նչ պատահեց, ա՛յ տղա,- լսեց նա Մարգոյի ձայնը:- Երազ տեսա՞ր: Երեխան հրեն խաղում է խոտերի մեջ:

Վիրաբը դեռ դողում էր:

- Ծանր երազ տեսա, շատ ծանր երազ,- դեռ կարգին չսթափվելով մղձավանջից, կմկմալով ու կցկտուր երազը պատմեց Վիրաբը:- Մուսանին կանչիր ինձ մոտ, Մարգո ջան:

Նա գրկեց աղջկան, որից ծաղկի ու հողի հոտ էր գալիս, համբուրեց տենդորեն, խելահեղ, այնքան ուժգին, որ Մուսանը չդիմացավ:

- Բա դա պաչե՞լ է,- ասաց նա լացակումած:

Իսկ երբ երեխան հեռացել էր նորից, երկար, երկար նայեց նրան ու դառնալով կնոջն, ասաց.

- Մարգո՛, երևի դա լավ բան չի, բայց ես Սուսանին էնքան եմ սիրում, էնքան եմ սիրում, որ երբ մտածում եմ, թե մի օր...չի լինելու, մեռնելու է,- նա նկատեց կնոջ ձեռքի ջղային շարժումը և շարունակեց շտապով,- հիմա չէ, է՛, աստված հեռու տանի, հետո՛, հետո՛, թեկուզ հարյուր տարեկան դառնա... Որ մտածում եմ, թե մի օր չի լինելու, ուզում եմ հենց հիմա սպանեմ ինձ:

Մարգոն, ինչպես միշտ, գործնական էր.

- Քո երազը նշան է,- ասաց նա: -Մյուս կիրակի Էջմիածնում իմ ձեռքով մի ոչխար եմ մատաղ անելու: Դու ուզում ես արի, ուզում ես՝ մի արի: Անելու եմ:

*

* *

Վիրաբն ավտոմեքենան նորակառույց շենքի բակը մտցրեց, ձեռքը վերցրեց պղնձե զանգն ու սկսեց թափահարել: Միանգամից խախտվեց վաղորդյան անդորրը, ճնճուկները վախեցած դուրս թափվեցին ծառերի սաղարթների միջից ու սկսեցին տագնապահար ճախրել օդում, մանկական հրապարակում, հենց կարուսելի նստարաններից մեկի վրա քնած շունն արթնացավ ու փախավ հաչելով, շենքի լուսամուտների ետևում հայտնվեցին դժգոհ, քնաթաթախ դեմքեր:

Հիմա կսկսվի, մտածեց Վիրաբը՝ շարունակելով թափահարել զանգը: Առաջինը տիկին Էմման հայտնվեց առաջին հարկի պատշգամբում, չարությամբ նայեց Վիրաբին, ինչ-որ բան բղավեց ու մատով ցույց տվեց ձեռքի ժամացույցը: Զանգի դողանջների տակ Վիրաբը բնականաբար չլսեց, թե այսօր հատկապես ինչ է ասում տիկին Էմման, բայց քանի որ այդ արարողությունը կատարվում էր ամեն օր, Վիրաբն անգիր գիտեր տիկին Էմմայի հայտարարություն-բողոքի բովանդակությունը:

- Ինչո՞ւ եք առավոտ շուտ արթնացնում մարդկանց, անխի՛ղճ անիրավներ, դեռ տասը բույե կա:

Նրա ժամացույցը չգիտես ինչու միշտ տասը բույե առաջ էր լինում:

Հետո շենքի մուտքերից հայտնվեցին մյուս բնակիչները՝ դուլերով, տուփերով, արկղերով, դեռ անլվա ու կարգին չհագնված, ամաչելով նայել իրար ու բարևել: Մեկը շտապելուց մոռացել էր հագնել գուլպաները և մի գուլպայով էր եկել, երկրորդը բիզուդիների մի մասը գլխին ցցված էր եկել, երրորդն ուղղակի մերկ մարմնի վրա գցել էր խալաթը ու մի ձեռքով խալաթն էր բռնել, մյուսով՝ դուլը, չորրորդը եկել էր լրիվ հագնված, նույնիսկ քողը փետրավոր գլխարկից կախ՝ ասես թատրոն էր շտապում: Իսկ հիմնականում աղբ թափողները տղամարդիկ էին.

տարբեր հասակի, գեր ու նիհար մարդիկ՝ հագնված, կիսահագնված ու գրեթե մերկ: Վիրաբը կարեկցանքով էր նայում նրանցից մեկին՝ իմանալով, որ մենակ մարդ է, և մյուսին, որովհետև երկար ժամանակ հիվանդ է կինը, ու գրեթե ատելությամբ կամ արհամարհանքով էր դիտում մեծ ու փոքր պաշտոնյաներին, որոնք հիմնարկում ման են գալիս քիթը ցցած, ահ ու դողի մեջ են պահում ստորադրյալներին, բայց չեն համարձակվում ոչ մի տեղ չաշխատող, քսված-քսված իրենց կանանց համոզել, որ ոչինչ էլ չի պատահի, եթե մեկ-մեկ էլ նրանք թափեն աղբը: Նրան հատկապես զայրացնում էր կապի մինիստրի տեղակալը, որը իրեն սպասող վարորդի աչքի առաջ, ծանր-ծանր քաշ տալով, տեղափոխում էր աղբով լի բաց արկղերն ու տուփերը՝ ծնոտով ամենավերևի տուփը պահելով, և դեռ թափելուց առաջ էլ վերև իրենց տան պատշգամբին էր նայում, սպասելով բազրիքից կախված ջահել կնոջ վերջին կարգադրությանը:

- Մացա՛կ Գավրիլիչ,- ձայն էր տալիս կինը,- բոլորը գցի՛, բայց վերևի տուփը ե՛տ բեր: Դատարկի նոր բեր, հա ...

- Եղավ, Ալլոչկա,- սեղմած ծնոտների արանքից ասում էր մինիստրի տեղակալը,- եղավ, հոգի՛ ջան:

Տնքտնքալով ավտոմեքենայի թափքի մեջ էր լցնում արկղերը և դատարկ տուփը ձեռքին բռնած խիստ դեմքով դառնում էր Վիրաբին.

- Մա ի՞նչ խայտառակություն է, չեք կարո՞ղ մեքենան մեր մուտքի մոտ կանգնեցնել: Ի՞նչ է, զանգ տա՛ մ՛ ձեր պետին:

- Չա՛նգ տվեք,- հանգիստ պատասխանում է Վիրաբը:

Նրան զարմացնում և ինչ-որ չափով նույնիսկ վիշտ էր պատճառում, որ աղբ թափողների մեջ քիչ են ջահելները և երեխաները: Եթե չլինեն, հասկանալի է, բայց կան, չէ՞: Հրեն մեկը պատշգամբում վեր-վեր է ցատկում պարանով, մյուսը պոտվում է առաստաղից կախված օղակների վրա, երրորդը զսպանակ է ձգում՝ մկաններն ուժեղացնելու համար: Ինչո՞ւ իրենց ծնողներին չեն հարգում, ինչո՞ւ չեն ուզում թեթևացնել նրանց հոգսը, տեղում աննպատակ վազելու փոխարեն՝ աղբը ձեռքիդ մինչև ավտոմեքենան վազի, էլի: Եվ շատ էր հուզվում, երբ փոքրիկների էր տեսնում, որոնք մի կողմի վրա թեքված, ծանր դույլը մյուս ձեռքին, կարմրատակած, բայց արժանապատվությամբ տանում էին իրենց բեռը: Վիրաբը չէր էլ թողնում, որ նրանք ավտոմեքենային հասնեն, ընդառաջ էր գալիս, ձեռքերից վերցնում աղբը, դատարկում, ետ վերադարձնում դույլը և հետն էլ անպայման ասում.

- Ապրե՛ս, հայրդ թող ուրախանա, որ քեզ նման տղա ունի:

- Ապրե՛ս, աղջի՛կ ջան, ապագադ համարի ապահովված:

Իսկ ընդհանրապես գտնում էր, որ թե իր առաջարկները, թե այս որոշումը ճարահատված լինելու արդյունք է, ուրիշ ոչինչ: Հիմա, ճիշտ է, անհամեմատ մաքուր են բակերն ու փողոցները, բայց ի՞նչ գնով: Մարդիկ գերի են դարձել աղբին, բոպեն մեկ ցած են նայում լուսամուտից կամ անջատում ռադիոն, որ տեսնեն չի՞ զնգզնգում արդյոք աղբահավաք ավտոմեքենան: Բոլորն էլ հո նույն տեղում չեն աշխատում. մարդիկ կան, որ տասը կիլոմետր ճանապարհ են անցնում՝ իրենց հիմնարկը հասնելու համար: Սպասում են ավտոմեքենային, ուշանում են, դժգոհում

են: Բայց ի՞նչ անի ինքը: Հո հնարավոր չէ նույն վայրկյանին ամեն տեղ լինել: Ու այլևս չի վիրավորվում, այլ միայն ծիծաղում է, երբ հանկարծ որևէ բակից հեռանալիս մեկ էլ հուսահատ աղաղակներ է լսում.

- Ա՛ղբ, ա՛ղբ ջան, սպասի՛ր, ցա՛վդ տանեմ...

Ի՞նչ անեն մարդիկ, ամռանը տանը աղբ թողնե՞լ կլինի: Չի լինի: Դու ինչ որոշում ուզում ես ընդունի: Որևէ կերպ հնարը գտնում են: Աղբը շատ զգուշությամբ ու ճաշակով փաթեթավորում են, նույնիսկ՝ կապում ժապավենով, որ տեսնողը մտածի, թե հյուր է գնում մարդը և ահա, նվեր է տանում: Ու փողոցում որևէ տեղ, երբ շրջակայքում ոչ ոք չի լինում, թողնում են նստարանին, նետում պատի տակ, դնում ծխախոտի կրճռոնների կամ պաղպաղակի թղթերի համար նախատեսված փոքրիկ աղբանոթների վրա: Ի՞նչ կարող ես անել: Մարդիկ կամ քնով են անցել, կամ աշխատել են գիշերը, կամ ստիպված են շատ ավելի վաղ աշխատանքի գնալ: Վիրաբը չի նեղանում նրանցից, չի սրտնեղում, ուղղակի պլանից դուրս, օրվա մեջ մի անգամ էլ է անցնում իր երթուղով ու հավաքում տոնականորեն ձևավորված փաթեթները:

Վիրաբը հիշեց ու ժպտաց:

Մի անգամ շատ ծիծաղելի բան ստացվեց: Վիրաբը հավաքում էր այստեղ-այնտեղ նետած գույնզգույն ժապավեններով կապված փաթեթներն ու տորթի տուփերը, երբ փաթեթներից մեկը, չգիտես ինչու, կասկածելի թվաց նրան: Բացեց ու տեսավ, որ նվեր է. սեղանի մի գեղեցիկ զարթուցիչ, երկու գույզ գուլպա և տղամարդու օծանելիքի մի տուփ: Ուրեմն՝ անկասկած մարդիկ երկու փաթեթով են դուրս եկել տնից ու շփոթել են. նվերը նետել են, իսկ աղբը տարել նվեր: Սկզբում մի լավ ծիծաղեց Վիրաբը, բայց հետո մտածեց ի՞նչ անի, ինչպե՞ս գտնի տիրոջը: Ո՞ւմ հարցնի: Շենքը հսկայական, բնակիչները՝ հարյուրավոր: Ու մեկ էլ աչքը նորից ընկավ զարթուցիչին, որի պատվանդանի վրա փորագրված էր. «Մեր սիրելի թոռնիկ Կարենին: Պապիկ ու տատիկ Սուքիասյաններ»։ Վիրաբը հիանալի էր ճանաչում պապիկ ու տատիկ Սուքիասյաններին և նույնիսկ նրանց թոռնիկ Կարենին, որը վերջերս էր բնակարան ստացել Ավանում ու տեղափոխվել: Այնպես որ երեկոյան, փաթեթը ձեռքին, սեղմեց Սուքիասյանների տան դռան զանգի կոճակը:

Թե ինչ կատարվեց, նկարագրելն անհնարին է:

Ծերունիները և՛ ծիծաղում էին, և՛ լաց էին լինում արցունքի միջից, իրար ընդհատելով պատմում, թե ինչ հիմար վիճակի մեջ ընկան, երբ թոռնիկը մյուս հյուրերի մոտ հանդիսավոր բացեց փաթեթը, Վիրաբին ստիպում էին էլի մի բաժակ թեյ խմել, իսկ իրենք նստել, հիացած, երախտագիտությամբ նայում էին նրան:

Իսկ մի անգամ բոլորովին հակառակը եղավ:

Արդեն այնտեղ, Սովետաշենի աղբանոցում մեքենան դատարկելու ժամանակ, Վիրաբը հանկարծ ինչ-որ փոքրիկ, բայց շատ փայլուն բան նկատեց: Վերցրեց ու տեսավ, որ մատանի է, հարսանեկան կլոր ոսկե օղ: Ուղիղ երեք օր մատանու տիրոջն էր փնտրում Վիրաբը՝ զգուշորեն հարց ու փորձ անելով իր թաղամասի բնակիչներին և ի վերջո պարզվեց, որ բարձրահարկ շենքի բնակիչ Էմման է մատանին կորցրել, այն նույն տիկին Էմման, որ առավոտները ձեռքի ժամացույցի ապակուն է թխկթխկացնում Վիրաբին տեսնելիս:

Նույն ձևով, երեկոյան Վիրաբը այցելեց տիկին Էմմային ու հարցրեց.

- Դո՞ւք եք մատանի կորցրել:

- Հա՛, - վեր թռավ տեղից տիկին Էմման:

- Ի՞նչ տեսակ մատանի է, - այնուամենայնիվ հարկ համարեց հետաքրքրվել Վիրաբը:

- Օղ է, հարսանիքիս իմ ամուսնու նվերը, մաքուր ոսկուց՝ 980 պրոբի:

- Սա՞ է, - հարցրեց Վիրաբն ու նրան մեկնեց մատանին:

Տիկին Էմման վերցրեց ոսկե օղը, զննեց, չգիտես ինչու հազցրեց մատին, հանեց, նորից հազցրեց ու հիմա էլ կասկածամտորեն Վիրաբին զննելով, հարցրեց.

- Բայց ես երեք օր առաջ եմ կորցրել, ինչո՞ւ ես հիմա բերում:

- Դրե՛լ էի մատիս, ուրախանում էի, - զայրացավ Վիրաբն ու դուրս եկավ:

Իսկ դրսում, այնուամենայնիվ, ժպտաց: Ի՞նչ կարող ես ասել՝ որքան մարդ, այնքան բնավորություն:

Վիրաբն ավտոմեքենան հանեց մայրուղուց, թեքեց ու դանդաղ տարավ Առափնյա փողոցով: Դա նրա սիրած փողոցն էր, տունն էր: Այդ փողոցում ժամանակակից հսկայական երկնաքերներ չկային: Ավելի շատ՝ առանձնատներ էին և մի քանի ցածրահարկ շենքեր, որ կոռպերատիվ կարգով, չորս-հինգ հոգով միանալով, կառուցել էին բնակիչները: Տասնհինգ տարուց ավելի Վիրաբն այդ փողոցով էր անցնում-դառնում ամեն օր՝ օրական մի քանի անգամ տներից հեռացնելով աղբը: Նա այդ փողոցի բնակիչներին ճանաչում էր մեկ առ մեկ, ծերունիներից սկսած մինչև մատնաչափ երեխաները, գիտեր թե ով որտեղ է աշխատում, ինչ է անում, ինչով է ապրում և դրա համար նույնիսկ կարիք չունեք որևէ մեկին որևէ բան հարցնելու:

Նրան ամեն ինչ պատմում էր աղբը:

Աղբը բաց գրքի նման դրված էր Վիրաբի առաջ և նրան մնում էր միայն կարդալ, որպեսզի իմանա, թե ում տանն ինչ է կատարվում: Եվ դա հարյուր անգամ ավելի հեշտ էր, քան որսորդի համար, որը հետքեր է կարդում անտառի արահետների վրա: Դե թե նախորդ օրն ինչ են կերել մարդիկ, դատարկ բան է իմանալ, հատկապես Երևանում, որտեղ ավելի շատ թափում են, քան ուտում: Իսկ այդ թափածով էլ հանգիստ կարելի է որոշել, թե տանտերը նույն աշխատանքի՞ն է, թե տեղափոխել են, առա՞ջ են քաշել, թե հանել են գործից: Դա հեչ: Բայց Վիրաբը, նայելով աղբին, անմիջապես կարող էր որոշել նույնիսկ, թե, ասենք, տանտիրոջ երեխան փոխադրվել է հաջորդ դասարան, թե՞ մնացել նույն դասարանում: Եվ այդտեղ մի առանձին բարդություն չկա. բավական է տարեվերջին հետևել, թե տվյալ տնից և՛ ս կապոցներով դեն են նետում հին դասագրքերը, ինչպես մյուս տներից: Կամ, եթե աղբի մեջ դեղորայքի դատարկ սրվակներ են, մանանեխաթղթի ճմռված թրջոցներ, դժվա՞ր է որոշել, թե այդ տանը հիվանդ կա: Իսկ եթե նյարդայնորեն գրված ու պատառոտված թղթեր են, պարզ չի՞, որ մարդուն հեռացրել են աշխատանքից, և նա ապարդյուն փորձում է վերականգնել իրեն: Կամ եթե

միայնակ կնոջ տնից, որի ամուսինը գործուղման մեջ է, առավոտ վաղ խմիչքի շշեր են թափում, մի թե իմաստուն պիտի լինել՝ հասկանալու համար, որ կինն այնքան էլ միայնակ չի եղել:

Մի անգամ Վիրաբը խիստ զարմացրեց ակադեմիկոս Պարսամյանին:

- Բժշկին կասեմ:

- Ի՞նչ,- տնքաց անկողնում պառկած հիվանդը:

- Որ նրա ասածները հաշվի չեք առնում ու չեք հետևում ձեզ:

- Ինչի՞ց եզրակացրիք, Վիրա՛բ,- զարմացավ ծերունին:

- Հոգիս դուրս եկավ ձեր դեղերը տուփերով թափելուց,- ասաց Վիրաբը:- Կասեմ:

Այնժամ ակադեմիկոսը ծիծաղեց, հազաց, հազաց ու հազի միջից ասաց.

- Մի հին անեկդոտ կա, Վիրա՛բ, բայց շատ է ինձ դուր գալիս: Ասում է՝ բժիշկը դեղատոմս է գրում, որովհետև ուզում է ապրել: Դեղագործն էլ դեղ է պատրաստում, որովհետև ուզում է ապրել: Իսկ հիվանդն էլ դեն է գցում դեղը, որովհետև ինքն էլ է ուզում ապրել: Լավ է, չէ՞:

Միայն հիվանդ ժամանակ չէ, որ Վիրաբը այցի է գնում ակադեմիկոսին: Օրական երկու անգամ սեղմում է նրա զանգի կոճակը, որ անձամբ ինքը ակադեմիկոսի աղբը թափի: Եվ դա այնպես է անում, ասես ակադեմիկոսը լավություն է անում իրեն: Շատ է հարգում Վիրաբը ակադեմիկոս Պարսամյանին ու մի քիչ էլ խղճում է: Մահացել է կինը, մնացել է մենակ: Հիանալի որդի ունի, գիտությունների դոկտոր է, բայց նա էլ ինստիտուտ է դեկավարում Կիրովականում և հասկանալի է, որ ընտանիքով այնտեղ էլ մնում է: Ամեն կիրակի, առանց բացառության, որդին, հարսն ու թոռները այցի են գալիս ակադեմիկոսին: Հարսը մի լավ աղջիկ է, ուրախ, ասող-խոսող, սրբում, հավաքում է տունը, մի քանի տեսակ ճաշ է եփում, ամեն կաթսայի կափարիչի վրա թուղթ կպցնում, թե որն ինչ է, ու տեղավորում սառնարանում, լվանում, չորացնում, արդուկում է սկեսրայրի շորերը ու թե ոնց է այդ ամենը հասցնում, միայն ինքը գիտե: Ավարտում է գործը, ու, մինչ ամուսինն ու երեխաները վազվզում են փոքրիկ այգում, նստում նարդի է խաղում ակադեմիկոսի հետ: Ու այնպես է ստացվում, որ միշտ տարվում է՝ անասելի հրճվանք պատճառելով այդ մեծ երեխային: Ակադեմիկոսը բավականությամբ շփում է ձեռքերը՝ հաղթական նայում հարսին ու հարցնում.

- Հը, ո՞նց ես, ո՞նց, հարսի՛կ ջան:

- Ո՞նց պիտի լինեմ, ձեր ձեռքը կրակն եմ ընկել,- հառաչում է հարսը:

Եվ ակադեմիկոս Պարսամյանը համբուրում է նրա ձեռքերն ու ասում.

- Մա իմ կողմից, սա էլ Թագուհուս կողմից,- ու շրջվում է, որ հարսն իբր չտեսնի իր արցունքները:

Վիրաբը սեղմեց զանգի կոճակը և, դռան հետևում հողաթափերի ծանոթ քստքստոցը լսելով, ուրախացավ: Ուրեմն՝ ողջ-առողջ է ակադեմիկոսը: Ահարոն Պարսամյանը բացեց դուռը, ժպտաց:

- Բարի լույս, նե՛րս եկ, Վիրա՛բ:

- Չէ՛, - ասաց Վիրաբը, - գործը նոր եմ սկսում: Աղբի ետևից եմ եկել:

Ակադեմիկոսը մեղավորի նման տարածեց ձեռքերը:

- Աղբ չկա, Վիրա՛բ:

- Ո՞նց թե չկա, - զարմացավ Վիրաբը: - Ոչինչ չե՞ք կերել:

Ծերունին ժպտաց:

- Ինչ որ կար, լրիվ կերել եմ: Ոչինչ չեմ թողել, Վիրա՛բ:

- Թե չէ, գիտեք, հա՛, որ հարսիկին կասեմ, - սպառնաց Վիրաբը:

- Վաղը ե՛կ, մի քիչ զրույց անենք, - ասաց Պարսամյանը:

- Եթե չեմ խանգարի, - երջանկացավ Վիրաբը:

- Եթե խանգարեիր, դուռն էլ չէի բացի, - ծիծաղեց Պարսամյանը:

Որ Վիրաբը մեծ հաճույք էր զգում ակադեմիկոսի հետ զրուցելիս, ինքնըստինքյան հասկանալի էր նրան: Բայց որ ակադեմիկոսն էր ուզում տեսնել Վիրաբին, զրուցել հետը՝ հպարտությամբ էր լցնում աղբահավաքի սիրտը: Գրեթե քսան տարի էր, ինչ բարեկամություն էին անում նրանք և միայն մի հարցում էր շարունակ նեղվում Վիրաբը: Թե ինչպես դիմի նրան: Երևի պետք է ընկեր Պարսամյան ասեր, բայց չէր ասում, ամաչում էր: Պարսամյանն իրեն ի՞նչ ընկեր: Փորձեց անուն-հայրանունով դիմել՝ ակադեմիկոսը կտրականապես արգելեց: Հայերեն չէ, ասաց: Մտածեց ասել՝ ընկեր ակադեմիկոս, բայց դա ավելի վատ էր հնչում, քան ընկեր Պարսամյանը: Ի վերջո որոշեց որքան հնարավոր է՝ ոչինչ էլ չասել: Երբ մի անգամ Թբիլիսի էր գնացել՝ առաջավոր փորձի փոխանակման, վերադառնալուց հետո ակադեմիկոսին հարցրեց:

- Շատ ներողություն, - բայց մենք «բատոնոյի» պես բառ չունե՞նք:

- Ունենք, - ծիծաղեց Պարսամյանը, որին վաղուց հայտնի էր Վիրաբի հետաքրքրասիրության գաղտնիքը: - Կարող ենք «պարոն» ասել, կարող ենք «տեար» ասել, բայց դրանք այլ իմաստ են ստացել, չեն տարածվում ժողովրդի մեջ և այդ հարցը թերևս պետականորեն պետք է լուծվի:

Վիրաբը հառաչեց ու էլ ոչինչ չասաց:

Ակադեմիկոս Պարսամյանի տան դիմաց ապրում էր «Գլխբակալեա» կոչվող գրասենյակի պահեստապետ Կառլոսը՝ կարճահասակ, կլոր որովայնով, շատ շարժուն ու շատ ճարպիկ մի մարդ, որն ուտում-խմում էր ամբողջ օրն ու հատկապես երեկոները, իսկ առավոտյան փոր-

ձոււմ էր վեր բարձրացնել ջինսի կախ ընկած գոտին, չէր կարողանում, վշտացած նայում էր դուրս ցցված փոքրին ու տնքում՝ բախտից նեղացած.

- Արա՛, էդքան էլ պահում եմ ինձ, բայց փորս չի իջնում, էլի: Մուտ բան ա, Երևանի անտեր ջրից ա, ջրի՛ց:

Առաջին օրերին նկատելով, որ Վիրաբն ինքն է ակադեմիկոս Պարսամյանի տնից հանում աղբը, Կառլոսը մի առավոտ արագորեն մոտեցավ Վիրաբին, ապարդյուն վեր քաշեց ջինսը, գրպանից երկու հատ ճմռթված հինգանոց հանեց, մտցրեց Վիրաբի գրպանն ու ասաց.

- Էգուցվանից մեր աղբն էլ կհանես, ախպե՛ր:

- Չ՛ի լինի,- դրամը ետ վերադարձրեց Վիրաբը,- կարգ կա:

- Թե քի՛չ ա, էլի տամ,- զարմացավ Կառլոսը:

- Չէ՛,- ասաց Վիրաբը,- որ տասնապատիկ էլ տաս՝ չի լինի:

- Ինչի՞, դու էդ ինչի՞ տեր ես,- զարմացավ պահեստապետը:

- Իմ աշխատավարձը քոնից մի հինգ անգամ ավելի կլինի,- հանգիստ ասաց Վիրաբը:

- Աշխատավարձը...- հեզնանքով ձգեց Կառլոսը, բայց էլ ոչինչ չասաց:

Իսկ երեկոյան Վիրաբը լսեց, և Կառլոսը հաստատ դիտմամբ էր բարձր խոսում, որ նա լսի, թե պահեստապետն ինչ ասաց իր հարևան դերձակ Աբրահամին.

- Արա՛, որ սրան տեսնում եմ, պատռելս գալիս ա: Ակադեմիկոսի աղբը ձրի թափում ա, իմը փողով չի թափում:

Պահեստապետին հակառակ, Վիրաբը խորին հարգանք ուներ նրա կնոջ նկատմամբ: Համեստ, ամաչկոտ կին էր: Որքան էլ տարօրինակ թվա, հարստությունը կարծես թե չէր փչացրել նրան: Նա նույնիսկ անհարմար էր զգում իրենց ապրելակերպի և հատկապես աղբի համար, որ բերում էր թափելու: Ամբողջ Առափնյա փողոցում ոչ մի տուն այդպիսի ապրանքներ չէր մտնում, ինչպես պահեստապետի տունը: Ամեն ինչ արտասահմանյան էին՝ շշերը, շոկոլադների տուփերը, պահածոները՝ վառ, գունեղ պիտակներով ու էկզոտիկ նկարներով: Եվ ամաչելով դրանից, տիկին Հասմիկը այդ ամենը խնամքով թաքցնում էր որևէ հին, տեղական արկղի մեջ ու նոր էր միայն բերում ու իր ձեռքով նետում մեքենայի թափքը:

Իսկ դերձակ Աբրահամը՝ հակառակը: Մովորական աղբը առանձին էր բերում փաթաթած, իսկ ասենք իսպանական ձիթապտղի տուփը՝ առանձին և մի առանձնակի հպարտությամբ: Տուփը ցույց էր տալիս Վիրաբին ու քմծիծաղ տալիս.

- Երկու օրում կերան լակոտները, զեյթուն եմ ասել: Բա չէ՛՝ Բաքվի զեյթունը: Խակ դամբուլ լինի ասես:

- Բեյրութում զեյթուն կա՞ր,- խոսեցնում էր Վիրաբը:

- Բեյրութում: Բեյրութում ի՞նչ չկար, մա՛նչս: Բեյրութում ո՞վ էր իսպանականի երեսին նայողը, հունական գեյթուն կուտեինք, սև, փայլուն, ամեն մեկը մի ընկույզի չափ, բաբա՛ւ: Բեյրութում ի՞նչ չկար՝ քիշմիշ չամիչն ասեմ, բաղամն ու լեբլեբին ասեմ... Լեբլեբի կերած կա՞ս: Բա ... Մեջն ի՞նչ, քանդեցին, ավերակ դարձրին Իսրայելն ու Ամերիկան, գետինն անցնեն անի-րավները: Հեռատեսիլի մեջ կնայեմ՝ կտեսնեմ ու կուլամ, մա՛նչս:

Ակադեմիկոսի առանձնաշենքի շարքում հաջորդը մի տուն էր, որի տերը կնոջ անունով երեք սենյականոց բնակարան ուներ քաղաքի կենտրոնում, հենց «Անի» հյուրանոցի շենքի դիմաց, իսկ այս տունը վարձով էր տալիս ուսանողների և նորապսակների, մի խիստ զգուշացումով, որը նույնիսկ պայմանագրի մեջ էր արտահայտված. թե հենց երեխա ունեցան՝ անմիջապես պետք է ազատեն բնակարանը:

Այդ տնից ադր գրեթե դուրս չէր գալիս, բացի խանութում վաճառվող փոքրիկ ձմերուկների բարեխղճորեն մաքրված, բարակ կեղևներից:

Չունևոր, բայց շատ հպարտ էր ուսանողների հարևանը՝ ֆիզկուլտուրայի դասատու Ստեփան Մադոյանը: Եվ հպարտանալու իրավունք ուներ, որովհետև շատ մկանուտ էր ու գեղեցիկ: Ամեն առավոտ, դեռ նախքան Վիրաբի հայտնվելը, ճիշտ իր նման երկու փոքրիկ որդիների հետ դուրս էր գալիս տնից: Գրպանից հանում էր դատավորական սուլիչն ու սուլում: Այդ ձայնի վրա մոտակա տներից ոտաբոբիկ ու սպորտային կոշիկներով դուրս էին թափվում տասնյակ մեծ ու մանրիկ երեխաներ, աչքերը տրորելով վազում ու կանգնում մարզչի առաջ:

Ստեփան Մադոյանը որդիների հետ շարք էր կանգնեցնում նրանց, մագնիտոֆոնը դնում ոտքերի տակ ու հատու հրահանգներով փոքրիկներին սովորեցնում լիցքային վարժություններ կատարել: Հետո հայր ու որդիներ, ամբողջ խմբի առաջն ընկած, վազում էին Առափնյա փողոցով, գնում հասնում էին մինչև պուրակը, պտտվում էին պուրակի շուրջը, ինչ-որ խաղեր խաղում ու ցատկոտում պարաններով ու վերադառնում կարմրատակած, մայթի մոտ դրված ցայտադրյուրի ջրով լվացվում էին չփչփալով, ջուր շաղ տալիս իրար վրա, ճչալով ու աղմկելով երջանիկ: Իսկ վերջում Ստեփան Մադոյանը նորից սուլում էր:

- Շարվի՛ր:

Եվ երբ տղաները հնազանդ շարք էին կանգնում, ասում էր.

- Իսկ հիմա ի՞նչ ենք անում: Հիմա թոքերը վերջին անգամ մաքրելու համար, խորը շունչ ենք քաշում և արտաշնչելիս երեք անգամ բացականչում.

- Մա՛րդ մնանք, մա՛րդ մնանք, մա՛րդ մնանք:

- Մա՛րդ մնանք, մա՛րդ մնանք, մա՛րդ մնանք,- որոտում էր Առափնյա փողոցը:

- Մարդ մնաք,- մաղթում էր Ստեփան Մադոյանն ու սուլում վերջին անգամ:- Իսկ հիմա թոքեր ձեր դպրոցները և ինձ համար բերեք «հինգեր»: Միայն «հինգեր», «չորսն» էլ եմ սիրում, բայց «չորսն» ո՛ւր, «հինգն»՝ ո՛ւր... Տեսնեմ ձեզնից ո՞վ է այսօր ուրախացնելու ինձ:

Եվ երեխաները ցրիվ էին գալիս աղմուկով՝ իրենց մարզչի համար «հինգեր» բերելու հաստատվածականությամբ:

Ահա հենց այդ ժամանակ էր, որ հայտնվում էր Վիրաբն իր ավտոմեքենայով, և Ստեփան Մադոյանի հաստու հրահանգներով նրա որդիները ինչ-որ տուփեր էին բերում ու լցնում ավտոմեքենայի մեջ:

Թե որտեղից էր Ստեփանն ամեն անգամ այդ տուփերը ճարում, գաղտնիք էր մնում Վիրաբնի համար: Նա հո լավ գիտեր, որ գրեթե դատարկ էին լինում այդ տուփերը:

Ակադեմիկոս Պարսամյանը շատ էր հարգում ֆիզկուլտուրայի դասատուին և ամեն անգամ տեսնելիս հանում էր հնաճ լայնեզր գլխարկը: Իսկ մի անգամ Վիրաբնին ասաց.

- Այս փողոցում ամենամեծ մարդը Ստեփան Մադոյանն է:

- Ինչո՞ւ,- հարցրեց Վիրաբնը:

- Որովհետև առանց շահի ու առանց ակնկալիքի բարություն է անում մարդկանց:

Ու հանկարծ ծիծաղեց.

- Ասում են Իտալիայում, ինչ-որ մի փոքրիկ քաղաքում ասեմ թե գյուղում, մի տարօրինակ գերեզմանատուն կա: Գերեզմանաքարի վրա ամենուրեք արտասովոր թվեր են գրված. «Ապրել է հինգ օր», «Ապրել է հարյուր քսաներեք օր», «Ապրել է հինգ տարի, երեք ամիս և քսանչորս օր»: Պարզվում է, որ այդ բնակավայրում մարդկանց ապրած կյանքը չեն հաշվում, այլ միայն այն օրերը, որ մարդն ապրել է ուրիշի, օտարի, բարեկամի հոգսով ու ցավով, ապրել է նրա համար: Հանճարեղ է, չէ՞: Ես եղել եմ Իտալիայում և, թող ծիծաղելի չթվա, նույնիսկ հետաքրքրվել եմ: Ում հարցրել եմ, ոչ ոք կոնկրետ վայրը չի իմացել, բայց բոլորն էլ ասել են, թե իրենք էլ են լսել, թե ինչ-որ տեղ հաստատ այդ բնակավայրը կա: Բոլոր դեպքերում ինձ շատ է դուր գալիս, որ մարդիկ մտածում են այդ մասին: Կա թե չկա այդ բնակավայրը, ամենակարևորը դա չէ: Ամենակարևորն այն է, որ լեզենդը կա: Իսկ լեզենդները մարդկանց երազներն են: Եվ ահա, եթե ես այդ բնակավայրի հաշվառիչներից մեկը լինեի, ֆիզկուլտուրայի դասատու Ստեփան Մադոյանի ապրած օրերի մատյանում կգրանցեի նրա յուրաքանչյուր օրը:

Վիրաբնը մտածեց, որ եթե այդպես լիներ, Ստեփան Մադոյանի տան դիմաց ապրող սանիտարական բժիշկ Շահեն Կարպիչի քարը դատարկ պիտի մնար: Մի կին ուներ ու մի նիհար, չոփի նման աղջիկ, բայց շուկայից բերած նրա արկղերն ու տուփերը տեսնողը կմտածեր, թե առնվազն մանկապարտեզն է ապրանք ստանում: Մսեղեն, միրգ, բանջարեղեն, լավաշ, սունկ, կաթնային սննդամթերքներ, այսինքն՝ այն ամենը, ինչ անցնում էր շուկայի սանիտարական բժշկի աչքի առջևով և նրա կնքելուց հետո պիտի վաճառվելու իրավունք ստանար: Բերում էր, հնիհն լցնում տուն ու ձեռքերը շփելով նորից շուկա վերադառնում: Իսկ կինը միշտ ամեն ինչից դժգոհ, հոնքերը կիտած ու ստամոքսը բրոյա շալով փաթաթած Էյա Միխայլովնան, ապրանքները պահում էր մի օր ու մյուս օրը թափում Վիրաբնի աղբահավաք մեքենայի մեջ, որպեսզի տեղ բացի նոր ապրանքների համար: Իսկ Շահեն Կարպիչի պետքն էլ չէր, նա նույնիսկ չէր հետաքրքրվում, թե տանն ինչ են անում իր բերած ապրանքները: Նա իր երջանկությունը գտնում էր բերելու մեջ և բերում էր:

Քանի անգամ մագ մնաց, որ պոռթկար Վիրաբը: Նրա լացը գալիս էր թափվող ապրանքները տեսնելով: Ուզում էր բռնել այդ հիվանդ ստամոքսը շալով փաթաթած կնոջ ձեռքն ու գոռար. էս ի՞նչ էք անում, էս ի՞նչ մարդ եք դուք, բա դուք մեր չունեք, հեր չունեք, ախպեր ու քույր չունեք... Կամ ասե՛նք ոչինչ էլ չունեք, բա ձեր դիմաց ապրող ուսանողներին չե՞ք տեսնում: Գողացել եք, թալանել եք, գլուխներդ քարը՝ ինչ զահրումար եք արել, տարեք որևէ ձևով էդ խեղճ ու սոված ուսանողներին տվեք, որ գոնե կարողանաք քնել գիշերները: Բա դուք հեջ մարդ չե՞ք... Գոնե հենց ձեր հարևան Սաթենիկ մայրիկին տիրություն արեք, էլի... Միայնակ կին է:

Բայց նա սեղմում էր ատամներն ու լռում: Որովհետև գիտեր, թե նման դեպքերում ինչ են ասում և ինչպես են ասում նման մարդիկ:

- Քո գործը աղբ թափելն է՝ թափի՛ր: Քեզ դրա համար են փող տալիս:

- Ես գցել եմ, դու էլ հանի: Ես հո չեմ տեսնում, թե դու ինչ ես անում մեր թափածները:

Եվ շատ ավելի վատ խոսքեր: Շա՛տ ավելի վատ.

- Կրակն ենք ընկել, էլի: Ում վրա շուն է հաչում, մեզ վրա կատու է մլավում:

Ի՞նչ անես: Հո չես կարող կանգնել-գոռալ փողոցով մեկ, կամ էլ ջահել օրերի պես վեր ծալել բլուզիդ թևքերը:

Նրանց հարևանուհին՝ Սաթենիկ մայրիկը, իհարկե, որևէ բանի կարիք չունի: Ընդհակառակը, ամիսը երկու անգամ ինքն է թաղի երեխաներին գլխին հավաքում, զանազան մանր-մունր նվերներ ու կոնֆետներ բաժանում: Նրա գրպաններում միշտ սիրուն-սիրուն կոնֆետներ կան, և երեխաները, դա լավ իմանալով, իրենց հատուկ խորամանկությամբ հաճախ են մոտենում Սաթենիկ մայրիկին.

- Տատի՛, ձեր ջուրը չի՞ կտրվել, ջուր բերեմ:

Կամ՝

- Նազիկ կատուն ձագ չի՞ բերել, Սաթենիկ տատի, մեկը կտաս ինձ, էլի՛ ...

Ասում են ու սատանայի նման սպասում, որ Սաթենիկ տատիկը ձեռքը գրպանը տանի:

Նա մի աղջիկ ուներ՝ Կիևում ամուսնացած, և մի տղա, որը Ուրենգոյ-Եվրոպա գազատարի վրա էր աշխատում: Տարիներով չէր տեսնում ու աչքը անընդհատ ճամփին էր: Նրանք վատ երեխաներ չէին, ամեն ամիս ծանրոց էին ուղարկում Սաթենիկ մայրիկին, բայց դե ծանրոցները նրա ինչին էին պետք, երբ նա հարազատ մարդու էր կարոտ, իր զավակներին էր կարոտ: Որևէ գործով զբաղվելու համար, թե ուղղակի կարիք ուներ՝ հոգ տանելու ուրիշների մասին, Սաթենիկ մայրիկը կատուներ էր պահում, անթիվ-անհամար կատուներ, որոնք ազատ էլ ու մուտ ունեին նրա տանը, արևկող էին անում պատշգամբում կամ էլ զգվոտվում լուսամուտի տակ: Սաթենիկ մայրիկը անուն առ անուն ճանաչում էր նրանց, ճաշ էր եփում նրանց համար և բակում նույնիսկ հատուկ տեղեր էր պատրաստել, որ հանգիստ կարողանային ձագ բերել մայրացած կատուները:

Վիրաբը ընդհանրապես չէր սիրում կատու պահող մարդկանց, բայց Սաթենիկ մայրիկին ներում էր նրա այդ թուլությունը՝ ոչ թե այն պատճառով, որ նա միայնակ էր, չէ՛, այլ որովհետև շատ բարի դեմք ուներ և, Վիրաբի կարծիքով, իր մորն էր նման:

Թե ինչու էր այդպես կարծում, չէր կարող ասել:

Երբեք այդ մասին բարձրաձայն չէր խոսում Վիրաբը, բայց գոնե հո ինքը գիտեր, որ սրտի խորքում չի ներում մորը: Գիտեր, գիտեր, բայց ի՞նչ աներ, որ նրան, այնուամենայնիվ, բարի դեմք ունեցող կանանց մեջ էր փնտրում միայն: Մի անգամ, դեռ շատ առաջ, մայիսամեկյան շքերթի ժամանակ, Վիրաբը ուսերին դրեց Սուսանին, որն, ինչպես ջրի երկու կաթիլ, նման էր հորը և հատկապես նրա մանկական նկարներին, ու գնաց կանգնեց հրապարակից դուրս եկող ժողովրդի առաջ: Անցնում ու անցնում էին մարդիկ, անցնում ու անցնում էին ջահել, տարեց ու ծեր կանայք, իսկ Վիրաբը գլխից բարձր պահել էր աղջկան, բարի դեմքեր էր որոնում, երեխային շրջում նրանց կողմը, որ, ով գիտե, գուցե թե մայրը հանկարծ տեսնի Սուսանին, ա խ քաշի ու Վիրաբին հիշի:

Բայց դե հրաշքները միայն հնդկական կինոնկարներում են լինում:

Մի քանի անգամ, զանազան առիթներով, աղբը հավաքելու ժամանակ Վիրաբը ասես թե հենց այնպես, շատ զգուշորեն ու խորամանկաբար որոշ ստուգողական հարցեր տվեց Սաթենիկ մայրիկին, տվեց, սպասեց սրտատրոփ, զգալով, թե ինչպես են քրտնում ձեռքի ափերը, սակայն պատասխանների մեջ ոչ մի շփոթություն կամ հուսադրող բան չնկատեց: Բայց համառ էր Վիրաբը, և այնքան ահռելի էր մորը գտնելու նրա ցանկությունը, որ մի վերջին անգամ նայելով ուղիղ Սաթենիկ մայրիկի աչքերի մեջ, իրենից էլ անկախ ասաց.

- Իմ թղթերի մեջ գրված է, որ ես 1945 թվականին եմ ծնվել, Սաթենի՛կ մայրիկ: Ուրեմն՝ հանգիստ կարող էի քո տղան էլ լինել, չէ՞:

- Իհարկե՛, - ժպտաց Սաթենիկ մայրիկը: - Իմ Աշոտն էլ հենց 45 թվականի ծնունդ է: Իսկ դու ո՞ր ամսին ես ծնվել:

- Չգիտեմ, - խորտակված ասաց Վիրաբը:

Եթե հնար ունենար, Վիրաբը ավտոմեքենան չէր կանգնեցնի այն տան առաջ, որի ճակատին փակցված էր «13» համարը: Բայց հնար չուներ ու կանգ առավ: Դուռն անմիջապես բացվեց և շեմքին հայտնվեց նա՝ հրեշտակի նման գեղեցիկ, շեկ մազերով ու կանաչ-կապույտ ծովի աչքերով Յողիկը: Նայեց հեռվից, ասես լույսի երկու ճառագայթ նետեց Վիրաբի վրա ու մոտեցավ թեթևակի օրորելով կոնքերը և ամեն մի շարժման հետ մեկ բացելով ու մեկ ծածկելով մուգ կապույտ խալաթի փեշերը: Վիրաբը հեռացրեց աչքերը ու կռացավ՝ իբր անվաղողի ամրությունն է ստուգում, սպասելով, որ Յողիկը դատարկի դույլերը ու հեռանա: Ու մեկ էլ ջահել կնոջ շնչառությունն զգաց և լսեց կրծքային փափուկ ձայնը.

- Չես գա՞:

- Չէ՛, - խուլ ձայնով պատասխանեց Վիրաբը:

- Դու գիտես,- շնչաց Ցողիկը,- գիշերը տանը չի լինելու:

- Չեմ գա,- կրկնեց Վիրաբը:

- Վախկո՛տ,- ծիծաղեց Ցողիկը ու ծիծաղեց այնպես բարձրաձայն, ասես Վիրաբը նրան հենց նոր շատ սրամիտ անեկդոտ պատմեց:

Ծիծաղեց ու ծիծաղելով էլ հեռացավ՝ թեթևակի օրորելով անիծյալ կոնքերը:

Ամբողջ երկհարկանի տան մեջ միայն երկուսով էին՝ Ցողիկը և ամուսինը, ֆինանսների մի-նիստրության վերստուգիչ-վերահսկիչ վարչության ավագ վերահսկիչ Անտոն Չալտիկյանը: Հաշվապահների սարսափ Անտոն Եգորիչը, որի մասին լեգենդներ էին պատմում, թե ինչպես է հաշվապահական հսկա մատյանը արագ-արագ թերթելով՝ մատը դնում սխալի կամ կեղծի-քի վրա, տանը շատ մեղմ ու բարեհամբույր մարդ էր: Այսինքն՝ նա ամենուրեք այդպիսին էր, բոլորի հետ էր մեղմ ու քաղաքավարի և նույնիսկ նրանց հետ, ում գործերն ստուգում էր: Բայց քանի որ ոչ մեկի հետ գործարքի մեջ չէր մտնում, համաձայնության չէր գալիս, դաժան ու անբարիշտ մարդու համբավ ուներ: Այդպես էր, թե այդպես չէր, բայց որ պրոֆեսիոնալ հմտու-թյունից բացի, նա նաև բնածին, բնագոյական տաղանդ ուներ իր գործում, ոչ ոք չէր ժխտում: Ինչպես սրբագրիչն է անկարող հանգիստ որևէ գեղարվեստական գիրք կարդալ. առանց մա-տիտը վերցնելու ձեռքն ու տառասխալներն ընդգծելու, այնպես էլ Անտոն Եգորիչը ֆինանսա-կան սխալներ ու կեղծիքներ էր գտնում՝ առանց ջանք թափելու: Նստում էր, թղթերը նայում ու մեկ էլ, ոտքն ասես քարի առնի, ետ էր դառնում ու գործից հանում հենց այն թուղթը, որի մեջ, հեղինակների կարծիքով, հանճարեղ սարքված կեղծիք կար: Հանում էր ու միամտորեն ասում.

- Ահա այս հաշվի հիմքերը բերե՛ք:

Եվ վերջ:

Ինչպես հաճախ է պատահում, նրա տաղանդն էլ հենց նրա դժբախտության պատճառը դար-ձավ: ՄՍՀՄ ֆինանսների մինիստրությունում իմացան, որ այդպիսի ֆենոմենալ աշխատող կա Հայաստանում և երբ հանրապետությունում հարկ լինե՞ր որևէ ծանր դեպք ստուգելու, Ան-տոն Եգորիչին էին հրավիրում: Ու նա ստիպված՝ մեկ Կամչատկայում էր հայտնվում ու մեկ էլ Լվովում և փաստորեն օրերով, իսկ երբեմն նաև շաբաթներով մենակ էր թողնում Ցողիկին, որին, ինչպես հետագայում պարզվեց մենակ թողնել չէր կարելի:

Ցողիկը շատ էր դուր գալիս Վիրաբին և ընդհանրապես անհնար էր, որ որևէ մեկին դուր չգար: Վիրաբը երբեմն նույնիսկ ամաչում էր, երբ բռնում էր իրեն այն պահին, որ Ցողիկի ձեռքից վերցրել է դույրը, բայց մոռացել է դատարկել ու կանգնել, մանկամարդ գեղեցկուհուն է նայում՝ լայն բացած, հիացած աչքերով: Վիրաբի մտքով ոչ մի այնպիսի բան չէր անցնում, չէ՛, նա պարզապես գեղեցկությանն էր նայում, նայում էր ինչպես անթերի քանդակին, արվեստի հրաշալիքին, ձևերի կատարելությանը կնայե՛ն:

Ու մի օր արվեստի այդ հրաշալիքը ժպտաց Վիրաբին ու մարդկային ձայնով հարցրեց.

- Ներեցեք, ձեր անունը Վիրաբ է, չէ՞:

- Այո՛, - չգիտես ինչու հուզվեց Վիրաբը:

- Վիրա՛բ, ես ձեզ ուզում եմ մի բան խնդրել: Անտոն Եգորիչը ջահ է գնել մեզ համար, բայց արդեն մի շաբաթ է՝ չենք կարողանում մեկին գտնել, որ հավաքի ու կախի: Դուք մեզ չե՞ք կարող օգնել:

- Դրա մեջ ի՞նչ կա, - սրտանց ասաց Վիրաբը:

- Իսկապե՞ս կարող եք, - ուրախացավ Ցողիկը: - Ե՛րբ կգաք հավաքելու:

- Երբ ասեք, - ասաց ու զոջաց անմիջապես: Հանկարծ ասի՝ հենց հիմա, ինքն ի՞նչ պետք է անի, հո կիսատ չի՞ թողնելու գործը:

- Երեկոյան եկեք, - ասաց Ցողիկը: - Աշխատանքից հետո ժամանակ կունենա՞ք:

- Կունենամ, - ուրախացավ Վիրաբը:

«Երևի ուզում է, որ ամուսինը տանը լինի, - մտածեց նա: - Եվ ճիշտ է անում՝ հազար ու մի աչք կա, հազար ու մի բան կասեն»:

Աշխատանքից հետո սովորականի պես նա մի լավ մաքրվեց ցնցուղի տակ, մարմինը կարմրացնելու աստիճանի սրբվեց կոշտ սրբիչով, ձեռքի ափով հանեց պատին կախված հայելու վրայի գոլորշին ու նայեց: Մազակալած էր դեմքը: Հենց գրասենյակի դարպասի դիմաց փոքրիկ վարսավիրանոց կար, մտավ սափրվեց՝ զարմացնելով վարսավիրին, որովհետև սովորաբար տանն էր սափրվում, ու իր սպիտակ «ֆիատը» դուրս բերելով, ուղևորվեց Առափնյա փողոց:

Հետո, երբ վերլուծում էր անցածը և գնահատում իր յուրաքանչյուր արարքը, Վիրաբը սափրվելու գաղափարը ևս համարում էր իր մեղքերից մեկը:

«Հենց էդ ժամանակ էլ քո մտքում ինչ-որ բան կար», - ասում էր Վիրաբը:

«Ի՞նչ պիտի լիներ, ա՛յ տղա, ամոթ էր, սափրված չէի», - պատասխանում էր Վիրաբը:

«Քեզ հյուր չեին կանչել: Էդ ո՞ր արհեստավորն է սափրվում, նոր գնում գործի», - նեղում էր Վիրաբը:

«Վե՛րջ տուր, ախպոր պես, - ձեռքը թափ էր տալիս Վիրաբը: - Նա՛՛ն էր, ես՛՛ ուր: Ո՞ւմ մտքով կանցներ»:

Այդ կռիվը հետո էր: Իսկ այդ օրը Վիրաբը ավտոմեքենան կանգնեցրեց ուսանող Խոսրովի պատուհանի առջև (նա հետո դա էլ էր համարում իր մեղքերից մեկը), նրան խնդրեց հետևել, որ հանկարծ երեխաները ձեռք չտան, գործիքները վերցրեց ու գնաց-սեղմեց Անտոն Եգորիչի դռան զանգը:

Դուռը Ցողիկը բացեց: Նա խալաթով չէր: Նրա հագին իրանը խիստ սեղմած թավշե կանաչ շոր կար: Թներն ու վիզը բաց էին: Ամաչելով ուղիղ տանտիրուհու դեմքին նայել, Վիրաբն ասաց.

- Անտոն Եգորիչն եկե՞լ է:

- Չէ՛, - ասաց Յողիկը, - բայց ուր որ է կգա: Համեցեք: Շնորհակալություն, որ եկաք, - ավելացրեց նա: - Ուրեմն՝ խոսքի տեր տղամարդ եք:

- Ո՞նց կարող էի չգալ, - շիկնեց Վիրաբը:

Նա հյուրասենյակ մտավ, տանտիրուհու հայացքի ուղղությամբ նկատեց անկյունում դրված տուփը, բացեց ու տեսավ, որ բյուրեղապակյա ջահ է:

- Մա երկար պատմություն է, - ասաց Վիրաբը, - կտորները առանձին-առանձին են ու պիտի հավաքվեն:

- Ժամանակ չունեք, հա՞, - անհանգստացավ Յողիկը:

- Չէ, ի՞նչ եք ասում, կհավաքեմ:

Տասներկու լապտերներով չեխական հրաշալի մի ջահ էր դա: Վիրաբը նախ ուսումնասիրեց գծագրերը, ուշադիր նկարներին նայեց ու նոր միայն սկսեց հավաքել: Սկզբում դժվարանում էր, բայց երբ ըմբռնեց գաղտնիքը, գործը շատ արագ սկսեց գնալ: Նրա աշխատելու ժամանակ Յողիկն անընդհատ ներս ու դուրս էր անում, գալիս թեքվում էր ջահի վրա, հրճվում երեխայի նման: Իսկ մի անգամ էլ որ թեքվեց, պատահաբա՞ր, թե ով գիտե՛ կպավ Վիրաբի ուսին: Եվ Վիրաբն զգաց, որ ուսն այրվեց: Շունչը կտրվեց ու մթնեցին աչքերը: «Պատահաբար կպա՞մ, թե՞ ...», - մտածեց նա ու որոշեց ստուգել:

- Տիկի՛ն Յողիկ, էս ջահը կախելու երկու ձև ունի: Ինչպե՞ս կուզեք անեմ:

Յողիկն անմիջապես եկավ, թեվեց, նայեց, ասաց՝ ինչպես կուզենար ինքը, բայց Վիրաբին չդիպավ: Եվ Վիրաբը ամաչեց իր անամոթ մտքերի համար: Կարծես թե ավելի շտապելով, որովհետև թե՛ ուզում էր մնալ ու թե՛ անմիջապես, հենց հիմա հեռանալ այդ տնից, Վիրաբը հավաքեց ջահն ու կախեց առաստաղից: Մնում էր լարերը միացնել և, ուրեմն, պետք էր անջատել էլեկտրական հոսանքը: Վիրաբը Յողիկին խնդրեց մոմ վառել ու լուսավորել առաստաղը: Երկուսն էլ կանգնել էին իրար մոտ՝ տարբեր աթոռակների վրա: Վիրաբը լարերն էր փաթաթում՝ կողքին զգալով կնոջ խենթացնող շնչառությունը, իսկ Յողիկը վեր էր պարզել մոմը պահած ձեռքը:

- Ոնց որ «Ախթամարի» Թամարը լինեմ, չէ՞, - հանկարծ ծիծաղեց Յողիկը:

Վիրաբն էլ ծիծաղեց, թաքցրեց լարերն ու ասաց.

- Վերջ:

Ու անմիջապես լսվեց Յողիկի սուր ճիչը: Մոմն ընկել էր հատակին, բայց զարմանալիորեն չէր հանգել, վառվում էր ճտճտալով: Կինը թեքվել, քիչ էր մնում ցած գլորվի աթոռից ու հենարան փնտրող ձեռքը Վիրաբի կողմն էր պարզել: Վիրաբն արագորեն բռնեց նրա տաք, այրվող ձեռքերը ու մեկ էլ զգաց, որ Յողիկը գրկել է իրեն: Վիրաբը շնչասպառ լինելով իջավ աթոռից, իր

հետ իջեցնելով նաև Յողիկին, բաց թողեց նրան, կռացավ, վերցրեց մոմը, հանգցրեց ու էլ չհասկացավ ինչ եղավ: Յողիկը սեղմվել էր նրան ու դողում էր. համբուրում ու համբուրում էր Վիրաբի շրթունքները և Վիրաբն էլ նրան էր համբուրում և նրան թվում էր, թե դա սուտ է, բորբոքված երևակայության արդյունք, թե հիմա ուր որ է պատրանքը կանհանա, կցնդի: Նա այնքան չէր հավատում իր երջանկությանը, որ երբ Յողիկը միայն մի պահ պոկվեց նրա շրթունքներից, Վիրաբն ասաց հնալով.

- Բա Անտոն Եգորիչը...

- Չի գալու: Չի գալու, սիրելի՛ս...

... Երբ գաղտագողի, ոտքերի թաթերի վրա նրանք մոտեցան դռանը, Յողիկը անչափ զգուշորեն, կամացուկ պտտեց բանալին ու կիսաբաց արեց դուռը. դրսում երկինքն արդեն սկսել էր աղոտանալ: Յողիկը կամացուկ հորանջեց՝ փակելով բերանն ու շնջաց.

- Հիմա էլի գալու է զնգզնգացնի...

- Ո՞վ,- նույնպես շշուկով հարցրեց Վիրաբը:

- Աղբահավաքն, ո՞վ,- ասաց Յողիկը, միանգամից փարվեց Վիրաբին ու սկսեց ցնցվելով անձայն ծիծաղել, և Վիրաբը չհասկացավ՝ կատա՞կ էր անում, թե ակամա դուրս թռավ բերանից:

Վիրաբը չուզեց կես գիշերով աղմուկ բարձրացնել՝ գործի զցելով իր ավտոմեքենան, դրա համար էլ արագ քայլելով ու կասկածները փարատած-հաղթանակած պատանու նման երբեմն-երբեմն երջանիկ ժպտալով, դուրս եկավ մայրուղի, ծիծաղեց՝ նկատելով շտապօգնության պատահական մի ավտոմեքենա, ձեռք բարձրացրեց, նստեց վարորդի կողքին, տվեց հասցեն ու փակեց աչքերը, երբեմն-երբեմն ժպտալով երջանիկ, նորից ու նորից հիշելով Յողիկի տաք շշուկը.

- Վաղն էլ կգաս, չէ՞, սիրելի՛ս...

- Ջահն եղպես էլ չփորձեցինք, վառվո՞ւմ էր, թե չէ,- կամացուկ ծիծաղեց Վիրաբը:

- Կգաս կփորձենք, հա՞...

Երբ զգուշորեն բացեց իրենց տան դուռը, ներս մտավ ու շնչեց ծանոթ, հարազատ օդը, Վիրաբը նոր միայն խղճի խայթ զգաց ակամա: Լուռ հանվեց ու անկողին մտավ գողեգող, հանցավորի նման: Մարգոն տնքաց ու հանկարծ ինչ-որ բան մրմնջաց:

- Ի՞նչ,- հարցրեց Վիրաբը:

- Էդ որտե՞ղ էիր, ա՛յ տղա:

- Ես էդ Վաղոյի հերն եմ անիծել,- ճանապարհին սովորածը անգիր կրկնեց Վիրաբը:- Գործի չէր եկել, Նշանյանը կպավ, թե դու ջրի մայթերը:

Մարգոն էլի ինչ-որ բան փնթփնթաց քնաթաթախ:

- Ի՞նչ,- հարցրեց Վիրաբը:

- Ոնց որ լավ չես լվացվել, ա՛յ տղա, վրայիցդ աղբի հոտ է գալիս,- ասաց Մարգոն ու անմիջապես քնեց:

Իսկ Վիրաբի քունը փախավ:

Հասկացավ ու ակնա՞րկ արեց հեզնանքով, թե՞ հենց այնպես ասաց: Ով կհասկանա կանանց: Բայց չէ, եթե Մարգոն կասկածեր, կքնե՞ր, հիմա իրար էր խառնել տունը: Այնուամենայնիվ, Վիրաբը բարձրացրեց գլուխը ու հոտ քաշեց ինքն իրենից: Ինչ-որ օժանելիքի թույլ հոտ առավ: «Շառից-փորձանքից հեռու», - մտածեց Վիրաբը, և որովհետև քունը լիովին փախել էր, անշշուկ հագնվեց ու գնաց աշխատանքի՝ սրտում անընդհատ խղճի խայթ զգալով և հաստատ վճռելով, որ էլ երբեք չի գնա Ցողիկենց տուն: Նրա սիրուն հերն էլ անիծած:

Բայց երեկոյան իրեն-իրեն գնաց:

Ու գնաց նաև երրորդ օրը:

Իսկ չորրորդ օրը առավոտ վաղ, երբ երջանիկ, հոգնած ու անքուն Առափնյա փողոցի աղբն էր հավաքում ու դիտմամբ սովորականից էլ բարձր էր գնզգնզացնում զանգը Ցողիկի տան առջև, դուռը բացվեց և փոքրիկ դույլը թափահարելով, դուրս եկավ Անտոն Եգորիչը:

Վիրաբի ծնկները թուլացան սարսափից: Ե՞րբ է եկել: Ուրեմն՝ հենց ինքը դուրս է եկել, նա էլ տո՛ւն է մտել: Բա որ հանդիպեին հանկարծ...

Որքան էլ փորձեց ցույց չտալ, բայց վախենալով նայեց Անտոն Եգորիչին, ու նկատեց, որ նա էլ անքուն ու տառապած դեմք ունի:

- Բարի լույս, Վիրա՛բ,- ասաց Անտոն Եգորիչը՝ դույլը դատարկելով:

- Բարի լույս, Անտո՛ն Եգորիչ,- հազիվ կարողացավ պատասխանել Վիրաբը:

- Ո՞նց ես,- հարցրեց ավագ վերահսկիչը՝ ասես մի տեսակ ուշադիր ու կասկածանքով նայելով Վիրաբին:

- Է՛հ,- գլուխը ծռեց Վիրաբը:

Ինքն էլ չհասկանալով, թե ինչպես հասավ ավտոմեքենայի դռանը, բացեց, մի ոտքը դրեց աստիճանին, որ վեր բարձրանա ու մեկ էլ հանկարծ լսեց սարսափով.

- Վիրա՛բ...

Վիրաբը փակեց աչքերը: Ի՞նչ անի: Ինչպե՞ս շրջվի: Եթե հարցնի՝ ինքն ի՞նչ պետք է ասի: Նման դեպքերում ի՞նչ են ասում ուրիշները: Եվ վերջապես նրան ի՞նչ է հայտնի: Միայն ջահի մասի՞ն գիտի, թե Ցողիկն ամեն ինչ խոստովանել է: Կան, չէ՛, այդպիսի կանայք: Մուտ խոսել չեն կարողանում, բռնվում են միանգամից: Հիմա ի՞նչ անի ինքը, չլսելու տա ու փակի՞ դուռը:

- Վիրա՛բ,- կրկին ձայնեց Անտոն Եգորիչը:

Եվ Վիրաբը ետ նայեց:

- Վիրա՛բ,- մոտեցավ ու մի տեսակ դավադրաբար, շուրջը նայելով, շշուկով ասաց Անտոն Եգորիչը:- Ես քեզ մի բան պիտի հարցնեմ:

«Սկսվեց», - քունքերի մեջ ցավ զգալով, մտածեց Վիրաբը:

- Վիրա՛բ,- սկսեց Անտոն Եգորիչը, լռեց, խորը հառաչեց ու ասես դժվարությամբ կուլ տալով բերանի դառնությունը, շարունակեց,- Վիրա՛բ, երկուսս էլ տղամարդ ենք ու հիմա ինչ-որ պիտի ասեմ քեզ՝ տղամարդու համար, մարդու համար շատ դժվար է ասելը: Շատ ծանր բան է: Ես ուրիշին, ով էլ լինե՛ր քեզնից բացի՝ չէի ասի:

Վիրաբը շունչ քաշեց:

- Իսկ քեզ ասում եմ, որովհետև վաղուց եմ ճանաչում և համոզված եմ, որ դու ազնիվ, օրինավոր մարդ ես:

Նրա յուրաքանչյուր խոսքը ասես ապտակ լինե՛ր, և Վիրաբն ականա թափահարեց գլուխը՝ ասես հարվածներից խուսափելու համար:

- Ես քեզ իմ եղբոր տեղ եմ դնում,- ասաց Անտոն Եգորիչը:- Թեև եղբորս էլ այդ բանը չէի ասի: Դու ինձ լսո՞ւմ ես:

- Լսում եմ, Անտո՛ն Եգորիչ,- այլևս անկարող դիմանալու, գրեթե պոռթկաց Վիրաբը:

- Դու քո գործի բնույթով շատ հաճախ և հատկապես վաղ առավոտները մեր փողոցում ես լինում: Երբևէ չե՞ս տեսել... չե՞ս նկատել, ասենք, որևէ կասկածելի բան, ասենք՝ որևէ անձանոթի, որ մեր տնից է դուրս գալիս:

Նա վերջին բառերը արագ-արագ, կարծես ազատագրվելով, շնչակտուր ասաց:

- Ի՛նչ եք ասում,- պարզ զգալով, որ արյունը գլուխն է խուժում, մրմնջաց Վիրաբը:- Ի՛նչ եք ասում:

- Միայն թե անկեղծ, տղամարդավարի,- ասաց Անտոն Եգորիչը,- դա մատնություն չէ: Հաշվիր, որ դու եղբորդ պատիվն ես փրկում: Ես զգւմ եմ, ես զգում եմ, որ ինչ-որ բան կարգին չէ մեր տանը: Եթե ես իմանամ... Ես հո չե՞մ սպանելու նրան... Ես այդ մարդը չեմ... Ուղղակի կթողնեմ ու կհեռանամ... կգնամ Ռոստով: Ես այնտեղ մայր ունեմ... Ոչինչ չե՞ս նկատել, Վիրա՛բ:

- Չե՛,- վճռական ասաց Վիրաբը:- Չե՛:

- Ոչ մի անձանոթ մարդո՞ւ:

- Չե՛,- ավելի վճռական անկեղծ ասաց Վիրաբը՝ գոհ, որ հարցը այդպես տրվեց:- Չեմ տեսել:

- Ես քեզ հավատում եմ,- ասաց, բայց կարծես թե այնքան էլ չուրախացավ Անտոն Եգորիչը:-
Ես քեզ հավատում եմ, Վիրա՛ր: Եվ խնդրում եմ այս մեր խոսակցության մասին...

- Դա ի՞նչ ասելու բան է:

Վիրաբը նստեց մեքենան ու քշեց, գնաց Առափնյա փողոցով, մոռանալով հավաքել մնացած տների աղբը, նա դարուփոսերն անցնելիս վեր ու վար էր անում փափուկ նստատեղին՝ սկզբում ուրախացած, որ լավ պրծավ այդ ամբողջ պատմությունից, իսկ հետո կամաց-կամաց տխրելով: Նա հիմա էլ համառորեն փորձում էր ոչ մի բանի մասին չմտածել, ոչնչի... Որովհետև հենց մտածում էր, կյանքն անիմաստ ու տգեղ էր թվում նրա աչքին:

Նա նույնիսկ սկսեց սուլել՝ երբեմն-երբեմն դուրս նայելով կողքի բաց պատուհանից, բայց այդ սուլոցն անգամ անկարող էր խլացնել նրա անհանգիստ, խռոված խղճի ձայնը, որը շարժիչի համաչափ թխկթխկոցի հետ համաչափ ու հոգեմաշ շշուկով ասում էր.

- Դու ստո՛ր ք ես, ստո՛ր ք ես, ստո՛ր ք ես, ստո՛ր ք ես...

Եվ նորից երկու Վիրաբները տաքացած կպան իրար:

«Բայց ինչի՞ եմ ստոր,- ինքն իրեն բարձրաձայն հարցրեց Վիրաբը:- Ինչի՞ եմ ստոր: Ես ի՞նչ մեղավոր եմ: Ես նրան աչքո՞վ էի արել, որևէ բա՞ն էի հասկացրել, որևէ ակնա՞րկ էի արել: Իմ մտքով էլ չէր անցնում, որ մեկ էլ հանկարծ գիրկս կընկնի:- Նա հառաչեց ու դուրս նայեց պատուհանից:- Իսկ հետո, հետո՝ ես ի՞նչ կարող էի անել, մարդ եմ, չէ՞, ի վերջո մարդ եմ, չէ՞: Հո քար չե՞մ: Ամեն տեսնելիս կծիծաղեի ինձ վրա: Ամոթից գետիներ կմտնեի... «Իբր թե հիմա չի ծիծաղում ու ես էլ չեմ մտնում», - ասաց նրան մյուս Վիրաբը:

Նա նորից սարսափեց, պատկերացնելով, թե ինչ կլինեն, եթե Անտոն Եգորիչը ներս մտներ հենց այն ժամանակ, երբ ինքը, դուռը կամացուկ բացելով, դուրս էր գալիս: Կամ ավելի՛ շուտ: Ի՞նչ կլինեն: Անտոն Եգորիչը կխփե՞ր... Ի՞նչ կանեն... Գուցե ուղղակի կթքե՞ր երեսին:

«Դու, որ կողմնակի մարդ էիր, ո՞նց խփեցիր երաժշտական դպրոցի դիրեկտորին», - քմծիծաղեց առաջին Վիրաբը:

«Բայց նա մի ձեռքով գրկել էր ընկերոջը, ասում էր՝ ցավդ տանեմ, իսկ մյուս ձեռքը դրել էր նույն ընկերոջ կնոջ ծնկանը: Դա բոլորովին ուրիշ բան է: Ես հո Անտոն Եգորիչի ընկերը չեմ: Հո նրա հետ հաց չեմ կերել», - արդարացավ երկրորդ Վիրաբը:

«Հա, դե, իհարկե, մեղմացուցիչ հանգամանք է, որ դու ընդամենը շատ ջերմ բարևում ես նրան», - ծիծաղեց առաջին Վիրաբը:

«Է, հա, բարևի մեջ ի՞նչ կա: Չէ, չէ, ազնիվ խոսք, շատ եմ մտածել: Էդ հարցում ես էնքան էլ մեղավոր չեմ: Մեղավորը նա էր, նա: Ինձ ուղղակի կախարդել էր, ինչ էր արել, խելքս տարել էր էդ աղջիկը», - գլուխը թափահարեց երկրորդ Վիրաբը:

«Կարեն Բզնունին էլ հաստատ նույնն է ասում ինքն իրեն,- բարկացավ առաջին Վիրաբը:- Եվ բոլորը, բոլորը նույնն են ասում: Աշխարհում դեռ ոչ մի մեղավոր մեղավոր չի համարել իրեն: Մեղավորը միշտ ուրիշներն են»:

Երկրորդ Վիրաբը միտք չունեի պատասխան տալու բոլորի համար և նպատակահարմար գտավ միայն մրմնջալ. «Կարծում ես հեշտ է, էլի: Չլսեցի՞ր, Էդքան պատմությունից հետո էլ հարցնում է՝ կգա՞ս»:

«Ի՞նչ, ի՞նչ»,- իբր թե չլսեց առաջին Վիրաբը:

«Ոչի՛նչ, ոչի՛նչ»,- վախեցած լռեց երկրորդը:

*

* *

Մեկ առ մեկ տներին ու շենքերին մոտենալով և թափահարելով պղնձե զանգը, Վիրաբը կտրեց-անցավ ողջ Առափնյա փողոցը՝ իր տարօրինակ, տարբեր, բայց ամեն դեպքում ծանոթ, հին ու հարազատ բնակիչներով և կանգ առավ աջ կողմից վերջին տան առջև, որի դռանը, նոր կարած գեղեցիկ կոստյումը հագին՝ նրան էր սպասում Խոսրովը:

- Բարի լույս, քեռի Վիրաբ:

Խոսրովն առաջինն էր կյանքում, որ մի քանի տարի առաջ Վիրաբին քեռի ասաց: «Դյադյա» ասողներ շատ էին եղել: Բայց քեռի... Հետո շատ մտերմացան, և Վիրաբն իսկական քեռիություն էր անում Խոսրովին: Բարակ-մարակ մարմնով, նուրբ, քիչ գունատ դեմքով ու թավ, առատ ու սև մազերով այդ տղան շատ էր նման Վահան Տերյանին: Կամ գուցե այնքան նման չէր, որքան ուզում էր նմանվել, որովհետև մի անգամ Վիրաբը նկատեց, թե Խոսրովն ինչպես է ուշադրությամբ դիտում պատից կախված Վահան Տերյանի դիմանկարը և աշխատում մազերը ճիշտ նույն ձևի սանրել:

Մանկավարժական ինստիտուտի գրականության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող էր Խոսրովը: Երևանում ոչ ոք չունեի: Ծնվել էր Վրաստանի Բոգդանովկայի շրջանում: Հենց այնտեղ, որտեղ Վահան Տերյանն էր ծնվել ու երջանիկ էր դրանով: Աշխարհին պարզ, զարմացած, լայն բացած աչքերով նայող տղա էր: Երբեք սուտ չէր խոսում ու դրա համար էլ հենց շատ փոքր հասակից արժանացել էր շրջապատի ծաղրին ու դատաստանին: Հենց ինքն էլ այդ մասին պատմում էր ծիծաղելով ու զարմացած, մինչև վերջ էլ չհասկանալով, թե ինչի համար են հալածել իրեն:

Դպրոցի բակում գնդակ խաղալու ժամանակ մի անգամ գնդակը թռչում ու կոտրում է ուսուցչանոցի լուսամտուտի ապակին, բակում ինչքան երեխա կա, կանչում են ուսուցչանոց:

- Ո՞վ է կոտրել,- խիստ հարցնում է դիրեկտորը:

Բոլորը լռում են:

- Ես ու Համբարձումը,- անմիջապես առաջ է գալիս Խոսրովը:- Ես գնդակը գցեցի, ինքն էլ խփեց ու...

Հետո, դպրոցի շենքի անկյունում Համբարձումն ու էլի ուրիշ տղաներ անգթորեն հարվածներ էին տեղում Խոսրովի վրա, Խոսրովը լաց էր լինում ու հարցնում միայն.

- Ախր ինչի՞, ինչի՞, ասե՛ք՝ նոր խփեք, էլի՛ ...

Ամբողջ դասարանով որոշում էին դասատուին ասել, թե դասը չեն սովորել: Բոլորը համաձայնում էին, Խոսրովից բացի:

- Ես սովորել եմ,- ասում էր:

- Բոլորս էլ գիտենք,- ջղայնանում էին դասարանցիները,- բայց որոշել ենք չպատասխանել, հասկանո՞ւմ ես, Խոսրով:

- Չէ,- ասում էր Խոսրովը:- Դուք ոնց ուզում եք, բայց որ հարցնի՝ ո՞վ գիտի դասը, ես կպատասխանեմ:

- Կատկացնենք,- զայրանում էին տղաները:

- Ախր ինչի՞,- խեղճացած հարցնում էր Խոսրովը:

Եվ օր չկար, որ որևէ պատմության մեջ չընկներ, որից դուրս էր պրծնում արցունքոտ աչքերով և կապտած, քերծված դեմքով:

Նա նման չէր ուրիշներին, և նրան չէին ներում հենց այն, որ իրենց նման չէ: Ոչ միայն նրա բնավորությունն ու արարքները, նրա գոյությունն անգամ խանգարում էր շրջապատի մարդկանց, խռովում նրանց հոգիները, զայրացնում էր:

Տիզիկապես այնքան ուժեղ չէր, որ կարողանար դիմադրել շատ հեշտ ձեռք բերած իր անթիվ, անհամար հակառակորդներին կամ գոնե առանձին-առանձին վրեժ լուծեր նրանցից: Նրանից չէին վախենում և դրա համար էլ պատժում էին:

Նույնիսկ աղջիկները լուրջ չէին ընդունում և ընկերություն չէին անում նրա հետ: Ութերորդ դասարանում հանկարծ սիրահարվեց իր դասընկերուհի Լուսնթագին: Գիշերները չէր քնում, հուզաթաթավ բանաստեղծություններ էր գրում, վերնագրի տակ անպայման ավելացնելով՝ «Իմ պաշտելի Լուսնթագին», բայց վախենում էր աղջկան տալ: Եվ ճիշտ էր անում: Միայն ափսոս, որ չդիմացավ մինչև վերջ և մի գիշեր երկար մի նամակ գրեց աղջկան, նամակը ողողելով արցունքներով, որի մասին նշել էր տեղն ու տեղը: Այդ նամակում Տերյանից ու իր ստեղծագործություններից քաղվածքներ բերելով՝ նա իր մաքուր, անբիծ ու հրկեզ սերն էր խոստովանում աղջկան, հավատացնելով, որ նույնիսկ մահից հետո կբուսնի իբրև ծաղիկ, որպեսզի աղջկա տաք կրծքին թառամի:

Լուսնթագն այդ նամակը բարձրաձայն կարդաց դասարանում, բոլորի և հենց իր՝ Խոսրովի ներկայությամբ: Եվ տղաները հռհռալով բռնեցին Խոսրովին, քաշ տալով բերեցին, գլուխը սեղմեցին Լուսնթագի կրծքին ու պահանջեցին, որ անմիջապես թառամի:

Դա մեծ հարված էր Խոսրովի համար, և նա սկսեց որքան հնարավոր է խուսափել ընկերներից, ամփոփվել ինքն իր մեջ ու գրքերի մեջ: Ինչ չէր հաջողվում կյանքում, նա գրքերի մեջ գտավ: Գրքերը նրա պաշտամունքն ու մխիթարությունը դարձան: Գրքերը չէին հալածում ու չէին ծաղրում նրան:

Գրքերը հասկանում, օգնում էին նրան և պատասխանում նրան տանջող հազար ու մի հարցերին: Նա բարեկամություն էր անում գրքերի հերոսների հետ, կռվում էր հետներն ու վիճում էր, ճշմարտությունն էր ասում նրանց երեսին, բայց նրան չէին ծաղրում, չէին հալածում՝ ինչպես կյանքում: Նրա աչքին այդ հերոսները կենդանի, արյունով մարդիկ էին և հաճախ էր պատահում, որ նա համաձայն չէր լինում այդ հերոսների և նրանց հեղինակի հետ:

Կարծես դիտմամբ հենց նման մի դեպք պատահեց ինստիտուտում, ընդունելության քննությունների ժամանակ:

Հարցերից մեկը վերաբերում էր Բաֆֆու պատմավեպերին: Խոսրովն այնպես հանգամանորեն և տրամաբանված պատասխանեց, որ տարեց պրոֆեսորը զարմացած ու հիացմունքով նայեց նրան: Ապա բարձրացավ տեղից, նույն դահլիճում քննություն ընդունող մյուս դասախոսներին իր մոտ հրավիրեց և նոր, ավելի բարդ հարցեր տվեց Խոսրովին: Տղան պատասխանեց շատ հանգիստ, և այնքան նրբորեն վերլուծեց Դավիթ-Բեկի կերպարը, շատերի համար աննկատելի, կերպարը բնութագրող այնպիսի կարևոր հանգամանքներ հիշեց, որ նրան այս անգամ հիացած նայեցին բոլորը:

- Որտե՞ղ ես ծնվել, տղա՛ս,- հարցրեց պրոֆեսորը:

- Վահան Տերյանի հայրենիքում,- հպարտ ասաց Խոսրովը:

Բայց պրոֆեսորը Բաֆֆու մասնագետ էր և նորից Բաֆֆու թեմային անցավ:

- Ո՞րն է «Մամվել» վեպում քո ամենասիրած կերպարը:

- Մուշեղ Մամիկոնյանը,- անմիջապես պատասխանեց տղան:

Պրոֆեսորն այնքան համոզված էր, որ տղան հիմա Մամվելի անունն է տալու, որ մի պահ մնաց շվարած:

- Իսկ Մամվե՞լը,- հոնքերը կիտեց նա:

- Մամվելն էլ,- կամացուկ ասաց Խոսրովը:

Պրոֆեսորը շատ զարմացավ:

- Նրա կերպարն ինչ է, քեզ այնքան էլ դուր չի՞ գալիս:

Խոսքովը ամեն տեղ Խոսքով էր:

- Ո՛չ,- ասաց նա:

- Ո՞չ,- ականջներին չհավատաց պրոֆեսորը:

- Ինձ դուր չի գալիս,- պարզ ասաց Խոսքովը:

Բոլորը զարմացած էին, վշտացած ու հետաքրքրված:

- Ի՞նչը դուր չի գալիս,- շփոթված հարցրեց պրոֆեսորը:

- Որ նա սպանում է իր ծնողներին:

- Բայց չէ՞ որ նրանք հայրենիքի թշնամիներ էին,- սկսեց բարկանալ պրոֆեսորը:

- Իսկ ծնողները հայրենիք չէ՞ն, ինչ է,- հանգիստ պատասխանեց Խոսքովը:- Հայրենիքը ծնողներից չի՞ սկսվում:

Պրոֆեսորը քրտնեց:

- Դու խելոք, տրամաբանող տղա ես,- ասաց նա համբերությամբ,- և պիտի հասկանայիր, որ Սամվելի ծնողները հայ ժողովրդի գաղափարական հակառակորդներն էին: Նրանք դավաճաններ էին և ուրեմն՝ արժանի էին մահվան:

- Թող ուրիշներն սպանեին,- ասաց Խոսքովը:- Ով ուզում էր, թող սպաներ, բայց ոչ հարազատ որդին:

- Սակայն...- սկսեց պրոֆեսորը, բայց Խոսքովը գրեթե աղերսանքով նայեց նրան:

- Շատ եմ խնդրում,- ասաց,- ուրիշ հարցեր տվեք: Այդ հարցում, միևնույն է, ես մնում եմ իմ կարծիքին: Երդվում եմ, ես շատ եմ մտածել, շատ եմ տանջվել: Ես սիրում եմ Սամվելին, միշտ, ամեն ինչում նրա հետ եմ, նրա հետ տառապելով և ուրախանալով հարյուր անգամ անցել եմ գրքի բոլոր էջերով, բայց վերջին էջը կարդալ չեմ կարողանում: Չեմ ուզում կարդալ: Սամվելն իրավունք չուներ: Ես, օրինակ, ինչ էլ պատահի, ձեռք չեմ բարձրացնի իմ ծնողների վրա: Ավելի շուտ՝ ինքս ինձ կսպանեմ:

- Եվ դա, քո կարծիքով, ավելի ճիշտ կլիներ,- չդիմացավ, միջամտեց դասախոսներից մեկը:

- Այո՛,- ասաց Խոսքովը:- Եթե Սամվելը ինքնասպան լիներ ծնողների այքի առաջ, ես համոզված եմ, որ նրանք կցնցվեին, կհասկանային ու կզղջային: Իսկ եթե չէ, հեղինակը միշտ էլ հո կարող էր սպանել նրանց:

- Այո՛...- մտազբաղ մրմնջաց պրոֆեսորը:

- Եվ հետո՝ պատահական հո չէ, որ հինգերորդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդը, որի գրքից էլ Րաֆֆին «Սամվելի» գաղափարն է վերցրել, այդ դեպքի մասին պատմում է զուտ որպես

եղած փաստի և ոչ մի գնահատական չի տալիս Սամվելի արարքին: Ոչ մի: Ուրեմն երևի նրա համար էլ հեշտ չի եղել մի-միակ պատասխան տալը,- ավարտեց իր խոսքը Խոսրովը:

Բոլորը լուռ էին, շփոթված, և պրոֆեսորը հանկարծ զգաց, որ աննախանձելի վիճակի մեջ է: Ի՞նչ գնահատական դնի: Միջինն անկարելի է. կամ գերազանց պետք է դնել և ընդունել, որ նա իրավացի է, կամ էլ պետք է կտրել քննությունից: Բայց այս անգամ, Խոսրովի բախտից, որն այնքան քիչ էր ժպտում նրան, պրոֆեսորը լայնախոհ, առաքինի մարդ էր և իսկական գիտնական.

- Դե ի՞նչ,- ծիծաղելով դարձավ նա ներկաներին,- թող մեկն էլ ուրիշ կարծիք ունենա, ի՞նչ կլինի:

Ու Խոսրովի ստուգարքային գրքույկում գրեց «գերազանց»:

Ինստիտուտ ընդունվելուց և Առափնյա փողոցում ինչ-որ հեռավոր ազգականի միջոցով փոքրիկ մի սենյակ վարձելուց հետո, Խոսրովի առաջին գործն այն եղավ, որ Բոգդանովկայից հետը բերեց իր բոլոր գրքերը, իր աշխարհը: Եվ ոչ մայն գրքերը, դարակները բերեց, որոնց վրա կանոնավոր, գրադարանային աշխարհի բոլոր օրենքներով դասավորեց գրքերը: Գյուղում շատ էին երևում դրանք, այստեղ քիչ թվացին և Խոսրովը իրեն հատուկ պարզությամբ, առանց փոքր-ինչ անհարմար զգալու, կտրեց-անցավ Առափնյա փողոցը ծայրեծայր, մտավ յուրաքանչյուր տուն: Նրա խնդրանքը մեկն էր. գրքեր տվեք, իմ տանը ուզում եմ փոքրիկ գրադարան բացել, որից պետք է օգտվեն ձեր երեխաները և եթե ցանկանաք՝ նաև դուք: Ումանք ծիծաղեցին, ումանք ընդունեցին շատ լուրջ, ումանք չբացեցին անգամ դռան շղթաները, իսկ ումանք հենց իրենց ձեռքով գրքերը բերեցին և հանձնեցին Խոսրովին:

Եվ Խոսրովի գրադարանը աղմուկ հանեց:

Թաղի գրեթե բոլոր երեխաները և տարեց մարդիկ բաժանորդագրվեցին գրադարանին: Խոսրովը քարտադարան ստեղծեց, քարտեր բացեց յուրաքանչյուրի համար և նույնիսկ չափազանց լրջորեն՝ դռանը հայտարարություն փակցրեց, թե գրադարանը բաց է ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկոյան ժամը յոթից մինչև տասը: Ընդ որում՝ նա երեխաներին հանձնարարում էր կարդալ հատկապես այն գրքերը, որ նրանք անցնելու էին հաջորդ քառորդում:

Երբ տեսան, թե իրենց երեխաները ինչ հափշտակությամբ են սկսել կարդալ և թե ինչպես են սովորում, որ նշված օրը գրքի բովանդակությունը պատմեն գրադարանավարին, ծնողները նոր միայն հասկացան, թե ինչ մեծ գործ է սկսել այդ գունատ ու խենթ պատանին և Խոսրովի տունը բառացիորեն ողողեցին գրքերով:

Խոսրովը սովորեցնում էր ամեն ինչ՝ գիրքն ինչպես կարդալուց սկսած մինչև տողատակը հասկանալը: Քննարկումներ էր անցկացնում, զրույցներ կազմակերպում: Գրադարանի գործունեության երկրորդ տարում ակադեմիկոս Պարսամյանին ստիպեց զեկուցում կարդալ: Ակադեմիկոսը սկզբում ծիծաղեց, հետո հրաժարվեց լրջորեն, հետո բարկացավ ու խռովեց, բայց երբ հարևանները նրան ասացին, թե փողոցի պատին հայտարարություն է փակցված նրա ելույթի մասին, նշված ժամին խելոք-խելոք մտավ Խոսրովի տուն: Բայց քանի որ՝ ի զարմանս ակադեմիկոսի, թաղի և հարևան շենքերի շատ բնակիչներ մնացել էին փողոցում կանգ-

նած, որովհետև Խոսրովի տանը կեսի կեսն էլ չէին տեղավորվի, ակադեմիկոս Պարսամյանը իր տուն հրավիրեց մարդկանց և նույնիսկ կարգադրեց թեյ պատրաստել:

Հետո ծիծաղելով ձգեց Խոսրովի ականջից ու խոստովանեց, որ կյանքում զեկուցումից առաջ այսքան հուզված չի եղել: Ի վերջո հարևաններ են, չէ՞, ամեն օր հանդիպում ես և հանդիպելու ես: Հեղինակության հարց է:

Մի անգամ էլ ընդունելության քննությունների ժամանակ իրեն քննող պրոֆեսորին էր համոզել ու բերել հանդիպման և քանի որ նախապես բարձրդասարանցիներին հանձնարարել էր կարողալ նրա աշխատությունները, պրոֆեսորը քիչ մնաց արտասվի՝ երբ երեխաները սկսեցին վերլուծել նրա գրքերը:

- Ջարմանահրաշ օր է ինձ համար,- ասում էր նա՝ գլուխն օրորելով:

Եվ մի օր հանկարծ գրադարանը փակվեց: Դա այնպիսի անակնկալ էր, որ ամբողջ թաղամասը իրար խառնվեց ու պաշարեց Խոսրովի տունը: Հարցերի տարափ տեղացին: Խոսրովը լսեց բողոքները, ժպտաց ու ասաց.

- Ես արձակուրդ վերցնելու իրավունք չունե՞մ:

- Ուրեմն՝ նորից բացելո՞ւ ես, Խոսրո՛վ,- ուրախացան գրադարանի հաճախորդները:

- Տեսնենք,- խուսափողաբար պատասխանեց Խոսրովը:

Անհանգստացավ նաև նրա լավագույն բաժանորդներից մեկը՝ Վիրաբը, և հենց նույն երեկոյան, պատի հայտարարությունը իր աչքով կարդալուց հետո, մտավ Խոսրովի տուն:

- Բարի երեկո, Խոսրո՛վ ջան,- ասաց:

- Բարի երեկո, քեռի՛ Վիրաբ,- տեղից վեր կացավ Խոսրովը:

- Ի՞նչ է պատահել, ախպե՛րս,- հարցրեց Վիրաբը:

Խոսրովը տանջվեց, տառապեց, ինչպես ասում են՝ գույն տվեց, գույն առավ ու մրմնջաց.

- Միրահարվել եմ, Վիրա՛բ քեռի:

- Լո՞ւրջ,- չգիտես ինչու հարցրեց Վիրաբը:

- Լուրջ, շատ լուրջ,- հաստատեց Խոսրովը:- Աչքիս էլ ոչինչ չի երևում: Անընդհատ, ամենուրեք նրա մասին եմ մտածում, նրա հետ եմ խոսում: Երագումս էլ նրան եմ տեսնում: Ամոթ չի՞, որ այսպես խոսում եմ ձեզ հետ, Վիրա՛բ քեռի:

- Ամոթ չի,- լրջորեն պատասխանեց Վիրաբը:

- Ես կարծում էի, թե գրադարանն ինձ համար ամեն ինչ է: Բայց հիմա կարդալ էլ չեմ ուզում, Վիրա՛բ քեռի: Կարծես թե ավստոսում եմ ժամանակ կորցնել գրքերի վրա, ուզում եմ գիշեր-ցերեկ նրա մասին մտածել, նրան հիշել:

- Իսկ ինքը գիտի՞, - հարցրեց Վիրաբը:

- Այո՛:

- Եվ ի՞նչ է ասում:

- Ոչինչ էլ չի ասում: Ժպտում է: Ոչ հա է ասում, ոչ՝ չէ: Տանջում է:

- Աշխատո՞ւմ է, թե սովորում:

- Աշխատում է: Մեր ինստիտուտի կողքի դեղատանը:

Վիրաբը լռեց, չիմացավ ինչ ասել:

- Մի անգամ ցավում էր գլուխս, մտա դեղատուն ու մոռացա, թե ինչու եմ եկել: Կանգնել նրան էի նայում: Ասում է՝ ի՞նչ եք ուզում: Իսկ ես կանգնել նայում եմ նրան ու չգիտեմ, թե ինչ եմ ուզում: Դեղի անունն էլ էի մոռացել:

- Պարզ է,- ասաց Վիրաբը:

- Ի՞նչ անեմ, Վիրա՛բ ջան: Մի խորհո՛ւրդ սովեք, խնդրում եմ: Ինչպե՞ս համոզեմ, որ ամուսնանա ինձ հետ: Շուտով ավարտելու եմ, աշխատանքի նշանակվելու հարց կա: Ինչպե՞ս իմանամ, ինձ հետ գյուղ կգա՞, չի գա:

- Գեղեցի՞կ է,- հարցրեց Վիրաբն ու անմիջապես էլ մտածեց, որ շատ հիմար էր հարցը:

- Աստվածային էակ է,- ասաց Խոսրովը,- որ նայում եմ, ուզում եմ ծունկ չոքել ու երկրպագել: Նրա դեմքից ասես լույս է ճառագում: Հիշո՞ւմ եք, ես ձեզ կարդացել եմ Չարենցի տողերը՝ «Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով»... Նրա մասին է գրված:

«Տեսնես իրականում ինչի նման է», - մտածեց Վիրաբը:

- Ի՞նչ անեմ, մի ե՛լք ցույց սովեք, Վիրաբ քեռի: Չե՞ որ դուք մեծ մարդ եք: Փորձ ունեք:

«Է՛, տղա ջան,- մտածեց Վիրաբը,- իմ փորձը դժվար թե քեզ պետք գա»:

Իսկ բարձրաձայն ասաց.

- Ի՞նչ պետք է անես: Սպաս՛ր, մինչև վերջացնի աշխատանքը, ճանապարհի գցի: Կամա՛ց կամա՛ց խոսիր հետը:

Խոսրովը խորամանկորեն ժպտաց.

- Բա գրադարանն ինչո՞ւ եմ փակել, Վիրա՛բ քեռի: Արդեն երկու օր է, ինչ թույլ է տվել ուղեկցեմ իրեն: Միայն թե՛ հիմա էլ ես եմ ամաչում: Այնքան լավ է հագնվում, այնքան ճաշակով ու գեղեցիկ, որ ես իմ շորերով կողքին ոնց որ խրտվիլակ լինեմ: Նամակ գրեցի տուն, մայրիկիս խնդրեցի, որ մի քիչ դրամ ուղարկի, կոստյում առնեմ: Տեսնենք երբ է ուղարկելու:

- Ես քեզ կարող եմ փող տալ,- ուրախացավ Վիրաբն ու ավելացրեց.- ինձ համար, Խոսրո՛վ ջան, քեզ փող տալը հիմա ավելի հեշտ է, քան թե խորհուրդ: Ազնիվ խոսք:

- Որքան բարի մարդ եք, Վիրա՛բ քեռի,- աղբահավաքի դեմքին պարզ, մաքուր աչքերով նայելով, շնջաց Խոսրովը:- Ես երախտագիտությամբ կօգտվեմ ձեր առաջարկից և հենց որ ստացա՝ կվերադարձնեմ անմիջապես:

- Էդ մասին մի՛ մտածիր,- ասաց Վիրաբը:- Վաղը կրերեմ:

*

* *

Ահա այդ հանդիպումից հետո ընդամենը մի քանի օր էր անցել, երբ վաղ առավոտյան, իր առաջին պտույտի ժամանակ, Առափնյա փողոցի ծայրը հասնելով, Վիրաբը տեսավ Խոսրովին: Սակայն, ինչպես արդեն գիտեք, Խոսրովի ձեռքին ոչ դույլ կար, ոչ էլ որևէ փաթեթ: Նա կանգնած էր նոր, սրճագույն կոստյումով, որը զարմանալիորեն փոխել էր նրա արտաքինը, ուղղել թիկունքը, պատկառելի տեսք տվել: Դեղին, շագանագույն շերտերով փողկապը, որ սեղմել էր տղայի սպիտակ, մաքուր վերնաշապիկի օձիքը, հիանալի բռնում էր կոստյումի հետ: Ասես բոլորովին ուրիշ մարդ լիներ կանգնած Վիրաբի առաջ: Վիրաբը հիշեց հին ասացվածքը. «Շոր տուր, շնորհք տամ» ու ժպտաց:

- Բարի լույս, Խոսրո՛վ:

- Բարի լույս, Վիրա՛բ քեռի,- հպարտ ժպտալով, ողջունեց Խոսրովը:- Հը՞, ինչպե՞ս է:

- Խոսք չկա,- անկեղծորեն ուրախացած, ասաց Վիրաբը:- Հիմա էլ ո՞վ կարող է մերժել քեզ:

- Ճիշտ է,- սրտանց ծիծաղեց ու նորից մանկացավ Խոսրովը:- Եվ հենց այդպես էլ եղավ, Վիրա՛բ քեռի:

- Ի՞նչ եղավ,- հարցրեց Վիրաբը:

- Վիրա՛բ քեռի, մի բան եմ ուզում նախօրոք խորել ձեզ: Ես Երևանում ձեզանից ավելի մոտ, սրտացավ բարեկամ չունեմ, որ նրան ասեմ:

- Լսում եմ:

- Եթե հարկ լինի, իսկ ես կարծում եմ, թե շուտով հարկ կլինի, գնալ Մարինեկն տուն, ինչպես իրենք են ասում՝ խոսք ուզելու, դուք կգա՞ք ինձ հետ իմ ծնողների փոխարեն, որպես իմ բարեկամ, իմ հարազատ, ինձ համար երաշխավորող:

- Ուրեմն՝ ամեն ինչ կարգի՞ն է,- ժպտաց Վիրաբը:

- Կարծես թե ամեն ինչ կարգին է:

- Իսկ ինչո՞ւ քո ծնողներին չես կանչում: Չե՞ն վիրավորվի:

- Հայր չունենմ, -միանգամից տխրած ասաց Խոսրովը,- իսկ մայրս հիվանդ է, և հետո՝ տուն-տեղը չի թողնի: Ինձնից բացի, տանը չորս երեխա էլ կա: Հետո՝ կով ունենք... հավեր ունենք...

Երբ Խոսրովի հետ էր խոսում, Վիրաբն ինքն էլ դառնում էր բացարձակ անկեղծ: Այդ էր պատճառը, որ ասաց, առանց մտածելու, թե կարող է մեղադրվել դեմագոգիայի մեջ: Կամ որ հաճոյախոսության է սպասում:

- Խոսրո՞վ ջան,- ասաց նա,- իսկ ես ինչքանո՞վ եմ հարմար: Վաղը, մյուս օրը կիմանան, որ եղած-չեղածը ադր հավաքող վարորդ եմ:

- Դո՞ւք,- զարմացած նրան նայեց Խոսրովը:- Դուք ինձ հանդիպած ամենամեծ մարդն եք: Իսկ այդ որտե՞ղ է գրված, թե ադր թափողն ավելի լավն է, քան ադրը հավաքող-մաքրողը: Մարինեն արդեն գիտի ձեզ, և հարգում է, ինչպես ես եմ հարգում: Նա գիտի նույնիսկ, որ ես ձեր տված դրամով եմ գնել այս կոստյումը:

- Դա՞ ինչ ասելու բան էր,- վրդովվեց Վիրաբը:

- Իսկ ինչո՞ւ պետք է չասեի: Լավի ու բարու մասին ամեն խաչմերուկում պետք է աղաղակել, Վիրա՞բ քեռի: Ուրեմն՝ կգա՞ք:

- Մեծ ուրախությամբ,- ասաց Վիրաբը:- Մարգոյի թևը կբռնեմ ու կգամ:

- Ուրեմն, մի բան էլ պիտի խնդրեմ,- ասաց Խոսրովը:

- Ի՞նչ,- ժպտաց Վիրաբը:

- Այսօր երեկոյան շա՞տ զբաղված եք:

- Չէ՛:

- Ուրեմն՝ եկեք մեր տուն: Շատ եմ խնդրում: Ես ուզում եմ, որ դուք տեսնեք իմ Մարինեին:

- Խոսրո՞վ...

- Շատ եմ խնդրում: Չե՞ որ դուք էլ ընդունեցիք, որ իմ հարազատն եք: Ընդունեցիք, չե՞ ...

Վիրաբը ծիծաղեց շոյված:

*

* *

Երեկոյան, ինքն էլ կարգին հագնված, Վիրաբն իր «ֆիատ»-ով, արդեն երրորդ անգամ, մտավ Առափնյա փողոց ու ավտոմեքենան կանգնեցրեց Խոսրովի սենյակի պատուհանի տակ: Պատուհանն անմիջապէս բացվեց և լույսի մեջ հայտնվեց Խոսրովը՝ երջանիկ ու հուզված:

- Եկա՞ք: Ինչքա՛ն ուրախ եմ: Հակառակի նման՝ Մարինեն էլ շտապում է, հազիվ եմ պահել, որ դուք տեսնեք:

Վիրաբն ներս մտավ, տեսավ ցածրիկ սեղանի կողքին, հյուսված աթոռակին նստած աղջկան և անմիջապէս խոստովանեց ինքն իրեն, որ Խոսրովի խանդավառ բացականչությունները բռնորովին էլ հեռու չեն իրականությունից: Եվ միաժամանակ զարմացավ, որ այդ աղջիկը խեղճ ու կրակ Խոսրովին է ընտրել:

Նրա առջև նստած էր գրեթէ գեղեցկուհի: Ճիշտ է, չափից ավելի շատ էին դեմքի գույները և նույնիսկ աչքերի կոպերին բրոնզի ինչ-որ հատիկներ էին փայլփլում, բայց դա առաջ էր, որ հունից հանում էր Վիրաբին: Նրա աչքը սովորել էր նույնիսկ շատ ավելի արտասովոր բաների:

- Ծանոթացե՛ք,- լայն ժպտալով, ձեռքերը պարզեց Խոսրովը:

- Վիրա՛բ,- ասաց Վիրաբը:- Շատ ուրախ եմ:

- Մարինե՛՛, - տեղից գրեթէ չշարժվելով, ձեռքը թույլ-թույլ մեկնեց աղջիկը:

- Իհարկե, սա ձևականություն էր,- ծիծաղեց Խոսրովը,- որովհետև երկուսդ էլ շատ հիանալի գիտեք իրար: Եվ, եթե իմ Մարինեն թույլ տա, շուտով ավելի մոտիկից կիմանաք:

Մարինեն ժպտաց:

- Վիրա՛բ քեռի,- հարցրեց Խոսրովը՝ նվիրված աչքերը չկարողանալով հեռացնել Մարինեից,- ես ճիշտ չէի՞ ասում: Չքնաղ է, չէ՞:

- Ըհը՛, արդեն հարբել է,- հոնքերը կիտեց Մարինեն:

- Ճիշտ չէի՞ ասում, ճիշտ չէի՞ ասում,- քրքջաց Խոսրովը, և Վիրաբը նոր միայն նկատեց, որ նա իսկական հարբած է:

- Ճիշտ էիր ասում,- ծիծաղեց Վիրաբը:- Դու միշտ էլ ճիշտ ես ասել:

- Հա՛, ես այդպես եմ,- բացականչեց Խոսրովը ու շտապով մի փոքրիկ բաժակ դրեց Վիրաբի առջև:- Մի-մի բաժակ չխմե՛նք այս նշանավոր օրվա առթիվ:

Վիրաբը նկատեց, որ սեղանին մի ավստե ծիրան կա և երկու փոքրիկ բաժակ, իսկ հենց Խոսրովի ոտքերի տակ՝ կոնյակի մի կիսատ շիշ: Մինչ ուզում էր արգելել, Խոսրովն արագ-արագ լցրեց բաժակներն ու իր բաժակը բարձրացնելով, ասաց.

- Խմենք այս օրվա կենացը: Նրա համար, որ այսօր առաջին անգամ Մարինեն մտավ մեր տուն: Նրա համար, որ Մարինեն առաջին աղջիկն է իմ կյանքում, որ այս տուն է մտնում: Խմենք Մարինեի և իմ բախտավորության կենացը.- ու անմիջապես էլ դարձավ Վիրաբին:- Շա՛տ եմ խոսում, Վիրա՛բ քեռի, ախր կյանքումս այսքան չէի խմել:

- Ամեն ինչ տեղին է,- ասաց Վիրաբը:- Ձեր կենացը, Մարինե՛, քո կենացը, Խոսրո՛վ: Երջանիկ լինեք:

Նա մեկնեց բաժակը, Մարինեն ևս իր բաժակը պարզեց ու նրա աջ ձեռքի միջամատին Վիրաբը մի մատանի տեսավ, որը շատ ծանոթ թվաց նրան: Արժաթե օձ էր, որ գալարվել էր աղջկա մատին, փոքր-ինչ բարձրացրել էր գլուխը և նայում էր սառը, փայլուն աչքերով:

Նա կարող էր երդվել, որ տեսել է այդ մատանին, բայց թե որտեղ՝ բոլորովին չէր հիշում: Եվ անմիջապես էլ մտածեց, թե հո այդ մատանուց մի հատ չի՞ աշխարհում, սարքողը շատ սարքած կլինի, էլի: Մտածեց այդպես, բայց չգիտես ինչու, կարծես թե ընկավ տրամադրությունը: Իհարկե, նրա հետ միշտ էր այդպես լինում, երբ աշխատում էր որևէ բան հիշել ու չէր հիշում: Բայց այս անգամ մի տեսակ ուրիշ էր:

- Դե, ես գնամ,- տեղից բարձրացավ Մարինեն,- կներեք ինձ:

- Մի՛ գնա, էլի, հոգի՛ս, մի՛ գնա էլի, չքնա՛ դս,- աղերսեց Խոսրովը:

- Պիտի գնամ,- շրթունքները սեղմեց աղջիկը:- Տանը հյուրեր ունենք, արդեն ուշացել եմ:

Վիրաբն անհարմար զգաց, որ ավտոմեքենայով է ու ձայն չի հանում:

- Կուզե՞ք, ես տանեմ ձեզ,- առաջարկեց նա սրտանց:

- Հանձարեղ գաղափար,- բղավեց Խոսրովը:- Վիրա՛բ քեռի, միասին տանենք ճանապարհենք իմ սրտի հատորին ու զանք:

- Խնդրեմ,- ասաց Վիրաբը:

Բայց աղջիկը նորից սեղմեց շրթունքները.

- Դու մնա տանը,- ասաց նա:- Բայց էլ չխմես: Լսո՞ւմ ես:

- Չեմ խմի,- անմիջապես համաձայնեց Խոսրովը:- Բայց հիմա գամ, հա՞՛:

- Կարիք չկա,- ասաց Մարինեն:- Մինչև վաղը:

Վիրաբն ավելի շուտ դուրս եկավ, գործի գցեց մեքենան, մի սիգարետ հանեց, վառեց, սպասեց մինչև աղջիկը տեղավորվի իր կողքին ու պոկվեց տեղից: Հենց նոր էին Առափնյա փողոցն անցել, երբ Մարինեն շտապով ասաց.

- Մի հատ սիգարետ էլ ինձ տվեք, էլի, վարպե՛տ, շունչս կտրվում է:

Վիրաբն համարյա ցնցվեց՝ լսելով այդ խոսքերը: Նրան թվաց, թե ինչպես հեռուստացույցի վրա՝ կինոյի կադրերը կրկնվում են: Ճիշտ նույն ձևով, ճիշտ նույն բառերը նա էլի էր լսել... Ո՞վ էր, ո՞վ, այն ժամանակ էլ նա ասաց.

- Մի հատ սիգարետ տվեք էլի, վարպե՛տ, շունչս կտրվում է:

«Շունչս կտրվում է»...

- Խոսքովը չի սիրում, որ ծխում եմ,- արդարացավ Մարինեն,- ես էլ աշխատում եմ խուսափել, բայց չի լինում:

Վիրաբն հանեց սիգարետի տուփը, Մարինեին մեկնեց ձեռքը, որ վերցնի և նորից, ցուցիչների աղոտ լույսի տակ նրա մատին տեսավ մատանի-օձը՝ գլուխը քիչ վեր պարզած, փայլուն աչքերով:

Ու հիշեց: Մռայլ, մառախլապատ, անձրևոտ առավոտ էր: Իհարկե:

Վիրաբն թաքուն նայեց աղջկան: Դե, իհարկե: Մարինեն ասես մոռացել էր աշխարհում ամեն ինչ, կծկվել էր դռան մոտ ու ծխում էր արագ-արագ, ազահորեն: Ինչպես այն օրը:

Վիրաբն անցավ մայրուղին, թեքվեց դեպի երկաթուղային կայարան, նորից թեքվեց դեպի Էրեբունի ու գնաց երկար ու լայն փողոցով, որի ծայրում, բարձունքի վրա էլեկտրական լապտերներով ընդգծված էր բնիկ երևանցիների առաջին տունը՝ Էրեբունի ամրոցը:

- Այս ո՞ւր եք գնում,- հանկարծ սթափվելով, զարմացած բացականչեց Մարինեն:

- Ձեր տուն: Չասացի՞ք, որ տուն եք գնում:

- Բայց ես իմ հասցեն չասացի: Դուք որտեղի՞ց գիտեք:

- Ես ձեզ էլի եմ տուն տարել,- ասաց Վիրաբն:

Աղջիկը առաջ թեքվեց, հարցրեց երկյուղով.

- Ե՞րբ, ինչո՞վ:

- Աղբի մեքենայով,- ասաց Վիրաբն:

Աղջիկը ոչինչ չասաց:

- Առավոտյան ժամը հինգն էր: Անձրև էր գալիս,- անողորձաբար շարունակեց Վիրաբը,- ձեր շունչն էլի կտրվում էր ու էդ օձն էլ ձեր մատին էր:

- Հիշեցի, լավ, լավ, հերիք է, հիշեցի,- հանկարծ չարացավ Մարինեն:

Վիրաբը դանդաղեցրեց ընթացքը:

- Մարինե՛,- ասաց նա գրեթե խնդրելով:- Խոսքովը միամիտ, պարզ տղա է ու հոգով երեխա է դեռ...

- Իսկ ես փչացած եմ,- նետեց աղջիկն ու այս անգամ առանց հարցնելու, մի սիգարետ էլ վերցրեց-վառեց:

- Ես էդպիսի բան չասացի,- գլուխը թափահարեց Վիրաբը:- Ես ո՞վ եմ, որ դատեմ ու դատապարտեմ մարդկանց: Ես մի հասարակ աղբ հավաքող եմ:

- Բայց դա էիք ուզում ասել:

- Չէ՛,- ասաց Վիրաբը:- Ես միայն ուզում եմ ասել, որ դուք շատ տարբեր մարդիկ եք, լրիվ տարբեր:

- Որտեղի՞ց գիտեք, է՛,- գլուխը բարձրացրեց Մարինեն:

- Հաստատ գիտեմ, մի օր կհանդիպի մեկը, որը ձեզ համապատասխան կլինի: Անպայման կհանդիպի: Իսկ Խոսքովը մեղք է: Վաղ թե ուշ նա ամեն ինչ կիմանա:- Էդ բաները թաքցնել չի լինում, կիմանա ու կդառնա աշխարհի ամենաաղժբախտ մարդը: Եվ, ո՞վ գիտի, թե ինչ կլինի հետո... Եկեք ձեռք քաշեք նրանից, Մարինե՛:

Աղջիկը հանկարծ լաց եղավ:

- Իսկ եթե այդ մաքուր, միամիտ տղան իմ միակ հո՞ւյսն է... Իսկ եթե նրա կողքին ես էլ եմ մաքրվո՞ւմ: Իսկ եթե միայն նա կարող է ինձ ազատել, փրկել իմ շրջապատի՞ց՝ իր սիրով, իր հավատո՞վ: Տեսաք, չէ՞, նրա մոտ ես արդեն չեմ ծխում, ամաչում եմ, քիչ է՞,- հանկարծ երեխայի նման ավելացրեց նա:- Տեսնո՞ւմ եք, փորձում եմ...

Վիրաբը մտքերի մեջ ընկավ:

- Ի՞նչ իմանամ,- ասաց նա:- Ի՞նչ իմանամ:

Վիրաբն ավտոմեքենան կանգնեցրեց աղջկա տան մոտ, մեկնեց ձեռքն ու բացեց նրա կողմի դուռը:

- Իսկ դուք նրան...- տեղից չշարժվեց Մարինեն:

- Չեմ ասի,- անկեղծորեն ասաց Վիրաբը:- Միայն թե սիրոս շատ է ցավում նրա համար: Ոնց որ իմ տղան լինի: Մի՛ նեղացեք:

- Դուք մի ասեք, հա՞, խնդրում եմ,- աղջիկն օձի մատանիով ձեռքը դրեց վարորդի արմունկին ու անմիջապես էլ ետ քաշեց:- Ես կասեմ, իսկ ինքն ինչ ուզում է թող որոշի: Ես ինքս կասեմ: Հա՞:

- Ի՞նչ ասեմ,- ասաց Վիրաբը:

Աղջիկը, ասես չուզենալով, ցած իջավ ավտոմեքենայից, երկու քայլ էլ արեց ու ետ նայեց.

- Բարի գիշեր,- ասաց նա:

- Բարի գիշեր,- պատասխանեց Վիրաբը:

Նա դանդաղ վարում էր ավտոմեքենան գիշերային Երևանով և մտածում որ զարմանալի բան է կյանքը և առավել զարմանալի՝ մարդը: Քիչ առաջ... քիչ առաջ, հենց որ ճանաչեց, զգաց, որ մինչև հոգու խորքը ատում է այդ աղջկան: Իսկ հիմա, ահա՛, խղճում է:

«Երևի ծերանում եմ», - առաջին անգամ կյանքում եզրակացրեց Վիրաբը:

Նա փորձեց իրեն դիտել դիմացի հայելու մեջ, բայց մուտք էր, գրեթե ոչինչ չէր երևում: Եվ ժպտալով ինքն իրեն ասաց. հայելո՞ւն պիտի նայես, որ իմանաս ծերանում ես, թե չէ: Երեխայիդ նայիր: Սուսանը քսան տարեկան է: Տեսնես նա՞ ինչ տեսակ մարդ է: Ես ի՞նչ գիտեմ նրա մասին: Ե՞րբ եմ տեսնում նրան: Մարգոն ճիշտ է ասում, էլի, որ ես միայն բերող եմ: Առաջ նրան միայն դա էր պետք, իսկ հիմա չի բավարարվում: Եվ ճիշտ է, էլի: Քաղցած մարդը ե՞րբ է մտածում ծովափ գնալու մասին, կամ կոտորում իրեն՝ հեռուստացույցի վերջին տեսակն ունենալու համար: Քաղցած մարդն իսկի բաղնիքի մասին չի մտածում կամ էլ լուսանկարվելու: Դրանք բոլորը հետո են գալիս, երբ արդեն քաղցած չես:

Նրա միտքը ցատկոտեց, ցատկոտեց ու նորից վերադարձավ Խոսրովին: Եվ մտածեց, որ նրանց պատմությունից, միևնույն է, բան դուրս չի գալու: Խոսրովը ոչ ընկեր է ունենալու և ոչ էլ կին, որովհետև միայն իր գրքերի հետ է ապրելու ամբողջ կյանքում: Նա գրքեր է ուսումնասիրել, իսկ Մարինեն և ուրիշները ուսումնասիրել են կյանքը: Նա գրքերից է սովորել, փորձ ձեռք բերել, Մարինեն և ուրիշները՝ կյանքից: Գրքերը նրան ավելի բարի են դարձրել և ըստ գրքերի էլ նա քայլելու է կյանքում: Քայլելու է ու սայթաքելու... քայլելու է ու ընկնելու, որովհետև ոտքերի տակ գրքերի գցած ճանապարհը չէ, այլ կյանքի ճանապարհը և շատ են, շատ--շատ են քարերն ու փոսերը ու ոչ մի փոսի առջև կարմիր նշան չի դրված, թե զգուշացեք, փոս է, վտանգավոր է:

Իսկ կյանքից սովորածները անգիր գիտեն այդ ամենը, թեև երբեմն նրանք էլ են ընկնում, կարծելով, թե լավ գիտեն:

Ափսո՛ս, հառաչեց մտքում Վիրաբը: Հաստատ՝ երկուսն էլ մեղք են, բայց բան դուրս չի գա: Հետո հանկարծ ջղայնացավ և խեթ-խեթ նայեց հայելում իր հագիվ երևացող դեմքին:

- Իսկ դու ի՞նչ գիտես, է՛,- հարցրեց նա հեզանաքով:- Դու ի՞նչ գիտես: Դու ամեն ինչ գիտե՞ս, Վիրա՛բ:

*

* *

Խորհրդակցության այն պահին էր, երբ ոչ ոք այլևս ոչ ոքի չի լսում, բոլորն էլ խոսում են միա-
ժամանակ՝ կարմրատակած և թափահարելով ձեռքերը, դիմում են իբր իրար, բայց բոլորն էլ
նայում են Նշանյանի կողմը, աշխատելով, որ նա լսի, թե ինչ են ասում իրենք և համոզվի, որ
գոնե տվյալ հարցում մեղավորը իրենք չեն եղել:

Չէր խոսում միայն Վիրաբը: Ոչ թե ասելիք չուներ, այլ վաղուց էր համոզվել, որ ոչ մի հարց
խորհրդակցության ժամանակ չի լուծվում իրենց հիմնարկում: Ուզում էս պատռի կոկորդո,
Նշանյանը երբեք մեկին չի ասի, թե դու ճիշտ ես, իսկ մյուսին՝ սխալ: Լավագույն դեպքում կա-
սի

- Կմտածենք:

Դա նշանակում է, որ պետք է համաձայնեցնի հարցը:

Իսկ սովորաբար հավատում է նրան, ով առաջինն է իր առանձնասենյակը մտնում: Դրա հա-
մար էլ վաղ առավոտյան միշտ հերթեր են նրա դռանը: Մի ժամ հետո գրեթե ոչ ոք չի լինում:

Տանջալիորեն սպասելով, թե երբ պետք է ավարտվի խորհրդակցությունը, Վիրաբը գլխավոր
հաշվապահի առջևից վերցրեց «Երեկոյան Երևան» թերթի նախորդ օրվա համարը և շուռու-
մուռ տվեց անտարբեր: Երրորդ էջում նրա ուշադրությունը գրավեց մուգ, սև շրջանակի մեջ
տպագրված մահախոսականը: Նկարն ինչ-որ մեկին էր հիշեցնում, և Վիրաբը նոր միայն կար-
դաց վերնագիրը՝ «Արգամ Խաչատուրի Թոռչյան»:

- Վա՛խ,- բացականչեց նա՝ զգալով, թե ինչպես միանգամից կծկվեց սիրտը:

Բայց խորհրդակցության ժամանակ ժխորի մեջ ոչ ոք չլսեց նրա ձայնը:

Վիրաբը շտապով կարդաց. «Կյանքի 65-րդ տարում, երկարատև և ծանր հիվանդությունից հե-
տո, մեզանից հեռացավ անհատական թոշակառու, Երևանի ավտոտեխնիկումի նախկին դի-
րեկտոր, 1942 թվականից ՍՄԿԿ անդամ...»: Նայեց վերջին տողերին: Թաղմանը մնացել է մի
ժամ:

Վիրաբը լրագիրը ձեռքին մոտեցավ Նշանյանին, ցույց տվեց, ինչ-որ բան ասաց, բայց Նշանյա-
նը նրան նայեց չհասկացող աչքերով.

- Հիմա կվերջացնենք:

- Կուշանամ,- շշնջաց նա:

Նշանյանը զարմանալիորեն լսեց նրա շշունջը և նորից նայեց նկարին:

- Ո՞վ է:

- Համարյա հերս է,- ասաց Վիրաբը:

Նշանյանը կամ չլսեց, կամ լսեց ու չհավատաց ականջներին, բայց զարմացած նայեց Վիրաբին ու ասաց.

- Բա էլ ինչի՞ ես կանգնել:

Ու Վիրաբը դուրս թռավ: Հենց ընդունարանից նա զանգահարեց տուն: Երկար ժամանակ լսափողը ոչ ոք չէր վերցնում, և Վիրաբն ուզում էր արդեն անջատել հեռախոսը, երբ լարի մյուս ծայրում չխկոց լավեց ու լսեց Մարգոյի դժգոհ ձայնը.

- Լսում եմ: Ո՞վ է:

- Մարգո՛,- ասաց Վիրաբը,- Մարգո՛, Թոռյանն է մեռել:

- Ո՞վ,- հարցրեց Մարգոն:

- Թոռյանը,- բարկացավ Վիրաբը:- Մեր Թոռյանը:

- Ե՞րբ,- հարցրեց Մարգոն:

- Երբ...- ավելի բարկացավ Վիրաբը,- ի՞նչ գիտեմ երբ: Մի ժամից թաղում են:

- Որտե՞ղ,- հարցրեց Մարգոն:

- Թոխմախ գյուղի գերեզմանատանը,- գոռաց Վիրաբը:- Ես գնում եմ: Գերեզմանատան դռանը կսպասեմ քեզ:

Մի պահ լռություն տիրեց:

- Ես ո՞նց եմ գալիս, ա՛յ տղա,- նյարդային ձայնով ասաց Մարգոն,- մուրաբա եմ եփում:

- Հետո կեփես:

- Կրակի վրա է, Վիրա՛բ,- ասաց Մարգոն:

Վիրաբը ցած նետեց լսափողը:

Նա ավտոն վարում էր արագորեն, մոայլված, գրեթե չնկատելով ճանապարհը: Մի խաչմերուկում նույնիսկ չնկատեց կարմիր լույսը, անցավ ու դիմացից եկող ավտոմեքենայի տագնապահար ազդանշանները լսելով միայն հասկացավ, թե ինչ է պատահել: Վարորդը գլուխը դուրս էր հանել ու մատը պտտեցնում էր քունքի մոտ: Վիրաբը դանդաղեցրեց ընթացքը:

Ահա՛ : Իսկ ինքը չի էլ իմացել, որ երկարատև ու ծանր հիվանդ է եղել Արգամ Թոռյանը: Միակ մարդն աշխարհում, որ Վիրաբին ասում էր՝ տղաս: Այն մարդը, որ օրենքները խախտելով, թույլ էր տվել, որ տեխնիկումի ներքնահարկում ապրեն անտեր, անապաստան Վարդանուշ մայրիկն ու Մարգոն: Իսկ Մարգոն մուրաբա է եփում: Այն մարդը, որ կես խոսքից հասկանում էր Վիրաբին, անհանգստանում նրա ապագայի համար և զգուշացնում էր հայրաբար՝ «Հանկարծ չխրվես աղբի մեջ ու մնաս, տղա՛ս»: Գոնե՛ զանգ տար մի անգամ, ասեր, որ հիվանդ է, ի՞նչ կլիներ: Ի՞նչ կլիներ: Իսկ ի՞նչ կլիներ, եթե դո՛ւ զանգ տայիր, դո՛ւ: Դու չես էլ իմացել, որ նա թոշակի է անցել: Հիշել ես, հա՛, հիշել ես, բայց միշտ մտածել ես, թե վաղը զանգ կտամ, մյուս օրը զանգ կտամ, հետո զանգ կտամ: Դե տուր: Էլ հետո չկա: Ու չի լինելու: «Հանկարծ չխրվես աղբի մեջ ու մնաս, տղա՛ս»: Բա ի՞նչ է արել, որ չի չխրվել: Էլ խրվելը ո՞նց է լինում, եթե քո ամենամտերիմ մարդը, քո ուսուցիչը երկարատև ու ծանր հիվանդ է եղել, իսկ դու չես իմացել: Էլ խրվելը ո՞նց է լինում: Մա՞ ինչ ցավ է: Ինչո՞ւ է մեզ թվում, թե ժամանակը կանգնած է, ու մենք հավիտենական ենք: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ենք մտածում, թե ժամանակ դեռ շատ ունենք, դեռ կհասցնենք հատուցել մեր պարտքերը, շնորհակալություն հայտնել մեր բարերարներին, օգնության հասնել ընկերոջը, վտանգից զգուշացնել բարեկամին, սփռփել հարևանի վիշտը, ներողություն խնդրել նրանից, ում հանիրավի վիրավորել ենք և ճշմարտությունը նետել նրա դեմքին, ով մեր կյանքն է թունավորել:

Եվ ինչո՞ւ ենք այս ամենի մասին մտածում, փիլիսոփաներ դառնում միայն գերեզմանատան ճանապարհին, իսկ գերեզմանատնից դուրս գալուց հետո մոռանում իսկույն:

Որովհետև բոլորս էլ, անգիտակցաբար թե կամովին, խրվել ենք աղբի մեջ ու մնացել ենք:

Ճիշտ էիր ասում, ուսուցի՛չ:

Նա ավտոմեքենան թողեց գերեզմանատան վճարովի կանգառում ու գնաց կանգնեց մուտքի մոտ: Նայեց ժամացույցին: Դեռ տասը րոպե կար: Մտածեց, թե լավ է, որ գոնե պատահաբար ձեռքը վերցրեց «Երեկոյան Երևանը», լավ է, որ եկավ հասավ: Իսկ հետո չարացավ իր վրա. այսինքն՝ ի՞նչն է լավ: Այլևս ի՞նչ լավ բան կարող է լինել:

Ոլորանի ետևից, ահասարսուռ ազդանշաններ տալով, հայտնվեց ավտոմեքենաների թափորը: Առաջին ավտոմեքենայի ճակատին Արգամ Թոռյանի խոշորացված նկարն էր, նույն նկարը, որ տպագրել էին թերթում և որը շատ քիչ նմանություն ուներ Վիրաբի ճանաչած Արգամ Թոռյանի հետ:

Հավանաբար ավելի վաղ տեղ հասած փողային նվագախումբը դողացրեց ծնծդաները: Արգամ Թոռյանի դագաղն իջեցրին ավտոմեքենայի թափքից: Առջևի կողմից դագաղն իրենց ուսին առան երկու թիկնավետ տղաներ, որոնք նման էին Արգամ Թոռյանին:

Վիրաբը շատ էր ուզում մոտենալ ու գոնե մի քանի քայլ դագաղն իր ուսերին տանել: Բայց ամաչեց: Հուղարկավորների մեջ նրան ոչ մի ծանոթ մարդ չկար: Դա սկզբում նրան շատ զարմանալի թվաց, բայց հետո մտածեց, որ գրեթե քսան տարի է անցել: Քսա՛ն տարի: Եվ, այնուամենայնիվ, տարօրինակ էր: Հետո նորից մտածեց, թե գուցե նրանից է, որ Արգամ Թոռյանը ոչ թե տեխնիկումի դիրեկտորի պաշտոնում է մահացել, այլ տանը, իբրև թոշակառու, իբրև կյանքն ավարտած մարդ: Իսկ այդպիսի մարդիկ քչերին են հետաքրքրում:

Թափորը մոտեցավ փոքրիկ հրապարակին, հետո աջ թեքվեց ու ցրվեց: Գերեզմանները շատ խիտ էին ու մարդիկ քայլում էին ծուռուժուռ, նեղիկ արահետներով, անցնում փոքրիկ վանդակաճաղերի գրեթե հողին հավասարված, մաշված գերեզմանաքարերի վրայով: Ուշացածների մի մասը դեռ ճանապարհին էր փնտրում, այնինչ ելույթներն արդեն ավարտվելու վրա էին: Այսինքն՝ երկու հոգի խոսեցին: Մեկը՝ հարևանների անունից, իսկ մյուսը՝ գյուղացի մարդ էր, Վիրաբի նման հենց նույն օրն էր իմացել և եկել էր մասնակցելու իր համագյուղացու թաղմանը: Շատ սրտառույ խոսեց ու երկար, և ելույթի հիմնական իմաստն այն էր, որ եթե գյուղում, մաքուր օդում մնար, այդքան շուտ կյանքից չէր հեռանա Արգամ Թոռյանը: Եվ այդքան շուտ կյանքից չէին հեռանա սարերի սովոր նրա ծնողները:

Անտանելի շոգ էր: Արևն այրում էր անխնա, և գերեզմանափոսի մոտ որդիներից բացի ոչ ոք չէր մնացել: Բոլորն էլ քաշվել էին հեռու՝ պատսպարվել թփուտների տակ կամ գրանիտե բարձր հուշարձանների ստվերում, լրագրերը պահել էին գլխներին կամ դեմքերի մոտ, արագարագ թափահարում էին թաշկինակները: Եվ Վիրաբն ամաչեց, որ որդիներից բացի դագաղի մոտ ոչ ոք չկա: Նա կամաց-կամաց առաջ գնաց, կանգնեց Արգամ Թոռյանի զավակների կողքին և առաջին անգամ նայեց ծաղիկների մեջ պառկած իր ուսուցչին: Արգամ Թոռյանի դեմքը հանգիստ ու խաղաղ էր, և կնճիռներն էլ ասես հարթվել էին: Վիրաբը նայեց իր ուսուցչին, փոսի կողքի մարմարյա ցածրիկ սալիկներին, որոնց վրա Արգամ Թոռյանի ծնողների անուններն էին գրված, նայեց իր կողքին կանգնած նրա գլխահակ որդիներին ու զգաց, որ սեղմվում է կոկորդը: Եվ որովհետև սաստիկ վիրավորված էր, որ խոսողները կարծես թե այն չեն ասում, ինչ պետք է ասեին և սաստիկ վիրավորված էր, որ ավտոտեխնիկումից ոչ ոք չկա, կամ գոնե ելույթ ունեցող չկա, Վիրաբը հարյուր անգամ մտքում փորձեց իր ելույթը: Վերջապես հաղթահարեց իրեն, մի քայլ առաջ եկավ ու ասաց.

- Ես ընկեր Թոռյանի աշակերտն եմ եղել: Հայր չեմ ունեցել, և նա խորհրդատու հայր է դարձել ինձ համար: Հաց չեմ ունեցել, ինձ հաց է տվել ընկեր Թոռյանը: Աշխատանք չեմ ունեցել, ինձ աշխատանք է տվել ընկեր Թոռյանը: Տուն չեմ ունեցել, թույլ է տվել, որ տեխնիկումի շենքում ապրեմ՝ մինչև տուն ստանալը: Եվ ոչ միայն ինձ համար, ավտոտեխնիկումի բոլոր ուսանողների համար իսկական հայր է եղել ընկեր Թոռյանը: Եվ եթե այսօր ավտոմեքենաները նստած, մի կտոր հացի տեր ենք դարձել ես ու ինձ նման հարյուրներ ու հազարներ, պարտական ենք ընկեր Թոռյանին: Բայց նա միայն հաց չի տվել մեզ: Ընկեր Թոռյանը մեզ սովորեցնում էր հարգել հացը, մեզ սովորեցնում էր բարի լինել և ազնիվ, օգնել իրար ու բոլոր նրանց, ովքեր օգնության կարոտ են: Նա ուզում էր, որ մենք մարդ դառնանք և անընդհատ-անընդհատ զգուշացնում էր, որ հանկարծ չխրվենք-մնանք կյանքի աղբի մեջ: Եվ եթե մենք չենք կարողանում կատարել նրա իմաստուն խորհուրդները, մեղավորն ինքը չէր: Մենք ժամանակ չունեինք: Մենք հաց էինք կուտակում նեղ օրվա համար և մուրաբա էինք եփում:

Ես տեսնում եմ, դուք լաց չեք լինում ընկեր Թոռյանի վրա և ճիշտ եք անում: Ինչի՞ համար լաց լինեք: Նա ապրել է այնպես, ինչպես կերպեր ապրել ամեն մարդ: Նա ծնողներ է ունեցել և հիմա վերադառնում է իր ծնողների գիրկը: Նա երկար է ապրել աշխարհում և ի պատիվ իրեն՝ կարողացել է ազնիվ ապրել ու խղճով ապրել: Ու աշխատել է իր սիրած գործի մեջ, երեխաներ է դաստիարակել: Եվ հիմա, երբ հեռանում է աշխարհից, երկու պայծառ տղաներ է թողնում, որոնք պիտի պահեն նրա անունը ու շարունակեն ազգը: Տղաներ: Տղե՛րք: Ուրեմն՝ Արգամ Թոռյանը ունեցել է սկիզբ, ունեցել է կյանք, ապրել է և ոչ թե մահացել, այլ անմահացել է իր զավակների մեջ:

Ահա թե ինչու եմ ասում՝ ճիշտ եք անում, որ լաց չեք լինում:

Ու եթե մեկն այստեղ պետք է լաց լինի, դա ես եմ: Հա՛: Որովհետև չգիտեմ, թե ովքեր են իմ ծնողները և նույնիսկ նրանց գերեզմանը չգիտեմ, որ մի օր գնամ ու պառկեմ նրանց կողքին: Եվ որովհետև չկա մեկը, որ գոնե իմ ստեղծած ազգը շարունակի: Ես տղա չունեմ: Հարյուր անգամ ասացի՝ Մարգո, բեր մի երեխա էլ ունենանք, սիրտս վկայում է, որ տղա է լինելու: Սկզբում՝ թե սովորում եմ, ինձ կխանգարի, հետո էլ թե հիվանդ եմ, հետո էլ թե ուշ է, ամոթ է: Ու ես հիմա տղա չունեմ: Ո՛չ հայր, ո՛չ տղա: Այ թե ով պիտի լաց լինի:

Վիրաբն զգաց, որ փղծուկը բարձրանում է կոկորդով և միաժամանակ զգաց, որ դեմն առնել չի կարող:

Ու որովհետև ոչ մի քայլ առաջ չէր եկել ու ոչ էլ արտասանել իր սրտի խոսքը և այդ ամենը ընդամենը ասել էր մտքում, ափսոսանքը, վիշտն ու ցավը կուտակվել էին նրա ներսում ու խեղդում էին, ցավեցնում էին, ելք էին փնտրում:

Եվ Վիրաբը լաց եղավ: Փղձկաց ու հանձնվեց, ճանապարհ տվեց արցունքներին:

Նա լաց էր լինում մանկատնից հետո կյանքում առաջին անգամ, որովհետև երբեք առիթ չէր ունեցել լաց լինելու: Ամաչում էր ու լաց էր լինում: Եվ հենց այդպես էլ հեծկլտալով ետ քաշվեց՝ զարմացած հայացքների տակ, անցավ թփուտների ստվերում կանգնած մարդկանց միջով ու օրորվելով սկսեց շրջանցել գերեզմանները:

- Էդ ո՞վ էր, տղեն է՞ր,- լավեց ինչ-որ մեկի ձայնը:

- Ինչ ես խոսում, տղերքը հրեն կանգնած են:

- Գուցե ուրիշ տղա էլ է ունեցել... Ի՞նչ գիտես...

- Է՛հ, խոսում եք, էլի...

- Ինչ ուզում եք ասեք՝ հարազատի լաց էր:

- Ամա՛ն... չես տեսնո՞ւմ՝ կոտորվում են հարազատները...

Իսկ Վիրաբն օրորվելով ու խուլ տնքալով անցնում էր գրեթե իրար կպած գերեզմանների միջով. լաց էր լինում և հետն էլ զգում, թե ինչպես է հետզհետե խաղաղվում հոգին ու թեթևանում սիրտը: Ու քայլեց ավելի դանդաղ, սրբելով արցունքներն ու ակամա կարդալով գերեզմանաքարերի մակագրությունները: Ինչե՛ր ասես, ինչե՛ր ասես գրված չկան: Հետո բռնեց իրեն, որ ավելի շատ կանանց ճենապակյա նկարներին է նայում գերեզմանաքարերի վրա և ուշադիր կարդում է ծննդյան թվերը:

Հետո թափ տվեց ձեռքն ու բարձրաձայն ասաց.

- Հերիք է, հերի՛ք: Վե՛րջ տուր, ա՛յ տղա: Երեխա չես...

*

* *

Վիրաբն Առափնյա փողոցը մտավ հակառակ ծայրից: Ուզում էր տեսնել՝ բա՞ց է Խոսրովի գրադարանը, թե չէ: Փակ էր: Դա, իհարկե, դեռ ոչինչ չէր նշանակում, որովհետև երկու դեպքում էլ գրադարանը պետք է փակ լիներ: Բայց Վիրաբը, այնուամենայնիվ, ուրախություն զգաց դրանից ու ժպտաց, որի իմաստը ժողովրդի հին ասացվածքն էր, թե «Որը բարին է, թող նա կատարվի»:

Ուղիղ պայմանավորված ժամին նա սեղմեց ակադեմիկոս Պարսամյանի տան դռան զանգի կոճակը, լսեց, թե ինչպես է ներսում ինչ-որ տեղ դողանջում զանգը, բայց ծանոթ հողաթափերի քստքստոցը չհետևեց դրան: Ծանր նախազգացումով նա մի անգամ էլ սեղմեց զանգի կոճակը և հետո էլ ակամա հրեց դուռը: Դուռը բացվեց: Վիրաբը ներս մտավ արագորեն և դեռ միջանցքում շունչ քաշեց թեթևացած, լսելով ակադեմիկոսի ձայնը.

- Նե՛րս եկ, Վիր՛աբ, ես ննջարանում եմ:

Վիրաբը ներս մտավ: Ահարոն Պարսամյանը կիսապառկած էր: Նրա գլխի տակ երկու հսկայական բարձ կար:

- Ես դուռը քեզ համար էի բաց թողել,- ասաց նա:- Մինչև բարձրանայի տեղից...

- Ի՞նչ է պատահել,- անհանգստացած հարցրեց Վիրաբը:

- Չեմ հասկանում,- ուսերը թոթվեց ծերունին:- Ծնկներիս մեջ հանկարծ թուլություն զգացի:

- Բժիշկ կանչե՞մ:

- Ի սեր աստծո,- փնթփնթաց Պարսամյանը:- Կգա, նոր հիվանդություն կգտնի: Հներն էլ բավական են ինձ:

- Բա ես ի՞նչ անեմ ձեզ համար:

- Հիմա վեր եմ կենում,- ասաց ակադեմիկոսը:- Պառկելուց հոգնեցի: Դու թե՛ յ դիր գազօջախին, ես հիմա գալիս եմ:

Երբ Վիրաբը վերադարձավ խոհանոցից, ակադեմիկոսի ձայնն արդեն հյուրասենյակից էր հնչում:

- Քաղցած չե՞ս, Վիրա՛բ:

- Չե՛, ինչ էք ասում,- հրաժարվեց Վիրաբը, թեև իրականում քաղցած էր:

- Իսկ փոքր ժամանակ ծնողներդ քեզ չե՞ն ասել, որ սուտ խոսել չի կարելի:

- Ես ծնողներ չեմ ունեցել,- ասաց Վիրաբը:

Ակադեմիկոսը վշտացավ ու կորցրեց իրեն.

- Ների՛ր, Վիրա՛բ, դե իհարկե, ես գիտեի, ես հենց այնպես, խոսքի համար...

- Դո՛ւք ինձ ներեք,- անմիջապես վատ զգաց իրեն Վիրաբը,- չգիտեմ ինչու՝ կատակով պատասխանեցի: Հաշվի մի առեք, խնդրում եմ:

Պարսամյանը գնաց խոհանոց ու երկար ժամանակ չէր վերադառնում: Հետո հայտնվեց փոքրիկ սայլակ-սեղանով, որի վրա թեթև խորտիկներ կային, մուգ կապույտ ճենապակյա սպասք և թեյի համար անհրաժեշտ ամեն ինչ:

- Եթե դու չուտես, ես էլ չեմ ուտի,- ասաց նա խռովկան երեխայի նման:

Վիրաբը ծիծաղեց:

- Խոստովանում եմ, որ սուտ էի ասում:

Ահարոն Պարսամյանը նրա վրա թափ տվեց մատը:

- Ինչ վերաբերում է իմ պատրաստած թեյին,- ասաց նա,- անձամբ Մարտիրոս Սարյանն է խմել ու բարձրացրել բույժ մատը: Եվ Բաղրամյանը:

- Հենց այստե՞ղ:

- Հենց այստեղ,- ասաց Պարսամյանը:- Հենց այստեղ: Մի ժամանակ, սիրելի՛ Վիրաբ, այստեղ շատերն էին լինում: Իմ պաշտոնակիցներով, իմ աշակերտներով լցվում էր տունը: Չէին տեղավորվում, գիտե՞ս, մի մասը պատշգամբում էր հավաքվում: Հիմա՝ չէ, հիմա, ինչպես տեսնում ես, բավականին հանգիստ եմ ապրում, բարեկա՛մա:

Ընթրեցին: Ավելի ճիշտ՝ Վիրաբը ընթրեց: Ակադեմիկոսը ձևացնում էր, թե մասնակցում է, սակայն, երկու բաժակ թունդ թեյ խմեց:

- Բա ձեզ կարելի՞ է,- հարցրեց Վիրաբը:

- Ինձ ամեն ինչ կարելի է,- ասաց ակադեմիկոսը, իսկ հետո ավելացրեց աշխուժով,- հիմա ի՞նչ ես ասում՝ նարդի չխաղա՞նք:

- Խաղանք:

Վիրաբը սայլակը խոհանոց տարավ և բերեց նարդին՝ իր փոքրիկ սեղանիկով: Բացեց, դասավորեց քարերը և զաներից մեկը մեկնեց Պարսամյանին: Բայց Պարսամյանն անսպասելիորեն զառը ցած դրեց ու ասաց.

- Սուտ բան է, ինձնից ճապոնացի դուրս չի գա:

Վիրաբը զարմացավ:

- Ճապոնացիները,- ասաց ակադեմիկոսը,- դարեր ի վեր՝ սերնդից սերունդ իրենց արյան հետ մի բացառիկ հասկություն են բերել ու պահպանել: Երբ հյուր ունեն, ով էլ լինի այդ հյուրը, ճապոնացի տանտերը պարտավոր է ուրախ դիմավորել նրան, զբաղեցնել ու զվարճացնել, եթե նույնիսկ քիչ առաջ հեռագիր է ստացել, թե խորտակվել է իր ամբողջ կարողությունը հանդիսացող միակ նավը և ավելին՝ որ գոհվել է որդին: Հյուրի մեկնելուց հետո նա կարող է ողբալ ու սգալ իր բախտը և նույնիսկ՝ ինքնասպան լինել, բայց հրաժեշտի պահին անգամ պետք է ժպտա: Ես փորձեցի, Վիրա՛բ, բայց ոչինչ չի ստացվում: Ես շատ տխուր եմ այսօր, եղբայր:

- Հո բան չի՞ պատահել,- սարսափեց Վիրաբը:

Պարսամյանը հասկացավ նրան:

- Չէ, չէ, փառք աստծո: Աստվա՛ճ մի արասցե: Ես դրան չեի դիմանա: Եթե նույնիսկ ճապոնացի լինեի:

Նա ուշադիր նայեց Վիրաբին, կարծես մի անգամ ևս երկմտելով՝ ասե՛լ, թե՛ չասել, հետո հարցրեց.

- Դու աշակերտներ ունե՞ս, Վիրաբ:

- Ե՛ս,- տարակուսեց Վիրաբը,- աշակե՞րտ : Չէ, իմ գործի մեջ ի՞նչ աշակերտ:

- Ուրեմն՝ դու քեզ կարող ես երջանիկ համարել,- ասաց ծերունին:- Իմ աշակերտն այսօր դավաճանեց ինձ:

Նա լռեց ու բարձրացրեց աչքերը, ասես Վիրաբին ժամանակ տալով, որ զարմանա, բայց դրա հարկը չկար, որովհետև Վիրաբը ցնցված էր:

- Ձե՞զ, դավաճանե՞լ...

- Այո՛,- վշտացած գլուխն օրորեց ծերունին:- Եվ, հաշվի առ. ո՛չ պատերազմ է, ո՛չ աղետ, ո՛չ արհավիրքի տարիներ և ո՛չ էլ նույնիսկ լինել թե չլինելու հարց է, որպեսզի ես գոնե որևէ կերպ փորձեմ արդարացում փնտրել: Խաղաղ կյանք է: Բայց դավաճանում են: Հիմա կբացատրեմ,- ասաց նա,- շունչ քաշեմ ու բացատրեմ: Թե՛յ չե՞ս ուզում, Վիրա՛բ:

- Չէ, շնորհակալ եմ:

- Իսկ ես ուզում եմ:

Նա հողաթափերը քստքստացնելով խոհանոց գնաց, թե՛յ բերեց սովորական բաժակով, դրեց իր առջև, սեղանին ու ասաց.

- Ուրեմն՝ մեկը գրպարտագիր է գրել իմ մասին...

- Ի՞նչ,- ապշեց Վիրաբը,- ուրեմն՝ ձեզ մոտ էլ էդպիսի բաներ կա՞ն:

- Կան,- գլխով արեց ծերունին:- Կան: Դա մի մարդ է, որ ոչ մի տպագրված քիչ թե շատ լուրջ գիտական աշխատություն չունի: Բոլորը ելույթներ են ժողովում: Եվ ահա այդ մարդը ոչ ավել, ոչ պակաս, ինձ մեղադրում է անազնվության մեջ: Ի՛նձ: Եվ իր գրպարտագիրը տանում ու տալիս է մեր ինստիտուտի դիրեկտորին: Իմ աշակերտին: Եթե դո՛ւ լինեիր մեր դիրեկտորի փոխարեն, ի՞նչ կանեիր, Վիրաբ:

- Ե՛ս,- եփ գալով պոռթկաց Վիրաբը:- Ես պատառ-պատառ կանեի էդ գրածն ու կշարտեի նրա երեսին: Ու կասեի՝ ես հիանալի գիտեմ իմ ուսուցչին, նա անազնիվ բան չի անի: Գնա՛...

- Իսկ իմ աշակերտը, իմ սիրելի աշակերտը նպատակահարմար է գտնում հանձնաժողով կազմել, ստուգել փաստերը և գրպարտագիրը դնել քննարկման: Եվ, պատկերացնո՞ւմ ես. այդ հանձնաժողով կոչվածը բոլորն իմ աշակերտներն են, պետք է հավաքվեն ու քննարկեն, թե արդյոք օրինավո՞ր մարդ եմ ես: Թե օրինավո՞ր մարդ է արդյոք իրենց ծեր ուսուցիչը:

Վիրաբը տխրեց ու ընկճվեց.

- Չեմ հասկանում,- ասաց նա:

- Հարցն այն է, որ ես էլ չեմ հասկանում:

Նա մի կուր թեյ խմեց, կնճռոտեց ճակատն, ասես ինչ-որ բան էր ուզում հիշել ու հանկարծ մրմնջաց:

- Ինչ-որ չափով խզվել է կապը, խզվել...

- Ի՞նչ,- առաջ թեքվեց Վիրաբը:

- Հասկանո՞ւմ ես, Վիրա՛բ,- խոսեց ծերունին,- հնում ասում էին՝ եթե մարդ ես դու՛՛ ծա՛ն տնկիր, երեխա՛ ունեցիր, գի՛րք գրիր ու աշակե՛րտ դաստիարակիր: Հիմա բացեմ. ծա՛ն տնկիր, որպեսզի պահպանես հողը: Երեխա՛ ունեցիր, որպեսզի պահպանես ցեղը: Գիրք գրիր, որպեսզի պահպանես քեզ և քո ժամանակը: Աշակե՛րտ ունեցիր, որպեսզի պահպանես ու շարունակես քո գործը:

Մենք կտրում ենք ծառերը, ասես թե մեր երեխաներին դրանք պետք չեն գալու: Չենք ուզում երեխա ունենալ, իսկ եթե ունենում էլ ենք, մեր երեխաներն անմիջապես հրաժարվում են մեզանից, չմտածելով, թե ինչ է լինելու իրենց հետ, երբ իրենք էլ երեխաներ ունենան: Եվ գրքեր ենք գրում՝ ոչ թե մեզ և մեր ժամանակը պահպանելու համար, այլ որպեսզի հոչակ ձեռք բերենք և փող: Եվ աշակերտներ ենք դաստիարակում, որոնք դավաճանում են իրենց ուսուցիչներին, իրենց գործին ու արհեստին՝ մի փոքրիկ, մի հպանցիկ շահի համար:

- Ես էդ մարդու հե՛րն եմ անիծել,- սրտանց զայրացած ասաց Վիրաբը,- ո՞նց է պղտորել ձեր հոգին:

Ակադեմիկոսը Վիրաբին նայեց կկոցած աչքերով.

- Չափազանցում եմ, չէ՞: Հավանաբար, հավանաբար, բարեկա՛մս: Ուրախ ժամանակ նման բաներ հազվադեպ են հիշում: Դու իրավացի ես:

Վիրաբն ամաչեց:

- Ուրեմն՝ էդ բոլոր ստորությունները մի կտոր հացի՞ համար են:

- Այո՛, - տեղից բարձրացավ ծերունին: - Այո՛, Վիրա՛բ: Եթե հաց ասելով հասկանանք ստամոքսը:

- Հա, բայց ես ինչքան լսել ու կարդացել եմ՝ պատերազմի ժամանակ հացի հարցը շատ ու շատ ավելի դժվար է եղել, չէ՞: Ինձ պատմել են, ասել են, հենց էստեղ, Երևանի փողոցներում մարդիկ մեռել են սովից:

- Ճիշտ է,- աշխուժացավ ծերունին: - Հազար անգամ ճիշտ է: Բայց այն ժամանակ բոլորն էլ գիտեին, որ պատերազմ է և միավորվել էին, մի բռունցք էին դարձել ընդհանուր մեծ աղետի դեմ: Իշխում էր բարձր ոգին, ֆաշիզմին դիմադրելու և հաղթահարելու վսեմ գաղափարը: Նրանց համար անկարևոր մանրուք էր դարձել կենցաղը, ճղճիմ եսասիրությունը, փառամոլությունն ու ընչաքաղցությունը: Նրանք մի նպատակ ունեին և մի հավատ՝ պետք է հաղթել: Եվ իրենց վերջին կտոր հացը կիսում էին հարևանի հետ, կիսում էին բարեկամի հետ և տալիս օտարին, գուրգուրում, ծնող էին դառնում շիկամազ որբերի համար: Եվ միակ սենյակի մի անկյունն էին քաշվում, իսկ մյուս անկյունում տեղ էին տալիս անտուն մնացած օտարին, որովհետև այն ժամանակ օտար չկար: Բոլորն էլ գոհերն էին ընդհանուր պատերազմի և բոլորի գլխին էլ կախված էր նույն սուրը:

- Բա հետո...

- Իսկ հետո ավարտվեց պատերազմը, և ժողովուրդը շունչ քաշեց թեթևացած: Շունչ քաշեց թեթևացած, բարձրացրեց գլուխն ու տեսավ, որ մահվան սպառնալիքն այլևս չկա, ճի՛շտ է, բայց հեշտ չէ նաև ապրելը: Երկիրը կիսաքանդ, դաշտերում ականներ են, բանկերում դրամ չկա, գործարաններում այլևս զենք չեն արտադրում, բայց և չեն կարողանում արագորեն սրերից խփեր կռել, ինչպես Վուչետիչն էր արել իր քանդակում:

Եվ ժողովուրդը կրկին ոտքի կանգնեց՝ այս անգամ նոր, բարեկեցիկ կյանք կառուցելու: Բայց դա արդեն պատերազմ չէր և մահվան վտանգ չկար: Եվ հայտնվեցին դասալիքներ, հոգնած մարդիկ, որոնք ասում էին՝ մենք կովել ենք, թող հիմա էլ ուրշները կովեն, մարդիկ, որոնք բարեկեցության էին ձգտում զարտուղի ճանապարհներով, ոչ թե բոլորի համար, այլ միմիայն իրենց համար: Եվ վերցնում էին այն, ինչ վատ էր պահպանվում, գիշերները թաքուն արտադրում էին ու ֆանտաստիկ գներով վաճառում այն, ինչ պետությունը դեռևս չէր հասցնում արտադրել բոլորի համար, և սողոսկում էին այն տեղերը, մազլցում այն աթոռները, որոնք պատերազմի ժամանակ թափուր էին մնացել: Ահա այդպես ստեղծվեցին սուտ հոետորները, սուտ առաջավորները, սուտ գիտնականներն ու սուտ գրողները:

- Նրանցից մեկն էլ ձեր դեմ գրողն է, էլի,- դեռ իր մտքերի հետ ասաց Վիրաբը:

- Ճիշտ է, Վիրա՛բ, ճիշտ է: Պատերազմի ժամանակ նա ծանր հիվանդ է եղել: Հետո առողջացել է միանգամից: Բայց վտանգավորը նրանք չեն, հասկանո՞ւմ ես: Նրանք հատուկենտ մարդիկ են: Վտանգավորը նրանց օրինակն է: Նրանց վարակը: Նոր սերնդի մի մասը, որ անցյալը չգիտի, ներկան է միայն տեսնում, այդ օրինակներն է տեսնում: Եվ ասում է՝ ինչո՞ւ գլուխ կոտրեմ տասնհինգ տարի, երբ գարեջուր վաճառող անգրագետ մարդը նույնիսկ իմ ակադեմիկոս հորից լավ է ապրում: Եվս տասնհինգ տարի արյուն-քրտինք թափեմ և գործարանի դիրեկտոր դառնամ, որ ստանամ երեք հարյուր ռուբլի՞: Բայց բենզին վաճառող մեր հարևանը երկու օրում է այդքան ստանում: Եվ վերջապես՝ հետո չեմ ուզում, հենց հիմա, այսօր եմ ուզում թե՛ բնակարան, թե՛ կահույք, թե՛ ավտոմեքենա, թե՛ տեսամագնիտոֆոն, թե՛ վառվառն շորեր... Ինչո՞ւ նա ունի, ես չունեմ: Եվ հարցն այն է, որ ոչ մեկը չի ուզում իր աշխատանքով ձեռք բերել այդ իրոք անհրաժեշտ բաները: Սողանցքներ են փնտրում, տարիներով քարշ են գալիս, մինչև հսկողությունից առայժմ դուրս մնացած անկյուններ գտնեն, ամեն օր փող մուրան կամ կորզեն մարդկանցից...

- Լեռնիկն է, մեր Լեռնիկը,- բղավեց Վիրաբը:

- Լեռնիկն ո՞վ է,- հարցրեց ծերունին:

- Մեկն ունեինք... այսինքն՝ կա,- ասաց Վիրաբը:

- Ուր էր, թե մեկը լիներ,- հառաչեց Պարսամյանը:- Եվ ամենասարսափելին այն էր, որ այդ տեսակ մարդիկ չեն ամաչում: Ամաչելը դեռ ոչինչ, հպարտանում են: Տարօրինակ բան է ստացվել: Գյուղից եկած տղան, որ կտրվել է քննությունից, մնացել, ժամանակավորապես պաղպաղակ է վաճառում, հենց որ համազրուցիներ է տեսնում, շրջում է գլուխը, ամաչում է, որ ձեռքին ոչ թե գերանդի է, այլ պաղպաղակ: Իսկ գիտությունների դոկտոր իմ աշակերտը գնացել, ավտոտեխասարկման կայանում դիրեկտոր է աշխատում: Ահա թե ովքեր են այսօր դավաճանները: Գնա բուֆետապանների, բարմենների և տաքսու վարորդների գործերը նայիր, երեքից մեկը բանասեր է կամ անասնաբույժ, կամ մանկավարժ: Քիչ չեն նաև կոչում ունեցողները: Ահա թե ովքեր են դավաճանում այսօր: Նախ իրենց են դավաճանում, իրենց կոչմանը, իրենց մասնագիտությանը, իրենց գործին, և հետո էլ մեզ՝ իրենց ուսուցիչներին:

Վիրաբը նկատեց, թե ինչպես է դողում ծեր ակադեմիկոսի ծնոտն ու վախեցավ.

- Շատ հոգնեցիք,- ասաց,- ձեզ հանգստանալ է պետք:

- Ո՛չ, ո՛չ,- վախեցած, որ Վիրաբը կթողնի կզնա, անհանգստացավ ակադեմիկոսը:- Հիմա մի կում էլ կանեմ...- Նա մինչև հատակը դատարկեց բաժակը, ցած դրեց ու ասաց.- Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է ասել Ավետիք Իսահակյանը դեռևս 1903 թվականին: Իսահակյանին կարդացել ես, չե՞, Վիրաբ:

- Շատ բան անգիր գիտեմ,- ամաչելով ասաց Վիրաբը:- Պաշտում եմ:

- Ահա, ուրեմն, քո և իմ պաշտելի բանաստեղծը դեռևս 1903 թվականին զգուշացրել է: Տես ինչ է ասել՝

Ես ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սով,

*Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ,
Կրնկնեք մուրալու հափրած որկորով՝
Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:*

Հասկանո՞ւմ ես, ասում է դուք ճոխ սեղանից քաղցած վեր կկենաք, որովհետև ձեզ կպաշարի, կտիրի: Ոգու սովը: Ու ես վճռել եմ: Այո՛: Ես քեզ հավատացնում եմ, որ ես այս տարի այլևս ասպիրանտներ չեմ ընդունելու:

Հեռախոսը զնգաց, և երկուսն էլ ակամա ցնցվեցին՝ նայելով կարճ ընդհատումներով զնգացող սարքին: Ակադեմիկոսը փութով բարձրացավ տեղից, մոտեցավ անկյունում դրված ցածրիկ պահարանին, որի վրա հեռախոսն էր, վերցրեց լսափողը, ականջ դրեց մի պահ ու լայն, երջանիկ ժպտաց.

- Փայլո՛ւն,- բղավեց նա,- ձայնիցս չի՞ զգացվում: Հիանալի՛: Վիրաբի հետ նստած նարդի ենք չխկացնում,- նա աչքով արեց Վիրաբին:- Այո՛, ջանի՛ կս, այո՛, սիրելի՛ս, սառնարանը կամաց-կամաց դատարկում եմ:

«Հարսի հետ է խոսում», - մտածեց Վիրաբը:

- Ընկեր ռեկտո՞րն ինչպես է: Ձեռքիցդ խլո՞ւմ է լսափողը: Այո՛, լավ եմ, տղա՛ս: Չե՛, իսկապես լավ եմ: Այս կիրակի նույնիսկ կարող եք արձակուրդ տալ ձեզ: Արձակուրդ չե՞ս ուզում: Ես էլ չեմ ուզում, տղա՛ս: Շատ եմ կարոտում: Նույնիսկ, երբ կողքիս եք, դարձյալ կարոտում եմ: Հատկապես կորյուններիս: Քնա՞՞ծ են: Դե իհարկե... քնած պետք է լինեն: Հանգիստ եղեք, հանգիստ... Ի՞նչ... Լսում եմ, ի՛մ ուրախություն, խմում եմ, իհարկե, խմում եմ...- Նա նորից աչքով արեց Վիրաբին:- Ճիշտ նշանակված ժամերին, բալի՛ կս...

«Նորից հարսի հետ է խոսում», - մտածեց Վիրաբը:

- Դե բարի գիշեր, զավակնե՛րս, բարի գիշեր ձեզ:

Նա կամացուկ ցած դրեց լսափողը, շրջվեց, ուղղեց մեջքը, ձեռքերը թիկունքին դրեց և սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում Ով գիտե, գուցե նրան մի պահ թվաց, թե դասախոսություն է կարդում:

- Որտե՞ղ կանգ առանք,- հարցրեց ծեր ակադեմիկոսը:

- Որ իբր թե այս տարի աշակերտներ չեք վերցնելու:

Ահարոն Պարսամյանի դեմքը կնճռոտվեց նորից:

- Իսկ ինչո՞ւ՝ իբր,- հարցրեց նա զարմացած,- ինչո՞ւ՝ իբր: Ես իրոք այս տարի մտադիր չեմ ասպիրանտներ կամ ինչպես դու ես ասում՝ աշակերտներ վերցնել: Եվ ոչ այն պատճառով, որ ծեր եմ, և հիվանդ է սիրտս: Գիտությունը, բարեկա՛մս, ինչպես յուրաքանչյուր կարգին գործ, պահանջում է, որ իր նվիրյալը լինի մաքուր, ազնիվ լինի իր արհեստի մեջ և ազնիվ լինի մարդկանց ու հենց իր առջև: Այլապես՝ արդյունքը անազնիվ, աննպատակ ու անմիտ կլինի: Իհարկե, կարելի է ստորություն անել, կեղծել ու ձևացնել, թե, ասենք, երկրագունդը արեգակի շուր-

ջը չի պտտվում: Բայց կեղծես, թե չկեղծես, հո պտտվում է: Այո՛, կարելի է ձևացնել, թե իբր երկու անգամ երկուսը հավասար է հինգի կամ յոթի, կամ երեքի, եթե այդպես է ցանկանում պետո: Բայց հո այդ թվերի գումարը չորսի է հավասար: Մատների վրա էլ կարելի է հաշվել:

Իսկ ահա վերջերս նկատում եմ, որ իմ աշակերտներից ոմանք շատ հեշտությամբ են հաշտվում այն մտքի հետ, որ երկու անգամ երկուսը հավասար է հինգի, և որ երկրագունդը գուցե և այնքան էլ չի պտտվում արեգակի շուրջը: Համենայն դեպս՝ նրանք սովորել են լռել, երբ նրանց կողքին որևէ ազդեցիկ անձ այդպես է ասում:

Իսկ իմ հիսուն տարվա աշխատանքի ու կյանքի նպատակը, իմաստն այն է եղել, որ իմ աշակերտները ճշմարտությունը, յուրաքանչյուր ճշմարտություն՝ կյանքում և գիտության մեջ, կարողանան հպարտությամբ ասել: Եվ ոչ թե ասելիս նայեն պետերի դեմքերին կամ թաքնվեն որևէ մեկի թիկունքում:

Եվ ես հիմա չգիտեմ ինչ սովորեցնել նրանց: Իմ գիտությունը խանգարում է նրանց: Իմ գիտությունը նրանց այլևս պետք չէ:

Վիրաբը բողոքի շարժում արեց, Բայց ծեր ակադեմիկոսը տխրությամբ նայեց նրան և անսպասելիորեն մատով ցույց տվեց անկյունում դրված հեռախոսը:

- Քանի՞ ժամ է, որ մենք միասին ենք, Վիրա՛բ:

- Համարյա երեք ժամ,- ժամացույցին նայեց ու զարմացավ Վիրաբը:

- Տեսնո՞ւմ ես,- ասաց Ահարոն Պարսամյանը,- երեք ժամվա ընթացքում հեռախոսը զնգաց ընդամենը մեկ անգամ: Եվ այն էլ զանգում էին իմ զավակները: Իսկ առաջ, բարեկա՛մս, առաջ, որպեսզի կարողանամ աշխատել, ես ստիպված անջատում էի հեռախոսը: Ես նրանց այլևս պետք չեմ:

Վիրաբը սրտանց ուզում էր առարկել, մխիթարել, հուսադրել այդ մեծ մարդուն, ասել, որ նա պարզապես վիրավորված է ու հոգնած և դրանից է, որ հիմա շատ բան սև է թվում աչքին: Վիրաբն ուզեց նույնիսկ ասել, որ ինքն ի՞նչ է, ընդամենը աղբ հավաքող մի մարդ, Բայց երբեմն իրեն էլ են այնպիսի վիճակի հասցնում, որ քիչ է մնում կախվի: Բայց հետո անցնում է: Անցնում է: Հետո նույնիսկ զարմանում ես, թե արժե՞ր մի փոքրիկ բանի համար տանջվել, տառապել այդքան:

Նա շատ էր ուզում ասել այդ ամենը և կարող էր ասել, Բայց գիտեր, որ չի կարելի, գիտեր, որ իրավունք չունի խորհուրդներ տալու մի մարդու, որն ամեն ինչ հասկանում է, և որի դժբախտությունը հենց այն է, որ հասկանում է ամեն ինչ:

Իսկ Ահարոն Պարսամյանը ձեռքերը թիկունքին դրած ետ ու առաջ էր քայլում սենյակում, քայլում էր այնպես, ինչպես մեծ, բազմամարդ լսարանի առաջ և նույնիսկ շրջվեց մի պահ ու կանգ առավ, որ տեսնի, թե լսարանն արդյոք մինչև վերջ հասկացա՞վ նրան:

Բայց նրա առջև գլխիկոր ու տխուր աղբ հավաքող Վիրաբն էր նստած միայն:

Այնժամ ծեր ակադեմիկոսը մտածեց, որ երևի բարդ է խոսել Վիրաբի համար: Եթե իր միակ ունկնդիրը Վիրաբն է, ապա գոնե նրան պետք է պարզ լինի այն ամենը, ինչ հիմա տանջում է իրեն: Ակադեմիկոսը աշխատեց ամփոփել մտքերը, եկավ նստեց Վիրաբի դիմաց, ձեռքը մտերմաբար նրա ծնկին դրեց ու ասաց.

- Առաջ, շատ առաջ, երբ մարդկությունը նոր-նոր սկսել էր ձևավորվել և դրանից էլ հետո՝ բնակավայրերում և նույնիսկ բնակավայրերից էլ հեռու, բլուրների և սարերի գագաթներին, ամենաբարձր, ամենաերևացող, ամենանկատելի տեղերում մարդիկ ի՞նչ էին կառուցում հավատով ու տառապանքով, ի՞նչ էին բարձրացնում, Վիրա՛բ: Տաճարներ և եկեղեցիներ, բարեկա՛մս, տաճարներ ու եկեղեցիներ: Իսկ հիմա՛: Հիմա ամբողջ աշխարհում, որտեղ էլ լինես, այդ նույն վայրերում ի՞նչ շենքեր են կանգնած և ի՞նչ կառույցներ են բարձրանում՝ վառ ու բազմերանգ լույսերով ողողված: Ռեստորաններ, եղբա՛յրս, ռեստորաններ:

Վիրաբը տրորվեց տեղում, նույնիսկ շարժեց շրթունքները, հետո ծեր ակադեմիկոս հոգնած ու վշտահար դեմքին նայեց ու լռեց:

- Դու ինչ-որ բա՞ն էիր ուզում ասել, բարեկա՛մս,- նկատեց Պարսամյանը:

- Հա՛,- ասաց Վիրաբը:- Ես ուզում եմ ասել... ուզում եմ հավատաք, որ ես ամեն ինչ հասկացա: Ու որ ես էլ եմ եդ բոլորի մասին մտածել՝ իմ չափով, իմ խելքով: Ես էլ եմ շատ բան տեսել ու տեսնում եմ: Բայց ի՞նչ կարող ենք անել: Ի՞նչ կարելի է անել: Ի՞նչ անեմ ես:

Պարսամյանը կանգ առավ, լռեց, ասես մտքերի մեջ ընկավ, և Վիրաբին մի պահ նույնիսկ թվաց, թե ծերունին մոռացել է հարցը: Բայց Ահարոն Պարսամյանը խոսեց, և աղբահավաքը հասկացավ, որ նրա խոսքերն ավելի շատ հենց իրեն են ուղղված, քան Վիրաբին:

- Համբերի՛ր:- Ասաց նա:- Կյանքն ի վերջո այնքան էլ անարդարացի չէ, որքան երբեմն թվում է մեզ: Համբերի՛ր, բարեկա՛մս:

*

* *

Երկինքը որոտաց և անձրևի առաջին տաք կաթիլներն ընկան Վիրաբի վրա: Բայց նա չզգաց նույնիսկ: Նրա մտքերը բոլորովին ուրիշ տեղ էին, այնտեղ, որտեղ մոր և դստեր լացակումած ձայներն էին հնչում:

Մուսանը հեծկլտում էր ու կրկնում արցունքից խեղդվելով.

- Գիտեմ, էլի, որ իմանա՛ հայրս աղբ հավաքող է, չի ուզի: Աղբ հավաքողից ո՞վ աղջիկ կուզի, ա՛յ մամ, չի ուզի, էլի, չի ուզի:

- Բա ե՞ս ինչ անեմ, որ ամբողջ կյանքում եմ ամաչել,- աղջկա ձայնով ասում էր Մարգոն:

Վիրաբը լսում էր այդ ձայներն ու մտածում, թե ի՞նչ է անելու, ինչպե՞ս է ապրելու այսուհետև: Եվ ավելի շատ մտածում էր, թե ինչպե՞ս է տուն վերադառնալու: Ինչպե՞ս է նայելու Մարգոյի և Մուսանի դեմքերին: Աշխարհում իր միակ հարազատների սիրելի դեմքերին: Մտածում էր ու սարսափում այն մտքից, որ տուն է վերադառնալու: Մի՞ թե կարող է հենց այնպես, սովորականի պես բարձրանալ սանդուղքով, գրպանից հանել բանալին ու բացել դուռը: Իր տանը դուռը:

Տունն այլևս անհրապույր և օտար էր թվում նրան:

Նույնիսկ մի պահ տղայավարի մտածեց, որ եթե հանկարծ պատահաբար մի ավտոբուս էլ գա, կնստի ու կգնա Առափնյա փողոց: Շուրջը նայելով, գաղտագողի կսեղմի դռան կոճակն ու կասի՝ «Ես եկա, Ցո՛ղիկ»: Մարգոյի ինատու: Մուսանի ինատու: Բայց անմիջապես էլ ինքն իրեն ասաց՝ հետո՞: Դու Ցողիկին պետք էս ընդամենը գիշերվա ժամը մեկից մինչև առավոտվա ժամը հինգը: Եվ միայն այն օրերին, երբ Աստոն Եգորիչը գործուղման մեջ է: Հետո՞: Եվ ընդհանրապես, ընդհանրապես կարո՞ղ էս մտնել այդ տունը: Չե՞ս կարող, իհարկե, չես կարող: Որովհետև դու ուրիշ տեսակ մարդ ես:

Հետո նա այդ «ուրիշ տեսակի» մասին մտածեց: Գուցե սխալ է արել ինքը: Գուցե կարիք չկա՞ր ամբողջ կյանքը նվիրելու Մարգոյին և Մուսանին: Տեսնում է, էլի, թե ուրիշները ինչեր են անում: Գրպանում միշտ իրենց փողն ունեն: Երեք օրը մեկ վարսավիրանոց են գնում՝ իրենց վարսավիրի մոտ, լվանում են գլուխներն ու մազերը սարքում ֆենով, ռեստորան են գնում, որտեղ իրենց հատուկ անկյունն ունեն, ուտում են՝ ինչ ուզում են, իրենց սիրած նվազն են պատվիրում, պարում են ու անփույթ շարժումով «շաբաշ» են նետում նվագողներին: Հետո էլ հավաքվում են ընկերներով որևէ մեկի տանը, խմում ու թուղթ են խաղում ամբողջ գիշեր: Ոմանք էլ շատ հանգիստ օրինական սիրուհի են պահում և ոչ միայն մեկին: Շուկա են գնում նրանց համար, թանկարժեք նվերներ առնում, ծովափ են տանում հետները, կահավորում են նրանց սնները, գունավոր հեռուստացույց են նվիրում, այդ առթիվ սեղան են բացում և նույնիսկ հարևաններին էլ հրավիրում խնջույքի ու խմում են ազնվության կենացը, հավատարմության և բարեկամության կենացը, հայ ժողովրդի կենացը... Եվ աշխարհը շուտ չի գալիս: Ի՞նչ շուտ գալ՝ մազաչափ անգամ չի թեքվում:

«Ես էլ սրանից հետո պիտի այդպես ապրեմ», - չարացավ Վիրաբը, թեև գիտեր, որ երբեք այդպես ապրել չի կարող: Ուշ է: Այսինքն՝ թեկուզ ուշ էլ չլինի, միևնույն է, ինքն այդպես ապրել չի կարող: Որովհետև ամբողջ կյանքում դառը քրտինքով, աղբի միջից է հանել իր հացը և այդ հացը չի կարող, չի կարելի «շաբաշ» նետել նվագողներին և նվիրել սիրուհուն: Ինքն ուրիշ տեսակ է ապրել: Իսկ ի՞նչ է արել: Ի՞նչ արել է, մտքում միայն մի բան է եղել՝ իմ տունը, իմ տունը, իմ տունը: Մարգոս չի ունեցել, թող ունենա, շատ ունենա, ամեն ինչ ունենա: Մարգոս դժբախտ է եղել, թող երջանկանա: Մուսանս թող այնպես չապրի, ինչպես իր ծնողները, թող ետ չմնա ոչ մեկից, ընդհակառակը, նրա ուզած ամեն ինչը պետք կատարվի: Ամեն ինչը:

Բա էլ ինչո՞ւ էս նվնվում: Ինչո՞ւ էս նվնվում, Վիրա՛բ: Դու չե՞ս քեզ բերել ու հասցրել այս օրին: Դու չե՞ս խրվել ու մնացել քո հավաքած աղբի մեջ, որից ամեն հանդիպելիս քեզ զգուշացնում էր, ուզում էր ետ պահել Արգամ Թոռչյանը:

Եվ ինչո՞ւ դու անձանոթ, օտար աղջկա համար, թշվառ Մարգոյի համար արեցիր ամեն ինչ, նրա շուտափույթ երջանկության համար սեփական ձեռքով փոխեցիր քո ապագան, իսկ հիմա

քո՛, քո՛ հարազատ աղջկա համար չես ուզում գործդ փոխել, այն էլ ի՞նչ գործ՝ աղբ հավաքելը: Ու նստել ողբերգություն ես սարքել:

Հիմա ի՞նչ ես ասում: Տեսնո՞ւմ ես, որ ուրիշ ելք չկա: Գուցե փոխես, հա՞, հարցրեց Վիրաբը ինքն իրեն: Գուցե փոխես հանուն քո հարազատ աղջկա երջանկության, և ամեն ինչ իր տե՛ղը կընկնի: Բայց այդ միտքը միայն զայրացրեց նրան: Գործը շո՛ք է, որ ուզած ժամանակ փոխես: Քսան տարուց ավելի է, ինչ նույն գործն է անում և ում հարցնես, կասի, որ բոլորից լավ է անում այդ գործը: Ինչո՞ւ փոխի: Մեկն ու մեկը պե՛տք է, որ մաքրի քաղաքը, հավաքի աղբը: Հետո հարցը հո աղբը չէ: Շրջապատ է ձեռք բերել, բարեկամներ ունի, ապրում է նրանց կյանքով, սիրում է նրանց, սովորել է, նրանք պետք են իրեն և ինքն էլ նրանց է պետք: Նրանց է՛լ փոխի: Ինչո՞ւ: Միայն նրա համար, որ ինչ-որ մի լակոտի գուցե թե դուր չի՞ գալու Վիրաբի գործը:

Անձրևը շարունակում էր տեղալ խոշոր ու տաք կաթիլներով, թափվում էր Վիրաբի ճերմակող մազերին, ուսերին, գլորվելով սահում էր մեջքի վրայով: Բայց նա չէր մտածում տեղից շարժվելու մասին: Ընդհակառակը, երբեմն-երբեմն բարձրացնում էր գլուխը, որպեսզի հովանա, հանգստանա այրվող, շիկացած ճակատը: Հետո նա, այնուամենայնիվ, հասկացավ, որ թրջվել է ոտքից մինչև գլուխ և հանկարծ անասելի խղճահարություն զգաց իր նկատմամբ: Մտածեց, որ ինքը հիմա նման է այն փոքրիկ կատվին, այն ձագին, որ մի ամբողջ հավիտենականություն առաջ թրջվել էր անձրևի տակ ու դողում էր: Իսկ ինքը փոքրիկ ձեռքերով շոյում, հա շոյում էր նրա թաց, անհարթ մորթին:

- Եթե տղա՛ ունենայի... - հառաչեց Վիրաբը: - Ա՛խ, եթե ես գոնե մի տղա՛ ունենայի...

Երկինքը կրկին որոտաց դրոյունով, տրաք-տրաքեց ահավոր, կայծակը փայլատակեց ու ասես շտապով իր հրեղեն մակագրությունը թողեց Նորքի այգիների վրա: Օդը միանգամից զովացավ, մաքրվեց:

«Հարկավոր է ինչ-որ բան անել,- մտածեց Վիրաբը: Բայց ի՞նչ, ի՞նչ: Գուցե գնա ու խորհո՞ւրդ հարցնի Ահարոն Պարսամյանից: Բայց նա՞ ինչ կարող է ասել: Նա՞ ինչ կարող է անել, երբ ինքն էլ չգիտի ինչպես ապրել այսուհետև և առավել քան Վիրաբը՝ խորհրդի ու օգնության կարիք ունի:

Ծեր գիտնականը ամենաշատը կասի.

- Համբերի՛ր, բարեկա՛մս:

Հետո կավելացնի.

- Ի վերջո կյանքն այնքան էլ անարդարացի չէ, որքան երբեմն թվում է մեզ:

Նա հենց այդպես էլ ասաց: Ավելի շատ ինքն իրեն, քան Վիրաբին: Եվ գուցե հենց դա՞ է միակ պատասխանը: Ո՞վ գիտե: Գուցե հենց դա՞ է ճշմարտությունը:

Վիրաբը հառաչեց, կծկեց ուսերն ու մնաց նստած ավտոբուսի կանգառի մոտ դրված փայտե նստարանին:

Իսկ անձրևը գնալով վարարում էր:

Պատմվածքներ

Մուսա Լեռան Ջորավարը

Տարիներ առաջ, Երևանում, մայիամեկյան շքերթին հազար-հազար մարդկանց հետ մի ծերունի էլ կար: Իրար շտապեցնող, հրող, աղմկող խանդավառ մարդկային հեղեղի մեջ այդ մարդը նման էր անողորկ ու մամռակալ մի լեռնակտորի, որ կանգնած էր հաստատուն, հողին հենված, մի քիչ բարձր բոլորից ու բոլորից էլ մի քիչ թախծոտ: Ջորավարի պես գլուխը բարձր պահած, կկոցած, գնահատող աչքերով նայում էր մարդկանց, ու թվում էր, թե հիմա ուր որ է կմեկնի ձեռքը և կողջունի շարքերին, ու թվում էր, թե հենց ինքը - այդ լեռնցի ծերունին է շքերթն ընդունում:

Երկնքում, օդը սուլոցով ճեղքելով եկան, ինքնաթիռներ անցան: Ծերունին բարձրացրեց գլուխը, ձեռքի ափով ճակատն ստվերած նայեց վեր, շարժվեց անհանգստացած, ժպտաց խիստ աչքերով ու ինչ-որ խոսքեր ասաց թավ, երկար բեղերի մեջ: Որդին Վարդգեսը, ականջ դրեց մինչև ինքնաթիռների մի ցանց էլ անցավ ու լսեց, որ հայրը մրմնջում է.

- Եկո՛ւր, ձայնդ սիրեմ, ա՛խ, ձայնդ սիրեմ:

Զինվորական շքերթն սկսվեց: Հպարտ, վստահ քայլերով, եկան ու անցան Երևանի կայագործի մարտիկները, սպաները՝ արևի տակ փայլող սրերով, զինվորները՝ նորագույն ավտոմատները ամուր սեղմած, և ապա ավտոմեքենաներն ու զրահամեքենաները, տանկերն ու հրանոթները, ամենագնացներն ու կատյուշաները: Եվ այդ ամենը՝ ծնծղաների ցնծագին աղաղակների, ողջույնի հուժկու «ուռա»-ների ներքո: Սակայն ծերունին այդ ցնծագին աղաղակները չէր լսում, դրանց կարիքը չուներ: Տեղում տրորվելով, ոտքերի ծայրին բարձրացած, ագահ աչքերով անցնող գորքերին էր նայում՝ աշխատելով բաց չթողնել ոչինչ: Եվ նրա հոգում էին աղաղակում ծնծղաները, նրա հոգում էր հնչում «ուռա՛ն», նրա հոգում էր համաչափ, հաղթական օրորվում երաժշտապետի ծոպավոր կարմիր դրոշակը:

Տենդոտ, դողացող ձեռքով բռնեց մյուս որդու ուսը, բացականչեց ականջին.

- Հակո՛բ, օղում, աս բոլորը մե՞րն է:

- Մերն են, բա ի՞նչ են,- ծիծաղեց որդին:

- Բոլո՞րը:

- Հա՛, իհա՛րկե,- ասաց Հակոբը,- Երևանի գորքն է:

- Վա՛խ, պատկերդ սիրեմ, պատկերդ սիրեմ:

Նա այլևս չէր մրմնջում: Զենքերի տեսքից արբած, օրորվելով մոտենում էր շքերթից դուրս եկած ու հրապարակում զբոսնող սպաներին, գրկում, համբուրում էր նրանց, համբուրում էր կրծքներին շողացող նրանց շքանշանները, շոյում էր զենքերը, ժպտում էր թաց աչքերով: Սպաները ներողամիտ ժպտում էին, խփում նրա ուսին. «Շատ ես խմել,- ասում էին,- հայրիկ»,

բարեհոգաբար ծիծաղում էին: Ու հանկարծ լրջացան միանգամից, երբ ծերունին էլ լրջացավ ու նայելով նրանց մշուշված աչքերով, հառաչելով ասաց.

- Իսկ ես մի փամփուշտի համար Հալեպ կհասնեի:

Լռեցին, զգացին անմիջապես, որ իրենց առջև սովորական մեկը չէ կանգնած, այլ զինվոր, նախկին, ինչ-որ մի ժամանակ զինվոր, զենքի եղբայր: Բայց չգիտեին նրանք, և որտեղից կարող էին իմանալ, որ անողորմ, քիչ մամռապատ ծերունին սովորական զինվոր չի եղել միայն, այլ մի մարդ, որի անունը լսելիս սուսկում էին թշնամիները, մի մարդ, որի մասին հայ մամիկները երգեր էին հյուսում ճախարակների մոտ, կամացուկ երգում օրորոցների կողքին ու խնդրում աստծուն, որ իրենց երեխաներն էլ նմանվեն նրան, նրա պես պատվով լինեն ու բարի, խիզախ լինեն ու հեռատես: Չգիտեին նրանք և որտեղից կարող էին իմանալ, որ ուրախությունից արբած այդ ծերունին Սուեիայի հայ բնակչության փրկարարներից մեկն է: Ֆրանց Վերֆելի հոշակավոր վեպի գլխավոր հերոս Բագրատ Գաբրիելյանի նախատիպը, Մուսա լեռան լեզենդար պաշտպանների հրամանատար Եսայի Յաղուբյանը:

*

* *

Միրիայում, պատմական Անտիոք քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Մուսա (Մովսեսի) լեռան լանջին, հայկական հին Յոդանօլուք գյուղում, արհեստավոր գյուղացու ընտանիքում 1877 թվականին ծնվեց մի մանուկ ևս: Հարևանները աչքալուսանքի գնացին տուն, խավիժ եփեցին ու իրենց այգիներից խնձոր ու նարինջ տարան ծննդկանին, կապույտ հուլունք կապեցին թուխ սոլայի կրծքին, որպեսզի չար աչք չդիպչի նրան, երգեցին հին-հին երգեր, խառնելով հեթանոսական ու քրիստոնեական ու մադրեցին, որ նա երկար կյանք ունենա, բարի քրիստոնյա լինի, պինդ մեջք ունենա ու ճարպիկ ձեռքեր, որպեսզի իր պապերի պես կարողանա մշակել պստիկ հողակտորը և փայտից ու ոսկորից սանրեր պատրաստել իր պապերի նման:

Եվ անունը Եսայի դրին:

Ու մեծացավ Եսային: Հուսախաբ չարեց ծնողներին ու հարևաններին, սովորեց մշակել հողը ու հասկանալ ծառերի լեզուն, սովորեց սանրեր պատրաստել փայտից ու ոսկորից, որ շատ լավ վաճառվում էին Սուեիայում, Անտիոքում, Հալեպում: Հայրը երբեմն-երբեմն նրան էլ հետն էր տանում շուկա, սակայն հետո դադարեց: Անընդհատ անախորժության ու կովի մեջ էր ընկնում նրա պատճառով, ստիպված լինում տուգանք վճարել սրան ու նրան: Շուտ բռնկվող, անհնազանդ սողա էր: Բավական էր, որ մեկը թուրքերեն հայհոյեր նրա հորը, կամ որևէ հայի: Մեծերը ձայն չէին հանում հաճախ, կծկվում էին մի տեսակ, իսկ Եսային չէ: Եթե հայհոյողն իրեն հասակակից էր, տեղն ու տեղը հարձակվում էր նրա վրա ու չէր հանգստանում, մինչև որ նրան, չէր տեսնում գետնին տարածված: Իսկ եթե տարեց մարդ էր, կամ նույնիսկ ուստիկան, հետևում էր վիրավորանքից այրվող աչքերով, որևէ տեղ, հոր աչքից հեռու, քարով հեռվից խփում էր անարգողի թիկունքին ու փախչում, խառնվում բազմությանը: Նրան հա-

ճախ էին ծեծում ու մի անգամ էլ հայրը խփեց, երբ սանրերի վաճառքից գոյացած ողջ գումարը ոստիկանների չաուշին կաշառք տալով, պատատուոված շորերով որդուն դուրս բերեց ոստիկանատնից: Տղան երբեք լաց չէր եղել, բայց այս անգամ հեկեկաց վիրավորանքից ու հորը նայեց ատելությամբ, խղճահարանքով, արցունքոտ աչքերով:

- Թուրք ոստիկանն ալ կծեծե, դուն ալ, հա՞ ... ինչո՞ւ էնոր ալ չես ծեծե, կվախենա՞ս:

Հոր սիրտը ճկվեց: Նա մի մարդ էր, որ երկար էր ապրել աշխարհում, լեռների վրա էր ապրել ու կարող էր չասել մտածածը: Սակայն, երբ դուրս եկան Սուետիայից և Յոդանօլուքի բարակ ու փոշոտ ճանապարհը բռնեցին, երբ ողջ աշխարհում մնացին հայրը, որդին ու նիհար, ծեր ավանակը, նա այլևս չկարողացավ զսպել իրեն ու տղայի նկատմամբ ունեցած իր ողջ ցավը, ողջ գուրբը, ողջ տագնապը, ողջ քնքշությունը խոսքերի մեջ դրած՝ գոռգոռոցով բացատրեց նրան հայի անմեկնելի ճակատագիրը, այդ անարդար, անհասկանալի, անհեթեթ ճշմարտությունը: Նա ասաց, որ հայեր են իրենք, որ իրենց գյուղը հայկական է, որ հայկական են նաև Հաջի Հաբիբլին, Վաքըֆը, Խըղըր Բեզը, Բիթիասն ու Քեբուսիեն, բայց դա ոչինչ չի նշանակում, որովհետև երկիրը հայկական չէ, որ թեև իրենք այստեղ շատ ավելի վաղուց են բնակվում, քան թուրքերը, սակայն դա էլ ոչինչ չի նշանակում, որովհետև սուլթանի հպատակներն են ու նրա ողորմածությամբ է, որ իրենց թույլ են տալիս ապրել ոչ միայն այստեղ, այլև ընդհանրապես աշխարհում: Նա ասաց, որ այդ պատճառով էլ իրենք պարտավոր են միշտ զիջող ու հնազանդ լինել, աշխատել չգրգռել իշխանություններին, ժամանակին վճարել տուրքերը, որքան էլ ծանր լինեն դրանք, համբերությամբ տանել անարգանքն ու վիշտը որպես խաչ, որովհետև այդպես է կամեցել աստված: Անեծք կա հայի վրա: Եվ աստված է՛լ բեթարից ազատի, ասաց նա, որովհետև լուրեր են հասնում, թե սուլթան Համիդի հրովարտակով, հեռու, արևելյան շրջաններում հայերին հանում են իրենց գյուղերից, անապատ վայրեր են տանում ու տեր են դառնում նրանց ունեցվածքին, իսկ չենթարկվողներին կոտորում են:

- Ինչո՞վ:

- Ինչո՞վ, ինչո՞վ ... թուր ու թվանքով, ինչո՞վ:

Տղան ապշեց: Իսկ հայերն ինչո՞ւ են թողնում, որ իրենց կոտորեն, իրենք թուր-թվանք չունեն՞ն, ինչ է: Թող պաշտպանվեն: Հայրը տխուր ժպտաց: Հայերին չի թույլատրվում զենք պահել, ասաց նա, և հետո ի՞նչ կարող են անել նրանք, երբ սուլթան կա, զորքեր կան ...

Հեռվում երևաց Յոդանօլուքը՝ անտառների ու այգիների մեջ կորած, լեռնալանջերից իջնող այծի հոտերով, կուշտ շների ծույլ հաչոցներով ու խաղաղ ծխացող երդիկներով, որ ասես բուրվառների խնկարկումը լինեին Մուսա լեռն ի վեր ձգված, իբրև փառաբանություն՝ անխռով իրիկնամուտի: Տղան մի պահ մոռացավ աշխարհում ամեն ինչ, կանգ առավ ու զմայլված, հափշտակված իրենց գյուղին էր նայում ու լեռան անառիկ, խիստ կատարներին, որ ամպերից ելել, երկնքի մեջ էին մխրճվել ու ձուլվել երկնքին: Հետո նայեց հորը՝ ճակատը կնճռոտած, միանգամից մեծացած ու հարցրեց.

- Հապա եթե թուրքերը մեզ Յոդանօլուքից հանեն, ի՞նչ պիտի ընենք:

Հայրը կանգ առավ կաթվածահարի պես, խաչակնքեց արագ. ջերմեռանդորեն, սարսափած նայեց որդուն ու սրտի հին, ահավոր տագնապը խեղդելով, խռովված, խուլ ձայնով ասաց.

- Փա՛ռք աստծո, ինչո՞ւ պիտի հանեն, մենք խաղաղ, հնազանդ կապրինք մեզ համար:
- Եթե հանե՞ն,- համառ, չար կրկնեց Եսային,- ի՞նչ պիտի ընենք: Ո՛չ թուր ունինք, ո՛չ թվանք:
- Դե, դե, փակի՛ր բերանդ, վախեցի՛ր աստծուց, օղլում,-արդեն կոտրված, տխուր ասաց գեղջուկը՝ կրկին խաչակնքելով ու դեմքը երկյուղածությամբ դարձրած դեպի եկեղեցին, որի դեղնավուն խաչը հիմա, մթնշաղի մեջ, ասես Մուսա լեռան պարանոցին լիներ կախված, և որի զանգերը իրիկնային աղոթքի էին հրավիրում յոդանօլուքցի հավատացյալներին:

*

* * *

Իսկ տագնապալի լուրերը շարունակում էին գալ, ավելի ու ավելի որոշակի ձևեր առած, ավելի ու ավելի ահախառն: Եվ հարցը, որ սովեց պատանի Եսային խաղաղ, տաք մի իրիկուն, արդեն ուրիշներին էլ էր մտահոգում, արդեն ուրիշներն էլ էին տալիս: Իհարկե, դեռ շատ-շատ գյուղացիներ, հատկապես քիչ թե շատ հարուստները, Թուրքիայում կաշառքի ամենագոր ու փորձված ուժից ելնելով, վստահ էին, թե ոչինչ էլ չի պատահի Սուետիայի հայերին ու հայտնի թռչունի նման գլուխներն իրենց տներում թաքցրած, փորձում էին հեռու մնալ արհավիրքներից: Սակայն շուտով, շատ շուտով արհավիրքները իրենք վրա հասան. 1894-97 թվերին, սուլթան Համիդի «ողորմածությամբ» Թուրքիայի հայկական գյուղերն ու քաղաքները հազարավոր անմեղ հայերի արյունով օծվեցին և էլի ու էլի հազարավոր անմեղ հայեր, իրենց բարբեր հողերն ու շեները թողած, բռնեցին անհույս ու օտար երկրների ճամփան:

Եվ արդեն ... շատերից մեծ մասն էլ հասկացավ վերջապես, որ խոսքը լավ ու վատ հայերին չի վերաբերում, հնազանդ ու անհնազանդ հայերին չի վերաբերում, այլ ընդհանրապես հային: Եվ որ փրկվելու համար մի ելք կա միայն՝ չսպասել մորթվելու իր ժամին, այլ զինվել, դիմագրավ լինել, պաշտպանել իր իրավունքն ու պատիվը: Եվ Սուետիայի գյուղացիությանը այդ գաղափարին հասցնելու գործում մեծ երախտիք ունեին Եսայի Յաղուբյանն ու նրա ընկերները: Նրանք արդեն այն պատանիները չէին, որ փայտե հրացաններով կռիվ-կռիվ էին խաղում Մուսա լեռան ձերպերում, ապա հաղթական հարձակում գործում սրա կամ նրա այգու վրա: Հիմա էլ հաճախ լեռն էին բարձրանում նրանք, սակայն ոչ անհոգ խաղալու: Այլ որպեսզի մտածեն, մտածեն, թե ինչպես ընդդիմանան թշնամուն, որտեղից դրամ գտնեն գենք գնելու, սուետահայերին զինելու համար: Եվ այդ խորհրդակցություններից մեկում էլ որոշվեց մարդիկ ուղարկել աշխարհի այն երկրները, որտեղ նախկին հարուստ մուսալեռցիներ կան, օգնություն խնդրել նրանցից:

1902 թվականին Եսայի Յաղուբյանը մեկնեց Ամերիկա: Ոսկու և գազագած տեխնիկայի երկիրն առանց որևէ հրճվանքի ընդունեց մուսալեռցի պատանուն: Պարզվեց, որ հեռվից հա-

րուստ թվացող, լուսանկարներում ծովափին, արմավենիների տակ լայնեզր գլխարկ դրած ու պճնամուլի ձեռնափայտ բռնած հարազատներն ու բարեկամները, և հենց ինքը, Եսայու՝ Ամերիկայում ապրող եղբայրը, շատ էլ փայլուն վիճակում չէին, հագիվ էին պահպանում իրենց գոյությունը և չթաքցրած նախանձով էին նայում իրենց աղքատ հայրենակցի թուխ, քամհար, առողջ դեմքին: Սակայն մեծ էր Եսայու եռանդը և անհուն՝ վճռականությունը:

Երկար թափառումներից հետո, համառ թախանձանքներից հետո, նրան այնուամենայնիվ հաջողվեց որոշ գումար ձեռք բերել, որով կարելի էր զինել գոնե մի փոքրիկ ջոկատ, և վերադարձավ հայրենիք: Ընկերներն էլ քիչ բան չէին արել: Ձենքերը խնամքով յուղեցին, փաթաթեցին անջրանցիկ նյութերով ու պահ տվեցին հողին, Մուսա լեռանը: Յաղուբյանի և նրա ընկերների գործունեությունը սակայն գաղտնի չմնաց: Եվ նրանք ստիպված էին ընդհատակ անցնել, տարիներ շարունակ ապրել լեռներում, հայդուկի կյանքով, ու հովիտ իջնել միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր վրեժ լուծել այս կամ այն լկտիացած, հղիացած ոստիկանից ու հարկահավաքից, որ տանում էին մարդկանց վերջին ինչքը, ու տանելով անարգում, ստորացնում նրանց միաժամանակ: Նման հարկահավաքներից մեկին Յաղուբյանը հանդիպեց Վաքըֆ գյուղում, ուր գնացել էր ընկերների համար ուտելիք բերելու: Նա գյուղի հայ մուխթարի (գյուղապետի) տուն մտավ այն ժամանակ, երբ նրա ընտանիքը ճաշում էր: Հինգ-վեց փոքրիկ երեխաներ, հաճույքից կարմրատակած, թանապուր էին ուտում փայտե ամաններից: Մուխթարը Եսայուն էլ հրավիրեց և ճաշելիս պատմեց, թե երեք օր է, ինչ լաց ու կոճ է գյուղում: Հարկահավաք է եկել զափթիենների մեծ ջոկատով, թուրքական գյուղերում խեղճ գյուղացիների վերջին ունեցվածքը խլելով, կողոպտելով եկել, հասել է այստեղ, շրջում է տները ու վերցնում այն ամենը, ինչ դուր է գալիս իրեն: Հայիոյում է, հետապնդում հանդիպած սիրուն աղջիկներին, առանց որևէ առիթի հրամայում մտրակել մարդկանց:

- Փորձեցի կաշառել, որպեսզի մեզ հանգիստ թողնի, ոսկին վերցրեց ու հռռաց. «Էս ի՞նչ է որ: Ես իմ կաշառքը ինքս կվերցնեմ ձեր տներից»: Մեր գյուղի հարուստներից մեկը աղ ու հացով նրա առաջը ելավ, խնդրեց շնորհ անել իրենց տուն, ասաց, որ ուզում է պատվել թանկագին հյուրին ու նրա ծառաներին: Հարկահավաքը ճչաց, քացով տվեց, գետնին նետեց աղն ու հացը. «Ի՞նչ, մենք ձեր ձեռքից հա՞ց ուտենք, խոզեր: Ծաղրո՞ւմ եք մեզ, հա՞»: Ու նրա հրամանով ծեծեցին մարդուն, քշեցին տարան կովն ու այծերը: Ի՞նչ անես, ո՞ւմ բողոքես, ո՞ւմ դուռը գնաս:

Մուխթարը լաց եղավ երեխայի պես, ցուցամատով քամեց աչքերը, ու արցունքի կաթիլները, դանդաղ գլորվելով, անհետացան թուխ, դողդողացող մորուքի թելերում:

Եսայու դեմքը սարսափելի էր: Կատաղությունից ճերմակած շուրթերով ուզեց ինչ-որ բան ասել: Չկարողացավ, շնչահեղձ էր լինում: Հետո հևաց.

- Հապա որ ես կասե՞մ, հապա որ կասե՞մ: Ու մենք մարդ ենք, հա՞: - Հայիոյեց երկար, մոռանալով իրեն էլ, երեխաներին էլ, աշխարհն էլ: - Մեր հացը չեն ուտում: Իսկ մի հարցնող լինի, թե ո՞վ է լափում մեր տներից տարածը, մեր երեխաների հացը: Ես կսպանեմ էդ շան որդուն:

Ասես նախախնամության մատը խառն էր, որ այդ նույն պահին հարկահավաքին ստիպեց իր ջոկատով անցնել գյուղապետի տան մոտով:

- Սա է, հա՞, - իրեն կորցրած հարցրեց Եսային:

- Հա՛, - սարսափեց գյուղապետը,- հիմա որ քեզ տեսնի՛ ...

- Հիմա ե՛ս եմ ուզում նրան տեսնել, ե՛ս: Եվ դու կօգնես ինձ: Հենց հիմա դո՛ւրս եկ ու նրան տո՛ւն հրավիրիր: Ինչ ուզում ես հնարի, իմ գործը չի, կանչի՛ր:

- Գժվե՞լ ես, ա՛յ տղա,- գունատվեց մուխթարը,- ուզում ես քանդե՞լ տունս:

- Քեզ կսպանեն, եթե չկանչես,- սպառնաց Եսային, ու նայելով կատաղությունից աղավաղված նրա դեմքին, գյուղապետը երերուն քայլերով դուրս գնաց:

Քիչ հետո ճոճռաց արտասանողությամբ, բացվեց դուռն ու սենյակ մտավ հարկահավաքը, հարևանցի մի հայացք գցեց գեղջուկի շորերով, փափախավոր Եսայուն, ապա ետ դառնալով, զայրացած դիմեց գյուղապետին, որը դողում էր դռների մեջ:

- Բա ո՞ւր է Ամերիկայից եկած պարոնը: Իսկ սա՞՞ ով է:

Հաջորդ վայրկյանին Եսայու ձեռքին կարճափող հրացան կար:

- Ես եմ այդ պարոնը. մո՛տ եկ, ինձամի՛,- շնջաց նա հոգուն հանկարծ իջած թեթևությամբ ու իր սառնասրտությունից ինքն էլ շշմած:- Չայն չհանե՛ս, թե չէ կպայթեցնեմ գլուխդ: Մերոնք գյուղի տակ իմ կրակոցին են սպասում:

- Ախր ի՞նչ ես ուզում, ա՛յ բալամ,- զինված մարդու առջև մի վայրկյանում խեղճացավ, դողաց, ծնկներին ընկավ հարկահավաքը:

- Նախ՝ ամբողջ անասունը կթողնեք ու կկորչեք գյուղից, թե չէ գիշերը շան պես կկոտորեմ բոլորիդ էլ: Իսկ հիմա կե՛ր:

Նա վախից պապանձված երեխաների առջևից վերցրեց նրանց թանապուրի կիսատ-պռատ ամանները, նրանց բրդած պարունակությունը մեկի մեջ լցրեց ու ձախ ձեռքով մեկնեց ծունկի եկած հարկահավաքին:

- Դե կե՛ր, շո՛ւն, կե՛ր մեր հացը, չես սատկի:

- Ալլա՛հ, ալլա՛հ,- տրորվեց, աղերսանքով ձեռքերը երկինք պարզեց թուրքը,- ա՛յ բալամ, ախր մեր հավատն արգելում է ...

- Իսկ մեր հավատը թույլ է տալիս: Կե՛ր: Այսինքն՝ ինքդ որոշիր, գնդա՞կ, թե՞ թան:

Հարկահավաքն այլևս չտատանվեց: Իսկ երբ դուրս էր եկել արդեն ու առանց ետ նայելու, զափթիենների զարմացած, տարակուսած հայացքների տակ ձին նստած հեռանում էր, գյուղապետը նոր միայն խոսելու ընդունակություն ստացավ:

- Գիժ, գիժ, ես մեռա, ես ի՞նչ բերեցիր գլուխս: Բա որ հայտնե՞ր զափթիեններին: Ախր տուն-տեղով կկորչեինք:

- Չէր հայտնի: Լավ գիտեմ դրանց,- վրեժը լուծած երջանիկ մարդու ժպիտով ասաց Եսային:- Էդպիսի մեկը կմեռնի, բայց իր ենթակաների մոտ չի խոստովանի, որ հայը ստորացրել է իրեն, ստիպել, որ խախտի հավատը: Հավատը թույլ չի տալիս: Իսկ թույլ տալիս է թալանել ու սպանել ...

Մոտ քաշեց թանապուրի իր ամանը, լավ բրդեց ու կերավ՝ երկար ժամանակ լեռներում ապրած, ջրիկ ճաշի կարոտ գյուղացու ախորժակով:

*

* *

Սև գիշեր, սև գիշեր, սև գիշեր ... Քամին ծովափի ավազն է խախալում, դիզում խոշոր շեղերով, որպեսզի անմիջապես էլ ցրիվ տա նորից ու քշի տանի, հեռացնի, ճամփա բացի ալիքների համար: Ու ալիքներն էլ չեն սպասեցնում, շառայունով զարկում են ափին, ետ քաշվում՝ դողդոջունով ծովը տանում ավազը, ծառս են լինում, կանգնում աներևույթ պոչերի վրա, քարանում մի վայրկյան, ու նորից զարկում ուժգնորեն, զարկում խելահեղ: ?Ու թվում է, թե ահա, հաջորդ հարվածին Կիպրոսը չի դիմանա այլևս, թե ահա հիմա ուր որ է կղզին կպոկվի հիմքից ու հողմին գերի, հողմին խաղալիք, անտեր նավակի նման կտարուբերվի ալիքների վրա:

Ափին, ձկնորսական լքված մի խրճիթում, օջախի մոտ թիկնել, մտքերի մեջ է ընկել Եսայի Յաղոբյանը: Արդեն երկու օր է, ինչ փոքրիկ նավակը պատրաստ պահած, ծովի խաղաղվելուն է սպասում, որպեսզի տարերքից էլ խելահեղ մի որոշմամբ թիավարի դեպի Մուսա լեռ, դեպի իր հայրենիքը: Այլ ճանապարհ չկա: Եղբայրները, նախկին եղբայրները՝ երիտասարդ թուրքերը փակել են ճանապարհը: Ավելի ճիշտ, ոչ թե փակել, այլ սահմանային յուրաքանչյուր ուղեկալին հայտնել են նրա արտաքին նշանները ու պատվիրել խստորեն՝ նրան ձերբակալելուն պես ներկայացնել Անտիոքի գայմագամին (գավառապետին) կամ էլ անմիջապես Հալեպ:

Եղբայրները ... Այսինքն՝ շուտով, երիտասարդ թուրքերի՝ իշխանության գլուխն անցնելուց հետո, երբ Եսային ու նրա ընկերները իջան լեռներից, նրանց պարզ դարձավ, որ ոչ մի փոփոխություն էլ չի եղել փաստորեն: Մուլթանի կոշտ ու կոպիտ, անբարեսես ծառայողների փոխարեն պաշտոնական սեղանների ետև հիմա փողկապով, եվրոպական հագուստներ հագած, նիհար ու բարեհամբույր մարդիկ էին նստած: Ահա ողջ տարբերությունը: Մնացած ամեն ինչը նույնն էր. նույն արհամարհանքը, նույն ատելությունը, նույն հալածանքն ու կողոպուտը: Բայց առայժմ ոչ բացեիբաց, ոչ հրապարակայնորեն, ոչ մտրակի տակ, այլ բարեկիրթ շարժումներով սքողված, առանձնասենյակներում, օձանելիքի ու գերմանական սիգարների հոտով ու ծխով մշուշված:

Այդ պատկերը սկզբում շատ գայթակղեցուցիչ էր ու հավատ էր ներշնչում նաև այն պատճառով, որ երիտասարդ թուրքերի հետ հայտնվել էին նաև հայեր: Էլի եվրոպական հագուստներով, թիթեռնիկ ժապավեններով ու ակնոցներով: Խոսում էին ուրիշ տեսակ, անուշ հայերենով, խոսում էին ոգևորված, ներշնչված, հավատով ու օգտագործում էին այնպիսի բառեր, որ ան-

հասկանալի էին ու գուցե հենց դրանով էլ տակնուվրա էին անում սուլետահայերի հոգին: Եվ հիմա, հաճախ էին սանրագործն ու մաղագործը, շերամաբույծն ու այգեգործը գյուղամիջյան ճանապարհներին միմյանց հետ խոսելիս որպես շքեղություն, որպես փայլ, որպես հայելի, կամ գրպանից հանած նորաձև հրահան՝ օգտագործում «մանդատ» և «պրոտեկտորատ», «անկախություն» և «եղբայրություն» բառերը: Խաղաղություն, հանգստություն իջավ Մուսա լեռանը: Եսային հարսնախոս ուղարկեց համագյուղացի բողոքական Պողոս աղայի տուն, խնդրեց նրա աղջկա՝ Իսկուհու ձեռքը: Մեծ, լավ հարսանիք արեցին: Նվագը թնդում էր Յողանօլուքում, գյուղն ամբողջ գիշեր Յաղուբյանենց ծառերի տակ հավաքված խմում, պարում էր դոփելով կանաչին ու շրջան գծելով ընկուզենու տակ: Ու երգում էին հին երգեր, պայծառ զրնգուն ձայնով, երգում էին ուրախ, հարսանեկան երգեր:

Ու չգիտեին նրանք, որ իրենցից շատ հեռու, Մտամբուլում, հենց նույն օրերին, եվրոպական հագուստներ ու ազգային ֆեսեր հագած նիհար ու բարեհամբույր մարդիկ՝ երիտասարդ թուրքերը, եղբայրության մի կողմի եղբայրները, նույնպես անքուն գիշերներ են անցկացնում, ծրագրելով սգատուն դարձնել Եսայի Յաղուբյանի հարսանքատունը, հայկական նահանգներն ու գյուղերը:

Չգիտեին նրանք: Բայց ոմանք զգում էին: Ոմանք ուշիուշով հետևում էին Թուրքիայի հայկական շրջաններում տեղի ունեցող իրադարձություններին, մտաբերում ոչ հեռու անցյալի նման «անդորր» ժամանակները և դրանց հետևող կոտորածները ու ժողովրդին համոզում աչալուրջ լինել, պատրաստ լինել ինքնապաշտպանության: Եվ նրանցից մեկը Եսայի Յաղուբյանն էր, իրադրության այդ նուրբ ու զգայուն չափող սարքը, կիսագրագետ ու տաղանդավոր գործիչը:

Շուտով ոստիկանությունը կրկին սկսեց հետաքրքրվել Յաղուբյանով: Մի քանի անգամ թերևս հրաշքով, կամ ավելի ճիշտ՝ ներքին զգացողությամբ, նա հազիվ կարողացավ խուսափել ծուղակներից: Մակայն դա երկար շարունակվել չէր կարող: Եվ ընկերների պահանջով Յաղուբյանը կրկին հեռացավ հայկական տնից ու կրկին հայտնվեց Ամերիկայում:

Երեք տարի շարունակ նա արեց այն ամենը, ինչ անում է Ամերիկայում հայտնված յուրաքանչյուր օտարերկրացի: Փորձեց միլիոնատեր դառնալ: Տասնյակ մասնագիտություններ փոխեց ու տասնյակ քաղաքներ անցավ, ամեն ինչ արեց, որպեսզի հարստանա: Բայց հարստանա ոչ թե ինչպես յուրաքանչյուր օտարերկրացի, այլ ինչպես ջեկլոնդոնյան մեքսիկացին, հեղափոխության զինվորը: Զրկեց իրեն ամեն ինչից, ամենածանր ու ամենավտանգավոր աշխատանքները հանձն առավ, որպեսզի շատ ստանա, շատ-շատ դրամ: Կիսաքաղց կյանք վարեց՝ կուտակելով կոպեկ առ կոպեկ՝ որպես փամփուշտ, որպես հրացաններ, հրացաններ, հրացաններ Մուսա լեռան վրա ...

Եսային բարձրացրեց գլուխը, ականջ դրեց քամու ձայնին ու ավելի շուտ սրտի տրոփյունից՝ զգաց, որ ծովը քիչ խաղաղվել է: Գուցե նորից փորձի: Երեք անգամ՝ երկու օրվա մեջ, նա փորձել էր փոքրիկ նավակը ծով դուրս բերել: Եվ երեք անգամ էլ ծովը չէր ընդունել մարդուն: Վերնաշապկի տակ կրկին ամուր, ցավեցնելու չափ ամուր սեղմեց լայն ու ծանր գոտին, իր երեք տարի կուտակած և հայրենակիցներից հավաքած ողջ հարստությունը, վերցրեց կապոցը, որի մեջ եվրոպական հագուստն էր, հացն ու ջուրը, ու դուրս եկավ խրճիթից: Քամին կտրվել էր, ու ծովը կամաց-կամաց փախչում էր ափերից: Նա նավակը դեպի ջուրը քաշեց՝ կարոտից խելագար: Երեք տարի ... Տեսնես ինչպե՞ս են մայրիկը, Իսկուհին, փոքրիկ աղջիկը, ընկերները: Հեռ-

վում, օվկիանոսից այն կողմ և նույնիսկ վերադարձի երկար ու ծանր ճանապարհին, նա այդքան սուր չէր ապրել կարոտի զգացումը, որքան հիմա, երբ քիչ էր մնացել տուն հասնելուն, երբ տաք, փափուկ քամին արդեն նրան էր հասցնում հայրենի հողի շշմեցնող քաղցր շունչը:

...Մի առավոտ, Մուսա լեռան ծովահայաց լանջի անտառում փայտածուխ պատրաստող երկու յողանօլուքցի զարմանքով մի նավակ տեսան, որ խաղաղ օրորվում էր ավից ոչ հեռու, ջրերի վրա: Նավակն առանց դեկավարի սահում էր՝ քիչ թեքված մի կողմի, ջարդված միակ թիակի վրա: Իրար ձայն տալով ու հևոցով քննարկելով պատահարը՝ յողանօլուքցիները քարից քար ցատկելով ծովափ իջան: Մեկն ավելի շուտ հասավ նավակին, ձեռքով կառչեց կողքից, մի հայացք գցեց հատակին ու ճչաց: Երկրորդն էլ տեղ հասավ, քիչ անց միմյանց օգնելով ու սրտապնդելով, նրանք նավակ բարձրացան: Հատակին, կիսով չափ ջրի մեջ, նավակի հետ տարուբերվում էր անկենդան մի մարմին, որը շրջելով, ածխագործերը մեծ դժվարությամբ ճանաչեցին Ամերիկայում կորած իրենց համազրուղացի Եսայի Յաղուբյանին:

Թե որքան ժամանակ էր մնացել ծովում, ինչերի էր հանդիպել և երբ էին ուժերը վերջնականապես լքել նրան, այդպես էլ չիմացան ոչինչ: Եսային չաթափվեց ոչ նավակում և ոչ էլ ծովափին: Մի քանի փորձից հետո համոզվելով, որ թեև կենդանի, բայց խոր ուշագնացության մեջ է, ածխագործները ուռենու ճյուղերից պատգարակ հյուսեցին և գիշերը նրան տարան Յողանօլուք:

*

* *

Հազիվ էր ապաքինվել, երբ հայտնեց, թե մեկնում է Անտիոք: Զուր անցան հարազատների խնդրանքը, Իսկուհու արտասուքն ու ընկերների հորդորները:

«Ես Ամերիկայից նրա համար չեմ եկել, որ ձեռքերս ծալած նստեմ տանը,- կտրականապես հայտարարեց Եսային,- իսկ ինձ բռնե՛լն այնքան էլ հեշտ չէ»:

- Զրդուր ձուգը կտնծեն կըտինկվա (խորամանկ թռչունը կտուցի վրա կտնկվի),- ձեռքերը ծնկներին խփելով՝ վշվշաց մայրը:

Նրան պաշտպանեցին բոլորը: Ի՞նչ միտք ունի հենց այնպես թշնամու որջը մտնել, երբ այնտեղ շատերն են ճանաչում յողանօլուքցի «խառնակչին», երբ յուրաքանչյուր ոստիկան ու լրտես, պարզևատրության հեռանկարից խենթացած, նրան անմիջապես իշխանության ձեռքը կհանձնի: Եվ վերջապես, ի՞նչ նպատակ ունի Անտիոք գնալը: Այնտեղ, միևնույն է, մի հատիկ իսկ օրինավոր գեներ չես կարող գտնել, բացի հնացած, իրենց դարն ապրած լայնափող չախմախավորներից: Եվ մեծ եղավ ներկաների զարմանքը, երբ Եսային հանգիստ պատասխանեց, թե ինքը ոչ մի մտադրություն չունի Անտիոքից հրազեն գնելու: Պարզապես իրեն աղ է հարկավոր:

- Ա՞ղ,- կարծելով թե կատակում է, հռհռացին բոլորը:

- Աղ,- լրջորեն հաստատեց Եսային:

Իսկուհին անմիջապես կողքի սենյակից քաշեց, ներս բերեց աղի փոքրիկ պարկը: Աղն ինչնե-
րիս է պետք, փառք աստծո, կես տարի հերիք կանի: «Գուցե վառող պատրաստելու մտադրու-
թյուն ունի», - եզրակացրին ումանք: Եսային ծիծաղեց: Չէ՛, ինչ վառող, ինչ բան: Պարզապես
ինքը մտածում է աղի պաշար կուտակել, առանց որի ապրել չի լինի, երբ ինչ-որ ժամանակ
ստիպված լինեն Մուսա լեռ բարձրանալ: Ու հայտնեց, թե այդ միտքը իր մեջ ծագել է Չիկագո
քաղաքում, երբ ի համերաշխություն ամերիկյան պրոլետարիատի հետ, Չիկագոյի կաշեգործ-
ների նշանավոր գործադուլին մասնակցելու ժամանակ, ակամա, անգործությունից էժանագին
կինոնկարներ էր դիտում: Կինոնկարներից մեկը պատկերում էր ոսկի որոնողների փոքրիկ
մի համայնքի ծանր վիճակը: Հնդիկների բազմությունից պաշտպանվելու նպատակով, մի
խոշոր քարայրում փակված, ունենալով մեծ քանակությամբ ուտելիք և ջուր, մարդիկ սակայն
կործանվում են, որովհետև անտեսել էին աղը: Լնդախտից ու այլ համաճարակներից հյուծ-
ված, նրանք լիզում էին քարերը, փորձում արտասվել, որպեսզի մասամբ հագենան սեփական
արցունքով:

Պատմությունը խոր տպավորություն թողեց: Ընկերներից շատերը ցանկություն հայտնեցին
մասնակցել այդ ձեռնարկին: Միայն առավել լավատեսները առարկեցին: Իհարկե, աղը շատ
կարևոր բան է: Բայց ի՞նչ կարիք կա շտապելու, իշխանությունները դեռ առանձնապես չեն նե-
ղում, ժամանակը կգա, աղ էլ կառնեն:

- Իսոր ընծի տեօր հուվ մը, վուղը ուտում քի կով մը (Այսօր ինձ հավ տուր, վաղը քեզ կով
կտամ),- առածով հեգնեց Եսային, զգացնել տալով, որ ինքը չի հապաղելու, և որ իր վճիռը ան-
խախտ է:

Հաջորդ մի քանի շաբաթվա ընթացքում գավառի տարբեր վայրերից ջորիներն ու էշերը ման-
րիկ կտկտոցներով դեպի Յողանօլուք էին շտապում, համաչափ օրորելով քարաղի մեծ կտոր-
ներով լցված նախշուն խուրջիները: Եվ էլի մի շաբաթ շարունակ յուղանօլուքի հարս ու աղ-
ջիկները, արցունքոտ աչքերով, կսկծացող մատներով, ձեռքերը փոխնիփոխ պտտեցնում էին
երկանքները, աղում խոշոր քարաղը ու լցնում թիթեղյա մեծ ամանների մեջ, որ Եսային էր բե-
րել ինչ-որ տեղից:

Եվ միայն այն ժամանակ, երբ աղով լի մումապատված արկղները վստահելի տղաների օգնու-
թյամբ բարձրացված էին Մուսա լեռ, Եսային թեթևացած շունչ քաշեց ու ձեռնամուխ եղավ իր
հիմնական՝ հրագեն գնելու գործի կազմակերպմանը:

*

* *

Զենք գնել ... Թուրքիայում: Դրանից ավելի հանդուգն ու վտանգավոր արարք դժվար է պատ-
կերացնել: Բայց, այնուամենայնիվ, Եսայի Յաղուբյանն ու իր ընկերները գենք էին գնում: Գնե-
լը դեռ ոչինչ, փողով ամեն ինչ կարելի է գնել աշխարհում, մանավանդ, եթե հասնես Հավեյ

կամ Անտիոք: Դժվարը այդ զենքը տեղ հասցնելն էր: Բոլոր ճանապարհներին և առանձնապես իջևանատներում վխտում էին ոստիկանները, զափթիները, օրավարձով աշխատող լրտեսները: Եվ Եսային ու ընկերները անցնում էին նրանց արանքով, անցնում էին գիշերները, նեղ կածաններով, անցնում էին լայն ճանապարհներով՝ զենքերը մասերի բաժանած, թաքցրած հազար ու մի տեղ ու իրենք էլ հազար ու մի ձևի ծպտված: Ու այնպես պատահեց, որ առանց իրենց հեռավոր հայրենակցին ճանաչելու, նրանից մի քանի տարի հետո, կամ գուցե հենց նույն տարիներին, սուեոցի հերոսները մի քանի անգամ կրկնեցին Կամոյի՝ Միմոն Տեր-Պետրոսյանի խելահեղ սխրագործությունը:

Հալեպում զենքի գաղտնի առևտրով զբաղվող, մահմեդականությունն ընդունած տարեց մի հրեա Եսայուն հայտնեց, թե ինքը գերմանական քսան նոր հրացան է ստացել:

Քսան հրացան ...

Ողջ գիշեր չքնեցին: Գտան երկու ջորի ու մի ավանակ: Գնեցին մեծ քանակությամբ խոզի կաշի ու աղամամուրին, կաշիները բարձած, ու կաշիների արանքում՝ հրացանները, դուրս եկան Հալեպից: Երբ արեգակը ծագեց, փոքրիկ քարավանն արդեն հեռու էր քաղաքի դարպասներից: Առջևից արագ քայլում էր ավանակը, նրան հետևում էին ջորիները, որ բեռներից բացի ջորեպաններին էլ էին տանում: Իսկ ամենից վերջում սև, բարձրասրունք ձիուն նստած, ընթանում էր Եսային՝ եվրոպացի վաճառականի ճանապարհորդական հագուստով ու ծղոտե լայնեզր գլխարկով: Չնայած զենքի հետ կապված հաջողությանը, նա մտայլ էր մի փոքր, որովհետև ստիպված էր եղել սափրել բեղերը: Ու հիմա, շրթունքի վրա անընդհատ անսովոր զովություն զգալով, կամացուկ հայտնում էր: Համարյա առանց որևէ պատահարի անցան ճանապարհի մեծ մասը: Եվրոպացի ճանապարհորդները, միսիոներներն ու վաճառականները հազվադեպ չէին Միրիայի ճանապարհներին, այնպես որ անբեղ ու անմորուս վաճառականի ծղոտե գլխարկը ամենավստահելի անձնագիրն էր:

Անտիոքում կանգ չառան, ուշադրություն չգրավելու նպատակով, և շարունակեցին ընթանալ դեպի Այներաբ: Բայց հազիվ էին դուրս եկել այդ փոքրիկ բնակավայրից, երբ հանդիպեցին զինվորական ջոկատի: Հրամանատարը տարեց մի յուզբաշի էր՝ երկար բեղ-մորուքով ու պարարտ փորով: Աշխատում էր իրեն ձիգ պահել թամբի վրա ու անընդհատ խոժոռ հայացքներ էր նետում զինվորներին: Փոքրիկ քարավանը սկզբում որոշեց անտարբեր անցնել ջոկատի կողքով: Ջորեպանները ըստ սովորության բարևեցին զինվորներին, գլուխ խոնարհեցին յուզբաշու առջև: Ջինվորները պատասխանեցին անկարգ, «վաճառականը» ձեռքը թեթևակի ծղոտե գլխարկին տարավ: Եվ արդեն անցել էին ջոկատից, երբ Եսային թիկունքին զգաց յուզբաշու սուր հայացքը: Հիմա ուր որ է կկանգնեցնի քարավանը: Եվս մի վայրկյան, և շրջվելով, Եսային մատով մոտ կանչեց յուզբաշուն:

Յուզբաշին տատանվեց: Ինքը որոշել էր ստուգել բեռները, բայց հիմա այդ գյավուրը մատով կանչում է իրեն: Եթե կանչում է մատով, ուրեմն կարևոր մարդ է, կոպտի վայ թե գլխացավանքի մեջ ընկնի: Բայց չի էլ կարող մոտենալ, ինչ կմտածեն զինվորները: Հեղինակության հարց է: Եսայու նշանով դրությունը փրկեց ջորեպաններից մեկը՝ միջահասակ, կրակոտ Պետրոս Տվաթյանը: Նույն Պետրոս Տվաթյանը, որը մի տարի հետո հերոսության հրաշքներ էր գործելու Մուսա լեռան վրա՝ որպես աշխարհագործի երեք հրամանատարներից մեկը, այն մարդը,

որը մինչև վերջ հավատարիմ իր դավանանքին՝ պայքարեց Թուրքիայի կառավարական գործերի դեմ և ընկավ հերոսաբար, 1921 թվականին, Մարաշի ճակատամարտում:

Պետրոսը ցած թռավ ջորուց, վազեց դեպի յուզբաշին, ձեռքը կրծքին դնելով խոնարհվեց ու հայտնեց, թե օտարականը, որ Հալեպի կուսակալի մոտ մարդն է և Անտիոքի գայմագամի թույլտվությամբ կաշվի առնու է անում, նրան բան ունի ասելու:

«Կուսակալ», «գայմագամ» բառերը մոզական ազդեցություն գործեցին: Յուզբաշու փայլուն այտերն այնպես շիկնեցին, ասես Հալեպի կուսակալն անձամբ ողջույն էր հղել նրան: Հետո հաղթահարեց հուզմունքը, խոժոռ հայացք նետեց զինվորներին, հրամայեց չշարժվել տեղից ու ինքը ձին դեպի Եսային քշելով, զինվորավարի պատվի բռնեց:

Յադուբյանը ժպտաց բարեհամբույր ու Ամերիկայում սովորած իր անգլերենով ինչ-որ բան ասաց Տվաբյանին, և վերջինս էլ նրան պատասխանեց նորից Ամերիկայում սովորած իր անգլերենով:

- Պարոնն ի՞նչ է հարցնում,- «պարոն» բառը շեշտելով Պետրոսին դարձավ յուզբաշին, որը կյանքում Իզմիրի զինվորական դպրոցից այն կողմ չէր անցել:

- Հարցնում է, թե պարոն գնդապետը չի՞ համաձայնվի արդյոք ուղեկցել իրեն դեպի հայկական գյուղերը: Պարոնն ասում է, թե վախենում է ավազակներից:

«Գնդապետ» բառի վրա դարձյալ մանկան պես շիկնած յուզբաշին խոր գլուխ տվեց Եսայուն և, շողոքորթ հայացքը նրանից չհեռացնելով, սկսեց երկար բողոքել հայերից: Անաղուհաց մարդիկ են, անընդհատ հարստանում են իրենց հաշվին, բայց չեն բավարարվում, ավազակություն են անում: Դրա համար էլ իրենք ստիպված օգնում են ոստիկանությանը, հսկում ճանապարհները: Թուրքիայում ինչքան ավազակի հանդիպես, հայեր են: Եթե ինքը հիմա ծառայության մեջ չլիներ, իհարկե կուղեկցեր պարոնին, բայց... պարոնը կարող է հանգիստ լինել, որովհետև իրենց ետևից իր գորամասի մյուս ջոկատներն էլ են գալիս, զինավարժությունից են վերադառնում: Այնպես որ, վախենալու հարկ չկա ...

Եսային գրպանից մի թուրքական ոսկեդրամ հանեց: Յուզբաշին ետ-ետ գնաց՝ ձեռքերը թափահարելով ու թախծոտ հայացքը չկտրելով դրամից: Հետո նորից մոտ եկավ, բայց դրամը վերցրեց միայն այն ժամանակ, երբ Պետրոսը բարձրաձայն ասաց.

- Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, աղա՛: Էս գյավուրը թեև շատ ազդեցիկ դեմք է, բայց միամիտ մարդ է, հերիճ է, մեր փողերից բան չի հասկանում: Արի մեզ հետ, էլի կտա...

Յուզբաշին քրքջաց՝ նայելով Եսայու իսկապես միամիտ դեմքին, ուրախ, որ օտարականը ոչ մի բան չի հասկանում և դարձյալ ուրախ, որ իր մոտ ծաղրում են այդ միամիտ ազդեցիկ գյավուրին:

Նա ջոկատի հրամանատարությունը օնբաշուն հանձնեց, երկու զինվորի հրամայեց հետևել իրեն, ու քարավանը վստահելի պաշտպանության ներքո շարունակեց ճանապարհը դեպի Յոդանօլուք, անցնելով զինվորական մի քանի ջոկատների կողքով, որոնց զինվորները, իրենց հրամանատարին տեսնելով, ձգվում ու դուփում էին գետինը: Յուզբաշուն, ինչպես երևում է,

շատ էին դուր եկել Պետրոսի խոսքերը, որովհետև մերթ ընդ մերթ հիշելով, քրքջում էր ու հարցնում.

- Ուրեմն ասում ես հերիֆ է, հա՞:

- Հերիֆ է, հերիֆ,- լուրջ պատասխանում էր ջորեպանը:

Երբ հեռվում երևաց գյուղը, հարյուրապետը կանգ առավ, հայտնեց, որ հիմա լիովին կարող են ապահով լինել, բայց չհեռացավ: Հրաժեշտի շարժումներ գործելով՝ անընդհատ «վաճառակա-նի» գրպանին էր նայում: Եսային իշխանական շարժումով մի ոսկի էլ հանեց, մատների մեջ խաղացնելով՝ խցկեց հարյուրապետի գրպանը ու «օլ ռայթ» բացականչելով, թփթփացրեց նրա ուսին:

Երբ յուզբաշին և նրա ուղեկիցները բավականաչափ հեռացել էին, Պետրոսը պոռթկաց.

- Փողերն այնպես ես բաշխում, ասես վեզիր լինես: Դրանցով մի հրացան էլ կարող էինք առնել:

- Եվ կկորցնեինք քսանը, մեզ էլ հետը,- քմծիծաղեց Եսային:

- Լավ, գոնե վերջինը չտայիր,- գյուղացու ժլատությունը չէր հանդարտվում:

- Նախ՝ դու խոստացար: Եվ հետո՝ քո սիրտն ինչի՞ է ցավում, կեղծ փողեր էին, թող տանի, իրեն հալալ: Հրեան տվեց մի քանի դուրուշի տեղ: Իսկ ես դեռ քեզ ցույց կտամ քո էդ «հերիֆ» խոսքի համար:

Պետրոսը զարմանքից դեռ խոսք չէր գտնում ասելու, երբ հեռվից ծառերի տակից լսվեց յուզբաշու ձայնը.

- Ա՛յ մարդ, հե՛յ, ուրեմն ասում ես՝ հերիֆ է, հա՞:

- Հերիֆ է, հերիֆ,- ուրախությունից իրեն կորցրած բղավեց Տմլաքյանը:

*

* *

Այնինչ դեպքերը հասունանում էին, և յուրաքանչյուր օրը գալիս էր հաստատելու Յաղուբյանների ու Տմլաքյանների իրավացիությունը: Շշուկներ էին հասնում, թե արդեն որոշակիորեն դավեր են նյութվում հայերի դեմ, թե թուրքական կառավարությունը ինչ-որ հրաման է իջեցրել հայերին կոտորելու վերաբերյալ: Պետք էր ստուգել այդ լուրերի ճշմարտացիությունը: Եվ Եսայի Յաղուբյանը տեղացի թուրքի տարազով ծպտված, եղավ Սուետիայում ու Անտիոքում, ունկնդրեց մարդկանց գրույցները՝ շուկայում, բաղնիքում ու չայխանաներում: Այցելեց իր մի քանի թուրք բարեկամներին, որոնց ազնվությանն ու նվիրվածությանը վստահ էր, և նրանց

կցկտուր խոսքերից, շփոթված, խուսափող աչքերից ու կարեկից հայացքներից կռահեց, որ նրանք ինչ-որ բան գիտեն, բայց չեն ուզում կամ վախենում են հայտնել: Միայն մեկը՝ չայխանայի մատուցող Ռոզան, ի պատասխան Եսայու համառ հարցերի, գլուխը տխրությամբ օրորելով շնջաց:

- Ալլահը վկա, հաստատ ոչ մի բան չեմ իմանում: Համա, դե գիտես, էլի, չայխանա է, օրական հարյուր մարդ մտնում է, հազարը դուրս գալիս: Խոսում են, ես էլ լսում եմ, էլի: Ասում են, թե ձեզ քշելու են ու ձեր տներն ու հողերը մեզ են տալու: Ինձ որ մնա, ես հարամ հաց ուտողը չեմ, բարեկամի՛ս տղա, բայց լսի՛ր ինձ, փախե՛ք...

«Էդքետեն խըրուտ տըվուղը շատ, հաց տըվուղը քիչ կընօ», - դառնացած մտածեց Եսային, նեղ, սալարկած փողոցով բարձրանալով վեր, դեպի իր հոր վաղեմի բարեկամի որդու և իր վաղեմի բարեկամի, մանր վաճառական Բաֆիգ աղայի տունը:

«Փախեք: Հե՛շտ է ասել: Ո՞ւր փախչես: Ո՞ւր գնաս, ինչո՞վ գնաս: Փախե՛ք: Ի՞նչ են արել, որ փախչեն: Ո՞ւմ են վատություն արել, հարյուրավոր տարիներ ապրում են այստեղ, գերեզմանատներն էլ մի-մի գյուղ են դարձել: Ո՞նց թողնեն այդ գերեզմանատները, ո՞ւմ թողնեն խաչքարերը, եկեղեցիները, հողերը, տները, ծառերը, շերամները, ո՞ւր գնան: Փախե՛ք: Մարդ ո՞նց փախչի իր տնից, իրենից: Փախե՛ք...»:

Երկար ժամանակ համոզված էր, որ մի օր գալու է այս արհավիրքը: Բայց հիմա, երբ արդեն հասել էր այդ օրը, նա իրեն անսահման խաբված ու դժբախտ էր զգում: Փորձում էր խաբել իրեն, հույսի մի փոքրիկ շյուղ գտնել ու կառչել, կառչել: Աշխարհը հո չի՞ գժվել: Ո՞նց կլինի այդպես, ո՞նց կլինի:

Բաֆիգ աղայի տան դարպասի թակը խփելիս՝ ձեռքը դողում էր: Նրան թվում էր, թե ինքը այսպես անվերջ կարող է թակել դուռը, ու ոչ ոք չի գա, չի բացի, թե արդեն փակվել են բոլոր դռները, բոլոր դարպասները: Եվ զարմանալիորեն հանգստացավ, երբ Բաֆիգ աղայի թեթև ոտնաձայնը լսեց կարմիր սալերի վրա ու նրա երգեցիկ ձայնը:

- Օ՛, Եսայի՛ եղբայր, նա՛ խեր, նա խաբար:

Թևանցուկ արեց, սաստեց շանը, տարավ հյուրասենյակ, նստեցրեց օթոցին: Ինքն էլ նստեց նրա առջև՝ համակ սիրալիրություն, համակ ուշադրություն դարձած, սպասելով, որ նախ հյուրը խոսի: Ու Եսային խոսեց: Պատմեց ամեն ինչ, պատմեց իր տագնապները, խնդրեց իր բարեկամին ճիշտն ասել իրողությունը, որքան էլ դառը լինի այն: Չէ՞ որ Բաֆիգ եղբայրը դատախազի փեսան է, մեծամեծների հետ է նստում, վեր կենում: Ով չէ, բայց Բաֆիգ աղան կիմանա ճշմարտությունը:

Աղան շարժվեց, ու Եսայուն թվաց, թե գունատվեց մի քիչ:

- Ո՞վ է այդպիսի հիմարություններ դուրս տվել,- գրգռված խոսեց նա,- ու դու էլ, ի՛մ բարեկամ, հավատացել ես, հա՞, որ մեզ մոտ, մեր երկրում, արդեն իսկական դեմոկրատիայի, առաջադիմության երկրում նման վայրենություն թույլ տրվի: Երբեք: Դա թշնամիների սարքած բանն է, ի՛մ բարեկամ: Պատմության անիվը ետ չի կարող գլորվել:

Բաֆիզ աղան բարձրացավ տեղից, ձեռքի շարժումով հյուրին ստիպեց նստած մնալ, իսկ ինքը սկսեց քայլել սենյակում:

Եսային փորձեց բացատրել: Այդ լուրերը լիովին դատարկ լինել չեն կարող, քանի որ արդեն Ձեյթունում ինչ-որ տեղահանություն է սկսվել: Մարդիկ են եկել, սարսափելի բաներ են պատմում:

- Սուտ է, սո՛ւտ,- գլուխը հանդիմանանքով շարժելով՝ կանգնեց աղան,- ես քեզ բան եմ ասում, եղբայր: Թշնամու գործ է դա: Ուզում են խառնակություն սկսել. մեզ՝ եղբայրներիս գրգռել իրար դեմ: Դա եվրոպացիների ու ռուսների հնարածն է: Եթե որևէ բան լիներ, միթե առաջիններից մեկը ես չէի իմանա և մի՞թե անմիջապես չէի ասի քեզ: Իսկ եթե ինչ-որ տեղ մի քանի հայ են բռնել, ապա ուրեմն մեղավոր են եղել նրանք: Միտք ունի՞ խուճապի մատնվել: Քի չ թուրքերի են բռնում:

Եսային խաղաղվեց բավականին: Գտել էր փնտրած հույսի շուղը: Գուցե և իսկապես դեռ ոչինչ էլ չկա: Ո՞վ գիտի, գուցե և ընդհանրապես չլինի ոչինչ: Երախտագետ ժպիտով շնորհակալություն հայտնեց Բաֆիզ աղային: «Մրտիցս մի մեծ քար ընկավ», - ասաց: Հրաժեշտ տվեց, բայց աղան չուզեց էլ որևէ բառ լսել: Ի՞նչ, այսքան ժամանակ անհետ կորած թանկագին հյուրին բա՞ց թողնի: Չսպասես: Ինքը հիմա բակ կիջնի, մի բան կմորթի, կնստեն, կգրուցեն հանգիստ: Հյուրը իրավունք չունի առարկելու: Կնեղանա Բաֆիզ աղան: Ու Եսային ընդարձակ սենյակում մենակ մնալով, թեթևացած հոգով սկսեց գննել պատին կախված նկարներն ու գորգերի նախշերը:

Մթափվեց թեթև մի շրշունից: Կից սենյակից դուռը ծածկող վարագույրը բարձրացրել ու ներս էր մտել Բաֆիզ աղայի մայրը՝ Արիֆա հանըմը: Եսային լայն ժպիտով քայլեց դեպի նա, կռացավ, համբուրեց խորշումած ձեռքը, ճակատին դրեց, հետո գրկեց ուսերը:

- Անա՛,- ասաց նա սրտանց,- շատ էի կարոտել քեզ: Մերս բարևում է: Ո՞նց ես, ո՞նց, անա:

Ձեռքը գրպանը տարավ, մի բուռ կոնֆետ հանեց, տվեց հանըմին, ինչպես անում էր միշտ, նրան այցի գալիս:

Առաջ, երբ շատ-շատ փոքր էր, ու հայրը այստեղ էր բերում նրան, Արիֆա հանըմը միշտ էլ նրա համար մի որևէ բան էր պահած լինում իր տասնյակ գրպաններից մեկում՝ մի խնձոր, մի տանձ, մի բուռ չամիչ կամ մատիտ: Երբ մեծացավ ու առաջին անգամ ինքը նվեր բերեց հանըմին, երկուսն էլ միաժամանակ հանեցին նվերներն ու ծիծաղեցին: Ու փոխվեցին դերերը: Եսային երբեք չէր մոռանում Բաֆիզ եղբորը այցի գալիս՝ մի բան գնել Արիֆա հանըմի համար:

Ծեր կինը մեքենաբար մեկնեց ձեռքը, վերցրեց կոնֆետը, ու Եսային զգաց, որ նրա մատները սառն են:

- Դե դու գնա՛, բալա՛,- մրմնջաց Արիֆա հանըմը, - շո՛ւտ գնա, տո՛ւն գնա, բալա՛:

Եսային շփոթվեց: Ինչպե՞ս թե գնա: Բաֆիզ եղբայրը պատվիրեց սպասել, բան է ուզում ասել, շուտով կգա:

Հանրմի ծնոտը դողաց յազմայի տակ, աչքերն արցունքով լցվեցին:

- Էլ Բաֆիզ չկա, էլ ախպեր չկա,- ասաց նա, անսահման վշտով օրորելով գլուխը,- ախպերությունը պրծավ: Բաֆիզը գնաց, որ զինվոր բերի, քեզ բռնեն: Փախի՛ր, բալա՛ :

Եսային մի պահ կանգնեց շանթահարվածի պես՝ մտածելով, որ իսկաքը կորցնում է: Ուժեղ սրտխառնուք զգաց. ինչպես այն ժամանակ նավակում, Միջերկրականի վրա: Հենվեց պատին: Հետո հանկարծակի սարսափելի պարզությամբ տեսավ ամեն ինչ, Բաֆիզ աղայի գունատվելը, խոսքերը, թափառող աչքերը, շտապով հեռանալը: Ակամա ձեռքը գոտկատեղին տարավ, շոշափեց մատուցերը, ապա հառաչեց, խոնարհվեց դեպի վշտահար, գունատ կինը:

- Ես դուրբան քեզ, Անա՛: Քեզ համար, քո խաթրու, մեռնեմ, թե առաջինը ձեռք բարձրացնեմ թուրքի վրա: Թող Բաֆիզն էլ դուրբան լինի քեզ, մերի՛կ:

Հարբածի պես օրորվելով՝ հեռացավ, նայեց ճանապարհին: Ոչ ոք չկար: Խորը շնչեց մաքուր օդը և դուրս եկավ դարպասից: Բայց ճանապարհով չգնաց, այլ թեքվեց վեր, քայլեց այգիների միջով, նեղլիկ արահետով չշտապելով բոլորովին, չմտածելով, որ կհասնեն, կկրակեն իր վրա: Ինչ-որ բան խախտվել, ավերվել էր նրա հոգում, ու մի տեսակ անիմաստ էր այլևս թվում կյանքը:

*

* *

Նույն գիշերն իսկ հանգիստ, կազմակերպված ձևով առաջին ընտանիքները բարձրացան Մուսա լեռ: Նրանց թվում էին Պետրոս Տվլաքյանի ընտանիքը, Եսայի Յաղուբյանի ընտանիքը, ինչպես և Իսկուհու հոր՝ բողոքական Պողոս աղայի ընտանիքը, որին Եսային համարյա զենքի ուժով լեռ բարձրացրեց: Նրանց սկսեցին հետևել նաև ուրիշները, շատերը, մեծ մասը՝ Մուստիայի հայկական բոլոր գյուղերի բնակիչներից: Նրանց երկմտությանը վերջ տվեց Ջեյթունի ողբերգությանը մասնակցած, հրաշքով տարագրությունից փախած ու իր ծննդավայր Յողանօլուք հասած խիզախ ու տաղանդավոր մի հովվապետ՝ Տիգրան Անդրեասյանը, որը ժողովրդին համոզեց ոչ թե գլուխ խոնարհել թշնամու առջև, ոչ թե բռնել տարագրության կործանարար ուղին, այլ զենք վերցնել, հետևել խիզախներին ու ապրել կամ մեռնել դիրքերում, պատվով, բարձրության վրա:

Եվ 1915 թվականի օգոստոսի 3-ին Մուսա լեռան վրա սկսվեց անօրինակ սխրագործությունը մի բուռ ժողովրդի, որ գեղարվեստական վառ ճշմարտացիությամբ պատկերված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում: Կենաց ու մահու պայքար մղելով թուրքական կառավարության կանոնավոր զորքերի դեմ, վարձկանների ու խաժամուժի դեմ, որոնք թվական բազմապատիկ գերակշռություն ունեին՝ մի բուռ մուսալեռցիներ կարողացան հաղթանակով դուրս գալ այդ օրհասական կովից, մի անգամ ևս հաստատելով ապրելու իրենց իրավունքը և գալիք սերունդներին իրավունք տալով՝ քայլելու հպարտ, քայլելու վստահ, բաց ճակատով:

*

* *

Ո՛չ: Եսայի Յաղուբյանը չմնաց լեռան վրա, չընկավ թուրքի գնդակից:

Բայց և առանց որևէ հրճվանքի էր թողնում Մուսա լեռը:

53 օր ու գիշեր շարունակ, հրացանների խուլ որոտից, հարձակման մոլուցքով խենթացած մարդկանց խոպոտ ու հաղթական կանչերից, ծերունիների ու մանուկների հաց աղերսող, համառ, հուսահատ աղաղակներից, վիրավորների տնքոցներից, հեծեծանքներից ու անեծքներից, գոհվածների հարազատների բաց, թշնամական, խանդոտ հայացքներից խոցված, բզկտված, շիկացած նրա հոգուն ամայություն էր իջել այժմ: Ոչինչ չկար: Ոչինչ:

Այնինչ որքան էր երազել այս օրը: Քանի, քանի անգամ գիշերները թաքուն, անձայն սահելով քաղցից ու անքնությունից տանջահար մարդկանց մարմինների մոտով, լեռան ծովահայաց լանջն էր բարձրացել, աստվածներին գոհ մատուցած ու հրաշքի սպասող քուրմի պես ժամերով անթարթ նայել Միջերկրականի ջրերին, տենչալով փոքրիկ մի նավակ, հույսի, փրկության մի ճերմակ առագաստ:

Իսկ հիմա, երբ հինգ հսկա մարտանավեր խարխիսները նետած կանգնել, քարացել էին ծովի վրա, ափից քիչ հեռու, պատրաստ Պորտ Սաիդ տանելու մուսալեռցիներին, նրա դեմքին ուրախության մի մկան անգամ չէր շարժվում: Մի թե վերջը սա էր, մի թե սա էր հաղթանակը, մի թե հաղթողը թողնում էր իր տունը:

Մառախուղի բարակ շղարշը դեմքին, գունատ, խորշումած ու մռայլ կանգնած էր Մուսա լեռը՝ որդուն պանդխտության ճամփող սգավոր մոր նման, ու ոչ ոք չկար, որ սրբեր նրա թաց այտերը: Ոչ ոք: Որդիները մեկնում էին: Նրանց հրճվագին աղաղակները ոլոր-մոլոր իջնում էին լեռան կածաններով, որոնում իրար, խառնվում ու բվվում ներքևում, ծովափին:

Այդ ցնծության աղմուկին անհաղորդ, Եսային կանգնած էր փոքրիկ մի բլուրի վրա ու լեռն ի վեր բարձրացող երեք պատգամավորներին էր սպասում, որոնք մերթ հայտնվում ու մերթ կորչում էին ծերպերում: Տեսնես ինչո՞վ են գալիս, տեսնես ի՞նչ պատասխան է տվել Ֆրանսիայի ռազմածովային նավատորմի փոխծովակալը: Այլևս չհամբերելով՝ Եսային ինքը առաջ գնաց բանբերներին: Տեղերից բարձրացան նաև սպաները, որ նույնիսկ նման մի պահի չէին ուզեցել միայնակ թողնել իրենց հրամանատարին ու ննջում էին՝ քարերին նստոտած:

Պատգամավորներից մեկը՝ Պետրոս Տվաթյանը, դեռ հեռվից օրորեց գլուխը:

- Ուրիշ ելք չկա, պիտի մեկնինք,- ասաց նա տխրությամբ:

- Զենք չտվի՞ն,- մի վերջին հույսով հարցրեց Եսային, թեև քաջ գիտեր պատասխանը:

Պետրոսը կրկին օրորեց գլուխը.

- Շատ խնդրեցինք: Աղաչեցինք տանել միայն ծերերին, կանանց ու երեխաներին, իսկ մեզ զենք տալ՝ շարունակելու կռիվը: Ծովակալը հրաժարվեց: Նավապետներից մեկն ասաց, որ դա միջամտություն կլինի երկրի ներքին գործերին: Առանց այն էլ ծովեզերքի ունիվերսալությունը միջազգային աղմուկ կհանի: Շատ խնդրեց նաև ֆրանսիական նավի սպաներից մեկը՝ հայազգի Տիրան Թեքեյանը, որը ցանկություն էր հայտնում ափ իջնել ու կովել մեր կողքին: Մակայն նրան էլ չլսեցին:

«Ամեն ինչի մեջ հաշիվներ, հաշիվներ, հաշիվներ,- տնքում էր Յաղուբյանը, պղտորված հայացքը նավերին հառած:- Ուրեմն մեզ կոտորելը, մի ամբողջ ժողովուրդ կոտորելը ընդամենը Թուրքիայի կառավարության ներքին գործն է եղել: Եվ ուրիշ ոչինչ: Ասենք ուրիշ ի՞նչ կարելի էր սպասել: Ֆրանսիային ի՞նչ, որ այս մի քանի գյուղը, որ այս փոքրիկ հողը քոնն է, և դու ուզում ես պաշտպանել քո հողը: Անգլիային ի՞նչ, որ այստեղ, Մուսա լեռան քարքարոտ լանջերին ընկան ու էլ երբեք չեն բարձրանալու «Էլլեոն» Հակոբ Քարակոյանը, Պողոս Էնտաքյանը, հարյուրապետ Գրիգոր Նգրուբյանը, Մարգիս Շաննազյանը, Հովհաննես Գուճանյանը, Գաբրիել Խալոյանը, Հաբեթ Վանանյանը և էլի տասնմեկ տղերք, հրաշալի, պայծառ տղերք, մի-մի օջախ: Օտարին ի՞նչ, որ Եսայի Յաղուբյանը իր միակ, հիվանդ քաղցած աղջկան լեռանն է թողել և չգիտի, թե մեկ էլ կտեսնի՞ նրա թարմ, փոքրիկ, զարմացած հողաթումբը: Այո՛, դեռ պետք է շնորհակալ լինել աստծուց, որ ֆրանսիացի այս ծովայինները հանձն են առել փրկել, տեղափոխել մուսալեռացիներին: Պետք է շնորհակալ լինել»:

- Գնանք, Եսայի՛ եղբայր,- կամացուկ, համառ կրկնեց Պետրոսը,- ֆրանսիացիները ծովափին մեզ են սպասում:

Եսային բարձրացրեց գլուխը ու առանց շուրջը նայելու, անկամ քայլերով թողեց Մուսա լեռը: Ներքևում՝ ծովափին խոնաված բազմությունը լռեց վայրկենապես - տեսնելով իր հրամանատարներին: Զինվորները թողեցին իրենց կանանց ու երեխաներին և հրացաններն առած ընդառաջ վազեցին նրանց, և ֆրանսիական ծովային նավատորմի սպա, հայազգի Տիրան Թեքեյանը ծոցատետրում արագ-արագ նկարագրեց այդ պահը:

«Ապստամբներու պետը Եսայի Յաղուբյանն էր. հանդարտությամբ և պարզուկ արժանապատվությամբ հիանալի մարդ մը, ճակատը սեղմված կերպասով մը, որ ետևեն ծոծրակը կծածկեր, ինչպես Մասունի ապստամբները կկրեին, լանջը փամփուշտներով ակադձուն, նայվածքը տրտում ու բռնկած միանգամայն: Գիսսախոիվ հերոսներու սպայակույտ մը՝ կհետևեր իրեն: Եվ ան համրաքայլ կհառաջանար կամարին տակ հրացաններու՝ զորս իր մարդիկ կը խաչաձևեին իր գլխուն վերև, ամբողջ երկայնքն իր ճամփուն...»:

Եվ ապա, երբ մուսալեռացիներով լեցուն նավերը դեպի Պորտ Սաիդ էին ուղղվել, Տիրան Թեքեյանը ավելացրեց ծոցատետրում.

«... Յաղուբյանին մոտեցա և անոր ձեռքերը խանդաղատագին սեղմեցի և իր քաջարի դիմադրության համար զինք շնորհավորել է տք, պետերուս հրամանները հաղորդեցի իրեն»:

*

* *

Սուեզի ջրանցքի ավիին, ավագների վրա, Սուեզիայի հայկական համայնքը իր թաղիքե նոր բույնը շինեց, ամեն մի վրան բարձրացնելիս կարոտով ու ցավով հիշելով իր հպարտ, քարաշեն տներն ու ծաղկուն այգիները՝ Մուսա լեռան լանջին: Կյանքով ու աղմուկով լցվեց ամայի ավագուտը, վիրավորներն իրենց հիվանդանոցն ունեցան, հեռուներից բերված աղբյուրները խոխոջեցին յուրաքանչյուր վրան-թաղամասում, գոլորշին ելավ փայտաշեն բաղնիքներից, փոխից ու խոհանոցից տարածվեց նոր թխած հացի ու հարիսայի բույրը, նորակառույց խորանից հնչեց «Տեր ողորմյան», անխոնջ ու եռանդուն գրասեր Վարդան Վարդերեսյանը կրկին ձեռնամուխ եղավ հրոսակների կողմից հրի ճարակ դարձած իր գրադարանը վերականգնելու գործին, և մուսալեռցի տղաներն ու աղջիկներն սկսեցին հաճախել բարեգործական ընկերության հիմնած «Միսվան» վարժարանը՝ իրենց ուսումը շարունակելու:

Մի քանի ամսվա ընթացքում վրանաքաղաքում բացվեցին կարուձևի, ասեղնագործության, ցանցահյուսության, հյուսնության, կոշկակարության արհեստանոցներ և նույնիսկ, ի մեծ զարմանք շրջակա գյուղերի բնակիչների, սկսեց գործել մի նոր ճաշարան, որտեղ ձրի ճաշեր էին բաց թողնում հիվանդներին ու վատառողջներին՝ բժիշկների կազմած հատուկ տոմսակներով:

Օրհնված, աշխատող ձեռքեր: Նրանք չէին կարող պարապ մնալ, նրանք ավին ի վեր ուրիշին մեկնելու համար չէին ստեղծված, նրանք մաճի էին սովոր ու դանակի՝ փայտ ու ոսկոր տաշող, մազ կտրող, տրեխ սարքող, չորացած ճյուղեր հեռացնող դանակի, և իրենք չէին մեղավոր, որ սովորեցին հրացան բռնել:

Վրանաքաղաքը ապրում էր առօրյա, սովորական կյանքով: Երեխաներ էին ծնվում ու մեռնում էին ծերերը, բայց հայրենիքի կարոտն ու վրեժխնդրության ծարավը շարունակում էր ավելոծել մարդկանց: Ահա թե ինչու, երբ ֆրանսիական կառավարությանը հարկավոր էր մարտական մի նոր միավորում ևս, և «մեծ դաշնակիցը» դիմեց իր փոքր դաշնակցին՝ հայերին, օգնություն խնդրելով, վեց հարյուր մուսալեռցի կամավորներ հրացան առան ձեռքները՝ թուրքական բանակի դեմ մարտնչելու համար ու կորիզը դարձան ապագա հոչակավոր «Հայկական լեգեոնի»:

Եվ նրանց հետ էր Եսայի Յաղուբյանը:

Կամավորները հերոսության հրաշքներ էին գործում ամենուրեք՝ սարսափ տարծելով թշնամիների վրա: Խիզախ ու արագաշարժ լեռնցիներից ավելի լավ ո՞վ կարող էր մագցել անառիկ լեռներն ի վեր, կտրել թուրքական զորքերի ճանապարհը, հարձակվել անսպասելիորեն ու կռվել այդքան խելահեղ, այդքան քաջաբար, այդքան անձնագոհ: Մոսկ զինվորներ չէին նրանք, որ իրենց պետությունների կամքն էին կատարում, վարձկաններ չէին, որ սպանելու համար փող պիտի ուզեին, այլ վրիժառուներ, որ կրակում էին հանուն իրենց բզկտված ու

անարգված հայրենիքի, հանուն կողոպտված ու ավերված գյուղերի, հանուն խոշտանգված ծերունիների ու մանուկների, հանուն գնդակված եղբայրների ու ընկերների, հանուն ոտնահարված սրբությունների, պղծված արդարության: Եվ հանուն անկախ, հայկական Կիլիկիայի, որ ձեռքները խաչին խոստացել էին «մեծ դաշնակիցները»:

Ինչպիսի ցասումով էին փայլում նրանց աչքերը, երբ Եսայու մոտ բերեցին 10-11 տարեկան թուրք մի պատանու: Բռնել էին առավոտ վաղ, մի կածանի վրա: Տղան սև, խոշոր աչքեր ուներ, որ հիմա երկյուղով փախցնում էր իրեն շրջապատող չար, թշնամական հայացքներից ու դողում էր:

- Լրտես է օձի ձագը, թե չէ ի՞նչ գործ ունի լուսաբացին, կածանի վրա, - ասաց նրան բռնողներից մեկը:

- Երեխա է,- ասաց Եսային:

- Հրամայի՛ր՝ թող սատկացնեն, Եսայի՛ աղբար,- ձեռքով ծնոտի դողը բռնած, բղավեց մի ուրիշը,- չեմ կարողանում դրանց նայել:

- Երեխա է,- մռայլվեց Յաղուբյանը:

Զինվորները աղմկեցին, ավելի մոտ եկան, հնացին:

- Երեխա է, հա՞,- ձեռքը սպառնալիորեն մեկնեց երրորդը:- Իսկ Հակոբս երեխա չէ՞ր, որ սվինը պստիկ սիրտը խրեցին: Իսկ քո աղջիկը երեխա չէ՞ր, որ քաղցից մեռավ, իսկ նրանք բոլորը, բոլորը, որ հիմա անթաղ ընկած են ճանապարհներին, փոսերում, հարեմներն են քշված ու վառված են կրակների մեջ, երեխաներ չէի՞ն: Հը՞, ասա, է՛, Եսայի աղբար, ասա, հոգուդ մատաղ, երեխաներ չէի՞ն:

Ու հանկարծ զինվորը հեկեկաց երեխայի նման բարձրաձայն՝ ձեռքերով դեմքը ծածկելով, ցնցվելով ողջ մարմնով: Խոր լռություն տիրեց, ու մեկը այդ լռության մեջ ասելությունից հարբած շնջաց.

- Անենք դրան այն, ինչ նրանք են անում մեր գավակներին:

Եսային բարձրացավ տեղից, լուռ նայեց բոլորին, հետո ձեռքի կոպիտ մի շարժումով տղային դեպի զինվորները հրեց:

- Դե տարե՛ք, արե՛ք ինչ ուզում եք,- ասաց նա կամացուկ, տխուր:- Տա՛ր, Թովմա՛ս, քեզ եմ տալիս սրան,- դիմեց նա լացող զինվորին:- Տա՛ր սպանի՛ր:

Զինվորներն ակամա ետ-ետ գնացին, իսկ Թովմասը մրմնջաց.

- Ե՛ս, ինչո՞ւ ես, Եսայի՛ աղբար: Ինչո՞ւ ես:

- Թող տանի, ով ուզում է,- կրկնեց Յաղուբյանը, տխուր ժպիտով նայելով ընկրկած, շփոթահար ու գլխիկոր իր զինվորներին: Եվ ասաց բարձրաձայն, ասաց հպարտ՝ այդ դժբախտ մարդ-

կանց ու իր մեծ ժողովրդի համար,- ախր ես գիտեի, որ դուք ձեռք չեք բարձրացնի երեխայի վրա:

- Որովհետև մարդ չենք,- արցունքի միջից ժպտալով ու ամաչելով իր արցունքից, հառաչեց Թովմասը,- որովհետև ազգ չենք, Եսայի՛ աղբար: Մեզ սպանում են, իսկ մենք խղճում ենք նրանց: Բա մենք իրավունք ունենք ապրելու:

- Դու գիտես, որ ես Քրիստոս չեմ, Թովմա՛ս,- ասաց Եսային,- բայց մենք հենց դրանով էլ իրավունք ունենք ապրելու ...

*

* *

Երկար մտածելուց հետո, Յաղուբյանը որոշեց տղային անձամբ ճանապարհել այն գյուղը, որ ընկած էր ճակատային գծից աջ՝ այգիների մեջ: Նա գիտեր, որ իր վարմունքը առնվազն խելացնորություն է, բայց այլ կերպ վարվել չէր կարող: Չէր ուզում, որ այդքանից հետո տղան կորչի, ընկնի մյուս ջոկատների ձեռքը, կամ գոհ գնա թուրքական գնդակին: Եվ միաժամանակ հայիեղում էր իր քնքշությունը: Դրա համար էլ, երբ ճամբարն արդեն խոր մրափում էր, նա սովորականից էլ կոպտորեն արթնացրեց տղային ու հրամայեց անշշուկ հետևել իրեն:

Մթության մեջ նա չտեսավ տղայի դեմքը, բայց երբ արդեն բռնել էր նրա տաք, դողացող թաթը, սրտի մեջ հանկարծ շատ հին ու քաղցր մի կարոտ զգաց, ինչ-որ բան բարձրացավ ներքևից, կանգ առավ ու ցավեց կոկորդում: Կտրվեց շունչը: Աղջկան հիշեց: Շան լակոտների թաթերը ինչքան էլ նման են իրար:

- Շուտ-շուտ քայլիր, տղա՛ս,- ասաց նա կոպիտ քնքշությամբ, հենց այնպես, որովհետև տղան առանց այդ էլ հնազանդ, մանրիկ վագում էր նրա կողքից: Քիչ անց նա գլորվող քարի ձայն լսեց ու ընկավ գետնին՝ իր հետ քաշելով նաև տղային: Տղան պառկել էր նրան սեղմված՝ իր փոքրիկ ու ջերմ մարմնով, ու արագ-արագ, տաք շնչում էր նրա ականջին: Եսային բնագոյաբար փակել էր աչքերը, ու մի պահ նրան թվաց, թե Յողանօլուքում է ինքը, իրենց տանը, պառկել է կտուրին, տաք, նախշուն վերմակի տակ, ու աղջիկը սատանայորեն իր ծոցն է մտել: Քիչ մնաց աղաղակի ցավից: Ամուր սեղմեց տղայի ձեռքը, քարշ տվեց իր ետևից, այդպես էլ սողալով, սողալով ձորի պտունկը հասցրեց ու ասաց նրան նրա մայրենի լեզվով.

- Էնտեղ, ձորում ձերոնք են, հասկացա՞ր: Դե գնա: Հենց որ ձեն կտան, անմիջապես պատասխանի, ասա ով ես: Հասկացա՞ր: Դե գնա:

Բայց տղան չէր շարժվում: Ու հանկարծ կամացուկ աղաչեց:

- Դու էլ ինձ հետ արի, վախենում եմ, ամի՛:

Չիմացավ, ծիծաղի, թե բարկանա: Մա՞ ինչ կրակ էր: «Հիմար-հիմար մի խոսի, վախենալու ի՞նչ կա,- ասաց նա:- Վախը մնաց էնտեղ, վերևում: Դե, գնա՛ , շուտ»:

Բայց տղան նրան էր սեղմվել ու դողում էր ձագի պես, կամացուկ ինչ-որ խոսքեր էր շնչում ու ավելի էր սեղմվում, հետո թեքվեց, համբուրեց Եսայու ձեռքը:

- Մու՞թ է, շատ եմ վախենում, դու էլ արի, էլի, ամի՛ :

Ա՛յ քեզ փորձանք: Հիմա երևի լաց լինի բարձրաձայն:

Եսային հայիոյեց իր մայրենի լեզվով, հայիոյեց, որպեսզի ինքն էլ լաց չլինի այդ մեծ, համաշխարհային միամտության առաջ: Ի՞նչ անի: Ո՞նց բացատրի սրան, իր թշնամու որդուն, որ ինքը չի կարող ձորն իջնել: Ո՞նց հասկացնի, որ դրա իրավունքը չունի և մտադիր էլ չէ գրկվելու կյանքից:

- Խաթա ես, խաթա, ա՛յ օղլում,- ասաց շփոթված՝ աշխատելով պոկել ձեռքը տղայի շրթունքներից: Հետո մթության մեջ թափ տվեց ձեռքը՝ տղայի գլխի հետ ու հուսահատ վճռականությամբ ասաց,- դե լավ, լավ, գնանք:

Հավանաբար կիրճը պաշտպանող գորամասը ետ էր քաշվել, որովհետև նրանք ոչ ոքի չհանդիպեցին նեղլիկ արահետի վրա ու քիչ անց արդեն բարձրանում էին գյուղամիջյան ճանապարհով: Գյուղն ասես քնած լիներ խոր ու անխռով քնով: Ոչ մի ձայն չէր խախտում ահավոր լռությունը, չէր փայլում ոչ մի լույս: Միայն հեռվում, ինչ-որ տեղ անընկեր ու անպատասխան, աղիողորմ ոռնում էր մի շուն:

- Այ, էն մյուսը մեր տունն է, ամի՛ :

Եսային նայեց տղայի հայացքի ուղղությամբ, բայց ոչինչ չտեսավ, և փոխարենը միայն խուլ աղմուկ լսեց ու երգի, թե լացի ձայն: Հետո շատ մոտիկ, ինչ-որ տեղ ճռուց դուռը, ու հաջորդ վայրկյանին տղան «բաբա՛ , բաբա՛ » գոռալով նետվեց դեպի լույսի մեջ հայտնված ստվերը: Երգը կտրվեց, ուժգին ճչաց մեկը, «ալլահ» գոռաց, հետո ուրիշ ճիչեր լսվեցին, ընկած կահ կարասու ձայն, և նավթի ճրագները հանկարծ սկսեցին թռչկոտել օդում: Ապա ճրագներից մեկը օրորվելով մոտեցավ կանգնած, քարացած Եսայուն, ու խոպոտ, լացակումած մի ձայն հարցրեց.

- Հա՞յ ես, ա՛յ մարդ, ա՛յ աստված:

- Հա՛,- ասաց Եսային:

Նա գիտեր, որ հիմա շնորհակալություն են հայտնելու իրեն, տուն են կանչելու, բայց ոչ թե ուրախություն, այլ միայն նողկանք էր զգում դրանից:

Ճրագները արյուն էին ծորում, ու ռունգերը սեղմված էին դիահոտից: Աչքերի առջև հայկական գյուղերն էին՝ ավերակ ու խանձված, ու մերկ, սևացած մարդիկ՝ ծխացող գերանների մոտ: Աչքերի առջև Թովմասն էր՝ երեխայի պես բարձրաձայն լացող, ձեռքերով դեմքը ծածկած:

- Հայ եմ, հա՛,- ասաց Եսային:

Շրջվեց, որ հեռանա, բայց ճրագները շրջապատեցին նրան: Մայրը օրհնանքի խոսքեր աղա-
ղակելով չոքեց, գրկեց ծնկները, ինչ-որ կանայք խոսեցին հազարաձայն, հայրը՝ հաղթանդամ
մի երիտասարդ, բռնեց ձեռքը, ասաց շտապ-շտապ, կցկտուր:

- Ի՞նչ ես ուզում, որ տամ: Տա՛մ,- ասաց նա,- հարուստ եմ, ես շատ փող ունեմ: Ասա՛, ի՞նչ ես
ուզում, որ տամ: Ասա՛, ա՛յ մարդ, ա՛յ աստված ...

Եսային զգաց, որ ատելությունը խեղդում է իրեն, հրեց, ազատվեց նրանցից, ետ-ետ գնաց, ու-
զեց ինչ-որ բան ասել, երկար, այրող, թունավոր մի բան, բայց... լռեց:

*

* *

Նորից խաբեցին «եղբայրները»: Երբ թվում էր, թե հասել է երազած ժամը, թե արդեն ոչինչ չի
խանգարում «ազատ, անկախ Հայկական Կիլիկիայի» գաղափարը կենսագործելուն, «մեծ եղ-
բայրները», մեծ դաշնակիցները՝ Անգլիան ու Ֆրանսիան հանկարծ մոռացան իրենց «փոքրիկ
եղբորը»: Ինչ-որ մեկը աշխարհի քարտեզի վրա շախմատ էր խաղում, և նրան պետք էր մի
զինվոր, որ քայլի, քայլի՝ հակառակորդի ուշադրությունը իր վրա բևեռելով: Այդ ժամանակ ին-
քը կզոհի զինվորը և փոխարենը կստանա մի նավակ, մի որակ, կամ նեղուց:

Այդ զինվորը հայ էր:

Կովեցին, կովեցին ու ընկան, ծնկաչոք, արյունոտ մազիցեցին լեռներն ի վեր, հաղթեցին ու ըն-
կան Արարայում, ընկան ու հաղթեցին ամենուրեք՝ փառք բերելով դաշնակիցների գորքերին:
Եվ հանկարծ պարզվեց, որ այդ բոլորը խաղ է եղել, հենց այնպես է եղել: Եվ հանկարծ մեծ
դաշնակիցները հայտարարեցին, թե որոշել են Կիլիկիան Թուրքիային հանձնել, դուրս գալ
Կիլիկիայից և նույնն էլ բարեկամաբար խորհուրդ են տալիս հայերին: 1920 թվականին Ադա-
նայում ֆրանսիական հյուպատոսը Եսայի Յաղուբյանին տվեց կնքած թղթի մի կտոր, որով նա
նշանակվում էր հայերի տեղահանման գործի նախագահ:

Որոշեցին վերադառնալ Մուսա լեռ: Մուսալեռցիների մի մասն արդեն հայրենիք էր մեկնել,
օգտվելով Սուետիայում բարձրացված ֆրանսիական դրոշակից: Այնտեղ գնաց նաև Եսայի
Յաղուբյանը իր ընտանիքով: Չուզեց, սակայն, Յոդանօլուքում ապրել, թուրքերն ավերել էին
տունը, կտրել այգին: Նոր տուն կառուցելու տրամադրություն չունեի այլևս: Իջավ հովիտ, ըն-
տանիքով որոշ ժամանակ ապրեց Իսկուռու քրոջ տանը՝ Ջրեյրիա գյուղում, ապա էլ ավելի
խորացավ հովտում՝ հասավ Ջեյթունիե, անընդհատ ու անընդհատ սոսկալով այն մտքից, թե
Ֆրանսիան մի օր էլ Սուետիան կթողնի ու թուրքական կառավարությանը հնարավորություն
կտա հաշվեհարդար տեսնելու անընկճելի մուսալեռցիների հետ:

Նրա անունն արդեն հայտնի էր աշխարհում, նրան գրում էին ժամանակի նշանավոր մարդիկ, հայտնում, որ հպարտանում են իրենց խիզախ հայրենակիցներով, նրա և նրա ընկերների լուսանկարները տպագրում էին Ֆրանսիայի թերթերը, սակայն դա Յադուբյանին չէր օրորում: Պատասխան նամակներում Եսային խնդրում էր չհավատալ եվրոպական կառավարությունների կեղծ խոստումներին, օգտագործել իրենց ազդեցությունը, որպեսզի նորից արյունով չհեղեղվի Մուսա լեռը: Բայց ի՞նչ կարող էին անել անհայրենիք մարդիկ, ո՞վ էր լսում նրանց ահազանգն ու աղերսը, Ֆրանսիայի ինչի՞ն էր պետք հայերով բնակեցված այդ հողակտորը, Ֆրանսիան առայժմ կարիք չունեւր մեռնող զինվորի:

Եվ 1939 թվականին, Սանճաքի նահանգը Թուրքիային հանձնելով, Ֆրանսիան լուծած համարեց հայկական «նոր հարցը», թեթևացած շունչ քաշեց ու անտարբեր հայացքով սկսեց դիտել տարաբախտ ժողովրդի կրկին, այս անգամ արդեն անվերադարձ գաղթը իր պապերի երկրից, իր տներից ու այգիներից, իր հարազատ գերեզմանաթմբերից դեպի օտար եզերքներ, դեպի նոր օտարություն՝ երկրագնդի անշարժ քառակուսիների վրայով:

Բնությունն էլ չէր գթում նրանց: Առաջին իսկ կանգառում, ծովեզրյա Պասիթ կոչվող ավազուտում, ուժասպառ, քաղցից ու հիվանդություններից հյուծված, անօթևան մարդկանց վրա տեղատարափ անձրև ու կարկուտ սկսվեց: Տուրտ քամու տակ անշարժ պառկելը մահ էր նշանակում, և մարդիկ սկսեցին պարել: Զուռնայի տխուր, հուսահատ հնչյունների ներքո գաղթականները պարում էին ողջ զիշեր, սարսեցուցիչ մի պար, որ աշխարհը չէր տեսել: Պարում էին բոլորը, տղամարդ ու կին, ծեր ու մանուկ, պարում էին իրար գրկած ու պահելով իրար, լալիս էին ցավից ու հուսահատությունից, ու նզովում էին հայի դառը, անհասկանալի ճակատագիրը ու հայհոյում էին Եվրոպայի տմարդի քաղաքագետներին:

Անձրևը դադարեց միայն առավոտյան, և մարդիկ ուշակորույս մեկնվեցին թաց ավազին, որպեսզի հետո շարունակեն քայլել իրենց նոր ճակատագրին ընդառաջ:

Մուսալեռցիների մի մասը նոր բույն շինեց Այնճարում, Բեյրութից դեպի հյուսիս, իսկ մյուս մասը հասավ Մուր: Մուրում հաստատվեց նաև Եսայի Յադուբյանի արդեն բազմանդամ ընտանիքը և ապրեց անորոշության, օտարության և անուրախ կյանքի էլի մի քանի տարիներ, մինչև 1947 թվականը, մինչև այն օրը, երբ Յադուբյանների ողջ ընտանիքը ու շատ-շատ մուսալեռցիներ «Պոբեդա» անունը կրող մի նավով առաջին անգամ ոչ թե հայրենիքից դուրս, այլ դեպի իրենց միակ, իսկական հայրենիքը լողացին:

*

* *

Հայրենիք, Հայաստան, Սովետական Հայաստան ... Գուցե քեզ ոչ ոք այնքան չի երազել, գուցե ոչ ոք այնքան չի հպարտացել քեզնով, չի պարծեցել քեզնով, չի ապավինել քեզ, որքան տարագիր հայր, օտար երկինքների տակ ապրող հայր: Երբ ծեծում կամ վիրավորում են երեխային, նա իր հորն է կանչում, իր մեծ եղբորն է կանչում կամ պարզապես սպառնում է.

- Հիմա հայրիկիս կասեմ, հիմա եղբորս կասեմ ...

Եվ այդ երեխայի նման էլ հայերն էին ապրում օտար ավերի վրա, նոր վիրավորանքներին, նոր գրկանքներին ի պատասխան՝ ճակատագրի դեմ ծառանալով:

- Ալ բավ է, հայրենիք կերթամ:

- Գիտես քի անտե՞ր ենք, մենք ալ մեր հայրենիքն ունենք...

Եվ հայրենիքը գրկաբաց ընդունեց իր հալածական որդիներին: Ընդունեց, իհարկե, ոչ այնպես, ինչպես ուզում էր և ոչ էլ այնպես՝ ինչպես կուզենար: Բայց ավելին չէր կարող: Հայրենիքն ինքն էլ պատերազմի դաշտից դուրս եկած մի զինվոր էր, հոգնած մի զինվոր, որ դեռ չէր հանել վիրակապերը: Բայց հայր, հայրենիքից հեռու ավագուտներում տներ կառուցած, դպրոցներ ու արհեստանոցներ բացած հայր, Այնճարում, Մուրում, աշխարհի բոլոր անկյուններում բույն հյուսած աշխատող ձեռքերը ինչ կանեին հիմա, իրենց հայրենիքում, Հայաստան պետության մեջ, սովետական երկրի մեջ, որի կառավարությունն ու կուսակցությունը հող էին տալիս պանդուխտ հային ու ասում՝ տուն շինիր, փող էին տալիս ու ասում՝ տուն շինիր, աշխատանք էին տալիս մարդկանց:

Եսայի Յաղությանն էլ հող ստացավ Շահումյան ավանում ու որդիների հետ սկսեց կառուցել իր իսկական տունը: Պետք էր մտածել նաև աշխատանքի մասին: Եվ այստեղ պարզվեց, որ ամենադժվարը Եսայի Յաղությանի խնդիրն է: Զավակները՝ Հակոբը, Վեհանուշը, Վարդգեսը, Զոհրապը, Գևորգը, Մարին անմիջապես աշխատել սկսեցին կամ սովորել: Հետո աղջիկները տրիկոտաժի ֆաբրիկա մտան, Հակոբը շինարարություն գնաց, Վարդգեսը՝ պետական համալսարան, Զոհրապին ավտոմեքենա տվեցին, Գևորգը ներկել սովորեց: Իսկ Եսային...

Աշխատանքի տեղավորման բաժնում նրան հարցրին.

- Ի՞նչ մասնագիտություն ունեք, հայրի՛կ:

- Չենք կսիրեմ,- ասաց նա:

Ծիծաղեցին բարեհոգաբար: Ի՞նչ զենք, ի՞նչ բան, ա՛յ քեզ ծերուկ, զենքերը նոր են ցած դրել, հոգնել են, անունը մի տուր:

- Ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ, հայրի՛կ:

- Տարիքիս մի նայեք,- ասաց Եսային,- դիպուկ կկրակեմ:

Եսային նայում էր այդ ջահել, առողջ, ծիծաղող մարդկանց ու խոսքեր էր փնտրում, որ բացատրի նրանց իր ցավը: Դե ինչպես ասի նրանց, ինչպես հասկացնի, որ ինքը հազար մասնագիտություն է ունեցել առաջ, շատ առաջ, երբ խաղաղ ապրում էին Մուսա լեռան լանջին: Փայտից ու ոսկորից հիանալի սանրեր էր սարքում: Չթողեցին: Օտներ էր տնկում, այգի էր մշակում: Չթողեցին: Մաճ էր բռնում, հող էր վարում: Չթողեցին: Ստիպեցին զենք առնել ձեռքը, զենք սիրել, դիպուկ կրակել...

- Գուցե պահակ նշանակենք, հը՞, - առաջարկեց մեկը:

- Ձենք կա՞, - հարցրեց Եսային:

Նրան մի հրացան տվեցին, ու նա այդպես էլ ապրեց զենքը ձեռքին՝ խաղաղված ու անխռով, իր մեծ գերդաստանով շրջապատված, իր և իր որդիների տան մեջ, իր ազատ, իր հզոր տան մեջ: Նրան հաճախ էին շուրջկալում երեխաները, խնդրում էին պատմել հին-հին օրերից, իր մասին, Մուսա լեռան և մուսալեռցիների մասին, սակայն Եսային խուսափում էր միշտ:

- Ինձի ձեր պատմությունն ըրեք, օղլում,- ժպտում էր նա,- հինը մոռցաք, սրտերնիդ մի՛ ավրեք: Ինձի ձեր պատմությունն ըրեք:- Գրկում էր, ծնկանը դնում, խառնում մազերը:- Դուն, օղլում, ժեներալ պիտի դառնաս,- ասում էր,- իսկ դուն, օղլում, մարաջախտ, հասկացա՞ր:

Մի անգամ նրան հայտնեցին, թե դաշնակները չեն ընդունում, որ ինքը Մուսա լեռան հերոսներից է եղել, թե որպես այդպիսին մեջտեղ են բերել մեկին, որ հերոսամարտի ժամանակ քաջ պատանի է եղել միայն: Ինչո՞ւ չես գրում, բողոքում, ասացին նրան:

Սպասում էին, որ Եսային կգայրանա, բայց նա ժպտաց միայն:

- Ես հերոս չեմ եղել,- ասաց նա,- այնտեղ հերոսներ չեն եղել: Մենք բոլորս էլ մուսալեռցիներ էինք:- Երկար լռեց, ապա ավելացրեց կամացուկ:- Հոգ չե, օղլում, օր մը կփնտրեն ինձի, կգտնեն օր մը...

*

* *

Շահումյանի ավանային գերեզմանատանը, ցանկապատով շրջապատված փոքրիկ մի հողաթումբ կա, կողքին տախտակ, վրան գրված. «Եսայի Յաղուբյան, 1877-1957»: Մի անուն-ազգանուն կա և երկու թիվ, և այդ թվերի մեջ ընկած կարճ գիծը երկար ու փառավոր կյանքն է այն մարդու, որ ապրեց աշխարհում խիզախ ու անընկճելի, ապրեց պատվով ու հպարտ և արդարության զինվոր մնաց միշտ:

Ամեն տարի աշնանը, սեպտեմբերի 15-ին, Հայաստանի տարբեր ծայրերից դեպի այդ նվիրական հողաթումբն են շարժվում մուսալեռցի ծեր մարտիկները՝ իրենց ընտանիքներով, որդիներով ու թոռներով: Նստում են, գրուցում, հիշում անցած տխուր օրերը: Հարիսա են եփում, որ սուրբ ճաշ էր միշտ և ավելի սուրբ դարձավ Մուսա լեռան վրա, երբ այլուր չկար: Բարձրացնում են զինու թասերը, թեքվում, մի փոքր հեղում են հողին ու խոնարհում գլուխները հիշատակի առջև այն հերոսի, այն մի բուռ հերոսների, որոնց հեռատեսությունն ու խիզախությունը բնաջնջումից փրկեց սուեռահայերին, նրանց հնարավորություն տվեց հայ մնալու աշխարհում ու տեսնելու իրենց ազատ, վերածնված, երազի հայրենիքը:

1965թ.

Եփրատը Կարմիր Կհուսեր

197... թվականի մայիսի տասներկուսն էր: Կեսօր:

Երբ «Բժիշկներն ընդդեմ պատերազմի» Դամասկոսյան միջազգային գիտաժողովում ընդմիջում հայտարարվեց, Վահան Վանյանը մի կողմ տարավ իր հին բարեկամին, կանադացի կենսաբան Ռոբերտ Փորթերին:

- Հիմա մեզ փոքրիկ խմբերի պիտի բաժանեն և ուղարկեն տարբեր շրջաններ,- ասաց նա:- Կուզե՞ս, որ միասին լինենք:

- Որտեղ քո կոնյակը, այնտեղ էլ ես,- կատակեց կանադացին:

- Ուրեմն պահանջի՛ր, որ մեզ ուղարկեն Ջզիբիե:

- Դա՞ որ գրողի ծոցն է,- զարմացավ Ռոբերտ Փորթերը:- Ինչո՞ւ անպայման Ջզիբիե:

... Երեկոյան այդ նույն հարցը կանադացուն գիտաժողովի արաբ կարգադրիչ-քարտուղարը տվեց.

- Ինչո՞ւ անպայման Ջզիբիե, պարո՛ն Փորթեր:

Ռոբերտ Փորթերն ի պատիվ իրեն կարմրեց:

- Ժամանակին ես զբաղվել եմ Եփրատի ավազանի աղտոտվածության հարցերով:

Կարգադրիչ-քարտուղարը տարեց մարդ էր: Նա սպիտակ արտևանունքների տակից թերահավատությամբ նայեց կանադացի գիտնականին, նայեց քիչ հեռու կանգնած Վահան Վանյանին և ասաց.

- Մեր կառավարությունը արգելում է այցելել Ջզիբիե և Դեր Ջոր:

- Ո՞ւմ,- հոնքերը կիտեց կանադացին:

- Ջրոսաշրջիկներին,- պատասխանեց կարգադրիչ-քարտուղարը:

- Բայց մենք Ջրոսաշրջիկներ չենք,- համատեց Ռոբերտ Փորթերը,- և Սիրիա ենք եկել աշխատելու և ոչ թե Ջրոսներու:

Ռոբերտ Փորթերը մեծ անուն էր գիտության աշխարհում: Նրա Նոբելյան մրցանակի առջև փակ դռներ չկային: Այնպես որ շատ շուտով տեղի տվեց նաև գիտաժողովի կարգադրիչ-քարտուղարը:

- Ձեր ցանկության մասին տեղյակ կպահեմ ուր հարկն է,- ասաց նա:- Ո՞ւմ կուզենայիք, որ ուղեկցեր ձեզ:

- Ինձ ուղեկցող պետք չէ,- ասաց Ռոբերտ Փորթերը:- Ինձ հետ կլինի դոկտորը Սովետական Միությունից:- Նա գլխով ցույց տվեց Վահան Վանյանին:

Կարգադրիչ-քարտուղարը շփոթվեց:

- Առանց տեղացի ուղեկցողի չի լինի, պարոն Փորթեր:

- Ես Դամասկոսում եմ ծնվել,- ասաց Վահան Վանյանը:

- Արա՞բ եք,- արաբերեն հարցրեց կարգադրիչ-քարտուղարը:

- Հայ եմ,- արաբերեն պատասխանեց Վահան Վանյանը:

Կարգադրիչ-քարտուղարը ուշադիր, նույնիսկ սևեռուն նայեց Հայաստանից եկած բժշկին:

- Ես ձեզ հետ առանձին կուզենայի խոսել,- ասաց նա արաբերեն:

- Ինձ թվում է, թե ես այստեղ արդեն ավելորդ եմ, եղբա՛յր,- բարձրաձայն ծիծաղեց Ռոբերտ Փորթերը, ելավ տեղից ու քայլեց դեպի ընդարձակ պատշգամբը, որտեղ փոքրիկ խայտանկար սեղանիկների շուրջը, գույնզգույն ամպհովանիների տակ նստոտած բազմալեզու վիճում և օշարակ ու ջրախառն գինի էին խմում գիտաժողովի մասնակիցները:

Արաբ պաշտոնյան գրասեղանի գզրոցից հանեց գիտաժողովի մասնակիցների ցուցակը, կարդաց, բարձրացրեց գլուխը, մի պահ խորին զարմանքով դիտեց իր առջև նստած ոչ երիտասարդ մարդուն, նորից կարդաց ու նկատելիորեն հուզված հարցրեց.

- Դոկտոր Վահան Վանյա՞ն:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը:

- Որդին արժանահիշատակ Արմեն Վանյանի՞:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը, և նրա աչքերն ակամա արցունքով լցվեցին:

Արաբ պաշտոնյան բարձրացավ աթոռից, խոնարհեց կարճ խուզած, ավեհեր գլուխը, աջ ձեռքի ափը աչքին տարավ:

- Ես մասնակցում էի ընկեր Արմենի հուղարկավորությանը,- ասաց նա: - 42 թվականին էր: Այսօրվա պես հիշում եմ: Ամբողջ Դամասկոսը հավաքվել էր իր հարզանքը մատուցելու հայ ժողովրդի նշանավոր զավակին: Ինքը՝ Խալեդ Բեքդաշը խոսք ասաց ձեր հոր աճյունի մոտ: Ասաց՝ ընկեր Արմենը կամուրջ էր հայ և արաբ ժողովուրդների մեջ: Դուք պետք է հպարտ լինեք, որ այդպիսի հայր եք ունեցել:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը:

- Հիշում եմ, լավ հիշում եմ: Հետո խոսեցին Նիկոլա Շավին, Ֆուրաժավա Հըլուն, Հարություն Մադեյանը: Դուք գիտե՞ք, որ ձեր հայրը կոմունիստ էր և Դամասկոսի հայ առաջադիմական միության նախագահը:

- Այո՛, - ասաց Վահան Վանյանը:

- Ես ձեզ հիշեցի, - ասաց արաբ կարգադրիչ-քարտուղարը: - Դուք երեխաներից մեծն էիք:

Վահան Վանյանը գլխով արեց:

Երեխաներից այդ մեծը ընդամենը ինը տարեկան էր, երբ ավտովթարի ենթարկվեց հայրը: Թաց նոյեմբեր էր, բայց լեփ-լեցուն էր գերեզմանատունը: Թաց էին նաև մարդկանց աչքերը: Առաջին անգամ Վահանն այդ օրը լսեց, որ հայրը Հայաստանի օգնության կոմիտեի կենտրոնական վարչության անդամ է եղել, սիրիահայ առաջադիմական միության ու Հայաստանի պաշտպանության լիգայի Դամասկոսի կազմակերպության նախագահը: Բոլոր ելույթ ունեցողները արաբերեն ու հայերեն կրկնում էին այդ բառերը և էլի շատ բառեր, որոնց իմաստն ու նշանակությունը դժվարությամբ էին հասնում նրա մանկական ուղեղին՝ հայրենասեր... անբասիր... հայ և արաբ բարեկամության դրոշակակիր... Մեծ կորուստ... անմոռաց հիշատակ... Սիրված զավակ...

Երբ ասում էին «սիրված զավակ», Վահանը ցնցվում էր ամեն անգամ, կարծելով, թե խոսքն իր մասին է, որովհետև Արմեն հայրը հաճախ էր նրան ասում՝ «դու իմ ամենա-ամենա-ամենասիրելի զավակն ես, տղա՛ս»:

Հետո Հարություն Մադեյանը խոսեց՝ ձեռքը փաղաքշանքով Վահանի գլխին դրած: Վահանը լավ գիտեր նրան, որովհետև ընկեր Մադեյանը միշտ ցանկալի և սպասված հյուր էր Արմեն Վանյանի տանը, երբ Բեյրութից Դամասկոս էր գալիս և այն ժամանակ Վահանի համար չգիտես ինչու բոլորը ընկեր Մադեյան էին կոչում նրան:

- Մեր ընկեր Արմենը հեռացավ մեզնից, վառ հավատով, թե հեռու չէ այն օրը, երբ Կարմիր բանակը ոչնչացնող հաղթանակ կտանի անիծյալ ֆաշիզմի դեմ: Նա իր կողմից ամեն ինչ արեց այդ հաղթանակը է՛լ ավելի մոտեցնելու համար: Նրա վերջին խոսքերն էին, - ասաց ընկեր Մադեյանը: - Բարևներս տարեք կուսակցությանս հայ և արաբ ընկերներուն, մեր կուսակցության ղեկավարներուն...

Վահանը փորձեց բարձրացնել գլուխը և ասել, որ ընկեր Մադեյանը սխալվում է, որ Արմեն հայրիկի վերջին խոսքերը դրանք չէին: Ինքը հո բոլորից լավ գիտե: Իհարկե: Հայրը մեկնեց գունատ ձեռքը, Աննա մայրիկի ձեռքը բռնեց ու ասաց.

- Սիրելի՛ կին, վաղը, մյուս օրը կավարտվի պատերազմը... Ի՛մ միակ, իմ վերջին խնդրանքը քեզ զավակներիս կտանես Հայաստան:

Ահա թե ինչ ասաց հայրը:

- Իսկ ձեզ հայտնի՞ է, որ ընկեր Արմեն Վանյանը պատահական ավտոարկածի զոհ չէր: Ավտոաղետը կազմակերպել էին անգլիացիները: Ձեր հայրը կուսակցության հանձնարարությամբ

աշխատանքի էր անցել անգլիական ռազմական օդանավակայանում՝ իբրև թարգմանիչ: Նրան մատնել էին:

Վահան Վանյանը գիտեր այդ: Ավելի ճիշտ՝ հետո իմացավ: Իմացավ, մտածեց ու հասկացավ, որ հայրը պարզապես ուրիշ էլք չի ունեցել: Որ կուսակցությանը չափազանց անհրաժեշտ է եղել իմանալ, թե ինչ է կատարվում Դամասկոսի մոտ գտնվող անգլիական ռազմական օդանավակայանում: Ծայրաստիճան անհրաժեշտ է եղել: Այլապես ինչու պետք է Լայպցիգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտած մարդը, գերմանացի կոմունիստների առաջնորդ Էռնեստ Թելմանի ընկերն ու բարեկամը, 1929 թվականից Լիբանանի կոմունիստական կուսակցության անդամը, Դամասկոսի առաջադիմականների լիդերը որպես անգլերենի սովորական, համեստ մի թարգմանիչ աշխատանքի անցներ ինչ-որ օդանավակայանի շինարարությունում:

- Հուսով եմ, որ տիկին Վանյանը ողջ-առողջ է,- հարցրեց արաբ կարգադրիչ-քարտուղարը:

- Շնորհակալություն,- հուզված գլխով արեց Վահան Վանյանը:- Կա, ապրում է մայրիկս: Փա՛ռք աստծո:

- Մանկաբարձ էր, այնպես չէ՞: Դարձյալ աշխատո՞ւմ է, թե հանգստանում է երևի:

Վահան Վանյանը ժպտաց.

- Աշխատում է,- ասաց նա,- մայրիկս ասում է՝ մինչև ձեռքերիս վերջին շարժումը երեխաներ պիտի բերեմ լույս աշխարհ: Մայրիկս ասում է՝ հայ երեխաներն առանց այդ էլ ծնվելուց հետո դժվար են ապրում աշխարհում, ես ամեն ինչ պիտի անեմ, որ գոնե նրանց ծնունդը դժվար չլինի:

- Այո՛,- միանգամից տխրած ասաց արաբ ծերունին,- ձեր մայրիկի սերունդը շատ դժվար լույս աշխարհ եկավ:

Վահան Վանյանը զգաց, որ ակամա խոր հարգանք է տածում այդ ծեր, բայց ամուր կազմվածքով արաբի նկատմամբ: Ո՞վ գիտե, երևի հոր ձգած երբեմնի կամուրջը նրա հոգու վրայով էլ էր անցել: Կամ պատճառն այն էր նաև, որ Արմեն Վանյանի ժառանգների տանը մինչև հիմա էլ արաբական կերակրատեսակների հետ շատ ուրիշ արաբական բառեր էին մնացել ու հուշեր տարբեր արաբ մարդկանց մասին, որոնցից մեկին հատկապես չէր մոռանում Աննա մայրիկը ու մեկ էլ ասում էր ժպտալով, ուրախացած, ինչպես հին մի թանկագին սնդուկից մի շատ հաճելի իր-հիշողություն հանես...

- Մենք մի արաբ բարեկամ ունեինք, Խալիֆ ալ Մահմուդ, շատ ազնիվ մարդ էր...

- Ներեցե՛ք, խնդրում եմ,- այլևս չդիմանալով՝ հարցրեց Վահան Վանյանը:- Ձեզ ինչպե՞ս են մեծարում... Ձեր անունը Խալիֆ ալ Մահմուդ չէ՞:

Արաբը լայն ժպտաց և աչքերի մոտ մանրիկ-մանրիկ կնճիռներ հավաքվեցին.

- Ո՛չ,- ասաց նա,- Խալիֆ ալ Մահմուդը ձեր հոր արաբերենի ուսուցիչն էր, լույս իջնի նրա գերեզմանին, և ձեր ընտանիքի բարեկամը, իսկ ես ջահել էի և ընդամենը կուսակցության մեջ ձեր արժանահիշատակ հոր կրտսեր գործընկերը լինելու պատիվն եմ ունեցել: Միայն այդքանը: Իմ անունն է Ռաշիդե Բեքթար:

Նա կիսաբաց դռնից պատշգամբի կողմը նայեց, որտեղ գիտաժողովի մասնակիցներն ուրախ աղմկում էին, որոնեց ու գտավ կանադացի հռչակավոր գիտնական Ռոբերտ Փորթերին, որը հավանաբար իր իսկ սրամտության վրա քրքջում էր բարձրաձայն, եկավ ու նստեց Վահան Վանյանի դիմաց.

- Բարեկամիս որդի,- ասաց նա:-Ինչո՞ւ ես ուզում Դեր Ջոր գնալ: Ջզիրիե մեկնելու մտահղացումը քոնն է, չէ՞ :

- Այո՛,- հաստատեց Վահան Վանյանը:

- Ինչո՞ւ ես ուզում գնալ: Ինչո՞ւ ես ուզում պղտորել հոգիդ:

- Չեմ կարողանում ապրել: Չեմ կարողանում մոռանալ: Չեմ հանգստանում,- անկեղծորեն խոստովանեց Վահան Վանյանը: Ու նրա աչքերը արցունքոտվեցին կրկին:

- Բայց դու ի՞նչ ես տեսել,- զարմանք հայտնեց արաբ ծերունին:- Մարդիկ մոռանում են այն, ինչ տեսել են: Տեսածը կարելի է մոռանալ կամ չմոռանալ: Դու այդ ի՞նչն է, որ չես մոռանում:

- Մայրս հիշեցնում է,- ասաց Վահան Վանյանը:-Մայրս հիշում ու հիշեցնում է: Հիմա էլ թոռներին: Երբ շատ փոքր էինք, խնդրում էինք հեքիաթ պատմել: Ինչպես բոլոր փոքրերն իրենց մայրերին են խնդրում: Իսկ նա միայն մի հեքիաթ գիտեր, ընդամենը մի հեքիաթ: Փակում էր աչքերն, արտասվում էր ու ասում. «Եփրատը կարմիր կհոսեր»:

- Սոսկալի է,- ասաց ծերունին:

- Մայրիկ,- խնդրում էինք,- ուրիշ հեքիաթ պատմիր, ուրիշ հեքիաթ չգիտե՞ս, ա՛յ մայրիկ, Մոխրոտիկի մասին, քնած արքայադստեր մասին, երեք խոզուկների մասին: Աշխարհում քի՛չ հեքիաթներ կան: Իսկ մայրս փակում էր աչքերը, օրորվում էր տեղում ու ասում. «Եփրատը կարմիր կհոսեր»:

- Հիվանդություն է,- ասաց արաբ ծերունին:- Բժշկագիտությանը հայտնի՞ է նման հիվանդություն, դոկտոր:

- Չգիտեմ,- ասաց Վահան Վանյանը:- Բայց մայրս այդ հիվանդն է: Ես այդ հիվանդն եմ: Եվ իմ երեխաներն էլ այդ հիվանդն են: Ներեցե՛ք ինձ, մեծապատի՛վ պարոն Ռաշիդե Բեքթար: Ներեցե՛ք ինձ:

Ծերունին ձեռքը նրա դաստակին դրեց:

- Աստված տա, որ դուք կարողանաք ներել աշխարհին,- ասաց նա:- Ուրեմն անկասելի համարենք Դեր Ջորը տեսնելու ձեր վճիռը:

- Մայրս սպասում է ինձ,- ասաց Վահան Վանյանը:

Ռաշիդե Բեքքարը երկար ժամանակ լուռ էր և Վահան Վանյանին էր նայում կկոցած բարի, կարեկից աչքերով՝ ինչպես իրոք անբուժելի հարազատին կնայեին:

- Դամակոսում արաբ բարեկամներ ունե՞ք:

- Մանկության ընկերներ ունեմ: Նրանք ճանաչեցին ինձ:

- Վերցրե՛ք դեմքով ձեզ նման մեկի անձնագիրը ու մեկնեցեք թաքուն: Պաշտոնապես ձեզ ոչ մեկը թույլ չի տա: Գիտե՞ք, որ թուրքական կառավարությունը բավականին պատկառելի գումարներ է վճարում և պայմանագիր ունի Սիրիայի կառավարության հետ, որպեսզի ընդհանրապես օտարերկրացիներ չմտնեն Դեր Զոր: Ո՞ւր մնաց՝ հայեր:

- Ինչո՞ւ,- ասաց Վահան Վանյանը:- Ամաչո՞ւմ եմ:

Արաբ կարգադրիչ-քարտուղարը ժպտաց մեղմորեն, ասես ներողամտաբար.

- Չգիտեմ,- ասաց նա:- Երբ խոսքը նրանց մասին է, ես այդ բառը նույնիսկ հեզնանքով չեի օգտագործի: Կուզե՞ք իմ խորհուրդը լսել, բարեկամիս որդի: Քանի որ հաստատապես վճռել էք մեկնել, պարոն Ռոբերտ Փորթերին մի կանչեք ձեզ հետ: Նա ուշադրություն կգրավի: Այնինչ ձեզ պետք է ոչնչով աչքի չընկնել, տեղացի դառնալ, ինչպես մի ժամանակ էիք և անպայման տեղացի ուղեկցող ունենալ: Որովհետև,- ասաց Ռաշիդե Բեքքարը,- ձեր արաբերենը բառարանի լեզու է... Որովհետև ձեր արաբերենի ուսուցիչը այնուամենայնիվ Խալիֆ ալ Մահմուդը չի եղել:

- Մեծապես շնորհակալ եմ: Ես կկատարեմ ձեր բոլոր խորհուրդները,- ասաց Վահան Վանյանը՝ ծերունու մեկնած ձեռքը երախտագիտությամբ սեղմելով:

Ռաշիդե Բեքքարը անմիջապես բաց չթողեց նրա ձեռքը:

- Բայց եթե ես կարողանայի համոզել ձեզ...

- Չի լինի,- գլուխն օրորեց Վահան Վանյանը:- Չի լինի: Ես դրա համար եմ հասել Դամակոս: Ես ասացի, չէ՞, որ այդ հիվանդն եմ, հայրիկի՛ս բարեկամ: Ես անպայման պիտի տեսնեմ այն տեղը, որտեղ մորս իմացած միակ, սարսափելի հեքիաթն է ծնվել: Այլապես չեմ հանգստանա: Ես ուզում եմ իմ աչքերով տեսնել, թե ի՞նչ հեքիաթ է եղել դա, որ արդեն երեք սերունդ պատմում է մայրս ու չի հանգստանում: Այդ ի՞նչ նգովյալ հեքիաթ է, որ հանգիստ չի տալիս մեզ ու վերջ չունի:

*

* *

Ավտոմեքենան ֆրանսիական փոքրիկ ու հին մի «պեժո» էր՝ ձևով ու գույնով ճիշտ զատկի նման և զատկի նման էլ ցատկոտելով էր գնում անհարթ ճանապարհի վրա: Ղեկի մոտ նստած էր արաբի պես թուխ, արաբի անուն-ազգանունով զտարյուն հայ Մովսես Աբաջյանը, որ հանգամանքների բերումով կամ նպատակահարմարության տեսակետից այս աշխարհում ապրում էր Մուսա Աբաջի անունով: Դամասկոսում ապրող նրա հարազատ եղբայրը՝ Գառնիկ Աբաջյանը, որ Վահան Վանյանի մանկության ընկերն էր եղել, հեռախոսով զանգել էր Հալեպ, որտեղ Մուսա Աբաջին էր բնակվում և խնդրել, որպեսզի նա ուղեկցի իրենց հայրենակցին դեպի Դեր Զոր:

Եվ ահա Սիրիայի բիբլիական ճանապարհների վրա, չոր դաշտերի, տատասկների ու ձիթենիների երկարությամբ նեղլիկ «պեժոյի» մեջ, ուս ուսի գրեթե կպած, փափուկ թափքին վերուվար էին անում՝ Երևանից Հալեպ հասած Վահան Վանյանը ու հալեպցի Մուսա Աբաջին: Մուսան այնքան հայերեն գիտեր, որքան Վահանն արաբերեն, բայց իր վիճակից նեղվում էր: Նեղվում էր ու մխիթարում իրեն:

- Գիտե՞ս ինձ հայերեն ովքեր կսովորեցնեն... Չգիտես: Իմ տղաքը: Հայկական դպրոց կհաճախեն:

Վահան Վանյանը վաղուց սրտնեղություն չէր զգում, երբ աշխարհի որևէ ծայրում հանդիպում էր հայի, որ հայերեն չգիտեր և հանգամանքների բերումով կամ նպատակահարմարության տեսակետից, ասենք, իր Թորոսյան ազգանունը Թրուսյա էր դարձրել: Իսկ երբ շուրջ քսան տարի առաջ երիտասարդական մի խմբի հետ Անգլիայում էր, ձեռք չմեկնեց տարեց մի բժշկի, որը ներկայացավ որպես Ջոն Մարտիմեր, իսկ հետո հայտարարեց, թե ինքը հայ է և իր իսկական անունը Կիրակոս Մարտիրոսյան է: Չմեկնեց ձեռքը և ցասումից շողացող աչքերով ասաց, որ ինքը չի ցանկանում ծանոթ լինել մի հայի հետ, որն ամաչում է իր հայկական անունից: Նա սպասում էր, որ Ջոն Մարտիմերը կգայրանա, առնվազն կասի, որ դա նրա գործը չէ, բայց փոխարենը Կիրակոս Մարտիրոսյանը տխրությամբ ասաց հայերեն՝ տառապելով ու հեզելով:

- Եթե ես քեզ պատմեմ, տղա՛ս, թե ինչպես է պատահում, որ Կիրակոս Մարտիրոսյանը դառնում է Ջոն Մարտիմեր, թեթև զրոսանքի համար քեզ տրված երկու շաբաթը ոչ թեթև կթվա և ոչ էլ զրոսանք: Ապրի՛ր և ուրախացի՛ր ուրեմն, որ ոչ քո հայրը և ոչ էլ դու դրա հարկը ունեցած չեք:

Վահան Վանյանը այդ ժամանակ այնուամենայնիվ չհասկացավ, չուզեց հասկանալ և ընդունել որևէ պատճառաբանություն, նույնիսկ ասաց, որ կյանքում երբևէ չի հանդիպել որևէ անգլիացու, ամերիկացու կամ ֆրանսիացու, որը հանգամանքների բերումով ու նպատակահարմարության տեսակետից իր ազգանվանը «յան» ավելացներ:

Եվ հայրենիք վերադառնալուց հետո այդ միջադեպի ու իր հայրենապաշտ, ուղղամիտ դիրքորոշման մասին ոչ առանց հպարտության պատմեց մորը: Եվ հանկարծ Աննա մայրիկը, ճիշտ այն ծեր բժիշկ Կիրակոս Մարտիրոսյանի ձայնով, տխրությամբ ասաց.

- Եթե մի օր իմ քեռիները ձիերը հեծած չմտնեին Դեր Ջոր, իմ ազգանունը, զավակս, արաբական կլիներ և ինձնից ծնված երեխաները՝ արաբներ: Բայց մի թե դրանում մեղավորը ես կլինեի:

- Քոնն ուրիշ է, մայրի՛կ,- այն ժամանակ ասաց Վահան Վանյանը:

- Իսկ մենք ի՞նչ գիտենք, թե ուրիշներին ինչ է,- ասաց մայրը:- Եվ ո՞վ կարող է իմանալ:

Այնպես որ, դոկտոր Վահան Վանյանը դառնությունից բացի սրտի խորքում որևէ դատ չունեի իր արաբացած հայրենակցի դեմ, և եթե դատ ուներ՝ ամենևին էլ նրա դեմ չէր, այդ պատճառով էլ ձեռքը Մովսես Աբաջյանի ուսին դրեց ու ժպտալով ասաց.

- Սովորաբար ծնողներն են մայրենի լեզու սովորեցնում իրենց զավակներին, Մովսես՝ ս եղբայր, քեզ մոտ հակառակն է:

- Հա՛,- ասաց Մովսեսը:- Բայց ես օրինակի համար չեմ: Ուր որ հիմա կերթանք՝ շատ ընտանիքներ կան, որոնց ծնողները հայերեն չգիտեն, բայց հատուկ ուսուցիչներ են հրավիրել Հալեպից ու Դամասկոսից և հայերեն կսովորեցնեն իրենց զավակներին: Եվ ահա զավակներն ալ ծնողներին կսովորեցնեն:

- Դեր Ջորո՞ւմ:

- Դեր Ջորում:

- Դժվար թե որևէ ուրիշ տեղ նման բան լինի,- գլուխը թափահարեց Վանյանը:

- Չգիտեմ,- ասաց վարորդը:- Ես Հալեպից դուրս որևէ տեղ չեմ եղել:

Օրն սկսում էր իրիկնանալ: Մեքենային ընդառաջ վազող շրջապատի բնանկարը մզանում, խտանում էր հետզհետե, սևանում էին ձիթենիների առանց այդ էլ սև, պրկված, ջղաձգված, գալարված բները:

- Ջարմանալու բան չէ՞,- հանկարծ ինքն իրեն ասաց Մովսես Աբաջյանը:- Ես տեսած չկամ Սիրիա եկած մի հայի, որ թույլատրելի և անթույլատրելի ամեն ինչ չանի՝ Դեր Ջորը տեսնելու համար:

- Իսկ այդպիսի մի թուրքի տեսած կա՞ս:

- Չէ՛,- ատամների արանքից նետեց վարորդը:

Ուրեմն սուտ է, բարձրաձայն մտածեց Վահան Վանյանը: Սուտ են և՛ Դոստոևսկին, և՛ իրավագիտական հին ու նոր բոլոր անվերապահ տեսություններն այն մասին, թե հանցանքի վայրը ձգում, քաշում է հանցագործին: Ահա, եկեք, տեսեք ու համոզվեք, ամենագետ պարոն տեսաբաններ, աշխարհի ամենամեծ ոճիրներից մեկն այստեղ է կատարվել, բայց ոչ թե ոճրագործներն են մղվում դեպի իրենց հանցանքի վայրը, այլ՝ զոհերը: Եվ ոչ միայն զոհերը: Չոհերի ժառանգները: Իսկ զոհերից ոմանք նույնիսկ չեն էլ հեռացել նախձիրի վայրից: Մնացել ու ապրում են: Ու արաբական ազգանուններ կրելով հայկական դպրոց են բացում իրենց երեխանե-

րի համար: Դե եկ, եկ ու հասկացիր, թե այդ ի՞նչ մարդիկ են դրանք, թե ի՞նչ ժողովուրդ է սա: Եկ ու բացատրի...

Վահան Վանյանը փակել էր աչքերն ու մտքերի մեջ ընկել: Իսկ երբ բացեց աչքերը, նրան մի պահ թվաց, թե հեռվում տեսած լույսերն այն ցուլքերն են, որ ասես կոպերի տակ են լինում ու հայտնվում են, երբ ամուր փակելուց հետո միանգամից բացում ես աչքերդ: Նա փակեց աչքերն ու բացեց նորից: Լույսերը չանհետացան: Ընդհակառակը, ավելի ու ավելի պարզ ուրվագծվեցին երեք բլուրներ հեռվում, որ շրջապատի թանձր խավարի մեջ վառվում էին կանաչ կրակի նման:

- Սա՞ ինչ հրաշք է,- ականա բացականչեց Վահան Վանյանը:- Սա՞ ինչ գեղեցկություն է...

Մովսես Աբաջյանը չպատասխանեց, բայց չգիտես ինչու ցնցվեց ու միաժամանակ արագացրեց մեքենայի ընթացքը:

- Ես նման գեղեցկություն չէի տեսել,- ամեն ինչ մոռացած, հիացմունքով շարունակեց Վահանը, հետն էլ զարմանալով ուղեկցի անտարբերության վրա:

Հետո անմիջապես էլ մտածեց, թե Մուսա Աբաջին երևի հարյուր անգամ տեսել է այդ կանաչ կրակները և գուցե դրանից է, որ բոլորովին չի զարմանում: Մի՞թե հիմա ինքը զարմանում է, երբ Գառնի է գնում կամ Էջմիածին: Երբ Արարատի գագաթներին է նայում կամ Սևանի ջրերին: Մտածեց ու անմիջապես էլ խոստովանեց, որ զարմանում է, որովհետև անհնարին է չգմայլվել կատարյալ գեղեցիկով, թեկուզ հարյուրերորդ անգամ տեսնես այն:

Իսկ բլուրներն ավելի ու ավելի էին մոտենում՝ պայծառ կանաչավուն լույսով ընդգծելով իրենց, ասես անթիվ անհամար լուսատոտիկներով պաշարված:

- Մի՞թե ֆոսֆորի բաց հանքեր են,- հանկարծ կռահեց ու կրկին սակավախոս ուղեկցին դարձավ Վահանը:

Մովսես Աբաջյանը նրա կողմը թեքեց մռայլված դեմքը:

- Այդ բլուրների մասին ձեզ ոչինչ չե՞ն պատմել, եղբա՛յր:

- Ո՛չ,- ասաց Վահան Վանյանը:- Ջարմանալի է, բայց նույնիսկ մայրս չի պատմել:

- Երբ ձեր մայրն այստեղ է եղել, այդ բլուրները դեռ լույս չէին տալիս,- ասաց Մովսես Աբաջյանը:- Չոհված հայերի ոսկորներից են կազմվել այդ բլուրները, եղբա՛յր: Քամիները եկել, քշել տարել են դրանց վրայի հողը... Այդպես է եղել, եղբա՛յր...

Վահան Վանյանը միանգամից ծակոց զգաց սրտի մեջ ու զգաց, որ շունչը կտրվում է... Դեմքն այրվեց: Ասես ապտակեցին: Ինչպե՞ս թե... Իսկ ինքն ասում էր՝ գեղեցիկ է... ասում էր՝ հրաշք է... Ի՞նչ անավոր սրբապղծություն... Երևի մարդիկ ճիշտ այսպես չհասկանալով, չըմբռնելով ոչինչ, գմայլվել են համակենտրոնացման ճամբարներում արտադրված մազե պայուսակներով, չիմանալով, որ դրանք զոհերի մազերից են հյուսված:

- Ուրեմն Եփրատը մոտերքում է,- որպեսզի չխեղդվի՝ սոսկալի ամաչելով ասաց նա:
- Հա՛,- ասաց Մովսես Աբաջյանը:- Կողքով ենք անցնում:

Վահան Վանյանը շրջվեց այն կողմը, որտեղ գետը պիտի լիներ, բայց ոչինչ չտեսավ: Անասելի մութ էր: Եվ լավ էր, որ մութ էր, որովհետև աչքերից արտասուքներ էին թափվում:

- Կողքին ծառեր կա՞ն,- հարցրեց Վահանը:
- Ի՞նչ,- չհասկացավ նրա ուղեկիցը:
- Ծառեր, ասում եմ, ծառեր կա՞ն:

Մովսես Աբաջյանը չափազանց զարմացավ ու տարակուսանքով թոթվեց ուսերը:

- Կան,- ասաց նա:- Այսինքն՝ կլինեն... Ես ուշադրություն չեմ դարձրել: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ տվեցիր այդ հարցը, եղբա՛յր:
- Է՛հ,- ասաց Վահան Վանյանը,- ինքս էլ չգիտեմ, թե ինչու:

Իսկ մտքում ասաց, եթե ասեմ՝ այս մարդը, որ թեև ստիպողաբար արաբ դարձած, բայց իմ եղբայրն է, ով գիտե, գուցե թե չհասկանա ու խելագարի տեղ դնի ինձ: Բայց ես ուզում եմ փնտրել ու գտնել այն ծառը, որից թուրքերը կապել են իմ տատին, իմ Աննա տատին, երբ մայրս ընդամենը երեք տարեկան է եղել և անունն էլ ոչ թե Աննա, այլ Արշալույս է եղել: Ի՞նչ անեմ, ես այն հիվանդի հիվանդն եմ: Հեռավոր այն օրերից բերած նրա հուշերի ցաք ու ցրիվ պատաստիկների մեջ այդ ծառն է, որ մեխվել է նրա ուղեղում և ողջ կյանքում հանգիստ չի տալիս: Նա այդ ծառն այնքան մանրամասնորեն է նկարագրում. բունը մեջտեղից ճաքած, անջատված էր, ասում է, իսկ երկրորդ ճյուղը բարձրացել ու ձախ էր թեքվել միանգամից, կտրուկ, ու ծառը նմանվել էր մի հսկայական խաչի:

Վահան Վանյանին թվում էր, թե հազար հազարավոր ծառերի մեջ ինքը կգտնի այդ ծառը: Անհնար է, որ չգտնի: Հո բոլոր ծառերը խաչերի չեն վերածվել այդ անտեր անապատում: Նա քուն թե արթուն այնքան էր պատկերացրել այդ ծառը, որ նրան թվում էր, թե հեռվից էլ կճանաչի: Եվ երբ կարդում էր բանաստեղծի տողերը, մտածում էր, որ խոսքն անշուշտ այդ ծառի մասին է եղել. «Մեռելներուս իբրև խաչ ես այս ծառը տնկեցի»: Թեև գիտեր, անշուշտ, գիտեր, որ լրիվ հակառակն է, որ այդ ծառն է խաչ դարձել իր տարաբախտ Աննա տատի համար: Այստեղ, մոտերքում, մութի մեջ, ինչ-որ տեղ...

*

* *

Ամեն ինչ դիվորեն ճիշտ ու հստակ ծրագրավորված էր: Երբ գիշերը թուրք զափթիենները հայերի տները մտան ու հրամայեցին մեկ ժամվա մեջ ճանապարհ ընկնել, հետները վերցնելով միայն ոսկի, թանկագին իրեր և ուտելիք, նրանց ոչ ոք չդիմադրեց: Եվ ո՞վ պիտի դիմադրեր: Քաղաքում տղամարդ չկար: Տղամարդիկ բանակ էին կանչվել, որպեսզի կովեն այն կառավարության համար, որը տեղահան էր արել նրանց ընտանիքները, բոլորին՝ մանուկ թե՛ ծեր, ու ոչ-խարի հոտի նման քշում էր՝ փոշոտ ճամփաներով՝ իրենց անորոշ ու սև ճակատագրին ընդառաջ:

Այդպես մի գիշերվա մեջ դատարկվեց, ամայացավ Կիլիկիայի Այնթափ գյուղաքաղաքը և ողջ հայկական Կիլիկիան:

Քայլում էին թափոր առ թափոր, յուրաքանչյուր թափորում երկու-երեք հարյուր հոգի:

- Ո՞ւր եք տանում մեզ,- հարցնում, հեծեծում էին մարդիկ:

- Դրախտ,- ծիծաղում էին զափթիենները:- Ուղիղ դրախտ ենք տանում: Ձեր աստծու մոտ:

Ու հայիոյում էին, մտրակում ետ մնացողներին, հրում, դուրս նետում ճանապարհից ու թրատում որևէ թփի տակ, որովհետև իրենք էլ չգիտեին, թե ինչ անեն պարապությունից և սաստիկ զայրացած էին, որ իրենք էլ ստիպված պիտի անցնեն նույն ճանապարհը՝ պառավ կանանց անեծքների, քաղցած ու հյուծված երեխաների լացի ու վայնասունի տակ:

Երեք տարեկան էր Արշալույսը, քայլել չէր կարողանում ու լաց էր լինում աղիողորմ.

- Գրկի, մա՛...

Եվ Աննա մայրիկը գրկում էր Արշալույսին, զգուշորեն խոնարհվելով, որպեսզի Լուսնթագը կոնակից ցած չզլորվի և փեշերի մեջ առած մյուս հինգ երեխաներին, քերծված, արյունոտված ոտքերով շարունակում ճամփան: Չորս-հինգ ժամը մեկ զափթիենները թույլ էին տալիս հանգստանալ, ավելի ճիշտ՝ որպեսզի իրենք հանգստանան, և թափորը հենց կանգնած տեղն էլ ցած էր թափվում ճանապարհի փոշու մեջ ու նվվում քաղցից ու ծարավից:

Այսպես քսան օր ու գիշեր քայլելով հասան Եփրատի ափը և երբ հասան ու դեպի գետը վազեցին, որովհետև խելագարվում էին ծարավից, փոքրիկ Արշալույսը հարցրեց.

- Ինչո՞ւ գետը կարմիր կհոսե, մայրի՛կ:

Եվ Աննա մայրիկը լալով ասաց.

- Հայերու արյունով է կարմիր, զավա՛կս...

Հասկացա՞մ, թե հենց այնպես, պատկերավոր խոսքի համար ասաց: Ի՞նչ գիտեր, ինչպե՞ս իմացավ, որ իրոք իրենցից առաջ ընթացող թափորները հերթականությամբ մորթվում ու գետն են նետվում: Հերթականությամբ, ըստ սահմանված ժամկետների, որպեսզի իրար չխառնվեն: Որպեսզի ամեն ինչ հերթով, կարգ ու կանոնով լինի:

Իսկ հետո հերթը նրանց հասավ: Նախ կողոպտեցին բոլորին, ձեռքներից առան ոսկե դրամներն ու զարդերը և ծաղրեցին:

- Դրախտում դրամ պետք չէ: Դրամը մեզ՝ մեղավորներին, այս դժոխքում է պետք:

Հետո ընտրեցին ամենագեղեցիկ երեխաներին և տեղն ու տեղը սակարկելով վաճառեցին թափորի կողքին գիշեր-ցերեկ թափառող, կողոպուտի հույսով թափորին ուղեկցող քուրդ խուժանին ու տեղաբնակ արաբներին: Իսկ երբ ոստիկանապետի առջև կանգնեցին այնթափցի դարբին Սեդրակ Ավյանի կինն ու յոթ չքնաղ մանուկները՝ չորս տղաներն ու երեք աղջիկները, մի իսկական աճուրդ սկսվեց: Գնորդներ շատ կային և լավ էլ գներ էին առաջարկում, բայց ոստիկանապետն այս անգամ հանուն իր երկրի արժանապատվության հրաժարվեց փողից:

- Այս կնոջ ամուսինը՝ դարբին Սեդրակ Ավյանը, ըստ մեզ հասած տեղեկությունների, փախել է մեր փառաբանված բանակից: Դրա համար էլ նրա ամբողջ ցեղը դատապարտվում է մահվան:

Այնժամ Աննա մայրիկը աչքերը երկինք բարձրացրեց ու ասաց.

- Փա՛ռք աստծո, Սեդրակս կփրկվի... Սեդրակս կառնի մեր վրեժը, անգութ անօրեններ:

Նրան ծնկի իջեցրին ու կապեցին ծառից, տարօրինակ մի ծառից, որի բունը ճաքել էր մեջտեղից, անջատվել, երկրորդ ճյուղը բարձրացել, հետո ձախ էր թեքվել միանգամից, կտրուկ, ու ծառը նմանվել էր հսկայական խաչի: Տեսնելով իրենց մորն այդ վիճակում՝ մանուկները ճչացին սրտակեղեք: Սոսկալի էին նրանց աղաղակները, անհնարին էր լսելը, այնքան, որ նույնիսկ թուրք ոստիկանապետը չդիմացավ, ի վերջո մարդ էր, չէ՛, և հրամայեց վերջացնել այդ պատմությունը: Եվ վերջացրին: Վեց երեխաներին մեկիկ-մեկիկ, մեծից մինչև փոքրը հավի ճտերի նման մորթեցին մոր կապկպված ծնկների վրա: Իսկ երբ հերթը փոքրիկ Արշալույսին հասավ, ոստիկանապետը ձայն տվեց.

- Դրան ինձ մոտ բերեք:

Ու մինչ զափթիները նրա հրամանով Աննա մայրիկի ստինքներն էին կտրում և հետաքրքրությամբ դիտում, թե ինչպես է արյունը հորդում մայրական կաթի փոխարեն, ոստիկանը Արշալույսին Եփրատի ափին մոտեցրեց, մի ձեռքից քաշելով պտտեցրեց աղջկան իր շուրջը ու գետը նետեց բղավելով:

- Սա էլ իմ մատաղը:

Եվ այստեղ էր, որ կատարվեց անսպասելին: Մանկամարդ մի արաբուհի անմիջապես գետը նետվեց ու քիչ հետո գրկած դուրս բերեց աղջկան:

- Սա իմն է,- ճչաց նա:- Դուք գցել էք, ես վերցրել եմ... Ուրեմն իմն է...

Ոստիկանապետի ձեռքի մի շարժումով զափթիները արաբուհուց խլեցին աղջկան ու կրկին գետը նետեցին: Բայց արաբուհին կրկին հայտնվեց Եփրատի մեջ ու ափ հանեց աղջկան:

- Բավական է,-լաց եղավ նա:- Մեղք է, էլի...

Արշալույսին երրորդ անգամ նետեցին գետը: Իսկ երբ համառ արաբուհին կրկին նետվեց ալիքների մեջ ու աղջկան փրկեց երրորդ անգամ, թուրք ոստիկանապետը դա երկնային նշան համարեց:

- Թող տանի,- ասաց նա:- Ջհաննամը: Ալլահը չի ընդունում:

Եվ արաբուհին, որը Շաֆիա անունն ուներ, գրկի մեջ ամուր սեղմած գրեթե անշնչացած, ջրահեղձ եղած աղջկա փոքրիկ մարմինը, վազելով տուն գնաց Մուրադ ամուսնուն ուրախացնելու, ասելու, որ աստված վերջապես խղճացել ու երեխա է պարգևել նրանց:

*

* *

Ողբերգական այդ դեպքերից չորս տարի հետո, երբ ավարտվել էր Համաշխարհային առաջին պատերազմը, և թուրքերն իբր թե ցած էին դրել զենքերը, ողջ մնացած հայ ֆիդայիները իջան լեռներից և զգուշությամբ իրենց նախկին բնակավայրերի կողմը գնացին, որպեսզի տեսնեն, թե հնարավորություն կա՞ արդյոք նորից տուն դառնալու: Եվ որպեսզի տեսնեն, թե որտեղ են իրենց ընտանիքները, ի՞նչ են անում, ո՞ւր են ծվարել և վերջապես ո՞վ է պատահաբար ողջ մնացել իրենց գերդաստաններից:

Այնթափցի դարբին Սեդրակ Ավյանը այդ փնտրողների մեջ չէր: Նա անցել էր հայ կամավորական զինվորի իր փառահեղ ճամփան ու գոհվել Սարդարապատի ճակատամարտում: Աստված, որ չէր խնայել նրա ընտանիքը, խնայել էր նրան՝ մարտի դաշտում մահ պարգևելով, որպեսզի նա այդպես էլ չիմանա, թե ինչ է կատարվել իր կնոջ ու զավակների հետ: Այնպես որ Սեդրակ Ավյանը հարազատներին փնտրողների մեջ չէր: Բայց նրա հարազատներին, որ նաև իրենց հարազատներն էին, եփրատամերձ ավազուտներում հարցուփորձ անելով փնտրում էին Աննա մայրիկի ֆիդայի եղբայրները՝ Մանասեն, Սարգիսը, Ղազարը և Հրանտը:

Եվ ահա 1919 թվականի մայիսյան մի օր նրանց զինավառ խումբը հայտնվեց Դեր Զորի աղմկոտ շուկայում: Նրանք անցնում էին շարքից շարք, ուշադրությամբ զննելով մարդկանց, հանդիպած երեխաների դեմքերին փնտրելով իրենց ծանոթ դիմագծերը: Ու հանկարծ եղբայրներից մեկը՝ Մանասեն, մատը մեկնեց յոթ-ութ տարեկան մի աղջկա կողմը ու բացականչեց հուզված.

- Աննա՛ն:

Աղջիկն իրոք որ, ինչպես ջրի երկու կաթիլ նման էր նրանց քրոջը՝ Աննային: Միայն թե նրա կողքին Աննան չէր, այլ գեղադեմ, թուխ մի արաբուհի, որ օտար հայացքներից անհանգստացած, ամուր բռնել էր աղջկա ձեռքը:

Մանասեն շուկայի փոշու մեջ ծնկի իջավ աղջնակի առաջ, մազերին մեկնեց ձեռքը:

- Դու Աննայի աղջիկներից ո՞րն ես, բալա՛ :

Աղջիկը վախեցած ետ քաշվեց, հպվեց մորը ու ինչ-որ բան մրմնջաց արաբերեն: Կինը չարացած, թշնամանքով նայեց զինված օտարականներին:

- Ովքե՞ր եք դուք,- ասաց արաբերեն,- ի՞նչ եք ուզում իմ աղջկանից:

Մանասեն հանեց գլխարկը, եղբայրներին դարձավ.

- Մեռնեմ, թե սա մեր Աննայի աղջիկը չէ: Նրա աղջիկների անունները ո՞վ գիտե, ասեք իրար ետևից.

- Լուսնթագ,- հիշեց Հրանտը:

- Անահիտ էլ կար,- ասաց Սարգիսը:

- Չէ՛, եղբայր, սա իմ հաշվով փոքրը պետք է լինի,- հաշվեց Ղազարը:- Չորս տարի չի՞ անցել: Ուրեմն այն ժամանակ երեք տարեկան է եղել: Սա Արշալույսն է:

Մանասեն կրկին նայեց աղջկան, որ սև, վախվորած աչքերով իր մոռացված քեռիներին էր նայում արաբուհի մոր թևի տակից:

- Լուսնթագ,- շնջաց նա,- հիշեցի՞ր, աղջի՛կս: Անահիտ... քո քույրն է եղել... Արշալույս... Քո անունն Արշալույս է... Արշալույս, Արշալույս, Արշալույս, Արշալույս,- կրկնեց նա իրար ետևից, զարմացած ու վախեցած, որ աղջիկը չի արձագանքում: -Քո մոր անունը Աննա էր... Աննա... հիշի՛ր, հիշի՛ր, զավա՛կս, հորդ անունն էլ Սեդրակ էր... Սեդրակ... Իսկ ես Մանասեն եմ... Ես քո քեռին եմ: Ես քեզ շատ եմ կռնակիս առել, աղջի՛կս... - ասաց նա հուսահատությամբ՝ ձեռքերով ցույց տալով, թե ինչպես էր այդ անում:

Աղջկան երևի թվաց, թե տարօրինակ այդ մարդը դիտմամբ է ծամածովում, որպեսզի ինքը ծիծաղի: Ու հանկարծ ծիծաղեց մանրիկ՝ արաբուհու թևի տակից դուրս չգալով...

- Վա՛յ, մեռնեմ թե Աննայի ծիծաղը չէ,- աչքերն արցունքով լցրեց Մանասեն ու այս անգամ ուղիղ արաբ կնոջը դարձավ:

- Քույրի՛կ ջան,- ասաց նա թուրքերեն:- Վերև-ներքև աստված, սա մեր աղջիկն է:

Բայց կինն արդեն ուշքի էր եկել:

- Մխավվում եք,- ասաց նա շնջալով,- շփոթում եք: Սա ի՛մ աղջիկն է, ի՛մ աղջիկը և անունն էլ Ալինա է:

Նա երևի այնքան ամուր էր սեղմել երեխային իր թևի տակ, որ աղջիկը ցավ զգաց ու լաց եղավ.

- Մայրի՛կ,- ասաց նա արաբերեն,- ես վախենում եմ, արի տո՛ւն գնանք:

Եվ արաբ կինը ժպտաց:

- Լսեցի՞ք, լսեցի՞ք, որ մայրիկ ասաց: Հիմա համոզվեցի՞ք... - ու աղջկա թաթն ամուր բռնած, արագորեն նրան դուրս տարավ շուկայից:

Եղբայրներն իրար նայեցին տարակուսած.

- Գուցե իսկապես սխալվում ենք, մե՛ծ եղբայր,- ասաց Ղազարը:

Մանասեն գլուխն օրորեց:

- Չէ, պատահակա՞ն էր, որ շշուկով էր խոսում: Եթե իսկական մայրը լիներ, գլխին կհավաքեր ամբողջ շուկան, աղմուկ-աղաղակով իրար կխառներ աշխարհը: Բայց նա փսփսալով էր խոսում, որովհետև վախենում էր, թե ուրիշները կլսեն իրենց խոսակցությունը: Իսկ շուկայում անկասկած մարդիկ կգտնվեն, որոնք գիտեն ճշմարտությունը:

- Մեծ եղբայրը ճիշտ է ասում,- համաձայնեց Հրանտը:

- Եթե ճիշտ եմ,- ասաց Մանասեն,- հետևի՛ր, տե՛ս թե ուր է տանում աղջկան այդ կինը:

Նրանք բավականին երկար սպասեցին հողաշեն, փոքրիկ խրճիթի մոտ, որովհետև չէին ուզում մտնել այն տունը, որտեղ արաբ կինը միայնակ էր: Արդեն գիտեին, որ ամուսին ունի: Սպասեցին մինչև տուն եկավ ամուսինը և դարձյալ սպասեցին մինչև որ ամուսինը տեղյակ դառնա պատահարին: Եվ ճիշտ վարվեցին: Երբ նրանք տուն մտան, արաբուհին լաց էր լինում սրտամորմոք՝ աղջկան գրկած, իսկ ամուսինը մռայլ քայլում էր փոքրիկ խրճիթի երկայնքով:

Մուրադ Վահիբի անունով արաբ տանտերը հյուրերին հրավիրեց նստել ու ասաց.

- Այսպես է բանը: Ալինան իրոք որ մեր աղջիկը չէ, բայց երկինքը վկա, որ եթե մերն ունենալինք, ավելի շատ սիրել չէինք կարողանա:

Իսկ Շաֆիա անունով կինը, կյանքում ով գիտե գուցե առաջին անգամ, ընդվզեց ամուսնու դեմ և ցավից խենթացած, ձեռքերը երկինք կարկառած, վշտահար աղաղակեց.

- Իմն է, իմ աղջիկն է սա: Որտեղի՞ց հայտնվեցիք: Երեք անգամ ես եմ նրան Եփրատից հանել: Այս ձեռքերով, այսպես... Որտե՞ղ էիք այն ժամանակ: Որտե՞ղ էիք, երբ սպանեցին նրա մորը, որտեղ էիք, երբ մորթեցին նրա եղբայրներին ու քույրերին: Ես եմ թուրքերից խլել նրան, ու նա իմն է: Նա հիմա ո՞վ ունի, որ տանում էք: Ասում էք, որ հայր էլ չունի, բա էլ ո՞ւր էք տանում: Իսկ ես նրա մայրն եմ, մենք սիրում ենք իրար: Թող ինքն ասի: Կուզե՞ս ինձնից հեռանալ: Առանց ինձ կարո՞ղ ես ապրել, աղջի՛կս...

Երեխան ամուր գրկեց արաբ մոր սև պարանոցը...

- Ես քեզ սիրում եմ,- ասաց նա արաբերեն:- Դու իմ անուշ մայրիկն ես:

- Տեսա՞ք,- արցունքներն աչքին հաղթական գոչեց արաբուհին ու անմիջապես էլ հույսի մի նոր տաշեղ գտավ:- Հետո՞ ինչո՞վ էք համոզված, որ նա ձեր փնտրած աղջիկն է: Դեր Ձորում ու

Ջգիրիեում հարյուր, հազար հայ երեխաներ կան, որ արաբների ու քրդերի տանն ապրում են: Ինչո՞ւ եք կպել մեզանից, ինչո՞ւ եք կարծում, թե հենց սա է ձեր քրոջ աղջիկը: Գուցե շփոթում եք: Անխիդճ բան մի արեք, վերևն աստված կա...

Եվ հանկարծ եղբայրներից փոքրը, որ Հրանտն էր, ու անընդհատ ինչ-որ բան էր ուզում հիշել, կամացուկ ձայն տվեց.

- Արշի՛կ...

Աղջիկը ցնցվեց ու նրան նայեց:

- Արշի՛կ,- ասաց Հրանտը:- Հիշո՞ւմ ես, որ խաղում էինք... Ես քո քեռի Հրանտն եմ: Հիշո՞ւմ ես, որ կանչում էի՝ «Մկնիկ, մկնիկ, տոտ, տոտ, տոտ, շուտ վազի քեռիի մոտ»: Հիշեցի՞ր դու ինչ է- իր անում, Արշի՛կ...

Եվ հանկարծ բոլորի զարմացական հայացքների տակ աղջիկը պոկվեց մոր ձեռքից ու վազե- լով քեռու գիրկն ընկավ: Ընկավ գիրկը, բարձրացրեց գլուխը և ինչ-որ բան շնջաց...

- Ի՞նչ,- տեղից վեր թռավ Հրանտը:- Ի՞նչ ասացիր, աղջի՛կ ջան, ի՞նչ...

Եվ աղջիկը՝ կիտելով հոնքերն ու տառապելով, մոռացած հայերենով շնջաց.

- Եփրատը կարմիր կհոսեր...

- Բավական է,- տեղից ելավ և օձիքը քանդեց արաբ Մուրադ Վահիբը,- լինելու բանը պիտի լի- նի, ա՛յ կին... Աղջկադ շորերը պատրաստիր թող գնա: Թող գնա ծխի իր կորցրած ընտանիքի ծուխը: Աստծո կամքն է...

- Տղամարդու խոսք է,- աչքերը թևքով սրբեց, գլուխը խոնարհեց Մանասե քեռին:

Եվ բոլոր քեռիներն էլ ոտքի կանգնեցին, ձեռքները կրծքներից դրեցին ու խոնարհեցին իրենց գլուխները:

Ողջ գիշեր չքնեցին:

Վաղ առավոտյան, աղամամութին, երբ դեռ շոգ չէր, անուրախ քարավանը ճանապարհ ընկավ դեպի Հալեպ: Հալեպ, որովհետև ըստ հասած լուրերի, թափառելով, թափառելով այնտեղ էին բուն գտել Մանասեի ու Սարգսի ընտանիքները: Մյուս եղբայրները դեռ ընտանիք չունեին: Գրեթե մինչև ճանապարհի կեսը Շաֆիան և Մուրադը ձիերով ուղեկցեցին նրանց և ամբողջ ճանապարհին Արշալույսը նստած էր իր արաբ մայրացուի թիկունքում, փոքրիկ ձեռքերով գրկած նրա մեջքը...

Անջատումը սուկալի էր: Արշալույսը փարվել էր իր Շաֆիա մորը, ճչում էր սրտակեղեք և բա- ժանվել չէր ուզում: Չէր ուզում երկրորդ անգամ կորցնել մորը...

Հետո Մուրադ Վահիբը ձիու թամբին զգված խուրջինի միջից մի կապոց հանեց ու մեկնեց Մա- նասեին:

- Սա ի՞նչ է,- հարցրեց Մանասեն:

- Մեր աղջկա բաժինքն է,- չդիմացավ, փուլ եկավ Մուրադ Վահիբը:- Թող բախտավոր լինի մեր Ալինան ու հիշի, որ իր հարազատ ծնողներից բացի, իրեն շատ սիրող արաբ ծնողներ էլ է ունեցել: Է՛հ, ասաված ձեզ հետ...

Քարավանը վաղուց կիսվել էր, ձիավորները վաղուց հեռացել էին իրարից, բայց Դեր Զորից Հալեպ տանող փոշոտ ճամփեքին դեռ երկար ժամանակ հնչում էր փոքրիկ Արշալույս-Ալինայի սրտակեղեք ձայնը, որն իր արաբ մայրացու Շաֆիային էր կանչում:

Եվ հենց այդտեղ, ճանապարհին էլ եղբայրները վճռեցին Աննա կոչել Արշալույս աղջկան, իրենց քրոջ անունը պահպանելու համար: Եվ Աննա անունով էլ հետագայում Բեյրութ տարան նրան, Բեյրութի մոտ գտնվող «Թռչնոց բույն» ավանը, որտեղ մեծահարուստ բարերար Մարի Յակոբսոնը հսկայական մի որբանոց էր բացել անտեր մնացած հայ մանուկների համար, հայկական դպրոց էր բացել ու արհեստանոցներ, որպեսզի դպրոցն ավարտելուց հետո հայ երեխաները նաև որևէ մասնագիտություն ունենան, կարողանան ապրել ու նորից չկորչեն աշխարհում: Իմաստուն ու մեծահոգի այդ կինը, որին բոլոր սաները երախտագիտությամբ «Մայրիկ» էին անվանում, մինչև վերջ էլ հետևում էր, թե ուր են գնում, ինչ են դառնում իր հոգեզավակները և իր միջոցներով օգնում էր նրանց մասնագիտական կրթություն ստանալու: Հենց նրա օգնությամբ և նրա միջոցներով էլ Աննան ավարտեց բժշկական ուսումնարանը, դարձավ մանկաբարձ և գործուղվեց Դամասկոս՝ բժիշկ Մելիքյանի հիվանդանոցում աշխատելու: Եվ Դամասկոսում էլ հետագայում հանդիպեց ու սիրեց իր ապագա ամուսնուն, կոմունիստ Արմեն Վանյանին: Եվ երեխաներ ունեցավ, որոնց հայերեն էր սովորեցնում ու հեքիաթներ էր պատմում և ամեն մի հեքիաթ սկսում էր նույն խոսքերով, նույն, նույն խոսքերով և դրա դեմ ոչինչ չէր կարողանում անել:

- Եփրատը կարմիր կհոսեր...

*

* *

- Հասանք, դոկտո՛ր,- ասաց Մովսես Աբաջյանը:

Վահան Վանյանը բացեց հոգնած, այրվող կոպերը:

«Պեժո» գատիկը դանդաղ առաջ էր սահում նեղլիկ մի փողոցով, փոքրիկ լապտերներով շոշափելով տների համարները: Հետո կանգ առավ, անշարժացավ երկհարկանի մի տան մոտ: Տանը լույս չկար:

Մովսես Աբաջյանը ցած իջավ ավտոմեքենայից, բարձրացրեց գլուխն ու ձայն տվեց կամացուկ.

- Վահրա՛մ:

Երկրորդ հարկում անմիջապես լույս վառվեց, և պատուհանի մեջ հայտնվեց տանտիրոջ գլուխը:

- Հրամմեցե՛ք: «մ»-երը տարօրինակ ընդգծելով՝ առաջարկեց Վահրամը:

- Մա՛րդ աստծո, - ծիծաղեց Մովսես Աբաջյանը: - Չես էլ հարցնում՝ ով է:

Վահրամը ծիծաղեց.

- Երբ հայերեն կլսեմ, էլ ինչ հարցնեմ: Մուսա՞...

- Ես եմ, ես... Մովսեսն եմ, - ամաչեց Մուսա Աբաջին, - հյուր եմ բերել Հայաստանից... Վահրամ եղբայր:

Երբ Վահան Վանյանը լույսից կկոցած աչքերով դերգորցի Վահրամ Մուշեղյանի տան հյուրասենյակը մտավ, նրան մի պահ թվաց, Երևանում է, ինչ-որ տեղ՝ Բուրանիա թաղամասում: Պատերին, թարեքների վրա, ամենուրեք, Հայաստանն էր: Նախ մեծ ու գունավոր Մովետական Հայաստանի քարտեզը: Հետո պղնձակովի Սասունցի Դավիթը, Թամարը՝ գլխից վեր ջահը բռնած, Արարատի ճերմակ գագաթներն ու Գառնին, Էջմիածնի Մայր տաճարն ու Լենինի հրապարակը: Եվ շատ-շատ գունավոր բնանկարներ՝ հավանաբար պոկված պատկերազարդ հանդեսներից ու խնամքով շրջանակված:

- Գրքերիս տեղը նայեք, - հպարտ առաջ ընկավ Վահրամ Մուշեղյանը՝ արաբերենն ու հայերենը իրար խառնելով: - Շատ գրքեր ունենք, Բաֆֆիից մինչև Պարոյր Սևակ: Տղաներս ամբողջ ստացածը գրքի կուտան: Բայց ես ուրախ եմ, գիտե՛ք... Ես ալ կկարդամ... կկարդամ ու կզարմանամ, թե ինչ աղվոր լեզու ունենք:

Փարթամ մարմնով բարետես մի մերիկ գրեթե անշշուկ սեղան էր գցում:

- Կինս է, - ասաց Վահրամ Մուշեղյանը: - Կամաչի խոսել, որովհետև հայերեն քիչ գիտե: Ես ալ աղել չգիտեմ, սակայն չեմ ամչնար: Կուրախանամ: - Ու հանկարծ վախեցած դիմեց հյուրին: - Մխա լ կխոսեմ, դոկտո ը...

- Չէ՛, - ակամա ժպտաց Վահան Վանյանը: - Անման է...

- Մեր տղաները մեզի հայերեն կսովորեցնեն, - ծիծաղեց Վահրամ Մուշեղյանը: - Մենք Դեր Զորի որբերից ենք: Ես արաբի տան մեջ եմ մեծացել, Սրբուկս՝ քրդի: Երբ մի քիչ մեծացանք ու իմացանք, որ հայ ենք, գտանք իրար ու ամուսնացանք: Եվ շատերը ճիշտ մեզ նման, հենց կիմանային, որ հայ են, շտապ-շտապ կամուսնանային իրենց նման մի որբ հայի հետ ու ընտանիք կկազմեին, որ հայ մնան: Թեև մեզանից ոչ մեկը հայերեն չգիտեր...

- Իսկ ինչպե՞ս էիք իմանում, որ հայ եք, - հարցրեց Վահան Վանյանը:

- Արաբի, քրդի երեխաներն էին մատնում ու մատնելով լավություն անում, - ծիծաղեց Վահրամ Մուշեղյանը: - Հենց որ խաղի ժամանակ կովում էինք, ասում էին զայրացած. «Դու հայ ես, քեզ

իմ հայրը փողով է առել թուրքերից»։ Այնպես որ, վերջիվերջո բոլոր հայերն էլ իմացան, թե ով են իրենք և տեսան իրենց գլխի ճարը։ Հիմա մենք բավական շատ ենք, գիտե՛ս, դուկտո՛ր,- հպարտ ասաց դերգործի Վահրամ Մուշեղյանը։- Հայկական դպրոց ունենք, եկեղեցի ունենք, ակումբ ունենք...

- Իսկ երեխաները՞,- հարցրեց Վահան Վանյանը, շուրջը նայելով, զարմացած, որ ինչպես հաճախ է լինում, լի սեղանի հետ միաժամանակ չեն հայտնվում երեխաները։

Ու պարզվեց, որ ի՞նչ երեխաներ. Վահրամ Մուշեղյանի երեխաներից հինգն արդեն իրենք երեխաների տեր են։ Վեց զավակ ունեն Վահրամն ու Սրբիկը («Թուրքերի ինատու» - ծիծաղեց Վահրամը)։ Բոլորն ամուսնացած են ու իրենց ընտանիքներով, որը Հալեպում է ապրում, որը Դամասկոսում («Բոլորին ծանոթ եմ,- հանկարծ ասաց Մովսես Աբաջյանը։ Փնտրեց, փնտրեց հարկավոր մի բառ ու մեկ էլ ասաց,- շշմելու հայեր են»)։ Իսկ ամենափոքրն ու միակ չամուսնացածը հայրենիք է գնացել, Երևանի բժշկական ինստիտուտում է սովորում։ Կավարտի, ետ կգա Դեր Զոր։

- Կուզեմ, որ քեզ նման մեծանուն դուկտոր դառնա,- ասաց Վահրամ Մուշեղյանը։- Մուսան... Մովսես եղբայրս ինձ պատմեց, թե ով ես դու հայրենիքի մեջ և ասաց, որ դու նույնպես որբի զավակ ես՝ ծնված Դամասկոսում։ Սրանից հետո հայրենիքից ստացած լրագրերի մեջ մեծ սիրով քո անունը կփնտրեմ... Տղաս ինձ լրագրեր կուղարկե։ Շատ բան չեմ հասկանա... բայց հոգ չէ։ Կտեսնեմ, որ հայերեն է, կուրախանամ։

Թեև դպրոց ունեին, եկեղեցի ու ակումբ, բայց ինչպես երևաց, հայերենի շատ էր կարոտ դերգործի Վահրամ Մուշեղյանը։ Ողջ գիշեր չթողեց, որ հյուրը քնի, հարցեր էր տալիս, խնդրում Հայաստանի մասին պատմել ու լսում էր հիացած, հիացմունքից աչքերը փակ, օրորելով գլուխը, հետո ժպտաց գոհ ու բավարարված և ասաց.

- Տղայիս ե՛ս հայրենիք ուղարկեցի։ Մայրը կուլար...

Վահրամ Մուշեղյանը լռեց միանգամից ու շրջվեց, որպեսզի թաքուն սրբի նաև իր աչքերին հայտնված արցունքը, և Վահան Վանյանը վերջապես ինքն էլ հարց տալու հնարավորություն ստացավ։

- Հորեղբա՛յր,- ասաց նա։- Այստեղ ժամանակին Մուրադ անունով մի արաբ է եղել, կնոջ անունը՝ Շաֆիա, կա՞ն այդ մարդիկ, ի՞նչ են անում, շատ կուզենայի տեսնել նրանց։

Վահան Մուշեղյանը հյուրին նայեց զարմացած.

- Դու նրանց որտեղի՞ց գիտես։ Հարկավ կճանաչեի, պատվական արաբներ էին և Մուրադն էլ գյուղապետն էր, երբ մահացավ։ Մեկ շաբաթվա մեջ մահացան, գիտե՛ս, 1955-ին։

- Ոչ ոք չունե՞ն իրենցից հետո,- հարցրեց Վահանը՝ հուզմունքից խոպոտած ձայնով։

- Ո՛չ,- ասաց Վահրամ Մուշեղյանը։- Շատ-շատ առաջ նրանք հայի մի աղջկա են խլել թուրքերի ձեռքից ու պահել։ Բայց մի քանի տարի հետո հարազատները եկել, տարել են աղջկան։ Այնպիսի մի հարված ու ցավ է եղել դա բարի մարդկանց համար, որ այլևս չեն փորձել նոր

երեխա վերցնել ու այդպես էլ հեռացան կյանքից՝ անմխիթար ու անժառանգ: Ասում են, թե միշտ հետևել են այդ աղջկան, կապի մեջ են եղել, մինչև որ աղջիկն ամուսնացել ու գնացել է Հայաստան: Մինչև իրենց կյանքի վերջն էլ խեղճ ծերունիները նամակ կապասեին Հայաստանն:

- Նամակի փոխարեն ես եկա,- ասաց Վահրամ Վանյանը:- Նրանց պահած այդ աղջիկն իմ մայրն է...

Վահրամ Մուշեղյանը նրան նայեց զարմացած ու տրտմությամբ:

- Եվ ինչո՞ւ նամակ չգրեց,- հարցրեց նա մի այնպիսի ցավով ու հանդիմանանքով, ասես դրանից ամեն ինչ կարող էր փոխվել:- Ինչո՞ւ նամակ չգրեց, դոկտո՞ր...

Հետո մտածեց-մտածեց, իր համար պատասխան գտավ երևի, որովհետև մեղմացավ հանկարծ ու ասաց.

- Ափսո՛ս, գոնե ապրեին այնքան, որ քեզ տեսնեին, մեծ մխիթարություն կլիներ, դոկտո՞ր: Հա՛զար ավիսու:

Առավոտյան նրանք դուրս եկան տնից, սուրճ խմեցին փոքրիկ պարտեզում, որ Վահրամ Մուշեղյանը իր ձեռքով պատրաստեց, հետո Վահրամն ասաց.

- Գնանք:

- Մովսեսը,- հիշեցրեց Վահան Վանյանը:

- Թող քնի,- ասաց Վահրամը:- Դժվար ճանապարհ պիտի գնա:

Նրանք քայլում էին դեպի բլուրները, և Վահրամ Մուշեղյանը հարցրեց.

- Լույսերեն վախեցա՞ր, դոկտո՞ր:

Վահանը հիշեց, թե ինչպես էր միամտորեն հիանում բլուրների կանաչ լույսով, շատ ամաչեց ու ասաց անկեղծորեն.

- Երբ իմացա, թե ինչ են, սարսափեցի, հորեղբա՛յր:

Գրեթե բլուրներին էին հասել, երբ Վահան Վանյանը նկատեց մի մարդու:

- Մեզնից ավելի շուտ եկած մարդ էլ կա այստեղ,- զարմացավ նա:

- Պահապանն է,- ասաց Վահրամ Մուշեղյանը, խոնարհվեց թեթևակի, ձեռքն աչքին դրեց ու ձայն տվեց արաբերեն:- Բարի լո՛ւյս, հայրենակի՛ց:

- Բարի լո՛ւյս, Վահրա՛մ եղբայր,- մոտեցավ արաբը և Վահան Վանյանին նայեց:- Ո՞վ է, քո հյո՞ւրն է:

- Իմ հյուրն է,- ասաց Վահրամը:

Արաբը ժպտաց ու օրորեց գլուխը:

- Ի՞նչ ես ուզում, Վահրամ,- հարցրեց նա:- Ինչո՞ւ չես հանգստանում, ա՛յ մարդ:

- Չեն թողնում,- հառաչեց Վահրամ Մուշեղյանը՝ տխրած հայացքը բլուրներին:- Չեն թողնում, եղբա՛յր: Եվ նրան էլ չեն թողնում,- ասաց նա՝ հիմա էլ Վահանին ցույց տալով:- Դամասկոսից է եկել բարեկամս: Չի հանգստանում:

Նա սիգարետի մի տուփ մեկնեց պահապանին: Պահապանը շտապով մի սիգարետ հանեց միջից և տուփը ետ վերադարձրեց անկամ շարժումով, բայց Վահրամը տուփի հետ ետ մղեց նրա ձեռքը: Նրանք առաջ անցան նեղլիկ արահետով ու քիչ անց ինչ-որ քարանձավի հասան, որը շատ նեղ մուտք ուներ:

- Ի՞նչ է սա,- ակամա շշուկով հարցրեց Վահան Վանյանը:

- Դե որ եկել ես, պիտի տեսնես,- ասաց Վահրամը:- Նե՛րս մտիր:

Վահան Վանյանը դժվարությամբ, ուները քարերին քերծելով ներս մտավ քարանձավի մուտքից, բարձրացրեց գլուխն ու սարսռաց: Հսկայական մի քարանձավ, ավելի ճիշտ ահռելի մի կիրճ լցված էր մարդկային ոսկորներով, կմախքներով, անջատ-անջատ ոտքերով ու ձեռքերով, գանգերի բլուրներով:

Մեծ դժվարությամբ պահեց իրեն, որ ուշագնաց չլինի, ուժեղ սրտխառնուք զգաց և գլուխը հպեց կողքի սառը ժայռաբեկորին: Նա, որ բժիշկ էր երկար տարիներ և շատ բան էր տեսել աշխարհում, մնաց ապշած և զգաց, որ ցնորվում է: Հեղձուկը բարձրացավ, բռնեց կոկորդը, ու իր համար էլ անսպասելի, քանի որ կարծում էր, թե նախապատրաստված է, Վահան Վանյանը լաց եղավ բարձրաձայն, լաց եղավ ցնցվելով ու պոռթկալով, կռանալով ցավից ու գրկելով թուլացած ծնկները:

- Բայց ինչի՞ համար, ախր ինչի՞ համար,- գոռում էր նա հեկեկոցի միջից,- ախր ինչի՞ համար: Եվ ոչ ոք պատասխան չի տալու: Ոչ մեկը՝ ... Ու սրանից հետո հանգիստ ապրո՞ւմ են...

Վահրամ Մուշեղյանը խոր հոգոց հանեց...

- Է՛, տղա՛ս, սա միակ կիրճը չէ,- ասաց նա:- Ամեն մեկի մեջ 15-20 հազար հայերի են լցրել և փակել քարանձավների բերանները: Ու մարդիկ խեղդամահ են եղել և մեռել քաղցից:

Վահան Վանյանն էլ լաց չէր լինում: Միայն տնքում էր ցավից, ասես կտոր-կտոր էլ լինում սիրտը: Հետո երևի հանգստացավ մի քիչ, որովհետև ասաց.

- Գնանք, Վահրամ՝ հորեղբայրս, ես ուզում եմ մյուս քարանձավներն էլ տեսնել:

- Պետք չէ,- մեղմությամբ առարկեց Վահրամը:

- Ինձ պետք է,- ասաց Վահան Վանյանը:

Երբ նրանք դուրս եկան վերջին քարանձավից ու թափ տվեցին շորերի փոշին, Վահանը կարծես թե նոր միայն ուշքի եկավ ու տեսավ, որ իրենցից քիչ այն կողմ անցնում է Եփրատը: Գետը հոսում էր հանդարտ, անալիք, լուռ ու անվրդով, ասես աշխարհում չէր կատարվել ոչինչ, ասես չէր տեսել, թե ինչպես է մորթվում մի ամբողջ անգեն ժողովուրդ, չէր լսել իրենց պատիվը պահպանելու համար ալիքների մեջ նետվող կույսերի ցավագին աղաղակները, չէր զգացել, թե ինչպես են վարարում ու կարմրում իր ջրերը հայ մարդկանց արյունից:

- Եփրատը կարմիր կիռներ,- մրմնջաց Վահան Վանյանը:

Դերգորցի Վահրամ Մուշեղյանը հասկանում ու չէր խանգարում նրան, և Վահան Վանյանը դեռ երկար կանգնած էր Եփրատի ափին ու մանկական միամտությամբ այն ծառն էր որոնում գետամերձ ավազուտներում, այն ծառը, որ մոր պատմելով, հիսունհինգ տարի առաջ խաչի էր եղել նման:

Երբ վերադառնում էին, ամեն մեկն իր մտքերի մեջ, Վահան Վանյանը զգաց, որ արաբ պահապանը հեռվից հետևում է իրենց:

- Ի՞նչ է ուզում,- նեղսրտած հարցրեց նա Վահրամ Մուշեղյանին:- Այդ արաբն ինչո՞ւ է հետևում մեզ, հորեղբայր:

- Իր գործը հսկելն է,- ասաց Վահրամը:- Քեզ չե՞ն ասել, դոկտոր, որ այս վայրերը կառավարության հսկողության տակ են և պահպանվում են խստորեն:

- Ինչո՞ւ,- հարցրեց Վահան Վանյանը:- Սիրիայի կառավարությունն ինչո՞ւ է պահպանում այս ամենը:

- Հայերի խնդրանքն է: Որպեսզի մնա իբրև սոսկալի հիշեցում, իբրև զգուշացում:

Վահան Վանյանը թոթվեց ուսերը:

- Բայց օտարականներին չի թույլատրվում ձեր կողմերը գալ: Ուրեմն էլ ո՞վ պիտի տեսնի: Էլ ո՞ւմ համար են այս հիշեցումն ու զգուշացումը:

Վահրամ Մուշեղյանը խեղճացավ հանկարծ, կծկեց ծերունական ուսերն ու հառաչեց.

- Այդ հարցը տալու դու ուրիշ մի տեղ չունե՞ս, դոկտոր...

*

* *

Կանադացի կենսաբան Ռոբերտ Փորթերը այնպիսի մի հրճվագին աղմուկ-աղաղակով դիմավորեց նրան, ասես հույս չէր ունեցել այլևս հանդիպելու ընկերոջը:

- Եկա՞ր: Թող տեսնեմ ոնց ես: Ինչո՞ւ ինձ էլ չտարար քեզ հետ, Վահան: Այդ ի՞նչ խաղ էր: Դու ինձ բորբոքեցիր, տակնուվրա արեցիր հոգիս, տրամադրեցիր ինձ ու... Ի վերջո քո գործն է... Բայց ի՞նչ է պատահել քեզ, այս ի՞նչ ես դարձել, երկու օրվա մեջ այդքան նիհարել կլինի... Ի՞նչ տեսար, Վահան, հաջողվե՞ց լինել այն վայրերում, որ մայրդ նկարագրել էր: Արաբ տատդ կա՞ր... Եփրատը տեսա՞ր... իսկ...

- Ամեն ինչ տեսա,- ասաց Վահան Վանյանը:

Նրա ձայնը այնքան տխուր ու խռպոտ հնչեց, որ Ռոբերտ Փորթերը լռեց անմիջապես ու սպասումով նայեց ընկերոջը:

- Ես տեսա ու հասկացա ամենակարևորը,- ասաց Վահան Վանյանը:- ... Ես հասկացա, թե ինչու էր իր հեքիաթը մայրիկս սկսում միշտ նույն բառերով՝ Եփրատը կարմիր կհոսեր: Մարդկային հիշողությունը կարճ է, և նա վախենում էր, թե մի օր, երբ ազգը երջանիկ կկարծի իրեն, հանկարծ կմոռանա Դեր Ջորը: Եվ կրկնում էր, որպեսզի և՛ ինքը հիշի, և՛ իր զավակները... Ու հիմա էլ կրկնում է, որ թոռները հիշեն... չմոռանան...

Ռոբերտ Փորթերը սիգարետ վառեց ու խոր ներս քաշեց ծուխը:

- Ծանր ժառանգություն է,- ասաց նա:

Վահան Վանյանը տարուբերեց գլուխը...

- Ես շատ եմ ափսոսում, Ռոբերտ, որ քեզ ինձ հետ չտարա: Ես միայն այնտեղ հասկացա, թե ինչու էր իմ Աննա մայրիկը ուզում, որ ես իմ աչքերով տեսնեմ Դեր Ջորը: Որովհետև ով իր սեփական աչքերով չի տեսել Դեր Ջորը, Օսվենցիմյան ու Բուխենվալդը, նա խաղաղության մասին կխոսի ընդհանրապես... Ընդհանուր առմամբ... Այնինչ խաղաղության մասին պետք է կոնկրետ խոսել, տեսածի մասին ասել և մարդկությանը զգուշացնել փաստերով: Ես ընդդեմ պատերազմի, ընդդեմ ցեղասպանության, հանուն խաղաղության մեր այս բոլոր գիտաժողովները Բաբյի Յարում կանցկացնեի և Դեր Ջորում... Իսկ մենք հավաքվում ենք ժամանակակից հիանալի քաղաքներում, ապրում փարթամ հյուրանոցներում, ուտում կերակուրներից ամենաընտիրները և նորաձև հագնված, օսլայած վերնաշապիկներով ու մոդայիկ կարմիր փողկապներով ամբիոն ելնում, որպեսզի ընդհանրապես խոսենք խաղաղության մասին... Ընդհանրապես: Երբ պետականորեն կազմակերպված առաջին ցեղասպանությունը ուղիղ քո կողքին է կատարվել: Երբ պատերազմի բերած ամենամեծ աղետն ու ոճիրը որպես իրական փաստ, որպես ահեղ նախազգուշացում գտնվում է գրեթե քո աչքերի առաջ: Սակայն, ինչպես համոզվեցիր, մարդկանց չեն թողնում տեսնել այդ ամենը...

- Բայց ինչո՞ւ,- հարցրեց Ռոբերտ Փորթերը:- Ինչո՞ւ... Ուրեմն ինչ-որ ուժերի ինչ-որ պատճառով ձեռնտու չէ, պետք չէ, որ մարդիկ տեսնեն այդ ամենը:

Վահան Վանյանը իր բարեկամին նայեց անքնությունից ու ապրած տառապանքից այրվող աչքերով:

- Ես այդ հարցը դերգորցի մի ծեր որբի տվեցի:

- Եվ ի՞նչ...

- Եվ նա ասաց՝ այդ հարցը տալու դու ուրիշ մի տեղ չունե՞ս, դոկտոր:

1987թ.

Հեռախոսագրքեր

Արմեն Գասպարյանը մտավ հյուրանոցի իր սենյակը, շնորհակալություն հայտնեց սպասավորին, որը փայտե ցածրիկ պատվանդանին տեղավորում էր ճամպրուկները, մոտեցավ հեռուստացույցին, միացրեց ու նոր միայն նայեց շուրջը:

Հիանալի համար էր:

Պատուհանի տակ կամացուկ խշշում էր գովացնող սարքը, ռադիոբարձրախոսի վրայի կոճակները վկայում էին, որ միաժամանակ հաղորդվում է մի քանի ծրագիր: Մանուշակագույն կերպասով ծածկված լայն, փափուկ մահճակալը ձգում էր մագնիսի նման: Անկյունում հենված էր սառնարանը: Մահճակալի աջ կողմում, փոքրիկ պահարանիկի վրա հեռախոսի տափակ ու լայն մի սարք էր դրված:

Արմեն Գասպարյանը մոտեցավ հեռախոսի պահարանին, թեքվեց, բացեց հենց առաջին արկղը ու այնտեղից երկու հաստ գիրք հանեց: Նայեց գրքերին, մեկը զգուշությամբ դրեց մահճակալի վրա, մյուսը կրկին տեղավորեց դարակում և գնաց դեպի հեռուստացույցը, որպեսզի բարձրացնի ձայնը: Տարեց ու ճաղատ մի մարդ ինչ-որ բան էր համոզում հեռուստադիտողներին, երբեմն-երբեմն մատնացույց անելով թվերով ծածկված աղյուսակները: Արմենը պտտեց կոճակը: Երկրորդ ծրագիրը գովազդներ էր հաղորդում: Երրորդում որոտում էին ատրճանակները. ամերիկյան կովբոյական նկար էր: Չորրորդ ծրագրում ստադիոնի ահավոր գոռում-գոչունի տակ խաղում էին ավստրալական ֆուտբոլ ձվաձև ինչ որ գնդակով: Հետո ֆուտբոլն անջատվեց, ու իրար հետևեցին մուլտիպլիկացիոն գովազդները. «Գնեցեք կոկա-կոլա», «Չմոռանաք ծխել «Փոլ Մոլ» և ուտել տարօրինակ անունով ինչ-որ մածուկ:

Արմենը կրկին պտտեց հեռուստացույցի կոճակը: Ողջ էկրանով մեկ կանգնած էր գերմանացի էսեսական մի սպա՝ սև համազգեստով, գանգեր ու խաչեր մերակներին և ձեռքին մտրակ:

- Դու խոզ ես,- գոռում էր նա՝ ատելությամբ նայելով իր ոտքերի տակ,- խոզ ես, խոզ, իսկական անգլիական խոզ: Քեզ մորթել է պետք:

Կամերան իջավ դանդաղ, և պարզվեց, որ էսեսական սպայի ոտքերի մոտ իսկապես պարարտ, սպիտակ մի խոզ է կանգնած:

Շատ սրամիտ էր արված, կարելի էր ծիծաղել ամբողջ սրտով, բայց Արմենը չծիծաղեց: Նա միայն կրկին հայացք նետեց մահճակալին ընկած հեռախոսագրքին, մոտեցավ, վերցրեց, բացեց առաջին էջը, նայեց, հետո փակեց արագ, դրեց պահարանի վրա ու ետ տանելով մանուշակագույն ծածկոցը, պառկեց մահճակալին:

Ու նոր միայն զգաց, թե որքան հոգնած է:

Պատուհանից երևում էին ինչ-որ արտասովոր ծառերի բարձր սաղարթները՝ վառ կարմիր, խոշոր ծաղիկներով, իսկ նրանց արանքում, պատուհանով մեկ երկինքն էր՝ մաքուր, անամպ, երկնագույն:

«Երկնագույն երկինք»՝ իր մտքի վրա ժպտաց Արմեն Գասպարյանը, բայց ուրիշ ոչ մի պատկեր չգտավ: Ո՛չ լուրթը, ո՛չ լագուրը, ո՛չ կապույտը այն չէին: Իսկ ինքը քիչ առաջ թռչում էր այդ երկնքով:

Որքա՞ն տևեց թռիչքը: Մոսկվայից մինչև Դելի՝ վեց և կես ժամ: Հետո՞ : Հետո Սինգապուր: Դելիից մինչև Սինգապուր ևս հինգ և կես ժամ: Չորս ժամ Սինգապուրից մինչև Ավստրալիա, Դարվին: Իսկ որքա՞ն էր Դարվինից մինչև այստեղ, Սիդնեյ: Հա, իհարկե, ուղիղ Երևան-Մոսկվա երթուղու չափ, եթե թռչում ես Իլ-18-ով: Երեք ժամ քսան րոպե: Չէ, այդքանը մինչև Բրիզբեն էր: Իսկ Բրիզբենից մինչև Սիդնեյ թռան ևս մեկ ժամ տասը րոպե:

Ուրեմն, թռել են ավելի քան քսան ժամ: Խելագարվե՛լ կարելի է:

Նրա մարմինը դեռևս ինքնաթիռի ցնցումներն էր կրում, և պտտվում էր գլուխը: Արմենը հանկարծ մտածեց, որ ինչ-որ տարօրինակ է պտտվում գլուխը, ասես սովորականին հակառակ: Գուցե նրանից է, որ հակոտնյա աշխարհում ենք գտնվում, մտածեց նա: Ախր սա հարավային կիսագունդն է:

Հեռախոսի զանգը պարզապես ցնցեց նրան: Միրտն այնքան արագ էր բաբախում, որ նա չէր կարողանում վերցնել լսափողը: Ո՞վ կարող էր լինել զանգահարողը: Ի՞նչ լեզվով խոսի նրա հետ:

- Ալլո,- լավեց լսափողի մեջ,- քնա՞ծ ես, տո:

- Թենգիզ, դո՞ւ ես,- ճանաչեց նա զբոսաշրջիկների իրենց խմբի վրացի տղաներից մեկի ձայնը:

- Չէ՛, Սիդնեյի քաղաքագլուխն է,- ծիծաղեց Թենգիզը,- ես եմ, բա ի՞նչ եմ: Չե՞ս գալիս մի քիչ դուրս գանք պտտվենք:

- Չէ՛,- ասաց Արմենը,- հոգնած եմ, ուզում եմ քնել:

- Գի՞ժ ես, տո,- հեռախոսալարի մյուս ծայրում գոռոռաց Թենգիզը,- բա մարդ էստեղ հասնի ու քնի՞: Դու էլ Աբդուռահման աղան դարձար:

- Աբդուռահման աղա՞ն ով է:

- Մի ծեր նկարիչ էր Միջին Ասիայից: Իրար հետ Աֆրիկա էինք գնացել: Ամեն տեղ քնում էր: Ինքնաթիռում քնած էր: Հասանք Նիգերիա՝ քնեց, ավտոբուսում քնում էր, գնացքում քնում էր, հանդիպումների ժամանակ քնում էր: Մի օր ասացի. Աբդուռահման աղա, ի՞նչ է, ձեր տանը քունդ չէ՞ր տանում, որ հազար ռուբլի ծախսել, եկել այստեղ ես քնում:

- Եվ ի՞նչ ասաց,- ակամա ծիծաղեց Արմենը:

- Ի՞նչ պիտի ասեր, քնած էր,- ասաց Թենգիզը:- Հիմա ի՞նչ ես ասում: Գալի՞ս ես, թե չէ:

- Չէ՛,- ասաց Արմենը:

Նա ցած դրեց լսափողը ու կրկին ձեռքը վերցրեց հեռախոսագիրքը: Գիրքը ծանր էր, թեքվում էր մի կողքի վրա: Վեր կացավ, ծնկեց փոքրիկ գորգին, մահճակալի մոտ ու լայն բացեց գիրքը: Թերթեց, թերթեց ու հասավ «Գ» տառին:

Մի հայացքով արագ ընդգրկեց էջերը և ուրախացավ, տեսնելով, որ «Գասպար» ազգանուններ շատ կան: Խոր շունչ քաշեց:

«Տե՛ր աստված,-մրմնջաց նա,- ախր չէ որ ամեն հրաշք հնարավոր է այս աշխարհում: Ի՞նչ կլինի, որ լինի այս հրաշքը: Տե՛ր աստված: Նայեմ ու տեսնեմ՝ գրված է «Գասպարյան Մ. Պ.», ուրիշ ոչինչ, «Գասպարյան Մ. Պ.»: Մի թե հնարավոր չէ, որ այսքան, այսքան ազգանունների մեջ, այսքան-այսքան մարդկանց մեջ լինի մի «Գասպարյան Մ. Պ.», Տե՛ր աստված»:

Արմեն Գասպարյանը իր եղբորն էր փնտրում:

1971 թվականի սեպտեմբերի 20-ին, Ավստրալիայի Միդնեյ քաղաքի «Թրեյվ լոջ» այսինքն՝ «Իջևանատուն» հյուրանոցի իր համարում, թերթելով հեռախոսի գիրքը, երևանցի Արմեն Գասպարյանը փնտրում էր իր եղբորը, Հայրենական մեծ պատերազմում 1944 թվականին անհայտ կորած Մելիք Պետրոսի Գասպարյանին:

Խե՞նթ էր այդ մարդը, ինչ էր...

Նա ջահել չէր, նա արդեն քառասուն տարեկան էր: Երեք երեխաների հայր: Նոսրացել էին մազերը, ձերմակել քունքերի մոտ, կնճիռներն ակոսել էին ճակատն ու դեմքը, ոստայն հյուսել պարանոցին: Հեռախոսագրքի վրա սահող ձեռքի մաշկը բարակել էր արդեն ու պարզ երևում էին կապույտ երակները: Նա ջահել չէր, չէ, բայց և այնպես, Ավստրալիայի Միդնեյ քաղաքի 1971 թվականի հեռախոսագրքում փնտրում էր 1944 թվականին Արևմտյան Ուկրաինայում ինչ-որ տեղ անհետ կորած եղբոր ազգանունը:

«Մելիք Պետրոսի Գասպարյան»:

Երբ ստացան Մելիքի անհետ կորչելը հաստատող թուղթը, Արմենը տասներեք տարեկան էր: Ամբողջ ընտանիքը լաց էր լինում: Լաց էին լինում նաև հարևանները, բարձրաձայն «Մելիք» կանչելով ու հիշելով զոհված ու կորած իրենց հարազատներին: Իսկ Արմենը միայն զարմացած էր: Ինչպե՞ս թե անհետ կորել է: Ո՞նց կարող է անհետ կորչել մեծ մարդը, այն էլ Մելիքը՝ բարձրահասակ, ուժեղ Մելիքը: Ճիշտ է ասում պապը. ասեղ հո չի՞, որ կորչի: Երևի այնպիսի տեղ է ընկել, որ հնար չունի ձայն տալու: Եթե կորել է, ուրեմն կա, որ կորել է, ուրեմն կգտնվի: Այնքան մարդիկ են կորել ու գտնվել:

Հաղթահասակ, բարձր տղա էր Մելիքը: Կիրակի օրերին առավոտյան ուսերին էր դնում փոքրիկ Արմենին և Գնունի փողոցից գնում, հասնում էր Հրազդանի ձորը: Թիթեղյա փոքրիկ տուփից կարմիր որդեր էր հանում, կախում էր կարթից, երկար ճիպոտների ծայրերին մեծ քարեր էր դնում, պառկում էր Արմենի կողքին՝ խոտի վրա ու գրքեր էր կարդում, զարմանալի, զարմանալի բաներ:

Իսկ երեկոյան նրանք վերադառնում էին նույն ճանապարհով, երկար-երկար փողոցներով, քարե սև հուններ ունեցող, կատաղած հոսող առուների կողքով: Եվ Արմենի գլուխը պտտվում

էր բարձրությունից: Երկու ձեռքով ամուր գրկած Մելիքի վիզը, ծնոտը նրա մազերի մեջ խրած, տղան անընդհատ, անընդմեջ հարցեր էր տալիս եղբորը, և Մելիքը պատասխանում էր ներքևից վեր, ծիծաղկոտ բերանով, և քայլում էր լայն-լայն քայլերով, երկար-երկար փողոցն ի վար:

Հիմա ասում են՝ կորել է:

Չէ, այստեղ Գասպարյան չկա: Ո՞ւր է: Ասում են աշխարհը լցված է հայերով: Որտե՞ղ են: Ահա, ոչ մի Գասպարյան: Ամեն ինչ կա, ամեն ինչ: Գասպար, Գասպար, Գասպար, ինչքան ասես: Ահա՛ Գասպարեյլի, Գասպարիոն, Գասպարտ, իսկ Գասպարյան չկա: Ոչ մի հատ:

Իսկ գուցե... Նա տենդորեն բացեց, գտավ «Կ» տառը: Գուցե Գասպարյան են գրում այստեղ: Գասպարյան, ի՞նչ կա որ:

Գուցե գրում են, բայց չկա: Գասպարյան էլ չկա: Կասպար՝ խնդրեմ: Նույնիսկ ավտոսպասարկման ընկերություն՝ «Կասպար և Կ»: Իսկ Գասպարյան չկա: Ասենք, ո՞վ գիտե, գուցե և դեն է նետել հայկական «յան» մասնիկը ու դարձել է Գասպար: Ինչե՞ր ասես, որ չեն անում հայերը: Լոնդոնում պառավ մի հայուհի կար, երբ ծանոթանալու համար մեկնեց ձեռքը, ասաց՝ «Օրիորդ Կարապետ»: Կարապետը դեռ ոչինչ: Այն ո՞վ էր Կոպենհագենում: Հա, ինքնաթիռով միասին էին թռչում: Աղավաղված, ծամաձուլված հայերենով հազիվ հասկացրեց, որ ինքն էլ հայ է, և ասաց, որ եղբայրն էլ է Կոպենհագենում ապրում: Հեռախոսի համարը չի հիշում, բայց եթե հեռախոսագրքում նայես, իսկույն կգտնես: Պետերս: Ներսես Պետերս:

- Պետե՞րս,- հարցրեց Արմենը:

- Այո՛, այսինքն՝ Պետրոսյան: Հոստեղ Պետրոսյան չեն հասկնար, Պետրոս կգրեն. Ներսես Պետերս:

Արմենը Կոպենհագենում բացեց հեռախոսագիրքը: Նախ Գասպարյան որոնեց: Չկար: Հետո մտածեց գտնել Պետրոսյան-Պետերսին: Գրքում երեք հարյուր քսան Պետերս կար: Դե, եկ ու գտիր այդ միակ Ներսես Պետրոսյանին երեք հարյուր քսան Պետերսների մեջ:

Աշխարհը հայերով լցվա՛ծ է...

- Նայեմ տեսնեմ կա՞ «Գասպար Մ. Պ.»,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը, մատը զգուշությամբ սահեցնելով «Գասպար»-ների կողքով:

Ահա, երեք հոգի կան: «Գասպար Մ. Պ.»: Մեկ էլ հանկարծ պարզվի, որ նրանցից մեկը Մելիքն է: Տե՛ր աստված, ինչ ուրախություն կլինի: Այդ մտքից արագ խփեց սիրտը: Իսկապես, մեկ էլ տեսար...

Նա հավաքեց համարը, երկար, օտար մի համար, սկզբում՝ տառերով, հետո՝ թվերով: Ինչ-որ տեղ հեղձում բարակ ու ընդհատ հնչեց զանգը: Չախ ձեռքի ավեր քրտնել էր, նա լսափողը աջ ձեռքը վերցրեց, ցավեցնելու չափ ամուր սեղմեց ականջին:

- Հելլո՞,- լսվեց տղամարդու պարզ, հարցական, թավ մի ձայն:

- Ներեցե՛ք, դուք հա՞յ եք,- հայերեն հարցրեց Արմենը: Հետո վախեցավ, որ չեն լսի, որ ինքը կամաց է հարցնում և այնպես չի հարցնում, ինչպես պետք է, ու գրեթե գռռաց,- ասում եմ, դուք հա՞յ եք, հայ, հայ:

Միդնեյում ինչ-որ տեղ, թե որտեղ՝ չկարողացավ պատկերացնել Արմենը, մի մարդ արագ-արագ ինչ-որ բան ասաց բարկացած ու ցած նետեց լսափողը:

Դե, իհարկե, ասաց ինքն իրեն Արմենը: Չէ՞ որ այս ամենը այնուամենայնիվ հիմարություն է: Հիմարություն է, հիմարություն է, հիմարություն է, ասաց նա: Հասկացիր, էլի, Մելիքը չկա: Չկա: Հո միայն նա չէ: Հարյուր հազարներ չկան, միլիոններ չկան: Բոլորն էլ անհետ կորել են, չկան: Մարդ ես, էլի: Ի՞նչ ես ուզում աշխարհից, ի՞նչ ես ուզում քեզնից: Ապրիր, էլի, ինչպես մյուսները:

Եվ վերջապես, ի՞նչ ես աշխարհին իրար խառնել: Խնդրում, աղաչում ես սրան-նրան, քաղցած նստում ես ողջ տարին, ուղեգիր ես ձեռք բերում, գնում հասնում ես աշխարհի ծայրը և ի՞նչ ես տեսնում՝ հեռախոսագրքերից բացի: Ի՞նչ ես տեսնում: Ամեն հանդիպողի մեջ հայ ես փնտրում, եղբայր ես փնտրում, Մելիք ես փնտրում: Իսկ որ տեսնես՝ կճանաչե՞ս: Ութ տարեկան ես եղել, երբ վերջին անգամ տեսել ես: Երեսուներկու տարի է անցել, մա՛րդ: Հիմա նա հիսունմեկ տարեկան է: Որ տեսնես, կճանաչե՞ս:

Պատերազմի երկրորդ տարում Մելիքը մի նկար ուղարկեց ռազմաճակատից: Կանգնած էր բարձր ու հպարտ՝ մի փոքրիկ ինքնաթիռի մոտ, ոտքից գլուխ կաշվե փայլուն հագուստի մեջ: Ձախ ձեռքով ետ էր տարել կաշվե պիջակի փեշը ու ձեռքը հենել էր կողքին: Իսկ բացվածքի միջից բլուզի վրա երևում էր սպիտակ, կլոր մի մեղալ: Վրան գրված էր՝ «Խիզախության համար»:

Ինչպե՞ս են անհետ կորչում այդպիսի մարդիկ:

- Լավ,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը,- այս մեկն էլ փորձեմ և վերջ:

Նա դանդաղ, հատիկ-հատիկ հավաքեց համարը, վերջին թիվը հավաքելուց առաջ նայեց պատուհանից դուրս ու տեսավ, որ մթնում է: Դիմացի շենքի վրա վառվում-հուրհրում էր գովազդը: Գարեջրի մեծ գավաթը լցվում էր լույսով, և լույսը բարձրանում-բարձրանում էր, դառնում փրփուր, փրփուր էր ու ծորում էր գավաթի կողքերից: Զարմանալի նուրբ գովազդ էր:

- Լավ,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը,- միայն այս մեկը:

Նա բաց թողեց սկավառակը պահող մատը, և գրեթե անմիջապես էլ լսափողը վերցրին: Երևի սպասում էին ինչ-որ մեկի զանգին, որովհետև լսափողը բարձրացրած կինը սկսեց անմիջապես խոսել: Հավանորեն ինչ-որ բան էր խնդրում: Ձայնը մեղմ էր, հուզիչ ու աղերսով լի: Արմեն Գասպարյանը խղճի խայթ զգաց, քիչ մնաց անջատեր խոսակցությունը, բայց որովհետև գիտեր, թե որքան պատահական բաներ են լինում աշխարհում, սպասեց այնքան, մինչև որ կինը դադարեց խոսել, և ասաց շտապով:

- Ձեր տանը հայ կա՞: Հայ, Արմենիա: Մելիք:

Մի պահ ոչ մի ձայն չկար: Հետո ծիծաղ լսվեց, բարձր, լիաթոք, անկեղծ ծիծաղ: Ու անջատվեց հեռախոսը: Երևի կինը կարծեց, թե կատակում են: Կատակում են: Այնինչ ոչ ոք աշխարհում դեռևս այդքան լրջորեն ու այդքան հուզված չէր հավաքել Միդնեյի այդ տան համարը:

Նա կրկին նայեց հեռախոսին ու զարմացավ, տեսնելով, որ մոխիր է թափվել սկավառակի վրա: Որտեղի՞ց կարող էր մոխիր թափվել, մտածեց նա և նոր միայն նկատեց, որ ծխում է: Նա հավաքեց երրորդ «Գասպար Մ. Պ.»-ի հեռախոսի համարի առաջին թիվը, բայց անմիջապես էլ ետ քաշեց ձեռքը, վեր կացավ ու սկսեց քայլել սենյակում:

- Ի՞նչ ես ուզում,- ասաց նա ինքն իրեն,- ի՞նչ ես ուզում, ա՛յ մարդ: Ուրեմն, քո կարծիքով, եթե Մելիքը ողջ լիներ, չէ՞ր հայտնվի: Լավ, տասը տարի կարելի էր սպասել, մտածելով, թե գերության մեջ է եղել ու վախենում է տեղեկություն տալ: Լավ, քսան տարի, հետո ... Այսինքն ինչե՛ր ասես չեն լինում: Այն որտե՞ղ էր, հա, իհարկե Գվադալախարայում: Օլիմպիական խաղերի առիթով Մեքսիկա էր գնացել: Վերցրեց հեռախոսի գիրքը, թերթեց: Մի Գասպար կար և այն էլ Գասպար Մ. Պ.: Անմիջապես հավաքեց համարը ու հարցրեց.

- Ներեցեք, դուք հա՛յ եք: Հայ:

- Հա՛յ: Իսկ դուք ո՞վ եք:

- Մելի՛ք,- գոռաց Արմենը,- Մելիք, դո՞ւ ես:

- Չէ՛,- ասաց մարդը,- ես Միգել եմ, Մուշեղն եմ: Իսկ դուք ո՞վ եք: Ի՞նչ եք ուզում:

Նրանք հանդիպեցին: Գրեթե հասակակիցներ էին: Մուշեղը վախեցած չորս կողմն էր նայում անընդհատ ու Արմենին ստիպում էր երդվել, որ Բուլղարիայից չեն ուղարկել նրան հենց իր, Մուշեղի ետևից:

- Նրանք ի՞նչ են ուզում ինձնից,- քունքերը տրորելով անընդհատ հարցնում էր նա:

Ջահել լակոտ էր եղել, երբ սկսվել էր պատերազմը: Վառնայում էին ապրում: Ֆաշիստական կառավարությունը գորակոչել էր նրան, բայց նա ինչ-որ նավի հնոցատանը թաքնված փախել էր Արգենտինա: Հետո ուրիշ փախչողներից իմացել էր, որ հեռակա կարգով դատապարտել են գնդակահարության: Եղել էր ամեն տեղ ու ամեն ինչ, բեռնակիր էր աշխատել նավահանգստում, լրագրեր էր վաճառել, աշխատել էր խոհանոցում, ծխնելույզներ էր մաքրել: Պտտվելով եկել հասել էր Մեքսիկա ու ավտոբուս էր վարում Գվադալախարա քաղաքում: Ամուսնացել էր: Իսպանացի կին ուներ և երկու տղա՝ Անդրանիկ և Հոգե: Նկարները ցույց տվեց՝ հրեշտակներ էին:

Զգուշությամբ մարդկանց միջոցով իմացել էր, որ պատերազմից հետո ծնողները հայրենադարձվել են ու հիմա Երևանում են ապրում:

- Իսկ դու ինչո՞ւ ես այստեղ,- չգիտես ինչու բարկացած ասաց Արմենը:- Ինչո՞ւ չես գնում ծնողներիդ մոտ:

- Կբռնեն,- ասաց Մուշեղը,- ես գիտեմ:

- Ո՞վ պիտի բռնի, ա՛յ մարդ,- ասաց Արմենը,- նախ դու ֆաշիստներից ես փախել: Հետո դու հո Բուլղարիա չես վերադառնում: Հետո նույնիսկ, եթե որևէ մեղք ունեցել ես, արդեն կրել ես պատիժդ երկու և ավելի անգամ:

- Հազար անգամ,- ասաց Մուշեղը:- Անտեր եմ, օտար եմ, կարոտից մեռնում եմ:

- Դե, տեսնում ես,- ասաց Արմենը,- թո՛ղ ամեն ինչ, ընտանիքդ վերցրո՛ւ, հայրենի՛ք գնա: Գիտե՞ս ինչ ուրախություն կլինի,- ակամա նախանձով, աշխատելով լաց չլինել, ասաց Արմենը:- Նրանք գիտե՞ն, որ դու կաս:

- Չէ՛,- ասաց Մուշեղը:

- Հիմար մարդ ես,- գոռոռաց Արմենը, գոռոռաց այնպես բարձր, որ եթե որևէ տեղ Մելիքը կար, լսեր նրան:- Հիմար մարդ ես, քեզ անհետ կորած են համարում... լաց են լինում վրադ, իսկ դու քեզ համար ավտոբուս ես վարում Գվադալախարայի փողոցներում: Ազգանունդ ես փոխել, կուչ ես եկել, սենյոր Միգել Գասպար: Մենակ քո մասին ես մտածում: Հիմա ո՞վ գիտե քեզ որտեղ են փնտրում ձերոնք, եղբայրներդ ու քույրերդ, ամեն ծնունդիդ թաղում են քեզ, Գասպար... Մա՛րդ եղիր, մա՛րդ...

- Դուք չգիտեք, կգնդակահարեն,- երեխայի պես աչքերը տրորելով՝ լաց եղավ Մուշեղը:

Նա լաց էր լինում, իսկ Արմենը խճահարությամբ ու զայրույթով նայում էր արդեն տարեց, խեղճ այդ մարդուն, աշխարհում կորած, աշխարհում ինքն իրեն կորցրած այդ խեղճ մարդուն: Համոզում էր թողնել ամեն ինչ, ետ դառնալ, գնալ իր ակունքը գտնել, իր անունը գտնել, իր ուրախությունը գտնել և ուրախացնել սգավոր, տխրած մարդկանց: Ուրախության սպասող, սպասումով ու հույսով ապրող, ուրախություն փնտրող մարդկանց: Համոզում էր նա, և նրան թվում էր, թե հիմա, հենց այս բոլորին, ինչ-որ մեկն էլ ինչ-որ տեղ Մելիքին է գտել ու համոզում է: Թե հիմա աշխարհում ամեն մարդ բռնել է մյուսին ու համոզում է: Համոզում է ապրել, չվախենալ, կուչ չգալ, չփոխել անունը, չկորչել անհետ, չկորչել անհետ, անհետ: Թե հիմա աշխարհում բոլորն էլ որոնում են, փնտրում են, կարոտում են, տառապում են, սպասում են, ուրախության են սպասում անակնկալ:

- Հարկավոր է վերջ տալ այս բոլորին,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը:

Նա վերադարձավ մահճակալի մոտ, հեռախոսագիրքը վերցրեց, դրեց պատուհանի վրա, միայն մի հայացք նետելով վերջին «Գասպար Մ. Պ.»-ի հեռախոսի համարին, հանեց հագուստը ու պառկեց մահճակալին:

Պատուհանի ետևում, ծառերից այն կողմ, համարյա քսվելով սաղարթներին, ասես ցուցադրաբար եկավ անցավ կլոր, դեղին լուսինը, և Արմեն Գասպարյանը նկատեց, որ դա միանգամայն ուրիշ, օտար լուսին է: Շրջված էր այնտեղ ամեն ինչ, ծանոթ բոլոր ստվերները շրջված էին:

- Հա, իհարկե,- մտածեց նա,- ախր սա հարավային կիսագունդն է, ախր ես Ավստրալիա եմ հասել, նավապետ Կուկի, աբորիգենների, նավապետ Գրանտի որդիների երկիրը: Հիմա

մոտերքում ինչ-որ տեղ կենդանություններ են վազում՝ լայն-լայն ցատկելով: Հիմա հեռուներում ինչ-որ տեղ աղիողորմ կլանչում են դինգո վայրի շները:

Ասում են՝ ապշելու երկիր է Ավստրալիան: Հարկավոր է մի լավ շրջել ու տեսնել, տեսնել այս երկիրը: Մարդիկ միայն մի անգամ են Ավստրալիա հասնում:

Նա իրեն լավ ծածկեց վերմակով, ձեռքը մեկնեց, որ հանգցնի լուսամփոփը և փոքրիկ պահարանի վրայից վերցրեց հեռախոսագիրքը:

- Լավ,- ասաց նա ինքն իրեն,- այս մեկն էլ փորձեմ, և վերջ...

1973թ.

Կոալաներ

Փոքրիկ կենդանիները ծուլորեն շարժվում էին ծառի ճյուղի վրա՝ անդադար ծամելով ու անտարբերությամբ շրջվելով իրենց հառված լուսանկարչական սարքերից: Նրանք միամիտ, վախեցած աչքեր ունեին և թաց, խղճալի դնչեր:

- Ուշադրություն դարձրեք այս հազվագյուտ կենդանիներին, լեդինե՛ր և ջենտլմեննե՛ր,- հանդիսավոր ու բարձր ասում էր թարգմանչուհին,- սրանք նշանավոր ավստրալական արջուկներն են և կոչվում են կոալա, որ արբորիզենների, այսինքն՝ բնիկների լեզվով նշանակում է՝ «Խմող չէ»: Կոալաներն իրոք ջուր չեն խմում և պատկանում են պարկավորների ընտանիքին: Նրանց միակ սնունդը էվկալիպտի տերևներն են: Նրանք ապրում են հենց էվկալիպտի ծառերի վրա և բացարձակապես գուրկ են պաշտպանության միջոցներից: Ի բարեբախտություն նրանց, Ավստրալիայում գիշատիչներ չկան, լեդինե՛ր և ջենտլմեննե՛ր, եթե չհաշվենք մարդկանց:

Թարգմանչուհին ծիծաղեց իր կատակի վրա մի այնպիսի ծիծաղով, որից պարզ էր, որ միշտ այդ նախադասության վրա ծիծաղում է: Ծիծաղեցին նաև զբոսաշրջիկները:

- Դուք հանգիստ կարող եք նկարել կոալաներին, միայն սպառնալ չի կարելի: Տեսեք ինչպես են վախենում...

Թարգմանչուհին ճշաց հանկարծ ու մատը թափ տվեց արջուկների վրա: Նրանք դադարեցին ծամել ու փոքրիկ թաթերով ծածկեցին աչքերը: Դա իրոք որ ծիծաղելի էր ու խղճալի:

- Նկատի՛ ունեցեք, կոալաները միակ կենդանիներն են, որ Ավստրալիայից բացի ուրիշ ոչ մի տեղ չկան: Շատ են փորձել նրանց բնակեցնել այլ երկրներում, բայց կոալաները հայրենիքից դուրս չեն կարողանում ապրել, ոչնչանում են:

Արմեն Գասպարյանը մի քանի անգամ լուսանկարեց այդ զարմանալի կենդանիներին: Հետո երկար կանգ առավ կենդանիների մոտ: Նա գրպանից հացի մի կտոր հանեց, որ թարգմանչուհու խորհրդով նախօրոք վերցրել էր հետը, և երբ ձեռնասուն կենդանիներից մեկը անճոռնիորեն ցատկելով մոտեցավ նրան, մեկնեց հացը: Կենդանուն հենվեց ամուր ու հաստ պոչի վրա և բարձրացրեց զարմանալիորեն քնքուշ, ասես կանացի թաթերը: Նույն վայրկյանին նրա պարկը զգուշությամբ բացվեց և հայտնվեց ճուտի սրադունչ գլուխը: Կենդանուն մի թաթով բռնեց հացը, իսկ մյուսով ճուտին ետ՝ պարկը հրեց, օտար աչքերից ու վտանգից հեռու: Նրա բնագրական շարժումի մեջ մայրական այնպիսի մի սրտաշարժ ու կոպիտ հոգածություն կար, որ Արմեն Գասպարյանը զգացված ժպտաց:

«Մայրն ամենուրեք ու ամեն ինչում մայր է»... - մտածեց նա:

Բայց որովհետև նրան շատ հասարակ ու ծամծամված թվաց այդ ձևակերպումը, ամաչեց մի տեսակ, ասես բարձրաձայն էր արտահայտել իր միտքը ու մոտեցավ վառ դեղինով ներկված նստարանին:

Նրա դեմքին խաղում էր օվկիանոսի հոտը, և մարմինն ասես օրորվում էր ալիքների ծփանքից: Կոալաների և կենդանիների արգելանոցը գալուց առաջ նա մոտ երեք ժամ մեջքի

վրա պառկած էր ծովածոցի ալիքների վրա՝ սքանչացած նայելով մաքուր երկնքին և աշխատելով աշխարհի քարտեզի վրա որոշել իր տեղը: Դա շատ հետաքրքիր էր և երազի էր նման:

Ո՞վ կմտածեր, թե երբևէ կհայտնվեր այստեղ, աշխարհի ծայրում, Խաղաղ օվկիանոսի ափին, ավստրալական այս փոքրիկ քաղաքում, որտեղ ընդամենը մի հայ կա: Զարմանալի բան է. հայերն առհասարակ մենակ չեն կարողանում ապրել, իսկ սա ապրում է:

«Հոյակապ մարդ է,- ասաց նրա մասին Մելբուռնի հայերից մեկը,- անպայման զանգահարիր: Շատ հայասեր մարդ է, թող առնի կարտը»:

«Երեկոյան կզանգահարեմ», - վճռեց Արմեն Գասպարյանը:

*

* *

- Ալլո՞ :

Հեռախոսալարի մյուս ծայրում սկսեցին խոսել անգլերեն:

- Ես Պանդուխտ Չարեքյանին եմ ուզում,- հայերեն ասաց Արմեն Գասպարյանը:

- Ես եմ, Պանդուխտն եմ, դո՞ւք եք, պարոն Գասպարյան: Մելբուռնի բարեկամս զանգահարեց ինձ: Կսպասեի: Ե՞րբ եկաք: Շատ, շատ ուրախ եմ: Ինչպե՞ս եք: Մենք ալ աղեկ ենք: Կինս, գիտե՞ք, անգլուհի է, սակայն հայերեն քիչ ու միչ կհասկանա: Մեծ աղջիկս ալ կհասկանա, սակայն խոսել չգիտե, իսկ փոքրս բոլորովին չի հասկանա, անպիտանը: Քանի՞ օր պիտի մնաք: Որտե՞ղ իջած եք: «Պարկ ռոյալ»: Հոթե՞լ է, թե՛ մոթե՞լ: Հոթե՞լ է: Հա, աղվոր հոթե՞լ է: Շատ սուղ չե՞ վարձը: Չե՞ք գիտեր: Սուղ կըլլա, սուղ կըլլա... հոստեղ ամեն ինչ սուղ է, ջանմ, ապրելն ալ սուղ է, մեռնելն ալ սուղ է...

Հեռախոսալարի մյուս ծայրում Պանդուխտ Չարեքյանը ծիծաղեց.

- Կատակ պիտի ընեմ,- զգուշացրեց նա:- Հոստեղ կսեն՝ Ավստրալիո մեջ միայն ոչխարը սուղ չէ, ատոր համար ո՛չ մեկը կուզե ոչխար ըլլալ:

Եվ նա երկար ծիծաղում էր իր կատակի վրա, այնքան, որ Արմեն Գասպարյանը ժպտաց: «Կարոտած մարդ է,- ասաց նա ինքն իրեն»:

- Հիմա հոթե՞լն եք, պարոն Գասպարյան: Ուրեմն ես տասնհինգ վայրկյանեն ետքը կուգամ: Ափսո՛ս, քանի մը օր առաջ գալու էիք, ավելի շատ ժամանակ կրնայի անցուցել ձեզի հետ: Հակառակի պես երեկ մայրս մեռավ:

- Ի՞նչ: Ինչպե՞ս թե:

- Այո՛, երեկ մայրս մեռավ: Երկուշաբթի պետք է թաղենք:

Սա՞ ինչ բան է: Իսկ քիչ առաջ երկար խոսում, ծիծաղում էր, զգուշացնում էր, որ կատակ պետք է անի...

- Շատ, շատ վշտացած եմ,- շփոթված մրմնջաց Արմեն Գասպարյանը:- Ցավում եմ սրտանց:

- Է՛, հոգ չէ,- ասաց Պանդուխտ Չարեքյանը,- մայրս գրեթե ութսուն տարեկան էր...

- Դե մայրը մնում է մայր,- ասաց Արմեն Գասպարյանը և ակամա կարմրեց, սրտնեղելով, որ նորից օգտագործում է այդ բավականին հասարակ, ծամծամված, ասես այլևս իմաստագուրկ միտքը:

- Չէ՛, հոստեղ մի քիչ ուրիշ է: Արդեն ծեր էր մայրս: Տանը չէր կրնա օգնել: Որպեսզի բեռ չըլլա, քիչ ու միչ գործեր կներ, որովհետև այստեղ անգործ մարդկանց չեն սիրեր... Ծերանոց կուղարկեն:

Արմեն Գասպարյանը շփոթված լռում էր:

- Ես հիմա պատկերացնում եմ ձեր վիճակը,- ասաց նա:- Գիտեմ, թե որքան եք հուզված ու խառնված: Ներողություն, որ անհանգստացրի, ինչ ասեմ...

- Ո՛չ, ո՛չ,- հեռախոսալարի մյուս ծայրում անհանգստացավ Պանդուխտ Չարեքյանը:- Հիմա կուզամ քեզ մոտ: Շատ կուզեմ խոսել հետդ, հայերեն խոսել: Ի՞նչ կըլլար մի քանի օր առաջ գայիր, մա՛րդ աստծո, մայրս շատ կսիրեր հայերեն խոսել, բայց հետը խոսող չկար: Մի լավ երկար-երկար կխոսեիք: Գիտե՞ս, մայրս մինչև վերջ ալ հայերենից զատ ուրիշ լեզու չսովրեց, չէր ուզում սովորել... Ես հիմա կուզամ:

- Կարիք չկա, ձեր հոգսով զբաղվեք, խնդրում եմ,- սրտանց խնդրեց Արմեն Գասպարյանը:

Նա իսկապես, չգիտես ինչու, այլևս չէր ուզում տեսնել այդ մարդուն:

- Ո՛չ, ո՛չ, քեզ համար չէ, ինձի համար կուզամ,- պնդեց Պանդուխտ Չարեքյանը և, որպեսզի առարկություն չլսի, արագորեն կախեց լսափողը:

*

* *

Կես ժամ անց համարի դուռը բախեցին: Ներս մտավ բավականին բարեկազմ, ճերմակող մազերով ու բեղերով, նուրբ դիմագծերով, հին հայերի կապույտ աչքերով մի մարդ: Կասկած չկար, որ Պանդուխտ Չարեքյանն է: Նրա հետ եկել էր նաև դուստրերից մեկը, որ սպիտակ, կլորիկ, պարզ ու բարի դեմքով մի աղջիկ էր և հավանաբար շատ էր նման իր անզլուհի մորը:

- Պարո՛ն Գասպարյան, ծանոթացի՛ր, ավագ դուստրս է, Պանինան:

- Պանինա՞ :

- Այո՛ , առաջինն էր: Իմ անունը Պանդուխտ է: Կինս ասաց՝ եթե մանչ ծնվի, Պանդուխտ կդնենք անունը: Բայց աղջիկ ծնվեց: Եվ անունը դրեցինք Պանինա:

- Աղվոր ամ... անուն է, այո՞ , - տանջալիորեն ձգելով բառերը՝ հայերեն հարցրեց աղջիկը:

Մենք նստեցինք, և Ավստրալիայի ծովեզրյա այս փոքրիկ քաղաքում ավելի քան տասներկու տարի ապրող Պանդուխտ Չարեքյանը երկար-երկար պատմում էր իր կյանքը: Տասը թվականին է ծնվել Սև ծովի ափին, Սամսուն քաղաքի մոտ ընկած մի գյուղում: Հետո սպանել են հորը, ու գաղթ է եղել: Մայրը հավաքել է որբերին ու տարել հասցրել Հունաստան, պահել է մի կերպ, մեծացրել է: Իր հացը վաստակելու համար ինչէ՞ր ասես որ չի արել Պանդուխտը, որտեղ ասես չի թափառել: Գնացել, գնացել, հասել է Անգլիա: Մանր առևտրով է զբաղվել ու այնտեղ էլ ամուսնացել այս Պանինայի մոր հետ: Հետո դրամ վաստակելու հույսով նրանք գնացել, Աֆրիկայի խորքերն են հասել, երկար տարիներ դեգերել են Գանայի ջունգլիներում: Հետո ինչ-որ բանի տեր են դարձել և նորից գնացել, գնացել հասել են Ֆրանսիա: Հետո էլի են թափառել, էլի ինչ-որ երկրներում են եղել, մինչև որ այսպես գնալով, գնալով եկել հասել են Ավստրալիա, ծովեզրյա այս փոքրիկ քաղաքը, հողակտոր են գնել, տուն են սարքել ու ապրում են:

- Սամսունին նման է, գիտե՞ս, - ասաց Պանդուխտ Չարեքյանը: - Ափին որ կնստեմ ու կփակեմ աչքերս, մեր Սև ծովը կտեսնեմ... Սև ծովը տեսած կա՞ս:

- Շատ, - ասաց Արմեն Գասպարյանը:

- Այս Ավստրալիան աղվոր երկիր է՝ գիտե՞ս, - ասաց Պանդուխտ Չարեքյանը: Հետո երևի մտածեց, թե Արմեն Գասպարյանը կնեղանա, կամ որ լավ չէ այդպես ասելը, երբ ինչ-որ տեղ հայրենիք ունես, ու ավելացրեց շտապով: - Եթե Հայաստանում չես, ուրեմն ամենալավ տեղը Ավստրալիան է: Այդպես չէ՞: Հոս խտրություն քիչ կա. ոչ մեկը չըսե՛ արմենիա՞ն էս, իռլա՞նդ էս...

- Արմենիան... Խա-յաս-տան... ամ... այո՞ , - ինչ որ կերպ զրույցին մասնակցելու համար տառապանքով հեզեց Պանինան:

- Իսկ էս լսել եմ, որ իտալացիներին ու հույներին լավ չեն վերաբերվում այստեղ, - ոչ միտումնավոր, ուղղակի որևէ բան ասած լինելու համար ասաց Արմեն Գասպարյանը:

Պանդուխտ Չարեքյանը մի փոքր շփոթվեց:

- Ճիշտ է, - ասաց նա, - սակայն իտալացիների ու հույների աղքատը եկած է հոս ու անկիրթը: Անոնց չեն սիրեր... Դե, մենք՝ հայերս, ուրիշ ենք, աշխատող ենք, մեզի կսիրեն...

- Բախտավոր ժողովուրդ ենք, - չգիտես ինչու բարկացած նրան ընդհատեց Արմեն Գասպարյանը, - բոլորը սիրում են մեզ...

- Այո՛ , - անվստահ հաստատեց Պանդուխտը:

Եվ որովհետև Արմեն Գասպարյանը այդ ամբողջ ժամանակամիջոցում Պանդուխտ Չարեքյանի մոր մասին էր մտածում, սկսեց հարցրեց միանգամից, գրեթե անկապ.

- Իսկ ձեր մա՞յրը...

- Է՛, մայրս ինչ,- ասես սթափվելով զարմացած նրան նայեց մարդը:- Հիվանդ էր... Լավ էր, որ քիչ մնաց հիվանդ: Այսինքն՝ անկողին չընկավ գրեթե: Բհարկե, ես ամեն ինչ արեցի... Չրի հիվանդանոց գտա: Գիտե՞ս, այնտեղ չեն բուժեր: Բայց կպահեն: Կուզես դրամ կուտաս, կուզես՝ չես տա: Հոստեղ դրամի խնդիրը շատ կարևոր է: Նարինջի կիլոն արժեք չունի, խնձորը արժեք չունի, ոչխարը, գիտե՞ս, երկու-երեք դոլլարով կառնինք... Բայց կյանքը սուղ է և երթալով ավելի սուղ կդառնա: Շնորհք պիտի ունենաս, որ դրամ կուտակվի... Դրացիներ ունենք, որ օրվա վաստակածը կխմին, կուտին: Է՛, աստանկ կարելի չէ: Հոս բանկային մեջ դրամ չունենաս նե, մարդ չես...

- Եվ ձեր մայրը...

- Է, մայրս շատ խնդրեց, որ հիվանդանոց չտանինք: Է՛, ամ... սակայն ո՞վ կրնար խնամիլ ձեր կինը: Ես և տիկինս մեր խանութը կաշխատինք: Աղջիկներուս մեկը պետական օֆիսը կբանա, մյուսը կանացի վարսավիր է... Լավ գործ կընենք, փա՛ռք աստծո: Տանը չորս հոգի ենք, երեք օթոն ունենք: Պստիկ աղջիկս ալ կկովի, թե ես ինչո՞ւ չպետք է ունենամ... Իսկ մեզ մոտ օթոն սուղ է, գիտե՞ս: Երկու հազար դոլլարեն պակաս չկա: Հարկավ, քիչ մը բանցուցած որ առնիս, աժան է, սակայն...

- Եվ ուրեմն մայրիկը...

- Է՛, մայրիկի խնդիրը լեզվի խնդիր էր: Լեզու չգիտեր... Հիվանդանոց չէր ուզեր երթալ. քանի որ միայն հայերեն կխոսեր: Է՛, հայերեն խոսելով հոս կապրվի՞ ... Հոս ճարպիկ պիտի ըլլաս, հարյուր լեզու պիտի ունենաս...

- Ֆադր,- կամացուկ ասաց Պանինան: Հետո նայեց Արմեն Գասպարյանին, կարմրեց ու ասաց... - Խայրիկ... ա՛մ... այդպես չէ՞...

- Այո՛, այո՛,- անհանգստացավ Պանդուխտ Չարեքյանը:- Աղջիկս օֆիսեն կուշանա: Հոստեղ շատ խիստ է, գիտե՞ս, վայրկյան մը ուշանաս, տնօրենը կըսե՛ այ ամ սորի... այսինքն թե ափսոսում եմ, սակայն այլևս միասին չենք կրնա աշխատել... Չեն գոռա, գիտե՞ս, շատ քաղաքավարի կըսեն...

*

* *

Պանդուխտ Չարեքյանի տունը մի շատ սիրունիկ բլրի վրա էր գտնվում, քաղաքից ավտոմեքենայի ճիշտ կես ժամվա ճանապարհի վրա, անտառի պոնկին: Չորս սենյականոց փոքրիկ, հարմարավետ ու թեթև տուն էր, լավ մշակված կանաչ բակով, մորու փոքրիկ թփերով և պապայայի վիթխարի ընկույզներով ծանրաբեռնված կարճիկ, ծերատված ծառերով:

Մի փոքրիկ սեղան դրեցին վառ կանաչի վրա, նստեցին թեթև աթոռակներին ու ծխեցին:

- Պարոնը ամ... քաղցած չէ՞,- երկար-երկար հայերենով հարցրեց շատ հաճելի դեմքով անգլուհի տանտիրուհին:

- Ո՛չ, ո՛չ,- ասաց Արմեն Գասպարյանը,- շնորհակալություն:

- Բրենդի չէ՞ս ուզեր,- զարմացավ Պանդուխտ Չարեքյանը:

- Ընդհանրապես խմելու ոչինչ չեմ ուզում...

- Հոստեդ մեկ անգամ կհարցնեն, գիտե՞ս,- ժպտալով ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Կերար նե՛ կերար, չկերար նե՛ չկերար...

- Լավ եք անում,- ասաց Արմեն Գասպարյանը:- Թենքյու վերի մաչ...

- Պարոնը սփի՞ք ինզլիշ,- պայծառացավ տանտիրուհին: Արմեն Գասպարյանը տարուբերեց գլուխը:

- Այս ի՞նչ բան է,- հարցրեց նա,- մարդ չի՞ հավաքվելու: Որտե՞ղ է մայրիկի դին դրված:

Պանդուխտ Չարեքյանը բարձրաձայն ծիծաղեց:

- Է, ատանկ սովորություն չկա: Հատուկ տեղ կա թաղամասին մեջ: Հոն կպահեն, հետո կթաղեն...

- Հավատացյա՞լ էր մայրիկը:

- Հարկավ, շատ հավատացյալ էր...

- Բայց ձեր քաղաքում հայկական եկեղեցի չկա:

- Այո՛,- մեղավոր ձայնով ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Անգլիական եկեղեցում պիտի դնենք...

Խե՛ղճ, ինե՛ղճ Հայկանուշ մայրիկ:

Արմեն Գասպարյանը նայում էր բլրի ստորոտում տարածված արմավենու անտառին: Ավելի հեռվում՝ կոկիկ սարերի փեշերին, մրջյունների նման ցրված արածում էին ոչխարի անհամար հոտեր: Հետո ոտքերի տակ նայեց ու հարյուրերորդ անգամ զարմացավ, թե որքան խնամքով են այստեղ վերաբերվում խոտի մշակությանը: Խոտը հարթ ու համաչափ խուզված էր ամենուրեք: Հետո նա տեսավ, որ Պանդուխտ Չարեքյանի հարևան տան բնակիչները գնդակ են խաղում իրենց համաչափ խուզված խոտի վրա և ծիծաղում են զվարթ: Եվ նա հանկարծ վիրավորվեց, որ մարդ է մեռել, բայց հարևանները ծիծաղում են:

- Է՛, կկարծեք, թե հոստեղ կյանքը հե՞շտ է,- հանկարծ լսեց նա անգլուհի սիրունատես տանտիրուհու ձայնը:- Ամուսինս ինչի ասես ձեռք չզարկավ... Սկզբում խոզ կպահեիմք,

գրքով, գրքի մեջ կկարդայինք ու կպահեինք: Ամ... շահ չունեցանք: Սկսանք հավ պահել... Է՛, սակայն տեսանք, որ բան մը չէր: Հիվանդություն կար... հավերն սկսան ասանկ վեր-վեր թռչել ու իյնալ: Կհիշե՞ս,- ծիծաղելով դարձավ նա ամուսնուն:- Վնասը քիչ ընելու համար, պարո՛ն, ամբողջ օրը հավ կուտեինք...

Դա երևի շատ ծիծաղելի հուշեր էր արթնացնում, որովհետև անգլուհի տիկինը և նրա հայ ամուսինը զարմանալիորեն միատեսակ երկար ու բարձրաձայն ծիծաղում էին, մինչդեռ Արմեն Գասպարյանը մեղավորի պես, աչքի տակով հարևանների կողմն էր նայում:

- Այնուհետև փայնեփլի առևտուր սկսանք ընել: Ամ... փայնեփլի հայերենն ի՞նչ է, Պան...

- Անանաս կըսեն,- ասաց Պանդուխտ Չարեքյանը:

- Այո՛, փայնեփլ... Անտառը լիքն էր, սակայն քաղաքում գին չուներ: Բան դուրս չեկավ, Է՛, լավ էր գոնե, որ մեծ-մեծ հողեր ունեինք, թանկացան, ծախեցինք մաս-մաս, օգուտ ունեցանք:

- Կապրինք նե, գոհություն աստծո,- գոհունակ ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Մակայն դրամի շատ-շատ պակաս ունինք: Հոստեղ առանց դրամի չես կրնա ապրիլ, գիտե՞ս, առանց օթոյի ալ չես կրնա ապրիլ: Քաղաքը ցրված է, ավտոբուս չկա, տրամվայր հանել են... Է՛, օթոն ալ սուղ է... Այս տունն ալ վաճառեմ պիտի, քանի որ նոր տուն մը սարքել եմ, երեք-չորս շաբթեն պատրաստ կըլլա... Դրամի խնդիրը...

Եվ հանկարծ Արմեն Գասպարյանը կորցրեց իրեն.

- Մայրիկն ի՞նչ գործ ունի այդ բոլորի հետ,- գրեթե գոռաց նա:

Միանգամից լռություն տիրեց: Նույնիսկ լավեց, որ հեռվում գնդակ խաղացող հարևանները իսպաներեն են խոսում:

Անգլուհի տանտիրուհին ոչինչ չհասկանալով սիրալիք տարակուսանքով թոթվեց ուսերը, և Արմեն Գասպարյանը սարսափելի շփոթվեց:

- Ախր հարևանները կլսեն, որ դուք ծիծաղում եք...

Պանդուխտ Չարեքյանը բարի, ներողամիտ ժպիտով, եղբայրավարի նայեց Արմեն Գասպարյանին...

- Հոգուդ շատ մոտ մի՛ ընդունիր,- ասաց նա,- հոստեղ ամեն ինչ ուրիշ կերպ է...

*

* *

Եկեղեցին փոքրիկ, սովորական մի շենք էր և թերևս միայն խաչով էր տարբերվում շրջապատի շենքերից: Արմեն Գասպարյանը շատ եկեղեցիներ էր տեսել աշխարհում, իրարից մեծ ու փոքր ու ոճով իրարից տարբեր, բայց առաջին անգամ էր այսքան պարզ մի եկեղեցում: Մարդիկ կորցրել են հավատը, ջերմեռանդ աղոթողների թիվը գնալով պակասում է, և հոգևորականներն ինչեր ասես չեն անում մարդկանց եկեղեցուն կապելու համար: Ժամանակակից ու վերացական ոճի եկեղեցիներ են կառուցում, աստծո տաճարներում թույլատրում են ջազային երաժշտություն և ռոկն ռոկ պարել, երիտասարդության համար կինոնկարներ են ցուցադրում, կրոնական թեմաներով զվարճալի ժամանցներ են կազմակերպում ու զեկուցումներ կարդում՝ «Աստված և ամուսնական բաժանությունները» կամ «Մերը մերձավորի նկատմամբ» թեմաներով: Սիդնեյի մի եկեղեցում նույնիսկ էժանագին ճաշեր են տալիս հավատացյալներին: Իսկ Սիդնեյից ոչ շատ հեռու, Ինգելսայդ վայրում հազվագյուտ մի տաճար կա, որ իր ստեղծողի անունով Բահալի է կոչվում: Այդ տաճարում կարող են աղոթել բոլորը, անկախ իրենց հավատից: Տաճարի ճակատին գրված է. «Բոլոր դարերում մարդիկ իրենց աստծուն են դիմել եկեղեցում, մզկիթում թե բուդդայական տաճարում: Նե՛րս մտիր, մա՛րդ, կարևորը հավատն է»:

Կարևորը հավատն է:

Աներևույթ մագնիտոֆոնից Մոցարտի ռեքվիեմն էր հնչում՝ զարմանալիորեն ահավոր ու սրտամաշ: Ցածրիկ պատվանդանի վրա, հասարակ ու սև դագաղում, մանրիկ ձեռքերն իրար վրա դրած, չորուկ-մորուկ մի պառավ էր պառկած, ասես հոգնությունից հենց նոր փակած կոպերով, խիտ կնճիռների մեջ տարակուսանքի, թե զարմանքի արտահայտություն:

Արմեն Գասպարյանը ետ նայեց ակամա: Ամբողջ սրահում երկուսով էին: Միայն բեմի վրա ինչ-որ դանդաղ արարողությամբ էր զբաղված հաճելի, սիրունատես մի հոգևորական:

- Է՛, խանութը փակել կարելի չէ,- ակամա արդարանալով շնջաց Պանդուխտ Չարեքյանը:- Կինս առևտուր կընէ: Աղջիկներս ալ իրենց գործին են: Բարեկամս պետք է գար Մելբուռնեն, կուշանա: Այստեղ ասանկ է... Շատ չի տներ, գիտե՞ս, հիմա կվերջացնեն... Ծեր կին էր...

- Այո՛,- ասաց Արմեն Գասպարյանը: Նրա ձայնը խոպոտ հնչեց: Կոկորդը քոր էր գալիս մի տեսակ:

Աներևույթ մագնիտոֆոնի մեջ կանանց երգչախումբը ամենաբարձր տոնի վրա ասես պահեց շունչը, և հանկարծ աստվածային երաժշտության ներքո բարձր ու հանգիստ հնչեց ջահել հոգևորականի ձայնը: Նա խոսում էր այնպես, ասես աստծո տունը հավատացյալներով լի էր, ու աշխարհը լի էր հավատացյալներով: Նա ինչ որ բան էր համոզում մարդկանց, հորդորում ու պահանջում էր մեղմ, երզնեցիկ ձայնով, և նրա աչքերը հառված էին ցածրիկ պատվանդանի վրա, հասարակ ու սև դագաղի մեջ պառկած փոքրիկ պառավի դեմքին: Նա խոսում էր դանդաղ, հատ-հատ արտասանելով բառերը, և այդ բառերը հնչել արձագանքում էին կիսախավար սրահի ցածրիկ կամարների տակ:

Արմեն Գասպարյանը տեսավ, թե ինչպես իր կողքին խուլ հառաչով ծնկի իջավ սամսունցի Պանդուխտ Չարեքյանը: Եվ որովհետև անհարմար էր այդպես միայնակ կանգնելը՝ ինքն էլ

ծնկի իջավ ամաչելով: Եվ հանկարծ լսեց, որ Պանդուխտ Չարեքյանը հեծկլտում է ու զարմացած նայեց նրան:

- Ախր չգիտես, թե ինչեր կըսե,- հեծկլտանքի միջից շնջաց Պանդուխտ Չարեքյանը:- Գաղթի մասին կխոսե, հայերի ճակատագրի մասին կխոսե և ավելույս կըսե իմ անբախտ, անհայրենիք Հայկանուշ մայրիկիս հոգուն համար...

- Դո՞ւք էիք նրան այդ մասին պատմել,- հարցրեց Արմեն Գասպարյանը:

- Ո՛չ, ու հենց ադոր համար կուլամ... Այս ի՞նչ ճակատագիր է, տեր աստված... Ի՞նչ գործ ուներ Հայկանուշ մայրիկս այս անտեր Ավստրալիո մեջ: Ի՞նչ կըլլար մի քանի օր շուտ գայիր, մա՛րդ, մայրիկս հայերեն խոսեր հետո: Ինձի համար խնդիր չէ, սակայն մայրիկս կմեռներ հայերեն խոսելու համար: Ողորմի հոգուդ, Հայկանու՛շ մայրիկ, հայերեն խոսող չեղավ քեզ հետ:

«Իհարկե, քեզ համար խնդիր չէ: Ոչ դու, ոչ էլ աղջիկներդ չեք մեռնի, հայերեն խոսելու կարոտից,- չգիտես ինչու չարացավ Արմեն Գասպարյանը:- Եվ այլևս ոչ ոք չի մեռնի: Ո՛չ ոք: Չեք ապրի, որ մեռնեք: Կոնհետանաք: Կդառնաք անգլիացի, ֆրանսիացի, թուրք: Եվ ոչ մեկդ չեք մեռնի: Դուք նույնիսկ կոալա չեք... Դուք ճարպիկ եք, ձեզ բոլորը սիրում են: Դուք ամեն տեղ էլ կարող եք ապրել և ուտվել»:

*

* *

Նա քայլում էր փողոցով արագ-արագ, շնչակտուր լինելով, քայլում էր մտքում խոսելով ու վիճելով ինքն իր հետ, Պանդուխտ Չարեքյանի հետ, աշխարհի հետ: Նա քայլում էր՝ չնկատելով գիշերային պայծառ ու նուրբ գովազդները, որոնք վառվում, հուրհրում, ճչում ու պտտվում էին: Քայլում ու զարմանում էր, որ պառավ մի կնոջ մահը կարող էր այդպես հուզել իրեն: Եվ մտածում էր, որ հարցը պառավ կինը չէ, որ զարհուրելի ու անարդարացի շատ բաներ կան այս տարօրինակ աշխարհում:

Բոբիկ ոտքերով իրենց գյուղի կանաչ արահետներով աղբյուրը վազող փոքրիկ Հայկանուշի մտքով կանցնե՞ր երբևէ, որ կյանքն ավարտելու է հեռո՛ւ-հեռո՛վ ւմ, անիմանալի մի երկրում, որի անունը Ավստրալիա է, և որտեղ հայերեն խոսող չկա: Ոչ ոք չկա, որին հայրերիդ լեզվով պատմես ցավդ, ասես թե ինչեր ես քաշել, մղկտաս ու լաց լինես հայերեն:

... Արմեն Գասպարյանը քանդեց օձիքը, խորը շունչ քաշեց ու նորից արագ-արագ քայլեց Ավստրալիայի ծովեզրյա այդ փոքրիկ քաղաքի գիշերային աղմկոտ փողոցով: Նա քայլում էր այնպես, ասես փախչում էր: Եվ նրա աչքերի առաջ ամենուրեք կոալաներ էին երևում՝ խղճալի, միամիտ, անպաշտպան կոալաներ:

Կորած կոալաներ:

1976 p.

Ինչո՞ւ Տրորեցիր Ծաղիկները

Աղջիկը նայեց ժամացույցին: Դեռ տասը րոպե կա: Ինքը դարձյալ շուտ է եկել: Հիմա եթե Գոհարին պատմի, կրկին նախատելու է: «Այդպես հո տղան քեզնից կհիսաթափվի, դու չես հասկանում, թե ինչ ես անում: Երբեք ժամանակից շուտ մի՛ արի: Աշխատի՛ր նույնիսկ ժամանակին չգալ, այլ մի քիչ ուշ: Թող անհանգստանա, թող ինքը նայի ժամացույցին, թող կարծի, թե այլևս չես գա: Ա՛յ, այն ժամանակ երբ գաս՝ նա այնպես կուրախանա, ասես նոր է քեզ տեսնում: Ես գիտեմ դրանց»:

Աղջիկը ժպտաց: Դե, ինչո՞ւ ձևացնել, թե չի շտապում, երբ ինքը ամբողջ օրը հենց այս ժամին էր սպասում: Ու ինչքան էլ դանդաղ են սահում սլաքները: Ինչ էլ լավ երեկո է: Եվ ինչո՞ւ, երբ ժամադրված ես, այդքան բարձր է լինում տրամադրությունդ ու բոլորի տրամադրությունը:

«Ինչ ահավոր սխալ կլիներ, եթե չուշանար գնացքը», - ասաց այն ժամանակ տղան:

«Ինչո՞ւ»:

«Որովհետև մենք չէինք հանդիպի»:

Աղջիկը շիկնեց, ինչպես այն ժամանակ:

Ի՛նչ համարձակն է: Այդ և՛ վիրավորեց նրան, և՛ միաժամանակ դուր եկավ:

Տղան բարձրահասակ էր, թիկնեղ, շերտավոր բաճկոնով, որն այնպես սազում էր: Աչքերը պայծառ էին ու հեզնոտ: Ամբողջ կեցվածքը մի տեսակ ինքնավստահություն էր արտահայտում: Եվ աղջիկը անմիջապես զգաց, որ տղան իրեն անչափ դուր է գալիս: Ուղղակի անտանելի է: Առաջին անգամ են հանդիպում, բայց չի կարողանում հեռացնել աչքերը: Հիմա ի՞նչ կմտածի իր մասին:

Լավ էր, որ վերջապես եկավ գնացքը:

Նրանք պատահականորեն դիմավորում էին միևնույն մարդուն: Գնացին իրենց այդ ընդհանուր բարեկամի տուն: Աղջիկը կարող էր չգնալ, բայց ուզում էր և գնաց: Ու այնտեղ էլ տղան ասաց.

- Խնդրում եմ, հանդիպենք մի անգամ: Դուք չե՞ք սիրում զբոսնել:

- Սիրում եմ,- շառագունեց աղջիկը՝ ասես խոստովանում էր:

*

* *

Եվ ինչպես միանգամից լցվեց կյանքը:

Այդ արահետով շատերն էին գնացել, դրա համար էլ տրորվել էր կանաչը, դեղնել: Բայց շուրջը, ինչպես միշտ, այնպիսի գույներ էին, այնքան սուր էր ծաղիկների հոտը, որ աղջկա գլուխը պտտվում էր: Նա կանգ առավ ու խոր շունչ քաշեց:

- Ի՞նչ պատահեց,- անհանգստացավ տղան,- գուցե օգնե՞մ ձեզ:- Ու ժպտալով, առանց պատասխանի սպասելու, թևանցուկ արեց աղջկան:

- Ոչինչ, ոչինչ,- աղջիկը խայթվածի նման ետ քաշեց ձեռքը: Հետո զգալով, որ կոպիտ ստացվեց, ավելացրեց մի տեսակ վախով,- պետք չէ, ես ինքս... ծաղիկները... պետք չէ...

- Դե ես քաղաքավարության համար... - ուները թոթվեց տղան,- քաղաքավարության կանոններն են այդպես պահանջում:

«Ինչ լավ է, որ այդպիսի կանոններ կան», - մտքում չարաձճիորեն ծիծաղեց աղջիկը՝ թևի վրա դեռ զգալով տղայի լայն ափի հաճելի հպումը:

- Դե եթե կանոններն են այդպես պահանջում... - նա ծալեց ձեռքը, որը տղան բռնեց զգուշությամբ:

Ու երկուսն էլ ծիծաղեցին սրտանց, երկար, առանց իրար նայելու:

Ինչո՞ւ ծիծաղն այդքան արագ է մտերմացնում մարդկանց:

Հետո կատարվեց մի անչափ հաճելի բան: Պարզվեց, որ երկուսն էլ հիացած են Սարյանով և նույնիսկ վիճելու ոչինչ չունեն Ներսիսյանի մասին: Այսինքն, ճիշտն ասած, աղջիկը չէր էլ խոսում, խոսում էր միայն տղան, և անհնար էր նրան չհավատալ: Դեմքը շառագունել էր, ավելի պայծառացել, աչքերը ոգևորությամբ փայլում էին: Եվ աղջիկը չէր կարողանում հայացքը հեռացնել նրանից: «Որքա՛ն գեղեցիկ է,- իրեն մինչ այդ անծանոթ մի առանձին հպարտությամբ նկատեց աղջիկը,- և ինչպես մի քանի խոսքով կարողանում է բնորոշել մարդկանց»:

- Սարյանի արևը ավելի վառ է, քան իսկական արևը,- ասաց տղան,- նրա նկարների առջև ես շոգում եմ,- ու հանկարծ դարձավ աղջկան.

- Դու սիրո՞ւմ ես արև,- հարցրեց նա:

Աղջիկն ուզեց ասել «շա՛տ», բայց որովհետև ջահել էր և որովհետև մանկությունն անցկացրել էր սարերում, որտեղ ավելի շատ են անձրևները, դրա համար էլ ասաց.

- Այո՛, բայց ես սիրում եմ նաև անձրևը, որ գալիս է մեղմիկ, կամացուկ: Այդ ժամանակ բոլոր գույները մգանում են:

- Ա՛, Տերյան,- ասաց տղան,- հին է, շատ հին, չի կարդացվում:

- Ինչո՞ւ: Երևի խնջույքներո՞ւմ էք կարդում:

- Դե, չէ... Ուղղակի՝ անշշուկ քայլերո՞վ, գրկի՞ր ինձ, քո՛ւյր, շշու՞նջ, շրշո՞ւն... Անչափ շատ են զգացմունքները... հին է:

Աղջիկը տխրեց:

- Դե լավ, չկովենք Տերյանի համար: Նա ինքն էլ չէր ուզի,- տղան ծիծաղեց,- Բայց խոստովանիր, որ հին է, տխուր է: Դե ո՞ւմ են պետք այդ զգացմունքները մեր դարում: Հիմա հրթիռները... արբանյականավերը...

- Ո՛չ,- ասաց աղջիկը, նա չէր ուզում վիճել տղայի հետ: Նա այնքան գեղեցիկ էր և այնքան վստահ էր խոսում:- Ո՛չ,- կրկնեց աղջիկը,- ուրեմն դու կարծում ես, թե այդ նավերն ստեղծողները երբեք չեն տխրում, չեն սիրում երբեք: Կարծում ես նրանք լաց չեն լինում, երբ մեռնում է իրենց հարազատը... - աղջիկն ուզում էր շատ բան ասել, բայց չէր կարողանում ու լռեց:

- Դե լավ,- ասաց տղան մի տեսակ շփոթված,- միտք ունե՞ր Տերյանի համար...

Աղջիկը կնճռոտեց դեմքը: Մի՞թե նա չի հասկանում, որ հարցը այստեղ Տերյանը չէ: Բայց որքան գեղեցիկ է նա: Երբ անցնում էին փողոցով, շատերը պարզապես շրջվում ու նայում էին իրենց: Ձարմանալի աղջիկներ կան: Գալիս են դիմացից ու այնպես երկար են նայում տղային: Ուղղակի անտանելի է: Ինչպե՞ս կարելի է: Ինքն, օրինակ, երբեք այդպես չէր նայի, որքան էլ գեղեցիկ լիներ: Հետո՞ ինչ: Դե, իհարկե, նա էլ կկարծի, թե իր նմանը չկա:

«Չկա՛,- մտքում հառաչեց աղջիկը,- չկա՛»:

Տղան աշխատեց փոխել խոսակցության նյութը: Այնքան էլ ճարպկորեն չստացվեց: Բայց աղջիկը նա չէր ուզում տխրել, դրա համար էլ նրանք խոսեցին ուրիշ շատ բաների մասին, այնպիսի հեռավոր, տարբեր ու հաճելի բաների մասին, որ կարող են խոսել միայն աղջիկն ու տղան, երբ անցնում են ծաղկազարդ դաշտի միջով, նեղ ու տրորված մի արահետով, որով շատերն են անցել, երբ քայլում են թևանցուկ և երբ անչափ հաճելի է այդպես քայլելը:

Տղան պատմում էր իր աշխատանքի մասին, և աղջիկը պատկերացնում էր նրան այնպես հպարտ ու բարձրահասակ անցնելիս մեքենաների կողքով, որոնց մոտ բանվորներն են աշխատում: Տղան պատմում էր իր գյուտարարական մի փորձի մասին, և աղջիկը քնքշությամբ մտածում էր, թե որքան դժվար է գիշերները շարունակ գծել ու փորփրել մեքենայի մասերը: Այն էլ մենակ: Չգիտես ինչու, աղջկան թվում էր, որ եթե ինքը տղայի մոտ չէ, ուրեմն նա սարսափելի մենակ է:

- Եվ այդ բոլորը միայնակ,- հարցրեց նա:

- Համարյա թե,- ասաց տղան,- ճիշտ է, մի բանվորի համահեղինակից եմ վերցրել, բայց միայն ձևի համար: Նա գծագրերից ոչինչ չի հասկանում: Դե, հասարակ բանվոր է,- ավելացրեց նա:

Աղջկան դուր չեկավ «հասարակ» բառը: Բայց նա ոչինչ չասաց, որովհետև ուզում էր անընդհատ լսել տղայի ձայնը: Իսկ տղան շարունակում էր խոսել: Որքան գեղեցիկ է նրա ձայնը: Աղջիկը բռնեց իրեն այն բանում, որ չի լսում տղայի խոսքերը: Եվ անչափ զարմացավ, երբ տղան հանկարծ լռեց, իսկ հետո հարցրեց համարյա շշուկով.

- Ի՞նչ, մի՞թե ես քեզ դուր չեմ գալիս:

Միրտը բարախեց ուժգին, տազնապով, հաճելի: Դեմքը ջերմացավ:

- Ինչո՞ւ... Դուք մեքենաների... Ի՞նչ էիք ուզում ասել: Պետք չէ:

- Ուրեմն ինձ չէի՞ք լսում,- տղան ակնհայտորեն հիասթափված էր: Նույնիսկ բաց թողեց աղջկա ձեռքը,- թե՛ ձևանում եք: Բայց, միևնույն է, դուք ինձ դուր եք գալիս, հասկանո՞ւմ եք, դուք լավն եք ինձ հանդիպած բոլոր աղջիկներից: Հասկանո՞ւմ եք: Բոլորից գեղեցիկը:

- Իսկ ձեզ շատե՞րն են հանդիպել,- կամացուկ հարցրեց աղջիկը:

- Շատե՛րը,- չկարողանալով նահանջել՝ համարյա գոռաց տղան,- շատերը: Բայց ոչ ոք ինձ այնպես դուր չի եկել, ինչպես դուք: Ոչ ոքի մոտ գնալիս ես չեմ շտապել, չեմ հուզվել, հասկանո՞ւմ եք,- նա խլեց աղջկա ձեռքերը,- դուք ինձ անչափ դուր եք գալիս: Ես ձեզ կարող եմ ասել, որ սիրում եմ, բայց պարզապես այդ բառը չեմ սիրում, հասկանո՞ւմ եք:

Աղջիկը չգիտեր ինչ անել, նա կանգնած էր գլխահակ, ցնցված, շփոթված ու երջանիկ, չգիտեր որտեղ թաքցնել ձեռքերը: Հետո նկատեց, որ ձեռքերը տղայի ձեռքերում են ու փորձեց ետ քաշել: Միայն թե չնայի վեր, չնայի տղային, որովհետև այլևս անհնար է այսպես... Ու առաջին անգամ աղջիկը կյանքում զգաց, որ միաժամանակ թե ուզում է փախչել, թե մնալ, թե ուզում է անընդհատ, անվերջ լսել տղայի խոսքերը՝ սիրո առաջին խոսքերը կյանքում, թե փակել ականջները, ոչինչ, ոչինչ չլսել... ոչի՛նչ: Ու ոչ ոք թող ոչինչ չլսի, թող ոչ ոք չտեսնի ոչինչ, որովհետև ինքը միաժամանակ ուզում է ծիծաղել և լաց լինել երջանկությունից...

*

* *

- Օ՛, ինչ ծանր է, ինչո՞ւ ես ուշանում, սիրելի՛ս:- Մի խումբ էր, ծիծաղելով անցավ փողոցով՝ նայելով աղջկան:

Աղջիկը սթափվեց, բայց չբարկացավ, այլ ծիծաղեց ինքն էլ: Չէ՛, անհոգ եղեք, չի ուշանում: Աղջիկը նայեց ժամացույցին: Հիմա կգա: Ու հանկարծ պարզապես սրտի տրոփյունից զգաց, որ տղան գալիս է: Ավելի շուտ զգաց, քան տեսավ, որ գալիս է արագ-արագ, աշխատելով անցնել մարդկանց, աշխատելով նրանց գլուխների վրայից տեսնել, թե արդեն եկե՞լ է աղջիկը: Ահա տեսավ, ձեռքով է անում հեռվից, զգուշությամբ: Գալիս է:

Ինչո՞ւ այդքան երկար է թվում ճանապարհը:

- Վաղո՞ւց ես եկել,- արագ քայլելուց դեռ հևալով հարցրեց տղան:

- Ո՛չ,- աղջիկը ստեց ոչ թե իր, այլ տղայի համար:

- Իսկ ես այնպես վախենում էի, որ դու չես գա,- տղան թևանցուկ արեց նրան:

- Նույնիսկ վախենո՞ւմ,- աղջիկը հիշեց«ինձ հանդիպած բոլոր աղջիկներից» խոսքը ու վրեժ լուծեց:

- Այո՛,- ասաց տղան,- այն օրը... - հետո անմիջապես շտապով ավելացրեց,- դե լավ, թողնենք: Ո՞ւր գնանք այսօր:

- Ինձ համար միևնույն է:

- Իսկ ես ուզում եմ, որ միևնույն չլինի: Ես ուզում եմ, որ ամեն ինչ շատ-շատ հաճելի լինի քեզ համար: Ես ուզում եմ, որ դո՛ւ ուզես:

- Իսկ դու բոլո՞ր աղջիկներին էիր այդպես ասում,- աղջիկն զգում էր, որ զզվելի են իր խոսքերը, որ պետք չէ այդպես, բայց չէր կարողանում: Ուղղակի անհնար էր չասելը:

- Ինչ հիշաչարն ես,- ծիծաղեց տղան,- ոչ ոքի չեմ ասել, ազնիվ խոսք, ոչ ոքի, միայն քեզ: Դե գնա՞նք,- նա ձգեց աղջկա ձեռքը:

- Ո՞ւր:

- Ա՛յն, իսկապես,- տղան մտածեց,- գիտե՞ս ինչ, եկ գնանք ընկերոջս տուն: Վաղուց չեմ տեսել, կուրախանա: Այնտեղ միշտ հավաքվում են մերոնք:

- Չե՛մ,- աղջիկը ետ քաշվեց,- անհարմար է:

- Դե այստեղ անհարմար ոչինչ չկա, մի կուրսում ենք սովորել, հիանալի տղա է:

Թեև աղջկան դուր եկավ, որ տղան ընկերոջը «հիանալի» անվանեց, բայց և այնպես առարկեց կրկին.

- Իսկ եթե հարցնեն, թե ո՞վ եմ ես:

- Չեն հարցնի,- ասաց տղան,- հիմա չեն հարցնում,- ավելացրեց նա:- Դե հետո, վերջապես, դու իմ ... իմ ընկերուհին ես:

Նրանք քայլեցին իրիկնային փողոցներով, որոնք բոլորովին ուրիշ են ցերեկը: Թեքվեցին մի փոքրիկ փակուղի, որտեղ ծառերի վրայից հոսում էին սառը, մածուցիկ անտեսանելի կաթիլներ ու կանգ առան մի դարպասի մոտ, որի վերևում գրված էր. «Բակում կձան շուն կա»:

Աղջիկը ինքնաբերաբար, երկյուղով հավեց տղային:

- Ա՛յ,- տղան ծիծաղեց սրտանց,- երանի ամենուրեք կձան շներ լինեին:

Ինչ լավ էր, որ մութ էր, և նա չտեսավ, թե ինչպես վառվեցին աղջկա այտերը:

Դարպասը բացվեց:

- Այս ո՞ւմ եմ տեսնում, այս ի՞նչ լավ հյուրեր են,- կարճահասակ, թիկնեղ, նոսրացած մազերով երիտասարդը գրկեց ընկերոջը,- նե՛րս եկեք, նե՛րս եկեք, խնդրում եմ:

Բակում ծիծաղ հնչեց:

- Հյուրեր ունե՞ս, Հակո՛բ,- տղան անվճռականությամբ կանգ առավ, նայեց աղջկան:

- Դե ի՞նչ հյուրեր, մեր ակումբի անդամներն են,- ծիծաղեց Հակոբը,- հենց լավ ժամանակին եք եկել:

Այգում, ծառից կախված մեծ լապտերը լուսավորում էր սեղանը, որի շուրջը մի քանի տղաներ ու աղջիկներ կային: Աղջիկը զգաց, որ հավաքվածների տրամադրությունը Բարձր է: Նրան անչափ դուր եկավ, որ նստածները Բարձրացան տեղերից, առաջարկեցին իրենց աթոռները:

Որքան հաճելի է խնջույքը իրիկնային այգում, երբ կողքիդ է քո մտերիմը, քո սիրելին: Իսկ ձեզնից այն կողմ ամենուրեք մուր է, խորհրդավոր, անշարժ մուր: Աղջիկը զգաց, որ գլուխը հաճելիորեն պտտվում է ու երբ երգեցին բոլորը՝ ինչ-որ հին, տխուր մի երգ, ինքն էլ երգեց կամացուկ, գոհ, որ երգում են բոլորը, և որ ինքն էլ, այ այսպես, բոլորի հետ կարող է երգել:

Եվ եթե դժգոհ էր, միայն նրա համար, որ տղայի խոսելու ժամանակ ամաչում էր նրան նայել: Ինչո՞ւ, երբ ինքն այնքան ուզում է: Բայց ինչո՞ւ բոլորը կարող են նայել նրան, նույնիսկ հիացած՝ ինչպես այն աղջիկը, իսկ ինքը չի կարող: Նրան, ճիշտ է, անչափ շոյում էր, որ բոլորի ուշադրությանը արժանացածը հենց իր տղան է, մտերիմը, որի հետ, եթե ուզենա, կարող է Բարձրանալ ու հենց այնպես ինչպես եկել են, դուրս գալ, երկուսով միասին, առանց բոլորի, բայց և միաժամանակ խանդում էր...

Դե ինչպես բռնանաս սեփական սրտիդ:

Ահա, ընկերներից մեկը թեքվեց դեպի տղան: Աղջիկը շիկնեց, մտածելով, որ իր մասին է հարցնելու: Մարդը աշխատում էր կամաց խոսել, դրա համար էլր աղջիկը լսեց.

-Էլի՞ այնպես... թեթև... ժամանակա...

- Մուս, ի՞նչ ես ասում... սա բոլորովին ուրիշ է:

Ես էլ այդ եմ ասում,- թույլ-թույլ ծիծաղեց տղան,- բայց, ազնիվ խոսք, Մոնան էլ լավն էր:

Աղջկան թվաց, թե լապտերն օրորվում է, և ամեն ինչ օրորվում է իր շուրջը, ամեն ինչ՝ շշերը, սեղանը, մարդիկ, մուրը: Նա զգաց, որ նույնիսկ մի վայրկյան ավելի չի կարող մնալ ու հանկարծ Բարձրացավ տեղից:

Միանգամից լռություն տիրեց այգում:

Հետո ինչ-որ մեկը, կարծես Հակոբն էր, բացականչեց.

- Մի նվա՛գ, մի նվա՛գ, հիմա պարենք:

Ինչ-որ մեկը շտապեց նվագարկիչի մոտ: Հաջորդ վայրկյանին աղջիկը հանգիստ ասաց տղային.

- Ես ուզում եմ գնալ:

- Գնանք, իհարկե,- տղան արագությամբ վեր կացավ,- ես ինքս էի ուզում ասել,- նրա դեմքը աղջկան գունատ թվաց:- Գնա՛նք:

Նվագը մի քանի վայրկյան տևեց: Երբ տղան ու աղջիկը դարպասի մոտ էին, ընդհատվեց միանգամից, ու լսվեցին խեղդված մի քանի ձայներ.

- Հիմար, ի՞նչ արեցիր... Դե, լավ, է՛...

Ինչ-որ մեկը արդարանում էր:

Աղջկան թվում էր, թե չի կարող քայլել, բայց քայլում էր սովորականից արագ: Եվ հանկարծ զգաց, որ հանգստացել է: Ոչ մի չարություն չկար տղայի նկատմամբ, բայց սրտում ինչ-որ տեղ դատարկվել էր: Իսկ իրեն թվում էր, թե կխելագարվի:

Տղան փորձեց թևանցուկ անել նրան: Աղջիկը ետ չքաշեց ձեռքը: Տղան ինքը բաց թողեց մի քանի քայլ հետո: Անհնար էր այդպես քայլելը:

- Հարբա՛ծ էր,- հանկարծ բղավեց տղան:

- Ո՞վ,- աղջիկը կանգ առավ: Նա այդ պահին այն աղջկա՝ Սոնայի մասին էր մտածում:

- Ո՞վ, այն ապուշը... այն,- տղան կակազեց,- դու էլ կկարծես, թե ինչ-որ լուրջ բան է եղել:

- Չեմ կարծում,- ասաց աղջիկը:

- Դե իհարկե,- չհասկացավ տղան,- ես մեղավո՞ր եմ, որ սիրում էր ինձ, որ... ընկնում էր ետևիցս:

- Պետք չէ,- հևաց աղջիկը:

- Ի՞նչը:

- Մի՛ պատմիր:

- Ո՛չ, ես ուզում եմ, որ դու իմանաս: Ինքս էի պատմելու քեզ: Ես նրա հետ մտերմություն էի անում, որովհետև խղճում էի... Հարցրո՛ւ իրեն,- տղան այլևս չէր մտածում, թե ինչ է խոսում,- հետո զգացի, որ այլևս չեմ կարող... այնքան սահմանափակ էր... Հետո նա ինձ առաջ ավելի գեղեցիկ էր թվում... Հարբա ծ էր հիմարը...

Նրանք անցնում էին մի փոքրիկ ծաղկանոցի մոտով: Վառ լույսերի տակ ասես սքանչելի գորգ լինելու ծաղկանոցը:

- Ինչ լավ ծաղիկներ են,- ասաց աղջիկը:

Տղան կանգ առավ զարմացած՝ ականջներին չհավատալով: Ինչ... ուրեմն չի՞ բարկանում, ուրեմն մոռացե՞լ է, ուրեմն ներո՞ւմ է: Ինչ հրաշալի, ինչ սքանչելի մարդ է այս աղջիկը:

- Ծաղի՞կ... Հիմա ես քեզ կբերեմ ամենալավը, այն վարդը,- տղան թռավ փոքրիկ ցանկապատի վրայով ու վազեց ծաղիկների միջով:

- Սպասի՛ր,- աղջիկը տեսավ, որ տղայի ճանապարհին տրորվել են ծաղիկները, խառնվել հողին,- ի՞նչ ես անում:- Նրա աչքերը արցունքով լցվեցին:

Տղան թեթև ուստյունով կրկին թռավ ցանկապատից ու կանգնեց աղջկա դիմաց, վազքից հևալով, ձեռքին բռնած մի վառ, մի հրաշալի վարդ:

- Վերցրո՛ւ,- ասաց տղան: Հետո հանկարծ նկատեց, որ աղջիկը լալիս է ու շփոթվեց սաստիկ: Չիմանալով, թե ինչ է անում, այլևս ոչնչի մասին չմտածելով - տղան գրկեց աղջկան:- Դե պետք չէ,- ասաց նա շտապով, քնքշությամբ:- Պետք չէ հասկանո՞ւմ ես, սիրելի՛ս, լա՛վ, պետք չէ, ինչո՞ւ, ախր ես քեզ սիրում եմ, հասկանո՞ւմ ես...

Աղջիկն արդեն հեկեկում էր, հեկեկում էր՝ այլևս չկարողանալով պահել իրեն, հեկեկում էր՝ ձեռքերով դեմքը ծածկած: Հետո անսպասելիորեն բարձրացրեց գլուխը:

- Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները,- պոռթկաց նա ցավով, տրտմությամբ ու նախատինքով նայելով տղային,- ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները... ինչո՞ւ...

Տղան անշարժացել էր:

Իսկ աղջիկը լալիս էր, իր առաջին սիրո, Տերյանի, հասարակ բանվորի, այն աղջկա համար, որ լավն էր, նրա համար, որ այդքան ցավոտ է սերը: Նա լալիս էր, որովհետև տղան չէր հասկանում: Նա ուզում էր ասել այդ բոլորը, նա ուզում էր, որ տղան հասկանա, որ ցավ զգա...

Բայց նա մի աղջիկ էր, որ ծնվել էր պարզ ու հպարտ սարերում, անտառների մոտ, որտեղ հաճախ են անձրևները, և որտեղ մարդիկ չեն սիրում խոսել, դրա համար էլ միայն լալիս էր, նայելով տղայի ցեխոտ կոշիկներին ու հեկեկում էր ուժգին:

- Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները...

Տղան ապշած էր: Բայց և այնպես հասկացավ, որ աղջիկը ծաղիկների համար չէր լալիս:

1959թ.

Պարտքը

Հիվանդանոցում շուտ են մտերմանում:

Միագույն խալաթները միանգամից հավասարեցնում են մարդկանց: Եվ արդեն անհետանում են մաթեմատիկոսն ու բանվորը, հողի մշակն ու ուսուցիչը: Նրանք հիվանդներ են:

Եվ, այնուամենայնիվ, մեր մեջ առանձնանում էր մի բարձրահասակ, պարթև տղամարդ: Վաթսունն անց կլիներ, բայց քայլում էր աշխույժով, գլուխը բարձր պահած: Հետաքրքիր դեմք ուներ՝ զծերը կոպիտ էին, խիստ, ասես ուրագով տաշած: Բայց երբ ժպտում էր, փոխվում էր անմիջապես, երեխա էր դառնում և երեխայի նման էլ ծիծաղում էր բարձր:

Երևի մեր հարկաբաժնի հիվանդներին, միասին վերցրած, այդքան մարդ չէր այցելում, որքան նրան: Գալիս էին ամեն տեսակի մարդիկ և առավելապես երեխաներ: Երեխաները պապիկ էին կանչում նրան, իսկ մնացած բոլորը՝ ուստա Գուրգեն: Պարզ էր, որ արհեստավոր է:

Սակայն մյուս օրը զարմանքով իմացա, որ նա մի խոշոր ֆաբրիկայի դիրեկտոր է: Ուրեմն ինչո՞ւ ուստա Գուրգեն: Եվ որովհետև հիվանդանոցում գաղտնիքներ չկան, երեկոյան շենքի շուրջը զբոսնելու ժամանակ հարցրի նրան:

- Բա ի՞նչ պիտի ասեն,- անկեղծորեն զարմացավ նա:- Բոլորն իմ աշակերտներն են եղել:

- Ձեր երեխանե՞րն էլ:

- Դե նրանք մանկուց այդ են լսել:

Մտերմացանք, ամեն երեկո միասին էինք զբոսնում հիվանդանոցի շենքի շուրջը: Զբոսնելու ժամանակ էլ հանգիստ չէին թողնում նրան, մոտենում էին, գրկում, մի քանի խոսք փոխանակում և ասում էին հրաժեշտի ժամանակ.

- Դե, չհոգնեցնենք, առողջացի՛ր, ուստա՛ Գուրգեն:

Ու նա ժպտում էր: Իսկ երբ ժպտում էր, փոխվում էր անմիջապես, երեխա էր դառնում:

Մի անգամ լսեցի, որ գեղեցիկ մի պատանի հրաժեշտի ժամանակ նրան ասաց.

- Ձեր արածը կյանքում չեմ մոռանա, ուստա՛ Գուրգեն:

Ուստա Գուրգենը ժպտաց, ձեռքով խառնեց նրա մազերը...

- Ես քո պապին պարտք եմ, բալա՛,- ասաց նա:

Ես նայեցի նրան: Բայց նա այլևս ուրիշ տեղ էր, շատ հեռու, երևի այդ տղայի պապի հետ, ու երևի խոսում էր մտքում, որովհետև ինչպես լինում է ոմանց հետ՝ ակամա շարժվում էին շրթունքները:

- Այդ ի՞նչ պարտք է եղել, ուստա՛ Գուրգեն:

Ուստա Գուրգենը միանգամից իմ կողմը շրջվեց...

- Ի՞նչ պարտք: Ախ, հա՛ ... Դե լավ, ուզո՞ւմ ես պատմեմ... Ինձ էլ է պետք: Գիտե՞ս, քառասուներկու տարի ոչ ոքի չեմ պատմել:

Ու մենք սկսեցինք դանդաղ պտտվել հիվանդանոցի շենքի շուրջը:

Ուրեմն, 1928 թվականին էր: Նոր Բայազետում էինք ապրում: Հայրս չկար, իսկ մենք շատ էինք, մայրս չէր կարողանում պահել: Լսել էինք, որ Երևան քաղաքում լավ փող են աշխատում: Ու ես մի օր ասացի իմ Վանիկ ընկերոջը.

- Ա՛յ տղա, արի գնանք Երևան, աշխատանք ճարենք:

Վանիկը իմ տարիքի տղա էր, տասնչորս տարեկան:

Այն ժամանակ Նոր Բայազետից Երևան երկու ճանապարհ կար: Մեկը մայրուղին էր: Սևանի միջով էր անցնում, իսկ մյուսը համարյա արահետ էր, սարերի արանքով դուրս էր գալիս Կոտայքի գյուղերը: Այդ արահետից հիմնականում իշապաններն էին օգտվում: Քթոցներով ձուկ էին տանում Երևան:

Դուրս էին գալիս երեկոյան և ադամամութին հասնում Երևան քաղաք: Քթոցների մեջ ձկները դեռ խլղբլղում էին: Հա՛ : Աչքովս եմ տեսել:

Երբ իմացավ, որ որոշումս հաստատ է, մայրս լաց եղավ, լաց եղավ ու գնաց մեր հարևան իշապան Նիկոլի մոտ, խնդրեց, որ քաղաք գնալիս ինձ էլ հետը տանի:

Երեկոյան դուրս եկանք Բայազետից: Նիկոլ բիձան ավանակին նստած առջևից էր գնում: Նրան հետևում էին հինգ ավանակները՝ իշխանով ու կողակով լի քթոցներով: Իսկ ամենավերջից քայլում էինք ես ու իմ ընկեր Վանիկը, իրար ձեռք բռնած:

Մենք առաջին անգամ էինք քաղաք գնում: Այնինչ ավանակները հիանալի գիտեին արահետը: Սարերն անցանք թե չէ, Նիկոլ բիձան քնեց, իսկ նրա ավանակը մանրիկ կտկտացնելով գնում էր իր ճանապարհը: Գիշեր էր, վախենում էինք ու հոգնել էինք սաստիկ, այնքան էինք հոգնել, որ երբ վերջնականապես համոզվեցինք, որ Նիկոլ բիձան խոր քնի մեջ է, մենք էլ անաղմուկ ցատկեցինք վերջից գնացող անասունների վրա: Բայց ափսոս որ ուշ էինք գլխի ընկել: Շուտով Նիկոլ բիձան հազաց, մենք հասկացանք, որ տեղ ենք հասել ու գլորվեցինք ավանակների վրայից:

- Սա Պլանի գլուխն է,- ասաց Նիկոլ բիձան,- էստեղ մնացեք, մինչև լուսանա: Ես ուրիշ ճամփով եմ գնալու:

Մենք մնացինք մի սև պատի տակ: Մեր գլխավերևում խշշում էին բարդիները, և տերևները անձրևի նման թափվում էին մեզ վրա: Աշուն էր:

Վանիկն ու ես ոտքերով հավաքեցինք տերևները, լցրեցինք մի բարդու բնի տակ, փոսի մեջ, պառկեցինք ու գրկեցինք իրար, ծածկվելով մեր երկար վերարկուներով: Վերևում ուրիշ էին երկինքն ու աստղերը:

Երբ արթնացանք, այսինքն՝ ավելի ճիշտ, երբ զայրացած մի դռնապան ցախավելի կոթով մեզ հանեց փոսից, պարզվեց, որ քնած ենք եղել համալսարանի շենքի պատի տակ: Արևը վաղուց դուրս էր եկել ու անխղճորեն չորացրել մեր տրեխները: Հոգիներս դուրս եկավ՝ մինչև որ հագանք նորից:

Գրկախառնվեցինք Վանիկի հետ, պայմանավորվեցինք հանդիպման համար ու ամեն մեկս գնաց իր ճանապարհով: Ես՝ Ամիրյան փողոց, հորս հորեղբոր աղջկա տուն, իսկ Վանիկն էլ իր հորեղբոր տուն՝ ինչ-որ տեղ Սպանդարյան փողոցում:

Ամեն հանդիպածի հարց ու փորձ անելով՝ գտա Ամիրյան փողոցը և երկհարկանի այն սև շենքը, որի երկրորդ հարկի սենյակներից մեկում ապրում էր Երան հորաքույրս: Երան հորաքույրս ճանաչեց ինձ...

- Գուրգե՛ն ջան, ո՛րք ջան,- մղկտաց նա:

Գրկեց, ներս տարավ, հաց տվեց:

- Մնա մեր տանը,- ասաց նա:- Գործ կգտնես, մի բան կմտածենք:

Երեկոյան Երան մայրիկի փեսան տուն եկավ: Ես այդքան գեր մարդ կյանքումս չէի տեսել: Բայազետում չկային: Եկավ, նայեց ինձ, նայեց Երան մայրիկին, ու ես նկատեցի, որ հորաքույրս կծկվեց:

- Դրա տեղը դրսո՛ւմ գցիր, հետը ոջիլ բերած կլինի,- ասաց նա:

Երկու շաբաթ քնեցի պատշգամբում: Ցուրտ էր: Ես ծածկվում էի բարակ մի վերմակով ու վրայից էլ վերարկուս էի գցում: Իսկ շորերս դնում էի բարձիս տակ:

Մի գիշեր հանկարծ զգացի, որ մեկը ձեռք է տալիս վերմակիս: Քունը գլխիս էր, ինձ թվաց, թե բացվել էմ, ու մայրս ծածկում է ինձ:

- Ծածկված եմ, մա՛մ ջան,- շնչացի ես:

Հետո նորից զգացի, որ մեկը շարժում է վերմակս ու վեր թռա: Մի ստվեր արագ իջնում էր փայտե սանդուղքով: Վախից սրտապատառ ծեծեցի տան դուռը:

- Հորքո՛ւր, հորքո՛ւր...

- Ի՞նչ կա, ա՛յ տղա,- ձայնեց հորաքույրս:

- Գող կա էստեղ, հորքո՛ւր:

- Աչքիդ երևացած կլինի, բալա՛ ջան,- ասաց հորաքույրս,- բայց դե որ վախենում ես, տեղաշորդ վերցրո՛ւ, նե՛ րս արի:

Ես եկա, գրկեցի անկողինս ու ... տեսա, որ հագուստս չկա: Բարձիս տակից տարել էին շավարս ու բլուզս: Հա՛:

Ի՞նչ պետք է անեի: Առավոտ շուտ վերարկուս հագա շապիկիս վրա ու սրթսրթալով գնացի, գտա Վանիկին: Բարի մարդ էր նրա հորեղբայրը, լույս իջնի գերեզմանին, մի հին շավար տվեց ինձ ու մի հին բլուզ:

Մինչ այդ ես արդեն աշխատում էի կանաչապատման գրասենյակում: Կայարանի մոտ էր: Մատաղ տնկիներ էինք մշակում ու տեղափոխում, ծառ տնկում: Գործի մի մասը կապալով վերցրել էին վեց գաղթական պոլսեցիներ: Հին տների կարոտը սրտներում, տանջված ու տխուր մարդիկ էին: Ես օգնում էի նրանց, և նրանք օրվա վերջում մի քիչ փող էին տալիս ինձ: Եվ ոչ միայն փող:

Ընդմիջմանը նրանք բացում էին իրենց կապոցները, ամեն մեկը կավե մի փոքրիկ թաս էր հանում՝ մաճնով լի: Ուտում էին լուռ, խորասուզված իրենց դառը հուշերի մեջ, բայց ամեն մեկը չէր մոռանում իր պնակում երկու գդալ մաճուն թողնել: Լցնում էին մի թասի մեջ, ինձ էին տալիս: Բարի մարդիկ էին:

Երբ ուշացած գործի տեղը հասա և արդարանալու համար ասացի, որ գողացել են հագուստս, պոլսեցիների ավագը, մի խոժոռ ծերունի հարցրեց.

- Գրել գիտե՞ս, տղա՛:

- Գիտեմ,- ասացի ես՝ զարմանալով, թե նրա ինչին է պետք իմ գրել իմանալը:

- Դե մի դիմո՛ւմ գրե,- ասաց նա,- աս երկրում ոչ մեկը իրավունք չունե նեղացնելու որբին:

Նրանք վերցրին դիմումս և ողջ խմբով դիրեկտորի սենյակը մտան: Ես նրանց չէի տեսնում, բայց դռան ետևից լսում էի նրանց գոգոռոցը: Նրանք պահանջում էին օգնություն ցույց տալ ինձ և անընդհատ կրկնում էին, որ ես որբ եմ: Իսկ ամենավերջում լսվեց ծերունու ձայնը...

- Դուն գիտե՞ս, թե ինչ բան է անտուն ու որբ մանուկը: Մենք գիտե՛նք:

Հետո բոլորն էլ դուրս եկան հաղթական աղմուկ-աղաղակով, ինձ խանութ տարան ու նոր շավար առան ինձ համար, նոր բլուզ առան ինձ համար, հանեցին, դեն նետեցին տրեխներս ու կոշիկներ առան ինձ համար:

Դա կյանքիս ամենաուրախ օրն էր, և ես ճիշտը որ ասեմ, այլևս մի առանձին չարություն չունեի գիշերն իմ շավարն ու բլուզը գողացած մարդու նկատմամբ:

Ես այլևս չգնացի Երան հորաքրոջս տուն, ես չէի կարող իմ նոր հագուստով պատշգամբում քնել: Երկրորդ փորձությանը այլևս չէի դիմանա:

Գիտեի, որ Ղանթարի շուկայում է լինում իմ տատի եղբոր տղան՝ Ավետիքը: Նա յուղի առևտուր էր անում: Շրջաններից եկած գյուղացիներից յուղ էր առնում, ճրագու խառնում հետը, վաճառում ու մի կերպ պահում իրեն:

Շատ ման եկա նրան այդ երեկո Ղանթարի շուկայում, բայց նա չկար:

Ի՞նչ անեի: Մութն ընկել էր արդեն, իսկ ես քնել էի ուզում: Ո՞վ չգիտե, որ ամենքից շատ քնել է ուզում անտուն մարդը:

Մտածեցի, մտածեցի ու գնացի Զարափի խան, որ այսօրվա Գերագույն դատարանի շենքի բակի կողմերում էր: Դա աշխարհի ամենակեղտոտ իջնանատունն էր, բայց ես ելք չունեի: Հողե պարիսպ ու մի մեծ կարմիր դարպաս, հողե ախոռներ ձիերի ու ավանակների համար ու մի գոմ էլ մարդկանց համար: Եվ համատարած ցեխ, համատարած կեղտ ու զարշահոտություն: Ահա՛ Զարափի խանը:

Ինձ այդտեղ էլ ներս չթողեցին: Նույնիսկ սպառնացին կտրել ականջներս, եթե անմիջապես չկորչեմ: Բայց ես հեռանալ չէի կարող: Աշուն էր, ցուրտ էր, իսկ ես քնել էի ուզում: Եվ, այնուամենայնիվ, գուր չեն ասում երևի, թե որբի աստվածը մեծ է: Իմ բախտից մի սայլ եկավ, ու բացեցին դարպասը: Ես կպա սայլին ու ականջներիս մեջ սրտի զարկերը լսելով, ներս մտա Զարափի խան:

Մութ էր: Ոչ մի տեղ լույս չկար: Շոշափելով պատերը՝ մի դուռ գտա, բացեցի ու հայտնվեցի էջերի ախոռում: Տաք էր: Կողմնորոշվելով գտա մուրր, անկյունում խոտը ետ տարա, պտկեցի մուրի մեջ, ինձ ծածկեցի խոտով ու քնեցի անմիջապես: Երևի ոչ մի թագավոր իր անկողնում այդքան հանգիստ քնած չլիներ: Հա՛:

Դեռ լույսը չէր բացվել, երբ ավանակները սկսեցին ուտել իմ վրայի խոտը ու ինձ հանեցին անուշ քնից: Ես անմիջապես դուրս նետվեցի ախոռից ու գնացի աշխատանքի: Իսկ երեկոյան Ղանթարի շուկայում գտա Ավետիքին:

- Ավետի՛ք ջան, մի բա՛ն արա, վիճակս էս է, քնելու տեղ չունեմ,- աղաչեցի ես:

- Հիմա գործս պրծնում եմ, Գուրգե՛ն,- ասաց Ավետիքը:- Գնանք մեր տուն, տես, չասես թե մի կողմ եմ քաշվում:

Բարձրահասակ, շիկահեր, սիրուն մարդ էր Ավետիքը: Քիչ հետո նա վերցրեց դատարկված յուղի պուլիկը, ու մենք դուրս եկանք շուկայից: Նրանց տունը Ղանթարի շուկայից հեռու չէր, գտնվում էր Ցախի մեյդան կոչվող վայրում՝ «Արարատ» գինու գործարանի մոտերքում: Մենք քայլում էինք իրար գլխի կիտված հողաշեն տների արանքով, նեղլիկ ու ցեխոտ քուչաներով:

Քիչ հետո նա կանգ առավ հողե մի մարդահասակ տան առաջ, բացեց դռան կախովի կողպեքն ու ասաց.

- Դե մտի՛ր, սա է իմ տունը:

Հողե հատակով ու հողե պատերով մի նեղլիկ, երկարավուն բուն էր դա: Մի բարձր թախտ կար այդ բնում և հիսուն-վաթսուն լիտրանոց մի կարաս՝ թախտի գլխավերևում: Թախտի մոտով կողքի վրա քայլելով կարելի էր միայն հասնել կարասին: Ուրիշ ոչինչ չկար: Աթոռի տեղ էլ չկար:

- Ավետի՛ք,- ասացի ես,- Ավետիք, որ թողնես, թախտի տակ կքնեմ:

- Թախտի տա՞կ,- գարմացավ նա,- կտեղավորվե՞ս:

Մի քիչ խոտ, մի քանի փալաս գցեցինք հատակին, հողի վրա, ու ես սողացի թախտի տակ:

Այդտեղ էլ ապրեցի մինչև գարուն:

Հիմա հասնում եմ այն դեպքին, որի համար սկսեցի այս երկար պատմությունը:

Արդեն չորս-հինգ ամիս էր, ինչ Ավետիքի թախտի տակ էի ապրում: Ամեն երեկո, աշխատանքից հետո գնում էի Ղանթարի շուկան, որպեսզի Ավետիքի հետ տուն գնանք: Հա՛, չմոռանամ ասել, որ արդեն Վանիկի հետ բանվոր էի աշխատում Դավայաթաղ կոչված թաղամասում նոր կառուցվող էժանագին շենքերի վրա: Գալիս էինք, Ավետիքը բացում էր կախովի կողպեքով դուռը, ու մենք պառկում էինք քնելու: Բայց ի՞նչ քնել: Չորս-հինգ ամիս դիմացել էի, այլևս դիմանալ չէի կարող: Երևի նրանից էր, որ գարուն էր, իսկ ես երեխա էի: Ոչ, ոչ, հարցը թախտի տակ քնելը չէր, սովորել էի: Ուղղակի չէի դիմանում մեր գլխավերևում դրված կարասից եկող յուղի հոտին: Խելագարվում էի:

Բայազետում մենք կով ունեինք: Երբ տանը ոչինչ չէր լինում, Շուշանիկ մայրս թասով յուղ էր դնում սեղանին, ու մենք ուտում էինք հացով: Հիմա գրեթե վեց ամիս յուղի երես չէի տեսել: Այսինքն՝ տեսնում էի ամեն օր, բայց հնարավորություն չկար ուտելու և դրանից ավելի էի տառապում: Երբեմն-երբեմն երեխայի համառությամբ ես երկար նայում էի կարասին: Ավետիքը տեսնում էր իմ հայացքը, բայց շրջում էր գլուխը ու անկողին մտնում: Ի՞նչ աներ խեղճը. հնար չունեի, հագիվ էր ծայրը ծայրին հասցնում:

Բայց ե՞ս ինչ անեի: Գիշերները այլևս չէի կարողանում քնել: Ինձ խենթացնում էր յուղի հոտը:

Ու որոշեցի գողանալ: Ինչպես հիմա իրավաբանները կասեն՝ դա կանխամտածված գողություն էր: Աշխատանքի վերջում Վանիկին ասացի.

- Առավոտ շուտ փուռ կգնաս, ինչքան էլ հերթ լինի կկանգնես ու երկու կիլո սանգակ կառնես...

- Վա՛հ,- գարմացավ Վանիկը,- Մանթաշո՞վն ես, ինչ ես...

Մի քանի հատ լրագիր գնեցի, թաքցրեցի բլուզիս տակ, որ Ավետիքի կասկածը չշարժեմ ու թախտի տակ մտա՝ քնելու հաստատ վճռականությամբ:

Անհանգիստ էր Ավետիքը, չէր կարողանում քնել, իսկ ես շունչս պահած սպասում էի, որ կարողանամ իրագործել ծրագիրս:

Հասկանում էի, որ ստորություն է արածս: Բա մարդը քեզ տուն թողնի, քնելու տեղ տա, իսկ դու... Բայց ոչինչ չէի կարողանում անել ինձ հետ: Յուղի հոտը հետապնդում, հալածում էր ինձ, հանգիստ չէր տալիս: Իմ ուժերից վեր էր դիմադրելը:

Վերջապես լսեցի Ավետիքի խաղաղ, հանդարտ շնչառությունը: Բայց դեռ երկար ժամանակ սպասում էի՝ շունչս պահած, սիրտս տրոփում էր տագնապով ու անհանգստությամբ, ձեռքերս դողում էին: Ու հենց այդ դողացող ձեռքերից մեկը թախտի տակից պարզելով, մտքրեցի կարասի մեջ ու մի մեծ բուռ յուղ վերցնելով դրեցի նախօրոք փռած թերթերի վրա: Հետո մտածեցի, մտածեցի, տանջվեցի, հայհոյեցի ինձ ու ձեռքս նորից մեկնեցի կարասին...

Անաղմուկ փաթաթեցի թուղթը ու ականջ դրեցի: Ավետիքը խոր քնի մեջ էր: Յուղը հիմա ինձ մոտ էր, կողքիս, թղթի մեջ, ու ես այլևս համբերել չէի կարող: Հագնվեցի անձայն, վերցրեցի փաթեթն ու դուրս ծլկեցի կիսաբաց դռնից, այլևս այս տունը չվերադառնալու հաստատ վճռականությամբ:

Վազելով հասա շինարարություն, թռա մեր փորած հիմքի մեջ ու սպասեցի: Քիչ հետո եկավ Վանիկը:

- Հաց բերե՞լ ես,- հարցրեցի անհամբեր:

- Հա՛, - ասաց Վանիկը ու ինքն էլ թռավ փոսի մեջ:

Բացեց տոպրակը: Հացի հոտը աշխարհը բռնեց:

Հացերը տաք-տաք էին: Մենք յուղը բռերով դնում էինք սանգակ հացի վրա, արագ-արագ փաթաթում և ուտում էինք ագահաբար, հալածվածի նման, շնչասպառ լինելով ու խեղդվելով հաճույքից:

Դե տարիքով մարդ եմ, շատ եմ ապրել աշխարհում, մի քանի անգամ արտասահմանում էլ եմ եղել, կերել եմ ինձ ծանոթ ու անծանոթ շատ ուտելիքներ, բայց այդ տաք հացի ու յուղի համը ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ այլևս չեմ զգացել: Դա ուրիշ էր: Դա հրաշք էր:

Դրանից հետո, իհարկե, Ավետիքին չտեսա:

Հենց շինարարությունում էի քնում: Աշխատանքից հետո ավագ մաղելու ցանցը դնում էի տաշված չորս տուֆ քարի վրա, մի քիչ թեփ էի լցնում վրան ու քնում էի: Արդեն զարուն էր, տաք էր, հեշտացել էր ապրելը:

Մինչև 1933 թիվը բանվորություն արեցի: Հետո Թբիլիսիում ամուսնացած քույրս իր մոտ կանչեց ինձ: Կոշկակարություն սովորեցի, արհեստավոր դարձա, բանֆակ էի հաճախում... Արդեն դասավորում էի կյանքս: Բայց պատերազմն սկսվեց:

Պատերազմից Երևան եկա իբրև պահեստի սպա:

Առաջին գործս այն եղավ, որ գտնեմ Ավետիքին:

Գնացի Յախի մեյդան ու ... տեսա, որ ոչ Յախի մեյդանը կա, ո՛չ կախովի կողպեքով փոքրիկ դուռը, ու ո՛չ էլ հողե այն տունը, որի մեջ ես մեծ մեղք գործեցի:

Շատ ման եկա շուկայում, բայց յուղ վաճառող Ավետիքը ոչ մի տեղ չկար: Մտածեցի, որ գյուղում կլինի: Ավարտվել էր պատերազմը, բայց շատ ծանր օրեր էին, գուցե գյուղ է գնացել ու կարտոֆիլ է մշակում, որ պահի ընտանիքը, ո՛վ գիտե:

Մի մեծ զամբյուղ միրգ առա, օղի վերցրի, երկու բոքոն հաց ու մի փոքրիկ կճուճ յուղ, վեր կացա ու գնացի Բայազետ, այն ժամանակ Ջեյնալ կոչվող գյուղը, որտեղ նրա ծնողներն էին ապրում:

Ձայն տվեցի, դուրս եկավ մայրը, ճանաչեց ինձ, գրկեց ու ճշաց աղեկտուր, քանդեց մազերը ու սկսեց բարձր աղաղակել՝ երգելով, խոսելով ու լալով:

Ու ես իմացա, որ պատերազմում զոհվել է Ղանթարի շուկայում պուլիկով յուղ վաճառող իմ բարեկամ Ավետիքը: Եվ մայրը հիմա պահում է նրա որբերին:

Ու ամեն տարի առիթով, թե անառիթ, երբ Բայազետ էի գնում, անպայման մտնում էի նաև Ջեյնալ՝ երեխաներին միրգ ու նվերներ էի տանում... հին մեղքս քավելու, պարտքս հատուցելու համար... Բայց ամեն անգամ քիչ էր թվում իմ արածը: Եվ մինչև հիմա էլ քիչ է թվում:

Ուստա Գուրգենը վերջացրեց իր պատմությունը, ժպտաց:

- Ահա՛, պատմեցի ու թեթևացավ հոգիս:

- Ուրեմն այդ պատանին...

- Ավետիքի թոռն էր,- ասաց ուստա Գուրգենը:

1980թ.

Կսկիծ

Անելկայի Հիշատակին

Նա բացեց դուռն ու պատշգամբ դուրս եկավ: Աստղագարդ, խաղաղ գիշեր էր: Դիմացի շենքում՝ մեկ այստեղ, մեկ այնտեղ մարում էին լույսերը: Ցածում փողոցն ամայի էր ու անկյանք, և միայն ջրող ավտոմեքենան էր երկար շոշափուկները տարուբերելով, հռնդալով թրջում փոշոտ մայթերը... ամայությունն ասես ավելի ընդգծելով:

«Բայց հիմա ի՞նչ պետք է անեմ», - մտածեց Շավարշ Արամյանը: Ավելի ճիշտ՝ նա սկզբում մտածեց, թե Աննան հիմա այնտեղ ի՞նչ պետք է անի, հետո զգաց, որ դա անհեթեթություն է և նոր միայն ասաց ինքն իրեն՝ բա հիմա ես ի՞նչ պետք է անեմ:

Ցերեկը հողին էին հանձնել նրա կնոջը, որի հետ ապրել էր քսանութ տարի: Վերջին մարդիկ քիչ առաջ հեռացան՝ արագ-արագ մաքրելով ափսեներն ու դանակ-պատառաքաղները, ծալելով ու սանդղահարթակում կիտելով, չգիտես որտեղից տանը հայտնված, այլումինե ոտքերով սեղաններն ու այթոռները: Հետո մոտեցան նրան, սեղմեցին ձեռքը, ինչ-որ խոսքեր ասացին ու գնացին:

Հիմա տունն առաջվա նման էր, բայց հուսահատության աստիճանի դատարկ:

Աննան չկար:

Հոգեհանգստի և հուղարկավորության այդ ամբողջ ծիսակատարությունից Շավարշ Արամյանի հոգում ինչ-որ դառը նստվածք էր մնացել: Ո՛չ այն պատճառով, որ Աննան մահացել էր, ո՛չ Աննայի մահը նա դեռ չէր ընկալում և ավելի շատ զարմացած էր: Անդարձ կորստի ցավը չէր զգում դեռ: Դա երևի հետո պիտի գար: Նրան ավելի շատ դառնություն էին պատճառել հուղարկավորների անհարկի իրարանցումը, բարձրաձայն խոսակցությունները, ինչ-որ անծանոթ ու օտար մարդկանց գործնական միջամտությունները, վիրավորական շտապողականությունը: Կարծես թե բոլորը շտապում էին: Շավարշ Արամյանին թվում էր, թե նույնիսկ քառյակը ասես ընդունվածից ավելի արագ էր նվազում: Արագ էր նվազում նաև փողային նվագախումբը, և մարդիկ ոչ թե քայլում էին, այլ վազում և վազելով էլ տարան դագաղը: Եվ Շավարշին այդ պահին մի միտք էր զբաղեցնում միայն. հանկարծ չսայթաքի որևէ մեկը: Իսկ դիակառքը արդեն պլանում էր և նույնիսկ անհանգիստ ազդանշաններ էր տալիս խաչմերուկներում...

Եվ այնտեղ, գերեզմանոցում... բոլորը շտապում էին, ամեն ինչ արվում էր արագ-արագ, հևալով և այնքան արագ փոսն իջեցրին դագաղը, որ ցած թափվող քարերի շրխկոցից միայն նա հասկացավ, որ ամեն ինչ վերջացած է արդեն: Նա միանգամից հիշեց Աննայի վերջին խոսքերը ու շատ տխրեց: Աննան այն ժամանակ ասաց.

- Շավարշ ջան, խնդրում եմ, երբ իմ դագաղը կիջեցնեն, ասա թող աղմուկով չլցնեն քարերը...

Նա ուզեց ասել, նույնիսկ բարձրացրեց ձեռքը, բայց երևի ուշ էր արդեն, որովհետև ցած նետվող քարի մի վերջին շրխկոցից հետո սկսեցին հող լցնել: Իսկ հողը չէր շրխկում այլևս: Բանվորները ձեռքերով, ոտքերով ուղղակի հրում, թափում էին փոսի մոտ կուտակված փափուկ

շիկահողը: Իսկ հետո շատ արագորեն բլուր կազմեցին և, աղմուկով կոտրատելով պսակները՝ շիրիմը ծածկեցին ծաղիկներով...

- Կոտրատում են, որ չգողանան,- իր հարևանուհուն բարձրաձայն բացատրեց երևի խուլ մի պառավ:- Հա, տանում են ու նորից ծախում: Ես չեմ իմանում...

Հուղարկավորների մեծ մասին Շավարշ Արամյանը չէր ճանաչում և չէր էլ փորձում հիշել: Միայն զարմացած էր, որ այդքան մարդ է հավաքվել: Եվ ավելի շատ զարմանում էր, տեսնելով, թե որքան սզացողներ կան: Ինքն էլ էր ուզում լաց լինել, բայց ամաչում էր: Իսկ ուրիշները չէին ամաչում և լաց էին լինում սրտանց: Հատկապես մի դեռատի աղջիկ: Ձեռքերով գրկել էր հողաթումբը, համբուրում էր ու չէր թողնում, որ իրեն հեռացնեն գերեզմանից: Եվ լաց էր լինում սրտակեղեք, անմխիթար, մորմոքալով, հողոտ ձեռքերով սրբելով արցունքները: Շավարշը որքան էլ փորձեց, չկարողացավ հիշել դեռատի այդ աղջկան, բայց որովհետև վստահ էր, թե ինչ-որ տեղ տեսել է, ենթադրեց, որ Աննայի ուսանողուհիներից մեկը կլինի: Հետո չհամբերեց ու հարցրեց Աննայի եղբորը.

- Այն աղջիկն ո՞վ է, Լիպարի՛տ:

- Քո հորաքրոջ աղջիկն է, Շավա՛րշ,- զարմացած նրան նայեց Լիպարիտը:

- Որի՞,- հարցրեց նա:

- Ցողիկի:

Հա, իհարկե, Ցողիկի աղջիկը պետք է, որ լաց լիներ: Հանկարծակի նույն էր ունեցել և գյուղից անմիջապես բերել էին հանրապետական հիվանդանոց: Երկու թե երեք ամիս մնաց: Եվ Աննան ամեն օր այցի էր գնում նրան: Ամեն օր: Ցողիկը ինչ-որ առիթով պատմեց:

Զարմանալի կին էր: Ինչպես էր հասցնում ամեն ինչ: Տունը միշտ մաքուր էր և երեխաներն էլ միշտ հագնվում էին պարզ ու անթերի: Այդ միակ բանն էր, որ կարող էր նկատել Շավարշ Արամյանը: Մնացածը նրան չէր հետաքրքրում: Եվ, այնուամենայնիվ, երեխաների ինչ-որ խոսակցություններից, հեռախոսազանգերին Աննայի շշուկով տված պատասխանների պատանիկներից, ճաշի սեղանի շուրջ երբեմն-երբեմն ծայր առած զրույցներից Շավարշ Արամյանը կռահում էր, որ սոսկալի ծանրաբեռնված է Աննան: Գիտությունների թեկնածու էր, համալսարանում քիմիա էր դասախոսում, պարապում էր ասպիրանտների հետ, երեխաների հետ պատրաստում էր դասերը, ամեն օր հատուկ ճաշ էր պատրաստում ու տանում հորը, որովհետև մահացել էր մայրը, իսկ հայրը ուրիշների եփած ճաշերը չէր հավանում, աղջկան դաշնամուրի դասի էր տանում մի դպրոց, տղային մի այլ դպրոց՝ ջութակի... Եվ դարձյալ հասցնում էր հետաքրքրվել իր և Շավարշի հարազատներով ու բարեկամներով, օգնության հասնել հազար ու մի հարցում...

Մի օր հորեղբոր տղան հուզված ասաց.

- Շատ շնորհակալ եմ, Շավա՛րշ, դու փաստորեն փրկեցիր իմ Արմենին... Դե, նոր ամուսնացած տղա է, որ կինը չաշխատեր, ո՞նց պիտի ապրեին:

- Բայց ես ի՞նչ եմ արել,- զարմացավ Շավարշը:

- Բա որ աշխատանքի ես ընդունել տվել, քի՞չ է, ցավդ տանեմ,- ասաց հորեղբոր որդին:-Աննան ամեն ինչ պատմեց:

Աննա՞ն: Ճաշի ժամանակ հիշեց պատահածը ու հարցրեց: Աննան այնպես կարմրեց, ասես թե բռնվել էր հանցանքի պահին:

- Երեխաները կարիքի մեջ էին, ի՞նչ անեի,- ասաց նա ամաչելով:- Մեր կուրսի Կիմային խնդրեցի, լաբորանտ ընդունեց իր մոտ:

- Հա, բայց ինչո՞ւ ես ասել, թե ես եմ արել,- զարմացավ Շավարշը:

- Քո ազգականն է, Շավարշ ջան, մտածեցի, որ ավելի լավ կլինի, եթե կարծի, թե դու ես արել: Եվ, ի վերջո, ես, թե դու ի՞նչ տարբերություն:

Այսինքն, եթե Աննան չլիներ, Շավա՛րշ Արամյանը վաղուց կտրած կլիներ կապերը և՛ գյուղի հետ, և՛ ազգականների ու բարեկամների հետ: Հազվադեպ ընդհարումները, որ նա ունենում էր կնոջ հետ, հիմնականում հենց իր ազգականների պատճառով էին լինում:

- Եղբորդ ծնունդն է այսօր, Շավա՛րշ ջան, գոնե մի հինգ բույեով մտնենք:

- Այսօ՞ր... այսօր ինչպե՞ս գնանք,- փրկարար օղակ գտած խեղդվողի ուրախությամբ բացականչում էր Շավարշը - ... խանութները հիմա փակ են...

- Ես նվերը գնել եմ արդեն,- կամացուկ խնդրում էր կինը:- Ուրիշ դեպքում քեզ հո չեմ անհանգստացնում, չեմ կտրում գործից: Դու գիտես, մերոնց տները միշտ մենակ եմ գնում կամ երեխաների հետ: Իսկ այստեղ չի կարելի, Շավարշ, եղբայրդ է...

Շավարշ Արամյանը ինժեներ-կոնստրուկտոր էր աշխատում գիտահետազոտական ինստիտուտում: Նրա մտահոգումները միշտ թարմ էին ու ինքնատիպ, դրա համար էլ, որպես կանոն, ընդունվում էին թերահավատությամբ, անբարյացակամությամբ, երբեմն նաև թշնամանքով: Աշխատելով գիշեր-ցերեկ՝ նա կարողանում էր մի քանի օրվա մեջ մի խոշոր հայտնագործություն կատարել, բայց տարիներ էին անցնում, մինչև որ ընդունում էին նրա այդ հայտնագործությունը: Եվ գյուտի հաստատման ժամանակ սովորաբար միակ դեմը հենց ինքը՝ Շավարշն էր լինում, որովհետև հնացած էր համարում իր իսկ գյուտը և փոխարենն անմիջապես առաջարկում շատ ավելի կատարելագործված մի նոր տարբերակ, որը կրկին դիմավորում էին անբարյացակամությամբ ու գրեթե թշնամանքով:

Ամենակարող՝ իր մասնագիտության մեջ, նա բացարձակապես անօգնական էր առօրյա կյանքում և հիմնարկային-գործնական փոխհարաբերությունների մեջ: Նա ամեն օր աշխատանքի էր գնում ավտոբուսով, բայց եթե հարցնեին ինչ շենքեր կան իր երթուղու վրա, չէր իմանա: Նա ճանապարհը չէր նկատում, նա գիտեր միայն նպատակակետը: Երբ նոր էին ամուսնացել, մի քանի անգամ շուկա և խանութ գնաց: Բայց որովհետև ամենուրեք շփոթում էր հաշիվները և գնում այնպիսի ապրանքներ, որոնք ոչնչի պետք չէին, Աննան ժպտալով նրա ձեռքից վերցրեց ցանցազամբյուղը:

- Դա քո գործը չէ, Շավա՛րշ ջան,- ասաց նա:

- Լավ, մի՞ թե ես ոչ մի բանի պետք չեմ,- ընկճվեց Շավարշը:

- Դու հիանալի կոնստրուկտոր ես, դա քի՞չ է, ինչ է,- ծիծաղեց Աննան:- Միայն թե աշխատի՛ր: Մնացած մանր-մունր բաները թող ինձ:

Եվ Շավարշ Արամյանն այդպես էլ չիմացավ, որ էլեկտրաէներգիայի համար պետք է վարձ մուծել, որ պետք է երբեմն-երբեմն քիմիական մաքրման տանել հագուստները և վաղ առավոտյան թափել աղբը:

- Դու աշխատի՛ր, Շավա՛րշ ջան: Քո գործը ժողովրդին է պետք, իսկ իմը՝ միայն մեր ընտանիքին:

Այդպես էր ասում Աննան: Նա ինքն էր ամուսնու համար հագուստ ընտրում և գնում, որովհետև եթե թողներ ամուսնու հույսին, Շավարշը տարիներ շարունակ աշխատանքի կգնար նույն կոստյումով, նույն վերնաշապիկով և փողկապով, առանց զգալու, թե ինչ է հագել: Նույնիսկ ծխախոտն էլ Աննան էր գնում, և անպայման Շավարշի սիրած «Ախթամար» ծխախոտը: Եվ հաճախ էր պատահում, որ առանձնասենյակի բացված դռան մոտ ճաշասենյակ խուժած ծխի մշուշի միջից մեկ էլ հնչում էր Շավարշի ձայնը.

- Աննա՛, Աննա՛ ջան, ես սիգարետ չունեմ...

- Ունես, ունես, հիմա կբերեմ,- ծիծաղում էր Աննան:

Շավարշ Արամյանը պիջակի գրպանից հանեց ծխախոտի տուփը, մի սիգարետ վերցրեց ու հանկարծ մտածեց, որ ահա ինքը չգիտի էլ, թե որտեղ էր պահում Աննան սիգարետները: Հիմա տանն արդյոք սիգարետ կա՞ և եթե կա, որտե՞ղ է:

- Միայն թե դու աշխատի՛ր, Շավա՛րշ ջան:

Նա սովորություն չունեւր տանը պատմելու հիմնարկի և իր աշխատանքի մասին, բայց Աննան չգիտես որտեղից մանրամասն տեղյակ էր, թե ինչ է կատարվում գիտահետազոտական ինստիտուտում: Եվ մի օր, մի մղձավանջային օր, երբ Շավարշ Արամյանը հուսահատության մեջ նույնիսկ մի հիմար, անհեթեթ վճիռ էր ընդունում՝ այս նույն պատշգամբից երկար, շատ երկար նայելով փողոցի մայթին, ուսին զգաց Աննայի ձեռքի թեթև հպումը:

- Ես քեզ հո վաղուց եմ ճանաչում, Շավա՛րշ,- ասաց նա:- Դու աշխարհում ինձ հանդիպած ամենաազնիվ ու աշխատասեր մարդն ես: Դու ինչի՞ ց ես վախենում և ումի՞ ց ես վախենում: Վաղը մտի՛ր քո պետի մոտ և ասա՛ ինչ որ մտածում ես: Ասա՛ համարձակ, առանց ամաչելու... Ասա՛ անձամբ, և ոչ թե որևէ մեկի միջոցով, որը կարող է նույնիսկ քո՛ բառերը, բայց ա՛յլ շեշտադրությամբ հաղորդել: Դու ի՞նչ ունես կորցնելու, սիրելի՛ մարդ: Դու ընկճվելու ի՞նչ ունես: Դու միշտ ավելի շատ տվել ես՝ քան վերցրել: Եվ ուրեմն իրավունք ունես ասելու այն, ինչ մտածում ես: Երբեք չխեղճանաս, երբեք չնվաստանաս որևէ մեկի առաջ, որովհետև նախ դու մեծ տաղանդ ունես, որն ամենուրեք պետք է, և հետո տուն ունես, որտեղ հավատում ու սիրում են քեզ: Դու տուն ունես, Շավա՛րշ:

Հետո նրանք երբեմն-երբեմն հիշում էին այդ օրը և ծիծաղում էին սրտանց, իրար ուսի հենված՝ հենց այդ նույն պատշգամբից նայելով փողոցի փոշոտ մայթին:

- Դու ինձ այնքան անվանեցիր տաղանդավոր, որ ի վերջո համոզեցիր,- ասաց մի անգամ Շավարշը:- Ես ուրիշ էլք չունեի, ստիպված էի տաղանդավոր դառնալ:

Իհարկե դա հետո էր, շատ հետո, տարիներ անց, երբ հանկարծ պարզվեց, որ ուրիշ ոչ մեկը չի կարող այնպես կատարել գլխավոր կոնստրուկտորի պարտականությունները, քան Շավարշը:

Լեզենդ էր, թե իրականություն, բայց պատմում էին, թե այնտեղ, որտեղ պետք է վճովեր այդ հարցը, խորհրդականներից մեկը փորձում է զգուշացնել նախագահին.

- Ոչինչ չունեն առարկելու, բայց ասում են, թե... ինչպես ասեմ... ասում են, թե տարօրինակ մարդ է այդ Շավարշ Արամյանը... Ասում են, թե... մի խոսքով՝ խենթ է:

- Վերջնականապես համոզեցիք ինձ,- ժպտում է նախագահը:- Մեզ հենց նման խենթեր են պետք:

Բոլորը զարմացած էին այդ ընտրությունից, բոլորը՝ Աննայից բացի, որովհետև, երբ շփոթված և երջանիկ Շավարշ Արամյանը մի օր տուն մտավ միայն վերնաշապիկով, որովհետև ըստ սովորության, աստիճաններով բարձրանալիս արդեն հանել էր վերարկուն ու պիջակը, և կնոջը ասաց գրեթե շշուկով.

- Աննա՛, Աննա՛, դու հասկանո՞ւմ ես, ինձ առաջարկեցին աշխատել որպես գլխավոր կոնստրուկտոր...

- Իսկ ինչո՞ւ ես զարմանում,- հանգիստ ասաց Աննան,- այդպես էլ պետք է լիներ:

- Չէ, դու հասկանո՞ւմ ես,- կնոջ մազերը համբուրելով, հուզված շարունակեց Արամյանը,- ախր ես հիմա առանց խոչընդոտի կարող եմ իրականացնել իմ բոլոր հայտնագործությունները:

- Իհարկե,- ասաց Աննան,- ես շատ-շատ ուրախ եմ քեզ համար: Բայց որ ասեմ, չե՞ս նեղանա, Շավա՛րշ:

- Ե՞ս՝ քեզանի՞ց,- ծիծաղեց Շավարշը:

- Քո նախորդն էլ էր կարողանում իրականացնել իր բոլոր մտահղացումները, սիրելի՛ս: Բայց չե՞ որ դու ուրիշ ես: Դու Շավարշ Արամյանն ես և կարող ես առանց երկյուղի Շավարշ Արամյան փնտրել քո յուրաքանչյուր կոնստրուկտորի մեջ և իրականացնել նրա մտահղացումները և... Որովհետև,- ասաց Աննան,- հիմա մարդիկ բոլորն էլ ժամանակակից քաղաքում են ապրում, ժամանակակից շենքերի մեջ և բոլորն էլ դժբախտաբար պատշգամբներ ունեն...

- Ա՛խ դու իմ փոքրիկ, իմ հիշաչար ավագակ,- ծիծաղեց այն ժամանակ Շավարշ Արամյանը և երեխայի նման գրկելով՝ սենյակից պատշգամբ դուրս բերեց կնոջը:

Շավարշ Արամյանը զգաց, որ մրսում է ու զարմացավ, որ Աննայի ձայնը չի լսում: Որտեղ էլ լիներ, նա անպայման կզգար, որ ինքը մրսում է և պիջակը ձեռքին պատշգամբ դուրս կգար...

- Հո երեխա՞ չես, Շավա՛րշ, կմրսես...

Եվ հրաշքի նման նրան հանկարծ թվաց, թե ինչ-որ տեղից լսեց կնոջ ձայնը: Նույնիսկ պահեց շունչը՝ սպասելով, թե հիմա ուր որ է պիջակը կիջնի ուսերին և թիկունքին կզգա Աննայի ձեռքերի ջերմությունը:

Հետո միանգամից գլուխը ձեռքերին իջեցրեց ու լաց եղավ: Լաց եղավ այնպես, ինչպես ողջ կյանքում լաց չէր եղել: Եվ ափսոսաց, որ ամաչել է այնտեղ, գերեզմանատանը, որ ինքը չի գրկել ջարդոտված ծաղկեպսակներով ծածկված հողաթումբը, որ իրեն չեն փորձել պոկել գերեզմանից, որ ի՛նքը չէր լաց լինում այնտեղ՝ բարձրաձայն ու անմխիթար, հողոտ ձեռքերով սրբելով արցունքները:

1983 թ.

Չայներ

-Բարի լույս,- ասաց Վահրամն ինքն իրեն:

Միջանցքի հայելու միջից նայող մարդը անմիջապես պատասխանեց նրան: Վահրամը ափով շոյեց այտը, ծնոտը, հետո թափ տվեց ձեռքը ու երբ ուզում էր շրջվել, նրան թվաց, թե ինչ-որ բան ասացին իրեն:

- Ի՞նչ,- հարցրեց նա ու ավելացրեց,- դե լավ, լավ:

Հայելու կողքին, փոքրիկ մեխից կախված էր էլեկտրական ածելին: Դանդաղ սափրվեց՝ սառն ու ողորկ սայրերը սեղմելով փափուկ կնճիռներին, իսկ երբ հասավ կոպի մոտ, ուշադիր նայեց աչքերին ու տեսավ, որ իրեն էլ են նայում ուշադիր ու տխուր: Ածելին աղմկեց կզակի վրա ու այդ աղմուկի միջից նրան թվաց, թե խոհանոցում զնգզնգացին կաթսաները: Նա նույնիսկ սարքը ականջից հեռու պահեց ու թեքեց գլուխը, որպեսզի զնգզնգոցը կրկնվի, բայց խոհանոցում ոչ մի ձայն չկար, և Վահրամը կամացուկ ասաց.

- Հիմա կվերջացնեմ:

Նա վաղուց էր զգացել, որ տանը խոսում է ինքն իր հետ, բայց ոչինչ անել չէր կարող և չէր ուզում: Նա հենց այնպես չէր խոսում: Խոսում էր, որովհետև հարցեր էին տալիս և որովհետև ինքն էլ հարցեր ուներ տալու: Տունը ձայներով լի էր: Յուրաքանչյուր իրի, առարկայի վրա հետքեր կային, հին, ծանոթ հետքեր, որ ցավեցնելու չափ իրական հուշեր էին պահում: Պատշգամբ տանող դռան մոտ բազկաթոռն էր դրված մեծ-մեծ վարդերով, թիկնակի մեջտեղում վարդերը խունացել, թերթիկները չորացել, հեռացել էին իրարից: Երբ Սոֆին նստում էր բազկաթոռին, խունացած վարդերը չէին երևում: Սոֆին սիրում էր նստել այդ բազկաթոռին ու ասում էր՝ «Իմ գահը»:

Վահրամ Ռշտունին նկատեց, որ պատշգամբ տանող դուռը ամուր չի փակել: Սառը հոսանք էր գալիս ու փչում էր ուղիղ բազկաթոռի վրա:

- Ընը, միշտ այդպես է,- քրթմնջաց նա,- դռները միշտ ես պետք է փակեմ:

Հագնվեց, կոճկվեց ամուր, դրեց փափուկ լայնեզր գլխարկը և այդպես էլ կանգնած մնաց սենյակի կենտրոնում, ուսերը ետ զցած, ուղիղ ու ձիգ և միայն բարձր հայելու մեջ նկատեց, որ ինքն ուղիղ ու ձիգ չէ այլևս: Հայելու վերևում փակցված նկարից նրան էին նայում որդին, թոռն ու հարսը: Որդին խոժոռ հայացք ուներ: Հա, իհարկե, նա ուզում էր, որ բոլորը միասին նկարվեն, բայց կինն ասաց. «Լավ կլինի այս անգամ միայն մեր ընտանիքով, իսկ մյուս անգամ հայրիկի ու մայրիկի հետ, հա՞ »: Հետո նրանք երկար ժամանակ խնդրում էին, որ հայրիկն ու տիկին Սոֆին էլ գնան, բայց Վահրամ Ռշտունին լսել էր այդ խոսքերը ու չգնաց: Դրա համար էլ որդին խոժոռ է:

- Դե ես գնացի,- ասաց նա՝ նայելով նկարին,- գնամ հեռագիր տամ ձեզ:

Գրեթե անաղմուկ փակեց դուռն ու ցած իջավ աստիճաններով: Աստիճանավանդակի պատերից հանգիստ կարելի էր իմանալ, թե քանի երեխա է ապրում այս մուտքում, ինչ անուններ ու-

նեն, ինչ հասակ և ինչ թվանշաններ են ստանում մայրենի լեզվից: Բոլորից ներքևում Արմենի ստեղծագործությունն է: Թոռնիկը տուն էր նկարել և մոռացել էր դուռը, իսկ ծուռ ծխնելույզից ծուխը ոչ թե բարձրանում, այլ կողքի վրա գնում, հասնում էր մինչև անկյունը:

- Հիմա երևի ձեռքը հասնի ու ծուխը վեր բարձրանա,- մտածեց պապը:

Նա արդեն դուրս էր գալիս մուտքից, երբ դեմ դիմաց հանդիպեց հարևանին: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Միքայելյանի ձեռքերը ցրտից և լարվածությունից ճերմակել էին: Գրկին սեղմած թափանցիկ տոպրակների միջից երևում էին մրգեր, շշեր, ինչ-որ փաթեթներ, ինչ-որ պահածոներ...

- Ողջ՞ւյն, Վահրա՛մ Սմբատի,- ասաց նա՝ ինչպես միշտ խուսափելով հայրանվան «չ» վերջնատառից:- Օ՛, այս Ամանորը կրակ ու պատիժ է: Տեսնես Եզնիկ Կողբացին ու Փավստոս Բուզանդն է՛լ են ստիպված եղել շուկա գնալ:

- Բա՛րև, Ստեփա՛ն,- ասաց Վահրամ Ռշտունին:

- Ես կարճ կխնդրեմ, դուք երկար ընդունեք,- ասաց Ստեփանը,- որովհետև ձեռքերիցս կաղանդները վայր են թափվում: Եթե գաք մեր տուն և Նոր տարին միասին դիմավորենք, գիտցեք, որ ե՛ս էլ, մերոնք էլ երջանիկ կլինենք: Մենակ մ՛ի մնացեք, Վահրա՛մ Սմբատի...

- Շնորհակալություն,- ասաց Վահրամ Ռշտունին,- շնորհակալություն, Ստեփա՛ն:

Դրսում նա ոտքը ամուր դրեց ձյան վրա ու քայլեց մայթի աջ կողմով, պատերի տակով, նայելով տոնականորեն զարդարված ցուցափեղկերին, որոնց հետ ինքը ոչ մի գործ չունեք: Դռները բաց էին, որովհետև անընդմեջ հոսանքով ելումուտ էին անում մարդիկ՝ զամբյուղներով ու արկղերով ծանրաբեռնված, երջանիկ ու հուզված դեմքերով, վերարկուների օձիքները բաց: Մայթին՝ տրորված ձյան վրա, թափված էին նարնջի կեղևներ, կոնֆետի փաթեթաթղթեր, թեփ: Մեծ խանութի ցուցափեղկի մոտ մորթե մուշտակներ հագած երկու տղա քաշքշում էին իրար: Վախենալով, որ կընկնեն - Վահրամ Ռշտունին մոտեցավ, բռնեց նրանց: Նրանք դեռ գրգռված էին կովից, իրար դեմ էին մղվում և գրեթե կախվել էին մուշտակներից, որոնց օձիքները ամուր բռնել էր լայնեզր գլխարկով անձանոթ ծերունին:

- Դե, պապիկի՛ն հարցրու,- բղավեց տղաներից փոքրը՝ վեր քաշելով կարմիր ու թաց քիթը և վշտացած աչքերով նայելով ծերունուն:

- Ես գիտեմ, դո՛ւ հարցրու,- ասաց մեծը,- դու հարցրո՛ւ ու տե՛ս ոնց կծիծաղի:

- Լավ,- ասաց փոքրը,- վիզս բաց թող, պապի՛: Լավ,- ու ավելացրեց հևալով ու շնչասպառ,- ես ասում եմ, որ ձյունը Ձմեռ պապիկի մորուքից է թափվում, իսկ Աշիկը ծիծաղում է:

Աշիկը իսկապես ծիծաղում էր: Նա ծերունուն էր նայում ծաղրական աչքերով ու սպասում էր, որ փոթկար նրա ծիծաղի հետ: Եվ Վահրամ Ռշտունին մի քիչ մտածեց:

- Ծիծաղելու ի՞նչ կա,- ասաց նա՝ տխուր ու լուրջ հայացքով նայելով փոքրերից մեծին:

- Յա՞, - զարմացավ մեծը, - ուրեմն ձյունը մորուքի՞ց է թափվում:

- Իհարկե, - գլխով արեց նա:

- Տեսա՞ր, - հրճվանքից պայծառացած աչքերով, հաղթական բացականչեց փոքրը: - Ուրեմն, սո՞ւտ էին նկարել:

Վահրամ Ռշտունին առաջ շարժվեց տոնականորեն զարդարված ցուցափեղկերի կողքով, մի քիչ շտապելով, որպեսզի նոր հարցեր չտան, մի քիչ ուրախանալով թաց քթով փոքրիկի համար, մի քիչ ամաչելով այդ Աշիկ տղայի հուսախաբված աչքերից և տխրելով, որ նա այդքան շուտ է մեծացել ու արդեն չի հավատում սիրուն - սիրուն հեքիաթներին:

Նա հանկարծ պարզ, ուղղակի կողքից լսեց թոռնիկի ձայնը.

«Պա՛պ, իսկ ինչո՞ւ Ձմեռ տատի չկա: Ինչո՞ւ բոլոր տատիները թողնում գնում են, իսկ պապիկները մնում են»: Այն ժամանակ նա Արմենի համար հորինեց Ձմեռ տատի հեքիաթը: Ասաց՝ բարի տատիկները գնում են, որ իրենց թոռնիկների համար նվերներ ուղարկեն: Եվ Արմենն ասաց. «Ես նվեր չեմ ուզում, ես իմ Սոֆի տատիկին եմ ուզում»: Ու լաց եղավ: Ու ինքն էլ լաց եղավ, որովհետև ինքն էլ ոչինչ չէր ուզում:

Հետո, առավոտյան հանկարծ նկատեց, որ Արմենը որոնում է բարձի տակ և վշտացավ, որ տղան, այնուամենայնիվ, նվերներ էր ուզում: Ու թեև հեքիաթում Ձմեռ տատին միայն Նոր տարվա գիշերն էր թաքուն նվերներ բերում, բայց Վահրամ Ռշտունին սկսեց ամեն օր ինչ-որ բան պահել թոռնիկի բարձի տակ: Մի խնձոր, մի տանձ, մի մատիտ: Որովհետև դա առիթ էր դառնում Սոֆի տատիկի մասին խոսելու, և որովհետև մյուսները խուսափում էին հիշել նրան՝ չտխրելու, չտխրեցնելու համար, ապրելու համար: Եվ նա ամեն գիշեր նվերներ էր դնում Արմենի բարձի տակ, մինչև որ մի առավոտ իր բարձի տակ ինքը մի կոնֆետ նկատեց: Արմենը պապիկին էր նայում տխուր, հասկացող աչքերով ու հանկարծ ասաց. «Ձմեռ տատին է քեզ նվեր ուղարկել»:

- Չէ՛, երեխաները հիմա շուտ են մեծանում, - ասաց ինքն իրեն Վահրամ Ռշտունին:

- Էլ մի՛ ասեք, - արձագանքեց նրան շալի մեջ փաթաթված փոքրիկ մի կին, - արի ու ամիսը մեկ նոր կոշիկ առ դրանց համար:

- Իհարկե, իհարկե, դժվար է, - ամաչելով անմիջապես համաձայնեց Վահրամը:

Փոստի հեռագրական բաժանմունքում նա երկար ժամանակ նստած էր հեռագրաթղթի առջև ու գրիչն աննպատակ թաթախում էր թանաքի մեջ: Նա մտքում երկար խոսում էր որդու, հարսի ու թոռնիկի հետ, հարցեր էր տալիս ու լսում էր, և այնքան էր մոտեցել նրանց, որ սիրտը ուռչում էր: Սեպտեմբերին Կիևից եկել էին նրան տեսնելու, մի քանի օր մնացին, և Վահրամ Ռշտունին նկատեց, որ այլևս ինքն իր հետ չի խոսում: Տունը աղմուկով էր լցվել, հյուր էին գնում ու հյուր ընդունում: Իսկ մի անգամ էլ հայր ու որդի մինչև ուշ գիշեր խոսեցին, խմում էին քիչ-քիչ ու խոսում:

Ինչի՞ մասին էին խոսում... Մեծացել էր որդին, սպիտակ մազեր կային ճակատին թափված գանգուրների մեջ ու աչքերն էլ իր աչքերի նման բաց շագանակագույն էին դարձել: Այդպիսի բան չէր եղել: Այնքան զուսպ, այնքան հանդարտ տղա էր, բայց մեկ էլ հանկարծ գրկեց հորը, սեղմեց, գլուխը ուսին դրեց ու ասաց մի տեսակ խռոված ձայնով. «Ես քեզ շատ եմ սիրում, հայրի՛կ: Եվ ուզում եմ էսպես բռնել, բռնել, բռնել...»:

- Ես էլ ձեզ, բոլորիդ եմ սիրում,- աչքերը հեռագրաթղթին հառած շնչաց Վահրամ Ռշտունին,- շատ եմ սիրում:

Նա ոչ մի տեղ չէր շտապում ու հանդարտ քայլում էր փողոցով աչքերը կկոցած, որովհետև ձյունը փայլում էր արևի տակ: Իսկ շուրջը բոլորն անցնում էին հուզված, արագ-արագ, ասես թե մոռացել, կիսատ էին թողել կարևոր շատ գործեր ու հիմա շտապում էին ավարտել այդ գործերը, որպեսզի հանկարծ երեկոյան, երբ տասներկու անգամ խփեն ժամացույցի զարկերը, երբ ռադիոն ասի «Շնորհավոր Նոր տարի, բարեկամներ», իրենք հանգիստ սրտով, առանց պարտքի բարձրացնեն բաժակները: Միայն ավտոմեքենաներն էին շարժվում դանդաղ, երբեմն-երբեմն կողքի վրա սահելով սառցակալած ասֆալտի վրայով: Եվ գրեթե բոլոր ավտոմեքենաների կիսաբաց ետնապահեստներից կամ լուսամուտների միջից եղննու ճյուղեր էին կախված:

- Տոնածառը վերջին օրը չեն առնի,- ասաց Վահրամ Ռշտունին:

Նա ուզեց հիշել, թե կյանքում քանի անգամ է տոնածառի մոտ եղել, բայց չկարողացավ: Եղնինները շատ էին, տարբեր տեսակի էին և տարբեր մեծության, տարբեր ձևով էին զարդարված և տարբեր դեմքեր էին պտտվում նրանց շուրջը: Եղնինները կանգնում, շարվում էին իրար կողքի ու ձգվում, ձգվում էին ու պսպրում էին խաչերով, աստղերով, մումերով, լապտերիկներով, և անհնարին էր դառնում հաշվելը:

Ճաշեց դանդաղ, իսկ երբ կուր-կում խմում էր դառը սուրճը, տարեց մատուցողը եկավ նստեց կողքին: Ռեստորանում գրեթե հաճախորդ չկար, և մատուցողը նեղսրտում ու ձանձրանում էր: Մի քանի անգամ բղավեց ջահել աղջիկների վրա, որոնք սկուտեղներ էին տանում հարևան սրահը: Հետո եկավ, նստեց ծանոթ հաճախորդի կողքին:

- Ո՞նց եք, ընկե՛ր Ռշտունի,- հարցրեց նա:

Հաճախորդը հասկացավ, որ մատուցողը այդ հարցը տվեց թերևս միայն նրա համար, որպեսզի ինքն էլ նույն հարցը նրան տա: Մարդը ուզում էր խոսել, և Վահրամ Ռշտունին չուզեց վշտացնել նրան:

- Լավ եմ,- ասաց նա շտապով,- իսկ դո՞ւք ինչպես եք, Գարեգի՛ն:

- Էֆի,- աշխուժացավ Գարեգինը,- որ ասեմ լավ եմ, կհավատա՞ք: Քսանույթ տարի մատուցող եմ այս ռեստորանում և... զարմանալի բան: Տարին կարճ լինի, թե երկար, երկու օրը մեկ աշխատեմ, թե երեք օրը մեկ, միևնույն է: Հերթը պտտվում, պտտվում ու էլի Նոր տարվա գիշերն ինձ է բաժին ընկնում: Բայց ես էլ մարդ եմ, չէ՞: Ես էլ եմ ուզում Նոր տարին տանը անցկացնել, ընտանիքիս հետ: Ճի՞շտ է, թե չէ: Բհարկե: Առավոտյան մեր վարիչին հենց այդպես էլ ասացի: Ասացի՛ բավական է, ես ծեր եմ ու հոգնած եմ: Իսկ նա ծիծաղում է, ասում է՝ ընկեր Գարեգին,

մատուցողների մեջ թե ամենաջահելը, թե ամենաարագաշարժը, թե ամենաշնորհքովը դու ես: Գիտես, որ մեծ խնջույք է լինելու, առանց քեզ ո՞նց կլինի: Դե դո՛ւք ասեք, ընկե՛ր Ռշտունի, ես նրան ի՞նչ կարող էի ասել:

- Ոչ մի բան,- ասաց Ռշտունին,- ճիշտ է ասել. չե՞ որ դուք իսկապես ամենալավ մատուցողն եք, Գարեգի՛ն:

Մատուցողը շիկնեց տղայի պես, ժպտաց՝ գոհ հանդիմանանքով օրորելով գլուխը.

- Ըհը՛, դուք էլ նույնն եք ասում:

Հետո նայեց իր մշտական հաճախորդին, ուզեց ինքն էլ իր հերթին մի լավ ու հաճելի բան ասել նրան: Նայեց, նայեց ու ասաց.

- Գուցե դուք էլ երեկոյան գաք, հը՞: Շատ հետաքրքիր է լինում: Գալիս են բոլորն էլ շքեղ հագնված, ուրախ երգում, պարում են տոնաձառի չորս բոլորը: Մեծ տոնաձառ ենք դրել դահլիճի հենց կենտրոնում: Հետո ասեմ, որ Վարդանն էլ է լինելու: Գիտեք, չե՞, այնպիսի բաներ է ասում, որ ծիծաղից թուլանում ենք: Քսանութ տարի անընդհատ ես եմ աշխատել Նոր տարվա գիշերը, Բայց ամեն անգամ...

Գարեգինը կտրեց խոսքը, մի քիչ կմկմաց, աշխատելով կռահել, թե Վահրամ Ռշտունին զգա՞ց արդյոք, որ ինքն իր կամքով է ամեն անգամ աշխատում Նոր տարվա գիշերը: Բայց հաճախորդի աչքերը բարի ու ժպտուն էին, և տարեց մատուցողը ավելացրեց հանգստացած.

- Անպայման եկե՛ք: Ես ձեզ համար մի աթոռ կպահեմ: Հա՞... Հետո գիտե՞ք ինչ, գուցե և ոչ մի հաճախորդ էլ չգա: Կնասենք, կխոսենք: Կգաք, հա՞, ընկե՛ր Ռշտունի: Կսպասեմ:

Երբ ռեստորանից դուրս եկավ, ձյուն էր գալիս՝ հանդարտ ու փափուկ, և Վահրամն զգաց, որ տրամադրությունը բարձր է: «Ասես թե խամձ լինեմ», - քմծիծաղեց նա: Հետո մտածեց, թե ինչից այդպես բարձրացավ տրամադրությունը, և իբր չհասկանալով, օրորեց գլուխը: Թեև հաստատ գիտեր, որ պատճառը հին մատուցող Գարեգինի վերջին խոսքերն էին: «Կսպասեմ», - ասաց նա: Մեկն էլ այդպես ասաց: Ո՞վ էր: Հա, իրենց հարևանն էր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսորը: «Մենակ մի մնացեք, Վահրամ Սմբատի...», - ասաց նա:

- Զարմանալի մարդիկ են: Ինչո՞ւ են մտածում, թե ես մենակ եմ,- ասաց Վահրամ Ռշտունին:

Նա հանկարծ սկսեց պատկերացնել, թե իր բարեկամներից, հարևաններից, ընկերներից ում տուն կարող է գնալ, եթե ուզենա: Եվ այնպես, ինչպես որդու հետ խոսելիս, մի տեսակ լայնացավ սիրտը: Բհարկե, շատերը կան: Բայց թե, միևնույն է, ինքը ոչ մի տեղ էլ չի գնա: Չի կարելի: Նոր տարվա գիշերն ուրիշ է: Մարդիկ ուզում են իրենց տանը լինել, ընտանիքով լինել, բաժակները ձեռքներին հաշվել հին տարվա վերջին վայրկյանները: Հետո ճշալ ուրախացած, համբուրվել, բաժակներն իրար խփել ու շտապով, շտապով շատ կարևոր խոսքեր ասել իրար, շատ հաճելի, անձնական, միայն այդ վայրկյանի համար պահված խոսքեր: Նրանց խանգարել չի կարելի: Չի կարելի: Եվ հետո ինչո՞ւ պետք է ինքը ուրիշի տանը լինի: Իսկ իրե՞նց տունը: Իսկ եթե հանկարծ մեկը նայի Վահրամ Ռշտունու տան պատուհանին ու տեսնի, որ հանգած է լույսը: Ի՞նչ կմտածի: Իսկ եթե հին, հին օրերի նման, երբ տասներկուսից հետո շրջում էին ըն-

կերների տները, մեկը վճռի այցելել նրան: Ի՞նչ կստացվի: Չէ: Նա գիտեր, որ դա վաղուց, շատ վաղուց էր, որ քանի-քանի տարի այլևս երբեք արթուն չէին մնում մինչև առավոտ, բայց այդպես մտածելը հաճելի էր, և Վահրամ Ռշտունին ժպտաց:

Թե ինչպես էր հասել Կարապի լճի մոտ, ինքն էլ չգրաց: Օպերայի փոքրիկ պուրակը մարդկանցով լի էր: Երեխաները սահնակ էին քշում և չմուշկներով սահում լճակի սառցե հատակին: Նրանց պապիկներն ու տատիկները համբերատար դոփոփում էին լճափին, բարձրաձայն խոսում իրար հետ, զրույցն ընդհատելով միայն մի վայրկյան, որպեսզի ձայն տան իրենց անդադրում թռռնիկներին.

- Չույշ, չընկնես...

Քիչ այն կողմ, բաց բեռնատարի վրայից եղևնու ճյուղեր էին վաճառում: Ջահել մի կին, երեխան գրկած, պարզել էր ձեռքը, բայց չէր կարողանում վաճառողի մեկնած եղևնին բռնել: Վահրամը մոտեցավ, օգնեց, և արդեն ուզում էր հեռանալ, երբ մեկը ձայն տվեց նրան.

- Ընկե՛ր Ռշտունի, ընկե՛ր Ռշտունի, վերցրե՛ք:

Նա տեսավ, որ վաճառող տղան թափքից կռացած իրեն է մեկնել եղևնու փոքրիկ ու փարթամ մի ճյուղ: Նայեց նրան, չճանաչեց, բայց բարևեց շփոթված, հետո տարածեց ձեռքերը, նայեց եղևնու ճյուղ գնողների հերթին ու նորից տարածեց ձեռքերը՝ ուզենալով ասել, որ իրեն ճյուղ հարկավոր չէ: Բայց վաճառող տղան սխալ հասկացավ նրան:

- Ի՞նչ է, ես իրավունք չունե՞մ իմ ուսուցչին առանց հերթի մի տոնածառ տալու,- ասաց նա մարտահրավերով, ցրտից խզված ձայնով,- վերցրե՛ք, ընկե՛ր Ռշտունի:

- Վերցրե՛ք, վերցրե՛ք,- լավեց հերթի միջից:

Եվ Վահրամ Ռշտունին վերջնականապես շփոթված վերցրեց եղևնին ու, ճյուղի մեջտեղից բռնած, դուրս եկավ պուրակից:

- Ա՛յ քեզ պատմություն,- ծիծաղեց նա,- հիմա ես ի՞նչ անեմ այս եղևնին:

Ճյուղերին թանձր խեժահոտ կար, անտառային սառնություն ու թացություն: Ձյունը շարունակում էր իջնել հանդարտ, և փաթիլները գալիս, պտտվելով, խաղալով թառում էին եղևնու սուր ասեղների: Ասես աներևույթ մեկը բամբակի քուլաներ էր փչում, նետում տոնածառի վրա:

Մթնում էր: Ավելի ու ավելի քիչ էին ավտոմեքենաներ հանդիպում: Հետզհետե դատարկվում էին մայրերը: Նորանոր լուսավոր քառանկյունիներ էին հայտնվում շենքերի պատերին: Երկար փակված էին մնում խանութների դռները:

Քայլում էր Վահրամ Ռշտունին և ժպտում ինքն իրեն: Լավ, հիմա ի՞նչ անի այս եղևնին: Տուն տանելը միտք չունի: Չէ: Ինչի՞ նման կլինի դատարկ ծառը: Իսկ սա ընդամենը ծառ է, ծառի մի ճյուղ, և մարդիկ պետք է նրան տոնածառ դարձնեն, երեխաները պետք է դարձնեն տոնածառ ու պտտվեն չորս բոլորը շրջան կազմած ու երգեն զիլ ու սխալ, թլիկ լեզուներով.

«Տոնածառ ջան, տոնածառ...»:

Չէ, տուն տանելը միտք չունի: Իսկ գուցե թողնի մի տեղ ու գնա՞: Գուցե հենի այս պատի՞ն: Այնինչ երևի մարդիկ կան, որ չեն կարողացել եղևնի գնել ու հիմա դեռ որոնում են: Ո՞վ գիտե: Մի թե նրանք չէին, որ հերթ էին կանգնել բաց բեռնատարի մոտ: Վահրամ Ռշտունին հանկարծ հիշեց իրենց հավաքարարուհուն: Նա, օրինակ, եղևնի գնած կլինի՞: Ամուսինը պատկած է հիվանդանոցում: Հինգ, թե վեց երեխա ունի, որ ամբողջ օրը վազվզում են դպրոցի բակում: Սատանի ճտեր են, ձյան վրա բոբիկ են ման գալիս: Մայրն ամբողջ օրը բղավում է, որ հագնվեն, իսկ նրանց պետքն էլ չէ: Ուսուցչուհիները նախանձում են՝ նայելով նրանց կարմիր ու կլոր այտերին, դասամիջոցներին իրենց նագուկ ու քմահաճ երեխաներից են խոսում ու... տրտնջում: Հի՞նգն են, թե վեցը: Վահրամ Ռշտունին ամաչեց, որ նրանց ինչպես հարկն է չի հիշում և արդեն տրամվայում, սառը աթոռին նստած, մտքում մեկ-մեկ տալիս էր անունները.

- Խաչիկ, Վաչիկ, Հրաչիկ, Սիրանուշ, Մայրանուշ...

Չէ, իհարկե, մեկն էլ կա: Մի տղա էլ կա՝ Սիրանուշից փոքր ու Մայրանուշից մեծ: Ուրեմն վեցն են: Լավ է, որ շատ են: Մարդ պետք է շատ երեխաներ ունենա: Որ ինչքան էլ տանեն, մեկն այնուամենայնիվ մնա: Թե չէ ինչի՞ նման է սա: Դողում ես ամբողջ կյանքում ու մեկ էլ տեսար՝ թռավ: Իսկ նրանք վեցն են: Ափսոս, որ հիվանդ է հայրը: Տոնածառ հավանաբար չեն ունենա և տխուր կլինեն: Իսկ ինքը հանկարծ ներս կմտնի՝ եղևնու ճյուղը ձեռքին և...

Տրամվայը գրեթե դատարկ էր ու սլանում էր մեծ արագությամբ. մեկ աջ, մեկ ձախ հրելով երկաթե գծերը: Վերջին կանգառում ցած իջավ, աջ ձեռքով շարունակ բռնած եղևնու ճյուղը: Դանդաղ, մանրիկ քայլերով անցավ սառցակալած փողոցն ու հայտնվեց իրենց դպրոցի մոտ: Հավաքարարուհին բակի կողմից դպրոցի առաջին հարկում էր ապրում, և նրա տան պատուհանները լուսավորված էին: Կամացուկ ծիծաղելով իր դրության վրա, Վահրամ Ռշտունին անաղմուկ մոտեցավ առաջին պատուհանին, կոսցավ ու ներքև նայեց: Եվ տեսավ տոնածառը: Մեծ լապտեր էր վառվում եղևնու գլխին, տղաներից մեկը կանգնել էր աթոռի վրա ու շարժում էր բերանը, երևի արտասանում էր: Աթոռներին, թախտի վրա, ամեն տեղ երեխաներ կային: Ռշտունին ուղղեց մեջքը և ծիծաղեց: Հոգնել էր սաստիկ, ցավում էր աջ ձեռքը, ոտքերը սառել էին և վառվում էին ականջները: Բայց նա ծիծաղում էր, որովհետև ուրախ էր: Որովհետև երկար ու սրտաշարժ բաներ մտածելով եկել-եկել հասել էր աշխարհի ծայրը, բայց պարզվել էր, որ աշխարհի ծայրում էլ ամեն ինչ կարգին է, և տոնածառ ունեն հիվանդ մարդու երեխաները:

- Ընկե՛ր Ռշտունի, դո՞ւ ես, ա՛յ քեզ բան:

Նա այնպես շրջվեց, որ քիչ մնաց վայր ընկնի: Եղևնու ճյուղի կոթը աղմուկով քերեց ձյունը:

- Ա՛ա, դո՞ւ ք եք, Հրանու՛շ:

- Ես էլ կանգնել, կանգնել նայում եմ, թե էս ո՞վ է կեսգիշերին մեր պատուհանից ներս նայում: Դուք է՞լ էիք եկել դպրոցից ծառ տանելու: Ի՞նչ անես, ոչ մի տեղ չկար: Իսկ ավագակները կյանքս ուտում էին: Ու մեկ էլ առավոտը տեսնեմ ընկեր Ավագյանը մի լավ տոնածառ է բերում: Ապրեն նրա բալեքը, վատ օր չտեսնի կյանքում, ցամաք աչքով մնա: Ասում է՝ Հրանուշ

քույրիկ, վերցրո՛ւ, թող երեխաներն ուրախանան: Ասում է՝ դպրոցի համար շատ են բերել, քո երեխաներն էլ մեր դպրոցի երեխաներն են: Ապրի նրա արևը...

- Ձեր ամուսինը ինչպե՞ս է,- նոր միայն նկատելով կնոջ ձեռքի ցանցազամբյուղից կախված ալյումինե կաթսան ու դաստարկ ափսեները հարցրեց Ռշտունին, աշխատելով մարմնով ծածկել եղևնու ճյուղը:

- Լավ է, լավ է, շնորհակալ եմ, մոտիցն եմ գալիս: Ներս գնանք էլի, բա դու չես մրսո՞ւմ:

- Չէ՛, չէ՛,- հրաժարվեց Ռշտունին,- չեմ մրսում:

Նա իսկապես այլևս չէր մրսում, երբ վերադարձի երկար ճամփան անցնելուց հետո տրամվայից ցած իջավ Բարեկամության փողոցի անկյունում և քայլեց դեպի իր տունը: Տաք էր: Կտրվել էր ձյունը: Շուրջն ամեն ինչ մաքուր ու սպիտակ էր: Ոտնահետքեր համարյա չէին երևում: Նա քայլում էր զգուշորեն, շրջվում նայում էր իր մենավոր հետքերին ու նորից առաջ էր շարժվում՝ ձեռքին բռնած եղևնու ճյուղը: Մի քանի անգամ մտածեց թողնել որևէ տեղ, մի անգամ նույնիսկ իբր մոռացավ կանգառի նստարանին, բայց տասը-քսան քայլ անելուց հետո վերադարձավ ու նորից վերցրեց եղևնու ճյուղը: Ափսոսում էր, հետո խղճում էր մի տեսակ:

- Կտանեմ տուն,- ասաց նա,- թող մեր տանը մնա:

Իրենց տան ներքևում գտնվող մեծ խանութին մոտենալով, Վահրամ Ռշտունին բոց նկատեց ու կանգ առավ ակամա: Բոցը դույլի միջից էր ելնում ու ծածանվում,ալեկոծվում էր վերևում: Դույլի մոտ նստել, մատները կրակի վրա ծիծաղելիորեն շարժում, ասես խորովում էր խանութի պահակ Թաթոսը: Կողքին, պատին հենված, սևին էր տալիս հին հրացանը: Ոտնաձայն լսելով, Թաթոսը բարձրացրեց գլուխը ու ճանաչելով հարևանին, ձայն տվեց ուրախացած.

- Բարի երեկո, Վահրա՛մ եղբայր, ժամը քանի՞սն է:

- Բարի երեկո, Թադևո՛ւս,- ասաց Ռշտունին: Նա եղևնու ճյուղը հենեց ծաղկանոցի փոքրիկ ցանկապատին, ձախ թևն ու դաստակը թեք պահեց լույսի տակ:- Տասնմեկն է:

- Պահ, ուրեմն, մեկ ժամ հետո Նոր տարի է,- զարմացավ պահակը, և նկատելով եղևնու ճյուղը, ավելի զարմացավ:- Ո՞ւմ համար եք տանում, Վահրա՛մ եղբայր:

- Այնպե՛ս,- ձգեց ուսուցիչը:- Գուցե ձեզ պե՞տք է, այո՞: Վերցրե՛ք, վերցրե՛ք, խնդրեմ...

- Չէ՛,- ասաց պահակը,- մերոնք առել են, նախշել են արդեն:- Նա արկղի մի անկյունը քաշվեց:- Եթե չեք նեղվի, նստե՛ք, տաքացե՛ք, Վահրա՛մ եղբայր: Իսկական կրակն ուրիշ է:

Վախենալով, որ եթե հրաժարվի, պահակը կարող է սխալ հասկանալ, Վահրամ Ռշտունին նստեց նրա մոտ, շրջված արկղի վրա ու կրակին մեկնեց ձեռքերը : Տաքը դուր եկավ, հին, անցած օջախներ երևացին մատների արանքից, թվաց, թե ծուխը խողտացրեց աչքերը: Նա հազաց և երախտագիտությամբ լցվեց պահակի նկատմամբ:

- Լավ է,- ասաց նա՝ քանդելով վերարկուի կոճակները և լայնեզր գլխարկը քիչ վեր բարձրացնելով:

- Իհարկե,- ուրախ արձագանքեց Թաթոսը,- զուր չեն ասում, թե կրակը ձմեռվա վարդն է:

- Իսկ ձեր քունը չի՞ տանում, Թադևո՛ս... Դժվար է այսպես, ամեն գիշեր...

- Չէ՛,- ասաց պահակը,- իմ քունը ցերեկներն է տանում: Սովորել եմ: Մարդս ամեն ինչի սովորում է, մարդս ամեն ինչ տանում է...

«Այդպես է,- մտածեց Վահրամ Ռշտունին,- շատ տարօրինակ է, բայց այդպես է: Երբ փոքր էի և հանկարծ մտածում էի, թե մի օր ծնողներս չեն լինելու, քիչ էր մնում խելագարվեմ: Որովհետև գիտեի. ապրել չեմ կարող առանց նրանց: Բայց ահա ապրում եմ, ապրում եմ, թեև վաղուց նրանք չկան, թեև չկան եղբայրներս, ընկերներիցս շատերը, թեև չկա Սոֆին... Մտածում էի, թե մի օր անգամ չեմ կարող ապրել առանց որդուս, հետո թռնիկիս... Եվ այնուամենայնիվ ապրում եմ: Սա չի կարող մի ինչ-որ հասարակ բան լինել, չէ: Այստեղ մի շատ մեծ գաղտնիք կա, որ ես չեմ հասկանում և ոչ ոք չի հասկանում: Անհնարին է, որ մարդիկ հենց այնպես վերանան, չլինեն: Երևի ինչ-որ բան մնում է: Մնում են, չէ՞, հուշը, գործը, հետքերը, ձայները... Եվ դրանք էլ պահում են մարդկանց: Եվ դրանով էլ կապվում են հեռացածը, ներկան, եկողը և նորից հեռացածը, ներկան, եկողը... և այսպես անվերջ: Եվ դու մենակ չես: Ու հենց սա էլ է պահում: Ո՞վ է ինձ համար մատուցող Գարեգինը, եղևնիներ վաճառողը, պրոֆեսորը, հավաքարարուհին, այս պահակ Թադևոսը: Մարդիկ են: Եվ նրանք այսօր պահեցին ինձ, տարան իրենց հետ: Եվ բոլորը, որոնց չես ճանաչում, չես խոսել հետները, բայց կան, պահում են քեզ, տանում են իրենց հետ՝ առօրյա մեծ ու փոքր գործերով, մեծ ու փոքր հոգսերով: Եվ դու էլ երևի նրանց ես պահում, նրանց ես տանում»:

... - Մեր գործն էլ սա է, Վահրամ՝ եղբայր,- ասաց պահակը:- Բայց հիմա մի բան պիտի խնդրեմ, չպիտի մերժես: Քանի որ գիշերը տասներկուսին մերոնց հետ տանը չեմ լինելու, կնիկս հաց-մացի հետ մի շիշ գինի էլ դրեց: Որ խմեմ ու իրենց հետ լինեմ, որ ասեմ՝ շնորհավոր Նոր տարի: Չէ՛, չէ՛, չպիտի մերժես: Կնեղանամ: Կմտածեմ, որ հասարակ մարդ եմ, դրա համար էլ ինձ հետ հաց չես կտրում:

Ռշտունին ծիծաղեց բարձրաձայն պահակի պարզ խորամանկության վրա և ձեռքը նրա ուսին դրեց: Թաթոսն անխոս ժպիտով բացեց փաթեթը, մեջտեղ դրեց մի քիչ միս, մի քիչ լոբի, մի քիչ թթու, երկու խնձոր: Բացեց գինին, լցրեց միակ բաժակն ու մեկնեց ուսուցչին:

- Խմի՛ր, եղբայր, Նոր տարվա կենացը:

- Ո՛չ,- ասաց Ռշտունին:- Դեռ տասներկուսը չկա: Խմենք հին տարվա կենացը, հին տարիների կենացը:- Հանկարծ նա զգաց, որ կոկորդը սեղմվում է, և այլևս ոչինչ չասաց: Չախ ձեռքով հանեց փափուկ, լայնեզր գլխարկը ու խմեց գինին դանդաղ, հետզհետե բարձրացնելով գլուխը, աչքերը միշտ հառած եղևնու փոքրիկ, թեքված ճյուղին:

- Անուշ լինի:

Նա նորից լցրեց բաժակը...

- Հիմա մերոնք արդեն հավաքվել են սեղանի մոտ: Տղաներիս գիտես, չէ՞, Վահրա՛մ եղբայր, պինդ տղաներ են, գոհություն ասածո: Աղջիկներս էլ սիրուն, խոնարհ: Հիմա մեր տանը շատ լավ կլինի, Վահրա մ եղբայր:

Նա ինչ-որ բաներ մրմնջաց՝ հայացքը երկնքին, հետո միանգամից խմեց գինին, ու մնաց հպարտ, գոհ, ձգված դեմքով, աչքերը ինչ-որ տեղ հառած: Երևի իրենց տանն էր, կնոջ, տղաների, աղջիկների հետ: Եվ Վահրամ Ռշտունին չդիմացավ:

- Թաղևո՛ւս,- ասաց նա,- հիմա ե՛ս պիտի մի բան խնդրեմ ձեզնից:

- Ինձնի՞ց,- զարմացավ պահակը,- համարի՞ր եղած:

- Ուրեմն, գնացե՛ք տուն: Դեռ ժամանակ կա: Գնացե՛ք, միասի՛ն եղեք:

- Է՛, չեղավ,- ծիծաղեց պահակը,- ես ի՞նչ իրավունք ունեմ կեսու թողնելու: Մեր գործը...

- Ձեր փոխարեն ես կմնամ,- ասաց Վահրամ Ռշտունին,- դուք էլ գիտեք, որ ինձ ոչ ոք չի սպասում, ինձ համար ոչ մի նշանակություն չունի: Որտեղ ես՝ այնտեղ էլ մերոնք: Շատ եմ խնդրում: Գնացե՛ք, շնորհավորե՛ք Նոր տարին ու եկե՛ք: Հա՛:

Պահակը հին հարևանին էր նայում զարմանքով, տարակուսած, նրա նուրբ, փափուկ լայնեզր գլխարկին էր նայում և սև փողկապին: Հետո ասաց գրեթե կակազելով.

- Այդպես ո՞նց կլինի:

- Ոչինչ էլ չի լինի, գնացե՛ք: Եթե չգնաք, կմտածեմ, թե ինձ չեք վստահում:

- Յա,- շփոթված ծիծաղեց Թաթոսը:- Չգիտեմ էլ, թե ինչ ասեմ:

Պահակը դոփդոփում էր տեղում, չիմանալով ինչ անել, հետո հանկարծ կանգ առավ, նայեց ծեր ուսուցչին.

- Դե լավ,- ասաց նա,- զարմանալի մարդ ես: Հիմա ես գնում եմ, շուտ կգամ ու մինչև առավոտ մենք իրար հետ կլինենք, հա՛:

- Իհարկե,- ասաց Վահրամ Ռշտունին:- Գնացե՛ք, եղբա՛յր:

Նա վերցրեց հրացանը և արագ-արագ գնաց, համարյա վազեց փողոցով, իսկ երբ իրենց մուտքին հասավ, կանգնեց ու ետ նայեց:

Բայց Վահրամ Ռշտունին այլևս չէր նայում: Նա նստել էր՝ կռացած կրակով լի դույլի վրա, ձեռքերով խառնում էր տաք օդը ու նայում էր կարճ ցանկապատին հենված եղևնու ճյուղին: Ու որովհետև կկոցել էր աչքերը՝ նրան թվում էր, թե դա մի եղևնի չէ, այլ շատ են, շատ-շատ: Եղևնիները հեռագրասյունների նման ուղիղ շարքով ձգվում-ձգվում, հեռուներն էին գնում՝ հետզհետե փոքրանալով, ու խաղում, պսպղում էին անթիվ-անհամար խաչերով, աստղերով, մոմերով, լապտերիկներով...

Եվ ձմեռային տաք օդը ձայներով լի էր:

1967թ.

Իզաբել

Շառլ Ազնավուրին

- Ափսոս, որ խոսքերը չեմ հասկանում,- ասաց Լևոնը:

Ռաֆիկը ծիծաղեց միայն աչքերով.

- Չհասկանալու ի՞նչ կա,- ասաց նա,- մի քանի անգամ ու այն էլ շատ հստակ, մարդն ասում է.
«Իզաբել Լ, Իզաբել Լ, Իզաբել Լ»:

- Իզաբել Լ,- կրկնեց Լևոնը՝ մի պահ ուշադիր դիտելով ընկերոջը, աշխատելով կռահել՝ կատակո՞ւմ է, թե՛ ոչ,- Իզաբել Լ: Դա հասկանում եմ: Իսկ հետո՞ ...

- Իսկ հետո ի՞նչ կուզեիր, որ լիներ:

- Կուզեի հասկանալ մնացած խոսքերը, չե՞ որ նա ինչ-որ բան է ասում:

- Նա ասում է Իզաբել: Մի թե դա քիչ է:

- Դե, գիտե՞ս ինչ,- բարկացավ Լևոնը,- թե կատակում ես, ասա՛, տասը տարվա ընկերներ ենք ու մինչև հիմա էլ չեմ կարողանում որոշել՝ կատակում ես, թե ոչ: Ուրեմն էլ ինչո՞ւ են երգերի համար խոսքեր գրում:

- Այ, այդ մեկը չգիտեմ,- քնծիծաղեց Ռաֆիկը,- ազնիվ խոսք՝ չգիտեմ, թե ինչու են գրում: Ես, օրինակ, խոսքերի կարիքը չեմ զգում: Ու հավատա՛, ավելի շատ այն երգերն են սիրում, որ կամ խոսքեր չունեն, կամ էլ երբ խոսքերը չեմ հասկանում:

- Ստում ես,- բարկացավ Լևոնը,- նորություն չէ, ուզում ես ամեն ինչում ինքնատիպ երևալ: Եթե ես ասեի՝ խոսքերը պետք չեն, դու կապացուցեիր, որ առանց խոսքերի երգն անմտություն է: Դու միշտ այդպես ես:

- Չէ՛,- Ռաֆիկն այս անգամ կամացուկ ծիծաղեց:- Դու ինձ խառնում ես մեր հին դասախոսի հետ: Նա ասում էր, թե ինքը շատ սկզբունքային մարդ է, ասում էր, որ եթե ատրճանակ էլ պահեն իր կրծքին, առանց աչքերը թարթելու կպնդի, որ «Քառսը» Շիրվանզադեն է գրել և ոչ թե մի այլ գրող: Դա նրա խորին համոզմունքն էր:

Լևոնը չկարողացավ չծիծաղել, բայց նա ուզում էր շարունակել խոսակցությունը, այդ պատճառով էլ բարձրացրեց ձեռքը՝ ընկերոջ ուշադրությունը գրավելու համար: Մակայն արժանացավ մատուցողուհու ուշադրությանը:

- Շամպայն՞,- հարցրեց նա՝ արագորեն մոտենալով:

Լևոնը զարմացած նայեց ջահել, շիկահեր աղջկան, հետո՝ վեր տնկված իր ձեռքին ու ժպտաց.

- Իհարկե,- ասաց նա,- իհարկե, շամպայն:

Խմեցին լուռ - բարակ բաժակները խուլ գնգոցով խփելով իրար: Մինչ այդ Ռաֆիկը առաջարկեց.

- Դե, մի բա՛ն ասա, խմենք, Լևո՛ն:

- Ի՞նչ ասեմ,- մտածեց Լևոնը,- պարզ է, էլի:

- Դե որ պարզ է, խմենք,- ասաց Ռաֆիկը:

Ու խմեցին լուռ՝ բարակ բաժակները խուլ գնգոցով խփելով իրար:

- Իսկ ի՞նչն էր պարզ,- հարցրեց Ռաֆիկը՝ բաժակը քիչ հեռու տանելով,- ես որտեղի՞ց իմանամ, թե ի՞նչ պիտի ասեիր: Չէ, չէ, սպասի՛ր: Հարցը հո միայն «ողջ լինենք» չէ: Ես չեմ խոսում, բայց դու արդեն կռահում ես, թե ինչ կարող էի ասել, այնպես չէ՞: Դու ըստ քո տրամադրության ենթադրում ես իմ ասելիքը, չէ՞: Այ, ես երգն էլ հենց այդպես եմ հասկանում, առանց խոսքերի: Ես գիտեմ, թե հիմա ինչ է ասում ինձ: Վաղը այս երգը ուրիշ տեղ, ուրիշի կատարմամբ, կամ հենց նույնի կատարմամբ, սակայն իմ այլ տրամադրության դեպքում, ինձ բոլորովին ուրիշ բան կասի: Նա այլևս այսպես չի ասի՝ «Իզաբել՛ը». նա պարզապես կասի՝ «Իզաբել՛ը»: Գուցե ես բոլորովին ուրիշ նվագ լսեմ, առանց խոսքերի, սակայն ինձ կթվա, թե նա ասում է «Իզաբել՛ը»: Հայրս մի հին ընկեր ունեմ: Երեսուններկու տարի միասին էին աշխատել. հայրս դարբին էր, իսկ նա մուրճ էր խփում: Տրամվայ նստելու փոխարեն հայրս ամեն օր մի մեծ շրջան էր գծում, որպեսզի իր ընկերոջ տան մոտով անցնի ու նրա հետ միասին ոտքով գնա գործարան:

«Քեզ չես ավստում,- ասում էր մայրս,- տրամվա՛յ նստիր, էլի»:

«Ընկերոջ հետ լավ է,- ասում էր հայրս,- գրույց անելով գնում ենք»:

Մի քանի անգամ ես նույն ճանապարհով հորս հետ գործարան եմ գնացել: Ամբողջ ճանապարհին նրանք ոչ մի բառ չէին փոխանակում: Միայն երբեմն-երբեմն նայում էին իրար: Այդքանը:

- Դա բոլորովին ուրիշ բան է,- ասաց Լևոնը:

- Նույնն է,- պնդեց Ռաֆիկը:- Մենք մի հին ձայնապնակ ունեինք: Փոքր ժամանակ պատեֆոնը միացնում, ամեն օր լսում էի այդ երգը: Տխուր երգ էր, անհասկանալի լեզվով, լսելիս ամեն անգամ բանակում զոհված եղբորս էի հիշում ու լաց էի լինում՝ նայելով սև ծապավենով երիզված, պատից կախված նրա նկարին: Ինձ թվում էր, թե եղբայրս է երգել այդ երգը՝ անտառի մեջ միայնակ, անընկեր, վիրավոր ընկած: Հետո մի անգամ հայրս ինձ թարգմանեց այդ երգի խոսքերը: Պարզվեց, որ ուրախ երգ է: Մարդիկ բամբակ են հավաքում ու հրճվում, որ առատ է բերքը: Եվ ի՞նչ, կարծում ես հիասթափվեցի՞: Չէ: Մի քանի շաբաթ չէի միացնում պատեֆոնը: Իսկ հետո, երբ մի օր լսեցի ուրիշի տանը, ես կրկին եղբորս հիշեցի ու լաց եղա և մտածեցի, որ

կամ սխալմամբ ուրիշ բառեր են դրել երաժշտության մեջ, կամ իմ հայրը ճիշտ չի հասկացել այդ երգի խոսքերը: Տխուր երգ էր դա:

Նրա աչքերը հանկարծ փայլեցին խոնավությունից, ու Լևոնը նրանից հեռացրեց հայացքը: Սրճարանում կիսախավար էր ու ծուխ: Նվագախումբը ինչ-որ դանդաղ պար էր նվագում: Սրահի հենց մեջտեղում նվաղուն օրորվում էին մարդիկ: Անկյունի սեղանից ջահել մի տղա մերթընդմերթ երկարում էր գլուխը ու խնդրում բարձրաձայն. «Իզարե՛լ»:

- Աչքերդ մի՛ փախցրու, հարբած եմ,- հայտարարեց Ռաֆիկը,- հարբած եմ, բայց ճիշտ եմ ասում, և դու էլ գիտես, որ ճիշտ եմ ասում:

- Հարբած չես, սենտիմենտալ ես,- ժպտաց Լևոնը,- աշխատանքային հիվանդություն է, բոլոր դատախազներն էլ ի վերջո սենտիմենտալ են դառնում: Արտաքին խստությանը նյարդերը չեն դիմանում, ախպե՛րս:

- Փչում ես,- առաջ թեքվեց Ռաֆիկը, բայց նախքան շարունակելը, մի քիչ շամպայն խմեց - մատների մեջ պտտեցնելով բաժակը,- փչում ես: Եթե ճիշտը կուզես իմանալ, սենտիմենտալը հենց ինքդ ես: Մպասի՛ր: Ինչո՞ւ ես ամեն անգամ լցնում այս երրորդ բաժակը: Հը՞:

Նրանք նայեցին ազատ աթոռի առջև դրված բաժակին, որի մեջ շամպայնը շարունակում էր մանրիկ եռալ: Փոքրիկ պղպջակները պոկվում էին հատակից, սրընթաց վեր բարձրանում մարգարտաշար դարձած ու պայթում բաժակի դեղնավուն մակերեսին: Նրանք մի պահ լուռ դիտում էին պղպջակների խաղը՝ փորձանոթին դողով հետևող այքիմիկոսների պես, որ հրաշքի են սպասում: Բայց հրաշք չկար: Երրորդ բաժակը միշտ լի էր, սկսած այն պահից, երբ նրանք սեղան նստեցին և սկսած այն ժամանակներից, երբ նրանք այս սրճարանը մտան միայն երկուսով: Երրորդը չկար, երրորդը այլևս երբեք չէր բարձրացնելու իր բաժակը:

*

* *

Նրանք ջահել չէին արդեն: Նրանցից յուրաքանչյուրը մոտ քառասուն տարեկան էր: Այդ տարիքում սովորաբար նոր ընկերներ չեն փնտրում ու նույնիսկ խուսափում են ծանոթություններից: Այդ տարիքում սովորաբար գերադասում են լռել ընկերոջ հետ, քան նոր գրուցակից գտնել: Երկու տարի առաջ նրանց երրորդ ընկերը ավտոաղետի էր ենթարկվել: Երկրաբան էր: Մի խենթ, պայծառ, հրաշալի տղա: Ալավերդու լեռներում էր աշխատում և այնտեղ էլ ապրում էր ընտանիքով: Ամիսը միայն մի անգամ էր կարողանում Երևան գալ - ընկերների հանդիպելու: Այդ օրը ընկերների տներում ասում էին՝ «Սերգեյի օրն է»: Այդ օրը կանայք չէին տրտնջում, որ ամուսիններն առանց իրենց են տնից դուրս գալիս: Շրջում էին քաղաքում, խոսում ու լռում էին, լռում ու խոսում էին և առանց պայմանավորվելու մտնում «Կռունկ»: Նստում էին անկյունում, պատուհանի տակ և ուրախանում էին աղմուկով: Ուրախանում էին ամեն ինչով: Կենացներ էին ասում վայրիվերո: Ընկերության կենացը, շամպայնի տվյալ շիշը մշակողի կենացը, մատուցողուհու կենացը, փողոցով անցնող այ այն գույգի կենացը, պատուհանի ապա-

կու կենացը, որի միջով երևում են նրանք, Իզաբելի կենացը և կենացը նաև այն հայագգի երգ-չի, որ հեռու հեռվում տառապանքով կանչում է նրան. «Իզաբել լ, Իզաբել լ, Իզաբել լ»:

Մի օր, «Սերգեյի օրը» նրանք երկար սպասեցին իրենց ընկերոջը փոքրիկ հրապարակում: Չեկավ: Դա անլուր բան էր: Եվ նրանք որոշեցին սպասել: Նույնիսկ այն ժամանակ, երբ Ռաֆիկի կինը հասավ նրանց ու խեղդվելով հայտնեց, որ Սերգեյը ծանր վիրավոր պատկած է հիվանդանոցում, նրանք դա մի պահ ընդունեցին, որպես օտարի մասին հայտնված մի լուր և ուզում էին էլի սպասել իրենց ընկերոջը՝ փոքրիկ հրապարակում:

Հիվանդանոց չէին թողնում, և Ռաֆիկը ցույց տվեց դատախազի իր գրքույկը: Սերգեյը պատկած էր պատգարակին: Բժիշկը չէր թողել, որ նրան մահճակալին փոխադրեն: Սպասում էին, որ մեռնի: Երևում էին միայն աչքերն ու բերանը: Լևոնը շրջվեց, հենվեց դռանը ու տնքաց ասեղնով վշտից: Ռաֆիկը մեռնողներ շատ էր տեսել, նա նայում էր Սերգեյի փակ աչքերին ու ձեռքով սրբում էր արցունքները: Նրանց ոչ ոք չէր խանգարում: Բժիշկները գնացել էին այնտեղ, որտեղ պետք էին: Ծեր մի մայրապետ էր միայն ննջում պատուհանի տակ: Արևը ընկել էր նրա գլխին, ու նա իր բեկված մարմնով՝ մութ խորանում աղոթողի էր նմանվել: Չէտո Լևոնը հանկարծ նկատեց, որ վիրավորի կոպերը դողում են ու կիսաձայն շարժվում են շրթունքները:

- Ի՞նչ, ի՞նչ Սերգե՛յ ջան,- թեքվեց նա պատգարակին:

- Հիմար մի՛ եղեք,- ասաց Սերգեյը,- գնացե՛ք:

- Ո՞ւր, ո՞ւր,- կռացավ Ռաֆիկը:

- «Կռունկ», դմբո,- ասաց Սերգեյը,- իմեք իմ կենացը: Ես շատ եմ հոգնած, ես ուզում եմ քնել:

*

* *

- Այստեղ ոչ մի սենտիմենտալություն չկա,- ասաց Լևոնը,- ուղղակի սովորություն է: Ես տեսել եմ, թե ինչպես են ուրիշներն անում, նրանք էլ երևի ուրիշներին են տեսել: Հնուց եկած սովորություն է: Ի՞նչ սենտիմենտալ: Գիտե՞ս, թե ինչու եմ գժվում: Որ Սերգեյը չկա ու էլ երբեք չի լինելու: Հասկանո՞ւմ ես, ամեն ինչ կա, ամեն ինչ մնում է՝ մարդուց բացի: Չէ, ինձնից ի՞նչ փիլիսոփա, անկեղծորեն կնեղանամ: Ախր ինչո՞ւ մարդը չի մնում, իսկ նրա գրիչը մնում է ու հազար տարի հետո ասում են, թե տեսեք, սա այն մարդու գրիչն է: Ինչո՞ւ քարը մնում է, կոճակը մնում է, գիրքը մնում է, կոշիկը մնում է, ամեն մի աղբ մնում է, իսկ... Է՛:

- Ուզո՞ւմ ես բացատրեմ,- ժպտաց Ռաֆիկը:

- Դե՛, վերջ տուր,- բարկացավ Լևոնը,- ես քեզնից լավ գիտեմ, թե ինչու:

- Բա էլ ինչո՞ւ ես հարցնում,- ծիծաղեց Ռաֆիկը:

- Քեզ չեմ հարցնում,- ասաց Լևոնը:

Հետո նրանք երկար լռեցին:

- Այնուամենայնիվ դու իրավացի ես,- ասաց Ռաֆիկը,- դա բոլորն էլ հարցնում են, բայց սովորաբար ոչ բարձրաձայն: Բարձրաձայն ուրիշ հարցեր են տալիս: Աշխարհում շատ հարցեր կան, ու մարդիկ տալիս են բոլոր հարցերը, որպեսզի այդ միակ հարցը չտան: Ու ճիշտ են անում:

Նրանց կողքով մի ջահել աղջիկ անցավ՝ հպարտ ուսերը ճոճելով, գլուխը բարձր բռնած, անցավ՝ ոչ ոքի չտեսնելով, իրենով հմայված: Եթե մարդկանց աչքերից լույս ցայտեր, նա կնմանվեր բեմում քայլող դերասանուհու՝ լուսարձակներով ողողված:

- Մի՛ նայիր,- ասաց Ռաֆիկը:

Լևոնը զարմացավ.

- Ինչո՞ւ:

- Ի՞նչ միտք ունի,- ասաց Ռաֆիկը,- երբ գիրքը մնում է, կոճակը մնում է...

Լևոնը ծիծաղեց, մեկնեց ձեռքը, խփեց Ռաֆիկի պարզած ափին, ու նրանք խմեցին այդ աղջկա կենացը, «Կռունկի» տանիքը պահող երկաթբետոնե սյուների կենացը՝ առանձին-առանձին:

Ինչպես միշտ՝ ոտքով գնացին կենտրոնական փոստատուն: Ռաֆիկը մի անդորրագիր վերցրեց պատուհանի ետև նստած նիհար ծերունուց, դրեց հենատախտակին ու լրացրեց՝ «Ալավերդի, երկրաբանական ավան, Սեդա Օլթեցյանին»:

- Տո՛ւր,- ասաց նա Լևոնին:

Լևոնը գրպանից հանեց կարմիր թղթադրամը, դրեց ընկերոջ առջև: Ռաֆիկը լրացրեց գումարը ու ձեռքը ներս տարավ փոքրիկ պատուհանից:

- Վաղը պիտի բերեիք,- ասաց ծերունին:

Երկու տարի, ամեն ամսվա նույն օրը, նա որոշ գումար էր փոխանցում Ալավերդու երկրաբանական ավան, մի կնոջ, որի անունը Սեդա Օլթեցյան էր:

- Կներեք,- ծիծաղեց Լևոնը,- այսպես ստացվեց:

Ծերունին մեքենայի տակ կնքեց անդորրագիրը, պոկեց կտրոնը, կրկին գննեց ու ձեռքը երկարեց դեպի պատուհանը: Բայց նախքան հանձնելը, հազաց.

- Տղե՛րք,- ասաց նա,- երեսունչորս տարի այստեղ եմ աշխատում, այս նույն աթոռին: Առաջ ձեռքի կնիք ունի, հիմա մեքենա է: Ըհը՛ : Երեսունչորս տարի դրամական փոխադրումներ եմ

կատարում: Միլիարդներ են ձեռքովս անցել: Իհարկե,- երկարացրեց նա հպարտ:- Հենց մարդու երեսին նայեմ, կիմանամ, թե ինչ փող է ուղարկում: Հաստատ: Բայց ձեզնից գլուխ չհանեցի: Ինձ միայն մի բան ասեք, Սեդա Օլթեցյանը հո ձեր ընկերոջ կինը չէ:

- Ընկերոջ կինն է,- զարմացած հաստատեց Լևոնը:

- Ձեր ընկերն ուրեմն չկա՞:

- Չէ՛,- ասաց Ռաֆիկը,- չկա:

Ծերունին հաղթականորեն հազաց.

- Հա՛,- ասաց նա,- այդպես էլ գիտեի:

Փոքրիկ հրապարակում կանգ առան: Պիտի բաժանվեին:

- Բայց և այնպես զարմանալի էր, չէ՞,- ասաց Լևոնը,- ծերուկը ո՞նց իմացավ, որ մենք դրամը ոչ թե ուրիշ որևէ մեկի, այլ հենց մեր ընկերոջ կնոջն ենք ուղարկում:

- Չարմանալու բան չկա,- ասաց Ռաֆիկը:

- Դարձյա՞լ սկսեցիր,- ծիծաղեց Լևոնը,- ուրեմն որտեղի՞ց իմացավ: Գուցե այստե՞ղ էլ... Իզաբել...

- Ամեն տեղ,- ասաց Ռաֆիկը,- առանց դրա չի լինի, անհնար է, խոսքերը կվերջանային: Մի՛ ծիծաղիր, ախպե՛րս, աշխարհում ամեն մարդ իր ձևով է ասում «Իզաբել»: Աշխարհում ամեն մարդ իր «Իզաբելն» ունի:

1962թ.

Տերեվաթափ

Նրանք քայլում էին փողոցով՝ նկարիչն ու անվանի գիտնականը: Քայլում էին լուռ ու դանդաղ, ինչպես կարող են միասին քայլել ու լռել մարդիկ, որոնք խոսքերի կարիք չունեն՝ իրար ինչ-որ բան ասելու, իրար հասկանալու համար:

Նրանք երկար էին քայլել աշխարհի վրա և շատ աշուններ էին տեսել, բայց ամենուրեք երազել էին Երևանի աշունը, որովհետև ոչ մի տեղ աշունն այնքան հարուստ, այնքան բարի, այնքան ջերմ չէ, որքան Երևանում:

Ու կրկին ու կրկին զարմանում էին ու զարմանալով հիանում բնության իմաստությամբ ու գեղեցկությամբ: Որտեղի՞ց է նա գտել այս ներկերը, այս գույները, այս երանգներն ու նրբերանգները, որ հիմա սիրող պատանու շռայլությամբ նետել է այս ու այն կողմ ու զարդարել աշխարհը՝ հրդեհել այն մենավոր ծառը, կարմիրով ներկել այս թփերը, նարնջին թափել ցանկապատին:

Տաք աշուն էր:

Հետո նրանք դիտում էին, թե ինչպես են անաղմուկ ու հանդարտ պոկվում տերևները՝ մի վերջին անգամ քնքշորեն շոյելով ճյուղերը ու զգվելով դեռ ամուր, դեռ դիմացող տերևներին: Ու երկար, սքանչացած նայում էին, թե ինչպես են նրանք խաղում, տարուբերվում օդում ու մեղմիկ շրշալով իջնում իրար ետևից, անդադար հոսանքով, իջնում ու կիտվում իրար վրա, մի փափուկ, նրբահյուս գորգի վերածվում, զարդարում քաղաքի մայթերը ու հաճելիորեն խշշում ոտքերի տակ:

- Հրաշալի աշուն է:

Դա ասաց գիտնականը: Ասաց ո՛չ նկարիչին, ո՛չ անցորդներին: Ասաց իրեն, բայց ասաց բարձրաձայն:

Նկարչի աչքերը շողացին:

- Հրաշք է,- ասաց նա՝ կանգ առնելով,- չգիտեմ ով ոնց, բայց ես ամենից շատ աշունն եմ սիրում, տերևաթափը... Դե նայի՛ր,- ասաց նա,- մի՞ թե սրանից ավել սքանչելիք կարող է լինել աշխարհում: Եվ գիտե՞ս միայն ինչն է պակասում,- նա մտերմորեն բռնեց գիտնականի արմուկը,- անձրևը, այո՛, այո՛, աշնան անձրևը, որ բարակ, աննշմար շղարշի պես իջնում է, հա իջնում, ու մեկ էլ տեսնում ես՝ փայլ է տվել ամեն ինչին և ավելի ընդգծել գույները: Այնպես չէ՞ ...

Գիտնականը լուռ էր:

- Այնպես չէ՞,- կրկնեց նկարիչը՝ մտածելով, թե գիտնականը չլսեց իր խոսքերը,- այն լուսավոր, բարակ անձրևը, որ միայն աշնանն է լինում:

- Չէ՛,- հանկարծ ասաց գիտնականը:

- Ի՞նչը:

- Չէ՛, - կրկնեց գիտնականը, - անձրևը լավ չէ: Իսկ դու գիտե՞ս, որ երբ անձրևը թրջում է թափված տերևները, դրանք շատ ամուր են կպչում ասֆալտին, անհնար է լինում պոկելը:

Նկարիչը ապշեց:

- Սպասի՛ր, Բայց դա ի՞նչ նշանակություն ունի, թող չպոկվեն:

- Դո՞նապանները պարտավոր են մաքրել մայթերը, - կամացուկ պատասխանեց գիտնականը:

Նկարչին թվաց, թե իրեն ապտակեցին: «Չէ՛ր լսում, թե ծաղրում է ինձ, - մտածեց նա խռովելով, - ես խոսում եմ այս հրաշալի գույների մասին, իսկ նա ասում է՝ դո՞նապանները... Դո՞նապանները, դո՞նապանները... » - ակամա մտքում գայրացած կրկնեց նկարիչը ու հանկարծ...

Ու հանկարծ հիշեց, որ այս մեծ գիտնականը իր ողջ մանկությունն անցկացրել է դո՞նապան ծնողների հետ, մեծ քաղաքի ասֆալտե մայթերին:

Նա կամացուկ տնքաց, ավելի ամուր սեղմեց ընկերոջ արմունկը, ու նրանք կրկին քայլեցին փողոցով, որը աշնանային հրաշալի գույներ ուներ հագին և ուր տերևները հաճելիորեն խշշում էին մարդկանց ոտքերի տակ:

Բայց չգիտես ինչու, նկարչին աշունն այլևս առաջվա պես հրաշալի չէր թվում...

Աշուն էր:

Ոչինչ Չեմ Հասկանում

Ամեն ինչ միանգամից տակնուվրա է եղել այս տանը: Բոլորն էլ խելագարվե՞լ են, ինչ է: Ոչինչ չեմ հասկանում: Առաջ ամեն ինչ հասկանալի էր ինձ, պարզ, հիմա ոչինչ չեմ հասկանում:

Աղջիկս դեռ ահա լաց է լինում կողքի սենյակում: Ես լսում եմ նրա հեծկլտոցը: Կինս էլ քիչ առաջ նրա մոտ էր, հետո փակվեց իր սենյակում: Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, մի թե մի հիմար բանից կարելի է այսքան պատմություն սարքել: Եվ այն էլ ինչի՞ համար: Կամ գուցե դա միայն առի՞թ էր, գուցե ինչ-որ լուրջ բա՞ն է պատահել: Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, ազնիվ խոսք:

Դե հիմա եկ ու շարունակիր աշխատել: Ինչպե՞ս աշխատես այս տրամադրությամբ, ինչպե՞ս աշխատես, երբ կողքի սենյակից անընդհատ լսվում է նրա լացի ձայնը: Եվ ինչո՞ւ է նա այդպես բարձրաձայն լաց լինում:

Ու ես ականա մտածում եմ. գուցե ճիշտ են նրանք, ովքեր ասում են, թե գիտության մարդը իրավունք չունի ամուսնանալու, թե ընտանիքը բոլոր դեպքերում կաշկանդում է գիտնականին, խանգարում, ստիպում մտածել գիտության հետ բոլորովին առնչություն չունեցող զանազան երկրորդական, երրորդական խնդիրների մասին, շեղում ուշադրությունը:

Անկեղծորեն ասած, դրա հետ կարելի է համաձայնել:

Ընտանիքը, իհարկե, դրական որոշ կողմեր ունի, մի տեսակ հանգստություն է տալիս քեզ, աշխատելու հնարավորություն... Կարող ես, օրինակ, աշխատանքից չկտրվել՝ մի բաժակ ջուր խմելու համար, այլ միայն ձայնել կնոջդ.

- Մեղա՛, ջուր...

Եվ քիչ անց նա կբերի ջուրը:

Կարող ես չմտախոզվել նախաճաշի համար (աշխատելու հետ միաժամանակ կարելի է թեթև նախաճաշել): Քաղցած ես, գիտես որ պատրաստ է ճաշը: Դուրս ես գալիս տնից՝ մաքուր և արդուկված են շորերդ, կոշիկներդ փայլեցրած և քառածալ թաշկինակը անպայման ձախ գրպանումդ է: Դե, իհարկե, դրանք մանրուքներ են: Ի վերջո էականը դրանք չեն անշուշտ: Բայց և այնպես ընդունենք, որ դրանք շատ կարևոր են: Հետո՞ : Հետո ուրիշ ոչինչ: Միայն այդքանը:

Իսկ անհանգստություն, որքան կամենաս, իսկ աշխատանքի ընդհատում, եթե թողնես, սովորության կվերածեն, իսկ զանազան ընտանեկան, կենցաղային, ծնողական հոգսեր... թիվ չկա:

Սկզբում, իհարկե, շատ ավելի ծանր էր և երկար ժամանակ հարկ եղավ, մինչև որ կինս վերջնականապես համոզվեց, կամ ավելի ճիշտ՝ հաշտվեց այն մտքի հետ, որ ամեն մի դատարկ առիթով չի կարելի ընդհատել ինձ:

Որքան ենք վիճել, որքան ժամանակ են խլել ինձնից այդ վիճաբանությունները: Կնոջս, չգիտեմ ինչու, թվում էր, օրինակ, որ եթե եղբայրս մեր գյուղից հյուր է եկել, ապա, ուրեմն, ես անպայման պետք է թողնեմ աշխատանքս ու ստիպված կեղծ գրույց սկսեմ նրա հետ՝ գյուղի մեր

բարեկամների, այդ տարվա բերքի, սարում անցկացրած օրերի մասին, երբ միասին գառներ էինք պահում:

- Եղբայրդ է, չէ՞,- ասում էր նա,- ի՞նչ կմտածի քո մասին:

- Իսկ ի՞նչ պետք է մտածի,- համոզում էի ես,- մի՞ թե նա չգիտի, որ ես գիտնական եմ, որ ինձ համար թանկ է յուրաքանչյուր վայրկյանը: Հյո՛ւր է եկել, խնդրեմ, լավ հյուրասիրիր, կարող ես նույնիսկ մի շիշ գինի գնել այդ առիթով: Գուցե դրա՛ մ է պետք նրան, մի քանի ռուբլի տուր, թող երեխաների համար կոնֆետ գնի: Մի՞ թե ես որևէ բան խնայում եմ: Բայց ինչո՞ւ անպայման հանդիպել նրան, ինչո՞ւ զրուցել և ինչի՞ մասին: Մի՞ թե քեզ համար պարզ չէ, սիրելի՛ս, որ ես նրա հետ ոչնչի մասին չեմ կարող խոսել: Դե հո չեմ զրուցելու նրա հետ՝ ասենք, Չերնիշևսկու գեղագիտական հայացքների մասին: Նույնիսկ ծիծաղելի է:

Եվ այս բոլորը ես ասում էի ամենացածր և համոզիչ ձայնով: Ես ընդհանրապես չեմ սիրում բարձր խոսել, երբեք չեմ բարկանում և ոչ մի բան չի կարող ինձ հավասարակշռությունից հանել: Այո, այո, ես երբեք նման չեմ եղել այն մարդկանց, ովքեր սիրում են խմել, տուն են գալիս հարբած, գոռում են իրենց կանանց վրա, խփում են երեխաներին... Խփել երեխային... անգամ այն ժամանակ, երբ աղջիկս՝ Հասմիկը, կոտրեց իմ ինքնահոսի ծայրը, ես նրան չապտակեցի: Նույնիսկ չխոսեցի էլ հետը: Եվ միայն կնոջս ամենայն համբերատարությամբ բացատրեցի, որ նա, ինչպես երևում է, անհրաժեշտ ուշադրություն չի նվիրում երեխայի դաստիարակության հարցերին:

Ոչ, ես նման չեմ ուրիշ ամուսինների... Մեր ինստիտուտում, օրինակ, մարդիկ կան, որ աշխատավարձը կնոջը չեն հանձնում և իրենք են ամեն օր շուկա գնում, իրենք են հագուստներ ընտրում, իրենք են տանն անհրաժեշտ իրերը ձեռք բերում: Ես դա փոքրություն եմ համարում, ինչո՞ւ պետք է տղամարդը, այն էլ գիտնականը, նման մանր-մունր հոգսերով ծանրաբեռնի իրեն:

Երբեք այդպես չեմ վարվում: Ես հաշվել եմ, մոտավորապես գիտեմ, թե որքան գումար է անհրաժեշտ մեր ընտանիքի նորմալ ապրուստի համար (տանել չեմ կարողանում ավելորդ ծախսերը, շքեղությունն ու շոպյությունը) և ահա այդ անհրաժեշտ գումարը կնոջս եմ հանձնում, իսկ մնացածը փոխադրում խնայողամարկդի իմ ընթացիկ հաշվին: Ո՞վ գիտե, ինչ անակնկալներ կարող են լինել:

Եվ այսքանից հետո, երբ ես կարծում էի, թե կինս անկասկած երջանիկ պետք է զգա իրեն, պարզվում է, որ նա գոհ չէ: Զարմանալի է, դեռ որքան խորն են մեզ մոտ քաղքենիության արմատները...

Մի անգամ, սովորականի նման փակվել էի իմ առանձնասենյակում, և հանկարծ ներս է մտնում կինս, նստում է բազմոցի ծայրին ու լռում է: Ես աշխատելու ժամանակ տանել չեմ կարողանում ուրիշի ներկայությունը, բայց ամենայն քնքշությամբ կնոջս ասում եմ.

- Սիրելի՛ս, մի՞ թե չես տեսնում, որ ես աշխատում եմ, չէ՞ որ բազմիցս խնդրել եմ...

- Այսօր ամսի քանի՞սն է,- ընդհատում է ինձ կինս:

- 16-ը,- ասում եմ ես,- մի՞ թե մենք օրացույց չունենք:

- Այդ թիվը քեզ ոչինչ չի^օ ասում:

- 16-ը^օ, - հարցնում եմ, - 16-ը... իսկ ի^օնչ պետք է ասի 16-ը:

- Այն, որ այսօր իմ ծննդյան օրն է, - ասում է նա ու իսկույն աչքերը լցնում արտասուքով, - այն, որ ես ուզում եմ, որ դու գոնե մի անգամ հիշես այդ օրը, որ դու քո կնոջ համար գոնե ծաղիկներ ընդ մի փոքր փունջ բերես այդ օրը, իմ ծննդյան օրը...

- Դե, հո մենք երեխա չենք, Սեդա՛, - հանգստացնում եմ ես, - ների՛ր, խնդրում եմ, բայց դա մանրուք է ախր: Ինչո՞ւ ծաղիկներ: Դու քո ծննդյան օրվա առթիվ կարող ես ավելի թանկարժեք բան գնել քեզ համար: Գնիր ինչ ուզում ես, սիրելի՛ս, մի թե ես որևէ բան խնայել եմ: Տանը կարծեմ դրամ կա:

Իսկ նա հեկեկում է ու դուրս է գնում իմ առանձնասենյակից: Տարօրինակ բնավորություն ունի: Ոչինչ չեմ հասկանում: Հանգիստ, համեստ աղջիկ էր, երբ ամուսնացանք: Ինչո՞ւ փոխվեց, ինչո՞ւ է այդպես ջղային դարձել, չէ՞ որ նա ամեն ինչ ունի՝ երջանիկ լինելու համար, իսկ նա հեկեկում է երեխայի պես, որովհետև, գիտե՞ք ինչ, ես մոռացել էի նրա ծննդյան օրը:

Շատ երկար ժամանակ կորցրեցի ես՝ հենց կնոջս դաստիարակելու համար: Եվ ի վերջո հաջողության հասա: Ես կարծում եմ, նա համոզվեց, որ գիտնականի կինը չպետք է մտածի այնպես, ինչպես սովորական կանայք, որ նա չպիտի ամուսնուն ստիպի կինո, թատրոն, համերգի գնալ: Կյանքից ե՛տ կմնա: Երբեք: Ես մտածել եմ նաև այդ մասին, ես առաջիններից մեկը նրա համար ամենալավ հեռուստացույցն եմ գնել, իսկ հեռուստացույցով, որքան գիտեմ, ամեն ինչն էլ հաղորդում եմ:

Եվ վերջապես ամեն ինչ խաղաղվեց մեր տանը, այլևս ոչ մի բողոք, ոչ մի վեճ, ոչ մի ընդհարում, եթե իհարկե չհաշվենք այն չարաբաստիկ միջադեպը, որ տեղի ունեցավ մեր հարևանի մահվան պատճառով: Կինս փորձում էր ինձ ստիպել մյուս հարևանների հետ ցավակցություն տալ թերթում և ներկա լինել նրա հուղարկավորությանը, երբ ես այդ մարդուն համարյա չէի ճանաչում, երբ մենք միայն թեթևակի բարևում էինք միմյանց, և երբ այդ օրը ես հողված պետք է գրեի հանրապետական թերթի համար: Ուրեմն ինչո՞ւ ես պետք է ներկա լինեմ նրա հուղարկավորմանը: Ինչո՞ւ պետք է նրա մասին ցավակցություն տայի թերթում:

Սեդան կարծում էր, թե ես դրամն եմ ափսոսում: Այնինչ բոլորովին ուրիշ հարց կար: Ես պարզապես գտնում էի, որ իմ ազգանունը ոչ մի իմաստ չունի տեղադրելու մեր մյուս հարևանների ազգանունների կողքին, որոնք, աստված գիտե, թե ինչ զբաղմունքի տեր մարդիկ են:

Այո, կնոջս սովորեցրի միշտ զգույշ, հեռատես ու ողջամիտ լինել, հարյուր անգամ մտածել, մինչև որևէ որոշում ընդունելը: Նա լռեց և կարծես թե համոզվեց: Բայց ի^օնչ: Որքան ժամանակ և եռանդ վատնվեց այդ բոլորի վրա:

Ինչնիցե, այդ մասին խոսելն արդեն ուշ է, և գուցե բոլորովին էլ հարկ չլինեք, եթե այս անգամ ասպարեզ չգար դուստրս...

Փոքրիկ, խելոք աղջիկ էր և, անկեղծորեն ասած, նրան բոլորովին չէի նկատում, որովհետև շատ հազվադեպ էր խանգարում ինձ: Երբեք լաց չէր լինում և դրանում զարմանալի ոչինչ

չկար: Իմ աշխատանքի և բավականին պատկառելի աշխատավարձի շնորհիվ նա բնականաբար ոչ մի բանի պակասություն չէր զգում, դրա համար էլ թերևս պատճառ չուներ լաց լինելու: Հիշում եմ, երբ դեռ շատ փոքր էր, օգտվելով մոր անուշադրությունից, նա մի քանի անգամ բացեց իմ առանձնասենյակի դուռը՝ փաստորեն ինձ կտրելով աշխատանքից: Ես նրան միշտ, իհարկե, շատ զգուշությամբ, հեռացնում էի և ապա այդ կապակցությամբ գրուցում Սեդայի հետ, այնպես որ աղջիկս այլևս դադարեց խանգարել ինձ, բայց նրան անմիջապես փոխարինեց մայրը:

Իսկապես տարօրինակ են մայրերը...

Ես խորասուզված, կլանված աշխատում եմ, իսկ Սեդան սենյակ է մտնում՝ Հասմիկի ձեռքը բռնած, մոտենում է ինձ ու ցույց է տալիս գունավոր մատիտներով խզբզած մի թուղթ:

- Վարդա՛ն, ների՛ր, որ խանգարում եմ,- ասում է նա,- բայց տես, թե Հասմիկն ինչ հրաշալի է նկարել:

Նայում եմ, ոչ մի հրաշալի բան չկա, փաստորեն նկար էլ չկա, մի ձվաձև արեգակ է՝ երեք-չորս ճառագայթով և ցախավել հիշեցնող ձեռքերով մի տձև տիկնիկ:

Դե, ի՞նչ կարող եմ ասել: Ստիպված կրկին ու կրկին խնդրում եմ ամեն մի դատարկ առիթով խանգարել ինձ և ապա բացատրում, որ այստեղ ոչ մի հրաշալի բան չկա, որ արևը չի կարող կապույտ լինել, որ ոչ մի չափ պահպանված չէ, որ դրանից շատ ավելի լավ նկարներ կան հենց «Պիոներ» ամսագրի էջերում: Եվ ի՞նչ, աղջիկս կարծես թե հասկանում է, ոչ մի ձայն չի հանում, բայց Սեդան դարձյալ արտասովակալում է: Եվ ահա, նորից ստիպված ես բացատրել համոզել, դաստիարակել...

Որոշ ժամանակ կարծես խաղաղվում է ամեն ինչ, բայց հանկարծ, կրկին մի անախորժ խոսակցություն է սկսվում:

- Հայր ես,- չեմ հասկանում, թե ինչու հուզված ասում է Սեդան,- երևի չգիտես էլ որ դասարանում է սովորում աղջիկդ:

- Ինչո՞ւ չգիտեմ, 6-րդ դասարանում է,- սրտնեղում եմ ես:

- Այո՛, անցյալ տարի 6-րդ դասարանում էր,- հառաչում է կինս:

Եվ ես, պատկերացնո՞ւմ եք, ստիպված եմ ամեն ինչ նորից սկսել: Ես նրան բացատրում եմ, որ երկրագնդի վրա մոտ մեկ միլիարդ երեխաներ կան, որ նրանց մեծ մասը սովորում է, որովհետև յուրաքանչյուր երեխա պետք է սովորի: Հասկապես մեր երկրում, ուր երեխաների համար ստեղծվել են բոլոր պայմանները, սովորելն այլևս պրոբլեմ չէ: Եվ, վերջապես, ասում եմ, ի՞նչ կա դրանում, ո՞վ չի սովորում, չէ՞ որ ես էլ եմ սովորել, դու էլ ես սովորել: Իմ սովորելու մասին, օրինակ, ծնողներս ենթադրել են միայն նրանով, որ ցերեկը որոշակի ժամերի տանը չեմ եղել: Ի՞նչ մի արտակարգ բան կա հիմա սովորելու մեջ:

Այո՛, չնայած իմ համբերությանը և բոլոր ջանքերին, երբեմն ես չեմ կարողանում խուսափել նման տհաճ խոսակցություններից: Բայց այն, ինչ կատարվեց այսօր, քիչ առաջ, անսպասելի էր և աներևակայելի:

Ինձ ընդամենը մի նախադասություն էր մնացել գրական ամսագրի հանձնարարած նոր հոդվածս ավարտելու համար, երբ հանկարծ ուժգին շրխկոցով բացվեց առանձնասենյակիս դուռը և հայտնվեց Հասմիկը՝ ձեռքին մի թուղթ բռնած: Նրա ետևում, հրճվանքից փայլող դեմքով կանգնած էր կինս՝ Սեդան:

Ես արդեն ուզում էի հազարերորդ անգամ զգուշացնել նրանց, որ... Բայց հանկարծ աղջիկս ճչաց.

- Հայրի՛կ, ես ավարտեցի դպրոցը, ահա իմ վկայականը, ահա իմ հասունության վկայականը:
- Արդե՞ն,- քիչ զարմացած հարցրի ես:

Եվ, իհարկե, անհրաժեշտ գտա անմիջապես էլ հասկացնել նրան, որ աղջկա համար, այն էլ հասունության վկայական ունեցող աղջկա համար, բոլորովին էլ սազական չէ այդպես ճչալը... Մի խոսքով, ասացի այն ամենը, ինչ յուրաքանչյուր ծնող պարտավոր է ասել նման պարագայում:

Եվ ի՞նչ, աղջիկս անսպասելիորեն ավելի բարձր ճչաց, հետո լռեց ու գունատվեց միանգամից:

- Դու վատ... շատ վատ մարդ ես,- շնչաց նա ատելությամբ:- Դու... դու... Ինչպես քեզ չեմ սիրում: Ինչպես եմ ասում քեզ... - Եվ սկսեց բարձրաձայն հեկեկալ ու ինչ որ անկապ բառեր բղավել՝ սեղմելով բռունցքները:

Ճիշտն ասած, ես սաստիկ անակնկալի եկա և հազիվ միայն կարողացա խնդրել, որ նա չբղավի: Ինչո՞ւ է բղավում, հարևանները կլսեն և, ո՞վ գիտե, գուցե մտածեն, թե ես ծեծում եմ: Այնինչ կյանքումս երբեք չեմ խփել նրան...

- Երանի խփեիր... - շարունակում էր բղավել Հասմիկը,- գոնե դրանով կզգայի, որ հայր ունեմ...

Հետո նա, շարունակելով բղավել, դուռը փակեց շրխկոցով ու վազեց դեպի իր սենյակը: Ու ահա դեռ հեկեկում է, նրա ձայնը ինձ է հասնում իր սենյակից:

Եվ ինչո՞ւ... ի՞նչ է պատահել, ոչինչ չեմ հասկանում: Ի՞նչ ատելությամբ էր նայում ինձ, ի՞նչ խոսքեր էր ասում: Եվ այն էլ ինձ, իր հորը, որը ողջ կյանքը ազնվորեն նվիրել է գիտությանը, որը ամեն ինչ արել է իր ընտանիքի բարօրության և պատվի համար:

Այո՛, ճիշտ են ասում, այսօրվա վկայականները նախկինների արժեքը չունեն, չէ՛: Ո՛չ, այս պատմությունը այսպես թողնել չի կարելի: Ստիպված են նորից կտրվել աշխատանքից և ամենայն լրջությամբ ու համբերատարությամբ խոսել Սեդայի հետ... Մի թե կարելի է երեխային այսպես դաստիարակել...

Կամ գուցե սա միայն առի՞թ էր: Գուցե ինչ-որ ավելի լուրջ բա՞ն է պատահել:

Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, ազնիվ խոսք:

1961թ.

Ուրախ Ու Տխուր Մարդը

Եթե Ալավերդյան փողոցով ցած իջնեք, Կոմայգի չհասած, աջ կողմում կհայտնվի երկհարկանի մի շենք: Կանգ առեք մի պահ ու նայեք:

Դուք տեսնում եք հին Երևանը:

Սա ժամանակին Երևանի ամենանշանավոր շենքերից մեկն է եղել:

Անանուն վարպետը շենքը կառուցել է խստորեն, ըստ տանտիրոջ ցուցումների: Իսկ տան տերը զարգացած մարդ էր, Պետերբուրգում, Մոսկվայում, Ռոստովում կրթված ու սովորած, գինեգործ և գործարանատեր Թովմաս Ռշտունին: Ու թեև նրա արտադրած գինու շշերի վրա գրված էր. «Էրիվանսկիյ վիննիյ զավոդ: Տ. Ռշտունի և ԿՕ»: Բայց դա սուկ ժամանակի տուրք էր, ոչ մի «ԿՕ» էլ չկար: Եվ գործարան էլ չկար: Այսինքն՝ ինչ կար չկար, այդ մի շինությունն էր, որի խոր ու ընդարձակ ներքնահարկում ամռան ամենաշոգին անգամ սառն էր մնում գինին, լայն, սալահատակ բակն էր, որտեղ բեռնաթափվում էր Դավմայի այգիներից բերված խաղողը և սև տուֆից սարքված տունն էր, որի երկրորդ հարկի սրահներում բնակվում էր Ռշտունին իր գեղեցուկի կնոջ ու զավակների հետ:

Այսօր եթե մի քիչ ավելի երկար կանգնեք այդ տան մուտքկամարի մոտ, անպայման կտեսնեք գործարանատիրոջ որդիներից մեկին: Ավելի ճիշտ՝ նա՝ ձեզ կտեսնի, երկրորդ հարկի վանդակաճաղ պատուհանից կհանի գլուխը ու կասի այնպես, ասես հին ծանոթներ եք ու վերջին անգամ հենց երեկ եք բաժանվել իրարից:

- Համեցե՛ք, վե՛րն բարձրացեք, սուրճն արդեն կրակին է:

Ես նրա հետ հենց այդպես էլ ծանոթացա՝ երևի մի տասնհինգ տարի առաջ: Կանգնել ու շատ ուշադիր շենքին էի նայում: Իմ առաջին կինոնկարի համար մի հին շենք էր պետք, որ փոքրիկ խոյակներ ունենար և կամարաձև մուտք: Իսկ այդ շենքն ասես հաստուկ կինոյի համար կառուցված լիներ: Կանգնել ու դիտում էի հմայված: Եվ որովհետև ըստ սցենարի երկրորդ հարկի վանդակաճաղ պատուհանից իմ հերոսուհին մեկնելու էր նուրբ ու սպիտակ ձեռքը և մի երկտող էր ցած նետելու, ակամա նայեցի պատուհանին: Պատուհանից ինձ էր նայում քունքերի մոտ ճերմակած, նուրբ դիմագծերով, փոքրիկ բեղերով մի մարդ:

- Ուշանում ես, ուշանում,- գլուխը հանդիմանանքով օրորելով՝ ասաց նա,- բարձրացի՛ր:

- Ե՛ս:

- Իհարկե,- լրջորեն ասաց նա:

- Կներեք,- կակազեցի ես,- բայց դուք երևի ինձ ուրիշի հետ եք շփոթում: Ես... Ես ձեզ չեմ ճանաչում:

- Եթե ճանաչեիր, չէիր ուշացնի, անմիջապես վերև կբարձրանայիր: Առաջին անգամ է, դրա համար էլ ներում եմ,- ժպտաց տարօրինակ մարդը:- Դե շուտ արա, սուրճը սառչում է:

Վես ժամ հետո մենք արդեն իրար գրկած հին երևանյան երգեր էինք երգում: Հին, կորած, մոռացված, երևի միայն արյան մեջ մնացած երգեր...

- Չէ՛, չէ՛,- մեկ էլ հանկարծ ասում էր տանտերը,- առաջ սա այսպես չէին երգում, սպասի՛ր, քամանչայի վրա ցույց տամ:

Սեղանից վերցնում էր քամանչան, պոչն ականջին էր հենում, սկզբում միայն իր համար գրեթե անլսելի դուրս էր բերում մեղեդին, ապա բարձրացնում էր ձայնը ու գլուխն էլ հետը թափահարելով ասում՝ գնացինք...

Ու մենք երգում էինք հին երևանյան, կորած, մոռացված, երևի միայն արյան մեջ մնացած երգեր:

Իհարկե, մեզ հաճախ էին ընդհատում, փողոցից մեկ էլ ձայն էին տալիս.

- Վարպե՛տ Վանյա, տանն ե՞ս:

Վանյան, կամ գինու նախկին գործարանատեր Թովմաս Ռշտունու Հովհաննես որդին, քամանչան ձեռքին պատուհանին էր մոտենում ու գլխով էր անում միայն:

- Երեկոյան գալու ենք:

Հովհաննես Ռշտունին գլխով էր անում, շարունակելով նվագել, ու քամանչան նրա ձեռքին խաղում ու խոսում էր, ծիծաղում ու լալիս էր:

Քանի դեռ չէր նվագել, ես հարցրի, թե ինչու են բոլորը վարպետ ասում նրան: Ինքը ն՞ս հոր նման գինեգործ է:

Վանյան ծիծաղեց:

- Եթե մեր տնից եկող գինու հոտը նկատի ունես, ապա դա հորիցս մնացած ժառանգությունն է: Ասաց նա: - Հորիցս ինձ ժառանգություն է մնացել այդ հոտը, որ այդպես էլ վաթսուն տարվա ընթացքում խնկահոտի նման բռնել է մեր ներքնահարկը, այս քամանչան ու մեկ էլ առանց ընկերոջ սեղան չնստելու պատգամը:

Երևի ինքն էլ զարմացավ, որ այդքան երկար նախադասություն առանց կատակի է արտասանել, որովհետև հանկարծ խստորեն դիմեց կնոջը, որը սեղան էր գցում.

- Նորա՞, էլի դո՞ւ ես չարչարվում, կոտորվե՞լ են սպասավորները...

Նորան միայն ժպտաց մեղմիկ, ինչպես մայրերը զավակների խենթության վրա են ժպտում:

- Վաթսուն տարվա գինի՛ բեր, հորս կարասներից,- կարգադրեց Վանյան:

- Բերել եմ,- ասաց Նորան՝ սեղանին դնելով «Հրագդան» գինու շիշը:

- Սա նրանի՞ց է, թե՞ այն մյուսից,- խստորեն հարցրեց Վանյան:

- Նրանից է, նրանից,- ծիծաղեց կինը:

- Ձախ կողմի կարասին հո ձեռք չե՞ս տվել, Լյալյայիս հարսանիքի համար եմ պահում:

- Առանց քեզ հարցնելու ես կարասի՞ ձեռք կտամ,- խաղին մասնակցելով լրջացավ կինը, հետո չդիմացավ, ծիծաղեց ու ասաց սիրով, քնքշությամբ.

- Ա՛խ, Վանյա՛, Վանյա՛, ուրախությունն անպակաս լինի քեզնից:

- Ուրեմն ամփոփենք,- ասաց Վանյան,- կինը կա, գինին կա, ընկերը կա: Ի՞նչը մնաց... Նորա, բեր քամանչաս:

Ու սկսեց նվագել:

Ու ես հանկարծ զգացի, որ իմ առջև մեր ժամանակի նշանավոր մարդկանցից մեկն է նստած, մի մեծ մարդ, որովհետև իմ կարծիքով մեծ են բոլոր այն մարդիկ, ովքեր ամաչում են իրենց մեծությունից:

Նա նվագում էր զարմանալի վարպետությամբ և զարմանալի նուրբ, անկեղծ ու բաց, առանց թաքցնելու ոչինչ, առանց հավակնության և առանց սեթևեթանքի: Նա նվագում էր ու քեզ թվում էր, թե հին ու հարազատ ձայներ ես լսում. քեզ տուն կանչող մորդ ձայնն ես լսում, Ղանթարի շուկայում կուլայով ջուր ծախող ոտաբոբիկ փոքրիկ տղաների կանչերը, որոնց մեջ քո ձայնն էլ կա, և հեռու հեռվում ձյունոտ սարերից պոկված հովի սոսափն ես լսում, որ գալիս սրբում է հին Երևանի հին այգիների, հին ծիրանիների փոշին: Լսում ես ու խաղաղվում, հոգիդ բարությամբ և տաքությամբ է լցվում: Լսում ես և դես ու դեն են փախչում մանրիկ ցավերդ ու հոգսերդ: Ու մի պայծառ, լուսավոր թախիժ է պատում քեզ, և ինչքան որ մաքուր, անապական բան կա քո մեջ, խտանում, դառնում է ցող, դառնում է արցունք, գալիս հավաքվում է կոպերիդ տակ... ու դու նվագողին ես նայում հմայված, գերված, երախտագիտությամբ լի:

Ահա հենց այդ ժամանակ էլ փոխվում է նվագը: Քամանչան սկսում է կատակել, ծիծաղել, ցատկոտել, ճչում, պարի է կանչում: Ու քեզ թվում է, թե սրբապղծություն տեղի ունեցավ:

- Վանյա, Վանյա, ի՞նչ ես անում, անուշ ախպեր, էն նվագը շարունակիր...

Իսկ Վանյան արդեն դեն է նետել կնտնտոցը ու մատներով է նվագում, աճապարարի ճարպկությամբ այս ու այն կողմ շրջում քամանչան, մեկ թառ է դարձնում, մեկ դահիրա...

Որովհետև նա տեսել է, որ դու իրեն ես նայում հմայված, գերված, երախտագիտությամբ լի և ամաչում է...

*

* *

Ոչ մի տեղ այնպիսի խնջույք չի ստացվում, ինչպես Վանյայենց տանը: Եվ ով կասի, թե լավ տրամադրության համար խմիչքը պարտադիր է, կսխալվի:

Այդ տանը ամեն երեկո ուրախություն է, հնչում են նվագն ու երգը, ծիծաղի համազարկեր են լավում, ոտքերի դոփյունից ճռճվում են ջահերը, մարդիկ հուզված կենացներ են ասում... իսկ վերջում պարզվում է, որ ոչ ոք էլ գրեթե ոչինչ չի խմել, որովհետև դեռ սեղանին է «Հրագրանի» կիսաստ շիշը:

Ասենք, եթե մարդիկ խմում են, որ բարձրացնեն իրենց տրամադրությունը, էլ ինչո՞ւ խմեն, երբ տրամադրությունն առանց այդ էլ բարձր է, երբ օդը զնգում է նվագից, կատակից, երգից, սիրուց: Ասենք, եթե մարդիկ խմում են իբր այն պատճառով, որ իրենց հասկացող չկա, էլ ինչո՞ւ խմեն, երբ նրանց հասկանում են:

Այս զարմանալի դարում խոսել շատերն են սիրում: Լսող չկա:

Իսկ Վանյան կարողանում է լսել: Եվ անվանի շատ երաժիշտներ նրա մոտ են գալիս, որպեսզի նվագի այդ համեստ դասատուի մոտ կատարեն իրենց նոր գործերը:

Ասես քննության են գալիս:

Եվ երևանյան այդ հին տունը նորից նվագով է լցվում:

*

* *

Մի քանի ամիս քաղաքում չէին: Վերադարձա թե չէ, շտապեցի Ալավերդյան փողոց: Եվ հանկարծ բժշկական օգնության մի մեքենա տեսա սև տուֆից կառուցված մուտք-կամարի մոտ:

- Վանյա՛, ի՞նչ է պատահել, ախպե՛րս...

Վանյան պառկած է դեմքով դեպի պատը ու չի խոսում: Նրա գլխավերևում պատից կախված գորգին որսորդական զանազան հրացաններ ու դաշույններ կան, որ ինչքան հիշում եմ, իրենց ստեղծման օրից այդ գորգին էլ եղել են: Իսկ ոտքերի մոտ, մահճակալին քամանչան է, կողքի աթոռին դրված է դիոլը, քիչ այն կողմ պատուհանի գոգին թառն է, բոլորն էլ նրա ձեռքի գործը:

Առաջին անգամ է, որ այդ գործիքները լուռ են այս տանը, և առաջին անգամ է, որ լուռ է Հովհաննես Ռշտունին:

- Քնա՞ծ է,- հարցնում եմ Նորային:

- Չէ՛,- ասում է նա,- խռոված է:

Ծիծաղս գալիս է: Բարձրանում է տրամադրությունս: Ուրեմն վիճակը վատ չէ:

- Ո՞ւմից է խոսվել:

- Աշխարհից,- ասում է Նորան:

Արդեն ծիծաղում եմ:

- Է՛, լավ, աշխարհն ի՞նչ է արել նրան:

- Իսկ դու չգիտե՞ս, որ նրա աշխարհը ընկերներն են,- ասում է Նորան:

- Իսկ ընկերներն ի՞նչ են արել, ինչո՞ւ է խոսվել նրանցից...

Եվ հանկարծ Վանյան շրջվում է դեպի ինձ:

- Լավ եմ արել,- ասում է նա:

Նիհարել է Վանյան և գունատ է: Նորան դեռ միջանցքում դուռը բացելիս ասաց, որ ուժեղ ցավեր ունի գոտկատեղում: Այդ ցավերը կնճիռներ են դարձել, ակոսել են դեմքը, բայց, փառք աստծո, աչքերին չեն հասել: Այդ աչքերն ինչպես միշտ խելոք են, տխուր են ու միաժամանակ ինչ-որ ներքին ուրախությամբ լի:

Հակասություն մի փնտրեք, հենց այդպես էլ կա:

- Դո՞ւ ինչ ես բերել,- հարցնում է Վանյան:

- Ե՞ս:

Չէ, նրան իրոք ինչ-որ բան է պատահել, որովհետև առաջին անգամ է, որ այս տանը որևէ մեկին նման հարց են տալիս:

- Ես հենց այսօր եմ եկել, ոչինչ չգիտեի, հասկանո՞ւմ ես, Վանյա՛: Իսկ քեզ ի՞նչ է պետք:

- Հը՛մ, որ հարցնում ես, ուրեմն ամեն ինչ կորած չէ: Հը՛մ: Տեսնո՞ւմ ես, Նորա՛, նա հարցրեց:

Վանյան կռանում ու մահճակալի տակից մի մեծ տուփ է հանում, որ բերնեբերան դեղերով լի է:

- Մի տուփ էլ գլխիս տակ կա, հանի՛ր,- ասում է նա:

Ես նրա բարձի տակից մի ուրիշ տուփ էլ եմ հանում, որը նույնպես լի է բազմազան, բազմաձև, բազմագույն հաբերով ու սրվակներով:

- Տես թե ինձ ինչ են բերում իմ ընկերները,- ասում է նա,- քո կարծիքով այս դեղերով քանի՞ մարդու կարելի է սպանել: Մենակ ինձ համար շատ չէ՞: Տես թե ինչ են բերում... Ու առանց գործիքի են գալիս: Խնդրում եմ, թե մի բան նվազեք, չեն նվազում: Քեզ անհանգստացնել չի կարելի, ասում են... Մեկն ասող լինի, հեռու ձեզանից, շան տղերք, որ դուք հիվանդ եք եղել, անտրամադիր եք եղել և վերջապես մեռել եք, ես ձեզ դե՞ղ եմ բերել: Նվազել եմ ձեզ համար,

չէ՞: Այդ ինչպե՞ս պատահեց, որ նվագը ձեզ համար հանգստություն էր, իսկ ինձ համար, անհանգստություն է: Ախր ամբողջ կյանքում ես նվագել եմ ձեզ համար, հիմա որտե՞ղ եք, մարդ եմ, հիվանդացել եմ, ինչո՞ւ չեք գալիս մի անգամ էլ ինձ համար նվագեք, հը՞, ճիշտ չե՞մ...

Նորան թեքվեց, զգուշությամբ ուղղեց բարձր...

- Չեն գալիս նվագելու, որովհետև բժիշկները չեն թողնում, քեզ հուզվել չի կարելի, Վանյա՛:

- Իսկ ես նրանց բժիշկներին հարցնո՞ւմ էի:

Հովհաննես Ռշտունին երկար ժամանակ լուռ էր:

- Իսկ էդ ո՞վ է աշխարհում որոշել, թե մարդ ինչից է հուզվում, Նորա՛... Ես օրինակ, հուզվում եմ, երբ հուզվելու բան չկա...

Եվ որովհետև այնուամենայնիվ աշխարհը լի է գեղեցկություններով ու հրաշքներով, դրանցից մեկը կատարվեց անմիջապես: Փողոցից դուրսկի մի մեղմ ձայն եկավ, ասես հեռու հեռվից, ձյունոտ սարերից հովի մի պատառիկ պոկվեց ու եկավ սրբելու հին Երևանի հին այգիների հին ծիրանիների փոշին, եկավ մեղմիկ շոյելու հին երաժշտի խոնավ ճակատը:

- Վարպե՛տ Վանյա, տա՞նն ես...

- Նո՛րա,- բացականչեց Հովհաննես Ռշտունին,- շուտ, ասա տանն եմ, ասա տանն եմ ու գնա մեր մառանից, հորս կարասներից ամենահին գինին բեր, գիտես որը, չէ՞, այն մեկը, որ հատուկ այսօրվա համար էի պահել: Չէ, չէ, ձախ կողմինը չէ...

- Գիտեմ, գիտեմ,- ժպտաց Նորան: Նրա աչքերից արցունքներ էին թափվում, բայց նա ժպտում էր:- Գիտեմ, Վանյա՛ ...

- Կոստյո՛ւմս,- բղավեց Վանյան,- սիրուն Աբոյի դուդուկն է, երևի նոր բան է բերել: Ասա տանն եմ, Նորա՛, բոլորին ասա, որ տանն եմ...

1978թ.

Էջեր Երգիծանքից

Ոսկե Ձկնիկը

Կենցաղային սպասարկման բնագավառի ամենահամեստ աշխատողներից մեկը՝ Համբարձում Սանթրոպյանը, որին բարեկամները փաղաքշաբար Համիկ էին անվանում, իր սեփական մոտորանավակով ձուկ էր որսում Սևանա լճում:

Երբ առաջին անգամ նետեց կարթը, դուրս բերեց մի բավականին խոշոր կողակ.

«Դու ինձ պե՞տք ես», - անբավական քրթմնջաց Համիկը և ձուկը կրկին ջուրը նետեց:

Երբ երկրորդ անգամ նետեց կարթը, որսաց մի հսկայական սիգ: Համիկը միայն մի պահ հաճույքով դիտեց կեռիկից ազատվելու համար փայլփլուն ձկան գործադրած հուսահատական ճիգերը, ապա արհամարհանքով ժպտաց.

«Հիմար, դո՞ւ ում ես պետք: Քեզ նմանները երկու ռուբլով խանութներում թափված են»:

Եվ լիճը նետեց ձուկը:

Իսկ երբ երրորդ անգամ ջրից դուրս հանեց կարթը, կեռիկից կախված օրորվում էր մի... մի իսկական, մի բնական, մի սքանչելի իշխան ձուկ:

«Ես քեզ կերա», - հրճվանքից դողալով՝ խանդավառ բացականչեց Համիկը:

Բայց կատարվեց հրաշք:

Իշխան ձուկը հանկարծ մարդկային լեզու առավ և վիրավոր շրթունքները շարժելով - մրմնջաց.

- Թո՛ղ ինձ, թո՛ղ, Համի՛կ, թո՛ղ ինձ անվտանգ,

Քեզ կվճարեմ թանկագին փրկանք...

- Վա՛յ,- ապշեց Համիկը,- էդ դո՞ւ ես խոսում:

- Հա՛,- ասաց իշխանը:

- Երանի մեզ,- գլուխն օրորեց Համիկը,- իբր թե խոսացողները քիչ են, ձկներն էլ են սկսում խոսել:

- Ես սովորական ձուկ չեմ,- ասաց իշխանը,- ես...

Համիկը մեղմորեն ժպտաց.

- Էդ ի՞նչ ես ասում: Ուրեմն ես չգիտե՞մ, թե ինչ ձուկ ես դու: Դու ոսկե ձկնիկ ես, ոսկե... Քո կի-
լոն արդեն երեսուն ռուբլով էլ ձեռքներս չի ընկնում:

- Ես կախարդական ձուկ եմ,- ասաց իշխանը:

- Բա որ կախարդական չլինես, էդ գինը կունենա՞ս,- ծիծաղեց Համիկը:

- Բայց ես կարող եմ կատարել քո բոլոր ցանկությունները,- ասաց իշխանը:- Հրամայի՛ր և կու-
նենաս այն ամենը, ինչ ուզում ես... Միայն թե բաց թող ինձ...

Համիկը մի պահ մտածեց.

- Իսկ ի՞նչ կարող ես անել ինձ համար:

- «Վոլգա» ավտոմեքենա ուզո՞ւմ ես,- հարցրեց ձուկը:

Համիկը քնծիծաղեղ և մատով ցույց տվեց ափը: Ափին կանգնած էր մի բոլորովին նոր «Վոլգա»
ավտոմեքենա:

- Այդ դեպքում գուցե առանձնատուն,- հարցրեց ձուկը:

- Մեկը Աղվերանում ունեմ, մեկն էլ Սև ծովի ափին: Ես շարքային աշխատող եմ, ինձ դրանից
ավելին չի հասնում,- համեստորեն ասաց Համիկը:

- Ճապոնական տեսամագնիտոֆոնի մասին ի՞նչ կասես,- հարցրեց ձուկը:

- Մի՛ մանրացիր,- բարկացավ Համիկը,- և արժանապատվությունդ մի՛ կորցրու:

- Բա ի՞նչ անեմ,- հուսահատությունից լողակները կտրատեց իշխան ձուկը:- Դո՛ւ ասա՛ ի՞նչ
ես ուզում, և ես կկատարեմ քո յուրաքանչյուր ցանկությունը: Ախր ես կախարդական ձուկ եմ,
տեսնո՞ւմ ես, խոսում եմ...

Համիկը կեռիկի վրայից հանեց իշխան ձուկը, մատներով բռնեց խոիկներից, նայեց աչքերի
մեջ ու ասաց.

- Դե հիմա դո՛ւ ինձ լսիր: Ես ամեն ինչ ունեմ, հասկանո՞ւմ ես: Ես ոչնչի կարիք չեմ զգում: Մի-
ակ բանը, որ մեկ-մեկ սիրտս ուզում է, դո՛ւ ես... Ու դու էլ հազիվ ձեռքս ես ընկել: Այնպես որ՝
խոսես, թե չխոսես, ինձ համար ոչ մի նշանակություն չունի, իշխա՛ն ջան: Ես քեզ ուտելու եմ:

Եվ կերավ:

1984թ.

Հարգելի Պատճառ

Ո՞վ կմտածեր, թե այդպիսի բան կպատահի:

Ո՞վ կսպասեր, թե մեր հիմնարկի պետն այդ օրն աշխատանքի կգա ճիշտ ժամին, առավոտյան ժամը իննին:

Ուղիղ երկու տարի, հանած արձակուրդներն ու գործուղումները, նա աշխատանքի էր գալիս ժամը տասնմեկին: Եվ մենք հիանալի գիտեինք, թե ինչու: Ընկեր Ատոմյանը աշխատանքից հետո սիրում էր խմել: Եվ որովհետև ուշ էր հարբում, ուշ էլ քնում էր:

Ահա ամբողջ գաղտնիքը:

Իսկ աշխատանքի գալիս էր բարեխղճորեն, նույնիսկ կարելի է ասել՝ չափից ավելի պարտաճանաչ կերպով՝ առավոտյան ճիշտ ժամը տասնմեկին:

Եվ որովհետև երբևէ չէր խախտում այդ ժամը, նրա գալուց հինգ րոպե առաջ մենք արդեն զբաղեցրած էինք լինում մեր տեղերը: Չիկչխկում էին փայտե ու երկաթե հաշվիչները, ցրիչներն արագ-արագ այս ու այն կողմ էին գնում, համազարկեր էին տալիս մեքենագրուհիները:

Ընկեր Ատոմյանը ժպտում էր մեզ, գլխով էր անում բարյացակամորեն և մտնում իր առանձնասենյակը:

Սկսվում էր աշխատանքային օրը:

Իսկ այդ չարաբաստիկ օրը թե ինչ է պատահում, ո՞վ կարող է իմանալ. հիվանդ է լինում ընկեր Ատոմյանը, թե խմիչքի ընկերներն են բացակայում, ստույգ հայտնի չէ, բայց առավոտյան ուղիղ ժամը իննին հայտնվում է հիմնարկի շենքի առաջ:

Հայտնվում է, նայում դռան կողպեքին ու մնում զարմացած: Մոլորված քայլում է շենքի շուրջը, մի քանի անգամ կարդում է հիմնարկի անունը, մտածելով, թե գուցե սխալ տեղ է եկել և անհրաժեշտ է համարում հարցնել անցորդներից մեկին.

- Ներեցե՛ք, այսօր շաբա՞թ է, թե կիրակի:

- Երեքշաբթի է, ընկե՛ր ջան,- քայլերն արագացնելով ասում է անցորդը:

«Չէ, այստեղ մի խորը թյուրիմացություն կա», - մտածում է ընկեր Ատոմյանը՝ տեղավորվելով բետոնե սանդուղքին: Եվ սկսում է սպասել:

Չանցած երեսունհինգ րոպե, համերաշխորեն հորանջելով հայտնվում են շենքի պահակն ու տեղկոմի նախագահը:

- Սամսո՛ն,- առամների արանքից հարցնում է ընկեր Ատոմյանը,- որտե՞ղ էիր:

- Կ-կինս հիվանդ էր,- կողպեքը չկարողանալով բացել՝ կակազում է պահակը:

- Դու բժի՞շկ ես: Գրավոր նկատողություն,- կտրում է դիրեկտորը:-Իսկ դո՞ւք, տեղկոմի ընկեր նախագահ...

- S-տրոլեյբուսը ուշացավ... տ-տրամվայր...

- Ոտքով գայիք, ինչպես ես եմ եկել,- խորհուրդ է տալիս ընկեր Ատոմյանը:-Գրավոր խիստ նկատողություն:

- Բա էդ բոլորը որ մեզ էք տալիս, մեզանից հետո եկողներին ի՞նչ էք տալու,- դուռը բացելով - հարցնում է Սամսոնը:

Նրա միամիտ հարցը անպատասխան թողնելով՝ դիրեկտորը մտնում է իր առանձնասենյակը, և հինգ րոպե անց անհոգ երգելով ընդունարան մտած քարտուղարուհի-մեքենագրուհի Միմային կարգադրում է սեփական ձեռքով գրել նկատողություն ստանալու սեփական հրամանը:

- Ռուբե՛ն Պավլովիչ, կյանքումս առաջին անգամ ուշացել եմ և... նկատողություն,- շրթունքները հուզմունքից ներկելով՝ արդարացիորեն տրտնջում է Միման:

- Որպեսզի առաջինը վերջինը լինի,- փիլիսոփայորեն նկատում է ընկեր Ատոմյանը:

Այնուհետև նա քարտուղարուհուն նստեցնում է ձախ կողմում, իսկ խիստ նկատողություն ստացած տեղկոմի նախագահին՝ աջ կողմում, և սկսում է անօրինակ մի հաշվեհարդար անակնկալի եկած, խուճապի մատնված մեր համերաշխ կոլեկտիվի հետ: Ընդ որում՝ ծայրահեղ ջանասիրությամբ նրան օգնում է տեղկոմի նախագահը, շփոթեցնում, խաչաձև հարցեր է տալիս ուշացած միամիտ մարդկանց, պահանջում, որ բոլորն առնվազն գրավոր խիստ նկատողություն ստանան:

- Չէ՛, չէ՛, ազնվորեն ասե՛ք, ինչո՞ւ էք ուշացել,- չարախնդորեն հարցնում է նա:

Ուշացածների պատասխանները առանձին ինքնատիպությամբ չեն փայլում: Կոլեկտիվի հիսուն տոկոսը հայտարարում է, թե հիվանդ էր կիներ կամ ամուսինը, որին հետևում է տեղկոմի նախագահի քմծիծաղը.

- Դուք բժի՞շկ եք: Խիստ նկատողություն:

Մյուս հիսուն տոկոսն էլ ազնվորեն խոստովանում է, թե մեղավորը տրոլեյբուսն էր, ավտոբուսը կամ տրամվայր, որին ի պատասխան տեղկոմի նախագահը, նվիրվածորեն նայելով հիմնարկի պետին, նետում է հեզնանքով.

- Տրանսպորտը, հա՞, իսկ չէի՞ք կարող ընկեր Ատոմյանի նման ոտքով գալ: Հը՞... խիստ նկատողություն:

Ժամը տասնմեկին տասնհինգ րոպե պակաս հիմնարկի պետի գայրույթը իր գազաթնակետին հասավ, երբ առանձնասենյակի կիսաբաց դռնից լսեց Միմայի փեսացու և համատեղության կարգով կադրերի գծով տեսուչ Սացակի ձայնը.

- Մի՛մ, ազի՛զ, շեֆն ինչպես միշտ չկա՞ ...

- Կա՛մ,- որոտաց Ատոմյանը,- ես կամ, իսկ դուք հեռացված եք աշխատանքից:

- Հեռացնելու համար տեղկումի համաձայնություն է պետք,- նկատեց քարտուղար-մեքենագրուհի Սիման:

- Ես համաձայն եմ,- ասաց տեղկումի նախագահը:-Օրվա վերջին որոշումը պատրաստ կլինի: Մեր կոչումն է օգնել դիրեկցիային՝ հիմնարկում աշխատանքային օրինակելի կարգ ու կանոն հաստատելու համար:

- Տեղկումի նախագահը դեռ տեղկում չէ,- հեզնանքով նետեց Սիման:

Տեղկումի նախագահը նրան նայեց սպանիչ արհամարհանքով:

- Պա՛հ,- ասաց նա,- այ քեզ նորություն: Տեղկումը այդ ես եմ: -Եվ այնպիսի կեցվածք ընդունեց ինչպիսին հավանաբար Լյուդովիկոս թագավորներից մեկն էր ընդունել «պետությունն այդ ես եմ» նախադասությունն արտասանելուց հետո:

Հաջորդ տասնհինգ րոպեում տեղկումի համաձայնությամբ աշխատանքից հեռացվեցին նաև տնտեսվար Միտուշը և դիրեկտորի տեղակալ Հայկազը, որն անցյալ ժողովում մեծ-մեծ խոսում էր գիտատեխնիկական հեղափոխության մասին:

Ջոհերին չօգնեց ոչ մի պատճառաբանություն:

- Ես մատտեխսնաբ էի գնացել,- ասաց Միտուշը:

- Ադրի մեքենային էի սպասում,- արդարացավ Հայկազը: Բայց ընկեր Ատոմյանն անդրդվելի էր:

- Պարտավոր էիք ինձ տեղյակ պահել,- կտրեց նա:-Դրանք հարգելի պատճառաբանություններ չեն:

Եվ ահա այդ շիկացած մթնոլորտում, երբ նկատողություն, խիստ նկատողություն ստացած և աշխատանքից հեռացված ողջ կոլեկտիվը ընդունաբանում հավաքված մռայլ լռում էր, ինչպես քրմերի երգչախումբը «Աիդա» օպերայի երկրորդ գործողության երրորդ պատկերում, դուռը բացվեց և ներս մտավ ֆիզկուլտհրահանգիչ Շահենը:

- Օ՛, հավաքվել եք ՊԱՊ-ի նորմաները հանձնելո՞ւ,- ուրախ ժպտալով հարցրեց նա:

Եվ երգչախումբը նրան նայեց կարեկցանքով, սպասումով և չարախնդությամբ:

- Իսկ տատիդ հարսանիքը միտդ չի՞ գալիս,- մեներգեց աշխատանքից հեռացված Միտուշը:

- Որևէ հարգելի պատճա՛ռ գտիր, թշվառակա՛ն,- շշնջաց խիստ նկատողություն ստացած գրադարանավարը,- պետն այսօր ժամը իննին է աշխատանքի եկել:

Շահենը գունատվեց, ետ նայեց դեպի դուռը, տատանվեց մի պահ, նայեց կոլեկտիվին, ամաչեց ու երերուն քայլերով մտավ առանձնասենյակ:

Եվ երգչախումբը շունչը պահեց կիսաբաց դռան առաջ:

- Որտե՞ղ էիր,- գլուխը ծանրորեն քարձրացրեց ընկեր Ատոմյանը:

Ֆիզկուլտհրահանգիչը լուռ էր:

- Գուցե կինդ հիվա՞նդ էր,- հեզնեց տեղկումի նախագահը:

- Ո՛չ,- ասաց Շահենը:

- Գուցե տրոլեյբո՞ւսն էր ուշանում,- խայթեց քարտուղար-մեքենագրուհի Սիման, որի աչքին աշխարհը մթնել էր՝ կադրերի գծով տեսուչ Մացակի ազատման հրամանը իր ձեռքով գրելուց հետո, և անգիտակցաբար տեղկումի նախագահի ճամբարն էր անցել:

- Ի՞նչ է, ֆիզկուլտկոմիտե՞ էին կանչել,- արհամարհանքով հուշեց հիմնարկի պետը:

- Ո՛չ, ընկեր Ատոմյան:

- Ուրեմն ինչո՞ւ ես ուշացել, ասա:

- Անհարմար եմ զգում ասել,- մրմնջաց Շահենը:

- Ասա՛, ասում եմ:

- Անկեղծորե՞ն ասեմ:

- Իհարկե, անկեղծորեն:

- Խմել էի:

- Ի՞նչ: Ինչ ասացի՞ր...

- Երեկ շատ էի խմել... Երկար... առավոտը չկարողացա վեր կենալ:

- Հեռացնել,- ֆիզկուլտհրահանգչի լկտիությունից ցնցված բղավեց տեղկումի նախագահը:- Տեղկոմը համաձայն է:

- Հեռացնել,- ճչաց քարտուղար-մեքենագրուհի Սիման:

Իսկ ընկեր Ատոմյանը լուռ էր: Նա Շահենին էր նայում համակրանքով, ներողամտությամբ և խորին ըմբռնումով:

- Իսկ հիմա ո՞նց ես,- հարցրեց նա:-Գլուխդ չի՞ ցավում:

- Լավ եմ, ընկեր Ատոմյան,- ասաց Շահենը:

- Դե, գնա՛, գնա՛ աշխատիր,- գլխով արեց ընկեր Ատոմյանը:

Կուլեկտիվն ալեկոծվեց, մեջը քար նետված ջրափոսի նման, երբ Շահենը ընդունարան մտավ:

- Հեռացրի՞ն,- կեղծ կարեկցանքով հարցրեց տնտեսվար Միտուշը:

- Ինչո՞ւ պիտի հեռացնեին,- ժպտաց Շահենը,- ես հարգելի պատճառ ունեի: Խմել էի երեկ:

Եվ դատապարտված կուլեկտիվը զարմանքի ճիչ արձակեց, ինչպես քրմերի երգչախումբը «Աի-դա» օպերայի երրորդ գործողության երկրորդ պատկերում, երբ հայտնի է դառնում Ռադամեսի դավաճանությունը:

1977թ.

Թույնի Կաթիլներ

Հնուց ի վեր ամենաանպատիվ, արհամարհելի, նզովքի արժանի արարքը համարվել է գուժկանությունը: Գուժկան, բոթաբեր մարդկանց անվանել են ագռավ, բայդուշ, բվեճ: Նրանց տեսնելիս անիծել են, փոխել են ճանապարհը, խաչակնքել են: Իսկ թագավորներն, իրենց անսահմանափակ իշխանությունից օգտվելով, հրամայել են կտրել այն մարդու լեզուն, որը համարձակվել է տեղ հասցնել բոթը, ահագուժել, հրամայել են սպանել գուժկանին, որ եկել կանգնել է թագավորի առաջ ու հայտարարել.

- Իմացած լինես, որ քո թշնամին հարձակվել, գրավել է քո քաղաքները, գլխատել է եղբորդ, անարգել է ծնողներիդ գերեզմանը...

Եվ, իմ կարծիքով, այս հարցում թագավորները ճիշտ են վարվել:

Վատ լուր հաղորդելը սոսկալի ծանր պարտականություն է և, ուրեմն այն պետք է կատարել զգուշորեն, նրբությամբ, մեծ տակտով: Թող տարօրինակ չթվա, բայց վատ կամ տխուր լուր հաղորդողը նախ և առաջ պետք է դրա իրավունքն ունենա, բոթն ստացող մարդու մտերիմը լինի, բարեկամը, հարվածը կասեցնողը լինի ու մեղմողը: Այլապես, շատ ավելի լավ է, որ մարդ չիմանա էլ, թե ինչ է պատահել իրեն, էթե դժբախտությունը կանխելն ուշ է արդեն, և դեպքին տեղեկանա բնականոն ընթացքով, իր ժամանակին:

Ընկերներիցս մեկը պատմում է.

- Մի օր առավոտ վաղ ինձ արթնացրեց հեռախոսի զանգը:

Զարմացա, ո՞ւմ եմ պետք եկել այդ ժամին: Վերցրեցի լսափողն ու ավելի զարմացա. իմ ծանոթ լրագրողներից մեկն էր, որ երբևէ ինձ զանգահարած չկար:

- Բարի լույս:

- Բարի լույս: Այս ժամին...

- Զարմացա՞ր, որ զանգ եմ տալիս: Չէի կարող չզանգահարել: Գիտե՞ս ինչ է եղել:

- Ի՞նչ է եղել:

- Ա՛յ մարդ, քո մասին մի զգվելի նյութ է տպագրվել մեր թերթում:

- Ի՞նչ...

Դե, իհարկե, կատակում է: Ի՞նչ պետք է գրեն իմ մասին: Բայց ի՞նչ կարիք կա կատակելու այս ժամին: Միրոս տհաճ, անհանգիստ բաբախում է:

- Չէ, ի՞նչ կատակ,- նույնիսկ նեղացած հայտարարում է ծանոթս,- գրել են ու այն էլ շատ կոպիտ, նույնիսկ քաղաքական մեղադրանքներ կան: Ուզո՞ւմ ես կարդամ...

Ու, առանց սպասելու, կարդում է, կարդում է՝ շեշտելով ամենավիրավորական բառերը, կարդում է մի տեսակ բավականությամբ, ասես արտասանում է, ասես հենց ինքն է գրել: Կոկորդս սեղմվում է, ցավում է սիրտս, գայրույթից խեղդվում եմ: Ոչ միայն գրածի համար, չէ, գրածը գրապարտություն է և կհերքվի, ինձ ավելի շատ վշտացնում ու բարկացնում է այդ իմ ծանոթի դերը, առույգ տրամադրությունը, առոզանությունը:

- Հետո՞,- հարցնում եմ:

- Էլ ի՞նչ հետո:

- Կարո՞ղ ես այնպես անել, որ դա չտպագրվի:

- Ո՞նց թե չտպագրվի,- նույնիսկ ծիծաղում է նա,- արդեն տպագրված է: Թերթից եմ կարդում: Նոր բերեցին:

Քիչ է մնում հայհոյեմ:

- Ուրեմն, ինչո՞ւ ես առավոտ շուտ արթնացնում: Որ աչքալուսա՞նք տաս, որ շնորհակալություն ւն հայտնեմ: Կգնայի աշխատանքի՝ կիմանայի: Ինչո՞ւ ես շտապում, ինչո՞վ ես օգնում ինձ, ի՞նչ մարդ ես դու...

Նա ասես թե շփոթված ու վիրավորված ինչ-որ բան է քրթմնջում «ուշադրության», թե «լավության» մասին, բայց ես նետում եմ լավփողը և արդեն թունավորված եմ:

Եվ դեռ «բարի լույս» է ասում՝ տհաճ, ցավեցնող լուրը հայտնելուց առաջ: «Բարի լույս»: Ի՞նչ բարի լույս, երբ լույս-առավոտն արդեն խաթարված է, երբ ցնցված ու գրգռված շտապում ես թերթ գնելու, չես լսում կնոջդ խոսքերը, կոպտում ես երեխաներիդ ու չես պատասխանում հարևաններիդ «բարի լույս»-ին:

Եվ իրոք, ի վերջո, ի՞նչ նպատակ ուներ նա, ի՞նչ նպատակ ունեն նրա նմանները, երբ շտապում են ժամ առաջ դառն ու չար լուրեր հաղորդել, թունավորել մարդկանց:

Բայց սա դեռ ամենավատը չէ, սա դեռ, ինչպես ասում են, փոքրագույնն է չարյաց: Նույնիսկ առարկողներ կլինեն. կասեն՝ մեծ բան չէ, մարդը եղածն է հայտնում, կասեն՝ միևնույնը չէ՞, վաղ թե ուշ իմանալու էիր: Եվ նրանք, գուցե, որոշ չափով իրավացի են: Բայց ի՞նչ ասես ոմանց, որ չեղած բանն են հայտնում քեզ, հորինում են, իրենց մտքերը վերագրում ուրիշին, բամբասում...

Խաղաղ, պայծառ, կիրակի է: Երեխաներիդ թևից բռնած, ուրախ ծիծաղով, կատակով մանկական այգի ես գնում: Թվում է՝ ոչ մի բան չի կարող փչացնել տրամադրությունդ: Բայց ահա հանդիպում է մեկը.

- Օ՛, ողջույն, ողջույն, սրանք քո՞ երեխաներն են:

- Իհարկե,- զարմանում ես դու:

- Յա՞՞,- ապշում է ծանոթ,- բա ասում էին լքել ես երեխաներիդ:

- Ե՞ս, ո՞վ է ասում, այ քեզ հիմարություն:

- Ասում են, էլի, լեզվի տակ հո ոսկոր չկա: Ասում են, թե հեռացել ես տնից, երեխաներիդ ավիմենտ չես տալիս, դատարանում ծեծել ես կնոջդ, մանր խուլիզանության համար...

- Բայց ո՞վ է ասում, ո՞վ է ասել, ո՞վ է...

- Ո՞վ էր, է՛, սպասի՛ր, չէ, չեմ հիշում: Դե դա ի՞նչ կարևոր է, տեսնում եմ, որ ամեն ինչ լավ է, դե, ապրես, ապրես...

Թփթփացնում է ուսիդ, հեռանում, և հանկարծ դու զգում ես, որ լավ տրամադրությունից հետք անգամ չի մնացել: Քայլում ես ու մտածում՝ ո՞վ այդպիսի գրպարտություն տարածած կլինի, հերթով մտաբերում ես քեզնից որևէ հարցով դժգոհ ծանոթներիդ, զայրանում ես, խոսում ինքդ քեզ, վիճում և... մնաս բարո՞վ, լավ տրամադրություն, ծիծաղ ու կատակ, մնաս բարով, մանկական այգի: Իսկ այդ «ծանոթիդ» հենց այդքանն էլ հարկավոր էր:

Զարմանալի է, բայց կան մարդիկ, որ տանել չեն կարողանում ուրիշի երջանկությունը, խաղաղ, հանգիստ կյանքը, նրանց թվում է, թե իրենցից պակասում է ինչ-որ բան, երբ դու ուրախ ես, գոհ ես, որ դու նրանց հաշվին ես աշխատանքում առաջ գնում, արժանանում պարգևի ու խրախուսանքի, որ դու նրանց փոխարեն ես ապրում ու շնչում:

Եվ սկսում են, գործի են դնում թույնի կաթիլները... Քիչ-քիչ, թեյի գդալով:

Տարիներ շարունակ աշխատում ես մեկի հետ, նստում նույն սենյակում, միասին նախաճաշում: Բնավորությունդ, սովորություններդ, կյանքդ անգիր գիտի: Բայց մի օր էլ հանկարծ (հատկապես, երբ քեզ լավ ես զգում) հարկ է համարում բացականչել.

- Հա՛, մոռացա ասել: Երեկ տրոլեյբուսով կայարան էի գնում, մեկ էլ լսեցի, որ կողքիս աթոռին նստածները քո մասին են խոսում:

- Ի՞նչ էին ասում:

- Ասում էին, թե շնորհքով հաշվապահ է, բայց շատ ազահ է, աչքածակ, բարձր աշխատավարձ է ստանում, երեխա էլ չունի, բայց գյուղի այգու իրենց խնձորները Սիբիր է տանում, որ թանկ գնով վաճառի: Ասում էին, թե իբր եղբորդ երեխաներին փողոց ես նետել ու զավթել նրանց բնակարանը, թե կինդ հուսահատությունից կախել է իրեն... Տեսնո՞ւմ ես ինչ ստոր մարդիկ կան...

- Ովքե՞ր էին:

- Ես ի՞նչ իմանամ, ուղևորներ էին, էլի:

- Լավ, բայց դու հո գիտե՞ս, որ ես բարձր աշխատավարձ չեմ ստանում, որ հինգ երեխա ունեմ, որ քաղաքում եմ ծնվել, որ եղբայր էլ չունեմ, բնակարան էլ...

- Գիտեմ, իհարկե:

- Բա ինչո՞ւ չասացիր նրանց:

- Ե՞ս: Անձանոթ մարդիկ էին, ի՞նչ ասեի: Գլո՞ւխ դնեի հետները:

- Իսկ ինչու ես ինձ ասում: Ես որտե՞ղ գտնեմ նրանց, որ համոզեմ, թե սխալվում են: Եվ, վերջապես, դո՞ւ ինչու ես այդ հիմարություններն ինձ հայտնում:

Եվ միշտ նեղանում են.

- Եղա՞վ: Երբ քո մասին նման բաներ եմ լսում, էլ ո՞ր օրվա ընկերդ ու բարեկամդ եմ, որ չզգուշացնեմ: Դե եկ ու լավություն արա...

Մեկն այսպես, մյուսն այնպես, տարբեր ձևերով ու տարբեր չափերով, սակայն նույն նպատակներով ու նույն անազնվությամբ սրսկում հա սրսկում են թույնի կաթիլները: Եվ նրանց առաջն առնելը գրեթե անհնար է: Անհնար է, որովհետև քրեական և ոչ մի օրենսգրքում պատիժ չի սահմանված գուժկանների, զրահակիր զրպարտիչների, առերևույթ ժպիտով ու հոգածությամբ մարդկանց կյանքը թունավորողների նկատմամբ: Անհնար է «գրեթե», որովհետև մի ելք կա միայն, որ բոլորը միահամուռ, մի չգրված օրենքով բամբասողներին, «ուրիշի» ասածը հաղորդողներին, նենգ բանբերներին դիտեն իբրև առաջին դեմք, իբրև ստոր տեղեկությունների աղբյուր և բռնեն հենց նրանց օձիքից, նրանց կանչեն պատասխանատվության:

Թեև, իհարկե, ամենաճիշտն այս հարցում՝ հին թագավորների դիրքն է եղել երևի:

1966թ.

Իմ Շրջապատը

- Հայրի՛կ,- ասաց տղաս,- հեռախոսային կցասարք են վաճառում, առնենք, էլի:

- Առնենք, ի՞նչ անենք,- ասացի:

- Վեց թիվ հավաքելու փոխարեն մի կոճակ ես սեղմելու,- ասաց տղաս,- և՛ ժամանակի խնայողություն է, և՛ էներգիայի: Իսկ հիմա գիտես, չէ՞, թե ինչ ուշադրություն է դարձվում խնայողության հարցերին:

- Իսկ իմ աշխատավարձի խնայողության հարցերը քեզ չէ՞ն հետաքրքրում,- հեզնեցի ես:

- Հայրի՛կ,- թեթև նախատինքով ձայնեց տղաս, և բոլոր հարցերը լուծվեցին:

Մարդ ինչ ուզում է թող լինի, միայն թե սեփական երեխաների աչքին ժլատ չերևա:

- Իսկ քանի՞ հոգու հետ կարող եմ խոսել այդ սարքով,- հարցրեցի ես:

- Քսան,- ասաց տղաս:

- Որքա՞ն:

- Քսան:

- Ա՛յ տղա,- ուղղակի քրքջացի ես,- դու իմ շրջապատին ծանոթ չէ՞ս: Դու չգիտե՞ս, որ ես հարյուրավոր, եթե չասեմ հազարավոր հարազատներ, ազգականներ ու ընկերներ ունեմ, էլ չեմ խոսում իմ միլիոնավոր ընթերցողների մասին,- համեստորեն ավելացրի ես:

- Դե նրանց հետ քո գրքերով և հեռուստատեսությամբ հիանալի խոսում ես, էլի,- շոյեց ինձ տղաս:

Շողոքորթությունը ամենանողկալի բանն է, բայց շատ է դուրեկան:

Ես հանձնվեցի: Էլեկտրոնիկա-84-ը մտավ մեր տուն: Տղաս անմիջապես այն կցեց հեռախոսին, թուղթն ու գրիչը ձեռքը վերցրեց ու հարցրեց.

- Ուրեմն՝ սկսում ենք: Առաջինն ո՞ւմ ենք գրում:

- Եղբորս, ո՞ւմ,- առանց մտածելու ասացի ես:

Գրեց:

- Երկրորդը գրիր քրոջս,- ասացի անհոգ, թեև հետև էլ տենդորեն մտածում էի, թե որն է քրոջս հեռախոսի համարը... ու այդպես էլ չհիշեցի:

- Երրորդը...

- Երրորդը գրիր Խորենին... Չէ՛, ավելի շուտ Վարդգեսին... թեև ինչքան հիշում եմ՝ Վարդգեսի համարը պետք է փոխված լինի...

- Հինգերորդը...

- Հինգերորդը... - մտածեցի ես,- հինգերորդը... Գուցե Գևորգին գրենք, հը՞ ...

- Գրենք,- ասաց տղաս:

Իհարկե, սխալ է սարքի այդ սուղ հնարավորությունների մեջ Գևորգի անունը գրելը: Որովհետև ես նրան զանգ եմ տալիս շաբաթը և նույնիսկ ամիսը մեկ: Իսկ ամիսը մեկ կարելի է վեց թիվ էլ հավաքել: Ձեռքերս չեն կոտրվի: Բայց ի՞նչ արած՝ ոչինչ, թող գրի:

Վեցերորդ, յոթերորդ և ութերորդ կետերի տերերին գտնելու համար պահանջվեց երկու ժամ: Պարզվեց, որ այնքան էլ հեշտ չէ գտնել այնպիսի ընկերներ, որոնք հացի կամ ջրի նման պետք են քեզ: Իսկ թե դու ես նրանց պետք, թող նրանք էլեկտրոնիկա-84 գնեն ու մտածեն քո անունը գրելու մասին: Դո՞ւ ինչու պիտի գրես:

Մի խոսքով՝ իններորդ կետի համար ոչ մի թեկնածու չգտա: Տղաս ինչ-որ անուններ էր տալիս, բայց ես գլուխս էր թափահարում: Չեն բռնում: Մեկը կա, բայց հենց զանգ եմ տալիս, ինչ որ բան է ուզում ինձնից... Մեկն էլ կա, լսափողը վերցրեց թե չէ՝ իր պետից է բողոքում արդեն երեսուն տարի... Մեկն էլ կա, որ իսկի չեմ էլ ուզում զանգ տալ...

- Վե՛րջ,- ասացի ես հոգնած:

- Հայրի՛կ,- չգիտես կարեկցանքով, թե հեզնանքով հարցրեց տղաս,- ո՞նց թե վերջ: Բա քո շրջապատը... ընկերները... բա միլիոնավոր...

Ես նրան նայեցի խեղճացած:

- Տեսա՞ր, որ ես էլ մնացի զարմացած,- անկեղծությամբ ասացի ես,- բայց մտածում եմ... ամենամտերիմ... ամեն օրվա համար... Ուրեմն էլ չկան... Դժվար է:

Տղաս ծիծաղեց.

- Ի՞նչն է դժվար, ուզո՞ւմ ես մնացած կետերում մի բռնելու իմ ընկերների անունները գրեմ: Հա՞: Լևոն, Կարեն, Արմեն, Աշոտ, Վաղարշակ, Գագիկ... Ափսոս կետերը վերջանում են, իսկ ես դեռ ինչքա՛ն ընկերներ ունեմ...

Ես նրան նայեցի չգիտեմ կարեկցանքով, թե հեզնորեն.

- Երբ իմ տարիքին հասնես և քո տղան քեզ համար էլեկտրոնիկա-2014 գնի, կհիշես ինձ: Մենք դեռ ոչինչ, փա՛ռք աստծո: Մի կերպ պահեցինք մեր ընկերությունը: Տեսար, չէ՞, մինչև հինգը հասցրեցի: Իսկ երբ դու քո ընկերների անունները գրես՝ այն ժամանակ կտեսնես:

- Կապրենք՝ կտեսնենք,- վստահ ծիծաղեց տղաս:

- Կտենենք,- անվտանգ ասացի ես:

1984թ.

Բովանդակություն

Արտաշես Փիրաղայի Բալանթարյան	4
Միակ Չափածոն.....	9
Դեկտեմբեր.....	9
Վիպակներ	10
Հանրապետության Օրինակելի Բաղաքացին	10
Սիրի՛ր Մերձավորիդ	87
Պատմվածքներ.....	196
Մուսա Լեռան Չորավարը.....	196
Եփրատը Կարմիր Կիսեր.....	222
Հեռախոսագրքեր	246
Կոալաներ	254
Ինչո՞ւ Տրորեցիր Ծաղիկները.....	264
Պարտքը	272
Կսկիծ.....	280
Ձայներ.....	286
Իզաբել.....	296
Տերեվաթափ	302
Ոչինչ Չեմ Հասկանում.....	304
Ուրախ Ու Տխուր Մարդը	310
Էջեր Երգիծանքից.....	316
Ոսկե Ձկնիկը	316
Հարգելի Պատճառ	318
Թույլի Կաթիլներ	323
Իմ Շրջապատը	327

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԻՄ ՏՈՒՆԸ

ՔՈ ՏՈՒՆՆ Է

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Կազմեց և առաջաբանը գրեց

Ալեքսանդր Քալանթարյանը

Խմբագիր՝

Գ. Մինասյան